

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հուլիսի 8-ի N 859 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2011-2013 ԹԹ.

ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ

ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<u>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</u>	5
Նպատակը և խնդիրները	5
Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման մոտեցումները	7
ՀՀ 2011 – 2013 թթ. ՄԺԾԾ-ի մշակման կազմակերպչական հիմքերը	7
Միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման բարելավմանն ուղղված բարեփոխումները	8
<u>ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ</u>	10
<u>ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u> <u>ՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ</u>	11
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	11
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ	11
ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	12
Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ	12
Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները	12
<u>ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱԿՐՈՏՆԵՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ</u>	13
2.1. Ներածություն.....	13
2.2. Տնտեսության նկարագրություն	13
Համախառն առաջարկ	14
Համախառն պահանջարկ	19
Գնային փոփոխականներ.....	21
Ֆինանսական շուկա	22
Վճարային հաշվեկշիռ.....	24
Պետական հատված	27
2.3. Կանխատեսումների արդյունքում կատարված ենթադրություններ և ռիսկեր	28
Ենթադրություններ, որոնք ընկած են տնտեսական կանխատեսումների հիմքում.....	28
Կանխատեսումներում առկա ռիսկերը	29
<u>ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2011-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ</u>	33
3.1. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2011-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ	33

3.2. ՀՀ 2011-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ..... 36

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ..... 40

4.1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ..... 40

Պետական բյուջեի դեֆիցիտի մեծության կանխատեսումներում արկա ռիսկը..... 42

4.2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ..... 42

2011-2013 ԹԹ. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 42

4.3. 2011-2013 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ՀՍ ՈԼՈՐՏՆԵՐԸ..... 44

4.4. ՀՀ 2011-2013 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ՀՍ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ..... 47

4.5. ՀՀ 2011-2013 ԹԹ. ՄԺԾՍ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ..... 48

Ռիսկերի աղբյուրները..... 48

Ռիսկերի հնարավոր հետևանքները և ճշգրտումների ուղղվածությունը..... 49

Փոխհատուցման հնարավորությունները..... 50

ՄԱՍ Բ. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ..... 51

ԳԼՈՒԽ 5. ՀՀ 2010-2013 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 52

ԳԼՈՒԽ 6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ..... 54

6.1. ԻՐԱԿԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 54

6.2. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱՋԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾՍ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ..... 56

6.2.1. Գերակայությունները..... 56

6.2.2. Նպատակները..... 57

6.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները..... 57

6.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 58

ԳԼՈՒԽ 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ..... 61

7.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ..... 61

7.1.1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱԿԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 61

7.1.2. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾՍ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ..... 77

7.2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ..... 91

7.2.2. Գիտության ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾՍ ժամանակահատվածում..... 96

7.2.3. ՄԺԾԾ-ի ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 99

7.2.4. Ոլորտի գծով ֆինանսական պահանջների ամփոփում 2010-2012 թթ. ժամանակահատվածի համար 100

ԳԼՈՒԽ 8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 102

8.1. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 102

8.2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 110

8.3. 2011-2013 թթ. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ 115

ԳԼՈՒԽ 9. ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 121

9.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 121

9.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 140

9.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ 145

ԳԼՈՒԽ 10. ՀԱՆԳՒՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 161

10.1. ՄՇԱԿՈՒՅԹ 161

10.2. ՌԱԴԻՈ- ԵՎ ՇԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՇԵՌԱՐՁԱԿՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿ-ՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ 188

10.3. ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ 200

10.4. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 206

ԳԼՈՒԽ 11. ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆԸ 210

11.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 210

11.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 211

11.3. ՈԼՈՐՏԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 213

ԳԼՈՒԽ 12. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 221

12.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները 221

12.2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 225

12.3. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում (համակարգում) իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 227

ԳԼՈՒԽ 13. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ 231

<u>13.1. Իրավիճակի նկարագրություն</u>	231
<u>13.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՍԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ</u>	235
<u>13.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>	237
<u>ԳԼՈՒԽ 14. ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</u>	240
<u>14.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u>	240
<u>14.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՍԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ</u>	247
<u>14.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>	248
<u>ԳԼՈՒԽ 15. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ</u>	251
<u>15.1. ՀՀ Էներգետիկ համակարգի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները</u>	251
<u>ԳԼՈՒԽ 16. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ</u>	260
<u>16.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները</u>	260
<u>16.2. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u>	316
<u>ԳԼՈՒԽ 17. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ</u>	322
<u>17.1. Ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները</u>	322
<u>17.2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները</u>	327
<u>ԳԼՈՒԽ 18. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ</u>	330
<u>18.1. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</u>	330
<u>18.2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ</u>	330
<u>ԳԼՈՒԽ 19. 2011-2013 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԸ</u>	346
<u>19.1. Իրավիճակի նկարագրությունը</u>	346
<u>19.2. Վերջին երկու տարիների զարգացման միտումները</u>	347
<u>19.3. Հիմնական խնդիրները և նպատակները</u>	350
<u>19.4. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման սկզբունքները</u>	352
<u>19.5. 2011-2013 թթ. պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը</u>	353
<u>ԳԼՈՒԽ 20. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2011-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ</u>	354

Հավելված N 1.....366

Հավելված N 2.....372

Հավելված N 3.....373

Հավելված N 4.....378

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսությունում արձանագրված դրական տեղաշարժերը պայմանավորված են հիմնականում ՀՀ կառավարության տնտեսական գործառնությունների իրականացմամբ:

Առաջիկա տարիներին կառավարությունը կշարունակի տնտեսական միջոցառումների իրականացումը՝ պետական միջամտությունն ուղղելով ինչպես շուկայի «բացերի» մեղմմանը, այնպես էլ՝ եկամուտների և այլ ռեսուրսների վերաբաշխմանն ու տնտեսության կայունացմանը: Կառավարության այսպիսի ծավալուն սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունավետության և ամբողջականության ապահովման գրավականը գերակա խնդիրների հստակեցումն ու դրանք միջնաժամկետ (նաև երկարաժամկետ) ռազմավարական ծրագրերի հենքի վրա լուծելն է: Մասնավորապես, ներկայումս ՀՀ իշխանությունների գերակա խնդիրներից մեկը երկրում բնակչության բարեկեցության աճն և աղքատության հաղթահարումն է: Դեռևս 2003 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է իշխանության տարբեր մակարդակների, մի շարք հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների մասնակցությամբ մշակված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, որը 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ վերանայվեց և ընդունվեց Կայուն զարգացման ծրագրի տեսքով: Խնդրի համակողմանի լուծման առումով իր ուրույն դերն ունի պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը, որը կանոնավոր կերպով սկսել է իրականացվել 2003 թվականից:

Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ արդեն յոթերորդ տարին է, ինչ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացն օրենքով ճանաչվել է ընդհանուր բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս և իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգով:

ՀՀ բյուջետային գործընթացում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման փուլի առանձնացումը պայմանավորված է այդ փաստաթղթի քաղաքական կարևորությամբ: Հարկ է նշել նաև, որ համապարփակ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրն այն ռազմավարական հենքն է, որի շրջանակներում վարվում են նաև միջազգային ֆինանսական օժանդակության ներգրավման հիմնահարցերին առնչվող բանակցությունները:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրավորումը պայմանավորված ինչպես համաշխարհային տնտեսության, այդպես էլ հանրապետության տնտեսության վրա համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցության և զարգացումների՝ անկանխատեսելիությամբ հանրապետությունում 2009 թվականին Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով ժամանակավորապես դադարեցվել էր, որի հետևանքով 2010-2012թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր չի կազմվել: Ներկայիս պայմանները համեմատաբար բարենպաստ են պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրավորման գործընթացի վերսկսման համար և ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել ՀՀ 2011-2013 թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակմանը:

Նպատակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացի պրակտիկայում պետական բյուջեի նախագիծը մշակվում է մեկ տարվա կտրվածքով: Պետական ծախսերի կառավարման առումով մեկ տարվա կտրվածքով մշակվող և իրականացվող պետական բյուջեներն ունեն որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես, տարեկան ծրագրերի հիմքում դրվում են կարճաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումներ, իրականացվող քաղաքականությունների և տարեկան բյուջետային ծախսերի միջև կապը ժամանակային անհամապատասխանության պատճառով հստակ չէ: Այդ պատճառով, որպես կանոն, վերահսկման առարկա է հանդիսանում ծախսերի չափը և ոչ թե ակնկալվող արդյունքը (նաև մատուցվող ծառայության որակը): Պետական ծախսերի քաղաքականությունը հստակ ձևակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել պետական ծախսերի ծրագրային պահանջները միջնաժամկետ (հնարավորության դեպքում՝ նաև երկարաժամկետ) հեռանկարում, որն իր հերթին ենթադրում է մակրոտնտեսական միջավայրի ակնկալվող զարգացումների և հասանելի բյուջետային միջոցների ծավալի կանխատեսելիություն:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական նպատակը պետական ծախսերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն է:

Ըստ էության, պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը գնահատվում է հետևյալ երեք հայտանիշների հիման վրա՝

(i) Համընդհանուր հարկաբյուջետային կարգապահություն. բյուջետային ռեսուրսների փաթեթը պետք է լինի հստակ և համապարփակ ձևակերպված, ձևավորվի նախքան ըստ առանձին ուղղությունների ծախսերի բաշխումը և հիմնավորված լինի միջնաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումներով: Ծախսերի բաշխումը հստակորեն պետք է իրականացվի վերը նշված բյուջետային ռեսուրսների շրջանակներում, իսկ դրանց հետագա կատարումը՝ սահմանված ծախսային գերակայություններին համապատասխան ընտրված ծրագրերի գծով նախատեսված բյուջետային հատկացումների սահմանաքանակների շրջանակներում:

(ii) Տեղաբաշխման արդյունավետություն. պետական ծախսերը պետք է համահունչ լինեն պետական քաղաքականության գերակայություններին, և համակարգը պետք է հնարավորություն ընձեռի իրականացնել միջոցների միջոլորտային և ներոլորտային վերաբաշխում՝ նվազ գերակայություններից դեպի առավել կարևորները և ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերից դեպի բարձր արդյունավետություն ունեցող ծրագրերը:

(iii) Տեխնիկական (արտադրական) արդյունավետություն. ճյուղային նախարարությունները (գերատեսչությունները) պետք է ապահովեն արդյունավետության առավելագույն հասանելի մակարդակ, որը պետք է համադրելի լինի մասնավոր հատվածի համապատասխան ցուցանիշների հետ:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման համակարգի ներդրումը նպատակ է հետապնդում լուծել հետևյալ խնդիրները՝

(i) բարելավել մակրոտնտեսական հաշվեկշռվածությունը՝ ի հաշիվ ռեսուրսների իրատեսական և համապարփակ փաթեթի ձևավորման,

(ii) նպաստել պետական ֆինանսական միջոցների հաշվին կատարվող բյուջետային հատկացումների միջոցառումային և ներդրումային արդյունավետ վերաբաշխմանը՝ ըստ գերակա ուղղությունների,

(iii) հնարավորինս նվազեցնել քաղաքականությունների և դրանց ֆինանսավորման միջև առկա անորոշությունները՝ նպաստելով ծրագրերի մշակման որակի բարձրացմանը,

(iv) ըստ ոլորտների սահմանել կոշտ բյուջետային սահմանափակումներ՝ ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) համար պայմաններ և խթաններ ստեղծելով հասանելի միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման համար,

(v) բարելավել բյուջետային ծրագրերի գնահատման համակարգը և մեծացնել պետական ֆինանսների կառավարման թափանցիկության աստիճանը:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման մոտեցումները

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը շարունակական գործընթաց է և, ըստ էության, իրենից ներկայացնում է «քաղաքականությունների ձևակերպում - պլանավորում – բյուջետավորում» տրամաբանական ամբողջական շղթա: Այն հնարավորություն է ընձեռում մեղմել հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի միջև հնարավոր անհամապատասխանությունը, ինչպես նաև պետական ծախսերում կատարել առանձին բնագավառներում իրականացվող պետական քաղաքականության փոփոխություններին համարժեք փոփոխություններ: Այս առումով արդարացված է, որ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ նաև ՄԺԾԾ) մշակումը (և/կամ վերանայումը), ըստ ժամանակի, նախորդում է տարեկան պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ դառնալով տարեկան պետական բյուջեների կազմման ուղեցույց:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը ենթադրում է՝

(i) մակրոտնտեսական կայուն միջավայրին համապատասխանող բյուջետային ռեսուրսների (մուտքերի) համապարփակ և իրատեսական գնահատում,

(ii) քաղաքականությունների իրականացման նպատակով կատարվող ծախսերի՝ վարից վեր մոտեցմամբ գնահատում,

(iii) հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի ներդաշնակության ապահովում համապատասխան մեխանիզմների օգնությամբ:

Հարկ է նշել, որ նախորդ տարիների համեմատությամբ 2011-2013թթ պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը ներառում է նաև ծրագրավորման հիմքում դրված կանխատեսումների իրականացման հետ կապված ռիսկերի բացահայտման և ներկայացման գործընթացը: Վերը նշված ռիսկերը հանգամանալի ձևով ներկայացված են սույն ծրագրի մակրոտնտեսական, հարկաբյուջետային կանխատեսումներին, ինչպես նաև պետական պարտքի կառավարման ռազմավարությանը վերաբերող գլուխներում (համապատասխանաբար 2-րդ , 4-րդ և 20-րդ գլուխների

համապատասխան մասերում), իսկ ռիսկերի համառոտագիրը ներկայացված է սույն ծրագրի N 1 հավելվածում:

ՀՀ 2011 – 2013 թթ ՄԺԾԾ-ի մշակման կազմակերպչական հիմքերը

ՀՀ 2011 – 2013թթ ՄԺԾԾ-ի մշակման գործընթացը կանոնակարգվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1073-Ն որոշմամբ և այդ որոշման հանձնարարականների հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումներով:

Ըստ էության, նման մոտեցումը խնդրին վկայում է այն մասին, որ ՀՀ կառավարությունը պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը որպես բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս դիտելով, կարևորում է նաև վերջինիս քաղաքական նշանակությունը:

Ընթացիկ տարում, ինչպես և վերջին յոթ տարիներին ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գործընթացը կառավարվել, վերահսկվել և համակարգվել է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված ստորն նշված երկու մարմինների կողմից.

(i) ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի՝ մշտապես գործող բարձրագույն խորհուրդ (խորհրդի նախագահ՝ ՀՀ վարչապետ), որն ապահովվել է ռազմավարական որոշումների կայացումը և մշակման գործընթացի վերահսկողությունը,

(ii) ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման աշխատանքները համակարգող՝ մշտապես գործող խումբ (խմբի ղեկավար՝ ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ), որը ապահովել է պետական միջնաժամկետ ծրագրի մշակման աշխատանքների համակարգումը:

Նման մոտեցումը ընդգծում է բյուջետային գործընթացում ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) մասնակցության դերը, որը նպաստել է ճյուղային մակարդակում բյուջետային ծրագրման բարելավմանը և ռազմավարական հիմնավոր որոշումների կայացմանը՝ հնարավորինս ապահովելով նախանշված քաղաքականությունների և հասանելի ֆինանսական միջոցների համապատասխանությունը: Այս համատեքստում կարևորվում է ՀՀ ֆինանսների նախարարության ու ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) գործողությունների փոխհամաձայնեցումը, որից մեծապես կախված է ոչ միայն ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և պետական բյուջեի նախագծերի մշակման որակը, այլ նաև դրանց կատարումը:

Դրա հետ մեկտեղ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշտապես գործող բարձրագույն խորհրդի աշխատանքներին ՀՀ վարչապետի առաջարկությամբ և իշխող քաղաքական կոալիցիայի մեջ մտնող քաղաքական կուսակցությունների ներկայացմամբ ներգրավված են այդ կուսակցությունները ՀՀ Ազգային ժողովում ներկայացնող մի շարք պատգամավորներ: Նման մոտեցումը ապահովում է քաղաքական ուժերի մասնակցությունը բյուջետային գործընթացին արդեն իսկ ՄԺԾԾ-ի մշակման նախնական փուլում, որը հնարավորություն է ընձեռում հենց

սկզբից համադրել ՀՀ կառավարության և կոալիցիոն քաղաքական ուժերի մոտեցումները և կողմնորոշումները ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսվելիք առանձին ռազմավարությունների և ծախսային գերակայությունների ընտրության հարցերում:

Միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման բարելավմանն ուղղված բարեփոխումները

Ծրագրի նպատակների իրագործումն ապահովելու համար ՀՀ կառավարությունն իրականացնում է բարեփոխումներ նաև ծրագրային բյուջետավորումը հանրապետությունում ներդնելու ուղղությամբ: Ծրագրային բյուջետավորման բարեփոխման գերակա նպատակը պետական ծախսերի տնտեսական արդյունավետության բարձրացումն է՝ ռեսուրսներն առաջնահերթ ծախսային ծրագրերին ուղղելու համար ՀՀ կառավարությանն աջակցելու միջոցով: Ծրագրային բյուջետավորման շրջանակներում այդ աջակցությունն իրականացվում է ՀՀ կառավարությանը (և հանրությանը) պետական ֆինանսավորման դիմաց տրամադրվող ծառայությունների կամ անմիջական արդյունքների վերաբերյալ ավելի ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Հետևաբար, ծրագրային բյուջետավորումը հանդիսանում է գործիք սոցիալ-տնտեսական քաղաքականության առանձին օղակները շաղկապելու համար: Նշվածը կօգնի հասկանալ ծախսերի վերաբերյալ կայացված որոշումների նպատակաուղղվածությունը և ծախսային քաղաքականությունն ամբողջությամբ ուղղել կառավարության ընդհանուր նպատակների իրագործմանը:

Ներկայումս ծրագրային բյուջետավորման բարեփոխումների փորձնական աշխատանքներն իրականացվում են բոլոր պետական կառավարման մարմիններում:

ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական ռազմավարական գերակայությունները սահմանված են 2008 թվականի ապրիլի 30-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրով և ՀՀ կառավարության կողմից 2008 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունված Կայուն Զարգացման ռազմավարական ծրագրով: Վերը նշված փաստաթղթերի համաձայն ՀՀ կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորում է պետական բյուջեի ծախսային հետևյալ գերակայությունները (սույն ծրագրի իմաստով գերակայություն են համարվում այն ոլորտները, որոնց հատկացվում են լրացուցիչ բյուջետային ռեսուրսների զգալի մասը կամ որոնց ֆինանսավորման համար ներգրավում են վարկային ռեսուրսներ):

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կպահպանվի վերը նշված գերակայությունների համաձայն իրականացվելիք ծրագրերի ֆինանսավորման համար բյուջետային ռեսուրսները համալրելու պահանջը այլ՝ հիմնականում արտաքին աղբյուրներից պաշտոնական դրամաշնորհների և փոխառու միջոցների ներգրավման միջոցով: Վերը նշվածը, հաշվի առնելով նաև պետական պարտքի ցուցանիշները խելամիտ սահմաններում պահելու խնդիրը, էականորեն սահմանափակում է ՀՀ կառավարության հնարավորությունները:

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ՀՀ կառավարության նպատակների իրագործման հիմնական գործիքներից մեկն է: Հարկաբյուջետային քաղաքականությունը ներկայացնող այս փաստաթուղթը, ոլորտների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հետ միասին, կազմում է ՀՀ կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական բովանդակությունը:

Սույն ծրագրի հարկաբյուջետային քաղաքականությունը շարադրող մասը ներկայացնում է ՀՀ կառավարության ընդհանուր երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները, միջնաժամկետ և կարճա-ժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները և ռազմավարական ծախսային գերակայությունները: Դրանք տնտեսական և հարկաբյուջետային այն չափանիշներն են, որոնք դրվելու են ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման հիմքում:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՑԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը ՀՀ 2011-2013թթ ՄԺԾԾ-ի մշակման ընթացքում առաջնորդվել է ՀՀ Ազգային ժողովի հավանության արժանացած ՀՀ կառավարության 2008-2012թթ գործունեության և ՀՀ կառավարության կողմից 2008 թվականի հոկտեմբերի 30-ին որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրերով ամրագրված հարկաբյուջետային սկզբունքներով: Քանի որ բյուջետային մուտքերի սղությունը և ելքերի վրա ազդող գործոնները սահմանափակում են կարճաժամկետ հեռանկարում այդ սկզբունքների իրագործման հնարավորությունները, ՀՀ կառավարությունը մտադիր է կիրառել այդ սկզբունքները երկարաժամկետ հեռանկարում: Դրանք հիմք կձառայեն ընթացիկ քաղաքականությունների և ՀՀ կառավարության երկարաժամկետ նպատակների համաձայնեցվածությունը գնահատելու համար:

Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները

ՀՀ կառավարությունը առկա ծախսային գերկայությունները համադրել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքների հետ՝ հաջորդ 3 տարիների ընդհանուր ծախսային մակարդակը որոշելու համար:

Համախառն ներքին արդյունքի (այսուհետև՝ ՀՆԱ-ի) նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերության ցուցանիշը 2011-2013թթ կտատանվի 23.4-23.3% սահմաններում, իսկ ներքին ռեսուրսների հաշվին ձևավորվող եկամուտների դեպքում՝ 22.2-23.2% սահմաններում: Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2011-2013թթ ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել ՀՆԱ-ի 28.3-27.3% սահմաններում:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱԿՐՈՏՆԵՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

2.1. Ներածություն

Միջանաժամկետ ծախսային ծրագրի այս հատվածը ներկայացնում է ընթացիկ տնտեսական իրավիճակը հանրապետությունում, ինչպես նաև 2011-2013թթ մակրոտնտեսական հեռանկարները:

Տնտեսական կանխատեսումների նպատակը

Հայաստանի տնտեսության իրավիճակի միջինժամկետ կանխատեսումները հիմք են տալիս պատկերացում ունենալ այն իրական միջավայրի մասին, որի պայմաններում գործելու է կառավարությունը:

Տնտեսական կանխատեսումների իրականացման երկրորդ կարևոր հիմնավորումն այն է, որ ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին կառավարության համար ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

2.2 Տնտեսության նկարագրություն

Տնտեսությունը կարելի է նկարագրել հետևյալ վեց հիմնական ասպեկտներով.

- Համախառն առաջարկ (չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների իրական աճերով, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճով),
- Համախառն պահանջարկ (չափվում է պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, զուտ արտահանում/ՀՆԱ)
- Գնային փոփոխականներ (ՀՆԱ դեֆլյատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի գների փոփոխությունը և գնաձ, որը չափվում է սպառողական գների (ներառյալ սպառողական ներմուծված ապրանքների գները) ինդեքսով (ՄԳԻ)),
- Ֆինանսական համակարգի խորություն (չափվում է հետևյալ փոփոխականներով՝ Փողի ագրեգատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ, ցույց է տալիս թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),

- Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով),
- Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի և եկամուտների ծավալով, պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ):

Աղյուսակ 1-ում ներկայացված է տնտեսության ներկա իրավիճակի հակիրճ նկարագրությունը՝ ըստ վերը նշված վեց գլխավոր տնտեսական բնութագրիչների: Միջնաժամկետ ծախսային ծրագրի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են աղյուսակ 2.1-ում նշված ցուցանիշերը և տնտեսության զարգացման հեռանկարները:

Աղյուսակ 2.1. ՄԺԾԾ-ի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ

Չափորոշիչ	2007	2008	2009	2010	2011	2012	2013
	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Ծրագիր	Պլանավորած	Պլանավորած	Պլանավորած
Տնտեսական աճ (ՀՆԱ % փոփոխություն)	13.7	6.9	-14.2	1.8	3.4	3.9	4.5
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ %)	81.8	81.8	93.9	95.6	95.1	95.0	94.7
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ %)	37.8	40.9	33.8	31.7	30.9	30.7	30.4
ՀՆԱ դեֆլյատոր	104.2	105.9	101.3	105.7	103.4	103.4	103.2
Գնաճ միջին	4.4	9.0	3.4	7.1	4.6	4.0	4.0
Բանկային համակարգի ներգրվածություն (փողի զանգված / ՀՆԱ %)	22	19.8	26.3	27	28.1	29.2	30.3
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ %	-6.4	-11.8	-15.7	-13.2	-13.0	-11.6	-9.9

Համախառն առաջարկ

Ինչպես արդեն նշել ենք, երկրում համախառն առաջարկն իրական արտահայտությամբ չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումարով, որի փոփոխությունն էլ նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի¹ միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագա ակնկալվող զարգացումները:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

¹ ՀՆԱ-ի իրական աճ ասելով հասկանում ենք տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի ծավալային աճը՝ առանց գնային փոփոխության:

Վերջին տարիներին Հայաստանի տնտեսությունը բնութագրվել է տնտեսական աճի բարձր ցուցանիշներով, մասնավորապես՝ 2006-2008 թվականներին միջինում գրանցվել է 11.3 տոկոս ՀՆԱ իրական աճ: 2006-2008 թվականների տնտեսական աճին հիմնականում նպաստել են շինարարությունը՝ միջինում 4.8 և ծառայությունները՝ միջինում 3.5 տոկոսային կետերով:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով 2008 թվականի չորրորդ եռամսյակից նկատելի դարձավ տնտեսական աճի տեմպերի նվազումը, իսկ 2009 թվականին արձանագրվեց 14.2 տոկոս տնտեսական անկում:

Սակայն 2010 թվականի հունվար-մայիս ամիսներին արդեն համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) իրական արտահայտությամբ աճի միտում է դրսևորել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 8.8 տոկոսով, հստակ է, որ նշված ցուցանիշը սպասվածից բարձր է արձանագրվել, քանի որ կրել է կառավարության հակաճգնաժամային փաթեթի ազդեցությունը: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ՀՀ տնտեսությունում արձանագրվել էր 15.7 տոկոս անկում:

2010 թվականի առաջին չորս ամիսների ընթացքում տնտեսության գրեթե բոլոր ճյուղերն աճ են արձանագրել²: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 3.4 տոկոսային կետը, իսկ իրական աճը կազմել է 6.0 տոկոս, արդյունաբերության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.6 տոկոսը՝ 9 տոկոս իրական աճի պայմաններում: Գյուղատնտեսությունը նվազել է 0.9 տոկոսով, 0.1 տոկոսային կետով բացասական նպաստում ունենալով տնտեսական աճին: Բարձր՝ 19.1 տոկոս իրական աճի տեմպ է ունեցել շինարարությունը, նպաստելով տնտեսական աճին 1.4 տոկոսային կետով:

Կանխատեսում: Թեև 2010թ-ի առաջին ամիսների դրական զարգացումները բավականին խոստումնալից են, սակայն համաշխարհային տնտեսությունում աճի վերականգնման ռիսկերը լիարժեք չեն թուլացել (մասնավորապես կապված Եվրոմիության 5 անդամ երկրների ֆիսկալ մեծ պակասուրդների և դրանցից ածանցվող ապագա ռիսկերի հետ), ինչը հիմնականում հիմք է հանդիսացել 2010 թվականի համար բավականին պահպանողական աճի տեմպի կանխատեսման համար: 2010 թվականի համար մինչև տարեվերջ ակնկալվում է առնվազն 1.8 տոկոս տնտեսական աճ, ծրագրված 1.2 տոկոսի դիմաց, իսկ 2011-2013 թվականների համար իրական ՀՆԱ-ի տարեկան աճը կանխատեսվել է համապատասխանաբար 3.4, 3.9 և 4.5 տոկոսի չափով: Միջնաժամկետ կանխատեսումների համար հիմք են հանդիսացել միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված համաշխարհային տնտեսության վերականգնման վերաբերյալ սպասումներն ու վերլուծությունները: Այս առումով ակնկալվում է, որ այլ հավասար պայմաններում համաշխարհային տնտեսությունում կգրանցվի շարունակական աճ և զլոբալ պահանջարկի մեծացում: Մետաղների միջազգային գները աճի միտում կդրսևտեն՝ կայունանալով 2011


² Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին, ընդ որում ներկայացված են հունվար-ապրիլի ցուցանիշները, քանի որ հունվար-մայիսի համար հասանելի են միայն համառոտ օպերատիվ նախնական տվյալները:

թվականից, կվերականգնվեն նաև արտերկից եկող դրամական փոխանցումները՝ հիմնականում պայմանավորված Ռուսաստանի տնտեսության ակնկալվող դրական զարգացումներով:

Աղյուսակ 2.2 Իրական աճերը 2006-2010թթ

	2006	2007	2008	2009	2010 հունվար- ապրիլ	2010	2011	2012	2013	
	փաստացի					կանխատեսում				
Արդյունաբերություն	-2.5	2.8	2.1	-7.9	9.0	4.7	7.5	5.9	5.4	
Գյուղատնտեսություն	0.5	10.4	3.3	-0.1	-0.9	2.4	3	3.1	3.2	
Շինարարություն	37.7	18.2	11.3	-42.3	19.1	-2.3	2	3.8	4.8	
Ծառայություններ	16.0	12.5	4.8	-0.1	106 ³	2.4	2.8	3.5	4.5	
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	14.9	35.9	17.1	-20.7	12.2	1.7	3.2	4	4.4	
Շուկայի ընդհանուր աճ	13.2	13.7	6.9	-14.2	7.2	1.8	3.4	3.9	4.5	

Գծապատկեր 2.1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող իրական աճին նպաստման չափերը



Արդյունաբերություն

Աղյուսակ 2.2-ից կարելի է նկատել, որ 2006-2008 թվականների արդյունաբերության ճյուղի իրական աճի ցուցանիշն ամենացածրն է եղել և ճյուղում միջին հաշվով գրանցվել է 0.8 տոկոս աճ, ինչը բացատրվում է հիմնականում այդ տարիներին արդյունաբերության որոշ ենթաճյուղերի համար (բացառությամբ մետալուրգիայի) անբարենպաստ գնային դաշտի ձևավորմամբ՝ ի դեմս արժևորվող իրական փոխարժեքի: 2009 թվականի տարեսկզբին ճյուղը զգալի անկում ունեցավ

³ Առանց ֆինանսական միջնորդության անուղղակի չափվող ծառայությունների

համաշխարհային պահանջարկի, մետաղների գների և ներքին պահանջարկի անկմամբ պայմանավորված, իսկ տարվա երկրորդ կեսին արդյունաբերությունն աստիճանաբար վերականգնվել է համաշխարհային տնտեսությունում մետաղների գների աճի և կառավարության իրականացրած համակարգված հակացիկլիկ քաղաքականության արդյունքում: 2010 թվականի հունվար-ապրիլ ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի համախառն թողարկման ծավալների 12.9 տոկոս աճ: Բարձր աճեր են գրանցվել հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման (47.6 տոկոս) ճյուղում և մշակող արդյունաբերության պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (22.7 տոկոս), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (43.1 տոկոս), ոսկերչական արտադրատեսակների արտադրության (51.7 տոկոս), խմիչքների արտադրության (28.4 տոկոս) ենթաճյուղերում:

Կանխատեսում: Արդյունաբերության ճյուղում ավելացված արժեքը ակնկալվում է, որ մինչև տարեվերջ իրական արտահայտությամբ կաճի 4.7 տոկոսով, իսկ 2011-2013 թվականներին կղրսևորի աճ միջինում 6.3 տոկոսով, պայմանավորված հանքարդյունաբերության ոլորտում և մշակող արդյունաբերության մի շարք ենթաճյուղերում արտահանման աճով, ինչպես նաև բնակչության տնօրինվող եկամուտների կանխատեսվող աճի պայմաններում ներքին պահանջարկի աճով: Այստեղ կարելու է նաև կառավարության կողմից իրականացված հակաճգնաժամային փաթեթի ազդեցությունը, որով պայմանավորված ներդրումների խրախուսումն ու արտահանելի ճյուղերի ձեռնարկություններին տրամադրվող ֆինանսական միջոցները կունենան երկարաժամկետ էֆֆեկտ՝ արդյունաբերության ճյուղի ձեռնարկությունների պոտենցիալի աճի վրա և հիմքեր կստեղծեն տնտեսության շարունակական զարգացման համար:

Գյուղատնտեսություն

2006-2008 թվականներին գյուղատնտեսության իրական աճը կազմել է միջինում 4.7 տոկոս: 2009 թվականին տնտեսության այս ճյուղն աննշան՝ 0.1 տոկոս անկում է ունեցել, սակայն 2010 թվականի հունվար-ապրիլին ևս գյուղատնտեսության ավելացված արժեքն իրական արտահայտությամբ նվազել է՝ 0.9 տոկոսով՝ պայմանավորված գերազանցապես բուսաբուծության 19 տոկոս նվազմամբ: Անասնաբուծությունը և ձկնորսությունն աճել են համապատասխանաբար 1.7 և 0.4 տոկոսով:

Կանխատեսում: Մինչև տարեվերջ ակնկալվում է գյուղատնտեսության իրական աճ շուրջ 2.4 տոկոսի շրջանակում, իսկ 2011-2013 թվականներին ճյուղի միջին աճը կկազմի 3.1 տոկոս, որի համար հիմք են հանդիսացել ճյուղի նախորդ տարիներին դրսևորած զարգացման միտումները :

Շինարարություն

Շինարարության ճյուղը 2006-2008 թվականների ՀՆԱ-ի նկատմամբ ունեցել է առաջանցիկ աճի տեմպեր՝ միջին հաշվով ապահովելով շուրջ 22 տոկոս իրական աճ: Այսինքն, հանդիսացել է տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը: 2009 թվականին շատ մեծ արագությամբ տնտեսության այս ճյուղը գահավիժեց՝ արձանագրելով 42.3 տոկոս իրական անկում:

2010 թվականի չորս ամիսներին հատկապես աճել են պետական բյուջեի (61.3 տոկոս) և միջազգային կազմակերպությունների (2.2 անգամ) հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները, մինչդեռ բնակչության և կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալները շարունակում են անկման միտում դրսևորել: Մասնավորապես, կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարությունը՝ իրական արտահայտությամբ, նվազել է 26.3 տոկոսով, իսկ բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարությունը՝ 32.1 տոկոսով:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված կապիտալ շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 13.2 տոկոս և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 11.7 տոկոսային կետով, իսկ կազմակերպությունների միջոցները կազմել են 33.1 տոկոս և դրանց հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 28 տոկոսային կետով:

Շինարարությունում հիմնական միջոցներն ըստ ճյուղերի հիմնականում ուղղվել են էլեկտրականության, գազի, ջրի մատակարարման ճյուղին՝ 29.6 տոկոս, անշարժ գույքի հետ կապված գործունեություն 29.1 տոկոս և գյուղատնտեսությանը՝ 11 տոկոս: Հաջորդ մեծ մասնաբաժին ունեցող ճյուղերն են, տեղեկատվությունը և կապը (7.0 տոկոս), մշակող արդյունաբերությունը (4.2 տոկոս), ինչպես նաև ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակումը (4.1 տոկոս):

Կանխատեսում: Շինարարության ճյուղի ավելացված արժեքը մեր գնահատումներով միջնաժամկետ՝ 2011-2013 թվականներին կունենա աճ շուրջ 3.5 տոկոսի չափով: Ճյուղի վերականգնումը կլինի աստիճանական, սակայն դրա աճի տեմպերը ՀՆԱ-ի աճից առաջանցիկ չեն լինի, որը կնախանջի տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխություններին նպաստակառողիված տնտեսական նոր քաղաքականության ուղղությունը:


Ծառայություններ և առևտուր

2006-2008 թվականներին ծառայությունների ոլորտի միջին իրական աճը կազմել է 11.1 տոկոս և վերջինս ունեցել է ՀՆԱ-ի աճի տեմպը գերազանցող աճ: 2009 թվականի ճգնաժամի պայմաններում տնտեսության այս ճյուղը աննշան անկում ունեցավ՝ 0.1 տոկոս: 2010 թվականի առաջին ամիսների տվյալներով այս ճյուղը եղել է տնտեսական աճի շարժիչ ուժերից մեկը: 2010 թվականի հունվար-ապրիլ ամիսներին մատուցված ծառայությունների ծավալը 2009 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ համադրելի գներով աճել է 6.4 տոկոսով: Մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմում տեղեկատվության և կապի (26 տոկոս), տրանսպորտի (19.1 տոկոս) և ֆինանսական գործունեության (23 տոկոս) ծառայությունները, ինչպես նաև մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության (5.9 տոկոս), կրթության (5.7 տոկոս) ծառայությունները:

2010 թվականի հունվար-ապրիլ ամիսներին առևտրի շրջանառությունը 2009 թվականի համապատասխան ժամանակահատվածի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի զներով, աճել է 5.1 տոկոսով, որտեղ մանրածախ առևտուրը աճել է 2.3 տոկոսով, իսկ մեծածախ առևտուրը և ավտոմեքենաների առևտուրը՝ համապատասխանաբար 8.6 և 32.7 տոկոսով:

Կանխատեսում: 2010 թվականին մինչև տարեվերջ կանխատեսվում է, որ ճյուղի ավելացված արժեքի աճը կկազմի շուրջ 2.7 տոկոս, իսկ 2011-2013 թվականներին տնտեսության աշխուժացմանը համամասնորեն ճյուղի աճը կկազմի միջինում 3.6 տոկոս: Նշված ճյուղը ճգնաժամային ժամանակահատվածում ցուցաբերել է բարձր դիմադրողականություն, որով էլ պայմանավորված վերջինս կունենա կայուն՝ ՀՆԱ-ի աճին համահունչ զարգացում:

Գծապատկեր 2.2 Ոլորտների տեսակարար կշիռները 2006 -2013 թվականներին



Աշխատաշուկա

2006-2008 թվականներին գործազրկության մակարդակը՝ տնտեսական բարձր աճով պայմանավորված, անկման միտում է դրսևորել, որը սակայն, 2009 թվականից աճել է, պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով: 2010 թվականի հունվար-ապրիլին գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում կազմել է 7.2 տոկոս և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 0.6 տոկոսային կետով (84.4 հազ. մարդ), իսկ 2009 թվականի դեկտեմբերին գրանցվել էր գրեթե նույն (7.1 տոկոս) գործազրկության մակարդակը:

2010 թվականի հունվար-ապրիլին միջին ամսական անվանական աշխատավարձը 2009 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 6.7 տոկոսով, ընդ որում՝ բյուջետային հատվածի աշխատավարձն աճել է 4.3 տոկոսով: 2010 թվականի հունվար-ապրիլին տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին աշխատավարձը համապատասխանաբար կազմել է՝ 83978 և 131203 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 103299 դրամ:

2010 թվականի հունվար-ապրիլին իրական աշխատավարձը 2009 թվականի հունվար-ապրիլի համեմատ նվազել է 1.5 տոկոսով:

Կանխատեսում: Միջնաժամկետում տնտեսական ակտիվության աճին զուգընթաց կանխատեսվում է գործազրկության մակարդակի աստիճանական նվազում 2009 թվականի

համեմատ: Սակայն, տնտեսության զարգացումը կկլանվի բնակչության զբաղվածության կողմից այնպես, որ ապահովվի տնտեսության արտադրողականության աստիճանական բարելավումը: Մասնավորապես, աշխատանքի արտադրողականության աճը միջնաժամկետ հատվածում միջին հաշվով կկազմի 2.2 տոկոս:

Համախառն պահանջարկ

Համախառն պահանջարկը հիմնականում պատկերացում է տալիս տնտեսությունում ստեղծված եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Համախառն պահանջարկը կազմված է ներքին և արտաքին պահանջարկներից: Ներքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս, թե ձևավորված եկամուտներն ուղղակի սպառման են ուղղվելու, թե ներդրվելու են տնտեսության մեջ: Նշվածը հիմնականում բնութագրվում է պետական և մասնավոր հատվածների կողմից ստեղծված ընդհանուր եկամտում սպառման բաղադրիչներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ: Իսկ արտաքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս գործընկեր երկրների կողմից մեր ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների մասին:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Տնտեսական ճգնաժամի տարում սպառման անկումը բարձր չի գրանցվել՝ ՀՆԱ-ի բարձր անկման պայմաններում, ինչ պայմանավորված է հարստության էֆֆեկտով (տնօրինվող եկամտի նվազման դեպքում սպառման վարքագիծը եկամուտներին համաժեք չի փոխվում, այլ շարունակվում է իրականացվել սպառման նույն մակարդակը՝ ի հաշիվ խնայողությունների): Եթե նշվածը ներկայացնենք թվերով, այն կունենա հետևյալ պատկերը. 2006-2008 թվականների ընթացքում սպառումը միջին հաշվով աճել է 8.6 տոկոսով, իսկ իրական ՀՆԱ-ն՝ 11.3 տոկոսով: Ընդ որում, պետական սպառումը միջին հաշվով աճել է 5.8 տոկոսով, իսկ մասնավոր սպառումը՝ 9.0 տոկոսով: Մինչդեռ 2009 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ նվազել է ընդամենը 2.6 տոկոսով, 14.2 տոկոս տնտեսական անկման պայմաններում: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2009 թվականին կազմել են 13.4 և 84.6 տոկոս:

Կանխատեսում: Մինչև տարեվերջ ՀՆԱ-ի կանխատեսված 1.8 տոկոս աճի պարագայում կունենանք սպառման աճ 3.6 տոկոսի չափով: 2011-2013 թվականներին, կապված տնտեսության վերականգնման և արտաքին աշխարհից ներհոսող մասնավոր տրանսֆերտների ակնկալվող աճի հետ կանխատեսվում է սպառման աճ միջինում 3.6 տոկոսի չափով:

Կապիտալ ներդրումների մասով նշենք, որ 2006-2008 թվականների ընթացքում կապիտալ ներդրումները միջին հաշվով աճել են 21.5 տոկոսով: Սակայն, 2009 թվականին իրական կապիտալ ներդրումները կրճատվել են 34.4 տոկոսով, ի հաշիվ մասնավոր ներդրումների 42.1 տոկոս իրական նվազման, որը մեծամասամբ պայմանավորված է շինարարության ճյուղի աճի տեմպերի զգալի նվազմամբ, իսկ վերջինիս վրա մեծ է եղել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի

ազդեցությունը: Պետական կապիտալ ներդրումները նույն ժամանակահատվածում աճել են շուրջ 10 տոկոսով, պայմանավորված պետության ընդլայնող տնտեսական քաղաքականությամբ:

Կանխատեսում: Կապիտալ ներդրումները 2010 թվականին կշարունակեն 2009 թվականին սկսված ներդրումների կառուցվածքի ճշգրտման միտումը, այն է՝ աստիճանաբար ոչ արտադրողական ոլորտում, մասնավորապես բնակարանաշինությունում իրականացվող ներդրումներն իրենց տեղը զիջում են տնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանն ուղղված արտադրողական ներդրումներին: Միջնաժամկետում աճի միտում կդրսևորեն հիմնականում արտադրողական բնույթի ներդրումները, որն էլ հիմքեր կստեղծի կանխատեսվող ժամանակահատվածում կայուն աճի համար:

Արտաքին առևտրի ցուցանիշների մասով նշենք, որ 2006-2008 թվականներին ներմուծումը միջին հաշվով աճել է 8 տոկոսով, իսկ արտահանումը կրճատվել է 8 տոկոսով, սա պայմանավորված է այդ ժամանակահատվածում դրամի իրական արտահայտությամբ արժեվորմամբ և բնակչության եկամուտների շարունակական աճով: 2009 թվականին արտահանման իրական ծավալները կրճատվել են 11.5 տոկոսով, իսկ ներմուծումը 19.5 տոկոսով: Չնայած ազգային արժույթի արժեզրկմանը, այս ցուցանիշները պայմանավորված են արտահանվող ապրանքների նկատմամբ համաշխարհային պահանջարկի նվազմամբ և փոխարժեքի ազդեցության դրսևորման ժամանակային խզմամբ:

Կանխատեսում: 2010 թվականի վերջին իրական արտահայտությամբ կունենանք ներմուծման 0.1 և արտահանման 2.7 տոկոս աճ: 2011-2013 թվականներին՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության ավելի արագ վերականգմամբ, որը կարտահայտվի մեր տնտեսության արտադրանքի նկատմամբ արտաքին պահանջարկի մեծացմամբ, կանխատեսվում է արտահանման ծավալների միջինում աճ 13.8 տոկոսի չափով և ներմուծման ծավալների աճ 5.8 տոկոսի չափով:

Աղյուսակ 2.3 ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը, %

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Սպառում	9.0	12.3	4.5	-2.6	3.6	2.9	3.8	4.1
Ներդրում	32.2	19.7	12.6	-34.4	-4.6	1	3.2	3.5
Արտահանում	-7.3	-3.5	-13.1	-11.5	2.7	12.2	14.4	14.9
Ներմուծում	3.8	13.0	7.3	-19.5	0.1	5.1	5.7	6.6
Ընդամենը ՀՆԱ	13.2	13.7	6.9	-14.2	1.8	3.4	3.9	4.5

Աղյուսակ 2.4 Ծախսային բաղադրիչների տեսակարարը շուրջ ՀՆԱ-ի կազմում, %

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Սպառում	82.3	81.8	81.8	93.9	95.6	95.1	95.0	94.7
Ներդրումներ	35.9	37.8	40.9	33.8	31.7	30.9	30.7	30.4
Զուտ արտահանում, այդ թվում	-15.9	-20.0	-25.6	-27.9	-27.0	-26.4	-25.4	-24.4
Արտահանում ⁴	23.4	19.2	15.0	15.5	15.6	17.0	18.7	20.5
Ներմուծում ⁵	39.3	39.2	40.7	43.4	42.6	43.3	44.1	45.0

⁴ Ներառված են նաև ծառայությունները

⁵ Ներառված են նաև ծառայությունները

Վիճ. շեղում	-2.4	0.4	2.9	0.1	-0.3	0.3	-0.3	-0.7
Ընդամենը ՀՆԱ	100	100	100	100	100	100	100	100

Ընդ որում, ՀՆԱ-ի ծախսային կառուցվածքում ներդրումների կշիռը շարունակական անկում է ապրելու՝ կապիտալ շինարարության ծավալների նվազմամբ պայմանավորված, իսկ արտահանման կշիռը՝ ունենալու է շարունակական աճի միտում:

Գնային փոփոխականներ

Տնտեսությունում գների մակարդակը բնութագրվում է սպառողական գների ինդեքսով (ՄԳԻ) կամ ՀՆԱ դեֆլյատորով: Իսկ դրանց փոփոխությունները ցույց են տալիս տնտեսությունում նկատվող գնաճի կամ գնանկման միտումները: ՄԳԻ-ն ցույց է տալիս որոշակի սպառողական ապրանքների զամբյուղի գների վարքագիծը, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ միայն մեր տնտեսությունում ստեղծված ապրանքների և ծառայությունների գների վարքագիծը:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Վերջին տարիների ընթացքում սպառողական գները հիմնականում կայուն են եղել՝ չգերազանցելով 4+/-1.5 տոկոս նպատակային միջակայքը: Բացառություն են կազմել 2007 և 2009 թվականները, երբ 2007 թվականին սպառողական գների մակարդակը տարեվերջին կազմել է 6.6 տոկոս՝ պայմանավորված արտաքին շոկերով, մասնավորապես, նավթի և ցորենի միջազգային գների բարձրացմամբ: 2009 թվականին սպառողական գների մակարդակը տարեվերջին կազմել է 6.5 տոկոս: Նշենք որ 2009 թվականի առաջին եռամսյակում, պայմանավորված տնտեսական անկման շարունակական խորացմամբ գնաճը պահպանվել է նպատակային թիրախից ավելի ցածր մակարդակում: Երկրորդ եռամսյակից սկսած գների աճի վրա ազդող հիմնական գործոններ են հանդիսացել ՀՀ դրամի արժեզրկման արդյունքում ներմուծվող ապրանքների գների ճշգրտումը և որոշ կոմունալ ծառայությունների սակագների բարձրացումը: Արդյունքում, երկրորդ և երրորդ եռամսյակներում ձևավորվել է նպատակային թիրախին մոտ գնաճ: Չորրորդ եռամսյակում 12-ամսյա գնաճի տեմպը շարունակել է արագանալ, սակայն մինչև նոյեմբեր պահպանվել է նպատակային թիրախի սահմաններում: Գնաճի տեմպի կտրուկ ավելացում է արձանագրվել է դեկտեմբերին՝ պայմանավորվելով գյուղատնտեսական ապրանքների գների առավել ցայտուն սեզոնային աճով:


2010 թվականի ապրիլին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 4.2 տոկոս գնաճ, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 5 տոկոս, ոչ պարենային ապրանքների գների 3 տոկոս և ծառայությունների սակագների 3.5 տոկոս աճով:

2010 թվականի ապրիլին նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է 1.3 տոկոս գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը կազմել է 6.8 տոկոս:

Կանխատեսում: Միջազգային շուկաներում պարենային և ոչ պարենային ապրանքների գների շարունակական աճի և տնտեսական ակտիվության վերականգնման ներկա միտումների

պահպանման պայմաններում սպասվում է, որ 2010 թվականի ընթացքում կպահպանվի նախորդ տարեվերջից ձևավորված բարձր գնաճային ֆոնը՝ համեմատաբար բարձր լինելով տարվա առաջին կեսում և աստիճանաբար թուլանալով տարվա երկրորդ կեսում: 2010 թվականին ակնկալվում է, որ 12-ամսյա գնաճը կկազմի շուրջ 6.1 տոկոս: 2011-2013 թվականներին կանխատեսվող 12-ամսյա գնաճը կվերականգնի նպատակային թիրախի 4 (+/-1.5) տոկոս տատանման թույլատրելի միջակայքով մակարդակը:

Գծապատկեր 2.3. 2000-2013 թվականների գնաճի (ՄԳԻ) դինամիկան



ՀՆԱ դեֆլյատորը 2006-2008 թվականների ընթացքում եղել է կայուն և կանխատեսելի՝ միջին հաշվով կազմելով 104.9 տոկոս: 2009 թվականի տնտեսական զարգացումներով պայամանավորված դեֆլյատորի մեծությունը վերջին տարիներին արձանագրված ցուցանիշի միջինից զգալիորեն ցածր էր՝ 101.3 տոկոս: 2010 թվականի առաջին չորս ամիսներին միտումը կտրուկ փոխվել է. դեֆլյատորը կազմել է 110.2 տոկոս՝ պայամանավորված արդյունաբերության գների ինդեքսով, իսկ վերջինս էլ իր հերթին կրում է միջազգային շուկաների ազդեցությունը (պղնձի և մոլիբդենի մասով):

Կանխատեսում: Մինչև տարեվերջ կանխատեսում ենք ՀՆԱ-ի դեֆլյատորի աճի տեմպի նվազում՝ 106 տոկոսի, իսկ 2011-2013 թվականներին միջին դեֆլյատորը կայունանալով կկազմի շուրջ 103.3 տոկոս:

Ֆինանսական շուկա

Ֆինանսական շուկաները բնութագրվում են մի շարք ցուցանիշների համախմբով: Սակայն, այս բաժնում մենք կուսումնասիրենք հիմնականում երկու ցուցանիշ՝ առաջինը ֆինանսական

միջնորդության խորությունն է և երկրորդը՝ ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքները:

Ֆինանսական միջնորդության խորության ցուցանիշը բնութագրում է թե ֆինանսական ինստիտուտները (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ և այլն) ինչ չափով են ներգրավված տնտեսություն մեջ:

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքներն ազատ մրցակցության պայմաններում ցույց են տալիս, թե ինչքան է փողի գինը՝ հաշվի առած ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից գնահատվող տարբեր ռիսկերի աստիճանը: Գնաճի տրված մակարդակի պայմաններում եթե տոկոսադրույքները բարձր են, ապա ռիսկայնության աստիճանը բարձր է, կամ հակառակը:

Այսինքն, ֆինանսական շուկայի միջոցով կարգավորվում է փողի նկատմամբ առաջարկը և պահանջարկը (փողի զանգված, փողի բազա) և դրա գինը (բանկային տոկոսադրույք) տնտեսական գործունեություն ծավալողների համար: Այդ տեսանկյունից, ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական կայունության պահպանման տեսանկյունից ունի կարևոր նշանակություն:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Վերջին տարիներին տնտեսական աճի բարձր տեմպերով պայմանավորված փողի զանգվածը շարունակական աճել է. 2006 և 2007 թվականներին աճերը կազմել են համապատասխանաբար 32.9 տոկոս և 42.5 տոկոս: Մակայն, 2008 թվականի վերջին եռամսյակում, տնտեսության աճի տեմպերի դանդաղման և 2009 թվականին արձանագրված 14.2 տնտեսական անկման պարագայում, նկատելի եղավ նաև փողի նկատմամբ պահանջարկի նվազում: Արդյունքում փողի զանգվածի աճը 2008 և 2009 թվականներին կազմել է համապատասխանաբար 2.3 և 15.1 տոկոս:

Արդեն, 2010 թվականի ապրիլին փողի զանգվածն աճել է 23.9 տոկոս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ընդ որում բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի նպաստումը եղել է դրական՝ 5.5 տոկոսային կետ, արտարժույթային ավանդներինը՝ 16.5 տոկոսային կետ, իսկ դրամային ավանդներինը ընդամենը 2 տոկոսային կետ: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2010 թվականի ապրիլի դրությամբ կազմել են 661.8 մլրդ դրամ, որից 75.5 տոկոս արտարժույթով ավանդներն են:

2006 և 2007 թվականներին ևս փողի բազան աճել էր և կազմել՝ համապատասխանաբար 41.1 և 50.9 տոկոս: 2008 և 2009 թվականների տարեկան արդյունքներով փողի բազայի աճերը կազմել են համապատասխանաբար 5.3 և 13.8 տոկոս:

2010 թվականի ապրիլին փողի բազան աճել է 22.8 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ընդ որում ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվներում ավելցուկային միջոցների և պարտադիր պահուստների նպաստումը եղել է դրական՝ 11.2 տոկոսային կետ, իսկ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի նպաստումը՝ 10.7 տոկոսային կետ: Կանխիկի

Վճարային հաշվեկշիռ

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում տեղի են ունենում տնտեսական հոսքեր դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ: Այդ հոսքերը արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

- ընթացիկ հաշիվ (հիմնականում ցույց է տալիս արտահանման և ներմուծման հետ կապված հոսքերը),
- կապիտալի և ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս կապիտալի ներհոսքն ու արտահոսքը):

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

2006-2008 թվականներին իրականացված տնտեսական և արժույթային քաղաքականությունների արդյունքում ընթացիկ հաշվի հիմնական ցուցանիշների մասով տեղի է ունեցել զգալի բարելավում, եթե 2000 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել էր ՀՆԱ-ի 14.6 տոկոսը, ապա 2007 թվականին այն հասել է 6.4 տոկոսի: Սակայն, սկսած 2008 թվականի 4-րդ եռամսյակից, տնտեսությունը կրեց համաաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումները՝ կրճատվեցին Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործուսույնի եկամուտները, ինչպես նաև հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկը: Աղյուսակ 7-ում ներկայացված են արտաքին հատվածի հիմնական ցուցանիշների միտումները և սպասումները (տես նաև Գծապատկեր 6-ը):

2009 թվականին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կրճատվել է 27.6 տոկոսով: Հաշվետու ժամանակահատվածում նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել արտահանման և ներմուծման ծավալների կրճատում. արտահանումը նվազել է 35 տոկոսով՝ կազմելով 722.3 մլն դոլար⁴, իսկ ներմուծումը կազմել է 2817.2 մլն դոլար՝ նվազելով 25.4 տոկոսով: Ներմուծման նվազումը, որը տեղի է ունեցել առաջին անգամ վերջին 8 տարիների ընթացքում (2002 թվականից սկսած), հիմնականում պայմանավորված էր բնակչության տնօրինվող եկամուտների նվազմամբ, և մասամբ՝ 2009 թվականի մարտին տեղի ունեցած փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ: 2009 թվականի ներմուծման նվազման ամենաբարձր՝ 7.5 տոկոսային կետը պայմանավորվել է «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ, 4.5 տոկոսային կետը՝ «Թանկարժեք քարեր և

մետաղներ» և 3.4 տոկոսային կետը՝ «Հանքահումքային արտադրանքե ապրանքախմբերի ներմուծման նվազմամբ, որոնք համապատասխանաբար կազմել են 57.8, 64.7 և 23 տոկոս:

2009 թվականի տարեկան արդյունքներով արտահանման նվազման ամենաբարձր՝ 10.9 տոկոսային կետը պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրերե ապրանքախմբի արտահանման նվազմամբ, որը կազմել է 33.3 տոկոս: Արտահանման նվազման 6.4 տոկոսային կետը պայմանավորվել է «Պատրաստի սննդի արտադրանքե, 6.4 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրերե և 3.8 տոկոսային կետը՝ «Հանքահումքային արտադրանքե ապրանքախմբերի ծավալների անկմամբ, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 41.0, 39.3 և 23.4 տոկոս:

2009 թվականին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը կազմել է 2094.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով 569 մլն ԱՄՆ դոլարով կամ 21.3 տոկոսով և կազմելով ՀՆԱ-ի 24.5 տոկոսը՝ նախորդ տարվա 22.8 տոկոսի դիմաց:

Սակայն 2010 թվականին, պայմանավորված համաշխարհային, ինչպես նաև ՀՀ տնտեսության վերականգնմամբ, արտաքին առևտրի ցուցանիշները բարելավվել են և դրսևորել են աճի միտումներ: Այսպես՝ հունվար-ապրիլ ժամանակաշրջանում ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 30.9 տոկոսով, արտահանումը՝ 64.3 տոկոսով՝ կազմելով 289.8 մլն դոլար, իսկ ներմուծումը՝ 24.4 տոկոսով՝ կազմելով 1118.9 մլն. դոլար: Արտահանման ցուցանիշի բարելավման վրա դրական ազդեցություն է ունեցել նաև կառավարության քաղաքականությունը, ըստ որի ֆինանսական և ոչ ֆինանսական օժանդակություն է ցուցաբերվում արտահանողներին:

Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2009 թվականին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 29.6 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ և 30.3%-ը՝ ԵՄ երկրներին, 2008 թվականին համապատասխան ժամանակահատվածի ընթացքում նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 27.6 և 35.3 տոկոս: ԵՄ երկրների հետ ՀՀ ապրանքաշրջանառության անկումը 2009 թվականին նախորդ տարվա համեմատ կազմել է 37.3 տոկոս, իսկ ԱՊՀ երկրների հետ՝ 21.7 տոկոս: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկվել էին Գերմանիան (առևտրաշրջանառության 7.3 տոկոսը), Չինաստանը (7.6 տոկոս), ԱՄՆ-ն (4.7 տոկոս), Թուրքիան (4.5 տոկոս), Իրանը (3.8 տոկոս), Բուլղարիան (3.7 տոկոս), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (22.5 տոկոս) և Ուկրաինան (5.4 տոկոս): Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80 տոկոսը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

2010 թվականի հունվար-ապրիլ ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 28.9 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ և 32.3 տոկոսը՝ ԵՄ երկրներին: ԵՄ երկրների հետ ՀՀ ապրանքաշրջանառության աճը 2010 թվականի հունվար-ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 38.5 տոկոս, իսկ ԱՊՀ երկրների հետ՝ 23.3 տոկոս: 2010 թվականին ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրներն են Ռուսաստանը

(առևտրաշրջանառության 22.1%), Չինաստանը (9.2 տոկոս), Գերմանիան (7.0 տոկոսը), Բուլղարիան (6.0 տոկոս), Ուկրաինան (5.2 տոկոս), ԱՄՆ-ն (4.8տոկոս) և այլն:

Փոխարժեք: Նախորդ տարիներին ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման միտումները 2009 թվականի տարեսկզբից դադարել են: Մասնավորապես՝ էթե 2008 թվականի դեկտեմբեր ամսին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել էր 307.8 դրամ, ապա 2009 թվականի դեկտեմբերին այն կազմել է 380.47 դրամ՝ արժեզրկվելով 19.1 տոկոսով: Ըստ էության փոխարժեքի նման վարքագիծը պայմանավորված է եղել համաշխարհային ճգնաժամի հետևանքով արտարժույթի ներհույսի կտրուկ կրճատմամբ և մակրոտնտեսական հիմնարար ցուցանիշի վարքագծերի ճշգրտմամբ: Տարվա միջին փոխարժեքը կազմել է 363.28 դրամ ԱՄՆ դոլարի դիմաց (2008-ին՝ 305.97): Նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել է ԱՄՆ դոլարի համեմատ դրամի անվանական արժեքի 15.8 տոկոս արժեզրկում՝ 2008 թվականի համապատասխան ցուցանիշի զգալի արժևորման դիմաց (11.8 տոկոս): 2010 թվականի հունվար-ապրիլ ժամանակահատվածին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 386.69 դրամ, ինչը բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջինից 14.7 տոկոսով:


Կանխատեսում: 2010 թվականին կանխատեսվում է, որ Հայաստանի տնտեսության արտաքին հատվածում տեղի կունենան դրական փոփոխություններ և կգրանցվի աճ, ինչը հիմնականում պայմանավորված կլինի Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության աշխուժացմամբ, համաշխարհային տնտեսության վերականգնմամբ և կառավարության կողմից հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում տնտեսության արտահանելի հատվածին ցուցաբերված օժանդակությամբ: Այսպես՝ 2010 թվականին կանխատեսվում է առնվազն 14% արտահանման աճ, որը համարվում է պահպանողական քանի դեռ համաշխարհային շուկայում դեռևս առկա են գլոբալ տնտեսության ամբողջական պահանջարկի վերականգնմանը վտանգող որոշակի ռիսկեր՝ հատկապես կապված եվրոպական տարածաշրջանի երկրներում տեղի ունեցող զարգացումների հետ (նշված ռիսկը նկարագրված է ռիսկերի մասում): 2011-2013 թվականներին ակնկալվում է, որ համաշխարհային տնտեսական աճի ընդլայնմանը և կառավարության կողմից տնտեսության արտահանելի ոլորտում տարվող տնտեսական քաղաքականության ուղղությանը համահունչ արտահանման աճը կբարելավվի և ապրանքների արտահանման ծավալները կկազմեն շուրջ 1153 մլն ԱՄՆ դոլարի (\$ՕԲ) միջին տարեկան մակարդակ և միջին տարեկան 19.0% աճ (դոլարային արտահայտությամբ): Նույն ցուցանիշը ապրանքների և ծառայությունների համար կկազմի շուրջ 15.3% (1935.7 մլն ԱՄՆ դոլար): 2010 թվականին կանխատեսվում է 7.0% ապրանքների ներմուծման աճ, որը նույնպես բավականին պահպանողական է հաշվի առնելով տնտեսական աճի՝ հետևաբար և բնակչության ու տնտեսվարողների եկամուտների համանման կանխատեսման մտեցումը: Սակայն, 2011-2013 թվականներին ապրանքների ներմուծման միջին տարեկան աճը կբարձրանա և (դոլարային արտահայտությամբ) կկազմի 8.3%՝ պայմանավորված հիմնականում ներքին տնտեսության

եկամուտների աճով, իսկ ապրանքների և ծառայությունների համար՝ 8.3%: 2010 թվականին ակնկալվում է ՀՆԱ-ի նկատմամբ առանց պաշտոնական տրանսֆերտների ընթացիկ հաշվի պակասուրդի 15.1% մակարդակ, իսկ 2011-2013թթ այն կկազմի միջինը 12.1% (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները՝ 11.5%), նշված բարելավմանն էապես կնպաստի կառավարության հարկաբյուջետային քաղաքականության աստիճանական խստացումը՝ ի դեմս պետական հատվածի պակասուրդի աստիճանական կրճատման:

Աղյուսակ 7. Վճարային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի նկատմամբ %)

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Ընթացիկ հաշիվ /ՀՆԱ	-1.8	-6.4	-11.8	-15.7	-13.2	-13.0	-11.6	-9.9
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտ. Տրանսֆերտ)/ ՀՆԱ	-3.1	-7.4	-12.5	-16.6	-15.1	-13.8	-12.1	-10.3
Այդ թվում՝ եկամուտներ ուղղակի ներդրումներից/ ՀՆԱ	-3.8	-3.6	-2.4	-3.9	-2.4	-2.4	-2.4	-2.4
Ուղղակի ներդրումներ/ՀՆԱ	7.0	7.6	7.9	8.2	8.1	7.7	7.3	7.0

Գծապատկեր 6. Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ, 2000-2013թթ



Պետական հատված


2006-2008 թվականներին պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են միջինում 20.2 տոկոսը՝ դրսևորելով շարունակական աճի միտումներ: 2009 թվականին պետական բյուջեի եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22.2 տոկոսը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 22 տոկոսի դիմաց, իսկ հարկային եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 16.8 տոկոսը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 17.4 տոկոսի դիմաց:

2010 թվականի հունվար-մայիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների գծով արձանագրվել է 22.2 տոկոս, իսկ հարկային եկամուտների հավաքագրման առումով՝ 24 տոկոս աճ, ընդ որում, աճ է գրանցվել գրեթե բոլոր հարկատեսակների և տուրքերի հավաքագրման գծով:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի գծով 2010 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը դրսևորել է անկման միտումներ նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի նկատմամբ՝ 2.8 տոկոսային կետով: Կապիտալ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի մակարդակը 0.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 2.7 Հարկաբյուջետային ազդակը 2004-2013 թվականներին



Գանխատեսում: Պետական հատվածի քաղաքականության հիմնական ուղղությունը 2009 թվականին եղել է հնարավորինս ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը, որն արտացոլվել է հարկաբյուջետային ընդլայնող ազդակի բարձր ցուցանիշում: 2010 թվականի և հետագա տարիների համար, հաշվի առնելով ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշի բարձր մակարդակը և պետական բյուջեի պակասուրդի աստիճանական կրճատման անհրաժեշտությունը, նշված քաղաքականությունը նպատակաուղղված կլինի ամբողջական պահանջարկի վրա ազդեցության տեսանկյունից չեզոքության ապահովմանը, որի պայմաններում տնտեսությանը հնրարավորություն կտրվաի սահուն վերադառնալ հավասարակշռված մակարդակի:

2.3 Գանխատեսումների արդյունքում կատարված ենթադրություններ և ռիսկեր

Ենթադրություններ, որոնք ընկած են տնտեսական կանխատեսումների հիմքում

- Հայաստանը, համարվելով փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, շատ արագ արձագանքեց համաշխարհային տնտեսական զարգացումներին: Դրանով էլ պայմանավորված ենթադրվում է, որ համաշխարհային տնտեսական զարգացումներին համապատասխան (ԱՄՆ-ի Համաշխարհային Տնտեսական Հեռանկարներ պարբերականով Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում (Ռուսաստան, ԱՄՆ, Եվրոպա) միջնաժամկետ հատվածում գրանցվելու է տնտեսությունների վերականգնում և զարգացում) 2010 թվականից կսկսվի տնտեսության զլոբալ վերականգնումը, և տնտեսական զարգացումները կարագանան միջնաժամկետ հատվածում:
- Գործընկեր երկրներում տնտեսական աճի տեմպերի աստիճանական վերականգնումը, հետևաբար և եկամուտների աճը, կուղեկցվի դեպի Հայաստան մասնավոր տրանսֆերտների

վերականգմամբ, որն էլ մեր տնտեսությունում կբարձրացնի հասարակության գնողունակությունը և կընդլայնի պահանջարկը Ռուսաստանի համար:

- Համաշխարհային շուկաներում ակնկալվում է, որ հումքային ապրանքների գները կշարունակեն ունենալ աճի միտումներ:
- Ներքին տնտեսությունում, 2009 թվականի կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ներքո տնտեսություն ներարկված մեծածավալ միջոցները և տնտեսական դաշտում տնտեսվարող սուբյեկտների գործունեության հեշտացմանը և պարզեցմանն ուղղված բազմաթիվ միջոցառումները լազային էֆեկտով (որոշ ժամանակ հետո) դրական ազդեցություն կունենան տնտեսական դաշտի աշխուժացման վրա: Ակնկալվում է, որ 2011-2013 թվականներին տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ են լինելու արդյունաբերությունը և ծառայությունների ոլորտը:
- Արտաքին միջավայրի՝ մասնավորապես, Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության վերականգման տեմպերով և ներքին պահանջարկի ցածր մակարդակով պայմանավորված՝ արտահանումը կլինի առաջանցիկ ներմուծման նկատմամբ, որով էլ կպայմանավորվի 2011-2013 թվականների արտաքին առևտրի զարգացումները՝ բարելավելով ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը:
- Հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված է լինելու առանց հարկային բեռի բարձրացման հարկային մուտքերի ավելացմանը (վարչարարության հաշվին), իսկ ծախսային մասով գերակայություն է շարունակելու մնալ սոցիալական ծախսերի մակարդակի պահպանումը:

Կանխատեսումներում առկա ռիսկերը

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորված են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են ուղղված լինել ինչպես տնտեսական աճի բարձրացմանը, այնպես էլ՝ անկմանը:

Միաժամանակ, Հայաստանը ունենալով փոքր և բաց տնտեսություն, արագ է արձագանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին: Այդ կապակցությամբ հիմնական կանխատեսումների ռիսկերը մեծապես պայմանավորված կլինեն համաշխարհային տնտեսության մակրոտնտեսական փոփոխություններով:

ա) ՀՆԱ-ի աճի կանխատեսմանը նպաստող ռիսկեր.

Արտաքին միջավայր

- Եթե համաշխարհային տնտեսության վերականգնումը լինի ավելի արագ, քան կանխատեսումներում արված ենթադրություններն են, ապա կանխատեսված աճը կլինի ավելի բարձր: Այս իրավիճակի դրսևորումն ավելի հավանական կլինի, եթե Ռուսաստանի տնտեսությունը վերականգնվի ավելի արագ տեմպերով, քան ակնկալվում է:

- Աճի ուղղությամբ հաջորդ ռիսկը կապված է միջազգային գների՝ ակնկալվածից ավելի արագ աճի հետ, որի դրսևորման պարագայում այն մեր երկրի ՀՆԱ-ի աճի՝ կանխատեսվածից ավելի բարձր ցուցանիշի գրանցմանը կնպաստի 2 ճանապարհով, դրանք են ուղղակի՝ հումքի արտահանմամբ պայմանավորված արտադրության ծավալների աճի միջոցով, և անուղղակի՝ Ռուսաստանից ստացվելիք մասնավոր տրանսֆերտների աճի միջոցով:

Ներքին միջավայր.

- Կանխատեսումների սցենարում ենթադրություն է դրված, որ կառավարությունը իրականացնելու է տնտեսական բարեփոխումներ՝ հատկապես գործարար միջավայրի և հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ, սակայն եթե կառավարության բարեփոխումների ազդեցությունը լինի ավելի արագ, քան ակնկալվում է, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:

բ) ՀՆԱ-ի աճի կանխատեսումը նվազեցնող ռիսկեր

Արտաքին միջավայր

- Եթե Եվրոպական երկրներում հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում իրականացված ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականությամբ պայմանավորված պետական պարտավորությունների կատարման անհնարիությունը խորանա, կարող է հանգեցնել ֆինանսական անկայունության եվրոպական շուկաներում, ինչը կարող է նորից վարակի էֆեկտով անդրադառնալ այլ տարածաշրջանների շուկաների վրա, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի արտաքին պահանջարկի վրա:
- Միջազգային կառույցներում տնտեսագետներին շարունակում է անհանգստացնել Եվրոպական տնտեսության առկա խնդիրները: Վերջինս պայմանավորված է եվրոպական արտադրողների ոչ բավարար ճկունությամբ: Մասնավորապես, արտադրողները չեն կարողանում արագ ազատվել իրենց համար ոչ անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներից: Միջնաժամկետում այդ իրավիճակի պահպանումը բացասաբար կանդրադառնա Եվրոպական տնտեսության հետագա աշխուժացման վրա և կհետաձգի տնտեսության վերականգնումը: Արդյունքում, գլոբալ պահանջարկի աճը կլինի ավելի դանդաղ, քան ակնկալվում է, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի տնտեսական աճի վրա:

Հավելված 2.1 Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
	փաստ.	փաստ.	փաստ.	Փաստ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	2656	3149	3568	3103	3339	3570	3835	4134
Իրական ՀՆԱ ինդեքս	113.2	113.7	106.9	85.8	101.8	103.4	103.9	104.5
ՀՆԱ դեֆլյատոր	104.6	104.2	105.9	101.3	105.7	103.4	103.4	103.2
Սպառողական գների ինդեքս (ժամկետի վերջ)	105.2	106.6	105.2	106.5	106.1	104.0	104.0	104.0
Գնաձ (ժամանակաշրջանի վերջ) %	5.2	6.6	5.2	6.5	6.1	4.0	4.0	4.0
Գնաձ (միջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) %	2.9	4.4	9.0	3.4	7.1	4.6	4.0	4.0
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների`								
ՀՆԱ	13.2	13.7	6.9	-14.2	1.8	3.4	3.9	4.5
Արդյունաբերություն	-2.5	2.8	2.1	-7.9	4.7	7.5	5.9	5.4
Գյուղատնտեսություն	0.5	10.4	3.3	-0.1	2.4	3.0	3.1	3.2
Շինարարություն	37.7	18.2	11.3	-42.3	-2.3	2.0	3.8	4.8
Ծառայություններ	16.0	12.5	4.8	-0.1	2.4	2.8	3.5	4.5
Զուտ հարկեր	14.9	35.9	17.1	-20.7	1.7	3.2	4.0	4.4
ՀՆԱ ծախսային կոմպոնենտների իրական աճերը								
Վերջնական սպառում	9.0	12.3	4.5	-2.6	3.6	2.9	3.8	4.1
Մասնավոր	8.2	13.2	5.4	-2.3	2.5	3.0	3.5	4.0
Պետական	14.0	5.2	-1.9	-4.9	12.4	1.9	5.9	5.1
Կապիտալի համախառն կուտակում	32.2	19.7	12.6	-34.4	-4.6	1.0	-0.5	1.9
Մասնավոր	33.7	11.8	12.3	-42.1	2.0	2.8	3.2	3.5
Պետական	22.2	77.1	-16.9	10.0	-22.5	-5.5	-15	-5.4
Ապրանքների և ծառայությունների արտահանում	-7.3	-3.5	-13.1	-11.5	2.7	12.2	14.4	14.9
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	3.8	13.0	7.3	-19.5	0.1	5.1	5.7	6.6
Արտաքին հատված								
Մլն. ԱՄՆ դոլար								
Ապրանքների և ծառայությունների արտահանում	1510.2	1776.7	1757.0	1309.0	1520.8	1652.4	1900.0	2254.6
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-2536.4	-3589.5	-4747.6	-3670.0	-4009.3	-4144.4	-4462.0	-4902.2
Ապրանքների արտահանում	1025.4	1196.6	1112.0	722.3	823.4	946.9	1126.8	1386.0
Ապրանքների ներմուծում	-1921.3	-2796.9	-3775.5	-2817.2	-3014.4	-3225.4	-3483.4	-3831.7
Ապրանքների արտահանման աճ, %	2.0	16.7	-7.1	-35.0	14.0	15.0	19.0	23.0
Ապրանքների ներմուծման աճ, %	20.6	45.6	35.0	-25.4	7.0	7.0	8.0	10.0
Ընթացիկ հաշիվ	-117.1	-589.3	-1381.8	-1341.6	-1140.6	-1161.2	-1113.1	-1023.9
Կապիտալի և ֆինանսական հաշիվ	520.6	1142.5	1147.0	1520.8	1236.9	1425.5	1276.0	1022.1
Արտաքին պարտք	1205.6	1448.9	1577.1	2966.7	3617.7	3849.3	4061.2	4143.7
ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս								
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-16.1	-19.7	-25.6	-27.6	-28.9	-27.9	-26.7	-25.6
Ապրանքների և ծառայությունների արտահանում	23.7	19.3	15.1	15.3	17.6	18.5	19.8	21.8
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	39.7	39.0	40.7	43.0	46.4	46,4	46,5	47,4
Առևտրային հաշիվ	-14.0	-17.4	-22.8	-24.5	-26.3	-25,5	-24,6	-23,6
Ընթացիկ հաշիվ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)	-1.8	-6.4	-11.8	-15.7	-13.2	-13.0	-11.6	-9.9

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
	փաստ.	փաստ.	փաստ.	Փաստ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտոնական տրանսֆերտների)	-3.1	-7.4	-12.5	-16.6	-15.1	-13.8	-12.1	-10.3
Արտաքին պարտք	18.9	15.7	13.5	34.7	41.5	40.9	40.2	38.1
Ներմուծման ծածկույթը (ամիսներով)	5.1	5.5	3.6	6.6	6.1	6.1	5.2	3.9
Դրամավարկային հատված								
Փողի զանգվածի աճ % (M2X ժամ. վերջ)	32.9	42.5	2.3	15.1	10.8	11.0	11.5	12.0
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն (ՀՆԱ/M2X միջին)	6.2	5.3	5.2	4.0	4.2	4.1	4.1	4.0
Փողի բազմարկիչ (M2X)	1.8	1.7	1.6	1.6	1.7	1.7	1.7	1.8
Դրամային զանգվածի աճ % (M2 ժամ. վերջ)	52.3	64.1	-4.2	-16.2	9.0	13.5	16.7	18.1
Դրամային զանգվածի շրջապտույտի արագություն (ՀՆԱ/M2 միջին)	9.4	7.0	6.6	7.2	7.1	7.1	7.1	7.0
Դրամային բազմարկիչ (M2)	1.2	1.3	1.3	1.2	1.3	1.3	1.3	1.4
Փողի բազա, % (ժամ. վերջ)	41.1	50.9	5.3	13.8	6.2	10.6	12.1	12.9

ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2011-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1 ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2011-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՄԺԾԾ առանցքային հարցերից են պետական եկամուտների քաղաքականության ուղղվածությունը և դրանց կանխատեսելիությունը միջնաժամկետ հեռանկարում: Առաջիկա երեք տարիներին պետական եկամուտների քաղաքականության բնադորոշ առանձնահատկությունը պետական ծախսերը ներքին ֆինանսական ռեսուրսներով ապահովելն է: Այս թիրախի հասանելիության տեսանկյունից առավել ընդգծվում է հարկային քաղաքականության դերը, քանի որ պետական եկամուտների գերակշիռ մասը, շուրջ 80%-ը կազմում են հարկային եկամուտներն ու պետական տուրքերը: Խնդիրն առավել կարևորվում է 2008 թվականի 4-րդ եռամսյակում սկսված և 2009 թվականին շարունակված տնտեսական անկման պարագայում. արտադրության և ներմուծման ծավալների կրճատումը բացասաբար անդրադարձավ հարկահավաքման մակարդակի վրա՝ 2009 թվականին հարկային եկամուտների (ներառյալ պետական տուրքի) գծով փաստացի մուտքերը 98.7 մլրդ դրամով կամ 15.9 %-ով զիջեցին 2008 թվականի համապատասխան ցուցանիշը: Ներկայումս, իրավիճակի թելադրանքով միջնաժամկետ հեռանկարում խնդիր է դրվում ի հաշիվ ներքին ֆինանսական ռեսուրսների ոչ միայն վերականգնել պետական ծախսերի նախաձգնաժամային մակարդակը, այլև հնարավորություն ընձեռել կառավարությանը իրականացնելու արդյունավետ, խթանող ծախսային քաղաքականություն: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների պահանջ է առաջացել՝ պայմանավորված տնտեսական ճգնաժամի հետևանքները մեղմելու նպատակով այլ պետություններից և միջազգային կազմակերպություններից լրացուցիչ ներգրավված վարկերի սպասարկման և մարման անհրաժեշտությամբ:

Հաշվի առնելով նշված առանձնահատկությունները, 2011-2013թթ պետական եկամուտների քաղաքականությունը կիրականացվի ՀՀ Ազգային ժողովի հավանության արժանացած ՀՀ կառավարության 2008-2012թթ գործունեության ծրագրով ամրագրված սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես.

- առաջիկա տարիներին հարկային եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացումը, հիմնականում ի հաշիվ հարկային (այդ թվում՝ մաքսային) վարչարարության բարելավման, կլինի հարկաբյուջետային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը, ինչի շնորհիվ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների հարաբերությունը կավելացվի տարեկան միջին հաշվով 0.3-0.4 տոկոսային կետով,

- պետական բյուջեի ծախսերն առավելապես ապահովված կլինեն ներքին ռեսուրսներով և կնվազի պետական ծախսերի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից,

- հարկային և մաքսային օրենսդրության կատարելագործումը, որը կհանգեցնի հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացմանը, հարկային և մաքսային օրենսդրության պահանջների համահավասար և անվերապահ կիրառմանը,

- կառավարությունը հարկային եկամուտների ավելացման իր հիմնական նպատակին կհասնի հատկապես տնտեսության սովորային հատվածի կրճատման հաշվին` բացառելով տնտեսվարող սուբյեկտների հանդեպ օրենքի պահանջներով չպայմանավորված վարչարարական ճնշումները,

- կիրականացվեն միջոցառումներ կուտակված գերավճարների և ապառքների մարման ուղղությամբ, ինչպես նաև ձեռք կառնվեն միջոցառումներ նոր գերավճարների և ապառքների առաջացումը թույլ չտալու համար,

- հարկման հարաբերություններում կընդլայնվեն ինքնագնահատման համակարգի կիրառման մոտեցումներն ի հաշիվ հարկ վճարողների շահերի պաշտպանության և նրանց ապասարկման որակի բարձրացման և այլն:

2011-2013թթ հարկային օրենսդրության հնարավոր փոփոխությունները, հարկային և մաքսային մարմինների կողմից 2011-2013թթ ստորև ներկայացվող` իրականացվելիք վարչարարական միջոցառումները միտված կլինեն այս և ՀՀ կառավարության 2008-2012թթ գործունեության ծրագրով ամրագրված` հարկային և մաքսային բնագավառներին առնչվող մյուս սկզբունքներն արտացոլող նպատակների հասանելիության, ինչպես նաև 2011-2013թթ համար սույն փաստաթղթով նախատեսված հարկային եկամուտների ծրագրային մակարդակի ապահովմանը:

ՀՀ 2011-2013թթ պետական բյուջեների հարկային եկամուտների ապահովմանն ուղղված միջոցառումների ծրագիր

№	Միջոցառում	Բովանդակություն
1.	Հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողության արդյունավետության բարձրացում	<ul style="list-style-type: none"> ➢ Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի (ՌՉՍՀ) ներդրում, այդ թվում` թիրախային ստուգումների պլանավորում և իրականացում ռիսկային չափանիշների հիման վրա, ➢ Հարկային մարմնի կողմից վերլուծական փաստաթղթային ստուգումների համակարգի կատարելագործում, այդ թվում` երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների հիման վրա, ➢ Հարկային մարմնում ստուգումների ստանդարտների և արդյունավետության մոնիտորինգի և գնահատման համակարգի ներդրում և կատարելագործում:
2.	Հարկերի կամավոր վճարման (ինքնագնահատման) սկզբունքի արմատավորում, հարկ վճարողների սպասարկման որակի բարելավում	<ul style="list-style-type: none"> ➢ Հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգի գործարկում և ամբողջական կիրառում, հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային եղանակը կիրառող հարկ վճարողների շրջանակների էական ընդլայնում, ➢ Հաշվետվական համակարգի կատարելագործում, այդ թվում` հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի ներդրում, հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի ձևավորում, համակարգի ամբողջական կիրառում` նպատակ ունենալով բարձրացնել հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման առումով հարկային կարգապահությունը, ➢ Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ամբողջական գործար-

№	Միջոցառում	Բովանդակություն
		<p>կում, այդ թվում՝ հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների համար միասնական ստանդարտների գործնական կիրառում, համապատասխան ուսումնական ծրագրերի իրականացում, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվական ձեռնարկների հրատարակում, սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնում,</p> <ul style="list-style-type: none"> ➢ Հարկ վճարողների հարցերին արագ արձագանքի և հետադարձ կապի ապահովման նպատակով հեռախոսագանգերի սպասարկման կենտրոնի գործարկում, այդ թվում՝ համապատասխան հայեցակարգի գործնական կիրառում, հեռախոսային կենտրոնի մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնում, հետագայում կատարելագործում, ➢ Հարկ վճարողների պարզաբանումների տրամադրման ընթացակարգի ամբողջական կիրառում, ➢ Հարկ վճարողների կողմից առավել հաճախ թույլ տվող սխալների տեղեկատուի գործարկում հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում, սխալների տեղեկատուի թարմացում ամսական պարբերականությամբ, ➢ Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի կատարելագործում, ➢ Կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում անձնավորված հաշվառման համակարգի ներդրում:
3.	<p>Հարկային մարմնի ներքին կառավարման արդյունավետ համակարգի ներդրում</p>	<ul style="list-style-type: none"> ➢ Մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծում, պաշտոնական առաջնադասման համակարգի ներդրում՝ այն կապելով կատարողական համակարգի, արտադրողականության և այլ ֆունկցիոնալ ցուցանիշների հետ, ➢ Հարկային ծառայողների վերապատրաստման ամբողջական համակարգի ձևավորում և ներդրում՝ նպատակ ունենալով բարձրացնել հարկային ծառայողների մասնագիտական և վերլուծական կարողությունները, ➢ Կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործում, այդ թվում՝ հարկային մարմնի ներքին աուդիտի նոր, ամբողջական համակարգի ներդրում և կատարելագործում, որը կնպաստի հարկային մարմնի ներքին կարգապահության բարձրացմանը, կայուն և հետևողական գործելակերպին, ➢ Հարկային մարմնի ՏՏ ենթակառուցվածքների կատարելագործում և տեղեկատվական հոսքերի որակի բարձրացում, ➢ «Հարկատու 3ե էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական ներդրում և կատարելագործում, ➢ Հարկային մարմնի բիզնես գործընթացների ամբողջական վերակազմակերպում և այդ գործընթացների կատարելագործված քարտեզի առկայություն:
4.	<p>Հարկային ապառքների գանձման և հարկերի վճարումից խուսափելու դեպքերի բացահայտման մեխանիզմների սահմանում</p>	<ul style="list-style-type: none"> ➢ Ընթացիկ հարկային և պարտադիր վճարների մատվ պարտավորությունների աճի սահմանափակմանը, հարկերի և պարտադիր վճարների առկա ապառքների կրճատմանն ուղղված միջոցառումների իրականացում, այդ թվում. <ul style="list-style-type: none"> - հարկ վճարողի գույքի և դրամական միջոցների արգելադրման աշխատանքների պարբերաբար մոնիտորինգի իրականացում, հարկ վճարողի գույքի արգելադրման աշխատանքների բարելավում և ընթացիկ ապառքների ավելացման կանխմանն ուղղված աշխատանքների իրականացում, - անվճարունակության հատկանիշների առաջացման հիմքերի ուսումնասիրություն, չկատարված հարկային պարտավորությունները անհուսալի համարելու և սահմանված ժամկետում հաշվառումից հանելու հետևողական աշխատանքների իրականացում, - Ապառքատերերի հետ կատարվող աշխատանքների նոր մեխանիզմների սահմանում և կիրառում, ➢ Չհիմնավորված հարկային վնասների կուտակման բացառմանն ուղղված անհրաժեշտ ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացում և համապատասխան միջոցառումների ձեռնարկում, ➢ Հարկերի վճարումից խուսափելու ռիսկերի բացահայտման մեխանիզմների սահմանում, այդ թվում՝ համապատասխան մեթոդաբանության մշակում, հարկերի վճարումից խուսափելու սխեմաների դասակարգում և համապատասխան մոտեցումների ներդրում:

№	Միջոցառում	Բովանդակություն
5.	Հարկային գերավճարների, ներառյալ ԱԱՀ-ի ետ վերադարձի մեխանիզմների ապահովում	➢ Ռիսկերի կառավարման հիման վրա հարկային գերավճարների ներառյալ ԱԱՀ-ի գծով վերադարձի ավտոմատացված համակարգի ներդրում և կատարելագործում:
6.	Մաքսային հսկողության արդյունավետության բարձրացում	➢ Ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության ներդրում
7.	Հետբացթողումային հսկողության արդյունավետության բարձրացում	➢ Հետբացթողումային հսկողության իրականացման ընթացակարգի արդյունավետության բարձրացման նպատակով համապատասխան վերլուծությունների իրականացում և դրա հիման վրա հետբացթողումային ստուգումների պլանավորում և իրականացում
8.	ՀՀ մաքսային մարմիններում ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացում	Մաքսային ձևակերպումների նպատակով օգտագործվող «ԹԻ ՎԻ ԷՄԵ ավտոմատ համակարգչային ծրագրում նոր մոդուլների ներդրում, մասնավորապես. ➢ Մաքսային հայտարարագրերի էլեկտրոնային ձևով ներկայացում, ➢ Էլեկտրոնային ստորագրության համակարգի ներդրում և կիրառում, ➢ Պետական բյուջե գանձվող մաքսային վճարների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով բանկերից տեղեկատվության ստացում:
9.	Մաքսային մարմնում մասնագիտական գիտելիքների կատարելագործման ուղղված համակարգի ձևավորում և ներդրում	➢ Մաքսային ծառայողների վերապատրաստման համակարգի ձևավորում և ներդրում՝ նպատակ ունենալով բարձրացնել մաքսային ծառայողների մասնագիտական կարողությունները

3.2 . ՀՀ 2011-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

ՀՀ 2011-2013 թվականների պետական բյուջեների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 833.8 մլրդ դրամի, 882.6 մլրդ դրամի և 964.6 մլրդ դրամի չափով: Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների և պետական տուրքերի (այսուհետև՝ հարկեր):

Աղյուսակ 3.1. 2011-2013 թվականների համար ծրագրված բյուջետային եկամուտները (մլրդ դրամներով)

Եկամտատեսակը	2011թ	2012թ	2013թ
Պետական բյուջեի եկամուտներ, որից՝	833.8	882.6	964.6
<i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i>	23.36%	23.01%	23.33%
1. Հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	771.3	851.6	938.6
<i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i>	21.6%	22.2%	22.7%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	92.5%	96.5%	97.3%
1.1. Հարկային եկամուտներ և պետական տուրք	650.9	718.4	790.9
<i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i>	18.23%	18.73%	19.13%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	78.06%	81.40%	81.99%
1.2. Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	120.4	133.2	147.7
<i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i>	3.37%	3.47%	3.57%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	14.44%	15.09%	15.32%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	41.2	9.7	4.9
<i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i>	1.15%	0.25%	0.12%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	4.94%	1.10%	0.51%
3. Այլ եկամուտներ	21.3	21.2	21.1

Եկամտատեսակը	2011թ	2012թ	2013թ
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	0.60%	0.55%	0.51%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	2.56%	2.41%	2.19%

ՀՀ 2011-2013 թվականների պետական բյուջեների եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին եկամտատեսակների բազայի ձևավորման կամ հաշվարկման վրա: Առանձին դեպքերում հաշվի են առնվել նաև պայմանագրային հարաբերություններով կարգավորվող ցուցանիշները:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով (այսուհետև՝ հարկեր) 2011-2013 թվականների բյուջետային մուտքերը ծրագրվել են՝ հարկեր/ՀՆԱ ցուցանիշի տարեկան աճը 0.4-0.5% ապահովելու սկզբունքի հիման վրա, հիմք ընդունելով 2010 թվականի համար ծրագրված հարկեր/ՀՆԱ ցուցանիշը՝ 17.73%,

Հաշվարկներում լրացուցիչ ենթադրվել է, որ հարկերի գծով 2010 թվականի համար ծրագրված հարկեր/ՀՆԱ ցուցանիշի ծրագրային մակարդակը իրատեսական է և առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական բարենպաստ զարգացումները բավարար հիմքեր կստեղծեն այն ոչ միայն ապահովելու, այլև՝ գերակատարելու համար:

2011-2013 թվականների հարկերի հավաքագրման առաջարկվող մակարդակների իրատեսական լինելը գնահատելու համար հարկ է դիտարկել այն բնութագրող մի քանի ցուցանիշներ:

Աղյուսակ 3.2. ՀՀ 2009-2013 թվականների պետական բյուջեների հարկերի վերաբերյալ առանձին ցուցանիշներ

Ցուցանիշներ	2009թ	2010թ	2011թ	2012թ	2013թ
	փաստացի ⁸	կանխատեսում			
Հարկեր (մլրդ դրամ)	520.2	570.0	650.9	718.4	790.9
աճը նախորդ տարվա նկատմամբ (%-ով)	-18.2	9.6	14.2	10.4	10.1
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	16.8	17.73	18.23	18.73	19.13

2011-2013 թվականներին հարկային սահունության գործակիցը կգերազանցի 1-ը, ինչը ենթադրում է հարկային և մաքսային մարմինների կողմից վարչարարական միջոցառումների իրականացման անհրաժեշտություն՝ հարկերի ծրագրային մակարդակն ապահովելու համար: Այս առումով նշված տարիների հարկերի գծով ծրագրված ցուցանիշները կատարման առումով պարունակում են որոշակի ռիսկ: Մյուս կողմից 2011-2013 թվականների հարկերի ծրագրային մակարդակի ապահովման որոշակի ռեզերվներ է պարունակում տնտեսության զարգացման կանխատեսվող սցենարը: 2005-2013 թվականների մակրոտնտեսական ցուցանիշների փաստացի և կանխատեսումային մեծությունների համեմատությունից կարելի է եզրակացնել, որ միջնաժամկետ հեռանկարում կանխատեսված մակրոտնտեսական շրջանակը ռիսկային չէ և ծրագրայինի

⁸ Տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով 2009 թվականի փաստացի ցուցանիշների կազմում ներառված չեն ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից ֆինանսավորված, ինչպես նաև ՀՀ պետական կառավարման մարմինների 2009 թվականի արտաբյուջետային հաշիվների հարկերի գծով փաստացի մուտքերի հանրագումարը:

նկատմամբ փաստացի բարենպաստ արդյունքներ արձանագրելու դեպքում հնարավոր է ակնկալել լրացուցիչ հարկային եկամուտներ:

Աղյուսակ 3.3. Մակրոտնտեսական ցուցանիշների 2005-2013թթ փաստացի և կանխատեսումային մեծությունները

Ցուցանիշը	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
	փաստ					կանխատեսում ⁹			
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	2,242.9	2,656.2	3,149.0	3,568.2	3,102.8	3,338.9	3,570.1	3,835.4	4,133.8
ՀՆԱ-ի իրական աճ	13.9%	13.2%	13.7%	6.9%	-14.2%	1.8%	3.4%	3.9%	4.5%
ՀՆԱ-ի դեֆլյատոր	3.2%	4.6%	4.2%	5.9%	1.3%	5.7%	3.4%	3.4%	3.2%
1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը դրամով	457.7	416.0	342.08	306.82	363.3	386.41	401.15	401.15	401.15
1 եվրոյի միջին տարեկան փոխարժեքը դրամով	570.4	521.2	467.81	476.86	507.4	570.73	541.35	541.35	541.35

Պարտադիր սոցիալական ապահովության վճարները 2011-2013թթ համար ծրագրվել են համապատասխանաբար 120.4 մլրդ դրամ, 133.2 մլրդ դրամ, 147.7 մլրդ դրամ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2011-2013 թվականների բյուջետային մուտքերը ծրագրվել են՝ հիմք ընդունելով 2010 թվականի համար ծրագրված՝ ՀՆԱ-ի նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների հարաբերության ցուցանիշը՝ 3.27% և այդ ցուցանիշի տարեկան աճը 0.1 տոկոսային կետի չափով ապահովելու սկզբունքի կիրառմամբ:

Ինչպես և հարկերի կանխատեսումներում, պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2011-2013թթ մուտքերի հաշվարկներում լրացուցիչ ենթադրվել է, որ 2010 թվականի համար ծրագրված պարտադիր սոցիալական ապահովության վճար/ՀՆԱ ցուցանիշի ծրագրային մակարդակը իրատեսական է և առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական բարենպաստ զարգացումները բավարար հիմքեր կստեղծեն այն ոչ միայն ապահովելու, այլև՝ գերակատարելու համար:

Աղյուսակ 3.4. Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2010-2013թթ ծրագրային/կանխատեսումային ցուցանիշները

Ցուցանիշները	2010	2011թ	2012թ	2013թ
	ծրագիր	կանխատեսում		
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ (մլրդ դրամ)	105.2	120.4	133.2	147.7
Տոկոսով ՀՆԱ-ի նկատմամբ	3.27%	3.37%	3.47%	3.57%

Պաշտոնական դրամաշնորհները 2011-2013թթ համար ծրագրվել են՝ հաշվի առնելով դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները:)

Աղյուսակ 3.5. 2011-2013թթ ծրագրված պաշտոնական դրամաշնորհները (մլրդ դրամներով)

⁹ Որպես 2011-2013թթ եվրոյի և ԱՄՆ դոլարի փոխարժեքների միջին տարեկան կանխատեսումային ցուցանիշներ ընդունվել են ս.թ. մայիսի 1-ի դրությամբ ՀՀ արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները, իսկ 2010 թվականի համար՝ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի հաշվարկների հիմքում դրված փոխարժեքները:

Դոնորը	2011թ	2012թ	2013թ
	կանխատեսում		
2. Ընդամենը պաշտոնական դրամաշնորհներ,	41.2	9.7	4.9
որից՝			
Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար դրամաշնորհ	7.3	5.1	2.7
<Ընդհանուր բյուջետային աջակցություն> դրամաշնորհ	4.3	4.3	2.2
<Հազարամյակի մարտահրավեր> հիմնադրամից դրամաշնորհ	25.5		
Դրամաշնորհներ այլ աղբյուրներից	4.1	0.3	0

Այլ եկամուտները ներառում են բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինները, պետական ձեռնարկությունների գույքի և պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարները, պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսավճարները), բռնագրավված, տիրագուրկ, նվիրատվության կամ ժառանգության իրավունքով պետությանն անցած հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի իրացումից մուտքերը, իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերը և այլ եկամուտները:

Այլ եկամուտները 2011-2013թթ համար ծրագրվել են համապատասխանաբար 21.3 մլրդ դրամի, 21.2 մլրդ դրամի և 21.1 մլրդ դրամի չափով, հաշվի առնելով գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ 2011 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում համապատասխան հայտերով ներկայացված կանխատեսումները, կատարված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև առանձին եկամտատեսակների գծով նախորդ տարիներին արձանագրված հավաքագրման միտումները:

Այլ եկամուտների ՀՀ 2011-2013թթ ՄԺԾԾ կանխատեսումների ընդհանուր պատկերը հետևյալն է.

Աղյուսակ 3.7. Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2011-2013թթ ՄԺԾԾ շրջանակներում կատարված կանխատեսումները (մլրդ դրամներով)

Ցուցանիշը	2011	2012	2013
Այլ եկամուտներ	21.31	21.24	21.13
այդ թվում՝			
Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	0.70	0.68	0.67
Տոկոսավճարներ և շահաբաժիններ	3.94	3.95	3.96
Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարներ (տոկոսներ)	4.61	4.25	3.86
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր	2.18	2.26	2.36
Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ մուտքեր	9.88	10.10	10.28

2011-2013թթ բյուջետային եկամուտների կանխատեսումների հետագա ճշգրտումներում էական կլինի նաև հետևյալ լրացուցիչ տեղեկությունների օգտագործումը.

- հաշվարկներում կիրառված մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության մասին տեղեկություն,
- բյուջետային եկամուտների գանձման համար պատասխանատու մարմիններից ստացվելիք լրացուցիչ տեղեկություններ,
- ազգային հաշիվների համակարգի 2008-2009թթ որոշ մակրոտնտեսական ցուցանիշների փաստացի տարեկան տվյալներ,
- 2010 թվականի վիճակագրական այլ ցուցանիշներ:

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

4.1 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ

Պետական բյուջեի ձևավորումը առաջիկա տարիներին շարունակելու է ընթանալ բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից: Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար ներգրավվող միջոցների գերակշիռ մասը կազմելու են փոխառու միջոցները, ընդ որում՝ արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների հիմնական մասը կունենա նպատակային բնույթ և կուղղվի սոցիալական ոլորտներում և հասարակական ենթակառուցվածքներում ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանը:

Ստորև ներկայացվում է ՀՀ 2010-2013 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (տե՛ս Աղյուսակ 4.1):


Աղյուսակ 4.1. ՀՀ 2010-2013 թթ պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)

Ցուցանիշներ	2010	2011	2012	2013
	հաստատված	ծրագիր		
Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ ընդամենը այդ թվում՝	193,386.5	174,933.7	164,921.4	165,351.3
1. Ներքին աղբյուրներ որից՝	99,515.4	150,264.3	70,011.1	89,239.8
Փոխառու միջոցներ	26,467.1	28,379.3	28,389.4	33,389.4
ֆինանսական ակտիվներ	73,048.4	121,885.0	41,621.7	55,850.4
2. Արտաքին աղբյուրներ որից՝	93,871.1	24,669.3	94,910.3	76,111.5
Փոխառու միջոցներ	127,738.0	60,060.3	131,653.5	115,746.2
ֆինանսական ակտիվներ	(33,866.9)	(35,391.0)	(36,743.2)	(39,634.6)

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2010 թվականի համար ծրագրավորված 6.0 %-ի դիմաց 2011-2013 թվականին աստիճանաբար կնվազի ՀՆԱ-ի 4. 9 % մինչև 4.0 %, ընդ որում պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների տեսակարար կշիռը դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների ընդհանուր ծավալում 2011-2013 թվականներին կտատանվի 85.9 %-ից 54.0 % միջակայքում՝ 2010 թվականի ծրագրային 51.5%-ի դիմաց:

ՀՀ պետական բյուջեին բնորոշ առանձնահատկություններից մեկը դա նրա որոշակի կախվածությունն է արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտոնական դրամաշնորհներից), որը կպահպանվի նաև առաջիկա տարիներին (տե՛ս Գծանկար 4.1):

Գծանկար 4.1 ՀՀ 2010-2013թթ. պետական բյուջեների ֆինանսավորումը արտաքին աղբյուրների հաշվին



Քանի որ պետական բյուջեի դեֆիցիտը գերազանցապես ֆինանսավորվում է փոխառու միջոցների հաշվին, ապա դրա մեծությունը և կառուցվածքը էապես առնչվում է պետական ներքին և արտաքին պարտքը բնութագրող ցուցանիշների հետ:

Պետական բյուջեի, մասնավորապես՝ դրա դեֆիցիտի ֆինանսավորումը դեռևս շարունակում է կախվածության մեջ մնալ արտաքին վարկերից և դրամաշնորհներից: Տարբեր մեթոդներով հաշվարկված դեֆիցիտների համեմատական վերլուծությունները նույնպես հաստատում են այդ փաստը (տե՛ս Աղյուսակ 4.2):

Աղյուսակ 4.2. Կոնվենցիոնալ, ոչ կոնվենցիոնալ, առաջնային և ընթացիկ դեֆիցիտները 2009-2013 թթ

Ցուցանիշներ	2009 փաստացի	2010 հաստատված պետական բյուջե	2011 ծրագիր	2012 ծրագիր	2013 ծրագիր
Ոչ կոնվենցիոնալ դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերությունը	7.7%	6.0%	4.9%	4.3%	4.0%
Կոնվենցիոնալ դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների (առանց դրամաշնորհների) և ծախսերի տարբերությունը	8.4%	7.3%	6.1%	4.6%	4.1%
Ընթացիկ դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ընթացիկ ծախսերի տարբերությունը	0.9%	0.9%	0.1%	-0.8%	-1.3%

Առաջնային դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների (առանց դրամաշնորհների) և ծախսերի (առանց տոկոսավճարների) տարբերությունը	7.9%	6.2%	4.6%	3.1%	2.7%
---	------	------	------	------	------

Աղյուսակում բերված ցուցանիշների համադրումից երևում է, որ ՄԺԾԾ ժամանակահատվածում կոնվենցիոնալ դեֆիցիտը միջին տարեկան մոտ 11.5%-ով գերազանցում է ոչ կոնվենցիոնալ դեֆիցիտը, ընդ որում նույն ժամանակահատվածի համար դրամաշնորհների ազդեցությունը դեֆիցիտի վրա միջին հաշվով կազմում է տարեկան ՀՆԱ -ի 0.48 %ը:

Ընթացիկ դեֆիցիտի հաշվարկը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիտարկվող ՄԺԾԾ ժամանակահատվածում ծրագրավորվում է ընթացիկ հավելուրդ, վկայում է, որ պետական բյուջեի սեփական եկամուտները 2011-2013թթ Բավարար են ամենաանհրաժեշտ ընթացիկ ծախսերը ծածկելու համար:

Պետական պարտքի սպասարկման հետ կապված տոկոսավճարների ազդեցությունը դեֆիցիտի վրա երևում է կոնվենցիոնալ և առաջնային դեֆիցիտների համադրումից: Մասնավորապես 2011-2013թթ ժամանակահատվածում կոնվենցիոնալ դեֆիցիտում տոկոսավճարների տեսակարար կշռի տարեկան միջինը կկազմի 29.5 %՝ 2010 թվականի ծրագրավորված 15.7 %-ի դիմաց:

Պետական բյուջեի դեֆիցիտի մեծության կանխատեսումներում առկա ռիսկը

Անկախ 2011-2013թթ համար կանխատեսվող պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների առկայության հանգամանքից պետական բյուջեի դեֆիցիտի մեծության (որը կանխատեսվել է այդ տարիների անվանական ՀՆԱ-ի 4.0-4.9% միջակայքում) վրա կարող է էական ազդեցություն ունենալ 2010-2012թթ ժամանակահատվածում փաստացի ձևավորված պետական պարտք/անվանական ՀՆԱ հարաբերության մեծությունը: Խոսքը գնում է մակրոկանխատեսումներում պարունակված ռիսկերով պայմանավորված պետական պարտք/անվանական ՀՆԱ հարաբերության մեծության 2010-2012թթ ժամանակահատվածում 50% սահմանաչափը անցնելու ռիսկի մասին, որի առկայությամբ գործողության մեջ է դրվում <Պետական պարտքի մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝ այն է.

<Եթե պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50%-ը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3%-ը:>:

4.2 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ

2011-2013 ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ 2010-2013 թվականների պետական բյուջեների կանխատեսվող մուտքերի վերլուծությունից երևում է, որ 2010 թվականի մակարդակի համեմատ, 2011 թվականի անվանական ՀՆԱ-ի շուրջ 11.1% աճի պայմաններում, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մուտքերի ծավալը ծրագրավորվում է շուրջ 7.8% կամ 73.2 մլրդ դրամ ավելացումով (հիմնականում հարկային եկամուտների հավելաձի հաշվին): Միաժամանակ 2011 թվականի մակարդակի համեմատ պետական բյուջեի մուտքերի ծավալի 27.3% աճ է կանխատեսվում 2012 թվականին (անվանական ՀՆԱ-ի 7.4% կանխատեսվող աճի պայմաններում) և 2012 թվականի մակարդակի համեմատ՝ 2013 թվականին՝ 27.3 %-ով (անվանական ՀՆԱ-ի 7.8% կանխատեսվող աճի պայմաններում):

Աղյուսակ 4.3. Բյուջետային ռեսուրսների փաթեթում 2011-2013թթ կանխատեսվող փոփոխությունները (մլն դրամ)

Ցուցանիշներ	2011թ. ծրագիր	2012թ. ծրագիր	2013թ. ծրագիր
1. Եկամուտներ	833,794.4	882,605.5	964,576.5
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	23.36	23.01	23.33
2. Դեֆիցիտի ֆինանսավորման գուտ աղբյուրներ	174,933.7	164,921.4	165,351.3
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	4.9	4.3	4.0
ԸՆԴԱՄԵՆԸ ՍՈՒՏՔԵՐ	1,008,728.0	1,047,526.9	1,129,927.8
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	28.3	27.3	27.3
Մուտքերի հավելաձ (նախորդ տարվա մուտքերի մակարդակի նկատմամբ՝ մլն դրամ)	73,203.4	38,798.9	82,400.9
3.ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՎԵԼԱՃ (նախորդ տարվա մուտքերի մակարդակի նկատմամբ՝ %)	7.8	3.8	7.9
4. Ոլորտային կտրվածքով նախորդ տարվա մակարդակի նկատմամբ ազատված գուտ միջոցներ (մլն դրամ)	20,139.9	73,881.8	19,923.4
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (նախորդ տարվա ռեսուրսների մակարդակի նկատմամբ՝ մլն դրամ)	93,343.3	112,680.7	102,324.4
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.6	2.9	2.5
Հավելյալ բյուջետային ռեսուրսների կանխատեսվող բաշխումը 2011-2013 թթ ըստ ոլորտների (մլն դրամ)	93,343.3	112,680.7	102,324.4
այդ թվում՝			
1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն	41,038.1	688.2	26,521.5
2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և փրկարար ծառայության համակարգեր	2,140.3	3,445.9	11,599.2
3. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և	20,141.4	104,172.8	52,469.9

Ցուցանիշներ	2011թ. ծրագիր	2012թ. ծրագիր	2013թ. ծրագիր
կոմունալ ծառայություններ			
4. Պետական կառավարում	1,523.3	-	1,457.3
5. Պետական պարտքի սպասարկման ծախսեր	13,209.2	4,373.9	3,026.6
6. Այլ ոլորտներ	15,290.9	-	7,249.9

Ինչպես երևում է աղյուսակից՝ 2011-2013 թվականներին, նախորդ տարվա համեմատ, ստացվելիք լրացուցիչ մուտքերի զգալի մասը՝ 245.0 մլրդ դրամը կամ ընդհանուրի 79.46%-ը նախատեսվում է ուղղել սոցիալ-մշակութային ճյուղերի ու գիտության, ինչպես նաև տնտեսության ճյուղերի ֆինանսավորմանը, ընդ որում՝ սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը բաժին կհասնի լրացուցիչ մուտքերի ընդհանուր գումարի 22.1 %-ը, որը վկայում է այն մասին, որ 2011-2013 թթ նախատեսվում է շարունակել բյուջետային ծախսերի սոցիալական ուղղվածության ավելացումը:

Սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը հատկացված հավելյալ միջոցների շուրջ 20.6 %-ը կտրամադրվի կրթության բնագավառին, շուրջ 67.46 %-ը՝ սոցիալական պաշտպանության բնագավառին և 6.4%-ը՝ առողջապահությանը (հիմնականում առաջնային՝ ամբուլատոր պոլիկլինիկական և հիվանդանոցային բուժօգնությանը):

Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության համակարգերի պահպանման և փրկարար ծառայության համակարգի ծախսերին կուղղվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի շուրջ 5.6%-ը, որը պայմանավորված է վերոհիշյալ համակարգի մարմինների կենսագործունեության ապահովման համար համապատասխան միջոցների հատկացման անհրաժեշտությամբ:

Տնտեսության ճյուղերին 2011-2013 թվականներին կհատկացվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 57.3%-ը: Ընդ որում ՀՀ 2011-2013թթ. ՄԺԾԾ ծրագրով ներառված են շուրջ 341.3 մլրդ դրամի չբաշխված նպատակային վարկային ծրագրեր, որոնք վարկատու կազմակերպությունների հետ համապատասխան վարկային պայմանագրերի կնքմամբ հետագայում կուղղվեն համապատասխան ոլորտներ:

Պետական պարտքի սպասարկմանը նախատեսվում է հատկացնել հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 6.7%-ը:

4.3 2011-2013 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ` ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

ՀՀ 2011-2013 թվականների պետական բյուջեների ծախսերի կանխատեսումները՝ ըստ ոլորտների բնութագրվում են ստորև ներկայացված աղյուսակի ցուցանիշներով¹⁰ :

Աղյուսակ 4.4. ՀՀ 2010-2013 թթ պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլն դրամ)

Ցուցանիշներ	2010 թ. հաստատված պետական բյուջե	2011 թ. ծրագիր	2012թ. ծրագիր	2013թ. ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	935,524.6	1,008,728.0	1,047,526.9	1,129,927.8
1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն	418,755.7	459,793.8	457,634.2	482,844.0
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	13.0	12.9	11.9	11.7
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	44.8	45.6	43.7	42.7
2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգեր	178,312.1	180,452.4	183,898.3	195,497.5
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	5.5	5.1	4.8	4.7
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	19.1	17.9	17.6	17.3
3. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	164,753.0	164,754.5	204,687.4	238,545.6
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	5.1	4.6	5.3	5.8
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	17.6	16.3	19.5	21.1
4. Պետական կառավարում	58,108.3	59,631.6	57,305.0	58,762.9
- տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)	1.8	1.7	1.5	1.4
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.2	5.9	5.5	5.2
5. Պետական պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)	37,076.9	50,286.2	54,660.0	57,686.7
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.2	1.4	1.4	1.4
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	4.0	5.0	5.2	5.1
6. Այլ ոլորտներ	78,518.6	93,809.5	89,341.3	96,591.1
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.4	2.6	2.3	2.3
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.4	9.3	8.5	8.5

Սոցիալ-մշակութային ճյուղերի և գիտության խմբում 2010-2013 թվականներին ևս կարևորվելու է հատկապես կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառների զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացումը:

Աղյուսակ 4.5. Սոցիալ-մշակութային ճյուղերի և գիտության ոլորտի 2010-2013 թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով (մլն դրամ)

¹⁰ Այսուհետև սույն գլխում «Սոցիալ-մշակութային ճյուղեր», «Տնտեսության ճյուղեր» և «Այլ ոլորտներ» խմբերը ներկայացվում են առանց պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների ապարատների պահպանման ծախսերի, որոնք միավորված են «Պետական կառավարում» խմբում

Ցուցանիշներ	2010 թ. հաստատված կետական բյուջե	2011թ. ծրագիր	2012թ. ծրագիր	2013 թ. ծրագիր
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՃՅՈՒՂԵՐ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	418,755.7	459,793.8	457,634.2	482,844.0
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	13.0	12.9	11.9	11.7
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	44.7	45.6	43.7	42.7
այդ թվում՝				
1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	99,294.6	108,318.5	106,706.5	111,765.5
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	3.1	3.0	2.8	2.7
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	10.6	10.7	10.2	9.9
2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	241,073.9	267,123.4	267,220.5	287,110.5
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	7.5	7.5	7.0	6.9
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	25.8	26.5	25.5	25.4
3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	54,210.0	58,574.9	57,339.7	56,028.0
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.69	1.64	1.50	1.36
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	5.79	5.81	5.47	4.96
4. ՄՇԱԿՈՒՅԹ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՄՊՈՐՏ ԵՎ ԿՐՈՆ	15,781.6	16,344.5	16,382.8	17,028.0
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.49	0.46	0.43	0.41
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.69	1.62	1.56	1.51
5. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ	8,395.6	9,432.5	9,984.7	10,912.0
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.26	0.26	0.26	0.26
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.90	0.94	0.95	0.97

2011-2013 թվականների ժամանակահատվածում կրթության ոլորտում՝ համակարգի բարեփոխումների ուղղությամբ իրականացվող միջոցառումները դիտվում են որպես կրթության որակի բարձրացման գրավական: Հանրակրթության ոլորտում ծրագրային ժամանակահատվածում կշարունակվեն բարեփոխումները, որոնք նպատակ են հետապնդում լրիվ միջնակարգ կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ լրիվ միջնակարգ կրթության հավասար մատչելիության ապահովումը միջնակարգ դպրոցի բոլոր, հատկապես՝ ավագ դպրոցի մակարդակներում և համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը:

Առողջապահության բնագավառում 2011-2013 թվականներին բյուջետային միջոցները կնպատակառուղիվ են առաջնային բուժօգնության ամրապնդման և զարգացման ծրագրերին:

Սոցիալական պաշտպանության բնագավառում առաջիկա տարիներին շեշտը կդրվի ընտանեկան նպաստների համակարգի կատարելագործման, սոցիալական ապահովության ծրագրերի իրականացման, ինչպես նաև կենսաթոշակների բարձրացման վրա:

Տնտեսության ճյուղերի 2011-2013 թվականների ծախսերը նպատակառուղիվ են լինելու արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին:

Աղյուսակ 4.6. Տնտեսության ճյուղերի 2010-2013 թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով (մլն դրամ)

Ցուցանիշներ	2010թ. հաստատված կետական բյուջե	2011թ. ծրագիր	2012թ. ծրագիր	2013 թ. ծրագիր
1. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	164,753.0	164,754.5	204,687.4	238,545.6
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	5.1	4.6	5.3	5.8

Ցուցանիշներ	2010թ. հաստատված պետական բյուջե	2011թ. ծրագիր	2012թ. ծրագիր	2013 թ. ծրագիր
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	17.6	16.3	19.5	21.1
2. Բնապահպանություն, էներգետիկա և բնական պաշարներ	23,639.3	7,859.6	5,441.3	5,999.8
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.74	0.22	0.14	0.15
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	2.53	0.78	0.52	0.53
3. Գյուղատնտեսություն	8,040.3	9,123.7	8,451.1	8,781.5
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.25	0.26	0.22	0.21
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.86	0.90	0.81	0.78
4. Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ	42,698.4	44,638.4	29,117.3	16,887.2
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.3	1.3	0.8	0.4
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	4.6	4.4	2.8	1.5
5. Բնակարանային-կոմունալ տնտեսություն	22,250.0	30,200.0	3,200.0	200.0
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.7	0.8	0.1	0.0
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	2.4	3.0	0.3	0.0
6. Ոռոգում	36,804.6	32,444.4	13,816.6	10,435.1
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.14	0.91	0.36	0.25
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	3.93	3.22	1.32	0.92
7. Տնտեսության այլ ճյուղեր	31,320.4	40,488.4	144,661.1	196,242.1
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.0	1.1	3.8	4.7
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	3.3	4.0	13.8	17.4

Պետության կողմից հատկապես կկարևորվեն գյուղատնտեսության, էներգետիկայի, տրանսպորտի, ճանապարհային, ջրային և բնակարանային-կոմունալ տնտեսության զարգացմանն ուղղված ծախսերը, որոնց զգալի մասը նախատեսվում է իրականացնել արտաքին ֆինանսական աջակցությամբ (տնտեսության ոլորտում ներառված են մոտ 320.1 մլրդ դրամի չբաշխված նպատակային վարկային ծրագրեր, որոնք վարկատու կազմակերպությունների հետ համապատասխան վարկային պայմանագրերի կնքմամբ հետագայում կուղղվեն համապատասխան ոլորտներ):

Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, բրեւակատարողական և փրկարար ծառայության համակարգերի պահպանման ծախսերի աճը պայմանավորված է լինելու նշված կառույցների կենսագործունեության ապահովման համար բավարար պայմանների ստեղծման և դրա շնորհիվ այդ կառույցների պատրաստակարարության բարձր մակարդակի պահպանման անհրաժեշտությամբ:

Պետական կառավարման բնագավառում ծախսերը, 2010 թվականի համեմատությամբ, 2011-2013 թվականներին կունենան որոշակի աճ՝ պայմանավորված պետական կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովման անհրաժեշտությամբ:

Պետական կառավարման համակարգի բոլոր ոլորտներում առաջնահերթ խնդիրներից է կոռուպցիայի դեմ պայքարը, օրենքի առջև բոլորի հավասարության ապահովումը: Պետական կառավարման բարեփոխումները նախատեսվում է իրականացնել երեք ուղղություններով, այն է՝ պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառույթային վերափոխումներ, քաղաքացիական ծառայության և ֆինանսական կառավարման բարեփոխումներ:

Այլ ոլորտներ խմբի համար 2011-2013 թվականներին նախատեսվող ծախսերի գերակշիռ մասը բաժին կընկնի պետական պարտքի սպասարկման և վերը շնչված այլ բնագավառներին:

Աղյուսակ 4.7. Այլ ոլորտների 2010-2013 թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով (մլն դրամ)

Ցուցանիշներ	2010 թ. հաստատված պետական բյուջե	2011թ. ծրագիր	2012թ. ծրագիր	2013թ. ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ	115,595.5	144,095.7	144,001.3	154,277.8
այդ թվում՝				
1. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ (տոկոսավճարներ)	37,076.9	50,286.2	54,660.0	57,686.7
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.2	1.4	1.4	1.4
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	4.0	5.0	5.2	5.1
2. Այլ	78,518.6	93,809.5	89,341.3	96,591.1
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.4	2.6	2.3	2.3
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.4	9.3	8.5	8.5

2010-2013թթ ժամանակահատվածում ևս պետական բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալն որոշ կախվածության մեջ կլինի արտաքին հոսքերից:

Աղյուսակ 4.8. Արտաքին աղբյուրներից 2010-2013 թթ ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհների) հաշվին ֆինանսավորվող ծախսերը

Ցուցանիշներ	2010 թ. հաստատված պետական բյուջե	2011թ. ծրագիր	2012 թ. ծրագիր	2013թ. ծրագիր
Արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ծախսերի ծավալը (մլրդ դրամ)	180.05	112.4	170.05	197.11
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	5.6	3.1	4.4	4.8
տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	19.2	11.1	16.2	17.4

Արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվելիք միջոցների հաշվին կանխատեսվող 2011-2013 թվականների ծախսերի միջին տարեկան տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 14.9% և ՀՆԱ-ի նկատմամբ՝ 4.1%:

4.4 ՀՀ 2011-2013 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ

Դիտարկվող 2010-2013 թվականների ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կտատանվի 29.1%-27.3%-ի միջակայքում: Նույն ժամանակահատվածում ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կտատանվի համապատասխանաբար 24.0%-22.0% և

5.1%-5.3 % միջակայքում, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը՝ 0.21-0.24 միջակայքում:

Աղյուսակ 4.9. 2010-2013 թթ ընթացիկ և կապիտալ ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները

Ցուցանիշներ	2010 թ. հաստատված պետական բյուջե	2011թ. ծրագիր	2012թ. ծրագիր	2013թ. ծրագիր
ԸՆԹԱՑԵԼ ԾԱԽՍԵՐ, (մլն դրամ)	935,538.9	1,008,728.0	1,047,526.9	1,129,927.8
այդ թվում՝				
- ընթացիկ ծախսեր, (մլն դրամ)	770,006.6	837,616.4	852,105.7	910,163.0
%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	24.0	23.5	22.2	22.0
- ոչ ֆինանսական ակտիվների գծով գուտ ծախսեր, (մլն դրամ)	165,532.2	171,111.7	195,421.2	219,764.8
%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	5.1	4.8	5.1	5.3
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը	0.21	0.20	0.23	0.24

2011-2013 թվականների ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 81.6 %-ը կկազմեն ընթացիկ ծախսերը (2010 թվականին այդ ցուցանիշը ծրագրվել է 82.3 %):

Դիտարկվող ժամանակահատվածում **ընթացիկ ծախսերի** մեծ մասի կատարումը ուղղված կլինի պետական կարիքների համար ապրանքների և ծառայությունների գնումներին, բնակչությանը տարբեր տեսակի նպաստների և կենսաթոշակների վճարմանը, ՀՀ պետական ներքին և արտաքին պարտքի սպասարկմանը (տոկոսավճար), տնտեսության որոշ ճյուղերում բնակչությանը ջրամատակարարման, ոռոգման և փոխադրումների բնագավառում ծառայություններ մատուցող առանձին ընկերությունների սուբսիդավորմանը, պետական ավտոճանապարհների պահպանությանը և շահագործմանը, տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցության տրամադրմանը և պետական կառավարման մարմինների աշխատակիցների աշխատանքի վարձատրությանը:

2011-2013 թվականների ընթացքում կանխատեսվող 586.3 մլրդ դրամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ընդհանուր ծավալի 34.9 %-ը (204.9 մլրդ դրամ) կֆինանսավորվի ներքին աղբյուրների հաշվին: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի իրականացման գերակայությունները ինչպես և նախկինում լինելու են ճանապարհային, տրանսպորտային, ջրային տնտեսության, գյուղատնտեսության և բնակչինարարության, դպրոցաշինության ու առողջապահության ոլորտները:

4.5 ՀՀ 2011-2013 ԹԹ ՄԺԾԾ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ

Մակրոտնտեսական կանխատեսումները հնարավորություն են ընձեռում ենթադրել, որ 2009-2010թթ. ժամանակահատվածի համեմատությամբ բյուջետային մուտքերի, հատկապես բյուջետային եկամուտների ստացման բնագավառում 2011 թվականին ռիսկերի մակարդակը

Էականորեն նվազել է: Այնուամենայնիվ, ՀՀ 2011-2013թթ ՄԺԾԾ իրատեսության տեսանկյունից հարկ է առանձնացնել այն գործոնները, որոնք հարկաբյուջետային շրջանակի ծրագրային սցենարի վրա կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Այդուհանդերձ, առավել կարևոր են այն գործոնները, որոնք կարող են հանգեցնել ծախսերի ծրագրերում համապատասխան վերանայումներ կատարելուն: Այդ իմաստով ՀՀ 2011-2013թթ ՄԺԾԾ հիմքում դրված կանխատեսումները պարունակում են որոշակի ռիսկեր:

Ռիսկերի աղբյուրները

ՀՀ 2011-2013թթ ՄԺԾԾ շրջանակներում կարելի է տարանջատել ռիսկերի հետևյալ աղբյուրները, որոնք կարող են հանգեցնել ծրագրային ռեսուրսների փաթեթից շեղումների.

- (i) ներքին ռեսուրսների գծով,
- (ii) արտաքին օժանդակության գծով:

Ներքին ռեսուրսների մասով. 2011-2013թթ բյուջետային ռեսուրսների փաթեթը հիմնականում համարվելու է հարկային եկամուտների և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվին, որոնց գծով ծրագրային մուտքերը 2011-2013թթ կկազմեն ընդհանուր մուտքերի միջինում 95.4%-ը: Նշված եկամտատեսակների հավաքագրումը մեծապես կախվածության մեջ կլինի մի կողմից մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանությունից, իսկ մյուս կողմից՝ հարկերի հավաքագրման բնագավառում ՀՀ կառավարության վարչարարական միջոցառումների իրականացման արդյունավետությունից: Նշված տնտեսական գործոններից բացի, այս դեպքում էական դեր ունի նաև հանրապետությունում տնտեսական միջավայրի վրա ներքին զարգացումների և արտաքին գործոնների ազդեցությունները:

Մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանություն. Մակրոտնտեսական շրջանակում կատարված կանխատեսումների մասով առկա ռիսկերի մասին նշվել է սույն փաստաթղթի 2-րդ գլխի համապատասխան մասում:

Վարչարարական միջոցառումների իրականացում. 2011-2013թթ, երբ բյուջետային միջոցների սղությունը դեռևս լուծում պահանջող խնդիրներից մեկն է լինելու, պահանջելով հարկային եկամուտների հնարավոր հասանելի մակարդակի ապահովում, ՀՀ կառավարությունը սկզբունքայնորեն շարունակելու է իրականացնել իր կողմից որդեգրված՝ ստվերային տնտեսության ծավալների կրճատմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականությունը, դրանով իսկ նպաստելով հարկային եկամուտների հավաքագրման բնագավառում իրավիճակի բարելավմանը: Այս դեպքում տնտեսության ստվերային հատվածի կրճատման և լրացուցիչ բյուջետային մուտքերի հավաքագրման գրավականը հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվելիք միջոցառումների բարեհաջող ընթացքն է:

Արտաքին գործոնների ազդեցություններ. Ռիսկը հնարավոր է արտաքին գործոնների (արտաքին տնտեսական շուկաներում, ինչպես նաև ՀՀ արտաքին սահմաններում իրավիճակի սրում)

ազդեցության արդյունքում հանրապետությունում տնտեսական միջավայրի կտրուկ վատթարացման դեպքում և այն գնահատման ենթարկել հնարավոր չէ:

Արտաքին օժանդակության մասով 2011-2013թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրում նախատեսվում է ապահովել ինչպես պաշտոնական դրամաշնորհների, այնպես էլ վարկերի հաշվին:

Պաշտոնական դրամաշնորհների մասով. Այդ միջոցների հատկացման հարցը կամ համապատասխան մուտքերի ստացման ռիսկի գործոնը մեծամասամբ պայմանավորված է լինելու ՀՀ կառավարության կողմից տնտեսության բարեփոխումների բնագավառում որոշակի միջոցառումների իրականացման ընթացքով:

Վարկերի մասով ռիսկերը հիմնականում պայմանավորված են ծրագրային ցուցանիշներից փաստացի կատարվելիք հատկացումների հնարավոր շեղումներով:

Արտաքին օժանդակության մասով 2011-2013թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրման վրա կարող է ազդեցություն ունենալ նաև տարադրամի փոխարժեքի փոփոխությունը:

Ռիսկերի հնարավոր հետևանքները և ճշգրտումների ուղղվածությունը

Ներքին ռեսուրսների մասով մուտքերի ծրագրվածից ցածր մակարդակը ենթադրում է ծախսերի վերանայում կրճատման ուղղությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ եկամուտները հիմնականում ամրագրված չեն որոշակի ծախսատեսակի կամ ծրագրի, այս դեպքում ծախսերի վերանայումն իրականացվելու է՝ հիմք ընդունելով դրանց գերակայությունները. առաջին հերթին կրճատվելու են այն ծախսատեսակների կամ ծրագրերի գծով նախատեսված ծախսերը (ծախսերի մնացորդը), որոնք կրճատման պահին կունենան գերակայության ավելի ցածր աստիճան (հաշվի առնելով նաև ծախսերի կրճատման արդյունքում հնարավոր բացասական հետևանքների առաջացումը):

Արտաքին օժանդակության գծով մուտքերի թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայման մոտեցումները լինելու են տարբեր՝ կախված արտաքին օժանդակության բնույթից: Այս առումով կարևոր հանգամանքներից է սպասվելիք արտաքին օժանդակության կառուցվածքն ըստ նշանակության: Համաձայն կանխատեսումների, ծրագրային ժամանակահատվածում արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են ծրագրային (նպատակային) բնույթի պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը:

Աղյուսակ 4.10. Արտաքին օժանդակությունը՝ ըստ նշանակության (մլրդ դրամ)

Ցուցանիշներ	2011	2012	2013
Ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն	15.65	9.47	4.87
Պաշտոնական դրամաշնորհներ	11.64	9.47	4.87
Վարկեր	4.01	0	0
Ծրագրային (նպատակային) օժանդակություն	96.75	160.58	192.24
Պաշտոնական դրամաշնորհներ	29.53	0.24	0
Վարկեր	67.22	160.34	192.24
Ընդամենը արտաքին օժանդակություն	112.4	170.05	197.11

Բյուջետային փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայումն իրականացվելու է ելնելով դրանց գերակայության աստիճանից, մինչդեռ ծրագրային (նպատակային) պաշտոնական դրամաշնորհների և վարկերի թերստացումը որպես կանոն հանգեցնելու է այն ծրագրերի գծով մասհանումների կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրների հետ, թեև առանձին դեպքերում հնարավոր է այդ ծրագրերի գծով արտաքին աղբյուրներից թերստացվող միջոցների փոխարինումը ներքին ռեսուրսներով:

Փոխհատուցման հնարավորությունները

2011-2013թթ ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակի վրա դրական հետևանքներ կարելի է ակնկալել բարենպաստ մակրոտնտեսական զարգացումներից, որոնք կարող են որոշ չափով փոխհատուցել արտաքին օժանդակության և հարկային վարչարարության գծով հնարավոր <կորուստներ>: Նախատեսվածի դիմաց մակրոտնտեսական միջավայրի բարելավումը բարենպաստ պայմաններ կստեղծի լրացուցիչ հարկային եկամուտների և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հավաքագրման համար: Այս դեպքում ՀՀ կառավարությունը քննության առարկա կդարձնի լրացուցիչ եկամուտները՝ ծախսային գերակայությունների լրացուցիչ ֆինանսավորմանը և (կամ) պետական բյուջեի դեֆիցիտի չափի կրճատմանն ուղղելու հարցը:

**ՄԱՍ Բ. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԳԼՈՒԽ 5. ՀՀ 2010-2013 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող փաստաթղթում ընդհանուր գծերով ներկայացվում են 2010-2013 թթ ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի ըստ ոլորտների քաղաքականության գերակայությունները: Այս գերակայությունները բխում են ՀՀ կառավարության ընդհանուր ռազմավարական գերակայությունների համատեքստից (ՀՀ կառավարության ծրագիր, Կայուն զարգացման ծրագիր, տարբեր ոլորտներում ՀՀ կառավարության կողմից ընդունված մի շարք միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր և այլն) և պետք է ծառայեն որպես հիմք՝ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման համար:

Ինչպես արդեն վերը նշվել էր ՀՀ կառավարությունն առաջիկա տարիների համար առավել կարևորում է պետական բյուջեի հիմնական ծախսային հետևյալ գերակայությունները.

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառներում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Աղյուսակ 5.1. ՀՀ պետական բյուջեի ռեսուրսների և ծախսերի փաթեթում 2010-2013 թթ կանխատեսվող փոփոխությունները նախորդ տարվա համեմատությամբ (մլն դրամ)

Ցուցանիշներ	2011	2012	2013
Հավելյալ բյուջետային ռեսուրսների կանխատեսվող բաշխումը 2011-2013թթ՝ ըստ ոլորտների որից՝	93,343.3	112,680.7	102,324.4
1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն	41,038.1	688.2	26,521.5
2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և փրկարար ծառայության համակարգեր	2,140.3	3,445.9	11,599.2
3. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	20,141.4	104,172.8	52,469.9
4. Պետական կառավարում	1,523.3	-	1,457.3
5. Պետական պարտքի սպասարկման ծախսեր	13,209.2	4,373.9	3,026.6
6. Այլ ոլորտներ	15,290.9	-	7,249.9

Ինչպես երևում է աղյուսակից՝ 2011-2013 թվականներին, նախորդ տարվա համեմատ, ստացվելիք լրացուցիչ մուտքերի զգալի մասը՝ 245.0 մլրդ դրամը կամ ընդհանուրի 79.47%-ը նախատեսվում է ուղղել սոցիալ-մշակութային ճյուղերի ու գիտության, ինչպես նաև տնտեսության ճյուղերի ֆինանսավորմանը, ընդ որում՝ սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը բաժին կհասնի լրացուցիչ մուտքերի ընդհանուր գումարի 22.1%-ը, որը վկայում է այն մասին, որ 2011-2013 թթ նախատեսվում է շարունակել բյուջետային ծախսերի սոցիալական ուղղվածության ավելացումը:

ԳԼՈՒԽ 6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերջին տարիներին իրականացնում է պետական կառավարման համակարգի բարեփոխումների լայնածավալ ծրագիր՝ համակարգի արդյունավետության, ծառայությունների որակի և մատչելիության, թափանցիկության և հաշվետվելիության, վերահսկելիության բարձրացման ուղղությունների ընդգկմամբ, որն իրականացվում է հիմնականում պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառնության փոփոխությունների և քաղաքացիական ծառայության ներդրման ճանապարհով:

Պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառնության բարեփոխումներ

Պետական կառավարման համակարգի բնագավառում իրականացվող բարեփոխումների շնորհիվ վերջին տարիներին ձեռք բերվեցին որոշակի արդյունքներ, որոնք ապահովեցին նշակալից առաջընթաց, հատկապես պետական կառավարման առանձին մարմինների վերակազմակերպման գործընթացներում և քաղաքացիական (պետական, դատական) ծառայության ներդրման բնագավառում: Նշվածի համար հիմք հանդիսացան <Պետական կառավարչական հիմնարկների մասին>, <Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին> ՀՀ օրենքները և այլ իրավական ակտերը: Նախարարությունները ներկայումս իրականացնում են իրենց բնագավառի քաղաքականության ձևավորման, մոնիտորինգի և համակարգման գործառնությունները, իսկ ծառայությունների մատուցման, կանոնակարգման և վերահսկողական ու տեսչական գործառնությունների իրականացման իրավասությունները հիմնականում փոխանցվեցին նախարարություններում առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով ստեղծված գործակալություններին և տեսչություններին: Նշված փոփոխությունները հանգեցրին կրկնվող գործառնությունների որոշակի հատվածի վերացմանը:

Բացի այդ, առանձին մարմիններ վերակազմակերպվեցին պետական ոչ առևտրային կազմակերպությունների, որի հետևանքով կառավարչական գործառնություններ իրականացնող մարմինները տարանջատվեցին պետական գործառնություններ իրականացնող մարմիններից:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումների արդյունքում հստակեցվել են նախարարությունների կանոնադրական խնդիրները և միասնականացվել նրանց աշխատակազմերի կառուցվածքները՝ ձևավորվեցին վարչություններ, քարտուղարություններ և բաժիններ:

ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված լիազորությունների լիարժեք իրականացման նպատակով ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվեց <ՀՀ կառավարության կառուցվածքի մասին> ՀՀ օրենքը՝ նախարարու-

թյուններին վերապահված լիազորություններն ու գործառնությունները հստակեցնելու նպատակով ստեղծվեցին նոր նախարարություններ, որով և ամբողջացավ նախարարությունների կազմը:

Առանձին բնագավառներում քաղաքականության մշակման ու իրավական ակտերի նախագծերի մասին եզրակացություններ տալու նպատակով ստեղծվեցին մշտական գործող նախարարական կոմիտեներ՝ ֆինանսատնտեսական, սոցիալական, տարածքային զարգացման և բնապահպանական, պետաիրավական:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումներում կարևորվեց նաև դատաիրավական համակարգի բարեփոխումների իրականացումը: Դատական օրենսգրքի պահանջներին համապատասխան իրականացվեցին դատական համակարգի կառուցվածքային փոփոխություններ՝ գործող առանձին դատարանների վերակազմակերպում, ինչպես նաև դատական համակարգի ամրապնդման, դատական գործավարության գործընթացների բարելավման, դատավորների ու արդարադատության իրականացմանը մասնակցող անձանց մասնագիտական գիտելիքների և օրենսդրական դաշտի կատարելագործում:

<Դատախազության մասին> ՀՀ նոր օրենքի համաձայն իրականացվել են դատախազության համակարգի կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում՝ ելնելով գործառնությունների բնույթից տեղի ունեցավ ՀՀ դատախազության օպերատիվ քննչական հաստիքների համապատասխան բաշխում այլ քննչական մարմինների՝ ՀՀ ոստիկանության քննչական վարչության, ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի միջև:

<Հատուկ քննչական ծառայության մասին> ՀՀ օրենքի պահանջների համաձայն ստեղծվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, որն իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ, հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:

Քաղաքացիական ծառայության ներդրում

<Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենքի և հարակից ենթաօրենսդրական իրավական ակտերի հիման վրա իրականացվեց քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման գործընթացը: Իրականացված բարեփոխումների շնորհիվ քաղաքացիական ծառայողները տարանջատվել են քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանցից և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներից, սահմանվել են քաղաքացիական ծառայության մուտքի և ծառայությունից ազատվելու հավասար պայմաններ, ապահովվել են մասնագիտական առաջխաղացման հնարավորություններ: Այդ ընթացքում հստակեցվել են քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը, քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պատասխանատվության սահմանները և քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգը:

Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով կանոնակարգվել են նաև՝

- Հայաստանի Հանրապետության տարածքում և արտասահմանյան երկրներ ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերը և վճարման կարգը,

- պետական կառավարման մարմինների պաշտոնատար անձանց սպասարկման համար անհրաժեշտ ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակները,

- պետական կառավարման մարմինների պաշտոնատար անձանց սպասարկելու նպատակով հատկացվող ծառայողական ավտոմեքենաների առանձին չոփորոշիչները, որը մասնավորապես ներառում է ավտոմեքենայի ձեռք բերման առավելագույն գինը՝ ըստ զբաղեցրած պաշտոնների,

- կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի կանոնները,

- կոմունալ ծախսերի՝ ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռք բերման ծավալները, ինչպես նաև ջրի օգտագործման նորմաները:

Հիմնական խնդիրներ

Պետական կառավարման համակարգի բնագավառում իրականացվող հիմնական խնդիրներն են՝

- պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացումը,

- պետական կառավարման մարմիններում աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով աշխատանքային ծրագրերի կազմումը և կատարողականների գնահատման կարգի կիրառումը,

- պետական կառավարման մարմինների տեխնիկական վերազինման և աշխատանքային պայմանների բարելավման նպատակով կարողությունների զարգացման և կապիտալ ակտիվների ձեռքբերման համար համապատասխան միջոցների նախատեսումը:

6.2. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

6.2.1. Գերակայությունները

ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական կառավարման հիմնական գերակայություններից են.

Պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացումը: Այդ առումով կարևորվում են՝

- պետական կառավարման համակարգի բարելավման նպատակով հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության մշակումը,

-հանրային ծառայությունների ոլորտում ընդգրկված աշխատողների աշխատանքի վարձատրության համակարգի կատարելագործման և աշխատանքի վարձատրության չափերի միջև ստեղծված հարաբերակցության անհամամասնությունների կարգավորման նպատակով հանրային ծառայության միասնական վարձատրության համակարգի մշակումն ու համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումը,

-պետական կառավարման մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականների գնահատման կարգի կիրառումը,

-պետական կառավարման մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրումը և այդ համակարգով աշխատանքային ծրագրերի կազմման ու աշխատողների կատարողականների գնահատման գործընթացի իրականացման ապահովումը,

-պետական կառավարման մարմինների աշխատողների կատարողականների հիման վրա պարզևատրման կարգի ներդրումը և այդ նպատակով նյութական խրախուսման ֆոնդի ստեղծումը:

Աշխատանքի արդյունավետության բարձրացման համար առաջնահերթ խնդիր է նաև կառավարման մարմինների և նրանցում յուրաքանչյուր աշխատատեղի վերազինումը ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով:

Պետական կառավարման բնագավառում շարունակվում է իրականացվել բարեփոխումները և համակարգի կատարելագործումը, որոնք պետք է հանգեցնեն միջազգային լավագույն փորձին համապատասխանող համակարգի ձևավորմանը: Պետական կառավարման համակարգի կադրային ներուժի հետևողական ամրապնդման նպատակով անհրաժեշտ է ավելացնել համակարգում աշխատելու գրավչությունը, աշխատանքի որակը և աշխատավարձի մակարդակը մրցունակ դարձնելով մասնավոր հատվածին՝ միջնաժամկետ հատվածում ձեռնպահ մնալով աշխատողների թվի ավելացումից:

Առավել մեծ ուշադրություն պետք է դարձվի քաղաքացիական ծառայության համակարգում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավմանն ու աշխատանքային առաջխաղացման շարունակական ընթացակարգերի կիրառումն ապահովող համապատասխան համակարգի և կարողությունների զարգացմանը:

ՄԺԾԾ ժամանակահատվածում կարևորվում է նաև պետական կառույցների աշխատողների մասնագիտական գիտելիքների ու հմտությունների շարունակական կատարելագործումը: Մասնավորապես կառավարությունը շարունակելու է էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման աշխատանքները, աստիճանաբար ներդրվում է պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների առցանց եղանակը:

6.2.2. Նպատակները

ՀՀ պետական կառավարման համակարգին ուղղվող ծախսերի հիմնական նպատակը պետական ծառայողների կողմից հանրության համար առավել մատչելի, որակյալ և անաչառ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է: Այդ նպատակին հասնելու համար ամենից առաջ անհրաժեշտ է արմատավորել պետական ծառայողների ֆինանսական և իրավական պաշտպանվածությունն ապահովող հուսալի երաշխիքները, ինչպես նաև պետական ծառայողների տեսական և մասնագիտական գիտելիքների բարձրացումն ապահովելու համար կատարելագործել պարբերաբար անցկացվող պարտադիր վերապատրաստման և ատեստավորման ընթացակարգերը: Առաջնահերթ նպատակ ունի նաև պետական կառավարման մարմինների տեխնիկական վերազինումը:

6.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Պետական կառավարման համակարգում 2011-2013 թթ. իրականացվելիք ծախսերի կառուցվածքի և ծավալների վրա ազդեցություն ունեն հիմնականում հետևյալ գործոնները.

(i) <Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>, <Դատական ծառայության մասին>, <Հարկային ծառայության մասին>, <Մաքսային ծառայության մասին>, <Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին> և <Քրեակատարողական ծառայության մասին> ՀՀ օրենքների պահանջների համապատասխան քաղաքացիական ծառայողների /պետական և դատական ծառայողների/, հարկային ծառայողների, մաքսային ծառայողների, հարկադիր կատարողների և դատական կարգադրիչների աշխատավարձի բնականոն աճի, ՀՀ դատական օրենսգրքի, <Դատախազության մասին> և <Հատուկ քննչական ծառայության մասին> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան դատավորների, դատախազների և հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելվածարների աճի ապահովումն ու այդ նպատակով անհրաժեշտ միջոցների նախատեսումը:

(ii) ՄԾԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է նաև կատարելագործել և կանոնակարգել պետական կառավարման համակարգում ներգրավված աշխատողների աշխատանքի վարձատրության գործող համակարգը՝ հանրային ծառայության միասնական վարձատրության համակարգի ներդրման նպատակով:

(iii) ՀՀ դատական օրենսգրքի, <Սահմանադրական դատարանի մասին>, <Դատախազության մասին> և <Վերահսկիչ պալատի մասին> ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով պահուստային ֆոնդերի նախատեսումը:

(iv) Պետական կառավարման մարմինների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ միջոցների նախատեսումը՝ հիմքում ունենալով բազային բյուջեով այդ նպատակի համար ծրագրավորված ծախսերը:

Առաջիկա տարիներին անհրաժեշտությունից ելնելով հնարավոր է նաև որոշակի միջոցառումների իրականացում, որն իր ազդեցությունը կունենա յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ծախսերը ծրագրավորելիս, մասնավորապես՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված կապի և կոմունալ /էլեկտրաէներգիայի, գազի և ջրի/ ծախսերի նորմաներին համապատասխան նախատեսված ծախսերի վերանայում՝ կապված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված սակագների, ինչպես նաև սպառողների կողմից օգտագործվող ծավալների փոփոխության հետ:

Բացի այդ, 2011-2013 թվականների ընթացքում պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի վրա ազդեցություն կարող են ունենալ նաև.


- ա) օրենսդրական փոփոխությունները,
- բ) պետական կառավարման համակարգի կառուցվածքային փոփոխությունները,
- գ) պետական կառավարման մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը:

6.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական կառավարման համակարգի բնականոն գործունեության համար անհրաժեշտ պետական ֆինանսավորման ծավալների պահպանումը առաջնահերթ խնդիր է: Պետական կառավարման մարմինների 2011-2013 թթ. պահպանման համար նախատեսված ծախսերի բաշխումն ըստ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ներկայացված է ստորև բերված գծանկարում:

Գծանկար 6.1 Պետական կառավարման մարմինների 2011-2013 թթ. պահպանման համար նախատեսված ծախսերի բաշխումը՝ ըստ իշխանության մարմինների (%-ով ընդամենը ծախսերի նկատմամբ)



Ընթացիկ ծախսերը, 2010 թվականի համեմատությամբ, 2011 թվականին կաճեն 1.4 մլրդ դրամով, 2012 թվականին, 2011 թվականի համեմատությամբ՝ 0.6 մլրդ դրամով և 2013 թվականին, 2012 թվականի համեմատությամբ՝ 3.9 մլրդ դրամով:

Ծախսերի (անվանական արտահայտությամբ) աճը կգուգակցվի նաև ՀՆԱ-ի նկատմամբ դրանց հարաբերակցության փոփոխությամբ: Այսպես, 2010 թվականի համար ծրագրված մակարդակի դիմաց (ՀՆԱ-ի 1.63%) պետական կառավարման համակարգի համար պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2011-2013 թթ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար կկազմեն համապատասխանաբար՝ ՀՆԱ-ի 1.50, 1.42 և 1.41%-ը:

Նշված ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի ամբողջ ծավալում կփոփոխվի հետևյալ կերպ՝ 2010 թվականի համար ծրագրավորված մակարդակի փոխարեն (5.59%) պետական կառավարման համակարգի ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի ամբողջ ծավալում 2011 թվականին կկազմի 5.32%, 2012 թվականին՝ 5.18% և 2013 թվականին՝ 5.15%:

2011-2013թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի համար կառավարման ապարատի կարողությունների զարգացման գծով՝ կապիտալ ակտիվների ձեռքբերման համար, միջոցներ չեն նախատեսվել:

Նշված մարմինների 2011 թվականի պահպանման ծախսերը 2010 թվականի մակարդակը ընթացիկ ծախսերի գծով գերազանցում են 1.4 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է.

- աշխատավարձի ֆոնդի /վրաեկով/ աճով՝ շուրջ 463.2 մլն դրամ: Այն պայմանավորված է <Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական /պետական, դատական/ ծառայողների աշխատավարձի բնականոն աճով, <Հարկային ծառայության մասին>, <Մաքսային ծառայության մասին>, <Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին> և <Քրեակատարողական ծառայության մասին> ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան հարկային ծառայողների, մաքսային ծառայողների, հարկադիր կատարողների և դատական կարգադրիչների աշխատավարձի բնականոն աճով, ՀՀ դատական օրենսգրքի, <Դատախազության մասին> և <Հատուկ քննչական ծառայության մասին> ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան դատավորների, դատախազների և հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների աճով,

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված սակագների /գազի և ջրի/ փոփոխության հետ կապված համապատասխան ծախսերի ավելացմամբ,

- ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված կապի ծառայությունների վճարների կանոնակարգմամբ,

- Օտարերկրյա պետություններում ՀՀ նոր դեսպանությունների և առևտրական ներկայացուցչի հաստիքի ստեղծման հետ կապված համապատասխան ծախսերի նախատեսմամբ,

2012 թվականի պահպանման ծախսերը 2011 թվականի մակարդակը ընթացիկ ծախսերի գծով գերազանցում են 0.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի ֆոնդի /վրաեկով/ աճով՝ կապված <Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական /պետական, դատական/ ծառայողների աշխատավարձի բնականոն աճով, <Հարկային ծառայության մասին>, <Մաքսային ծառայության մասին>, <Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին> և <Քրեակատարողական ծառայության մասին> ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան հարկային ծառայողների, մաքսային ծառայողների, հարկադիր կատարողների և դատական կարգադրիչների աշխատավարձի բնականոն աճով, ՀՀ դատական օրենսգրքի, <Դատախազության մասին> և <Հատուկ քննչական ծառայության մասին> ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան դատավորների, դատախազների և հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների աճով:

2013 թվականի պահպանման ծախսերը 2012 թվականի մակարդակը ընթացիկ ծախսերի գծով գերազանցում են 3.9 մլրդ դրամով, որը հիմնականում աշխատավարձի ֆոնդի /վրաեկով/ աճն է՝ 3.7 մլրդ դրամ, պայմանավորված վերոնշյալ օրենքների պահանջներից բխող բնականոն աճով, դատավորների, դատախազների և հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների աճով, ինչպես նաև պետական կառավարման մարմինների աշխատողների աշխատավարձերի 10% աճով:

2011 թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման համար նախատեսվել է 302.3 մլն դրամ:

2012 թվականին ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման համար նախատեսվել է 2.4 մլրդ դրամ:

2013 թվականին ՀՀ Նախագահի և Երևան քաղաքի ավագանու անդամների ընտրությունների անցկացման համար նախատեսվել է 1.5 մլրդ դրամ:

Պետական կառավարման մարմինների 2011-2013 թթ. նախատեսված ընդհանուր ծախսերը՝ ներառյալ վարչական օբյեկտների հիմնանորոգման և վարկային ու դրամաշնորհային ծրագրերի գծով ծախսերը, ամփոփված են հետևյալ աղյուսակում:

	2011 թ.	2012 թ.	2013 թ.
Ընդամենը	59,631.6	57,305.6	58,762.9
այդ թվում՝			
Պետական կառավարման մարմինների պահպանման ծախսեր	53,749.4	54,327.4	58,206.3
Վարչական օբյեկտների հիմնանորոգում և շենքերի ձեռքբերում	245.1	35.1	35.1
Վարկային և դրամաշնորհային ծրագրեր	5,637.1	2,943.1	521.5

ԳԼՈՒԽ 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

7.1.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը : Հավասարապես մատչելի որակյալ կրթության ապահովման և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով՝ կրթական բոլոր մակարդակներում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր: Ուստի այս ոլորտի զարգացումը ներկայումս երկրի զարգացման առաջնային գերակայություններից է :

Կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) 2009 թվականին կազմել են ՀՆԱ-ի 3.38 %-ը՝ 2008 թվականի 2.83 %-ի դիմաց (Տես՝ աղյուսակ 7.1-ը): Չնայած պետական բյուջեով կրթության ոլորտին նախատեսված հատկացումների զգալի աճին՝ այնուամենայնիվ Հայաստանում ՀՆԱ-ի նկատմամբ կրթական ծախսերի մասնաբաժնի ցուցանիշը դեռևս մնում է բավական ցածր Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) ու Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների համեմատ (ՏՀԶԿ երկրների միջինը 2006 թվականին կազմել է 4.8 %, ԿԱԵ և ԱՊՀ երկրների միջինը 2007 թվականին՝ 4.4 %) :

Կրթության ոլորտին ուղղված պետական հատկացումների գերակշիռ մասը՝ շուրջ 84.7 %-ը, 2009 թվականին ուղղվել է հանրակրթության ոլորտի ֆինանսավորմանը, իսկ 12.2 %-ը՝ մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորմանը՝ 2008 թվականի համապատասխանաբար 84.1 և 13.1 %-ի դիմաց (2010 թվականին նշված ցուցանիշները կկազմեն, համապատասխանաբար՝ 81.8 և 14.7 %) :

Աղյուսակ 7.1. Հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի 2006-2009 թվականների պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում

	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.
Ընդամենը կրթություն	2.51	2.84	2.83	3.38
այդ թվում՝				
Հանրակրթական ծրագրեր	2.11	2.47	2.38	2.86
Մասնագիտական կրթական ծրագրեր	0.30	0.29	0.37	0.41

Ծանոթություն. Հանրակրթական ծրագրերը ներառում են տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը (հանրակրթական ուսուցում, ներառական կրթություն, հատուկ կրթություն և այլն),

ինչպես նաև հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում նախատեսված մի շարք ծրագրեր: Մասնագիտական կրթական ծրագրերը ներառում են նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերը, ինչպես նաև նշված ծրագրերի իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրեր:

Չնայած հանրակրթության ոլորտին հատկացումների զգալի աճին՝ համախառն ընդգրկվածության առումով, ըստ միջնակարգ կրթության աստիճանների, կան որոշ տարբերություններ.

- Հիմնական կրթության մակարդակում զուտ ընդգրկվածության ցուցանիշները՝ շուրջ 96 տոկոս, մոտ են ԿԱԵ և ԱՊՀ երկրների միջինին: Հիմնական դպրոցում ընդգրկվածության ցուցանիշները տարածքային, սեռային ու աղքատության խմբերի առումներով բավական համասեռ են, այսինքն՝ հիմնական կրթությունը հավասարապես մատչելի է բնակչության բոլոր խավերի համար:
- Ավագ դպրոցում համախառն ընդգրկվածության ցուցանիշը 2005 թվականին կազմել է շուրջ 80 տոկոս, որը դեռևս մնում է բավական ցածր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների համեմատ (նշված երկրների միջինը 2004 թվականին կազմել է 87 տոկոս):

ԿԱԵ և ԱՊՀ երկրների միջինների համեմատ ցածր են մնում նախադպրոցական և մասնագիտական ծրագրերում համախառն ընդգրկվածության ցուցանիշները, մասնավորապես, նախադպրոցական համակարգում 2005 թվականին համախառն ընդգրկվածությունը կազմել է 27.5 տոկոս, ըստ որում, քաղաքային բնակչության շրջանում այն կազմել է 38 %՝ գյուղականի 11 %-ի պարագայում (ԿԱԵ և ԱՊՀ երկրների միջինը՝ 50.1 տոկոս): Մասնագիտական ծրագրերում համախառն ընդգրկվածությունը կազմել է 38.4 %, իսկ միայն բուհական համակարգում՝ շուրջ 28 տոկոս (ԿԱԵ և ԱՊՀ երկրների միջինը՝ 43 տոկոս): Ընդ որում, մասնագիտական կրթական ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշները տարբեր են թե տարածքային, և թե աղքատության խմբերի առումով: Եթե ՄՄՈՒՀ/ՆՄՈՒՀ-ներում ընդգրկվածության ցուցանիշներն ըստ աղքատության խմբերի բավական համասեռ են, ապա բարձրագույն կրթության օղակում պատկերը խիստ բևեռացված է (ի օգուտ ոչ աղքատների, քաղաքային բնակչության և հատկապես՝ Երևանի): Կրթական բոլոր մակարդակներում հավասարապես մատչելի որակյալ կրթության ապահովման և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով կրթական բոլոր մակարդակներում իրականացվում են բարեփոխումներ :

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների գծով հիմնական դրույթներն ամրագրված են 2009 թվականին ընդունված « Հանրակրթության մասին ՀՀ օրենքում, որով սահմանվել են նշված համակարգի պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպա-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը: Օրենքի կիրարկման հետ կապված՝ ՀՀ կառավարության կողմից կընդունվեն մի շարք իրավական ակտեր, մասնավորապես. արդեն իսկ հաստատվել են հանրա-

կրթության պետական չափորոշի ձևավորման և հաստատման կարգն ու հանրակրթության պետական չափորոշիչը, պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը, մանկավարժական կամ վարչական գործունեությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը: Օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ կներդրվեն ուսուցիչների ատեստավորման, տնօրենների հավաստագրման համակարգերը :

2010 թվականին հանրապետությունում գործում են 1405 հանրակրթական դպրոցներ, որոնցում սովորում է 386.6 հազար աշակերտ՝ 2009 թվականի 406.2 հազարի դիմաց (2009 թվականին գործել է 1410 հանրակրթական դպրոց): Հանրապետությունում ծնելիության անկման հետևանքով դպրոցահասակ երեխաների թիվը նվազել է, սակայն, սկսած 2011 թվականից, ինչպես 12-ամյա ուսուցման անցնելու, այնպես էլ ծնելիության աճի հետ կապված, հանրակրթության մեջ ընդգրկված դպրոցահասակների համակարգը կաճի և 2011-2013 թվականներին այն կհասցվի, ըստ տարիների, համապատասխանաբար՝ 395.8 ; 421.0 և 419.1 հազարի :

Վերջին տարիներին համակարգի բարեփոխման ուղղությամբ կառավարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված համակարգի կառավարման ու բովանդակության բարեփոխմանը, արդյունավետության բարձրացմանն ու հանրակրթության որակի բարելավմանը:

Մասնավորապես՝

- ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ե N1262-Ն որոշման համաձայն՝ 2007 թվականի հունվարի 1-ից ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է ըստ աշակերտների թվի՝ բանաձևով: Ընդ որում, բանաձևի կիրառման արդյունքում, հանրակրթական հաստատություններին հատկացվող բյուջետային ծախսերի համաչափությունն ապահովելու նպատակով, թույլատրվում է պետական կառավարման մարմիններին, ՀՀ կառավարության սահմանած կարգով, սահմանափակ գումարի չափով իրենց ենթակայության հաստատությունների ծախսերում կատարել վերաբաշխումներ :
- Հանրակրթության ոլորտում առաջնահերթ խնդիր համարելով ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը՝ պետությունը հետևողական իրականացնում է աշխատավարձերի բարձրացման քաղաքականությունը՝ այն դիտելով որպես կրթության որակի բարձրացման գրավական: Մասնավորապես, ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2008 թվականին բարձրացվել է 21.0 տոկոսով, 2009 թվականին՝ 29.5 տոկոսով՝ հասցնելով շուրջ 116.3 հազար դրամի : 2009 թվականին ուսուցիչների տարեկան աշխատավարձը մեկ շնչին բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ի մակարդակը գերազանցել է 45 %-ով, պայմանավորված ՀՆԱ-

ի անկմամբ և ուսուցիչների աշխատավարձի մակարդակի պահպանմամբ, իսկ միջնաժամկետ հատվածում ուսուցիչների տարեկան աշխատավարձի չափը մեկ շնչին բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ի մակարդակը կգերազանցի՝ 2011 թվականին 30 տոկոսով, 2012-2013 թվականներին՝ 20 տոկոսով:

- Աշխատանքներ են իրականացվել առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծման ուղղությամբ: Ավագ դպրոցը հանդիսանում է «նախամասնագիտական կրթություն ապահովող հիմնական օղակը, որի գործունեությունից մեծապես կախված է սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշումը և հետագա ուսումնառության հաջողությունը: 2008 թվականին ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել « Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը և « Փորձնական փուլի ծրագիրը և: Առաջին փուլում ստեղծվել է 10 ավագ դպրոց, երկրորդ փուլում՝ 2009 թվականին, առանձին գործող ավագ դպրոցների ցանցում ընդգրկվել են 38 դպրոցներ: Նշված ավագ դպրոցներն ապահովվել են անհրաժեշտ դպրոցական գույքով, համակարգչային սարքավորումներով, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաներով, գրականությամբ համարված ժամանակակից գրադարաններով: Մասնավորապես. « Ավագ դպրոցների համակարգի ներդրումն ծրագրի շրջանակներում պետական բյուջեից 2008-2009 թվականներին հատկացվել է, համապատասխանաբար 225.7 և 269.7 մլն դրամ: Բարելավվել են ավագ դպրոցների շենքային պայմանները, շենքերի հիմնանորոգման նպատակով 2008 թվականին հատկացվել է 1830.8 մլն դրամ, 2009 թվականին՝ 1718.2 մլն դրամ: 2008-2009 թվականներին իրականացվել են 48 ավագ դպրոցների մոտ 1200 ուսուցիչների առարկայական բուհական վերապատրաստումներ՝ ուղղված նրանց մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը, գիտելիքների հարստացմանը և գործնական հմտությունների ձեռքբերմանը: 2010 թվականին ավագ դպրոցների ցանցում կընդգրկվեն ևս 43 դպրոց, որոնք նույնպես կապահովվեն ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաներով (2010 թվականին նշված նպատակով նախատեսվել է 159.6 մլն դրամ): Ավագ դպրոցների ցանցի ընդլայնման աշխատանքները կշարունակվեն նաև 2011 թվականին, որի արդյունքում, համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի « Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին և 878-Ն որոշման, 2011 թվականին ավագ դպրոցների ցանցում ընդգրկված կլինի շուրջ 150 դպրոց:
- 2008-2009 թվականներին զգալի միջոցներ են նախատեսվել 12-ամյա կրթության անցումն ապահովող հանրակրթական ծրագրերի մշակման և տպագրման, ուսուցիչների համար մեթոդական ձեռնարկների տպագրման և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման նպատակով:
- Կրթության բնագավառի բովանդակային և կառուցվածքային բարեփոխումներն առաջ են բերել մանկավարժական կադրերի շարունակական վերապատրաստման, մասնագիտական

որակի բարելավման անհրաժեշտություն, որի նպատակով զգալի միջոցներ են նախատեսվել ուսուցիչների վերապատրաստման գծով: Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման գծով պետական բյուջեից 2008 թվականին հատկացվել է 457.7 մլն դրամ, 2009 թվականին՝ 490.0 մլն դրամ, 491.5 մլն դրամ էլ նախատեսվում է հատկացնել 2010 թվականին :

- Աշխատանքներ են իրականացվել սովորողների գիտելիքների գնահատման նոր համակարգի ներդրման ուղղությամբ : 2009 թվականի սեպտեմբերի 1-ից հանրակրթական դպրոցներում անցում է կատարվել գնահատման 10 միավորանոց սանդղակի : 2008 թվականի ամռանը նոր կարգով անց են կացվել միասնական քննություններ 6 առարկաներից, իսկ 2009 թվականին ավարտական և բուհի ընդունելության միասնական քննություններ են անցկացվել բոլոր առարկաներից: Գնահատման և թեստավորման ծառայությունների գծով պետական բյուջեից 2008 թվականին հատկացվել է 374.4 մլն դրամ, 2009 թվականին՝ 472.4 մլն դրամ, 441.4 մլն դրամ էլ նախատեսվում է հատկացնել 2010 թվականին :

Կրթական հաստատություններում գնահատման նոր համակարգի ներդրումն ու խորացումը կարևոր քայլ է միասնական ձևով գնահատելու և լիարժեքորեն բացահայտելու սովորողների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների ներդրվող համակարգը ենթադրում է նաև հետադարձ կապ դպրոցի հետ, ապահովում է միջնակարգ դպրոցի զարգացումն ու վարկանիշի բարձրացումը:

2009 թվականին լրամշակվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական ավարտական և միասնական (բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության) քննությունների ընթացակարգեր, կանոնակարգային փաստաթղթեր, բուհի ընդունելության կարգ:

Պատրաստվել և տպագրվել են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Օտար լեզուներ» («Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Ռուսաց լեզու»), «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն և «Աշխարհագրություն առարկաների պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույցերը:

- Հանրակրթության ոլորտում վերջին տարիների ընթացքում բավականաչափ աշխատանքներ են կատարվել տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: ՀՀ կառավարության կողմից կարևորվում է էլեկտրոնային կրթության զարգացումը, ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման և հեռավար ուսուցման համակարգերի ներդրումը: 2005-2006 թվականներին Հայաստանի 589 դպրոցներում տեղադրվել են 2988 համակարգիչներ, 2007-2009 թվականների ընթացքում 850 դպրոցներ ստացել են, ըստ տարիների՝ 1296 ; 1133 և 700 համակարգիչ: Հայաստանի հանրակրթության ոլորտում դպրոցական մեկ համակարգիչին համապատասխանող աշակերտների միջին քանակը 2008 թվականի դրությամբ 38 էր, 2009-ի դրությամբ՝ 36:

Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում (ՀԴԻՑ) մինչև 2009 թվականը ընդգրկված էին 324 դպրոցներ, 320 դպրոցներ ցանցում ընդգրկվել են 2009 թվականի փետրվարին, ևս 300-ը ցանցին կմիացվեն 2010 թվականի ընթացքում՝ հիմնականում օգտագործելով գործող ցանցի ենթակառուցվածքները: Միջնաժամկետ հատվածում կշարունակվեն նշված աշխատանքները և 2011 թվականին արդեն ցանցում ընդգրկված կլինի շուրջ 1200 դպրոց՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի « Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ե N878-Ն որոշման : Հայաստանի հեռավոր բնակավայրերի աշակերտների և ուսուցիչների համար համակարգչային դասընթացներ կիրականացնի Շարժական ինտերնետային-համակարգչային կայանը, որն արդեն իսկ 2009 թվականի ընթացքում դասընթացներ է կազմակերպել Հայաստանի ինը մարզերի 20 համայնքներում, որոնց մասնակցել են 572 աշակերտ և 182 ուսուցիչ:

ՏՀՏ գիտելիքները խորացնելու և կրթական նպատակներով ՀԴԻՑ-ի հնարավորությունների արդյունավետ օգտագործումը խթանելու համար 2009 թվականին կազմակերպվել է ՀԴԻՑ-ին նոր միացված 320 դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչների և դպրոցների ներքին ցանցերն ու համակարգչային ուսումնական կենտրոնները սպասարկող մասնագետների վերապատրաստումներ:

Համակարգչային սարքավորումներով համալրմանը զուգընթաց իրականացվել են աշխատանքներ էլեկտրոնային բովանդակության (ռեսուրսներ, համակարգչային հայալեզու էլեկտրոնային ծրագրեր, դասագրքեր, ուսուցողական նյութեր և այլն) ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես, 7-9 դասարանների համար ստեղծվել են «Հայոց լեզու և քերականությունն ուսուցողական համակարգչային խաղը, « Հանրահաշիվ և երկրաչափությունն ուսուցողական համակարգչային ծրագիրը, « Էլեկտրոնային անգլերեն և « Ռուսաց լեզու ուսումնական ձեռնարկները, « Համացանցի օգտագործման ուղեցույց ուսումնասովանակ ձեռնարկը և կից էլեկտրոնային նյութը: 2009 թվականի ընթացքում աշխատանքներ են իրականացվել Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի գործունեության և զարգացման ուղղությամբ: Այն ենթադրում է նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների վիճակագրական տեղեկատվության պահպանման, վերլուծման և տարածման գործընթացների ապահովում, տեղեկատվության միասնական հիմնապաշարի (բազա) ստեղծում:

Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների գծով պետական բյուջեից 2008 թվականին հատկացվել է 344.4 մլն դրամ, 2009 թվականին՝ 547.0 մլն դրամ, 698.0 մլն դրամ էլ նախատեսվում է հատկացնել 2010 թվականին :

- Շարունակվել են տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման, ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման աշխատանքները: Նշված նպատակով պետական բյուջեից 2008 թվականին

հատկացվել է 469.4 մլն դրամ, 2009 թվականին՝ 764.5 մլն դրամ, 764.6 մլն դրամ էլ նախատեսվում է հատկացնել 2010 թվականին :

- Դպրոցների ջեռուցման համակարգերի և շենքային բարենպաստ պայմանների ապահովման նպատակով զգալի միջոցներ են նախատեսվել կրթական օբյեկտների հիմնանորոգման և կապիտալ շինարարության ուղղությամբ, ինչպես նաև վառելիքի և ջեռուցման գծով՝ կապված նոր կայսայատների շահագործման հետ:

Միաժամանակ, շնորհիվ ոլորտի բարեփոխումների, հանրակրթության համակարգի արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները որոշ դրական միտումներ են դրսևորել, մասնավորապես՝

- հանրակրթական դպրոցներում աշակերտ/ ուսուցչական դրույք և աշակերտ/ոչ ուսուցչական դրույք հարաբերակցությունների մակարդակը 2008-2009 թվականներին հասցվել էր՝ համապատասխանաբար, 14.5-ի և 24.1-ի՝ 2007 թվականի համապատասխանաբար 14.0 և 23.2 -ի դիմաց :
- ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածության մակարդակը 2005-2009 թվականներին կազմել է շաբաթական 22 ժամ՝ 2004 թվականի 20 ժամի դիմաց: Հաշվի առնելով նաև արտադասարանական աշխատանքների կատարումը (դասերի նախապատրաստում, տետրերի ստուգում և այլն)՝ ուսուցիչների ծանրաբեռնվածության ցուցանիշը կարող է կազմել շաբաթական մինչև 29 ժամ (համեմատության կարգով նշենք, որ ՏՀԶԿ երկրներում նշված ցուցանիշը կազմում է շաբաթական 38 ժամ, իսկ ՀՀ պետական հատվածում՝ 40 ժամ) :

Սփյուռքի ուղղությամբ իրականացվող հիմնական գործառնություններից մեկը սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստմանն ուղղված աշխատանքներն են: Նշված նպատակով կազմակերպվում են վերապատրաստման մեկամսյա դասընթացներ: Կարևորվում է նաև սփյուռքի համար մասնագիտական կադրերի պատրաստումը: Դիմորդների ընդհանուր թվի ավելացման հետ զուգընթաց աճում է նաև մանկավարժական, արվեստի և հայագիտական մասնագիտությունների գծով դիմորդների թիվը՝ կազմելով ընդհանուր թվի մոտ 45-50%-ը:

Սփյուռքի հետ կապերում կարևոր խնդիրներից է սփյուռքի հայկական կրթական հաստատությունների համար ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակումը և տրամադրումը: Ընդ որում, հետագա տարիներին ակնկալվում է Վրաստանին տրամադրվող գրականության թվաքանակի կտրուկ նվազում և այլ երկրներին տրամադրվող գրականության թվաքանակի աճ՝ կախված իրական պահանջարկից :

2004 թվականից սկսած՝ երկու տարին մեկ անգամ անցկացվում են Հայոց լեզվի և գրականության համահայկական օլիմպիադա և Համահայկական կրթական խորհրդածոյով :

Հասուն կ ընդհանուր կրթության բնագավառում պետական ռազմավարությունն ուղղված է՝ մի կողմից հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի

բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները:

« Կրթության մասին և ՀՀ օրենքի համաձայն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով: Ներկայումս համակարգում գործում է 32 պետական հատուկ հանրակրթական հաստատություն, որտեղ ընդգրկված են 4982 սաներ:

« Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հատուկ կրթության նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան և առողջությանը համարժեք ուսումնական միջավայրում նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովումն է:

ՀՀ կառավարության հավանությանն արժանացած « Ներառական կրթության հայեցակարգի և հիմնական նպատակն է ուրվագծել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպման և հատուկ կրթության բարեփոխման հիմնադրույթները:

Հատկապես կարևորվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց բժշկահոգեբանամանկավարժական գնահատումը, ինչը պետք է իրականացվի բժշկահոգեբանա-մանկավարժական գնահատման կենտրոններում:

Առաջընթաց է նկատվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ընդհանուր դպրոցներում ներգրավելու գործում: Ներկայումս ներառական կրթություն իրականացվում է հանրապետության 26 հանրակրթական դպրոցներում, որտեղ ընդգրկված են 715 երեխաներ: Միջնաժամկետ հատվածում ներառական կրթություն կիրականացվի 48 հանրակրթական դպրոցներում, որոնցում ընդգրկված կլինեն ըստ տարիների՝ 1301; 1339 և 1350 երեխաներ:

Մշակվել են մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթական չափորոշիչները, հրատարակվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման մի շարք ձեռնարկներ :

Արտադպրոցական կրթության ոլորտում ռազմավարությունն ուղղված է եղել համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Մասնավորապես գործունեության առաջնային ուղղություններն են եղել օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը:

Հանրապետության կրթական համակարգում ներկայումս գործում են 54 արտադպրոցական հիմնարկներ՝ մարզադպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական, տեխնիկական, բնապահպանական, գեղագիտական կենտրոններ, որոնցում ընդգրկված են շուրջ 29524 դպրոցականներ :

Ոլորտում իրականացված ծրագրերը միտված են եղել շնորհալի երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացմանը և խթանմանը, մատաղ սերնդի առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, ընտրած մարզաձևերում մարզական հերթափոխի պատրաստմանը, պարապոզների մարզական ունակությունների կատարելագործմանը, ՀՀ հավաքական թիմերի համալրմանը, միջազգային ասպարեզում վերջիններիս արդունավետ մրցունակության ապահովմանը, ինչպես նաև ուսումնական հաստատություններին մեթոդական օգնության տրամադրմանը, ուսումնական նոր դասագրքերի և ձեռնարկների մշակմանը:

- Կազմվել և հրատարակման է պատրաստվել գեղարվեստական կրթության ուսումնական հաստատությունների համար 2008 թվականին հրատարակվող երաժշտական գրականության և դասագրքերի ցանկը, ուր ներառվել է 21, 2009 թվականին՝ 29 գրականություն :
- ՀՀ Կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի N 1167-Ն որոշմամբ հաստատվեց երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսման վարձավճարի փոխհատուցման չափը: 2007 թվականին ուսման վարձավճարների փոխհատուցում են ստացել 134 դպրոցների 1993 սովորողներ, իսկ 2008 թվականին 139 դպրոցների 2062 սովորողներ: Ծրագրի իրականացման ընթացքում մի շարք դպրոցներում վերաբացվեցին ազգային նվագարանների բաժիններ: 2009 թվականին գումարներ են հատկացվել նաև լարային և փողային նվագարանների ուսուցման գծով ուսման վարձավճարի փոխհատուցման համար: Արդյունքում՝ 2009 թվականին ուսման վարձավճարի փոխհատուցում են ստացել Հայաստանի Հանրապետության 10 մարզերի և Երևանի երաժշտական և արվեստի 141 համայնքային դպրոցների՝ թվով 2443 աշակերտներ, այդ թվում՝ ազգային նվագարաններ են ուսուցանում թվով 2082 երեխա, լարային՝ 100 և փողային նվագարաններ՝ 261 երեխա: Ծրագիրը նպաստում է ազգային, լարային, փողային նվագարանների պահպանմանը, պետական աջակցության առավել հասցեական ուղղմանը, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար ուսուցման մատչելիության ապահովմանը: Ծրագրի իրականացման ընթացքում գյուղական համայնքային դպրոցներում վերաբացվել են ազգային, փողային և լարային նվագարանների բաժիններ, ինչն ապահովել է գյուղական երիտասարդության գեղարվեստական կրթություն ստանալու մատչելիությունը:
- Կարևորվել է նաև երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար առարկայական ծրագրերի մշակումը, ուսուցիչներին ուսումնամեթոդական և գործնական աջակցության ցուցաբերումը, մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող կադրերի վերապատրաստման խնդիրը:

- Վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում մանկապատանեկան մարզադպրոցների մարզակառույցների վերանորոգման խնդրին, որի արդյունքում ՀՀ պետությունը միջոցներով վերանորոգվել և կառուցվել է 28 մարզադպրոցի մարզակառույց: Ընդլայնված ու բարելավված պայմանները հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ դարձնելու մարզման գործընթացը, ինչպես նաև ավելի շատ պարապոդներ ընդգրկել մարզադպրոցներում:

Նախադպրոցական կրթության համակարգի բարեփոխման և զարգացման շրջանակներում ընդունվել է «Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որոնք կոչված են կարգավորելու նախադպրոցական կրթության համակարգի գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը:

2007 թվականին նախադպրոցական հաստատություններ են հաճախել 50491 երեխա (տեղերի քանակը կազմել է 69270) կամ՝ մանկապարտեզների փաստացի զբաղվածությունը կազմել է 72.9%: Ճիշտ է, վերջին ժամանակներում նկատվում է երեխաների ընդգրկվածության որոշակի աճ, սակայն դա կատարվում է խոշոր բնակավայրերում և մանկապարտեզ հաճախողները հիմնականում նյութապես ապահովված ընտանիքներից են: 2008 թվականին հանրապետությունում գործել են 631 նախադպրոցական հաստատություններ, որոնց գրեթե 1/3-ը բաժին է ընկել Երևանին (Երևանում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաները կազմել են նշված հաստատություններ հաճախող երեխաների ընդհանուր թվաքանակի շուրջ 45.6 %-ը):

Նախադպրոցական հաստատությունները գործում են համայնքային ենթակայությամբ և նշված ոլորտում պետական բյուջեի հաշվին ծառայություններ չեն մատուցվում, այլ դրանք իրականացվում են համայնքային, միջազգային կազմակերպությունների, ծնողական միջոցներից հատկացված գումարների հաշվին:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում **բարձրագույն մասնագիտական կրթության** զարգացումները պայմանավորված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի դրույթներով, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացին ՀՀ բարձրագույն կրթական համակարգի ինտեգրվելով:

ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ բակալավրի և մագիստրոսի ծրագրերով, գույքահեռաբար գործել է նաև դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով մասնագետների պատրաստման համակարգը, որն իր վերջին շրջանավարտները տվեց 2008 թվականին : Ներկայումս բարձրագույն

մասնագիտական կրթությունն իրականացվում է պետական բուհերում՝ անվճար և վճարովի հիմունքներով և ոչ պետական բուհերում՝ վճարովի հիմունքներով:

Բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստումը պետական համակարգում իրականացվում է 18 պետական բուհերում, միջպետական համաձայնագրերով և պետության մասնակցությամբ հիմնադրված՝ համապատասխանաբար, 2 և 1 բուհերում, ինչպես նաև պետական բուհերի 12 մասնաճյուղերում: Բուհերում ներկայումս մասնագետներ պատրաստվում են շուրջ 200 մասնագիտությունների գծով, ուսուցման առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով, ընդ որում պետական բուհերում սովորում են 82.6 հազար ուսանողներ, որոնցից շուրջ 24.2 հազարը՝ հեռակա համակարգում, իսկ 68 ոչ պետական բուհերում՝ 25.2 հազար ուսանող: Ոչ պետական բուհերից 35-ը հավատարմագրված է ամբողջությամբ, իսկ 10-ը՝ առանձին մասնագիտություններով:

Բարձրագույն մասնագիտական կրթության առկա վիճակը Հայաստանում առանձնահատուկ է նրանով, որ արդեն որոշակի քայլեր են ձեռնարկված ներկայումս ձևավորվող Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (ԵԲԿՏ) ինտեգրվելու համար:

Իրականացվել է ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների գործող ցանկի վերլուծություն մասնագիտությունների խոշորացման, ինչպես նաև աշխատանքային շուկայի պահանջներին համապատասխանության տեսանկյունից: Հանրապետության բուհերում ներդրվել են մի շարք ժամանակակից նոր մասնագիտություններ:

Հաստատվել են « Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր, մասնավորապես. մշակվել է « Բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսման գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգը: Բուհերն արդեն կուտակել են որոշակի դրական փորձ նոր համակարգին անցնելու կապակցությամբ: 2006 թվականի սեպտեմբերից ՀՀ պետական բուհերում կիրառվել է մրցակցային կրթության գաղափարը՝ ըստ առաջադիմության ուսանողների փոխատեղումը վճարովի ուսուցման համակարգից՝ անվճար և հակառակը: Որոշակի մասնագիտությունների գծով մի քանի բուհերում /ՀՊՃՀ, ԵՊՀ, ԵրՏՀ, ԵրԼՀ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան, մանկավարժական բուհեր և այլն/ ձեռք է բերվել համաձայնություն միասնական չափանիշներով կրեդիտային համակարգին անցնելու կապակցությամբ և 2007-2008 ուսումնական տարվանից բուհերը ընդունելությունը կատարել են կրեդիտային համակարգով:

Հաստատվել է նաև բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը, որը համապատասխանում է միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին: Իրականացվում է բարձրագույն կրթության նոր մասնագիտությունների ներդրում (Հատուկ հոգեբանություն, շտկող մանկավարժություն և հատուկ հոգեբանություն /նախադպրոցական/, զինվորական մանկավարժություն և հոգեբանություն, մանկավարժություն և սոցիոլոգիա, արվեստի կառավարում և այլն), հենքային հումանիտար պատրաստության ընդլայնում (իրավունք,

տնտեսագիտություն և հումանիտար այլ պարտադիր ու այլընտրանքային դասընթացների ներմուծում):

Հանդիսանալով Լիսաբոնի կոնվենցիայի հիմնադրույթների տեղայնացման գործիքն ազգային մակարդակում՝ «Մկադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն»-ն իր գործունեությունը ծավալում է երկրում և եվրոպական տարածաշրջանում ընթացող կրթական բարեփոխումներին և զարգացումներին համապատասխան: Հիմնադրամի գործունեությունն ուղղված է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ձևավորմանը՝ օտարերկրյա որակավորումների ճանաչման և կրթական համակարգերի վերաբերյալ հավաստի տեղեկատվության տրամադրման միջոցով: 2008-2009 թվականին հիմնադրամը շարունակել է իր գործունեությունը հետևյալ ուղղություններով՝ օտարերկրյա որակավորումների ճանաչում, խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում քաղաքացիներին, բարձրագույն կրթական հաստատություններին և օտարերկրյա ու տեղական կազմակերպություններին: 2009 թվականին նախորդ տարվա համեմատ 22%-ով աճել է հիմնադրամի կողմից տրամադրվող խորհրդատվության ծավալը և 24%-ով աճել են որակավորման ճանաչման դեպքերը: Հիմնադրամն ակտիվորեն մասնակցում է Լիսաբոնի կոնվենցիայի ճանաչման միջկառավարական կոմիտեի աշխատանքներին, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացին հետամուտ միջազգային խմբերի աշխատանքներին: 2009 թվականին այն մասնակցել է Գնահատման զեկույցի պատրաստմանը, որում ներկայացված են Բոլոնիայի գործընթացին միացած 46 երկրների հաջողությունները 2007-2009 թվականներին:

2008 թվականին ստեղծվեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը, որը պետք է իրականացնի նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով հավատարմագրման փորձաքննություն: Նշված հիմնադրամի շահառուներն են հանդիսանում ՀՀ-ում մասնագիտական կրթություն ապահովող ուսումնական հաստատությունները և կազմակերպությունները՝ իրենց համակազմերով, ուսանողները և գործատուները: Հիմնադրամն իր գործունեությունը սկսել է 2009 թվականի հունվարից: Վերջինիս գործառնություններն են. մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման չափանիշների և ընթացակարգերի մշակում, որակի ապահովման ներքին համակարգերի գնահատում, դրանց բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում, մասնագիտական հաստատությունների վարկանիշային ցուցանիշների հրապարակում:

Հայաստանի Հանրապետությունում **Նախնական և միջին մասնագիտական կրթության** (ՆՄՄԿ) զարգացումները պայմանավորված են «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներով: Նշված օրենքը կարգավորում է ՆՄՄԿ համակարգում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպա-իրավական և ֆինանսատնտեսական հիմքերը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ կառավարության կողմից 2009 թվականին հավանության է արժանացել « Հայաստանի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերությանն հայեցակարգը: Հայեցակարգում սահմանվել է ՀՀ կառավարության և սոցիալական գործընկերների՝ գործատուների և արհեստակցական միությունների միջև համագործակցությունը, որի արդյունքում նախատեսվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի հեղինակության, ուսումնական հաստատությունների շրջանավարտների մրցունակության բարձրացում և շահերի պաշտպանվածություն աշխատաշուկայում, որն իր հերթին կհանգեցնի աղքատության հաղթահարմանն ու երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

2008 թվականին ստեղծվել է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդը, որը ձևավորվել է սոցիալական գործընկերության պատշաճ ներգրավմամբ և նպատակ ունի իրականացնելու բարեփոխումներ ՀՀ-ում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում, ինչպես նաև նպաստել սոցիալական գործընկերության զարգացման և կոորդինացման գործընթացին:

Մշակվել և հաստատվել են ոլորտը կարգավորող մի շարք իրավական փաստաթղթեր, այդ թվում՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը, որոնք ներառում են արհեստագործական կրթության 102 մասնագիտություն՝ շուրջ 350 որակավորմամբ, որից ներկայումս ուսուցանվում է 54-ը, և միջին մասնագիտական կրթության 352 մասնագիտություն, որից ուսուցանվում է 102-ը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունն իրականացվում է նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ արհեստագործական ուսումնարաններում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում, ինչպես նաև կրթահամալիրներում: Այս կրթության նպատակը հիմնական կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական՝ արհեստագործի որակավորմամբ կադրերի՝ արհեստավորի պատրաստումն է: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրեր իրականացվում են 54 պետական ուսումնական հաստատություններում: 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում է 30 արհեստագործական ուսումնարան, որտեղ սովորում է շուրջ 7410 ուսանող (որոնցից՝ 1255-ը վճարովի հիմունքներով) և աշխատում է շուրջ 495 դասախոս և արտադրական ուսուցման վարպետ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում անվճար ուսուցմամբ սովորողների թիվը մինչև 2008 թվականն աճել է, իսկ 2009 թվականից սկսած՝ նվազման միտում ունի, չնայած դրան՝ ֆինանսական մուտքերն աճել են, պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ :

Միջին մասնագիտական (արհեստագործական) կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում, հիմնադրամում, կրթահա-

մալիքում, ինչպես նաև մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ առանձին կրթական ծրագրի ձևով: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ավարտական ատեստավորումն անցած շրջանավարտներին շնորհվում է մասնագետի որակավորում :

Ուսուցումը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվում է ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով : Ներկայումս միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացվում են 83 պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և 23 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (հավատարմագրված և ոչ հավատարմագրված): 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում է 78 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, որտեղ սովորում է շուրջ 28.7 հազար ուսանող (որոնցից՝ 21.2 հազարը վճարովի հիմունքներով) և աշխատում է շուրջ 3435 դասախոս և արտադրական ուսուցման վարպետ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում անվճար ուսուցման տեղերում սովորող ուսանողների թիվը մինչև 2008 թվականն աճել է, գուզահեռաբար աճ է գրանցվել նաև ուսուցման ծախսերում՝ պայմանավորված մանկավարժների աշխատավարձի բարձրացմամբ : Վերջին 5 տարիների ընթացքում վճարովի համակարգում սովորող ուսանողների թիվը գրեթե չի փոփոխվել: Միաժամանակ, 2007 թվականից սկսած, նկատվել է այդ համակարգից ստացվող ֆինանսական մուտքերի կտրուկ աճ: Դա պայմանավորված է ուսման վարձավճարների բարձրացմամբ, մասնավորապես՝ արվեստի, առողջապահության, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ու սպասարկման ոլորտներին առնչվող մասնագիտությունների գծով:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակներում մրցութային կարգով ընտրվել են 12 մասնագիտական կրթական ուսումնական հաստատություններ, որոնց նյութատեխնիկական բազայի տրամադրումից հետո՝ վերջիններս պետք է դառնան բազմագործառնություն ուսումնական հաստատություններ: Հաստատություններում իրականացվել են շուրջ 810 մլն դրամի շինարարական աշխատանքներ:

Սակայն բարեփոխումները հիմնականում իրականացվել են օրենսդրական դաշտի, անձնակազմի վերապատրաստումների, ուսումնամեթոդական նյութերի արդիականացման ուղղությամբ, իսկ նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ իրականացված բարեփոխումները դեռևս շատ հեռու են արդիական լինելուց, ինչը հանդիսանում է ուսումնական գործընթացի կազմակերպման, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման կարևորագույն գործոններից մեկը, եթե ոչ առաջնայինը :

1.2 ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած *հանրակրթության ոլորտի* բարելավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներին, նշված ոլորտում դեռևս առկա են հիմնախնդիրներ, մասնավորապես.

- կրթության որակի համապատասխանեցումը ՀՀ հանրակրթության պետական կրթակարգով նախատեսված չափանիշներին և միջնակարգ կրթության պետական չափորոշիչներով սահմանված պահանջներին,

- ավագ դպրոցի հայեցակարգի համաձայն՝ ավագ դպրոցների ցանցի ձևավորումը, տեղաբաշխումը, դպրոցի բովանդակության համապատասխանեցումը հայեցակարգին,

- մանկավարժական և ղեկավար կադրերի որակավորման բարձրացումը, վերապատրաստումների իրականացումը,

- մանկավարժական կադրերի ատեստավորման համակարգի գործունեության ապահովումը, բովանդակային սպասարկումը,

- սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման չափանիշների և դրանց իրականացման մեխանիզմների մշակման և կատարելագործման ապահովումը,

- տարրական, հիմնական և ավագ դպրոցի ավարտական քննական նյութերի և առաջադրանքների մշակման ու տրամադրման ապահովումը, դպրոցի ավարտական և բուհերի ընդունելության միասնական քննությունների կազմակերպումն ու անցկացումը,

- սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման ազգային և միջազգային ստուգատեսների անցկացումը,

- գնահատման մեթոդների կատարելագործման նպատակով փորձարարական ծրագրերի մշակումն ու իրականացումը,

- դպրոց-կենտրոնների գործունեության, կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ընդլայնումը և զարգացումը,

- ժամանակակից SՀS միջոցներով, կրթության ժամանակակից մեթոդներին տիրապետող մանկավարժական կադրերով կրթական համակարգի համալրումը:

Հայաստանի հանրակրթության ոլորտում SՀS-ի կիրառության մակարդակը չի կարելի բավարար համարել. մեծ քանակությամբ համակարգիչներ հնացած են, խիստ անբավարար են ուսումնական գործընթացում կիրառվող էլեկտրոնային ձեռնարկները, օժանդակ և մեթոդական նյութերը : Ուսուցիչները, այդ թվում նաև ինֆորմատիկայի ուսուցիչները, ոչ լիարժեք են տիրապետում ժամանակակից SՀS միջոցներին և դասապրոցեսում դրանց կիրառման մեթոդներին, դպրոցների համակարգչային ուսումնական կենտրոնները և ներքին ցանցերը սպասարկող մասնագետներից շատերի գիտելիքներն ու փորձը չեն բավարարում օրեցօր բարդացող խնդիրները լուծելու համար: Հանրակրթական հաստատությունների ղեկավարներից շատերը դեռևս բավարար չափով պատրաստ չեն ժամանակակից տեխնոլոգիաները դպրոցներում ներդնելու, դրանք կրթական ու կառավարչական նպատակներով արդյունավետ կիրառելու համար :

Դպրոցների որոշ մասը նորոգվել է, սակայն դեռ շատ դպրոցներ հիմնանորոգման կարիք ունեն: Դպրոցների ուսումնանյութական բազան աղքատիկ է, լաբորատորիաները հազեցված չեն

անհրաժեշտ սարքերով, սարքավորումներով և նյութերով և հատկապես կարևորվում է ավագ դպրոցների նյութատեխնիկական վիճակի բարելավումը :

Հիմնախնդիրներից է նաև սփյուռքի երիտասարդների՝ Հայաստանի հետ կապի հետագա ամրապնդումը:

Արտադպրոցական դաստիարակության ոլորտի հիմնախնդիրներն են.

- արտադպրոցական կրթական ոլորտի աստիճանական զարգացումը, նորացումն ու կատարելագործումը, արտադպրոցական կրթական նոր ծրագրերի մշակումը,
- կրթական ծրագրերի ուղղումը դպրոցականների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների նորացմանը, անձի ձևավորմանն ու անհատականության ազատ դրսևորմանը, բազմաֆունկցիոնալ արտադպրոցական կրթական հաստատությունների՝ տարբերակված ծրագրերով գործարկման ապահովումը,
- դպրոց-արտադպրոցական հաստատություն համագործակցության ձևերի ու միջոցների կատարելագործումը,
- արտադպրոցական կրթադաստիարակչական հաստատությունների մանկավարժների սոցիալական պաշտպանվածության բարելավումը, մանկավարժական և ղեկավար աշխատողների աշխատավարձերի բարձրացումը,
- արտադպրոցական հաստատությունների հիմնանորոգումը, ջեռուցման համակարգերի վերագործարկումը, նյութատեխնիկական բազայի համալրումը :

Նախադպրոցական կրթության համակարգում առանձնացվում են հետևյալ հիմնախնդիրները.

- նախադպրոցական ծառայությունների մատչելիությունը խիստ անհավասար է Հայաստանի Հանրապետության տարբեր տարածքներում և նախադպրոցական հաստատություններում, հատկապես շատ ցածր է գյուղական վայրերում երեխաների ընդգրկվածությունը,
- նախադպրոցական կրթության հաստատությունների շենքային պայմանները, երեխաների խնամքի և կրթադաստիարակչական աշխատանքների իրականացման, ուսուցման, դաստիարակության պայմաններն անբավարար են, ինչը լուրջ խոչընդոտ է հանդիսանում հաստատություններում երեխաների ընդգրկվածության մեծացման տեսանկյունից,
- մանկավարժական կադրերի մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացման, վերապատրաստման խնդիրը դեռևս լիարժեք չի լուծվում:

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտ

Բոլոնյան հռչակագիրը, ինչպես նաև նրան հաջորդող մյուս բոլոր փաստաթղթերը, հստակ սահմանեցին բարեփոխումների խնդիրները, որոնք պետք է իրականացնեն գործընթացին միացած երկրները: Մասնավորապես.

- ներդնել համընթեռնելի և համատեղելի բարձրագույն կրթական փաստաթղթեր, որի կարևոր մասն է կազմում Դիպլոմի հավելվածը (Diploma Supplement),
- անցում կատարել կրթական եռաստիճան համակարգի՝ բակալավր, մագիստրոս և դոկտորական,
- ներդնել դյուրընթեռնելի և համատեղելի կրեդիտների համակարգ, որը հանդիսանում է Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգը (European Credit Transfer System),
- ստեղծել որակավորումների ազգային համակարգ, որը համատեղելի կլինի որակավորումների համընդհանուր եվրոպական համակարգի հետ և կոյուրացնի որակավորումների համընթեռնելիությունը,
- մշակել և ներդնել համատեղելի չափանիշներ և ընթացակարգեր ուսման որակի ապահովման բնագավառում,
- ապահովել ուսանողների և աշխատակազմի շարժունությունը :

Բարձրագույն կրթության ոլորտում արձանագրված ֆինանսավորման ցածր մակարդակի պատճառով կառավարման և որակի ապահովման գործառույթները բավարար մակարդակի վրա չեն: Բարձրագույն կրթության պետական ֆինանսավորման ցուցանիշները զգալիորեն ցածր են տարածաշրջանային միջինից, ինչով մասամբ պայմանավորված է այն, որ երկրի անկախացումից հետո բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածությունն աճել է ընդամենը 20-ից մինչև 24 տոկոս: Վերջին տասնամյակում պետական ֆինանսավորման աճի ցածր տեմպերին զուգընթաց՝ էապես մեծանում է ուսման վարձավճարներից պետական բուհերի կախվածությունը: Պետական բուհերում ուսման վարձավճարները կազմում են մեկ շնչի հաշվով եկամտի 30-40 տոկոսը՝ ի համեմատություն, օրինակ, ԱՄՆ-ի կամ Ճապոնիայի, որտեղ այդ ցուցանիշը կազմում է 11 տոկոս: Ուսման բարձր վարձավճարները սահմանափակում են կրթության մատչելիությունն աղքատ բնակչության համար: Աղքատ ընտանիքներն ի վիճակի չեն վճարել պետական կամ մասնավոր բուհերի վճարովի տեղերում սովորելու համար պահանջվող վարձավճարը: Ֆինանսավորման այլ աղբյուրներից օգտվելու հնարավորությունից զուրկ այդ ընտանիքների համար ըստ առաջադիմության տրամադրվող ուսանողական նպաստները միակ տարբերակն են իրենց երեխաներին բարձրագույն կրթություն տալու համար, սակայն նպաստների քանակը սահմանափակ է: Ավելին, աղքատ ընտանիքները չեն կարող իրենց երեխաներին ապահովել մասնավոր պարապմունքներով, ինչի արդյունքում նրանց երեխաների ընդունելության քննությունների արդյունքները հիմնականում ցածր են լինում: Արդյունքում բնակչության ամենաանապահով հատվածին բաժին է ընկնում ուսանողական պետական նպաստների միայն 6%-ը, այն դեպքում, երբ բնակչության ամենաապահով հատվածին բաժին ընկնող մասը կազմում է շուրջ 40%:

Ներկայումս մասնագիտական կրթության բնագավառի խնդիրն է կրթության որակի բարձրացումը, համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին ու ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում դեռևս առկա են հիմնախնդիրներ, որոնք պայմանավորված են՝

- երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակով,
- ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գիտության և տեխնիկայի արագընթաց փոփոխություններով,
- ազգային ինքնության ձևավորման, պահպանման ու զարգացման գործում կրթության խաթարված դերով,
- կրթության շարունակական զարգացման համար անհրաժեշտ պայմանների բացակայությամբ,
- կառուցվածքային գործազրկության մեծ ծավալներով,
- գյուղական երիտասարդության համար կրթական համակարգի ոչ մատչելիությամբ,
- առկա ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմամբ և այլն:

Հայաստանում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի կարևորագույն խնդիրներից է աշխատաշուկայի պահանջներին միտված մասնագիտական կրթության և կրթական ծառայությունների մատուցման բարձր որակի ապահովումը: Համակարգը ծերացման կայուն միտում ունի և առկա է որակյալ մանկավարժական կադրերի արտահոսք: Վերջինս պայմանավորված է ներկայումս առկա ցածր աշխատավարձերով:

Համակարգված չեն դասավանդող անձնակազմի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման ծրագրերը: Լուծված չեն նախնական և միջին մասնագիտական կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման համար առանցքային նշանակություն ունեցող տեղեկատվական հաղորդակցման և դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրման խնդիրները, թույլ է ձեռնարկություն-ուսումնական հաստատություն կապը, բացակայում են արդյունավետ մեխանիզմները ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման առումով:

Աշխատաշուկան, ի դեմս գործատուների, թույլ է ներգրավված այս համակարգի կառավարման աշխատանքներում: Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում դեռևս լիարժեք ձևավորված չէ սոցիալական գործընկերությունը:

Ներկայումս նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացում գործնական աշխատանքների կազմակերպմանը մեծապես խոչնդոտում է նաև այն հանգամանքը, որ նյութատեխնիկական բազան կամ խիստ վերազինման կարիք ունի, կամ որոշ դեպքերում ընդհանրապես գոյություն չունի:

7.1.2 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2.1 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2011-2013 թվականների ժամանակահատվածում կրթության ոլորտում՝ համակարգի բարեփոխումների ուղղությամբ իրականացվող միջոցառումները դիտվում են որպես կրթության որակի բարձրացման գրավական:

Հանրակրթության ոլորտում ծրագրային ժամանակահատվածում կշարունակվեն բարեփոխումները, որոնք նպատակ են հետապնդում լրիվ միջնակարգ կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ լրիվ միջնակարգ կրթության հավասար մատչելիության ապահովումը միջնակարգ դպրոցի բոլոր, հատկապես՝ ավագ դպրոցի մակարդակներում և համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը :

Հանրակրթական հաստատությունների համակարգի արդյունավետության բարձրացման ուղղություններից մեկը առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորումն է: Այն հանրակրթության վերջին օղակն է և պետք է պատրաստի սովորողներին ինքնուրույն կյանքի և աշխատանքի շուկա մտնելուն: Այսինքն, ուսուցումն ավագ դպրոցում հնարավորություն կտա ապահովել սովորողների՝ իրենց հակումներին, ընդունակություններին, կարողություններին և նախասիրություններին համապատասխան նախնական, միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը: 2011 թվականին առանձին գործող ավագ դպրոցների ցանցում ընդգրկված կլինի շուրջ 150 դպրոց՝ ընդգրկելով հանրապետության ամբողջ տարածքը, և ամբողջովին ներդրված կլինի եռամյա ավագ դպրոցի ծրագիրը :

Կրթության ոլորտի բարեփոխումների շրջանակներում կիրականացվեն միջոցառումներ՝ նպատակ ունենալով.

- երեխաներին նախապատրաստել տարրական դպրոցին՝ ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ,
- մեծացնել նախադպրոցական կրթության ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը՝ ներառելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին: Մասնավորապես, նախատեսվում է դրամաշնորհների տրամադրում նախադպրոցական ծրագրեր իրականացնող հաստատություններին, նախադպրոցական կրթության հաստատությունների մանկավարժների և դաստիարակների վերապատրաստում :
- մանկավարժական կրթության արդիականացում և ուսուցչական կադրերի պատրաստման որակի բարձրացում՝ մանկավարժական կրթություն իրականացնող բուհերի բարեփոխման միջոցով:

Ծրագրային ժամանակահատվածում կշարունակվեն նաև.

- Կրթության բովանդակային սպասարկումը և նորմատիվ դաշտի բարելավումը, որը ենթադրում է առարկայական չափորոշիչների, ծրագրերի, ձեռնարկների և մեթոդական այլ նյութերի մշակում և փորձարկում, կրթության բնագավառը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերի մշակում,
- Մանկավարժական և ղեկավար կադրերի վերապատրաստումները,
- Հանրակրթական հաստատությունների բոլոր մակարդակների սովորողների ընթացիկ և ավարտական, ինչպես նաև բուհ ընդունվողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների միասնական գնահատման իրականացման համար առարկայական թեստերի, գնահատման չափորոշիչների և դրանց իրականացման մեխանիզմների մշակումը և կատարելագործումը, գնահատման մեթոդների հետագա կատարելագործման նպատակով փորձարարական ծրագրերի կատարելագործումը,
- Սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման ազգային և միջազգային ստուգատեսներին Հայաստանի Հանրապետության մասնակցությունը,
- Համակարգչային սարքավորումներով հանրակրթական դպրոցների համալրումը, դպրոցներում համակարգչային ուսումնական կենտրոնների ստեղծումը, Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի ընդլայնումը, կրթական էլեկտրոնային նյութերի ստեղծումը,
- ՀՀ քաղաքացիների կրթության համար արդիականացված շենքային պայմաններ ապահովելու նպատակով՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման, գազով աշխատող կաթսայատների կառուցման գծով աշխատանքների իրականացումը,
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հավասար պայմանների ստեղծումը և կարիքին համապատասխան որակյալ կրթության հնարավորություն տալը, ներառական կրթության ընդլայնմանը զուգընթաց հատուկ դպրոցների ընդունելության համակարգի բարելավումը :

Սփյուռքի հետ կապերի ընդլայնումը և համատեղ ծրագրերի իրագործումը նպատակ ունեն ճշտել այդ ոլորտում համագործակցության բնույթը, ուղիներն ու միջոցները, քննել նրանց հուզող կրթական հարցերը և ցուցաբերել մեթոդաբանական, մեթոդական և ուսումնադաստիարակչական բնույթի այլ աջակցություն:

Արտադպրոցական դաստիարակության ոլորտում անհրաժեշտ է՝

- նպաստել սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, հոգևոր, մարդասիրական, գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործմանը :
- նպաստել արտաուսումնական կրթական ոլորտի աստիճանական զարգացմանը, նորացմանն ու կատարելագործմանը, մշակել արտադպրոցական կրթական նոր ծրագրեր,
- կատարելագործել դպրոց-արտադպրոցական հաստատություն համագործակցության ձևերն ու միջոցները,

- գեղարվեստական խմբակներում ընդգրկված սաների գեղարվեստական ստեղծագործության ունակությունների, հակումների, հետաքրքրությունների ոլորտի զարգացում,
- օժտված և շնորհալի երեխաների բացահայտում,
- մանկավարժական և ղեկավար աշխատողների աշխատավարձերի բարձրացում,
- կրթական և մշակութային հիմնարկների օժտված կադրերի ներգրավում արտադասարանական խմբակների աշխատանքին :

Մարզական օբյեկտների հիմնանորոգման, շինարարության համար անհրաժեշտ կապիտալ ներդրումները նպաստավոր պայմաններ կստեղծեն ՀՀ մարզերում և Երևան քաղաքում բնակչության առողջ ապրելակերպի, ֆիզիկապես առողջ մարդու ձևավորման համար :

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կրթության բնագավառում կարևորվում է մասնագիտական կրթության որակի բարձրացմանը և աշխատաշուկայի պահանջներին, երկրի կրթական ու գիտական զարգացման ռազմավարական նպատակներին և միջազգային ստանդարտներին ու Բոլոնիայի համաձայնագրի դրույթներին դրա համապատասխանեցմանն ուղղված բարեփոխումների շարունակումը :

Հաշվի առնելով Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին միանալու անհրաժեշտությունը, սահմանվում են ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների հետևյալ ռազմավարական նպատակները.

- մշակել բարձրագույն և հետբուհական կրթության համալիր վերակառուցման ռազմավարություն, միջոցառումներ և ժամանակացույց,
- Եվրոպական որակավորումների շրջանակին համապատասխան մշակել և ներդնել որակավորումների ազգային շրջանակ,
- ավարտել անցումը բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի,
- ապահովել բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթերի փոխձանաչումը և համարժեքությունը,
- խթանել ուսանողների շարժունությունը, անցումը գնահատման նոր համակարգին,
- կայուն ֆինանսավորման ապահովում:

Բարձրագույն կրթության որակի ապահովումը ենթադրում է`

- Որակի ապահովման նոր, ժամանակակից համակարգի մշակում և ներդրում,
- Որակի ապահովման շրջանակներում Եվրոպական համագործակցության խթանում,
- Անդամակցում Որակի ապահովման Եվրոպական ընդհանուր համակարգին և Եվրոպական որակի ապահովման ռեգիստրին,
- Բուհերի վարկանիշային համակարգի ներդրում:

Անցումը եռաստիճան համակարգին՝

- Բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերի բովանդակության, որակավորման բնութագրիչների և ավարտական ատեստավորման պահանջների համադրում և ներդաշնակում,

- Հետբուհական գիտակրթական ծրագրի վերակազմակերպում և համապատասխանեցում Եվրոպական կրթական 3-րդ աստիճանի հետ,

- Հետբուհական կրթական ծրագրերի մասնագիտությունների դասընթացների ցանկի հաստատում:

Ավարտական փաստաթղթերի փոխձանաչումը՝

- Փաստաթղթերի փոխձանաչման կամ համարժեքության վերաբերյալ նորմատիվ-իրավական փաստաթղթերի մշակում, ավարտական փաստաթղթերի փոխձանաչման խթանում,

- Աշխատանքային շուկայի հետ կապերի խթանում, ուսումնական հաստատության և գործատուների կապերի խորացում:

Կրթության մատչելիությունը և շարժունությունը՝

- Գնահատման նոր համակարգի ամբողջական ներդրում, սովորողների համար հավասար պայմանների, միասնական չափանիշների, օբյեկտիվ գնահատման ապահովում,

- Օտարերկրյա բուհերի և կրթաթոշակների վերաբերյալ տեղեկատվության համակարգում և տարածում,

- Ընդգրկվածության հնարավորինս բարձր մակարդակի ապահովում,

- Միջբուհական համագործակցության խթանում, միջբուհական համատեղ կրթական ծրագրերի ձևավորում՝ ընդհանուր ծրագրային չափորոշիչներին համապատասխան և ընդհանուր որակավորման շնորհումով,

- Հայաստանյան ուսանողների անարգել միջբուհական տեղափոխումների և միջազգային շարժունության համար նպաստավոր պայմանների ստեղծում:

Կայուն ֆինանսավորումը և բուհական անկախությունը՝

- Ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգի մշակում և ներդրում.

- Աջակցություն հետազոտական դրամաշնորհային ծրագրերի ձևավորմանը,

- Ուսման վարկավորման համակարգի ներդրում,

- Վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

Հայաստանում նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում

բարեփոխումների հիմնական նպատակներն են.

ՄԿՈՒ հաստատությունների ինտեգրում կրթության գլոբալ համակարգերին,

ՄԿՈւ որակավորումների համակարգի համապատասխանեցում որակավորումների եվրոպական շրջանակին,

Կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդրում,

Մասնագիտական կրթության ոլորտում տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծում,

Բաց և ժողովրդավարական ՄԿՈՒ համակարգի ստեղծում,

ՄԿՈՒ համակարգի արդյունավորության և արդյունավետության ապահովում,

Մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգի ստեղծում,

Աշխատաշուկայի վերլուծության և մասնագիտական չափորոշիչների վրա հիմնված կարողութենամետ կրթական չափորոշիչների ձևավորում,

Սոցիալական գործընկերության ձևավորում մասնագիտական կրթության ոլորտում,

ՄԿՈՒ հաստատությունների օպտիմալ ցանցի ձևավորում,

Մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման (ՄԿՈՒ իրականացման) որակի բարելավում,

ՄԿՈՒ հաստատությունների ժամանակակից կառավարման մեխանիզմների ձևավորում,

ՄԿՈՒ հաստատությունների սովորողների եւ շրջանավարտների մասնագիտական հմտությունների ապահովում` տնտեսության և աշխատաշուկայի կարիքներին համապատասխան,

ՄԿՈՒ ֆինանսավորման միջոցների ծախսերի արդյունավետության ապահովում:

Ողջ կյանքի ընթացքում ՄԿՈՒ համակարգում ուսումնառություն ապահովելու նպատակով նախատեսվում է`

- Ապահովել կրթության շարունակականությունը /մեկ կրթական մակարդակից մյուսին անցում/,
- Ապահովել քաղաքացու մրցունակությունը աշխատաշուկայում,
- Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների ճանաչում:

Ստեղծել նպաստավոր պայմաններ ողջ կյանքի ընթացքում (մասնագիտական, քաղաքացիական, մշակութային և անձի զարգացմանն ուղղված) ուսումնառության համար:

Ելնելով վերոնշյալ գերակա նպատակներից և խնդիրներից` առավել կարևորվում են իրակա-

նացվելիք հետևյալ միջոցառումները՝

- Խթանել ՄԿՈՒ հաստատությունների անդամակցումը միջազգային ծրագրերին և ցանցերին,
- Հայաստանում գործող որակավորումների համակարգի կառուցվածքը համապատասխանեցնել Որակավորումների Եվրոպական Շրջանակին,
- Ձևավորել սոցիալական երկխոսության միջավայր՝ ազգային, մարզային և տեղական մակարդակներով,
- Սոցիալական գործընկերներին ներգրավել մասնագիտական կրթության քաղաքականության և ռազմավարության մշակման, մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման գործընթացներում: Սահմանել սոցիալական գործընկերության դերն ու պատասխանատվությունները ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով,
- Հնարավորինս վերանորոգել նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքերը, ապահովել ջեռուցման համակարգերի անխափան աշխատանքը,
- Հարստացնել և արդիականացնել նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնալաբորատոր, արհեստանոցային բազան,
- Բարձրացնել մանկավարժական և ղեկավար աշխատողների աշխատավարձերը,
- Մշակել մասնագիտական (գրադմունքների) չափորոշիչներ,
- Ներդնել և ընդլայնել կրթական տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ,
- Իրականացնել ՄԿՈՒ հաստատությունների ղեկավարների և դասավանդողների պարբերական վերապատրաստումներ, ուսումնական այցեր,
- Կազմակերպել պրակտիկաները և արտադրական ուսուցումը գործատուների մոտ,
- Ապահովել մասնագիտական կրթության տարբեր մակարդակներում ստացած կրեդիտների կուտակումը եւ փոխանցելիությունը:

2.2 ԳԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթության բնագավառի զարգացումը ՀՀ կառավարության կողմից դիտվում է որպես տնտեսության առաջընթացի առաջնային գերակայություն, այդ իսկ պատճառով կպահպանվի կրթության ոլորտի գերակա վիճակը 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի ողջ ժամանակահատվածում :

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշված է նաև «Կայուն զարգացման ծրագրում»՝ կրթության ոլորտի գերակայություն է համարվում հանրակրթությունը, որին էլ առաջիկա տարիներին կուղղվի կրթության բնագավառին նախատեսվող պետական հատկացումների գերակշիռ մասը :

Նախատեսված բարեփոխումների շրջանակում լրիվ միջնակարգ կրթությունը, ներառյալ ներդրվող եռամյա ավագ դպրոցը, կոչված է ապահովելու շրջանավարտների՝ աշխատաշուկա մտնելու պատրաստվածությունը և իրենց հակումներին ու ընդունակություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը :

Լուծելով հիմնական ընդհանուր կրթության որակի բարձրացման խնդիրները՝ պետությունը, դրանով իսկ, բավարար հիմքեր է ստեղծում ավագ դպրոցում և մասնագիտական կրթության ոլորտում ընդգրկվածության մակարդակների բարձրացման համար՝ հատկապես ի հաշիվ անապահով ընտանիքների երեխաների:

Հանրակրթության ոլորտի հիմնական գերակայություն են՝

- կրթության բովանդակային բարեփոխումը, նորմատիվ դաշտի բարելավումը,
- մանկավարժական կադրերի վերապատրաստումների իրականացումը, մեթոդական սպասարկումը, մանկավարժական կադրերի ատեստավորման համակարգի գործունեության ապահովումը,
- 12-ամյա կրթության անցումն ապահովող նյութերի և նորմատիվային փաստաթղթերի մշակումն ու ներդրումը,
- առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ընդլայնումը, ընթացիկ վերահսկողությունը և գնահատումը,
- տարրական դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացումը և հավասար մեկնարկային հնարավորությունների ստեղծումը,
- աշխատավարձերի բարձրացումը,
- գնահատման նոր համակարգի ներդրումը (սովորողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման նոր համակարգի, ավարտական և բուհի ընդունելության միասնական քննությունների ամբողջական ներդրում) ,
- դպրոց-կենտրոնների գործունեության ընդլայնումը,
- հանրապետության դպրոցների ինտեգրետային ցանցում նոր դպրոցների ընդգրկումը,

- միջազգային առարկայական օլիմպիադաներին, ինչպես նաև սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման ազգային և միջազգային ստուգատեսների մասնակցությունը :

Չնայած դպրոցների շենքային պայմանների բարելավման նպատակով ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումներին, այնուամենայնիվ առաջնային են մնում կրթական հաստատությունների ուսումնական շենքերով ապահովվածության, դրանց հիմնանորոգման, կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման աշխատանքների շարունակական իրականացումը :

Սփյուռքի հետ տարվող աշխատանքներում գերակա ուղղություններն են սփյուռքի կրթօջախների համար ուսումնական գրականության և այլ օժանդակ նյութերի ստեղծումը և տրամադրումը, համահայկական միջոցառումների անցկացումը :

Հանրակրթության ոլորտում շարունակում է գերակայություն մնալ նաև **հատուկ կրթության** համակարգը : Նշված ոլորտում կարևորվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հավասար պայմանների ստեղծումը և կարիքին համապատասխան որակյալ կրթության հնարավորություն տալը, ներառական դպրոցների ցանցի զարգացումը, հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավումը, հատուկ հաստատություններում իրականացվող ծառայությունների ապակենտրոնացումը :

Նախադպրոցական կրթության ոլորտում գերակա ուղղություններն են՝ նախադպրոցական կրթության մատչելիության ապահովումը, ծառայությունների ցանցի ընդլայնումը : Առանձնակի կարևորվում է նախադպրոցական ավագ տարիքի երեխաների՝ 5-6 տարեկանների, տարրական կրթությանն արդյունավետ նախապատրաստելու խնդիրը, ինչը կապահովի երեխաների համար հավասար մեկնարկային պայմաններ տարրական դպրոցում ուսումը շարունակելու համար :

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նշված ոլորտում գերակայություն են դիտվում « Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի, Լիսաբոնի կոնվենցիայի պահանջների ապահովումը, Բոլոնիայի գործընթացին ՀՀ բարձրագույն կրթական համակարգի ինտեգրման գծով հիմնական ուղղությունների իրականացումը՝

- համընթեռնելի և համադրելի բարձրագույն կրթական փաստաթղթերի ներդրում,
- որակավորումների ազգային համակարգի ստեղծում,
- ՀՀ կրթական համակարգի վերաբերյալ տեղեկատվության պատրաստում և տրամադրում շահառուներին:


Կարևորելով նաև մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) դերը՝ սահմանվել են համակարգի զարգացման միջնաժամկետ ծրագրի հետևյալ գերակայությունները.

- Նախնական և միջին մասնագիտական կրթության միասնական պետական կրթական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում,

- Հայաստանում գործող որակավորումների համակարգի կառուցվածքի համապատասխանեցում Որակավորումների Եվրոպական Շրջանակին,
- ՄԿՈԻ համակարգում կրեդիտային համակարգի ներդրում,
- Սոցիալական երկխոսության միջավայրի ձևավորում, սոցիալական գործընկերների ներգրավում մասնագիտական կրթության քաղաքականության և ռազմավարության մշակման, մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման գործընթացներում,
- Մանկավարժական և դեկավար աշխատողների աշխատավարձերի բարձրացում,
- Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգում, ջեռուցման համակարգերի անխափան աշխատանքի ապահովում,
- Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնավարորատոր, արհեստանոցային բազայի արդիականացում,
- ՄԿՈԻ հաստատությունների դեկավարների և դասավանդողների պարբերական վերապատրաստումների իրականացում :

Հանրակրթության և մասնագիտական ծրագրերի ծախսերի կառուցվածքը՝ ըստ կրթական տարբեր մակարդակների, ներկայացված է Գծանկար 7.1.-ում :

Գծանկար 7.1. Կրթության բնագավառում պետական ծախսերը 2009-2013 թթ.՝ ըստ կրթական մակարդակների (%՝ բնագավառի ընդհանուր ծախսերի նկատմամբ)



■ Հանրակրթական ծրագրեր
 ■ Մասնագիտական կրթական ծրագրեր
 ■ Այլ ծրագրեր

Ցանկություն. Հանրակրթական ծրագրերը ներառում են տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը (հանրակրթական ուսուցում, ներառական կրթություն, հատուկ կրթություն և այլն), ինչպես նաև հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում նախատեսված մի շարք ծրագրեր: Մասնագիտական կրթական ծրագրերը ներառում են նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերը, ինչպես նաև նշված ծրագրերի իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրեր:


7.1.3 ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Կրթության բնագավառի պետական ֆինանսավորման ծավալների աճը և վիճակի բարելավումը դիտվելու է որպես առաջնահերթ խնդիր նաև ՀՀ 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի ողջ ժամանակահատվածում:

2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով կրթության ոլորտի գծով (ներառյալ հիմնանորոգման, վարկային ծրագրի և ՀՄՆՀ-ի գծով ծախսերը, առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվել են ծախսեր՝ 2011 թվականին՝ 108318.5 մլն, 2012 թվականին՝ 106706.5 մլն և 2013 թվականին՝ 111765.5 մլն դրամի չափով: 2012 թվականի ծախսերի նվազումը 2011 թվականի նկատմամբ 1612.0 մլն դրամով պայմանավորված է հետևյալով. նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կապիտալ ծախսերը, ինչպես նաև վարկային ծրագրերի գծով կապիտալ ծախսերը նվազել են 3118.5 մլն դրամով, միաժամանակ՝ կրթության ոլորտի ընթացիկ ծախսերն աճել են 1506.5 մլն դրամով:

2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2011 թվականին կկազմեն ՀՆԱ-ի 3.03 %-ը, 2012 թվականին՝ 2.78 %-ը և 2013 թվականին՝ 2.7 %-ը:

Գծանկար 7. 2. Պետական բյուջեի ծախսերի ծրագրային ցուցանիշները կրթության բնագավառում (%-ը ՀՆԱ-ում)




Աղյուսակ 7. 2. Կրթության ոլորտի պետական ծախսերը 2009-2013 թվականներին՝ ըստ ուղղությունների (մլն դրամ)

Խմբերի անվանումը	ՀՀ 2009 թվականի պետական բյուջե (փաստ)	ՀՀ 2010 հաստատված պետական բյուջե	ըստ ՀՀ 2011-2013 թվականների ՄԺԾԾ-ի		
			2011	2012	2013
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	106947.8	99294.6	108318.5	106706.5	111765.5
01,02 Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, Միջնակարգ ընդհանուր կրթություն	71573.3	70300.5	73431.0	77026.3	80959.9
03. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	4679.1	4881.2	5013.4	5040.0	5293.5
04. Բարձրագույն կրթություն	7469.6	7522.6	7724.8	7710.1	8137.9
05. Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	3119.5	3265.9	3591.2	3579.9	3770.6

06.Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	20106.3	13324.4	18558.1	13350.2	13603.6
--	---------	---------	---------	---------	---------

Ծրագրային ժամանակահատվածի վերջում, կրթության ոլորտի ծախսերի կառուցվածքում ընթացիկ ծախսերին բաժին կրնկնի ընդհանուր մասհանումների 93.8 %-ը, իսկ կապիտալ ծախսերին՝ 6.2 %-ը: Ընթացիկ ծախսերում գերակշռող մասը կազմում են աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովության վճարները:

Գծանկար 7.3. Կրթության ոլորտի 2010-2013 թվականների պետական ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների (%՝ բնագավառի ընդհանուր ծախսերի նկատմամբ)



Աղյուսակ 7.3 Կրթության ոլորտի պետական ծախսերը 2011-2013 թվականներին՝ ըստ գոյություն ունեցող և նոր ծրագրերի

	(մլն դրամով)		
	2011թ.	2012թ.	2013թ.
Գոյություն ունեցող պարտավորությունների ընդհանուր ծախսերը	108293.0	106681.0	111740.0
Նոր նախաձեռնությունների ընդհանուր ծախսերը	25.5	25.5	25.5
ԸՆԴԱՄԵՆԸ	108318.5	106706.5	111765.5

Հանրակրթական ծրագրեր

2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվող կրթության ոլորտի ծախսերի աճի հիմնական մասը կուղղվի հանրակրթության ոլորտին, որը հնարավորություն կտա ապահովելու համակարգի արդյունավետության բարձրացման և հանրակրթության ռացիոնալացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների շարունակումը:

2011 թվականին նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթության, միջնակարգ ընդհանուր կրթության, ինչպես նաև հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում նախատեսված մի շարք ծրագրերի գծով ծախսերը 2010 թվականի նկատմամբ կաճեն 7.7 %-ով և կկազմեն 87483.2 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 80.8 %-ը: 2012 թվականին նշված ծրագրերի գծով ծախսերը 2011 թվականի նկատմամբ կաճեն 2.3 %-ով և կկազմեն 89524.4 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 83.9 %-ը, իսկ 2013 թվականին` 2012 թվականի նկատմամբ ծախսերը կաճեն 3.8 %-ով` կազմելով 92956.9 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 83.2 %-ը:

Հանրակրթության ոլորտում պետական ծախսերի ծրագրվող աճը կհանգեցնի մեկ աշակերտի հաշվով կատարվող ծախսերի ավելացման` 2013 թվականին մեկ աշակերտի հաշվով ծախսերը 2010 թվականի համապատասխան ցուցանիշի համեմատ կաճեն 5.6 տոկոսով:

Աղյուսակ 7.4. Մեկ աշակերտի հաշվով պետական ծախսերը հանրակրթության ոլորտում

	2008	2009	2010	2011
Ինդեքս (2010թ. = 100)	100.0	105.2	101.2	105.6
Հուշագրային հոդվածներ				
Աշակերտների թվաքանակը (2010թ. = 100)	100.0	102.4	108.9	108.4
Պետական ծախսերը հանրակրթության ոլորտում (2010թ. = 100)	100.0	107.7	110.2	114.5

Հանրակրթության ոլորտում առաջնահերթ խնդիրներից են ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը, եռամյա ավագ դպրոցի ծրագրի ամբողջությամբ ներդրումը, ուսուցիչների վերապատրաստումները: Այս ուղղությամբ իրականացվող միջոցառումները դիտվում են որպես կրթության որակի բարձրացման գրավական:

Մասնավորապես 2011-2013 թվականներին նախատեսվում է`

- Ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2013 թվականին կբարձրացվի 7.3 տոկոսով, միաժամանակ, հաշվի առնելով ավագ դպրոցներում մանկավարժական անձնակազմի աշխատավարձի 20% հավելումը, ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կհասցվի. 2011 թվականին` 117.5 հազ. դրամի, 2012 թվականին` 117.6 հազ.դրամի, 2013 թվականին` 126.2 հազ.դրամի (ուսուցիչների

տարեկան աշխատավարձի չափը 2011 թվականին մեկ շնչին բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ի մակարդակը կգերազանցի 1.3 անգամ, իսկ 2012-2013 թվականներին՝ 1.2 անգամ)։

- Վարչական անձնակազմի և հաշվապահների միջին ամսական հաշվարկային աշխատավարձի բարձրացումը նույնպես կիրականացվի 2013 թվականին՝ 7.3 տոկոսով։ 2011-2013 թվականներին վարչական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կհասցվի ըստ տարիների՝ համապատասխանաբար 176.2 ; 176.2 և 189.1 հազ. դրամի, իսկ հաշվապահների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 87.8 ; 87.8 և 94.3 հազ. դրամի։
- Ուսումնասովորողական և տնտեսական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2011 թվականին նախատեսվում է բարձրացնել 8.3 %-ով, իսկ 2013 թվականին՝ 7.7%-ով, պայմանավորված 2011 և 2013 թվականներին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի համապատասխանաբար՝ 32.5 և 35.0 հազ. դրամի չափով սահմանմամբ : Ծրագրային ժամանակահատվածի վերջում աշխատավարձին ուղղվող միջոցները կկազմեն հանրակրթության ոլորտում ընթացիկ ծախսերի մոտ 85.5 %-ը :
- 2011 թվականին ավագ դպրոցների համակարգի ներդրման գծով նախատեսվել է 99.8 մլն դրամ, որի շրջանակներում ցանցում ընդգրկվելիք նոր ավագ դպրոցների ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաների համար ձեռք կբերվեն սարքավորումներ։ Միաժամանակ, ավագ դպրոցներում կհիմնվեն ռեսուրս-կենտրոններ (ժամանակակից գրադարաններ), կվերապատրաստվեն ավագ դպրոցի ուսուցիչները, տնօրենները և գրադարանավարները :
- Կշարունակվի ուսուցիչների վերապատրաստման գործընթացը, կրթության բովանդակային և մեթոդական սպասարկումը։ Նշված նպատակներով պետական բյուջեից միջնաժամկետ հատվածում նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 491.5 մլն դրամ։ Միաժամանակ, յուրաքանչյուր տարի շուրջ 364.5 մլն դրամ կհատկացվի ուսումնամեթոդական գրականության և ուսումնադիտողական պարագաների, ինչպես նաև մանկավարժական պարբերականների մշակման ու ձեռքբերման գծով :
- Նախատեսվել են միջոցներ հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային կայանի շահագործման, Մայքրոսոֆթի համակարգչային ծրագրերի արտոնագրման նպատակով (2011 թվականի սեպտեմբերից Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում կընդգրկվեն 256 դպրոց կամ՝ 2011 թվականին արդեն նշված ցանցում ընդգրկված կլինի շուրջ 1200 դպրոց)։ Նշված աշխատանքների իրականացման համար ըստ տարիների նախատեսվում է հատկացնել՝ համապատասխանաբար 858.1; 991.1 և 999.2 մլն դրամ :
- Զգալի միջոցներ են նախատեսվել քննությունների թեստերի, ուղեցույցերի մշակման, ավարտական քննությունների անցկացման, TIMSS-2011 և PIRLS-2011 միջազգային ստու-

գատես-հետազոտությունների հիմնական փուլին Հայաստանի Հանրապետության մասնակցության գծով՝ ըստ տարիների 373.4 ; 488.7 և 502.9 մլն դրամի չափով :

- Պետությունը շարունակելու է տարրական դասարանների աշակերտներին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերով ապահովելու քաղաքականությունը, նշված նպատակներով 2011-2013 թվականներին յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 469.4 և 120.0 մլն դրամ: 2011 թվականին ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման գծով նախատեսվել է 295.2 մլն դրամ :
- 3000 դպրոցահասակ երեխայի ամառային հանգստի կազմակերպման գծով 2011-2012 թվականներին նախատեսվել է 214.5 մլն դրամ, իսկ 2013 թվականին՝ 218.9 մլն դրամ :
- ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների պակասը լրացնելու նպատակով կշարունակվեն ՀՀ մարզերը մանկավարժական կադրերով համալրելու աշխատանքները, որի նպատակով յուրաքանչյուր տարի նախատեսվել է 83.2 մլն դրամ :
- Կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով, նկատի ունենալով օբյեկտների շինարարության և հիմնանորոգման շարունակական բնույթի ապահովումը, յուրաքանչյուր տարի նախատեսվել է 6402.0 մլն դրամ :

Միջնաժամկետ հատվածում աշակերտ/ ուսուցչական դրույք հարաբերակցությունը կմնա 14.5-ի մակարդակին, իսկ աշակերտ/ոչ ուսուցչական դրույք հարաբերակցությունը՝ 23.9-24.0 սահմաններում :

Մասնագիտական կրթական ծրագրեր

Մասնագիտական կրթական ծրագրերի (նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրեր, ինչպես նաև նշված ծրագրերի իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրեր) գծով ծախսերը 2011 թվականին 2010 թվականի նկատմամբ կավելանան 2.1 %-ով և կկազմեն 14861.1 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 13.7 %-ը: 2012 թվականին ծախսերը 2011 թվականի նկատմամբ կնվազեն 10.7 %-ով և կկազմեն 13272.9 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 12.4 %-ը (նվազումը պայմանավորված է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կապիտալ ծախսերի գծով միջոցների նվազեցմամբ), իսկ 2013 թվականին ծախսերը 2012 թվականի նկատմամբ կաճեն 5.2 %-ով՝ կազմելով 13966.8 մլն դրամ, կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 12.5 %-ը:

2011-2013 թվականներին մասնագիտական կրթության ոլորտի ծախսերը հիմնականում պայմանավորված են հետևյալ գործոններով.

2011-2013 թվականներին զգալի միջոցներ են նախատեսվել աշխատավարձերի բարձրացման գծով: Այն՝

- նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում իրականացվել է հանրակրթության համակարգում նախատեսվող բարձրացումների տոկոսներով :
- 2011 թվականին միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը հաշվարկվել են 10 %, իսկ 2013 թվականին՝ 7.3 % աճով, բացառությամբ հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա ուսուցում իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, որոնց մանկավարժական և վարչական անձնակազմի աշխատավարձերը հաշվարկվել են հանրակրթության համակարգում առաջարկվող ընդհանուր սկզբունքներով: Ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի գծով աշխատավարձերի բարձրացումը նախատեսվել է՝ հաշվի առնելով 2011 և 2013 թվականներին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի համապատասխանաբար՝ 32.5 և 35.0 հազ. դրամի չափով սահմանումը :
- Բարձրագույն և հետբուհական կրթական հաստատություններում աշխատավարձերի բարձրացումը նախատեսվել է՝ հաշվի առնելով 2011 և 2013 թվականներին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի համապատասխանաբար՝ 32.5 և 35.0 հազ. դրամի չափով սահմանումը: Օրդինատորների կրթաթոշակի չափը նախատեսվել է 2011-2013 թվականներին հանրապետությունում սահմանվող նվազագույն աշխատավարձի չափով :

Միջնաժամկետ հատվածում կշարունակվեն աշխատանքները « Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխումներե ծրագրի գծով, ընդ որում՝ նշված ծրագրի շրջանակներում կապիտալ ծախսերի իրականացման համար 2011 թվականին նախատեսվել է 1600,0 մլն դրամ :

Մասնագիտական կրթության ոլորտում նախատեսվում է մշակել և կիրարկել Եվրամիության չափանիշներին և պահանջներին համապատասխան որակի հավաստման ընթացակարգեր ու գործընթացներ, աջակցել բուհերի որակի ապահովման ներքին համակարգերի ներդրմանը, Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համապատասխան արդիականացնել մանկավարժական կրթությունը և բարձրացնել ուսուցչական կադրերի պատրաստման որակը: Գործողությունների հիմնական մասն ընթանալու է Հայկական պետական մանկավարժական համալսարանի և միջազգային ճանաչում ունեցող եվրոպական բուհի միջև՝ երկարաժամկետ, լայնամասշտաբ համագործակցության միջոցով:

Այլ ծրագրեր

2011 թվականին այլ ծրագրերի (Արտադպրոցական դաստիարակություն, Լրացուցիչ կրթություն, կրթական այլ ընթացիկ ծրագրեր) գծով ծախսերը 2010 թվականի նկատմամբ կաճեն 69.6 %-ով և կկազմեն 5974.3 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 5.5 %-ը, 2012 թվականին ծախսերը 2011 թվականի նկատմամբ կնվազեն 34.6 %-ով՝ կազմելով 3909.2 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 3.7 %-ը (նվազումը պայմանավորված է կրթական այլ ընթացիկ ծրագրերի գծով միջոցների նվազեցմամբ), իսկ 2013 թվականին ծախսերը 2012 թվականի նկատմամբ կաճեն 23.9 %-ով՝ կազմելով 4841.8 մլն դրամ, կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 4.3 %-ը:

Արտադպրոցական հաստատությունների մանկավարժական և վարչական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձերի բարձրացումը 2011 թվականին նախատեսվել է 10 %-ի, իսկ 2013 թվականին՝ 7.3 %-ի չափով: Ուսումնասօժանողակ և տնտեսական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը 2013 թվականին բարձրացվել են 10 տոկոսով, ընդ որում՝ աշխատավարձերի բարձրացումը նախատեսվել է՝ հաշվի առնելով նաև 2011 և 2013 թվականներին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի համապատասխանաբար՝ 32.5 և 35.0 հազ. դրամի չափով սահմանումը:

2011-2013 թվականներին միջոցներ են նախատեսվել երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով երեխաների ուսուցման նպատակով՝ 2011-2012 թվականներին 323.7 մլն դրամի, 2013 թվականին՝ 345.3 մլն դրամի չափով:

Կշարունակվեն աշխատանքները Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման գծով՝ յուրաքանչյուր տարի 50.0 մլն դրամի, ինչպես նաև մարզական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով՝ յուրաքանչյուր տարի 250.0 մլն դրամի շրջանակներում:

Լրացուցիչ կրթական հաստատությունների գծով ծախսերի հաշվարկում հաշվի է առնվել ինչպես աշխատավարձերի բարձրացումը, այնպես էլ վերապատրաստման, վերաորակավորման ինստիտուտներում և մասնագիտական դասընթացներում վերապատրաստվողների թվաքանակի ավելացումը: Աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը 2013 թվականին բարձրացվել են 10 տոկոսով, ընդ որում՝ աշխատավարձերի բարձրացումը նախատեսվել է՝ հաշվի առնելով նաև 2011 և 2013 թվականներին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի համապատասխանաբար՝ 32.5 և 35.0 հազ. դրամի չափով սահմանումը: Միաժամանակ, դասախոսական 1 ժամի արժեքը 2013 թվականին հաշվարկվել է 2575 դրամի չափով՝ 2011-2012 թվականների 2400 դրամի դիմաց:

7.2 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7.2.1 Գիտության ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները 1.1.Գիտության ոլորտի ընդհանուր նկարագիրը

Հայաստանի Հանրապետությունում գիտությունը՝ երկրի անվտանգության ապահովման, տնտեսության զարգացման, կրթության, մշակույթի և հասարակության առաջընթացի կարևորագույն գործոն է: Չնայած գիտական կադրերի որոշ կորստի, անկախության տարիներին բավարար չափով պահպանվել է Հայաստանի Հանրապետության գիտական ներուժը, ներդրվել է պետական բյուջեից գիտական ծրագրերի և թեմաների մրցութային ու ծրագրային ֆինանսավորման համակարգը, ստեղծվել են ոչ պետական գիտական կազմակերպություններ և գիտական հիմնադրամներ, որոշ չափով ընդլայնվել է գիտական կազմակերպությունների ինքնուրույնությունը և ինքնավարությունը, ինչպես նաև միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցությունը: Որոշակիորեն ձևավորվել է օրենսդրական և նորմատիվ իրավական դաշտը:

Գիտության զարգացման արդի համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ երիտասարդ կադրերի պատրաստման գործընթացը հետզհետե կենտրոնանում է գիտական խոշոր կենտրոնների շուրջը, որոնցում առկա է գիտատեխնիկական մեծ ներուժ, գործում են ժամանակակից գիտության, տեխնիկայի առաջավոր դիրքերում և ներառում են բնագավառի վերջին նվաճումները: Երևանի Ֆիզիկայի ինստիտուտը այդպիսի գիտական կենտրոններից է, որտեղ ձևավորվել է հարուստ ավանդույթներ և մեծ ներուժ ունեցող տարրական մասնիկների, միջուկային ֆիզիկայի, տիեզերական ճառագայթների ֆիզիկայի, ճառագայթային տեխնոլոգիաների բազմաթիվ շնորհաշատ մասնագետներ, որոնք պատրաստ են իրենց գիտելիքներն ու փորձը հաղորդելու երիտասարդ կադրերին, ուսանողներին: Ինստիտուտի ֆիզիկոսներից շատերը լայնորեն ներգրավված են աշխարհի խոշոր արագացուցիչների և կայանների վրա կատարվող փորձարարական և տեսական հետազոտական աշխատանքներում: Ինստիտուտը մասնակցում է Եվրոպայի և Ամերիկայի բարձր էներգիաների ֆիզիկայի խոշորագույն կենտրոններում կատարվող և ծրագրվող գիտափորձերին: Շատ կենտրոնների հետ ինստիտուտը կնքել է գիտական համագործակցության պայմանագրեր: ԵրՖԻ-ի արտասահմանյան հիմնական գործընկերներն են Գերմանիայում գտնվող Գերմանական էլեկտրոնային Մինքրոտրոնը (DESY), Ամերիկայում գտվող Ջեֆերսոնի Լաբորատորիան (Jefferson Lab), Եվրոպական Միջուկային Հետազոտությունների կենտրոնը (CERN) և բազմաթիվ այլ խոշոր գիտական կենտրոններ, որոնց թիվն անցնում է 40-ից:

Ինստիտուտում լայն թափով ընթանում են միջուկային բժշկության կենտրոնի ստեղծման աշխատանքները, որոնք ներառում են բժշկական նպատակների համար ռադիոիզոտոպների լայն տեսականու արտադրության կազմակերպման գործընթացները:

Ա.Բ. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտը 2011-2013թթ.-ին կշարունակի գիտական գործունեությունը՝ ուղղված տարրական մասնիկների, միջուկային և տիեզերական

ճառագայթների ֆիզիկայի բնագավառում տեսական և փորձարարական հետազոտություններին, արագացուցչային և կիրառական ֆիզիկայի խնդիրների զարգացմանը, որոնք հանդիսանում են ինստիտուտի հիմնական ուսումնասիրության ասպարեզները:

Բազային ֆինանսավորման շրջանակներում նախատեսվում է 2011-2013թթ.-ի ՄԺԾԾ-ում ներառել տարրական մասնիկների և ատոմային միջուկների հիմնարար հատկությունների հետազոտությունների և ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծրագրերը:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գիտության մեջ ներգրավված է ավելի քան 7000 մարդ: ՀՀ պետական բյուջեից բազային ծրագրերով գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական ստորաբաժանումներում ֆինանսավորվում է 3.899 հաստիք (գիտական և վարչասպասարկող), պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաներով՝ 2345.5 հաստիք:

Աղյուսակ 7.5. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ

Հ/հ	<u>Ծառայությունների շրջանակի նկարագրություն</u>	<u>Շահառուների շրջանակի նկարագրություն</u>	<u>Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը</u>
1.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացում	Գիտական և գիտահետազոտական կազմակերպություններ, բարձրագույն ու հետբուհական կրթական հաստատություններ	Մրցութային կարգով ընտրված կազմակերպություններ, ամբողջությամբ
2.	Ենթակառուցվածքների՝ գիտական կազմակերպությունների, կենտրոնների, լաբորատորիաների ստեղծում, պահպանում և զարգացում	Գիտական և գիտահետազոտական կազմակերպություններ, բարձրագույն ու հետբուհական կրթական հաստատություններ	Մրցութային կարգով ընտրված կազմակերպություններ, ամբողջությամբ
3.	Հին ձեռագրերի և գիտակրթական, մշակութային այլ արժեքների պահպանում	Սատենադարան, ԵՊՀ, ՀՀ ԳԱԱ ցեղասպանության թանգարան-ինստիտուտ	Ամբողջությամբ
4.	Ասպիրանտական և դոկտորանտական հետազոտությունների և կրթության իրականացում	Հետբուհական կրթություն իրականացնող կազմակերպություններում սովորողներ	Մրցութային կարգով ընտրված դիմորդներ, ամբողջությամբ
5.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների իրականացում	Ֆիզիկական անձինք և հետազոտական խմբեր	Մրցութային կարգով ընտրված թեմաներ, ամբողջությամբ
6.	Գիտականներին հավելավճարի տրամադրում	Գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտնականներ	Ամբողջությամբ

1.2.Վերջին երկու տարիներին ոլորտի զարգացման միտումները

2007թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները և գիտության ոլորտի բարեփոխումների ծրագիրն ու ժամանակացույցը: Բարեփոխումների ծրագրի շրջանակներում 2007թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կառավարման ոլորտում գործող Գիտության պետական կոմիտեն, որի ձևավորման աշխատանքները հիմնականում ավարտվել են 2008թ. վերջին:

2005թ. գործողության մեջ մտած բազային ֆինանսավորումով 2009թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել է հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների՝ 85, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման՝ 86, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման 3 ծրագիր: 2009թ. բազային ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերում գիտական աշխատողների միջին ամսական աշխատավարձը կազմել է 55.0 հազ. դրամ: 2009թ-ից սկսած՝ շուրջ երկու անգամ ավելացել են բազային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում ոչ աշխատավարձային հողվածներով նախատեսված ֆինանսական ծավալները: Եթե 2008թ. աշխատավարձի ֆոնդին հատկացվել է ընդհանուրի 87%, ապա 2009թ. աշխատավարձի ֆոնդը կազմել է 75%: Տնտեսական ծախսերի ավելացման արդյունքում գիտական կազմակերպությունները հնարավորություն են ստացել բարելավել աշխատանքային պայմանները, մասնավորապես՝ ջեռուցումով ապահովել շենքերն ու շինությունները: Առավել ակնառու է Ա.Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտի բազային ֆինանսավորման ծավալները ըստ առանձին տարիների, որոնք աճման դրական միտում են ունեցել: 2005 թվականին այն կազմել է 133,2 մլն դրամ, իսկ 2009 թվականին՝ 256,0 մլն դրամ: <Տարրական մասնիկների և ատոմային միջուկների հիմնարար հատկությունների հետազոտություններ> և <Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում> ծրագրերի բազային ֆինանսավորման ծավալները համապատասխանաբար կազմել են՝ 2005թվականին 120,0 մլն դրամ և 13,2 մլն դրամ, իսկ 2009թվականին 231,0 մլն դրամ և 25,2 մլն դրամ: Ինստիտուտը ՀՀ պետական բյուջեից ստանում է բազային ֆինանսավորում երկու խոշորագույն փորձարարական բաժանմունքների՝ էլեկտրոնային օդակաձև արագացուցիչը և տիեզերական ճառագայթների հետազոտման <ԱՐԱԳԱԾ> և <ՆՈՐ-ԱՄԲԵՐ> կայանները սարքին վիճակում պահելու համար: Դա ստեղծեց լուրջ նախադրյալներ 1998-2005թթ. երկարատև կանգառից հետո արագացուցչի վերաթողարկման և գիտափորձերի հաջող կատարման համար: Վերջին տարիներին շարունակական ձևով կատարվել են արագացուցչի արդիականացման և նորացման լուրջ աշխատանքներ, հաջողությամբ փորձարկվել են արագացման նոր ռեժիմներ ֆիզիկական գիտափորձերի համար, ինչը թույլ է տվել ինստիտուտին պահպանել արագացուցչային առաջատար կենտրոնի իր վարկանիշը և զարգացնել գիտատեխնիկական համագործակցությունները աշխարհի խոշոր միջազգային կենտրոնների հետ: Ինստիտուտում շարունակվել են աշխատանքները նոր նախագծերի վրա՝ նվիրված Երևանի ֆիզիկայի ինստիտուտում գործող էլեկտրոնային գծային և միկրոտրոնային արագացուցիչների հիման վրա նոր տեխնոլոգիաների մշակմանը և զարգացմանը: Նոր տեխնոլոգիաների խնդիրների զարգացումը, որոնք միշտ իրենց հաստատուն տեղն են գրավել նրա աշխատանքային ծրագրերում, կարևոր դեր կարող են կատարել ինստիտուտի զարգացման հեռանկարային պլանները մշակելիս:

2008թ. պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում են ստացել 711 գիտական թեմա՝ 3 տարի ժամկետով: Նախատեսվում է 2011թ-ից սկսած պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը վերածել դրամաշնորհայինի և տարեկան ֆինանսավորել ավելի քան 100

գիտական թեմա՝ սահմանելով թեմայի կատարման ժամկետը մինչև 2 տարի, ավելացնելով թեմայի կատարման ֆինանսական ծավալները տարեկան մինչև 5000.0 հազ. դրամ /ներկայումս այն կազմում է 2110 հազ. դրամ/ և սահմանափակելով կատարողների կազմը մինչև 5 հոգի:

Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը դրամաշնորհայինի վերածելու, ինչպես նաև ընդհանրապես գիտության ոլորտում ծրագրերի ֆինանսավորման իրական մրցութային պայմանների ապահովման հիմնական նախապայմանը գիտական անկախ փորձագիտական համակարգի ձևավորումն ու ներդրումն է: Այդ համակարգի ձևավորման աշխատանքները ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն հիմնականում ավարտել է 2009թ.: Ներկայումս անկախ փորձագիտական համակարգում ընդգրկված են Հայաստանի Հանրապետությունից և օտարերկրյա պետություններից շուրջ 1200 գիտնական: 2009թ. մշակվել և ՀՀ կառավարության քննարկման են ներկայացվել ինչպես գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ), նպատակային-ծրագրային ֆինանսավորման նոր կարգերը, այնպես էլ գիտական փորձաքննության և գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ձևավորման, գիտական ծրագրերի ու թեմաների հայտերի երաշխավորման և հաշվետվությունների ընդունման հանձնաժողովի ձևավորման ու աշխատանքի կազմակերպման կարգերը:

Սկսած 2009թ ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվել են տարեկան 6-ական պետական նպատակային ծրագրեր: Դրանց շարքում առանձնանում է տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում իրականացվող նոր նախաձեռնությունը՝ հայկական ազգային ԳՐԻԴ միջավայրի ստեղծման պետական-նպատակային ծրագիրը (ֆինանսավորման ծավալները՝ տարեկան 25 մլն դրամ): Ծրագիրը սկսվել է 2009թ և նախատեսված է միավորելու գիտական կազմակերպություններում և բուհերում առկա բարձր արտադրողականությամբ հաշվողական, ծրագրային, ցանցային և մասնագիտական ռեսուրսները ազգային ԳՐԻԴ ենթակառուցվածքի ստեղծման համար: ԳՐԻԴ-ի մեջ ընդգրկվելու են ոչ միայն գիտական կազմակերպությունները և բուհերը, այլև ազգային սեյսմիկ ու օդերևութաբանական ծառայությունների կազմակերպությունները:

Սկսած 2009թ.՝ էականորեն ընդլայնվել է տարածաշրջանային ծրագրերի մասնակցության աստիճանը: Մասնավորապես՝ ֆինանսավորվել է ՀՀ-ի մասնակցությունը Սևծովյան միջկապի (Bleak Sea Interconnection, BSI) նախագծին, որը իրականացվում է Եվրոպական 7-րդ շրջանակային ծրագրի (FP7) կողմից և ուղղված է հարավկովկասյան երկրների ազգային գիտահետազոտական ու կրթական ցանցերի (NREN) միջև գերարագ մայրուղային ցանց և [համաեվրոպական հետազոտական ու կրթական GEANT2](#) ցանցի հետ կապ ստեղծելուն: Սկսած 2009թ.՝ այդ նպատակի համար հատկացվել է տարեկան 50000.0 հազ. դրամ:

2008թ. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսական աջակցություն են ստացել 17 գիտաժողով՝ 8500.0 հազ. դրամ և 14 գիտական գործուղում՝ 5275.6 հազ. դրամ ֆինանսավորմամբ: 2009թ. ֆինանսավորվել են 23 գիտաժողով (20041.8 հազ. դրամ), երիտասարդ

գիտնականների 4 ամառային դպրոց (6630.0 հազ. դրամ) և 41 գիտական գործուղում (20064.2 հազ. դրամ), այդ թվում՝ 11 գործման են մեկնել երիտասարդ գիտնականներ:

2009թ. ներդրվել է գիտական ծրագրերի և թեմաների համաֆինանսավորման սկզբունքը, երբ առաջնահերթությունը տրվում է տնտեսության մասնավոր հատվածի, օտարերկրյա պետությունների կամ տարբեր միջազգային կազմակերպությունների հետ համատեղ կատարվող ծրագրերին: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող ծրագրերին նպաստելը ՀՀ գիտության պետական կոմիտեի որդեգրած քաղաքականության կարևորագույն մասն է. այն ավելացնում է գիտությանն ուղղված ֆինանսական միջոցների ծավալները և, հետևաբար, էապես բարձրացնում է գիտական արդյունքների քանակն ու որակը: Բացի այդ, օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ իրականացվող ծրագրերը նպաստում են ՀՀ գիտնականների ինտեգրմանը միջազգային գիտական և գիտակրթական տարածք, ստեղծում բարենպաստ պայմաններ դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու գործում, ինչի արդյունքում զգալիորեն ավելանում են միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանն ուղղված ֆինանսական միջոցները:

2009թ. կազմակերպվել է համաֆինանսավորման սկզբունքով ֆինանսավորվող երկամյա ծրագրերի երկու մրցույթ: Առաջինը Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (CNRS) հետ համատեղ մրցույթն էր: Երկրորդը՝ երիտասարդ գիտնականների հետազոտությունների աջակցության «պիլոտային» ծրագիրն էր, որը իրականացվում է Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի և ԱՄՆ-ի քաղաքացիական հետազոտությունների հիմնադրամի հետ միասին: Վերոնշյալ երկու մրցույթների շրջանակներում ֆինանսավորվող ծրագրերի ընտրությունը կատարվել է մրցույթային հիմունքներով՝ անկախ փորձաքննության հիման վրա:

2008թ-ից իրականացվում է ՀՀ-ում գիտական և գիտատեխնիկական գործունեության մեջ ընդգրկված կազմակերպությունների անձնագրավորումը՝ ոլորտում ներգրավված մարդկային և նյութական ռեսուրսների, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության «արտադրանքի» տվյալների շտեմարան ստեղծելու նպատակով: Նշված շտեմարանի ստեղծման աշխատանքները ավարտվել են 2009թ-ին: Տվյալների այդպիսի շտեմարանը պարբերաբար լրամշակվող էլեկտրոնային բազա է, որը հնարավորություն է տալիս համապարփակ տեղեկատվություն ունենալու ոլորտի օբյեկտիվ իրավիճակի մասին, իրականացնելու գիտական կազմակերպությունների գործունեության մոնիթորինգ, ռեյտինգավորելու գիտական կազմակերպությունները՝ ըստ գործունեության արդյունավետության և այլն: Ներկայումս իրականացվում է գիտական կազմակերպությունների հերթական անձնագրավորումը:

2009թ. ստեղծվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության մեջ ներգրավված հայազգի մասնագետների տվյալների շտեմարան: Տվյալների բազան պարունակում է տեղեկություններ (գործունեության բնագավառ, հրապարակումներ, հեղինակային իրավունքներ, տեխնիկական մշակումներ և այլն) ավելի քան 19000 հայազգի գիտնականի մասին և ընդգրկում է

1950թ-ից հետո ընկած ժամանակաշրջանը: Բացի այդ, ստեղծվել է օտարերկրյա պետություններում աշխատող հայազգի գիտնականների գործունեության վերաբերյալ տվյալների շտեմարան, որը կարևորագույն պայման է ՀՀ կառավարության կողմից 2009թ. ապրիլի 30-ին հաստատված հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագրի արդյունավետ իրականացման համար:

2008-2009թթ. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ) և պետական նպատակային-ծրագրային հետազոտությունների ֆինանսավորումների ծավալները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 7.6. Ոլորտի ֆինանսավորման ծավալները 2008-2009թթ. ընթացքում

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ֆինանսական ծավալները (հազ. դրամ)	
		2008թ.	2009թ.
1.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ	1834465.5	2495529.2
2.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում	1507332.5	2390230.1
3.	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն	164772.0	241600.0
4.	Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	1455866.0	1546866.0
5.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ	943300.0	1071802.0
6.	Գիտական կադրերի պատրաստում	100923.4	96841.0
7.	Նոր մրցույթով ծրագրեր	286307.0	
8.	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	529930.0	529930.0

1.3. Հիմնական խնդիրները

Գիտության ոլորտում միասնական քաղաքականության մշակման և արդյունավետ իրականացման գործում առաջնային լուծում պահանջող հիմնական խնդիրներն են՝

- գիտության կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման նպատակով գիտության ոլորտի պետական կառավարման միասնական մարմնին՝ համապատասխան լիազորությունների տրամադրման հարցը,
- գիտության զարգացման առաջիկա 10-15 տարիների ռազմավարական ծրագրի ընդունման հարցը,
- գիտության ոլորտում ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի արդիակա-նացումը,
- գիտական ներուժի նպատակային վերարտադրության ապահովումը,
- գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացման, ծրագրային ֆինանսա-վորման ձևերի հստակեցման, ծրագրերի ընտրությունն իրապես մրցույթով ապահովելը,
- գիտության և տեխնիկական առաջընթացին մասնավոր կապիտալի մասնակցության ապահովումը,
- գիտական արդյունքի ապրանքայնացման և այն արտաքին ու ներքին շուկաներ դուրսբերման համար ռիսկային կապիտալի ստեղծումը,

• գիտատեխնիկական գործունեության ասպարեզում միջազգային համագործակցության ընդլայնումը:

7.2.2 Գիտության ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ Ժամանակահատվածում

2.1.Նպատակները

Գիտության ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակը գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումն է: Այդ գործընթացում վճռորոշ դերակատարություն պետք է ունենա պետությունը:

Բարեփոխումները պետք է ընթանան մի կողմից գիտական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման, ոլորտի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների արդիականացման ու կատարելագործման, մյուս կողմից՝ գիտական կազմակերպությունների աշխատանքների նորովի կազմակերպման, գիտական կադրերի նպատակային պատրաստման և տեղաբաշխման, նրանց աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղություններով:

2.2.Գերակայությունները

Աղյուսակ 7.7.

Հ/հ	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2011թ.	2012թ.	2013թ.	
1.	Գիտության ոլորտի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում	Գիտության ոլորտի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում	Գիտության ոլորտի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում	Առաջնահերթ քայլերից է գիտության ոլորտի կառավարման համակարգի արդիականացումը, պետական պատվերի ձևավորման ու տեղադրման, գիտական հետազոտությունների կազմակերպման, գիտական արդյունքի ստացման ու ներդրման մեխանիզմների հստակեցումը:
2.	Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացման հիմնական մեխանիզմը գիտական ծրագրերի և թեմաների ընտրության և ֆինանսավորման իրական մրցույթային պայմանների՝ ապահովումն է: Պահպանելով գիտության ֆինանսավորման բազմաձևությունը՝ այն պետք է իրականացվի բացառապես մրցույթային կարգով՝ անկախ փորձագիտական համակարգի միջոցով, ծրագրային ֆինանսավորման սկզբունքով և հասցեագրված: Բազային ֆինանսավորմամբ իրականացվող ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերում պետք է ընդգրկվեն նաև հիմնարար հետազոտությունների ծրագրերը: Այդպիսի միավորումը հնարավորություն կտա ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրին գիտական բովանդակություն ունենալու, երբ կազմակերպության նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքի պահպանումը, արդիականացումն ու զարգացումը պայմանավորված են լինելու բացառապես իրականացվող գիտական հետազոտություններով և մշակումներով: Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերը պետք է մշակվեն համապատասխան գերատեսչությունների, ՀՀ ԳԱԱ-ի հետ միասին՝ ըստ գիտական կազմակերպության պատկանելության: Կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերը պետք է ուղղված լինեն տնտեսության մեջ գործածելի արդյունքների ձեռքբերմանը և ընտրվեն մրցույթային եղանակով: Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը վերածվելու է դրամաշնորհայինի և նախատեսված է ֆինանսավորելու այն թեմաները, որոնք բխում են գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղություններից, առանձնանում են խնդիրների կարևորությամբ ու բովանդակային օրիգինալությամբ: Ընդ որում, պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը հատկացվելու է բացառապես մրցույթային կարգով՝ անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա: Դրամաշնորհային

		<p>համակարգի ներդրումը կնպաստի պայմանագրային թեմաների կառավարման մոդելը նոր, ավելի արդյունավետ հիմքերի վրա դնելուն, այն է՝ հետազոտությունների մրցունակության ապահովում, մեկ թեմայի մեջ ընգրկված հաստիքների քանակի օպտիմալացում, տնտեսական և այլ ծախսերի ավելացում, հետազոտությունների նյութատեխնիկական բազայի և այլ պայմանների բարելավում: Պետական նպատակային ծրագրերը պետք է ուղղված լինեն առավելապես կիրառական բնույթի խնդիրների լուծմանը՝ համապետական նշանակության ռազմավարական ծրագրերի շրջանակներում: ՀՀ պետական բյուջեից գիտության ոլորտի ֆինանսական հատկացումների ներքին կառուցվածքը պետք է լինի այնպիսին, որ ապագայում բազային ֆինանսավորման համար հատկացվի, միջինում, ընդհանուրի 50%, նպատակային ֆինանսավորմանը՝ 35% և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմանը՝ 15%: Ծրագրային ֆինանսավորման մեջ անհրաժեշտ է ապահովել, միջինում, 55% աշխատավարձի մասնաբաժին, իսկ տնտեսական և այլ ծախսերի համար՝ 45%: 2011-2013թթ. նախատեսվում է իրականացնել պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ տարեկան ավելի քան 100-ական գիտական թեմաներ՝ ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների շրջանակներում: ՀՀ գիտության զարգացման գերակա ուղղությունները վերասահմանվելու են 2010թ.՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ի N 1558-Ն «Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման սկզբունքները և չափանիշները հաստատելու մասին» որոշումը:</p>
<p>3.</p>	<p>Գիտության ոլորտում ինստիտուցիոնալ (կառուցվածքային) բարեփոխումների իրականացում</p>	<p>Գիտության ոլորտում ինստիտուցիոնալ (կառուցվածքային) բարեփոխումների իրականացման նպատակով պետք է միավորել միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունները անկախ գերատեսչական պատկանելությունից՝ ներդնելով գիտության կառավարման ժամանակակից մեթոդներ: Անհրաժեշտ է գիտական կազմակերպություններում հստակեցնել տնօրենի և գիտական խորհրդի իրավասություններն ու պարտականությունները, դրանցում մի կողմից արմատավորելով ժամանակակից մենեջմենթ, մյուս կողմից վարչական ազդեցությունից հանելով գիտական քննարկումների ու որոշումների ընդունման գործառնությունները՝ գիտական ղեկավարումն իրականացնելով տվյալ ուղղության գիտական ղեկավարի միջոցով: Գիտական կենտրոնների ստեղծման համար հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ի N 1555-Ն «Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և կարգը հաստատելու մասին» որոշումը: 2010թ. կավարտվի 2009թ. սկսած 4 գիտական կենտրոնների ձևավորումը, ընդ որում՝ դրանցից 2-ը կստեղծվեն 2010թ., իսկ մյուս 2-ը՝ 2011թ.:</p> <p>ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի N 878-Ն «ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագրը հաստատելու մասին» որոշումով նախատեսվում է 2011թ. իրականացնել հետազոտական համալսարանի մեկ պիլոտային, ՀՀ ԳԱԱ-ի գիտական կազմակերպությունների զարգացման երկու, գիտական կազմակերպությունների և բուհերի ինտեգրման ու համագործակցության հինգ ծրագրեր: 2011թ. անհրաժեշտ է իրականացնել թվով չորս գիտական կենտրոնների ձևավորման և զարգացման երկամյա ծրագրերի կատարման մոնիթորինգ, իսկ 2012թ.՝ նվաճ ծրագրերի գործունեության արդյունքների գնահատումը:</p>
<p>4.</p>	<p>Գիտական ներուժի վերարտադրության և երիտասարդացման ապահովում</p>	<p>Գիտության ոլորտի բարեփոխումների իրականացման և ՀՀ-ում գիտության զարգացումն ապահովելու համար սկզբունքային նշանակություն ունի գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության, գիտության երիտասարդացման հարցը: Գիտության ոլորտում ընդգրկված աշխատակիցների տարիքային կազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ գիտության թեկնածուի գիտական աստիճան ունեցողների միջին տարիքը կազմում է 52, իսկ դոկտորներիը՝ 63 տարեկան, իսկ 1996թ. համեմատ՝ էականորեն նվազել է 30-50 տարեկան գիտաշխատողների թվաքանակը: Գիտության երիտասարդացման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք ընդգրկում են՝</p> <p>ա) ասպիրանտական կրթության բարեփոխումների իրականացում՝ ձևի, բովանդակության հստակեցումով և արդյունավետության գնահատման ժամանակակից մեխանիզմների կիրառումով,</p> <p>բ) ասպիրանտական կրթաթոշակի բարձրացում մինչև նվազագույն աշխատավարձ (2012թ.) և գիտական ղեկավարներին նախատեսվող գումարների ավելացում՝ տարեկան 120.0, 150.0 և 200.0 հազ. դրամ՝ 2011, 2012 և 2013թթ.:</p>

		<p>գ) գիտական աստիճանաշնորհման համակարգի բարեփոխումների իրականացում՝ նպատակ ունենալով ձևավորել ժամանակակից գիտության պահանջներին համապատասխան և օտարերկրյա պետություններում գործող համակարգերի հետ համադրելի գիտական աստիճանաշնորհման համակարգ,</p> <p>դ) երիտասարդ գիտնականներին (մինչև 35 տարեկան գիտության թեկնածուների համար և մինչև 40 տարեկան գիտության դոկտորների համար) հատկացվող հավելավճարի կրկնապատկում 2013թ.,</p> <p>ե) երիտասարդ գիտնականների (մինչև 35 տարեկան) համար նախատեսված դրամաշնորհային մրցույթների կազմակերպում՝ 15 մրցույթ 2011թ., 20 մրցույթ՝ 2012թ. և 25 մրցույթ՝ 2013թ.,</p> <p>զ) բնակարանային շինարարության նպատակով հատուկ հիպոտեկային վարկերի տրամադրման քաղաքականության իրականացում:</p>
--	--	---

7.2.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Գիտության ոլորտի պետական կառավարման միասնական համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է գիտության ոլորտի կառավարման բոլոր մակարդակներում իրականացնել գործառույթների ճշգրտում ու հստակեցում, այնուհետև այդ գործառույթները վերապահել համապատասխան կառավարման մարմիններին և կազմակերպություններին:

«Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի բարեփոխումների հայցակարգային դրույթները ենթադրում են ավելացնել ՀՀ պետական բյուջեից գիտությանն ուղղված միջոցները: ՀՀ պետական բյուջեից գիտությանը հատկացող ֆինանսական ծավալների ավելացման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ժամանակակից տնտեսության ու հասարակության զարգացման գործում գիտության առանցքային դերով, այնպես էլ ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու ու դրա առաջընթաց զարգացման համար անհրաժեշտ բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ու արդյունավետ գործունեության համար համապատասխան գիտատեխնիկական միջավայրի անհրաժեշտությամբ: Բացի այդ, գիտության ֆինանսավորման ավելացումը (ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորի աղբյուրներից) հնարավորություն կընձեռնի զգալիորեն ավելացնել կիրառական, առևտրայնացմանն ուղղված հետազոտությունների մասնաբաժինը, կնպաստի տնտեսության մեջ գիտական արդյունքների ներդրմանը, ինովացիոն տեխնոլոգիաների վրա հիմնված փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը և համաշխարհային շուկայում սեփական տեղի ձեռքբերմանը: Գլոբալիզացիայի ներկա պայմաններում միայն գիտատար արդյունքը կարող է մրցունակ լինել:

Համաձայն “Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին” ՀՀ օրենքի նախատեսվում է գիտությանն ուղղված միջոցների ծավալները ավելացնել պետական բյուջեի եկամտային

մասի աճին համամասնորեն ավելացող գումարի չափով (2011թ. այն կազմելու է 9432492.7 հազ. դրամ, 2012թ. 9984679.6 հազ. և 2013թ. 10911996.5 հազ. դրամ):

2011-2013թթ. շարունակվելու են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ) և պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորումները: Գիտության ոլորտի ֆինանսավորումը իրականացվելու է ծրագրային սկզբունքով և բացառապես մրցութային կարգով՝ գիտական ծրագրերով և թեմաներով: Ընդ որում, գիտական գործունեության բազային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում կմտցվի որոշակի հստակեցում: Այն է՝ գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերում միավորել հիմնարար հետազոտությունների ծրագրերը: Այդպիսի միավորումը հնարավորություն կտա ապահովելու.

- գիտական կազմակերպության նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքի արդիականացումը, պայմանավորելու իրականացվող գիտական հետազոտությունների և մշակումների զարգացումը,

- գիտական կազմակերպությունում բացառելու իրականացվող ծրագրերում և թեմաներում գիտական թեմատիկաների կրկնությունները,

- բարձրացնելու գիտության ոլորտին հատկացվող պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

Հիմնարար հետազոտությունների ծրագրերի ընտրությունը իրականացվելու է ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ: Կարևորագույն նշանակության ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերը ուղղված են լինելու տնտեսության մեջ օգտագործվելիք գիտելիքների ձեռքբերմանը, իսկ դրանց նախագծերի ընտրությունը կատարվելու է անկախ փորձաքննության հիման վրա: Ինչ վերաբերում է պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմանը, ապա, 2011թ. սկսած, այն վերածվելու է դրամաշնորհայինի, և թեմաների ընտրությունը կատարվելու է բացառապես մրցութային կարգով՝ անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա:

2011-2013թթ. շարունակվելու է Երևանի ֆիզիկայի ինստիտուտին հիմնարար և կարևորագույն նշանակության կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, միջազգային գիտական համագործակցության իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից աջակցությունը:

Նպատային-ծրագրային ֆինանսավորումը ուղղվելու է լինելու գերատեսչությունների կողմից մշակված հիմնախնդիրների լուծմանը, իսկ ՀՀ կառավարություն ներկայացվելիք հիմնախնդիրների ցանկի ընտրությունը իրականացվելու է համապատասխան միջգերատեսչական հանձնաժողովի կողմից: ՀՀ կառավարության կողմից հաստատված հիմնախնդիրների լուծմանն ուղղված նպատակային ծրագրերի նախագծերի ընտրությունն իրականացվելու է բացառապես մրցութային կարգով՝ ըստ «Գնումներ մասին ՀՀ օրենքի»:

Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում նախատեսվում է 2011-2013թթ. իրականացնել յուրաքանչյուր տարում ավելի քան 100 գիտական թեմայի ֆինանսավորում: Յուրաքանչյուր թեմայի իրականացման ժամկետը կազմելու է մինչև 2 տարի, հետևաբար՝ 2012թ-ից հնարավոր կլինի տարեկան ֆինանսավորել առնվազն, 200 գիտական թեմա: Յուրաքանչյուր թեմայի կատարողների կազմը սահմանվելու է մինչև 5, իսկ իրականացման գումարը՝ տարեկան մինչև 5000.0 հազ. դրամ: Նախատեսվում է շարունակել գիտության երիտասարդացմանն ուղղված քաղաքականությունը:

7.2.4 Ոլորտի գծով ֆինանսական պահանջների ամփոփում 2010-2012թթ.

Ժամանակահատվածի համար

Աղյուսակ 7.8.. Ոլորտի (համակարգի) ծրագրերի գծով 2011-2013թթ. ծախսերի կանխատեսում (ամփոփ)

(հազար դրամներով)

	2010թ.	փոփոխությունը %-ով	2011թ.	փոփոխությունը %-ով	2012թ.	փոփոխությունը %-ով	2013թ.
Գիտություն,	8395609.3	12.4	9432492.7	5.9	9984679.6	9.3	10911996.5
այդ թվում՝							
1 Պայմանագրային (թեմատիկ)	1546866.0	-45.2	848433.0	10.0	933276.3	10.0	1026604.0
տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	18.4		9.0		9.3		9.4
2 Բազային	5245182.7	29.8	6808461.2	0.6	6846614.3	9.0	7460124.2
տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	62.5		72.2		68.6		68.4
3 Նպատակային-ծրագրային	1073630.6	16.0	1245668.5	30.2	1621866.0	10.0	1784053.0
տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	12.8		13.2		16.2		16.3
4 Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	529930.0	0.0	529930.0	10.0	582923.0	10.0	641215.3
տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	6.3		5.6		5.8		5.9

ԳԼՈՒԽ 8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի գործունեության առաջիկա տարիների ռազմավարությունն ուղղված է լինելու ապահովելու քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը, զարգացնել բնակչության համար պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունը և իրական մատչելիությունը: Իրականացվող քաղաքականության հիմնական նպատակներն են՝ հիվանդությունների վաղ հայտնաբերումը, կանխարգելումը, ախտորոշումը և բուժումը, բուժօգնության մատչելիության բարձրացումը և որակի ապահովումը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորելով մարդկային կապիտալում ունեցած ներդրումների բնագավառում առողջապահության ոլորտի դերը, երկրի զարգացման հիմնական նպատակների շրջանակներում առանձնացնում է առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացման խնդիրները:

8.1 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8.1.1. Բնակչության առողջության առաջնային պահպանում

Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի վերջին տարիների դրական փորձը ցույց է տվել, որ առաջնային օղակի զարգացումը հնարավորություն է ընձեռել ապահովել բնակչության համար բուժօգնության մատչելիությունը և այդ հարցում սոցիալական արդարության ու հավասարության սկզբունքների պահպանումը: Վերջին տարիներին բավականին աշխատանք է տարվել նոր մեթոդաբանական մոտեցումների մշակման և առաջնային օղակի բարեփոխումների ուղղությամբ, սակայն հանրապետության տնտեսական և սոցիալական կյանքում տեղի ունեցած դրական տեղաշարժերը պարտավորեցնում են նորովի նայել հաջորդ տարիների ռազմավարությանը, կատարել անհրաժեշտ շտկումներ:

Հաշվի առնելով առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության մատչելիության ավելի բարձր մակարդակը և ազգաբնակչությանը տարածքային կտրվածքով հասանելիության ավելի մեծ աստիճան ապահովելու պահանջը՝ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում, որպես խնդիր է դիտարկվում առաջնային բուժօգնության ֆինանսավորմանն ուղղվող ծախսերի ավելացումը:

Հանրապետությունում առաջնային օղակի բարեփոխումները հիմնականում ուղղվել են ընտանեկան բժշկության ներդրման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, որպես կառուցվածքային առավել արդյունավետ ու նպատակահարմար մոդելի, ինչպես նաև բուժօգնության այդ մակարդակում, որպես խնդիր է դիտարկվում՝ բնակչության համար մատչելի, հասանելի և որակյալ առաջնային կանխարգելումը:

Վերջին տարիներին առողջապահության համակարգում ներդրվել է ընտանեկան բժշկության ինստիտուտը, որպես առողջության առաջնային պահպանման օղակի ամենաօպտիմալ մոդել և արդեն իսկ համակարգում աշխատում են շուրջ 918 ընտանեկան բժիշկներ և 1034 ընտանեկան բուժքույրեր: Նախատեսվում է, որ սույն թվականի դեկտեմբեր ամսից առողջապահության համակարգը կհամալրվի ևս 260 ընտանեկան բժիշկներով: Սակայն պետք է շարունակվի և ընդլայնվի ընտանեկան բժշկության համակարգի ներդրումն ու զարգացումը հանրապետության ողջ տարածքում: Ընտանեկան բժշկության խմբերը աստիճանաբար պետք է ստանան ինքնուրույն կարգավիճակ՝ հիմնված ըստ սպասարկվող (գրանցված) բնակչության թվի ֆինանսավորման, ռեսուրսների անկախ տնօրինման և բուժօգնության կազմակերպման գործում ինքնուրույն որոշումներ ընդունելու սկզբունքների վրա: Առաջնային օղակում ծառայած խնդիր է գյուղական վայրերում ցուցաբերվող բուժօգնության որակը և մատչելիությունը:

8.1.2. Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը.

Վերջին տարիներին հանրապետությունում կանխարգելման համալիր միջոցառումների իրականացման շնորհիվ որոշ վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարելավվել է: 2008 թվականին չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են դիֆթերիան, սուր պոլիոմիելիտը, մալարիան, կատաղությունը, խոլերան, ռիկետցիոզները (այդ թվում բժավոր տիֆ, Բրիլլի հիվանդություն) և այլն: Հայաստանը ի թիվս եվրոպական այլ երկրների, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից դեռևս 2002 թվականից հավաստագրվել է և շարունակում է մնալ որպես պոլիոմիելիտից ազատ գոտի: Մի շարք վարակիչ հիվանդություններով՝ մասնավորապես՝ համաճարակային պարոտիտով, լեպտոսպիրոզով, ընդհանուր առիթային խմբի վարակներով հիվանդացությունը 2008 թվականին 2007 թվականի համեմատ եղել է նույն մակարդակի վրա: Ներդրության խնդիր է դիտարկվում կայուն համաճարակային իրավիճակի ապահովումը, պատվաստումների ազգային օրացույցում ընդգրկված պատվաստումների ժամանակին և որակով իրականացումը:

Աշխարհում թռչնի գրիպի տարածման հետ կապված ՀՀ ԱՆ ՊՀՀՏ մասնագետները տարբեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ մշակել են իրականացվելիք երեք հիմնական ծրագրեր՝ «Թռչնի գրիպի նախապատրաստման ծրագիր», «Հայաստանի առողջապահության համակարգի ուժեղացում՝ թռչնի և մարդու գրիպին հակադդելու պատրաստվածությունը բարելավելու համար», «ՀՀ ԱՆ աշխատակազմի ՊՀՀ տեսչության վերահսկումն ու արձագանքումը թռչնագրիպին և պանդեմիկ գրիպին»:

Սեզոնային գրիպի և թռչնի գրիպի դեմ պայքարի և կանխարգելման նպատակով ձեռք է բերվել և պատվաստվել են բնակչության առավել ռիսկային խմբերը՝ 50 000 դեղաչափ գրիպի պատվաստանյութով:

Իրականացված կանխարգելիչ միջոցառումների, պատվաստումների և լայնածավալ քարոզչական աշխատանքների շնորհիվ 2009թ.-ին 2006թ.-ի համեմատությամբ գրիպի և սուր շնչառական վիրուսային հիվանդություններով հիվանդացածության մակարդակը նվազել է:

“Հայաստանի Հանրապետությունում տեղական մալարիայի վերացման 2006-2010թթ. նպատակային ծրագրի” համաձայն իրականացված համալիր կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների արդյունքում 2006-2008թթ. հանրապետությունում տեղական մալարիայի դեպքեր չեն արձանագրվել:


Խիստ կարևորելով բնակչության իրազեկումը և բժշկահիգիենիկ գիտելիքների բարձրացումը, իրականացվել են լայն քարոզչական աշխատանքներ զանգվածային լրատվամիջոցներով (ռադիո, հեռուստատեսություն, մամուլ և այլն) տարբեր վարակիչ հիվանդությունների (գրիպ, թոչնի գրիպ, կարմրուկ, աղիքային վարակիչ հիվանդություններ և այլն), համաճարակային իրավիճակի և բնակչության շրջանում կանխարգելիչ աշխատանքների, սննդային գործոնով պայմանավորված թունավորումների (բոտուլիզմ, սնկերով թունավորում) և աղիքային վարակիչ հիվանդությունների կանխարգելման հարցերի շուրջ:

8.1.3. Մոր և մանկան առողջության ապահովումը

Վերջին տարիների ընթացքում բժշկա-դեմոգրաֆիկ հիմնական ցուցանիշները հանրապետությունում բարելավվել են, մասնավորապես նկարագրվել է ծնելիության որոշակի աճ, իսկ մայրական և մանկական մահացության ցուցանիշները որոշակիորեն նվազել են:

1990 թվականի համեմատությամբ հանրապետությունում ծնելիությունը նվազել է մոտ 1.8 անգամ: 1990 թվականին Հայաստանում կենդանի ծնվածների թիվը կազմել է 79882 երեխա, իսկ 2009 թվականին՝ 44466, համապատասխանաբար ծնելիության ցուցանիշը 1000 բնակչի հաշվով նվազել է 22.5-ից մինչև 13.7-ի: Նույն ժամանակաշրջանում ընդհանուր մահացությունը աճել է՝ 1990թ. 1000 բնակչի հաշվով 6.2-ից 2008թ. հասնելով մինչև 8,5-ի, իսկ բնակչության բնական աճի ցուցանիշը նվազել է 4 անգամ՝ համապատասխանաբար 16.3-ից նվազելով մինչև 4.2-ի:

Գծանկար 8.1 Ընդամենը կենդանի ծնվածների թվաքանակը.



Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ այդ ֆոնի վրա սկսած 2002 թ. նկատվում է ծնելիության ցուցանիշի աճ (1000 բնակչի հաշվով ծնվածներ՝ 2001թ.-8,44, 2002թ.- 10.04, 2003թ. - 11.15, 2004թ.- 11,67, 2005թ.- 11.66, 2006թ.- 11.7, 2007թ.- 12.4, 2008թ.- 12.7):

Հայաստանի Հանրապետությունը բնակչության առողջական վիճակը բնութագրող ցուցանիշների առումով համանման եկամտի մակարդակ ունեցող երկրների համեմատ, հիմնականում գտնվում է ավելի լավ վիճակում: Այդուհանդերձ, զարգացած երկրների հետ համեմատականները վկայում են, որ շատ դեպքերում տարբերությունը նշանակալի է, մասնավորապես այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են մանկական և մայրական մահացությունը:

Աղյուսակ 8.1 Մանկական մահացությունը

Ցուցանիշ	Հայաստան		ԵՄ	ԱՊՀ
	2005	2008	2008	2008
Մանկական մահացություն (մինչև 1 տարեկան), 1000 կենդանի ծնվածի հաշվով	11.6	10.8	5.1	13.4

Ըստ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հաշվարկային ցուցանիշի, տարածաշրջանում մանկական մահացության միտումների վերլուծությունը փաստում է, որ Հայաստանին հաջողվել է վերջին 15 տարիների ընթացքում կրճատել մանկական մահացության ցուցանիշը 44 տոկոսով: Ըստ միջազգային փորձագիտական գնահատականների Հայաստանը ճանաչված է որպես ԱՊՀ այն եզակի երկրներից, որին շարունակաբար կհաջողվի իջեցնել երեխաների մահացությունը և հասնել 2015 թվականի համար սահմանված հազարամյակի նպատակներին, եթե ապահովվեն հետագա շարունակական զարգացումները այդ ոլորտում: Մակայն, հարկ է նշել, որ եթե 1990-1999 թվականների ժամանակահատվածում 0-5 տարեկան երեխաների մահացությունը կրճատվել է 44 տոկոսով, ապա 2000-2006 թվականների ընթացքում ընդամենը 3 տոկոսով, ինչը վկայում է, որ այդ նպատակի հասանելիությունը հնարավոր է միայն առկա ռեսուրսների կոնսուլիդացիայի և ոլորտում լրացուցիչ ներդրումների իրականացման պայմաններում:

Պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն, Հայաստանը բնորոշվում է երեխաների մահացության միջին մակարդակով (ըստ ԱՀԿ դասակարգման), որը 1990-2009թթ. ժամանակահատվածում դրսևորել է անկման ակնհայտ միտում: Այն զգալի բարենպաստ է ԱՊՀ շատ երկրների համեմատությամբ, սակայն որոշակիորեն գերազանցում է միջին եվրոպական մակարդակը: Առաջընթաց է արձանագրվել ինչպես մինչև հինգ տարեկան, այնպես էլ մինչև մեկ տարեկան երեխաների մահացության ցուցանիշների առումով:

Աղյուսակ 8.2 Մայրական մահացությունը


Ցուցանիշ	Հայաստան		ԵՄ	ԱՊՀ
	2005	2008	2008	2008
Մայրական մահացություն (եռամյա միջին), 100000 կենդանի ծնվածի հաշվով	18.7	36.4	5.0	29.3

Մայրական մահացության ցուցանիշը (դեպքերի թիվը՝ 100 000 կենդանի ծնունդի նկատմամբ) համարվում է մայրական առողջության վիճակն արտացոլող ինտեգրալ ցուցանիշ: Այսպիսով, 2005 թվականի համեմատությամբ 2008 թվականին ցուցանիշների համեմատությունը վկայում է, որ Հայաստանում մայրական մահացության ցուցանիշը ավելացել է, սակայն 1990 թվականի համեմատությամբ՝ նվազել է: Մայրական մահացության Հայաստանի ցուցանիշը զգալի գերազանցում է Եվրոպական և ԱՊՀ երկրների համանուն ցուցանիշի միջին մակարդակը:

Ներդրորտային առումով առկա խնդիր է դիտարկվում ֆինանսական ռեսուրսների ավելացումը մայրությանն ու մանկությանը ուղղված ծրագրերի իրականացմանը:


Ստորև ներկայացված է բնակչության բնական աճի միտումը, որը վերջին տարիների դրսևորել է դրական միտում.

Գծանկար 8.2 Բնակչության բնական աճը.



Կյանքի սպասվելիք տևողության փոփոխությունը ներկայացված է ստորև.

Գծանկար 8.3 Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից, (տարի)



8.1.4. Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը

Բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների դինամիկայի վերաբերյալ առավել ճշգրիտ պատկերացում կազմելու նպատակով վերլուծությունը կատարվել է հիմնվելով գրանցված հիվանդությունների բացարձակ թվերի վրա: Ստորև ներկայացվում է ընդհանուր հիվանդացության փոփոխությունը:

Աղյուսակ 8.3 Բնակչության ընդհանուր հիվանդացությունը բացարձակ թվերով

	2001 թ.	2002 թ.	2003 թ.	2004 թ.	2005 թ.	2006 թ.	2007 թ.	2008 թ.
Գրանցված հիվանդություններ ի թիվը								
ընդամենը	977 653	967 179	1 139 331	1 017 434	1 075 215	1208427	1235295	1322230
կյանքում առաջին անգամ գրանցված	531 208	519 843	604 952	590 621	637534	729101	735316	799724
որից՝								
Բնֆեկցիոն և մակաբուժական հիվանդություններ								
ընդամենը	81 884	75 216	77 027	72 037	73534	97261	82221	83104
կյանքում առաջին անգամ գրանցված	61 106	56 314	60 180	58 089	57786	79 182	67051	69343
այդ թվում Տուբերկուլոզ								
ընդամենը	5 786	6 050	6 068	6 165	6455	5673	3867	3489
կյանքում առաջին անգամ գրանցված	1 343	1 393	1 437	1 558	2006	1579	1518	1486
Զարոբակ նորագոյացություններ								
ընդամենը	23 451	24 384	25 580	26 522	26512	33771	36124	35920
կյանքում առաջին անգամ գրանցված	5 666	5 734	5 951	6 174	6396	7670	8092	8309
Շաքարային դիաբետ								
ընդամենը	38 842	40 630	39 831	38 850	40202	41601	45774	49170
կյանքում առաջին անգամ գրանցված	2 817	3 005	2 808	3 622	5522	5912	5319	5783
Հոգեկան խանգարումներ								
ընդամենը	53 908	51 942	46 198	52 827	48139	47841	48764	53538
կյանքում առաջին անգամ գրանցված	4 638	4 433	4 817	5 694	2501	6655	6080	6462
Հիպերտոնիկ հիվանդություն								
ընդամենը	31 353	31 442	31 507	31 613	48010	53191	59180	68177
կյանքում առաջին անգամ գրանցված	5 244	5 866	6 181	6 234	15938	16124	17681	20871
Մրտի իշեմիկ հիվանդություն								
ընդամենը	46 689	48 532	46 300	35 426	37663	40345	43683	48620
կյանքում առաջին անգամ գրանցված	7 206	8 052	8 581	8 278	11303	6330	13113	14017
Վնասվածքներ և թունավորումներ								
ընդամենը	60 888	61 143	60 966	46 357	50630	55578	55773	56809
կյանքում առաջին անգամ գրանցված	59 501	59 537	59 757	45 450	47287	51717	51943	55031

Բնչպես երևում է աղյուսակից, 2008թ. ավելացել են ընդհանուր գրանցված և կյանքում առաջին անգամ հայտնաբերված հիվանդությունների ընդհանուր դեպքերը:

Եթե 2004թ. հիմնականում նկատվում է ցուցանիշների նվազեցման տեղեկաց, ապա 2008թ. պատկերը բոլորովին այլ է, նկատվում է հիմնականում կյանքում առաջին անգամ գրանցված հիվանդությունների թվի աճ: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության անվճար դառնալու հետևանքով աճել է հիվանդների բժշկի դիմելու թիվը, ուստի և՛ հիվանդությունների ախտորոշումն ու գրանցումը:

Ստորև ներկայացված են տվյալներ սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով գրանցված հիվանդությունների և մահվան դեպքերի վերաբերյալ:

Աղյուսակ 8.4 Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիմնական հիվանդությունների հիվանդացության և մահացության մակարդակների համեմատականը

Հիվանդության անվանումը	Հիվանդության դեպքերը (բացարձակ թվեր)		2006թ. համեմատականը 1988թ.-ի նկատմամբ	Մահացության դեպքեր (բացարձակ թվեր)		2006թ. համեմատականը 1988թ.-ի նկատմամբ	2008 թ.	
	1988 թ	2006 թ		1988 թ	2006 թ		Հիվանդության դեպքերը	Մահացության դեպքեր
Տուբերկուլոզ	3 250	5673	1,7	63	175	2.8	3489	172
Չարորակ նորագոյացություններ	21 228	33771	1,6	3 013	5171	1,7	35920	5492
Շաքարային դիաբետ	29 575	41331	1,4	405	1169	2,9	48917	1308
Հիպերտոնիկ հիվանդություն	42 062	53191	1,3	1 869	300	0,2	68177	820
Սրտի իշեմիկ հիվանդություն	76 607	40345	0,5	6 405	8526	1,3	48620	8146

Ինչպես երևում է աղյուսակից, 2006 թվականին բոլոր ներկայացված հիվանդությունների գրանցված դեպքերի թվերը 15 տարվա ընթացքում աճել են ոչ այդքան բարձր տեմպերով, և կազմում են 1,1-1,9 անգամ, նկատվում է նույնիսկ նվազեցում սրտի իշեմիկ հիվանդությունների գծով, որը բացատրվում է ժամանակին դիագնոզմամբ՝ պետպատվերի շրջանակներում անվճար կորոնարոանգիոգրաֆիա հետազոտության լայն կիրառմամբ, և կատարվող սրտի վիրահատությունների թվի տարեցտարի աճի տեմպերով:

Մակայն նույնը չի կարելի ասել մահվան դեպքերի մասին, քանի որ դրանց աճը գերազանցում է գրանցված հիվանդությունների տեմպերը, հատկապես շաքարային դիաբետի դեպքում, բացառությամբ հիպերտոնիկ հիվանդությունից մահվան դեպքերի, որի ցածր ցուցանիշը (0,2) բացատրվում է նրանով, որ այս հիվանդության դեպքում մահը վրա է հասնում հիմնականում ելնելով հիվանդության բարդություններից (ինսուլտ և ինֆարկտ):

Ամփոփելով ներկայացված վերլուծական տվյալները, կարելի է գալ այն եզրակացության, որ՝ ՀՀ առողջապահության ոլորտի բուժկազմակերպությունները՝ հատկապես առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) օղակը, դեռևս ոչ պատշաճ մակարդակով են կազմակերպում առաջնային և երկրորդային պրոֆիլակտիկայի աշխատանքները, ակտիվ ձևով և ժամանակին չեն

հայտնաբերվում հիվանդությունները և իրականացվում բուժականխարգելիչ օգնությունը: Բնակչության շրջանում ցածր է մնում առողջության պահպանման վերաբերյալ բժշկահիգիենիկ գիտելիքները, հիվանդները ժամանակին չեն դիմում բժիշկներին, զբաղվում են ինքնաբուժությամբ կամ ընդհանրապես չեն բուժվում:

Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզով հիվանդացությունն աճել է մոտ 3 անգամ (ինտենսիվ ցուցանիշը 100հազ. բնակչին` 15,8-ից հասել է 48,1-ի), դիտվել է տուբերկուլոզով հիվանդացության կայուն աճի միտում, միջին տարեկան աճի տեմպը կազմել է 109,1%: Տուբերկուլոզով հիվանդացության կայունացման և նվազեցման նպատակով մշակվել և հաստատվել է “Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագիրը”:

8.1.5. Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված

անձանց բժշկական օգնության ապահովումը

Հիվանդանոցային բժշկական օգնության կազմակերպման հիմնական խնդիրներն են բնակչությանը ցուցաբերած բուժօգնության և սպասարկման որակի բարելավումը, մատչելիությունը, ոլորտի կառուցվածքի, կառավարելիության կատարելագործումը` հիմնական ուշադրություն դարձնելով բնակչության աղքատ խավերի կարիքների բավարարմանը:


Հիվանդանոցային բժշկական օգնության կազմակերպումը ներառում է սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարը ու սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովման կազմակերպումը:

Հանրապետության առողջապահության ոլորտի առջև խնդիր է դրված ապահովել քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը, զարգացնել պետության կողմից երաշխավորված բնակչության համար անվճար բժշկական օգնությունը և իրական մատչելիությունը: Հիվանդանոցային բուժօգնության համակարգի զարգացումն ընթանալու է ֆինանսավորման հստակ մեխանիզմների ներդրման, միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման, ավելորդ հզորությունների կրճատման և բժշկական օգնության որակի ապահովմանն ուղղված կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրային մոտեցումներով:

Հիվանդանոցային ծառայությունում պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժօգնության տեսակների գների և այդ նույն ծառայությունների իրական գների միջև եղած զգալի տարբերությունը դժվարություններ է առաջացնում բնակչության հատկապես սոցանապահով խմբերում ընդգրկվածների մոտ` ժամանակին հիվանդանոցային մասնագիտական բուժօգնություն ստանալու համար, որը և նպաստում է վերոնշյալ ցուցանիշների աճին: Այդ բոլորի հետևանքով զրանցվում են հիվանդությունների բարդացած ձևեր, ավելանում մահվան դեպքերի թվերը` հատկապես սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով տառապող հիվանդների մոտ:

Առաջիկա տարիներին կշարունակվի առողջապահության համակարգի օպտիմալացման գործընթացի խորացումը, որը նպատակ կունենա շարունակելու իրականացնել այնպիսի ռազմավարություն, որը կբարձրացնի համակարգի արդյունավետությունը, ինչը կենթադրի հիվանդանոցային մահճակալային ֆոնդի կրճատում, մահճակալների տարեկան միջին զբաղվածության ավելացում և այլն:

Գծանկար 8.4 Մահճակալի միջին տարեկան զբաղվածությունը



Հիմնական դեղերի ցանկում դեռևս առկա են ցածր պահանջարկ ունեցող դեղեր: Ակնհայտ է, որ անհրաժեշտ է նորովի նայել կենտրոնացված ճանապարհով գնվող դեղերի տեսականուն, ընտրելով նոր սերնդի և առավել արդյունավետ դեղեր (օրինակ դիաբետի, հոգեկան, հակաուռուցքային և սիրտ-անոթային հիվանդությունների համար):

Դեղերի որակի ապահովման վերահսկողությունը այսօր իրականացվում է միայն ներմուծման պահին, սակայն վերահսկողության շրջանակները պետք է ընդլայնել ներառելով դեղերի շրջանառության մնացած փուլերը:

8.1.6. Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման ուղղված ծրագրերը:

Վերջին տարիներին հանրապետությունում կանխարգելման համալիր միջոցառումների իրականացման շնորհիվ որոշ վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարելավվել է: 2009թ. չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են դիֆթերիան, սուր պոլիոմիելիտը, մալարիան, կատաղությունը, խոլերան, ռիկետցիոզները (այդ թվում բժավոր տիֆ, Բրիլլի հիվանդություն) և այլն: Մի շարք վարակիչ հիվանդություններով՝ մասնավորապես՝ համաճարակային պարօտիտով, լեպտոսպիրոզով, ընդհանուր աղիքային խմբի վարակներով հիվանդացությունը 2008 թ.-ին 2006թ. համեմատ եղել է նույն մակարդակի վրա:

Առողջապահության ոլորտի հիմնական խնդիրները

- Բնակչությանը ցուցաբերած բուժօգնության և սպասարկման որակի բարելավումը, մատչելիությունը, ոլորտի կառուցվածքի, կառավարելիության կատարելագործումը:

- Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը, կայուն համաճարակային իրավիճակի ապահովումը, պատվաստումների ազգային օրացույցում ընդգրկված պատվաստումների ժամանակին և որակով իրականացումը:
- Կանանց և երեխաների առողջության պահպանման, այդ թվում՝ վերարտադրողական առողջության խնդիրներին համարժեք ուշադրության ցուցաբերումը, որը սկզբունքային նշանակություն ունի առողջ սերունդ ունենալու և բնակչության առողջական վիճակի բարելավման առումով:
- Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում, որպես խնդիր է դիտարկվում առաջնային բուժօգնության ֆինանսավորմանն ուղղվող ծախսերի ավելացումը, բնակչության համար մատչելի, հասանելի և որակյալ առաջնային կանխարգելումը:
- Առաջնային օղակում ծառայած խնդիր է գյուղական վայրերում ցուցաբերվող բուժօգնության որակը և մատչելիությունը:

8.2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

8.2.1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առողջապահության ոլորտում պետության կողմից իրականացվող ծրագրերի նպատակներն են

8.2.1.1. Բնակչության առողջության առաջնային պահպանման ոլորտում.

Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի դերի բարձրացում, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացում, բժշկական օգնության և ծառայությունների ստանալու մատչելիության ընդլայնում, արտահիվանդանոցային բուժօգնության տեսակների և դրանց տեսակարար կշռի մեծացման ապահովում, ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության նյութատեխնիկական բազայի ամրապնդումը:

Առաջնային օղակի կողմից հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման միջոցով հիվանդանոցային բուժօգնության բեռի թեթևացում, շտապօգնության անհարկի՝ քրոնիկ հիվանդների համար տրվող կանչերի թվի նվազումը:

Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում աշխատող բուժանձնակազմի հմտության ու գործունեության որակի բարձրացումը՝ առավել ուշադրություն դարձնելով գյուղական բնակավայրերի աշխատողներին, ինչպես նաև առաջնային բուժօգնության ոլորտում որակի ապահովման ուղիների ու մեթոդների մշակում:

Բնակչի կողմից առողջության առաջնային ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության գործընթացի շարունակականության ապահովում:

Ծրագրի իրականացումը 2011-2013թթ. ընթացքում՝ թույլ կտա մինչև 10% - ով նվազեցնել առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության, հաշմանդամության և մահացության ցուցանիշները:

8.2.1.2. Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը.

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարա համաճարակային անվտանգության ապահովումը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովումը:

8.2.1.3. Մոր և մանկան առողջության ապահովումը

Ծրագրի նպատակն է կանանց և երեխաներին մատուցվող բժշկական ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը: Երեխաների բժշկական օգնության կազմակերպման անհրաժեշտ ծավալների, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման միջոցառումների ապահովումն ուղղված կլինի մանկական մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազեցմանը: Համաձայն Հազարամյակի զարգացման նպատակների հռչակագրի 2015 թվականին նախատեսվում է՝ մանկական մահացությունը իջեցնել 8-ից և մայրական մահացությունը՝ 10-ից:

Մայրության հովանավորումը, ծննդօգնության որակյալ ծառայությունների մատչելիության ապահովումը՝ ուղղված մայրական և շուրջծննդյան (պերինատալ) հիվանդացության ու մահացության ցուցանիշների նվազեցմանը, ինչպես նաև վերարտադրողական առողջության բարելավմանը:

Ծրագրի իրականացումը թույլ կտա 2011-2013թթ. ընթացքում՝ երեխաների առողջության պահպանման ոլորտում՝ նվազեցնել մանկական 0-1 տարեկան և մինչև 5 տարեկան մահացության մակարդակը՝ 10 %-ով, ապահովել երեխաների պատվաստումներով լրիվ ընդգրկվածության ցուցանիշի 60% և ավելի բարձր մասկարդակ, կրճատել նորածնային հիվանդացությունը և մահացությունը՝ նորածնային սկրինինգային հանակարգի կատարելագործման, նորածինների վերակենդանացման ծառայությունների հզորացման միջոցով: Ապահովել զարգացման շեղումների վաղ հայտնաբերման և վաղ միջամտության համակարգի մշակումը և ներդրումը: Ջարգացնել երեխաների գնահատման և վերականգնողական բուժօգնության համակարգը, ստեղծելով ինստիտուցիոնալ կառույցներ մարզային մակարդակում:

Բարձրացնել ծննդօգնության ծառայությունների մատչելիությունը, կրճատելով մայրական մահացության մակարդակը նվազագույնը 20%-ով:

Բարելավել հղիների նախածննդյան հսկողության ծառայությունների որակը, բարձրացնելով հղիների վաղ ընդգրկման ցուցանիշը 30%-ով:

Ապահովել հղիների նվազագույնը 90%-ի ընդգրկվածությունը մարդու իմունասանբավարարության վիճակի նկատմամբ սկրինինգի իրականացման գործընթացում:

Ընդլայնել վերարտադրողական օրգանների քաղցկեղի կանխարգելման ծրագրերը, ապահովելով արգանդի վզիկի քաղցկեղի սկրինինգում թիրախային խմբի կանանց նվազագույնը 30%-ի ընդգրկվածությունը:

8.2.1.4. Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը.

Հիվանդանոցային բժշկական օգնության կազմակերպումը ներառում է սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարը ու սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովման կազմակերպումը:

8.2.1.5. Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովում.

Հիվանդանոցային բժշկական օգնության կազմակերպման հիմնական խնդիրներն են բնակչությանը ցուցաբերած բուժօգնության և սպասարկման որակի բարելավումը, մատչելիությունը, ոլորտի կառուցվածքի, կառավարելիության կատարելագործումը հիմնական ուշադրություն դարձնելով բնակչության աղքատ խավերի կարիքների բավարարմանը:

8.2.1.6. Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերը:

Կարևորվում է տարափոխիկ հիվանդությունների բուժմանն ուղղված բժշկական ծառայությունների մատչելության և որակի բարելավումը: Հիվանդությունների կանխարգելման միջոցառումների ապահովումն ուղղված մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազեցմանը:

8.2.2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2011-2013ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2011-2013թթ. ՄԺԾԾ շրջանակներում առողջապահության ոլորտի գերակայություններն են.

- Բնակչության առողջության առաջնային պահպանումը,
- Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը,
- Մոր և մանկան առողջության ապահովումը,
- Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը,
- Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը,
- Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերը:

8.2.2.1. Բնակչության առողջության առաջնային պահպանումը.


Ինչպես բնակչության աղքատության հաղթահարման համատեքստում, այնպես էլ 2011-2013թթ. Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի ֆինանսավորման

միջին ժամկետ ծրագրի համատեքստում առողջապահության ոլորտի գերակա ուղղություն է շարունակում դիտվել առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը դիտարկում է որպես առողջապահության համակարգի բարեփոխումների հիմք, քանզի այն հանդիսանում է բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության հիմնական օղակը և ազգային առողջապահության համակարգի զարգացման ու բարեփոխումների ամենաարդյունավետ ճանապարհը:

Հաշվի առնելով առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության մատչելիության ավելի բարձր մակարդակը և ազգաբնակչությանը տարածքային կտրվածքով հասանելիության ավելի մեծ աստիճան ապահովելու պահանջը՝ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում ավելացվելու է առաջնային բուժօգնության բաժինը:

Գծանկար 8.5 Ամբուլատոր և հիվանդանոցային բուժօգնության ֆինանսավորումը առողջապահության ոլորտի ծախսերի նկատմամբ (առանց առողջապահության բնագավառում կառավարման ապարատի պահպանման ծախսերի, %)



Պետք է շարունակվի և ընդլայնվի ընտանեկան բժշկության համակարգի ներդրումն ու զարգացումը հանրապետության ամբողջ տարածքում: Ընտանեկան բժշկության խմբերը աստիճանաբար պետք է ստանան ինքնուրույն կարգավիճակ՝ հիմնված ըստ սպասարկվող /գրանցված/ բնակչության թվի ֆինանսավորման, ռեսուրսների անկախ տնօրինման և բուժօգնության կազմակերպման գործում ինքնուրույն որոշումներ ընդունելու սկզբունքների վրա:

8.2.2.2. Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը.

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է “Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին” Հայաստանի Հանրապետու-

թյան օրենքով: Այս համակարգի անխափան գործունեության ապահովումը կենսական նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության առողջության պահպանման համար:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման առումով՝ ծրագիրը նախատեսում է երկրում ապահովել հիգիենիկ և հակահամաճարակային հսկողությունը, բնակչության առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինֆեկցիոն և զանգվածային ոչ ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելումը, հանրային առողջապահության համակարգի զարգացումը:

8.2.2.3. Մոր և մանկան առողջության ապահովումը.

Կանանց և երեխաների առողջության պահպանման, այդ թվում՝ վերարտադրողական առողջության խնդիրներին համարժեք ուշադրության ցուցաբերումը սկզբունքային նշանակություն ունի առողջ սերունդ ունենալու և բնակչության առողջական վիճակի բարելավման առումով: Այդ նպատակով վերահաստատվել է կանանց և երեխաների առողջության հարցերի գերակայությունը: Մոր և մանկան առողջության պահպանման ծրագրի շրջանակներում նախատեսվում է զգալիորեն ավելացնել ինչպես հիվանդանոցային, այնպես էլ առաջնային բուժօգնության կազմակերպությունների մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական ծախսերը: Երեխաների բուժօգնության բնագավառում հատուկ ուշադրություն է դարձվելու հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումների իրականացումը:

8.2.2.4. Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը.

Կարևորվում է սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելման և բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովմանն ուղղված ծրագրերը:

Ծրագրի նպատակն է սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերումը, հիվանդների բուժօգնության կազմակերպումը և շարունակական հսկողությունը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և հիգիենայի վերաբերյալ գիտելիքների քարոզչությունը սկզբունքային նշանակություն ունի բնակչության առողջության պահպանման հարցում:

8.2.2.5. Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը.

Ծրագրի նպատակն է մեծացնել սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության առավել հասանելիությունը, բուժօգնության որակի ապահովումը:

8.2.2.6. Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումը.

Ծրագրի նպատակն է մեծացնել ինֆեկցիոն հիվանդությունների, այդ թվում՝ տուբերկուլյոզի, սեռավարակների և ՁԻԱՀ-ի կանխարգելման, վաղ հայտնաբերման և լիարժեք բուժման արդյունավետությունը:


**8.3. 2011-2013 ԹԹ. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ**

Առողջապահության բնագավառի պետական ֆինանսավորման ծավալների աճը և վիճակի բարելավումը դիտվելու է որպես առաջնահերթ խնդիր նաև ՀՀ 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի ամբողջ ժամանակահատվածում:

2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով առողջապահության ոլորտի գծով (ներառյալ հիմնանորոգման, վարկային և դրամաշնորհային ծրագրերի, առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվել են 2011 թվականին 58574.9 մլն, 2012 թվականին 57339.8 մլն և 2013 թվականին 56028.0 մլն դրամ: Ծախսերի աճը, առանց հաշվի առնելու վարկային և դրամաշնորհային ծրագրերը, 2011 թվականին նախորդ տարվա համեմատությամբ կկազմի 12.3 տոկոս, 2012 և 2013 թվականներին կպահպանվի ծախսերի միևնույն մակարդակը:

2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով առողջապահության ոլորտի պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2013 թվականին կկազմեն ՀՆԱ-ի 1.38 %-ը:

Գծանկար 8. 6 Առողջապահության ոլորտի պետական ծախսերի մակարդակը (%՝ ՀՆԱ-ի նկատմամբ)



Միջնաժամկետ ժամանակահատվածում ՀՆԱ-ի նկատմամբ բյուջետային ծախսերի նմանօրինակ նվազումը պայմանավորված է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի ավարտով, սակայն բանակցային գործընթացը շարունակվում է նոր ծրագրեր սկսելու


շուրջ, որոնք այս փուլում ընդգրկված չեն ՄԺԺԾ-ում, ուստի ՀՆԱ-ի նկատմամբ առողջապահական ծախսերի վարքագիծը այս փուլում վերջնական չէ և հետագայում կվերանայվի:

Բյուջետային հատկացումների աճը մասնավորապես ուղղվելու է առողջապահության միջոլորտային և ներոլորտային ծրագրային գերակայություններով պայմանավորված նպատակների իրականացմանը: Միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնարար դրույթ է հանդիսացել, առկա ֆինանսական ռեսուրսների պայմաններում, բնակչության ամենաաղքատ և սոցիալապես առավել անպաշտպան խմբերի բժշկական ծառայություններից օգտվելու մատչելիության աստիճանի բարձրացումը: Ստորև ներկայացված են առողջապահական ծախսերը ըստ գործառնական դասակարգման:

Աղյուսակ 8.5 Առողջապահության բնագավառի պետական ծախսերը (մլն դրամ)


	ՀՀ 2009 թվականի փաստացի	ՀՀ 2010 թվականի հաստատված բյուջե	ՄԺԺԾ		
			2011 թ.	2012 թ.	2013 թ.
Առողջապահություն ընդամենը (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի)	54,759.6	54,210.0	58,574.9	57,339.8	56,028.0
1. Արտահիվանդանոցային ծառայություններ (առողջության առաջնային պահպանում)	20,431.5	21,033.3	23,919.1	23,919.1	23,919.1
<i>տեսակարար կշիռը ընդամենը առողջապահության ծախսերում</i>	<i>37.3</i>	<i>38.8</i>	<i>40.8</i>	<i>41.7</i>	<i>42.7</i>
2. Հիվանդանոցային ծառայություններ	21,606.2	21,198.6	24,371.1	24,371.1	24,371.1
<i>տեսակարար կշիռը ընդամենը առողջապահության ծախսերում</i>	<i>39.5</i>	<i>39.1</i>	<i>41.6</i>	<i>42.5</i>	<i>43.5</i>
3. Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում	3,045.4	3,687.5	3,687.5	3,687.5	3,687.5
4. Հանրային առողջապահական ծառայություններ	2,853.6	2,796.4	2,861.1	2,861.1	2,861.1
5. Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	1,153.7	1,173.3	1,189.2	1,189.2	1,189.2
6. ՀԲ վարկային և դրամաշնորհային ծրագրեր	5,223.0	4,320.9	2,546.9	1,311.8	0.0
7. Առողջապահության բնագավառում կենտրոնացված կարգով բժշկական սարքերի և սարքավորումների ձեռքբերում	99.1	-	-	-	-
8. Առողջապահության օբյեկտների հիմնանորոգում	347.1	-	-	-	-

Գծանկար 8.7 Առողջապահության ոլորտի պետական ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման



2010 թվականին ընթացիկ ծախսերը կազմելու են ընդամենը առողջապահական ծախսերի 93 տոկոսը, իսկ կապիտալ ծախսերը՝ 7 տոկոսը: 2013 թվականին կապիտալ ծախսեր նախատեսված չեն, քանի որ, ավարտվում են ՀԲ վարկային և դրամաշնորհային ծրագրերը, իսկ նոր ծրագրերը դեռևս բանակցային փուլում են:

Գծանկար 8.8 2011 թվականի առողջապահության ոլորտի ծախսերի կառուցվածքը (%)



8.3.1. Բնակչության առողջության առաջնային պահպանումը.

2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվող առողջապահության ոլորտի ծախսերի աճի հիմնական մասը կուղղվի առաջնային բուժօգնությանը (Արտահիվանդանոցային ծառայություններ), որը հնարավորություն կտա ապահովելու նշված ոլորտում “Կայուն զարգացման ծրագրով” նախատեսված հիմնական ցուցանիշների կատարումը, ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների իրականացումը:

2011 թվականին առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գծով (Արտահիվանդանոցային ծառայություններ խումբ) պետական բյուջեից նախատեսվում է

հատկացնել 23919.1 մլն դրամ նախորդ տարվա 21033.3 մլն դրամի դիմաց, աճը կազմում է 13.7 %:

2011թ. առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) համակարգում տեղամասային բժիշկների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 84700 դրամ՝ 2010 թվականի 77000 դրամի դիմաց, բուժքույրերինը՝ 54250 դրամ 2010 թվականի 49300 դրամի դիմաց կամ աճը կկազմի 10 տոկոս: Նույն մակարդակը կպահպանվի հաջորդ 2012 և 2013թթ. -ին:

Ներդրուտային կտրվածքով առողջապահության բնագավառում առաջնահերթությունը տրվելու է առաջնային բուժօգնությանը, որը միջնաժամկետ հատվածում “կլանելու” է ոլորտի պետական հատկացումների մոտ 40.8 տոկոսը:

Առաջնային բուժօգնության օղակում պետական քաղաքականությունը ուղղված է լինելու ընտանեկան բժշկության ինստիտուտի ներդրման ուղղությամբ ներկայումս իրականացվող վերափոխումների ավարտմանն ու ձևավորվող կառուցվածքների հետագա ամրապնդմանը:

Միջնաժամկետ հեռանկարում գյուղական բնակավայրերում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացմանը վերաբերող հարցերը դեռևս շարունակելու են մնալ պետական քաղաքականության օրակարգում, և այդ ուղղությամբ քայլերն ուղղված են լինելու գյուղական ամբուլատորիաների և բուժակ-մանկաբարձական կետերի ռեսուրսային (ինչպես մարդկային, այնպես էլ տեխնիկական) հենքի բարելավմանը: Մինևույն ժամանակ, շեշտադրվելու են քաղաքային բնակավայրերում (ներառյալ՝ Երևանը) առաջնային բուժօգնության ծառայությունների (պոլիկլինիկաների) արդիականացման հարցերը: Այդուհանդերձ, սովյալ դեպքում (և հատկապես՝ Երևանի պարագայում) պետական միջամտության լծակների կիրառումը մեծապես պայմանավորված է լինելու համակարգում ներկայումս իրականացվող բարեփոխումների արդյունքներով:

8.3.2. Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը,

Խմբում ընդգրկված ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում, հանրային առողջության պահպանման նպատակով փորձագիտական հետազոտությունների անցկացում, ուսումնասիրություններ, լաբորատոր և գործիքային հետազոտություններ: Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը իրականացվում է հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) կողմից սանիտարահամաճարակաբանական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպման, ինչպես նաև բնակչության առողջության վրա արտաքին աշխարհի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելման միջոցով:

Վերոնշյալ ծրագրերի շրջանակներում նախատեսվում է համաճարակաբանական հետազոտություններ անցկացնել վարակային հիվանդությունների օջախներում, իրականացնել ազգաբնակչության իմունիզացիայի կատարման նկատմամբ հսկողություն, մանրէաբանական, սանիտարա-քիմիական հետազոտություններ, նախազգուշական սանիտարական հսկողություն, նախազգծերի հիգիենիկ փորձաքննություն, կառուցվող և վերակառուցվող օբյեկտների

շահագործման ընդունում, հատուկ վտանգավոր վարակների՝ աղիքային, կաթիլային վարակիչ հիվանդությունների, խոլերայի, բրուցելյոզի, կատաղության, սիբիրախտի և այլ հատուկ վտանգավոր ինֆեկցիաների օջախներում հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպում, ՁԻԱՀ/ՄԻԱՎ կանխարգելման վերաբերյալ կազմ-լուսավորչական աշխատանքներ, ռիսկի խմբի անձանց հսկողություն և հետազոտությունների անցկացում: Վերոնշյալ ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա ապահովել ՀՀ բնակչության համաճարակային անվտանգությունը, նվազեցնել բնակչության հիվանդացությունը տարափոխիկ հիվանդություններից:

8.3.3. Մոր և մանկան առողջության ապահովումը.

Ոլորտում վարվող պետական քաղաքականության շրջանակներում շարունակվելու են հատուկ շեշտադրվել մոր և մանկան առողջության պահպանումը և վերարտադրողական առողջության բարելավումը: Իրականացվելիք գործողությունների արդյունքում (որոնք, մասնավորապես, ուղղված են լինելու հղիներին նախածննդյան և շուրջծննդյան որակյալ բուժօգնության տրամադրմանը, երեխաների՝ բացառապես կրծքով կերակրման խրախուսմանը, կանանց համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների դեպքերի վաղ հայտնաբերմանն ու տարածման կանխարգելմանը, երեխաների՝ պատվաստումներով ընդգրկվածության մեծացմանն ու տարածքային կտրվածքով առկա տարբերությունների վերացմանը) ակնկալվում է նշանակալիորեն կրճատել մանկական և մայրական մահացության աստիճանը, ինչը համահունչ է ՄԱԿ-ի կողմից հռչակված Հազարամյակի զարգացման նպատակներին:

Հիվանդանոցային բուժօգնության համակարգում կավելանան մանկաբարձական բուժօգնության ու երեխաների բուժօգնության դեպքերը:

8.3.4. Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը.

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովման, Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերը:

Ըստ վիճակագրական տվյալների բնակչության 8-10%-ը կարիք ունեն ստանալու հիվանդանոցային բուժօգնություն (կամ մոտ 295.0 հազ դեպք), որից պետական պատվերի շրջանակներում 2010թ. հաստատված բյուջեով նախատեսվել է ընդգրկել 215.2 հազար դեպք կամ կարիք ունեցողների 72.9 տոկոսը: 2011 թվականին նախատեսվում է 232.8 հազար դեպք կամ կարիք ունեցողների 78.9 տոկոսը:

Հիվանդանոցային բուժօգնության դեպքերի ավելացումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության սնտեսական կայունությունից ելնելով հիվանդանոցային բուժհաստատություններ բնակչության դիմելիության մակարդակի բարձրացման հետ: Մասնագիտացված/հիվան-

դանոցային բուժօգնության բնագավառի հետագա զարգացումն ընթանալու է ֆինանսավորման հստակ մեխանիզմների ներդրման, միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման ճանապարհով: Ինչպես նաև շարունակվելու է ավելորդ հզորությունների կրճատման գործընթացը, իրականացվելու են բժշկական օգնության որակի ապահովմանն ուղղված կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրային մոտեցումներ:

Հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում մեկ հիվանդի բուժման միջին արժեքը, 2010 թվականի 12400 դրամի դիմաց, 2011 թվականին նախատեսվում է սահմանել 13650 դրամ կամ աճը կազմում է 10%: Հիվանդանոցային համակարգում բժիշկների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը 2011 թվականին նախատեսվում է 71300 դրամ իսկ բուժքույրերինը 56400 դրամ կամ աճը կազմում է 15 տոկոս: Նույն մակարդակը կպահպանվի հաջորդ 2012թ., 2013թ. -ին:

Հիվանդանոցային բուժօգնության ոլորտում համակարգի օպտիմալացմանն ուղղված քայլերին զուգընթաց, առաջիկա տարիներին պետական ծախսային քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը լինելու է մարզերում տեղակայված հիվանդանոցային հաստատությունների արդիականացումը: Դա մասամբ, ապահովվելու է Համաշխարային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում, որը ներկայումս ընթացքի մեջ է: Հայաստանի Հանրապետության կառավարությունը մտադիր է առաջիկա 4-5 տարիների ընթացքում հիմնականում ավարտել ՀՀ մարզերում տեղակայված հիվանդանոցների արդիականացումը, ինչը զգալիորեն կմեծացնի հիվանդանոցային ծառայությունների մատչելիությունը և որակը: Մարզերում տեղակայված հիվանդանոցների շենքային պայմանների և տեխնիկական հենքի բարելավմանը զուգընթաց, աշխատանքներ կտարվեն մարզային հիվանդանոցները որակյալ մասնագետներով համալրելու ուղղությամբ:

Մինևույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս երկրի հիվանդանոցային համակարգը հիմնականում թերբեռնված է և մեծ է արդյունավետության բարձրացման ներուժը, պետական քաղաքականության առանցքային տարրերից է լինելու նաև այնպիսի գործողությունների ձեռնարկումը, որոնք հիվանդանոցային հաստատություններին կշահագրգռեն իրականացնելու արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության ծրագրային առաջնահերթությունների շարքում են լինելու սոցիալական հատուկ նշանակություն ունեցող և տարափոխիկ առանձին հիվանդությունների տարածման կանխարգելմանը, դրանց վաղ հայտնաբերմանն ու բուժման արդյունավետության բարձրացմանն ուղղված հարցերը:

Ոչ տարափոխիկ հիվանդությունների, մասնավորապես սիրտ-անոթային, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների և քրոնիկական շնչառական հիվանդությունների տարածվածությունը դրսևորում է աճի միտում, և, այս առումով, առավել ռիսկային խմբում են հայտնվում հատկապես բնակչության աղքատ և սոցիալապես անապահով խմբերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ տարափոխիկ հիվանդությունների տարածումը շատ դեպքերում հնարավոր է կանխարգելել համապատասխան միջոցառումների արդյունավետ

իրականացման արդյունքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը միջին ժամկետ և երկարաժամկետ հատվածներում մտադիր է հատուկ ջանքեր գործադնել այդ ուղղությամբ, մասնավորապես՝

- մշակել և շարունակաբար բարելավել ոչ տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման և հսկողության ազգային քաղաքականությունը և պլանը,

- ինտեգրել ոչ տարափոխիկ հիվանդությունների կանխարգելումը և հսկողությունը Կառավարության հարակից այլ ոլորտային քաղաքականություններում,

- աջակցել ոչ տարափոխիկ հիվանդությունների ռիսկի գործոնները նվազեցնող միջոցառումների իրականացմանը (ծխախոտի և ալկոհոլի օգտագործման դեմ պայքար, առողջ սնուցման քարոզում, ֆիզիկական ակտիվության խթանում),

- նպատակաուղղված քայլեր ձեռնարկել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում համակարգի այնպիսի ենթակառուցվածքի ձևավորման ու զարգացման ուղղությամբ, որը կներառի քրոնիկական հիվանդությունների արդյունավետ վարմանը և բուժման կազմակերպմանը:

- օժանդակել ոչ տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման և հսկողության նպատակով հետազոտությունների անցկացմանն ու առաջընթացի մոնիտորինգի և գնահատման գործուն համակարգի ներդրմանը:

ԳԼՈՒԽ 9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

9.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Սոցիալական պաշտպանությունը պատմականորեն հանդիսացել և շարունակում է հանդես գալ որպես ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը¹¹:

Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը:

Վերոհիշյալ նպատակին հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն: Ստորև ներկայացված է ոլորտում առկա իրավիճակը և պետական միջամտության հիմնական ուղղություններն ըստ սոցիալական պաշտպանության առանձին բնագավառների:

Տարեցների հիմնահարցերի բնագավառ

Տարեցների բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին տարեցներին շուրջօրյա խնամքի, սոցիալական սպասարկման ծառայությունների, ցերեկային խնամքի, տնային պայմաններում կենսաթոշակառուների կենցաղային սպասարկման, սոցիալ-հոգեբանական, բժշկական օգնության և իրավաբանական խորհրդատվության ծառայությունների տրամադրման եղանակով:

Այս բնագավառի շահառուներ են համարվում միայնակ և խնամքի կարիք ունեցող տարեց ու հաշմանդամ անձինք, ինչպես նաև սոցիալական պատճառներով անօթևան դարձած անձինք:

Տարեցներին շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունները տրամադրվում են 7 (4 պետական և 3 ոչ պետական) տուն-ինտերնատների միջոցով: 2009թ. այդ հաստատություններում սպասարկվել են ընդհանուր թվով 1101 միայնակ ծեր և հաշմանդամ, որից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 4 տուն-ինտերնատներում խնամվել են 1004 շահառու: Վերջիններս գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո և ապահովվում են կենսապահովման համար անհրաժեշտ բոլոր միջոցներով ու պայմաններով: Ոչ պետական տուն-ինտերնատներում սպասարկվել են 97 շահառուներ, որից 55 Վանաձորում, 30 Աբովյանում և 12 Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղում:

¹¹ Տես ՀՀ Կառավարության ծրագիրը (ՀՀ կառավարության 28.04.2008թ. N 380-Ա որոշում), ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը (ՀՀ կառավարության 24.07.2008թ. N 878-Ն որոշում) և Կայուն զարգացման ծրագիրը (ՀՀ Կառավարության 30.10.2008թ. N1207-Ն որոշում):

Տնային պայմաններում միայնակ տարեցներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրումն իրականացնում է «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն»-ի միջոցով (2009թ-ին Երևան քաղաքում՝ տնային պայմաններում սպասարկվել է շուրջ 1488 կենսաթոշակառու):

2009թ. Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատին կից գործող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի ցերեկային կենտրոնում սպասարկվել են շուրջ 47 անձ: Հաճախորդները ցերեկային կենտրոնի համապատասխան մասնագետների կողմից ստանում են սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնություն, արհեստագործության և արվեստի միջոցով վերականգնում են իրենց առողջությունը: Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվական ծառայություններ մատուցվում են նաև նրանց ընտանիքների անդամներին:

2009թ. Երևանի թիվ 1 տուն-ինտերնատին կից անօթևանների ժամանակավոր կացարանում ժամանակավոր (մինչև 60 օր) կացարանով են ապահովվել 60 անօթևան մարդ, այդ ընթացքում հնարավորինս լուծվել են նրանց սոցիալական խնդիրները:

2009թ. Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում շուրջ 6556 միայնակ ծեր ու հաշմանդամ քաղաքացիներ սպասարկվել են “Առաքելություն Հայաստան” բարեգործական հասարակական կազմակերպության՝ տնային պայմաններում և խնամքի ցերեկային կենտրոնների միջոցով (29 ենթակառույց):

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառ

Ընտանիքի, կանանց և երեխաների բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մանկատներում և ընտանիքներում խնամվող առանց ծնողական խնամքի մնացած, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, խնամքի և դաստիարակության անբարենպաստ պայմաններում գտնվող երեխաներին, մանկատների շրջանավարտներին սոցիալ-հոգեբանական, բժշկական, իրավական, խնամքի և դաստիարակության ծառայությունների մատուցման եղանակով:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում են 8 պետական և 4 բարեգործական մանկատներ: Դրանցից 2 պետական և 1 բարեգործական հաստատությունները նախատեսված են մտավոր և ֆիզիկական արատներ ունեցող երեխաների խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու համար: Ուսումնասիրությունները փաստում են, որ երեխաները այնտեղ հայտնվում են հիմնականում սոցիալական պատճառներով, որը պայմանավորված է ազգաբնակչության ցածր կենսամակարդակի, դեղորայքի և բուժօժանոթությունների բարձր գների, ծնողների հմտությունների պակասի, երեխաների խնամքի ծառայությունների բացակայության համալիր ազդեցությամբ: 2009թ-ին մանկատներում խնամվել է շուրջ 835 երեխա, այդ թվում 378-ը՝ մասնագիտացված մանկատներում:

Մանկատներում երեխաների թվի կրճատման և մուտքի կանխարգելման նպատակով պետության միջամտությամբ իրականացվում են մանկատների բեռնաթափման՝ երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձնելու և խնամատար ընտանիք տեղավորելու ծրագրեր,

ինչպես նաև երեխաների ցերեկային խնամքի կենտրոնների ու երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների ցանցի ընդլայնում, որոնք այլընտրանք են հանդիսանում մանկատներում և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում խնամվող երեխաների համար: Այժմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների խնամքի և պաշտպանության 7 գիշերօթիկ հաստատություն և 2 սոցիալական հոգածության կենտրոն: 2009թ գիշերօթիկ հաստատություններում խնամվել են 711 երեխա, իսկ երեխաների խնամքի սոցիալական հոգածության կենտրոններում՝ միջին թվով 189 երեխա:

Զբաղվածության բնագավառ

Զբաղվածության բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային և մարզային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրող և գործազուրկ բնակչությանը տարբեր տիպի ծառայությունների մատուցման և նպաստների (տրանսֆերտներ) տրամադրման եղանակով: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին զբաղվածության բնագավառում մատուցվող հիմնական ծառայություններն են գործազուրկների, աշխատանք փնտրող չզբաղված անձանց և երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և ուսուցման կազմակերպումը, խորհրդատվությունը, աշխատանքի տեղավորման աջակցության և ժամանակավոր զբաղվածության ապահովումը, աշխատանքի ընտրության հարցում աշխատանք փնտրող անձանց օժանդակության տրամադրումը, իսկ գործատուին անհրաժեշտ մասնագիտություն և որակավորում ունեցող աշխատուժով ապահովումը:

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին զբաղվածության բնագավառում բնակչությանը տրամադրվող հիմնական տրանսֆերտներն են գործազրկության նպաստները, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը, վարձատրվող հասարակական աշխատանքները, աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցումը գործատուին և այլն:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են համարվում զբաղվածության գործակալությունում հաշվառված գործազուրկները, աշխատանք փնտրող և աշխատաշուկայում անմրցունակ անձինք (այդ թվում նաև երիտասարդ): 2009 թվականի դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային և մարզային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրող անձանց թվաքանակը կազմել է 99308 մարդ, իսկ գործազուրկների թիվը՝ 84493 մարդ: Ընդ որում, այդ ժամանակահատվածի համար հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը կազմել է 7,1%:

Զբաղվածության բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է հիմնականում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և նրա տարածքային մարմինների՝ 10 մարզային և 41 զբաղվածության տարածքային կենտրոնների, ինչպես նաև Երևանում գործող «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով:

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառ

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հաշմանդամ համարվող անձանց առանձին խմբերին տարբեր ծառայությունների մատուցման եղանակով:

Հաշմանդամներին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մատուցվող հիմնական ծառայություններն են հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց պրոթեզավորումը, վերականգնողական պարագաներով ապահովումը և դրանց վերանորոգումը, այդ թվում նաև աչքի պրոթեզավորում և ձայնաստեղծ սարքերի ձեռքբերում, հաշմանդամներին սայլակներով ապահովում, հաշմանդամներին, մինչև 18 տարեկան երեխաներին ու տարիքային կենսաթոշակառուներին լսողական սարքերով ապահովում, մինչև 12 տարեկան երեխաներին լսողական սարքերի ներդիրներով ապահովում, տեսողությունից հաշմանդամ անձանց համար հատուկ տեղեկատվական միջոցների ստեղծումը (հատուկ տառատեսակներով գրքերի տպագրություն, «խոսող գրքերի» ձայնագրություն և այլն), հաշմանդամների հոգեկան առողջության վերականգնումը, հաշմանդամների բուժումը և բժշկասոցիալական վերականգնումը, տեսողությունից հաշմանդամ անձանց «Արև» համակարգով ուսուցանելու և համակարգչային տեխնիկայով ապահովումը, պետական աջակցություն «Փրկություն» հասարակական կազմակերպության մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ երիտասարդների սոցիալ-վերականգնողական ցերեկային խնամքի կենտրոնին:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են համարվում ՀՀ քաղաքացի կարիքավոր հաշմանդամները: 2009 թվականի պետական աջակցություն ստացող հաշմանդամների ընդհանուր թիվը կազմել է 135699 մարդ, որոնք կազմում են աջակցության կարիք ունեցող հաշմանդամների թիվը՝ 98.7%-ը:

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է հիմնականում «ԱՐԹՄԵԴԵ բժշկավերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ի, «Մթրես կենտրոն» ՓԲԸ-ի և այլ պետական ու սահմանված կարգով ընտրված մասնավոր կազմակերպությունների միջոցով:

Աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառ

Աշխատանքի պետական կարգավորման բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է աշխատանքային հարաբերությունների կարգավորման և աշխատանքային օրենսդրության կիրարկման նկատմամբ վերահսկողության ծառայությունների, ինչպես նաև աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված

խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման եղանակով: Հայաստանի Հանրապետությունում 2009 թվականին 841 անձինք աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցում են ստացել պետական բյուջեի միջոցներից:

Ժողովրդագրության բնագավառ

Ժողովրդագրության բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին երեխայի ծննդյան միանվագ նպաստների և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման եղանակով:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են համարվում նորածին երեխայի ծնողները և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձը, որը խնամում է մինչև 2 տարեկան երեխա:

2009 թվականին 2008թ. համեմատ արձանագրվել է ծնունդների թվի շուրջ 8 տոկոսով աճ, որի արդյունքում 2009թ. ծնունդների թիվը հանրապետությունում կազմել է 44466 երեխա՝ 2008 թվականի 41185 երեխայի փոխարեն:

Անապահով սոցիալական խմբերին պետական աջակցության բնագավառ

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառում պետական միջամտությունը իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության տրամադրման եղանակով:

Այս բնագավառում շահառուներ են համարվում անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքները:

Ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված նպաստառու ընտանիքների թիվը 2009թ. կազմել է 107492 ընտանիք, իսկ ընտանեկան նպաստի իրավունք տվող սահմանային միավոր է սահմանվել 30.00:

Պատերազմի մասնակիցներին, նրանց ընտանիքներին և առանձին կատեգորիայի քաղաքացիներին պետական աջակցության բնագավառ

Պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքներին պետական աջակցության բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ՀՄ պատերազմի վետերանների, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության կամ հատուկ վճարների տրամադրման եղանակով:

2009 թվականին 2008թ. համեմատ “Վետերանների պատվովճարներ” և “ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում” ծրագրերի գծով արձանագրվել է շահառուների թվի նվազում համապատասխանաբար 10 տոկոսով (2008թ. 4673 մարդ) և 0.3 տոկոսով (2008թ. 26274 մարդ), որը պայմանավորված է ՀՄ պատերազմի վետերանների թվի նվազմամբ:

Փախստականների հիմնահարցերի բնագավառ

Փախստականների հիմնահարցերի բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարաններում սպասարկման ծառայությունների մատուցման եղանակով:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ հայցող օտարերկրյա քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք ու նրանց ընտանիքի անդամները:

Նշված ծառայությունները հիմնականում մատուցվում են «Հանրակացարաններե ՓԲԸ-ը միջոցով, որը սպասարկում է հինգ տարբեր վայրերում գտնվող փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարանները: Այդ կացարաններում սպասարկվող շահառուների ընդհանուր թվաքանակը 2009 թվականին կազմել է 628 մարդ:

Վերոգրյալից բացի, ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նմանատիպ սպասարկման ծառայություններ են մատուցվում նաև 3 այլ կազմակերպությունների ենթակայության տակ գտնվող փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարաններում, որոնցում սպասարկվող շահառուների ընդհանուր թվաքանակը 2009 թվականին կազմել է շուրջ 227 մարդ:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառ

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառը ներառում է կենսաթոշակային ապահովության և սոցիալական ապահովագրության համակարգերը:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կենսաթոշակային տարիքի անձանց ապահովագրական և սոցիալական կենսաթոշակների, ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակների, սպայական անձնակազմին և շարքային զինծառայողներին ու նրանց

ընտանիքների անդամներին կենսաթոշակների, ժամանակավոր անաշխատունակության և հղիության ու ծննդաբերության նպաստների տրամադրման եղանակով:

2009թ. փաստացի ապահովագրական կենսաթոշակ ստացողների թիվը կազմել է 467555 մարդ, սոցիալական կենսաթոշակ ստացողների թիվը՝ 50470 մարդ, ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակատուների թիվը՝ 57 մարդ, շարքային զինծառայողների՝ 9176 մարդ:

2009թ. ժամանակավոր անաշխատունակության և հղիության ու ծննդաբերության օրերի թիվը համապատասխանաբար կազմել են 795581 օր և 1044973 օր:

9.1.2 Վերջին տարիների զարգացման միտումները ոլորտում

Վերջին տարիներին արձանագրվել է ՀՀ պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ընդհանուր ծախսերի մակարդակի կայուն աճի միտում (միայն 2008-2009թթ այդ ոլորտին ուղղված ընդհանուր ծախսերի մակարդակը 212.6 մլրդ. դրամից աճել է 243.7 մլրդ. դրամի): Ոլորտում ծախսերի մակարդակի նման աճը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների ու պետական նպաստների չափերի շարունակական աճի ապահովմամբ:

Տարեցների հիմնահարցերի բնագավառ

2008թ.-ից 25%-ով ավելացել է տնային պայմաններում սպասարկվող միայնակ ծերերի թիվը 1200-ից դառնալով 1500, որի արդյունքում համամասնորեն աճել են նաև բյուջետային հատկացումները (մեկ շահառուի գծով բյուջետային հատկացումների մակարդակը մնացել է անփոփոխ):

Բարելավվել է տուն-ինտերնատներում մատուցվող ծառայությունների որակը, մասնավորապես՝ մեկ խնամվողի մեկ օրվա սննդի գումարի չափը 2009թ.-ին բարձրացվել է 20%-ով (2008-ի 1036,6 դրամի դիմաց դառնալով 1243,9 դրամ), իսկ 2007-2008թթ. 20-50%-ով բարձրացել է նաև տուն-ինտերնատների, տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնի աշխատակիցների աշխատավարձը: 2009 թվականին 15 հաստիքային միավորով ավելացել է տուն-ինտերնատների սպասարկող անձնակազմի թվաքանակը (2008թ. 610.5 հաստիքային միավորի դիմաց հասնելով 625.5-ի), անփոփոխ թողնելով շահառուների թիվը:

Սկսած 2007թ.-ից ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել առանձին հասարակական և բարեգործական կազմակերպություններին, մասնավորապես. «Առաքելություն Հայաստանե բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ հանրապետության մարզերում և Երևան քաղաքում միայնակ ծեր ու հաշմանդամ քաղաքացիների սպասարկմամբ զբաղվող իր աշխատակիցների աշխատավարձի և սոցիալական ապահովության վճարի փոխհատուցման համար: 2007 թվականի համեմատ 2008-ին մոտ 16 %-ով ավելացել է այդ կազմակերպությանը տրամադրվող պետական աջակցության ծավալը (5 մարզերում և Երևան

քաղաքում 6100 շահառուի սպասարկող 239 աշխատակցի փոխարեն փոխահատուցվել է 7 մարզերում և Երևան քաղաքում 6700 շահառուի սպասարկող 279 աշխատողների աշխատավարձը և սոցիալական ապահովության վճարը): Սկսած 2009թ.-ից, բացի աշխատավարձի և սոցիալական ապահովության վճարի փոխահատուցումից, ՀՀ պետական բյուջեից «Առաքելություն Հայաստանե ԲՀԿ-ին սկսել է հատկացվել նաև պետական աջակցություն տարեցների սննդապահովման համար (այդ նպատակով 2009 թվականին հատկացվել է 69.8 մլն. դրամ 3000 շահառուի համար):

Վերջին տարիներին, ավելացվել է անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանի տեղերը (2008թ-ին՝ 20-ով, իսկ 2009թ.-ին 10-ով): Արդյունքում, 2008թ-ին անօթևանների ժամանակավոր կացարանում սպասարկվել է շուրջ 750 մարդ, որոնցից 114-ի կամ 15%-ի հիմնահարցերը լուծվել են (պատրաստվել են փաստաթղթերը և ընդունվել տուն-ինտերնատ, ձեռք են բերել հաշմանդամի կարգավիճակ, վերադարձել են ընտանիք, տեղավորվել աշխատանքի և այլն): Վերը նշվածը կատարվել է մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների աճի պայմաններում 8.1 %:

Վերջին տարիներին բարելավվել են նաև տուն-ինտերնատների կոմունալ-կենցաղային պայմանները: Մասնավորապես, 2007-2008թթ. իրականացվել է մասնակի վերանորոգում թիվ 1 տուն-ինտերնատում, Նորքի տուն-ինտերնատում: Հիմնանորոգվել է անօթևանների ժամանակավոր կացարանը, Վարդենիսի նյարդահոգեբուժական տուն-ինտերնատի մի մասնաշենքը:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տուն-ինտերնատներում, տնային պայմաններում սպասարկման կենտրոնում, Վարդենիսի ցերեկային կենտրոնում և անօթևանների ժամանակավոր կացարանում սպասարկվող անձնաց թվաքանակը միջնաժամկետ հատվածում կմնա անփոփոխ՝ պահպանելով 2010 թվականի մակարդակը: Կպահպանվեն նաև բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման միտումները, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեից առանձին հասարակական և բարեգործական կազմակերպություններին պետական աջակցության մակարդակը:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառ

2008թ-ի համեմատ, 2009 թվականին կրճատվել է մանկատներում խնամվող երեխաների թիվը (ՀՀ կառավարության կողմից հաստատված 935 երեխայի փոխարեն մանկատներում 2008 և 2009 թվականներին համապատասխանաբար սպասարկվել են 866 և 835 երեխաներ): Չնայած դրան, նույն ժամանակահատվածում մասնագիտացված մանկատներում նկատվել է սպասարկվող երեխաների թվի աճ (2008 թվականին 370, իսկ 2009 թվականին 378 երեխա): Մանկատներում խնամվող շահառուների թվաքանակի նվազումը հիմնականում պայմանավորված է բնագավառում այլընտրանքային ծառայությունների առկայության

հանգամանքով: Սակայն, հաշվի առնելով մասնագիտացված մանկատների համար հաշվառված երեխաների պահանջը, այդ տարիներին շահառուների թիվը մնացել է անփոփոխ, իսկ բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով աճել են 19.4 % (2008թ. ամբողջ ծրագրին հատկացվել է 1334.1 մլն. դրամ):

Բարելավվել է երեխաների խնամքով զբաղվող հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը, մասնավորապես՝ մեկ խնամվողի մեկ օրվա սննդի գումարի չափը 2009թ-ին 2008թ. համեմատ բարձրացվել է 20%-ով և դարձել 1161.2 դրամ, ինչպես նաև 20-30%-ի սահմաններում բարձրացվել է այդ հաստատությունների աշխատակիցների աշխատավարձը: 2009 թվականին 45 հաստիքային միավորով ավելացել է նաև մանկատների աշխատողների թիվը (2008թ. 809 հաստիքային միավորի դիմաց), շահառուների թիվը թողնելով անփոփոխ:

Բեռնաթափման ծրագրի շրջանակներում 2008 և 2009 թվականներին Լոռու մարզի երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից յուրաքանչյուր տարի 40 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք և կանխարգելվել է 10 երեխայի մուտք հաստատություններ: Այդ ժամանակահատվածում բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով աճել են՝ պայմանավորված բեռնաթափման ընտանիքին տրվող օժադակության փաթեթի ծախսի ավելացմամբ (սննդամթերքի գումարը աճել է 20 % չափով):

Աճել է «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում, աջակցություն ստացող շահառուների թվաքանակը (2008թ-ին 37 և 2009թ. 40 շահառուներ), որոնց ցուցաբերվել է բազմակողմանի աջակցություն, մասնավորապես կրթական, առողջապահական, իրավական, սոցիալ-հոգեբանական: Նախորդ տարիներին բնակարանների գնման գործընթացում բացահայտված բազմաթիվ թերություններով պայմանավորված, 2008 և 2009թթ. չեն գնվել ծրագրով շահառուների համար նախատեսված բնակարանները, արդյունքում այդ նպատակով նախատեսված բյուջետային հատկացումներ չեն կատարվել:

2008թ. սկսած, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել է 2006-2007թթ-ին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ՀՕՖ-ի կողմից համատեղ իրականացվող «Խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման» փորձնական ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության մանկատներից 22 երեխա տեղավորվեցին խնամատար ընտանիքներում: 2009թ. խնամատար ընտանիքներում տեղավորվեցին 23 երեխա: Բյուջետային հատկացումները 2009թ. նախորդ տարվա համետատ, ինչպես մեկ շահառուի, այնպես էլ խնամատար ծնողին տրվող վարձատրության մասով աճել են 28.0 % (2008թ. ամբողջ ծրագրի գծով՝ 15.7 մլն. դրամ) կապված երեխաների տուն-ինտերնատներում մեկ երեխայի (հաշմանդամ երեխայի) ապրուստի համար նախատեսված գումարի չափի և ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի ավելացմամբ:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության մանկատներում, գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություններում, ցերեկային կենտրոններում սպասարկվող անձնաց թվաքանակը միջնաժամկետ հատվածում կմնա անփոփոխ՝ պահպանելով 2010 թվականի մակարդակը: Կպահպանվեն նաև բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման միտումները, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեից առանձին հասարակական և բարեգործական կազմակերպություններին պետական աջակցության մակարդակը:

Զբաղվածության բնագավառ

Չնայած, որ 2006-2008թթ. հանրապետությունում գործազրկության մակարդակը նվազել է (2006-2007թթ. նվազման տեմպը կազմել է 0.107, իսկ 2007-2008թթ. 0.04), սակայն ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված, 2008-2009թթ. նկատվել է գործազրկության մակարդակի 0.4 %-ով աճ (աճի տեմպը կազմել է 0.13): Արդյունքում, 2010թ. հունվարի 1-ի դրությամբ պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը հանրապետությունում կազմել է 7.1 %, 2009թ.-ի տարեսկզբի 6.3%-ի փոխարեն:

Նույն ժամանակահատվածում համանման միտումներ նկատվել են նաև աշխատանք փնտրողների և գործազուրկների թվաքանակում: Մասնավորապես՝ 2006-2008 թթ. աշխատանք փնտրողների թիվը նվազել է (2006-2007թթ., 2007-2008թթ. նվազման տեմպը կազմել է 0.03), իսկ 2008-2009թթ. նկատվել է աշխատանք փնտրողների թվի աճ (աճի տեմպը կազմել է 0.23): Արդյունքում, 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային և մարզային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրող անձանց թվաքանակը կազմել է 99308 մարդ:

Ինչ վերաբերվում է գործազուրկների թվաքանակին, ապա այստեղ նույնպես 2006-2008թթ. նկատվել է գործազուրկների թվաքանակի նվազում (2006-2007թթ. նվազման տեմպը կազմել է 0.13, իսկ 2007-2008թթ.՝ 0.006), իսկ 2008-2009թթ. նկատվել է գործազուրկների թվի աճ (աճի տեմպը կազմել է 0.23): Արդյունքում, 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային և մարզային կենտրոններում հաշվառված գործազուրկներ թիվը կազմել է 84493 մարդ:

Ի տարբերություն վերը նշված միտումների, 2006-2009թթ. ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից զբաղվածության պետական ծրագրերի իրականացմանն ուղղված ծախսերում նկատվել է կայուն աճի միտում: Մասնավորապես՝ 2007թ.-ին 2006թ.-ի նկատմամբ՝ զբաղվածության պետական ծրագրերի իրականացմանն ուղղված ծախսերը ավելացել են 5.1 %-

ով, 2008թ.-ին 2007թ.-ի նկատմամբ՝ 30.4 %-ով, իսկ 2009թ.-ին 2008թ.-ի նկատմամբ՝ 52.6%-ով: Ջբաղվածության պետական ծրագրերի իրականացմանն ուղղված ծախսերի աճի միտումը հիմնականում պայմանավորված է գործազուրկների թվի կտրուկ մեծացմամբ և գործազրկության նպաստին հատկացվող գումարների ավելացմամբ:

2009թ.-ի ընթացքում խորհրդատվություն են ստացել 193280 անձ կամ աճը նախորդ տարվա նկատմամբ կազմում է 33.4 % (2008թ. 144854 անձ): Գործակալության միջնորդությամբ աշխատանքի են տեղավորվել 9394 մարդ, որի 24.7 %-ը երիտասարդներ են: Այդ նույն ժամանակաշրջանում զբաղվածության մարզային և տարածքային կենտրոնների հետ համագործակցող գործատուների թիվը աճել է 20%-ով՝ նախատեսված 15%-ի փոխարեն, զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվածների ցուցանիշը աճել է 26.4 %-ով՝ նախատեսված 10 %-ի փոխարեն (զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվել են աշխատանք փնտրողների 37.7%-ը):

2009թ. տարեսկզբից գործազրկության նպաստի ստացման իրավունք է ձեռք բերել շուրջ 31000 գործազուրկ՝ նախորդ տարվա 21043-ի փոխարեն: Ճգնաժամով պայմանավորված՝ նպաստառու գործազուրկների թիվը աճեց 33.4 % կամ դարձավ շուրջ 22900 մարդ (2008թ. 16673 մարդ), արդյունքում ՀՀ կառավարության կողմից գործազրկության նպաստի համար լրացուցիչ տրամադրվել է 1.5 մլրդ. դրամ:

2008թ. Երևանի “Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն” ՊՈԱԿ-ը ծառայություններ է մատուցել 1549 շահառուի, արդյունքում հիմք է դրվել շահառու տարբեր խմբերին արդյունավետ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ մեթոդական նյութերի և գործիքների մշակմանը, դաշտում առկա հիմնախնդիրների բացահայտմանը, ոլորտով հետաքրքրված կազմակերպությունների հետ գործընկերային հարաբերությունների հաստատմանը: 2009թ կենտրոնն աշխատել է 5000 շահառուի հետ, այդ թվում՝ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի հանրակրթական դպրոցների աշակերտներ, ուսանողներ, աշխատանք փնտրող կամ վերամասնագիտացման կարիք ունեցող երիտասարդներ, ծնողներ: Այսպիսով, շահառուների թվի ավելացմամբ, ինչպես նաև ծառայությունների գծով որակի բարձրացմամբ պայմանավորված, 2009թ. նախորդ տարվա համեմատ բյուջետային հատկացումները ավելացել են 71.7 %, իսկ մեկ շահառուի հաշվով՝ նվազել են 48.5 % (2008թ. 10.3 մլն. դրամ):

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես զբաղվածության բնագավառի շահառուների թիվը կմնա անփոփոխ՝ պահպանելով 2010 թվականակի մակարդակը: Կպահպանվեն նաև բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման միտումները:

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառ

Հաշվի առնելով հաշմանդամների և վերականգնողական պարագաների ստացման հետ կապված 2001-2003 թթ. մեծ հերթերը, սկսած 2004թ. կտրուկ մեծացվեց ՀՀ պետական բյուջեից այս ծառայությունների ֆինանսավորման գծով ծախսերը, որի արդյունքում հերթերը վերացվել են: 2006-2007 թթ. ֆինանսավորումը շարունակել է աճել միջինը տարեկան շուրջ 5.7 տոկոսով, որի պայմաններում հաշմանդամների տրամադրված վերականգնողական պարագաների թիվը աճել է միջինում տարեկան շուրջ 5.3 տոկոսով:

2008-2009 թթ. շեշտադրում է կատարվել պրոթեզների և վերականգնողական պարագաների տեսականու ընդլայնման և որակի բարձրացման վրա:

2009 թ. նախորդ տարվա համեմատությամբ հատկացվել և վերանորոգվել է 15209 պրոթեզաօրթոպեդիկ պարագա (2008թ. 13637 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագայի դիմաց):

2009 թ. պահանջարկից էլնելով նախատեսվել և իրականացվել է 97 աչքի պրոթեզավորում և 120 ձայնաստեղծ սարքի հատկացում 2008թ. 50 աչքի պրոթեզի և 100 ձայնաստեղծ սարքի դիմաց:

Վերը նշվածով պայմանավորված բյուջետային հատկացումները աճել են 15.6 տոկոսով:

«Արթմեդե բժշկական վերականգնողական կենտրոնի տեխնիկական հագեցվածության բարելավմամբ, սպասարկման տեսականու ընդլայնմամբ և բուժման որակի բարձրացմամբ պայմանավորված, վերջին տարիների ընթացքում աստիճանաբար ավելացել է այդ կենտրոնում փաստացի բուժված հիվանդների թիվը (2007թ.՝ 585 հիվանդ, 2008թ.՝ 631 հիվանդ, 2009թ.՝ 723 հիվանդ): Ընդ որում, միայն 2009 թ. բյուջեից կենտրոնին հատկացված գումարների շրջանակներում հնարավոր է եղել բուժել նախատեսվածից մոտ 22 տոկոսով ավելի շատ հիվանդներ (723 հիվանդ՝ նախատեսված 591 հիվանդի փոխարեն), ինչը պայմանավորված է 2009թ. մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջին գնի իջեցմամբ (11.5 հազ. դրամ նախատեսված 13.0 հազ. դրամի դիմաց):

«Սթրես կենտրոնն ՓԲԸ-ում, որտեղ կատարվում է հաշմանդամների հոգեկան առողջության վերականգնում և ստացիոնար բուժում 2008 թ.՝ փաստացի բուժվել են 413 հիվանդներ: 2009 թ. նախորդ տարվա նկատմամբ ՀՀ պետական բյուջեով հատկացված գումարը ավել է եղել 11.5 տոկոսով և նախատեսվել է 392 հիվանդի բուժման համար: Դա պայմանավորված է մեկ հիվանդի մեկ օրվա բուժման ծախսերի աճի հետ (դարձել է 13.0 հազ. դրամ): 2009 թ. հատկացված գումարի շրջանակներում փաստացի հնարավոր է եղել բուժել ավելի շատ թվով հիվանդներ՝ 458, քանի որ 2009թ. իջել է մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջին գինը, դառնալով 11.5 հազ. դրամ:

2006թ. սկսած գործում է «Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ ստառտեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններն ծրագրի: 2008-2009թթ. ծրագրի շրջանակներում կազմակերպվել և կատարվել են հետևյալ աշխատանքներ՝ բրայլյան գրքեր՝ 42336 թերթեր, բրայլյան տետրեր՝ 1000 հատ, Հայաստանի Կույրերի

միավորման օրգան ամենամյա “Բյուլետեն”՝ 74400 թերթեր, “Խոսող գիրք” 1500 ժամ: Բյուջետային հարկացումները մեկ շահառուի հաշվով մնացել են անփոփոխ:

2008թ. սկսած գործում է «Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արևե համակարգով ուսուցում և «Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և պահեստամասերով ապահովում և ծրագրերը: 2008-2009թթ. նրանցում ընդգրկվել են տեսողության խնդիրներ ունեցող 20 հաշմանդամներ, որոնցից 13-ն ուսանողներ են: Բյուջետային հարկացումները մեկ շահառուի հաշվով մնացել են անփոփոխ:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ կպահպանվեն ՀՀ պետական բյուջեից բնագավառում մատուցվող ծառայությունների շրջանակները:

Աշխատանքի պետական կարգավորման բնագավառ

Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի մակարդակը դրսևորել է կայուն աճի միտում, մասնավորապես, 2007 թ. այն սահմանվել է 20000 դրամ՝ աճելով նախկին 15000 դրամ նվազագույն ամսական աշխատավարձի նկատմամբ 33 %-ով, իսկ 2008 և 2009 թթ. այն աճել է համապատասխանաբար 25 % և 20 %-ով:

Աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձի չափը (որը աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների միջին գումարն է մեկ աշխատողի հաշվով) վերջին տարիներին նույնպես դրսևորել է աճի միտում, մասնավորապես, 2007թ. այն հանրապետությունում կազմել է 74227 դրամ (2006թ. -ի նկատմամբ 119.2 % աճ), 2008թ.՝ 87406 դրամ (118.8 % աճ), իսկ 2009թ.՝ այն կազմել է 101895 դրամ (116.6 % աճ):

Արդյունքում, 2006 թ. նվազագույն ամսական աշխատավարձը կազմել է միջին ամսական աշխատավարձի 31.1 %-ը, 2007 թ.՝ 26.6%-ը, 2008 թ.՝ 28.1%, իսկ 2009 թ.՝ 29.4%:

Քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը 2004-2005թթ. սահմանվել է 20000 դրամ: 2006թ. 2004-2005թթ. նկատմամբ այն աճել է 50 %-ով, 2007 թ.՝ 35500 դրամ, աճելով 18.3 %-ով, 2008-2009թթ. այն դարձել է 40000 դրամ՝ աճելով 2007 թ. նկատմամբ 12.7%-ով:

Աշխատանքային պարտավորությունների հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում ստացող անձանց թիվը 2009թ. նվազել է 4%-ով 2008թ. 880 անձի դիմաց՝ մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների 13 տոկոսի աճի պայմաններում (վնասի հատուցման գումարը հաշվարկվում է նվազագույն աշխատավարձի չափից):

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող

առանձին հաստատություններում հաշվարկային միջին ամսական աշխատավարձի չափի շարունակական աճը:

Ժողովրդագրության բնագավառ

2009թ. մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողների թիվը կազմել է 7114 մարդ 2008թ. 6000 մարդու դիմաց, որը պայմանավորված էր նպաստի ամսական չափի փոփոխմամբ, այն հարաբերակցելով տվյալ տարվա ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի հետ՝ 60%: Բյուջետային հատկացումները աճել են 616% յուրաքանչյուր նպաստ ստացողի գծով:

2009թ. երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թիվը կազմել է 45823 մարդ 2008թ. 38303 մարդու դիմաց, կապված ծնելիության աճի տեմպի հետ: Միաժամանակ 2009թ. բարձրացվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը և ներդնվել է երեխայի ծննդյան հաջորդականությամբ պայմանավորված խրախուսման ամբողջական համակարգ: Այսպիսով 2009թ. նպաստի չափը 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան հետ կապված կազմել է 50.0 հազ. դրամ (2008թ. 35.0 հազ. դրամ), իսկ 3-րդ և ավելի երեխա ունենալու դեպքում՝ 430.0 հազ. դրամ: Բյուջետային հատկացումները աճել են 217.1% յուրաքանչյուր նպաստ ստացողի գծով:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ կանխատեսվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թվի աճ, իսկ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողների թիվը կմնա անփոփոխ, պահպանելով 2010 թ. մակարդակը՝ մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների ավելացման պայմաններում:

Անապահով սոցիալական խմբերին պետական աջակցության բնագավառ

Նկատի ունենալով, որ ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմի մեջ մտնում է նաև կենսաթոշակը, վերջինիս մակարդակի բարձրացմամբ պայմանավորված, 2004, 2005 և 2006 թվականների համար իջեցվել է ընտանեկան նպաստի իրավունք տվող սահմանային միավորը՝ 36.00-ից համապատասխանաբար՝ 35.00, 34.00 և 33.00 միավորի: Այդ հանգամանքով պայմանավորված, մեծ թվով ընտանիքներ նշված ժամանակահատվածում պահպանել են ընտանեկան նպաստի իրավունքը՝ չնայած ընտանիքում, նախորդ տարվա ընթացքում եկամուտների մակարդակի արձանագրված աճին:

Փոփոխությունների արդյունքում 2006 թ. հունվարից ընտանեկան նպաստի իրավունքը կենսաթոշակառու անդամ ունեցող շուրջ 4000 ընտանիք կորցնելու փոխարեն 2006 թ. առաջին երեք ամիսների ընթացքում վերահաշվառման արդյունքում այդ իրավունքը կորցրել են միայն 770 միայնակ կենսաթոշակառուներ, իսկ բյուջետային հատկացումները մնացել են անփոփոխ:

2008թ. հունվարի 1-ից ընտանեկան նպաստի սահմանային միավորը սահմանվեց "30.00", որով հնարավորություն ընձեռվեց կենսաթոշակի բարձրացման պայմաններում համակարգում

պահել կենսաթոշակառու ունեցող ընտանիքներին, ընդ որում միայնակ անժառանգ կենսաթոշակառուների համար սահմանվեց ընտանեկան նպաստի ձեռք բերման արտոնյալ պայմաններ՝ մինչև 30 հազար դրամ կենսաթոշակ ունեցող միայնակ անժառանգ կենսաթոշակառուն ձեռք է բերում ընտանեկան նպաստի իրավունք, իսկ 2009 թ. հունվարի 1-ից, պահպանելով 2008թ. սահմանային միավորը, մեղմացվել է եկամուտի ազդեցությունը, ընտանիքի անապահովության միավորը «գրոյանում էե, եթե ընտանիքի յուրաքանչյուր անդամին ընկնող միջին ամսական եկամուտը գերազանցում է 36300 դրամը: Այսպիսով 2009 թ. համար կենսաթոշակի չափի բարձրացման ազդեցությունը սոցիալապես անապահով կենսաթոշակառուների համար՝ ընտանեկան նպաստի իրավունքի որոշման հարցում, չեզոքացվեց, իսկ աշխատունակ (որևէ սոցիալական խումբ չունեցող) անձանց համար՝ նրանց անապահովության միավորն իջեցնելու միջոցով՝ պահպանվեց նույն մակարդակի վրա:

Հաշվի առնելով, որ համակարգում հաշվառումը կամավոր է, ընտանիքն իրեն աղքատ համարելու, ինչպես նաև պետությունից աջակցություն ստանալու ակնկալիք ունենալու պարագայում, կարող է դիմել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու համար, բերված աղյուսակ 9.1-ի տվյալներից երևում է, որ հաշվառված ընտանիքների թիվը կրճատվում է, այն դեպքում, երբ նպաստի միջին ամսական չափը բարձրանում է: Միաժամանակ բարձրանում է նպաստառու ընտանիքների կազմում երեխա ունեցող ընտանիքների տեսակարար կշիռը, ինչը համահունչ է պետության որդեգրած քաղաքականությանը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս երեխաների առաջնահերթության սկզբունքին:

Աղյուսակ 9.1 Ընտանեկան նպաստի ծրագիրը ՀՀ-ում 2005-2009թթ.

	2005	2006	2007	2008	2009
հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	25.42	23.81	22.14	21.54	19.16
նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	64.81	72.25	72.29	73.25	73,4
նպաստառու ընտանիքներ	127167	130190	124689	121160	107492
նպաստառու ընտանիքներ(% ՀՀ ընտանիքների թվից)	16.56	16.95	16.24	15.77	14.1
երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու ընտանիքներից)	69.29	72.20	75.90	76.34	81.33
ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ (մլրդ)	20.0	24.0	26.407	29.388	32.324
Նպաստի միջին չափ	12300	15000	17500	21100	23560

Դեռևս մեծ է ընտանեկան նպաստի ազդեցությունը աղքատության, առավելապես ծայրահեղ աղքատության կրճատման հարցում:

Ըստ ՀՀ ԱՎԾ 2008 թվականի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված տվյալների ընտանեկան նպաստի ծրագրի ազդեցության գնահատականը հետևյալն է.

Ընտանեկան նպաստի միջոցները բաշխվում են աղքատներին և ծրագրի հասցեականությունը բարելավվել է 2004 թվականի նկատմամբ. նպաստառուների 82 %-ը՝ «մինչև ընտանեկան նպաստ» ստանալը սպառման ամենաստորին քվանտիլներից են, որոնք ստանում են ընտանեկան նպաստի բյուջեի 75 %-ը, իսկ 2004 թվականին այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում էին 62.6 % բնակչությանը՝ բյուջեի 66.7 %-ը:

Միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է, որ նպաստառուների թիվը և նպաստի ամսական չափը կմնա անփոփոխ, պահպանելով 2010թ. մակարդակը:

Պատերազմի մասնակիցներին, նրանց ընտանիքներին և առանձին կատեգորիայի քաղաքացիներին պետական աջակցության բնագավառ

«Վետերանների պատվովճարներ և "ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում" ծրագրերի շրջանակներում շահառուներին տրվող վետերանների համար նախատեսված պատվովճար և առանձին հանրային ծառայությունների գծով տրվող դրամական օգնություն ստացող շահառուների թիվը 2009թ. նախորդ տարվա համեմատ փոփոխվել է՝ նվազել է Հայրենական մեծ պատերազմի վետերանների թվաքանակը 15.5% (2008թ. 4646 մարդ), իսկ դրամական օգնություն ստացող զինծառայողների ընտանիքների թիվը աճել է 3.9% (2008թ. 16864 մարդ): 2009թ. հունվարի 1-ից Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին տրամադրվող դրամական օգնության չափը դարձել է 4500 դրամ (2008-ին՝ 3800), հաշմանդամ-վետերաններինը՝ 6800 դրամ (2008-ին՝ 5700), հաշմանդամ դարձած զինծառայողներինը և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներինը՝ 9100 դրամ (2008-ին՝ 7500), զոհված զինծառայողի ընտանիքում 5 և ավելի անդամ ունեցող ընտանիքի հինգից ավելի յուրաքանչյուր անդամի համար լրացուցիչ տրամադրվող դրամական օգնության չափը դարձել է 3000 դրամ (2008թ.-ի 2500դրամ):

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն՝ շահառուների թվի փոփոխության պայմաններում:

Փախստականների հիմնահարցերի բնագավառ

Փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարաններ սպասարկվող շահառուների ընդհանուր թվաքանակը 2008-2009 թ. կազմել է 855 մարդ:

2009թ. նախորդ տարվա համեմատ բարելավվել է ժամանակավոր կացարաններում մատուցվող ծառայությունների որակը, մասնավորապես՝ կատարվել է աշխատողների աշխատավարձի չափի աճ 20% չափով, "Փախստականների կեցության խնդիրների լուծման միջոցառումներ" ծրագրի շրջանակներում "Հատուկ կացարան" ՊՈԱԿ-ում կատարվել է նաև ժամանակավորապես բնակվող շահառուների համար սննդի ծախսերի 20% չափով բարձրացում: Արդյունքում բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով աճել են 15%:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ կպահպանվեն բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման միտումները:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառ

2007-2009թթ. ժամանակահատվածում աճել են ապահովագրական կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցները, ինչն արդյունք է միջին ապահովագրական կենսաթոշակի չափի աճի (2007-2008թթ համար 17.6 %, իսկ 2008-2009թթ՝ շուրջ 60 %, 2007թ. կազմելով 13380 դրամ, 2008 թ.՝ 21842 դրամ, իսկ 2009թ.՝ շուրջ 25686 դրամ): Միջին կենսաթոշակի աճն իր հերթին պայմանավորված է հիմնական կենսաթոշակի բարձրացմամբ (2007 թ. այն կազմել է 4250 դրամ, 2008 թ.՝ 6800 դրամ, իսկ 2009 թ.՝ 8000 դրամ) և ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացմամբ (2007 թ. այն կազմել է 230 դրամ, 2008 թ.՝ 395 դրամ, իսկ 2009թ.՝ 450 դրամ):

2008-2009թթ. կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցների աճը ուղեկցվել է ապահովագրական կենսաթոշակատուների թվաքանակի նվազմամբ՝ 2009թ. 467555 կենսաթոշակատու 2008թ. 469107 կենսաթոշակատուի փոխարեն, կամ 0.33 % պակաս: Կենսաթոշակատուների թվի փոփոխությունների 2008-2009թ.թ. միտումները կապված են այն հանգամանքի հետ, որ կենսաթոշակի իրավունք է ձեռք բերում 1945-1946թթ. ծնված սերունդը:

2007-2009թթ. ժամանակահատվածում աճել են նաև սոցիալական կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցները, ինչն արդյունք է միջին սոցիալական կենսաթոշակի աճի (պայմանավորված է հիմնական կենսաթոշակի չափը համապատասխանաբար 2007թ. 4250 դրամի փոխարեն 6800 դրամ, իսկ 2009 թ. հունվարի 1-ից 8000 դրամ սահմանելու հանգամանքով) և սոցիալական կենսաթոշակատուների թվաքանակի աճի:

Միջին ամսական կենսաթոշակի չափը 2008թ. կազմել է 8765 դրամ (2007թ.՝ 5492 դրամ) կամ աճել է շուրջ 60.0%-ով: Սոցիալական կենսաթոշակատուների թվաքանակը 2007-2009թթ. դրսևորել է կայուն աճի միտում՝ 2007 թ. կազմել է 47140 մարդ (աճը 1.96 տոկոս), 2008 թ.՝ 48632 մարդ (աճը 3.1 տոկոս), իսկ 2009 թ.՝ 50470 մարդ (աճը 3.8 տոկոս):

2008-2009թթ. աճել է սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամներին վճարվող կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցները, ինչն արդյունք է միջին կենսաթոշակի չափի շուրջ 6.6 % աճի (2008 թ.՝ 42533 դրամ, 2009 թ.՝ 45355 դրամ), որն արդյունք է սպայական անձնակազմի պաշտոնական դրույքաչափի աճի, որից հաշվարկվում է կենսաթոշակը: Նշված միտումներն ուղեկցվել են կենսաթոշակատուների թվաքանակի շուրջ 0.4 % նվազմամբ (2008թ.՝ 35485 կենսաթոշակատու, 2009թ.՝ 35377 կենսաթոշակատու):

2008-2009թթ նվազել են շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամներին վճարվող կենսաթոշակներին ուղղված միջոցները, որն ուղեկցվել է կենսաթոշակատուների թվաքանակի նվազմամբ և միջին կենսաթոշակի շուրջ 11 % աճով՝ կազմելով 19728 դրամ: Նման

միտումներն արդյունք են բազային կենսաթոշակի (որից հաշվարկվում են այս կենսաթոշակները) չափի աճի՝ 2009թ. հունվարի 1-ից այն սահմանվել է 5800 դրամ (2008 թ.՝ 5000 դրամ):

2007-2009թթ. նկատվում է կենսաթոշակառուների թվաքանակի նվազման միտում, ինչն արդյունք է այն հանգամանքի, որ կենսաթոշակի իրավունք ունեցողների շարքում են ՀՊՄ մասնակից շարքային հաշմանդամները, ինչպես նաև արցախյան ազատամարտի նահատակների անչափահաս խնամարկյալները, ում թիվը տարեց տարի բնականաբար նվազում է (2007թ.՝ 12009 անձ (նվազումը՝ 13.53 %), 2008թ.՝ 10425 անձ (նվազումը՝ 13.1 %), իսկ 2009թ.՝ 9176 անձ (նվազումը՝ 11.9 %)):

Ժամանակավոր անաշխատունակության նպաստի փաստացի ծախսը 2007-2008 թթ. աճել է 30.5 %-ով (2007 թ.՝ 1806.8 մլն. դրամ)՝ պայմանավորված ժամանակավոր անաշխատունակության օրերի թվի 15.4 %-ով աճով (2007թ.՝ 859130 օր):

2008-2009թթ. աճել են ժամանակավոր անաշխատունակության նպաստին ուղղվող ծախսերը, ինչը պայմանավորված է միջին օրական նպաստի չափի 3.2 % աճով (2008թ.-ի՝ 2376.4 դրամ), և ժամանակավոր անաշխատունակության օրերի թվի 1.2% աճով (2008թ.՝ 992216 օր):

Հղիության և ծննդաբերության նպաստի փաստացի ծախսը 2007-2008 թթ. աճել է 43.0 %-ով (2007 թ.՝ 1610.2 մլն. դրամ) պայմանավորված հղիության և ծննդաբերության նպաստի օրերի թվի աճով 13.1%:

Հղիության և ծննդաբերության նպաստի փաստացի ծախսը 2009 թ. կազմել է 31.2 %-ով ավելի (2008 թ. 2303.7մլն. դրամ), որը պայմանավորված է հղիության և ծննդաբերության նպաստի օրերի թվի աճով (2008-2009թթ.՝ 2.5%-ով) և բնակչության աշխատանքային եկամուտների աճով (որից կախված է նպաստի չափը):

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ կանխատեսվում է կենսաթոշակառուների թվի փոփոխություն և կենսաթոշակի միջին ամսական չափի աճ, ինչպես նաև հղիության և ծննդաբերության ու ժամանակավոր անաշխատունակության նպաստների օրերի թվի և մեկ օրվա նպաստների չափերի աճ:

9.1.3 Ոլորտի հիմնական խնդիրները

Տարեցների հիմնահարցերի բնագավառ

Տարեցների բնագավառում առկա հիմնական խնդիրներն են՝

Տուն-ինտերնատների կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ պահանջարկի մեծացմամբ պայմանավորված, տարեցների շուրջօրյա խնամքի առանձին հաստատությունների (Գյումրիի տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատ ու Վարդենիսի նյարդահոգե-

բանական տուն-ինտերնատ) առկա կարողությունները չեն բավարարում անհրաժեշտ ծավալներով ծառայություններ մատուցելու համար:

Տարեց և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ տրամադրող աշխատակիցների աշխատավարձի չափի ցածր մակարդակով պայմանավորված:

Տարեցների և հաշմանդամների շուրջօրյա խնամքի առանձին հաստատություններում որակյալ ծառայությունների տրամադրման համար չկան պատշաճ պայմաններ (որոշ տուն-ինտերնատների առանձին մասնաշենքեր կապիտալ վերանորոգման կարիք ունեն):

Անօթևան մնացած անձանց համար հանրապետությունում՝ հատկապես Գյումրի քաղաքում ժամանակավոր կացարանների բացակայությունը:

Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող հայեցակարգային փաստաթղթի բացակայությունը:

Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների նոր անհրաժեշտ մոդելների բացակայությունը (համայնքային կենտրոններ, հոսպիսներ, անօթևան մնացած մարդկանց սոցիալական օգնության շարժական կայաններ, սոցիալական տներ, անկողնային հիվանդների համար առանձնացված բաժանմունքներ և այլն)

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառ

Ընտանիքի, կանանց և երեխաների բնագավառում առկա հիմնական խնդիրներն են՝

Չնայած, որ մանկատներում խնամվող երեխաների ընդհանուր թիվը նախորդ տարիների համեմատ պակասել է, այնուամենայնիվ, մասնագիտացված մանկատներում տարեց տարի նկատվում է խնամվող երեխաների թվի աճ, ինչը խնդիրներ է առաջացնում նրանց տեղավորման հարցում: Նման տեղեկեցը պայմանավորված է հանրապետությունում համապատասխան մասնագիտացված այլընտրանքային ծառայությունների (ցերեկային կենտրոններ, վերականգնողական կենտրոններ և այլն) պակասով:

2009թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով Լոռու և Շիրակի մարզի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում կտրուկ ավելացել է երեխաների թիվը և մեծացել է այդ հաստատություններ տեղավորվելու համար հերթագրված երեխաների թիվը:

2008-2009թթ. պետական քաղաքականության վերանայման պատճառով, մանկատների շրջանավարտների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար չեն գնվել բնակարաններ: Արդյունքում այդ երկու տարիների ընթացքում ավելացել է առանց այդ էլ նախորդ տարիներից գոյացած մեծ հերթը և այժմ բնակարանային հերթում հաշվառված մանկատների շրջանավարտների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թիվը հասել է 300-ի:

Զբաղվածության բնագավառ

Զբաղվածության բնագավառում առկա հիմնական խնդիրներն են՝

Աշխատաշուկայում առկա է առաջարկի և պահանջարկի խոշոր անհամապատասխանություն, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին աշխատուժի մասնագիտական որակավորման զգալի անհամապատասխանություն:

Ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված հնարավոր է առկա իրավիճակի վատթարացում՝ պայմանավորված աշխատանքային տարիքի անձանց ներգաղթի ավելացման, աշխատատեղերի հնարավոր կրճատումների ու աշխատանքից ազատումների դեպքերի հնարավոր աճով:

Բարձր է գործազրկությունը երիտասարդների և աշխատաշուկայում անմրցունակ անձանց շրջանում, հանրապետության առանձին տարածաշրջանների միջև առկա է գործազրկության մակարդակի էական տարբերություն:

Մեծ է սովերային զբաղվածությունը և քողարկված գործազրկությունը:

Անկատար է աշխատուժի տեղաշարժի իրավական կարգավորումը:

Գյուղական շրջաններում բնակչությունը թերզբաղված է, իսկ ոչ գյուղատնտեսական զբաղվածությունն ունի անբավարար մակարդակ:

Տնտեսության մեջ կատարվող կառուցվածքային փոփոխություններով և անվերջ նորացող տեխնոլոգիաների ներդրումով պայմանավորված՝ որոշ մասնագիտություններ դառնում են ոչ կիրառելի, առաջանում է նոր մասնագիտությունների պահանջարկ:

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառ

Հաշմանդամների բնագավառի հիմնական խնդիրներն են՝

Հաշմանդամների համար դեռևս մատչելի չեն շատ ծառայություններ, ինչպես նաև ապահովված չեն վերջիններիս հավասար հնարավորությունները:

Հաշմանդամների վերականգնողական որոշ պարագաներն որակապես չեն բավարարում: Որոշ վերականգնողական պարագաներ, որոնք անհրաժեշտ են հաշմանդամների համար, հասանելի չեն վերջիններիս: Վերականգնողական ծրագրերում հիմնականում ընդգրկված են հաշմանդամներ (երիտասարդ հաշմանդամների մոտ վերականգնողական ծրագրերում ընդգրկվածության աստիճանը ցածր է):

Հաշմանդամների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը դեռևս գտնվում է ոչ բավարար մակարդակի վրա:

Աշխատանքի և աշխատավարձի կարգավորման բնագավառ

Աշխատանքի և աշխատավարձի կարգավորման բնագավառի հիմնական խնդիրներն են՝

ՀՀ ողջ տնտեսությունում նվազագույն և միջին ամսական աշխատավարձը գտնվում է ցածր մակարդակի վրա, որը չի ապահովում աշխատողների նվազագույն կենսապայմանները:

Հանրային ծառայության համակարգի առանձին ծառայություններում համանման պաշտոնների համար սահմանված պաշտոնային դրույքաչափերը զգալիորեն տարբերվում են միմյանցից, որը հիմնականում այդ ծառայություններում բազային աշխատավարձերի չափերի տարբերակվածության հետևանք է:

Ժողովրդագրության բնագավառ

Ժողովրդագրության բնագավառում առկա հիմնական խնդիրներն են՝

Շարունակվում է հրատապ մնալ բնակչության ծնելիության բարձրացման և ժողովրդագրական վիճակի բարելավման հարցը:

Անապահով սոցիալական խմբերին պետական աջակցության բնագավառ

Անապահով սոցիալական խմբերին պետական աջակցության բնագավառի հիմնական խնդիրներն են՝

Շարունակում է հրատապ մնալ սոցիալական աջակցության տարբեր ուղղությունների, մասնավորապես ընտանեկան նպաստի հասցեականության բարձրացման հարցը:

Շարունակվում է փոքր մնալ շատ աղքատ բնակչության ներկայացվածությունը համակարգում, որը կարելի է բացատրել ինչպես շատ աղքատ բնակչության պասիվության դրսևորման արդյունք, այնպես էլ պետական մարմինների նկատմամբ վստահության պակասի կամ հանրային իրազեկման աշխատանքների բաց թողումների արդյունք:

Պատերազմի մասնակիցներին, նրանց ընտանիքներին և առանձին կատեգորիայի քաղաքացիներին պետական աջակցության բնագավառ

Պատերազմի մասնակիցներին, նրանց ընտանիքներին և առանձին կատեգորիայի քաղաքացիներին պետական աջակցության բնագավառի հիմնական խնդիրներն են՝

Շարունակվում է հրատապ մնալ պատերազմի մասնակիցների, զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցության բարելավման հարցը:

Փախստականների հիմնահարցերի բնագավառ

Փախստականներին և նրանց ընտանիքներին պետական աջակցության բնագավառի հիմնական խնդիրներն են՝

Շարունակվում է հրատապ մնալ փախստականների և նրանց ընտանիքների բարեկեցության բարելավման հարցը:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառ

Անապահով սոցիալական խմբերին պետական աջակցության բնագավառի հիմնական խնդիրներն են՝

Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին ՀՀ կառավարության քաղաքականության շրջանակներում անընդհատ բարձրացել են կենսաթոշակները, դրանց չափերը ոչ միայն հիմնականում չեն ապահովում բավարար կենսամակարդակ, այլև կենսաթոշակատուների մի սովորական զանգված շարունակում է ստանալ աղքատության գծից (նվազագույն սպառողական զանբյուրի արժեքից) ցածր կենսաթոշակ: Ըստ այդմ, կենսաթոշակատուների մոտ շարունակում է մեծ մնալ աղքատության ռիսկը:

Ոլորտում առկա հիմնական խնդիրներից է նաև միջին աշխատավարձի և միջին կենսաթոշակի հարաբերակցությունը, որի արդյունքում էապես տարբերվում է կենսաթոշակատուների և աշխատող բնակչության կենսամակարդակները, ինչը հանգեցնում է անցանկալի սոցիալական հետևանքների:

Խնդրո առարկա է նաև կենսաթոշակային համակարգի երկարաժամկետ ֆինանսական կայունությունը ապահովելը և անձի եկամուտների և կենսաթոշակի չափի միջև կապի բացակայությունը:

9.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

9.2.1 Նպատակները

Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը:

ՀՀ կառավարության 28.04.2008թ. N 380-Ս որոշման համաձայն, 2008-2012 թվականներին սոցիալական պաշտպանության բնագավառում ՀՀ Կառավարության գործունեությունից ակնկալվող հիմնական արդյունքներն են.

- աղքատության էական հաղթահարումը՝ արդյունքում ապահովելով 11.2 տոկոսից ցածր ընդհանուր աղքատության և 1.6 տոկոսից ցածր ծայրահեղ աղքատության մակարդակ,

- կենսաթոշակների մակարդակի ամենամյա բարձրացումը,
- բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրումը:

2011-2013 թթ. ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում որպես հիմնական խնդիր է դիտարկվում ոլորտում պետական միջամտությամբ իրականացվող հիմնական ծառայությունների և տրանսֆերտների մակարդակի պահպանումը և դրանց շարունակականության ապահովումը:

Ստորև ներկայացված է ՄԺԾԾ ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության ոլորտի նպատակներն ու խնդիրներն ըստ առանձին բնագավառների:

Տարեցների հիմնահարցերի բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է միայնակ և խնամքի կարիք ունեցող տարեց, անօթևան մարդկանց կյանքի որակի բարձրացումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2011-2013թթ միջնաժամկետ հատվածում տարեցների և անօթևանների հիմնահարցերի բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

պետական միջամտությամբ տարեցներին, հաշմանդամներին և անօթևաններին մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը,

տարեցների, հաշմանդամների շուրջօրյա խնամքի, տնային պայմաններում միայնակ տարեցների ցերեկային կենտրոնում շահառուների, անօթևանների սոցիալական սպասարկման ծառայությունների որակի բարելավումը,

տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակումը,

տարեցների և հաշմանդամների խնամքի և սպասարկման ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության խթանումը

Հայրենական մեծ պատերազմի վետերանների, նրանց ընտանիքների և հաշմանդամ դարձած զինծառայողների, զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության բարելավումը:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը և սոցիալական պաշտպանվածության ապահովումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2011-2013թթ միջնաժամկետ հատվածում ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

պետական միջամտությամբ ընտանիքի, կանանց և երեխաների գծով մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը,

երեխաների շուրջօրյա խնամքի, ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության, ինչպես նաև երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայությունների որակի բարելավումը,

մասնագիտացված այլընտրանքային ծառայությունների ցանցի ընդլայնումը (ներառյալ գործող մանկատների վերակազմակերպման եղանակով),

Լոռու և Շիրակի մարզի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների առկա կարողությունների ավելացումը (ներառյալ գործող մանկատների վերակազմակերպման եղանակով):

Զբաղվածության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության նպատակն է բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը: Այն ուղղված է աշխատաշուկայի լարվածությունը մեղմելուն, աշխատանք փնտրողների մրցունակությունը բարձրացնելուն, գործող աշխատատեղերը պահպանելուն, գործատուների կողմից նոր աշխատատեղերի ստեղծմանը խթանելուն և դրանք որակյալ մասնագետներով համալրելուն:

Այդ նպատակին հասնելու համար, 2011-2013թթ միջնաժամկետ հատվածում զբաղվածության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

զբաղվածության բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը,

երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայությունների որակի բարելավումը,

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների տրամադրվող ֆինանսական աջակցության հասցեականության և արդյունավետության բարձրացումը,

մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների մրցունակության բարձրացումը,

հաշմանդամների շրջանում զբաղվածության մակարդակի բարձրացումը:

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է հաշմանդամների առավել ինտեգրումը հասարակությանը:

Այդ նպատակին հասնելու համար, 2011-2013թթ միջնաժամկետ հատվածում հաշմանդամների բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

հաշմանդամների բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը,

հաշմանդամության սահմանման ելրոպական մոդելի անցումը, որը հնարավորություն կընձեռի խթանելու հաշմանդամների աշխատանքային ինտեգրման գործընթացն ու կընդլայնի սոցիալական ներառման հնարավորությունները:

Աշխատանքի և աշխատավարձի կարգավորման բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է աշխատանքի վարձատրության պետական երաշխիքների ապահովումը, աշխատողների իրավունքների օրենսդրական պաշտպանվածության ամրապնդումը և աշխատանքային պայմանների բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2011-2013թթ միջնաժամկետ հատվածում աշխատանքի և աշխատավարձի կարգավորման բնագավառում որպես հիմնական խնդիր սահմանվել է.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը:

Ժողովրդագրության բանագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է բնակչության ծնելիության բարձրացումը, ժողովրդագրական վիճակի բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2011-2013թթ միջնաժամկետ հատվածում ժողովրդագրության բնագավառում որպես հիմնական խնդիր սահմանվել է.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների տրամադրվող նպաստների շարունակականության ապահովումը:

Անապահով սոցիալական խմբերին պետական աջակցության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է բնակչության առանձին անապահով սոցիալական խմբերի կենսամակարդակի բարձրացումը և աղքատության նվազեցումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2011-2013թթ միջնաժամկետ հատվածում անապահով սոցիալական խմբերին պետական աջակցության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող նպաստների շարունակականության ապահովումը,

Պատերազմի մասնակիցներին, նրանց ընտանիքներին և առանձին կատեգորիայի քաղաքացիներին պետական աջակցության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է Հայրենական մեծ պատերազմի վետերանների և հաշմանդամ դարձած զինծառայողների, զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2011-2013թթ միջնաժամկետ հատվածում բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը:

Փախստականների հիմնահարցերի բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության նպատակն է փախստականների սոցիալական վիճակի և կենսապայմանների բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2011-2013թթ միջնաժամկետ հատվածում փախստականների հիմնահարցերի բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող նպաստների շարունակականության ապահովումը,

փախստականների կեցության և սոցիալական խնդիրների լուծման միջոցառումների շրջանակներում մատուցվող ծառայությունների որակի բարելավումը:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է կենսաթոշակի տարիքի անձանց կենսամակարդակի բարձրացումը, ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատողների կորցրած եկամուտների փոխհատուցումը և սոցիալական ծառայությունների ոլորտում անձի հաշվառման և նույնականացման ապահովումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2011-2013թթ միջնաժամկետ հատվածում սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը,

սոցիալական և ապահովագրական կենսաթոշակների գծով հիմնական կենսաթոշակի չափի բարձրացումը,

սպայական անձնակազմի ու շարքային զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների բազային կենսաթոշակների չափերի ավելացումը և համապատասխանեցումը հիմնական կենսաթոշակի չափին:

9.2.2 Գերակայությունները

Միջնաժամկետ հատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական միջամտության գերակա ուղղությունները հետևյալն են՝ ըստ գերակայությունների նվազման հաջորդականության.

N	Միջնաժամկետ հատվածում պետական միջամտության գերակա ուղղությունները	Հիմնավորում
1	Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների մրցունակության բարձրացում	ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի 317 և 320 կետեր:
2	Հաշմանդամների շրջանում զբաղվածության մակարդակի բարձրացում	ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի 578 կետ:
3	Սոցիալական և ապահովագրական կենսաթոշակների գծով հիմնական կենսաթոշակի չափի բարձրացում	ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի 590 կետ:
4	Սպայական անձնակազմի և շարքային զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների բազային կենսաթոշակների չափերի ավելացումը և	ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի

	համապատասխանեցումը հիմնական կենսաթոշակի չափին	590 կետ:
5	Սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարելավում (տուն-ինտերնատների, մանկատների, գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատությունների, ցերեկային կենտրոնների աշխատողների և այլ սոցիալական ոլորտի աշխատողների աշխատավարձի մակարդակի բարձրացում)	
6	ՀՄ պատերազմի վետերաններին, հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին տրվող դրամական օգնության չափերի բարձրացում (գազի սակագնի աճով պայմանավորված)	

Վերոհիշյալ գերակայությունները սահմանվել են ելնելով միջնաժամկետ հատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական միջամտության ուղղություններում կատարված փոփոխություններից:

9.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

9.3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները (ստորև ներկայացված են այն ծրագրերն, որոնց գծով միջնաժամկետ կտրվածքով տեղի կունենան ծախսային սահմանաչափերի փոփոխություններ)

Տարեցների հիմնահարցերի բնագավառ

1. “Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 10.1-ական մլն. դրամ, իսկ 2013թ. 63.1 մլն. դրամ (2010թ.՝ 1350.9 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամով (2010թ.՝ 30.0 հազ. դրամ), որի արդյունքում լրացուցիչ ծախսը կազմում է 2.4 մլն. դրամ, ինչպես նաև գազի սակագնի փոփոխությամբ, արդյունքում ծախսը աճում է 7.7 մլն. դրամով:

բ/ 2013 թ. աշխատողների աշխատավարձի 10% չափի աճով, որի գծով լրացուցիչ ծախսը 2012թ. նկատմամբ կազմում է 52.9 մլն. դրամ, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 67.7 հազ. դրամ (2010թ.՝ 61.3 հազ. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի չորս տուն-ինտերնատներում կխնամվեն տարեկան 1010 միայնակ ծեր և

հաշմանդամ կենսաթոշակառու, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների աճի պայմաններում:

2. “Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում”

ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 0.3-ական մլն. դրամ (2010թ.՝ 91.0 մլն. դրամ), իսկ 2013թ. 7.2 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամով (2010թ.՝ 30.0 հազ. դրամ):

բ/ 2013թ. աշխատողների աշխատավարձի 10% չափի աճով, որի գծով լրացուցիչ ծախսը 2012թ. նկատմամբ կազմում է 6.9 մլն. դրամ, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 46.9 հազ. դրամ (2010թ.՝ 42.5 հազ. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի “Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկման կենտրոնի” ՊՈԱԿ-ի կողմից Երևան քաղաքում կսպասարկվի տարեկան 1500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառու, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների աճի պայմաններում:

3. “Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 0.2-ական մլն. դրամ (2010թ.՝ 15.3 մլն. դրամ), իսկ 2013թ. 1.0 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամով (2010թ.՝ 30.0 հազ. դրամ) և գազի սակագնի փոփոխությամբ:

բ/ 2013թ. աշխատողների աշխատավարձի 10% չափի աճով, որի գծով լրացուցիչ ծախսը 2012թ. նկատմամբ կազմում է 0.9 մլն. դրամ, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 78.3 հազ. դրամ 2010թ. 70.8 հազ. դրամի դիմաց:

Միջնաժամկետ կտրվածքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի “Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ” ՊՈԱԿ-ի կողմից կսպասարկվի տարեկան 50 մարդ, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների աճի պայմաններում:

4. “Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 0.9-ական մլն. դրամ (2010թ.՝ 54.2 մլն. դրամ), իսկ 2013թ. 2.2 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամով (2010թ.՝ 30.0 հազ. դրամ), որի արդյունքում լրացուցիչ ծախսը կազմում է 0.07 մլն. դրամ և գազի սակագնի փոփոխությամբ:

բ/ 2013 թ. աշխատողների աշխատավարձի 10% չափի աճով, որի գծով լրացուցիչ ծախսը 2012թ. նկատմամբ կազմում է 1.4 մլն. դրամ, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 47.2 հազ. դրամ 2010թ. 42.9 հազ. դրամի դիմաց:

Միջնաժամկետ կտրվածքով Երևանի թիվ 1 տուն-ինտերնատին կից անօթևանների ժամանակավոր կացարանում կսասարկվի տարեկան 60 անօթևան մարդ մինչև 60 օր տևողությամբ, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների աճի պայմաններում:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառ

1. "Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011-2012թթ. կազմում է 24.2-ական մլն. դրամ (2010թ. 1681.7 մլն. դրամ) և աճ 2013թ. 65.8 մլն. դրամ: Ծախսերի նվազումը պայմանավորված է.

ա/ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամ (2010թ. 30.0 հազ. դրամ), արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 98.7-ական հազ. դրամ 2010թ. 91.8 հազ. դրամի դիմաց, այդ թվում հատուկ տիպի մանկատների աշխատողների աշտատավարձը 2011-2012թթ. կկազմի 146.3-ական հազ. դրամ 2010թ.՝ 135.0 հազ. դրամի դիմաց

բ/ գազի սակագնի փոփոխության հետ կապված լրացուցիչ ծախսերի ավելացմամբ,

գ/մանկատան վերակազմակերպման հետևանքով ծախսերի նվազմամբ (1 մանկատուն վերակազմակերպվել է գիշերօթիկ հաստատության), արդյունքում 2011-2013թթ. համար հաստիքների թիվը կկազմի 805 մարդ (2010թ. 854 հաստիքի դիմաց), իսկ խմանվողների թիվը՝ 860 մարդ (2010թ. 935 երեխայի դիմաց):

դ/ 2013թ. աշխատողների աշխատավարձի 10% չափի աճով, որի գծով լրացուցիչ ծախսը 2012թ. նկատմամբ կկազմի 89.9 մլն. դրամ: Արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 107.2 հազ. դրամ, այդ թվում հատուկ տիպի մանկատների աշխատողների աշտատավարձը՝ 157.5 հազ. դրամ:

2011-2013թթ. նախատեսվում է 1 մանկատան վերակազմակերպում գիշերօթիկ հաստատության, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածքով խնամվողների թիվը 7 մանկատներում կկազմի 860 երեխա: Այսպիսով բյուջետային հատկացումները համամասնորեն նվազում են մեկ շահառուի հաշվով ծախսերի աճի պայմաններում:

2. "Երեխաների տուն-ինտերնատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում" ծրագրի գծով նախատեսվում է

ծախսերի նվազում, որը 2011-2013թթ. կազմում է 3.8-ական մլն. դրամ (2010թ.՝ 12.8 մլն. դրամ): Ծախսերի նման դինամիկան պայմանավորված է մանկատների երեխաներին հասանելիք գրպանի ծախսերի ընդհանուր մակարդակի նվազմամբ՝ կապված 1 մանկատան վերակազմակերպման գործընթացով, որպես գիշերօթիկ հաստատություն: Միաժամանակ, հաշվի առնելով վերջին տարիների դինամիկան, միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է անձնական մանր ծախսերի համար յուրաքանչյուր տարի գումար տրամադրել 300 երեխայի (150-ը՝ 2000 դրամ՝ 7-12 տարեկան և 150-ը՝ 3000 դրամ՝ 13-18 տարեկան) 2010թ.՝ 440 երեխայի փոխարեն: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով մնացել են անփոփոխ:

3. "ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011-2013թթ. կազմում է 1.0-ական մլն. դրամ (2010թ. 4.3 մլն. դրամ): Ծախսերի նման դինամիկան պայմանավորված է մանկատան շրջանավարտների միանվագ դրամական օգնություն և կրթաթոշակ ստացողների թվի փոփոխությամբ համապատասխանաբար 40 և 10 շահառու (2010թ.՝ 50 և 19 շահառուի դիմաց): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով մնացել են անփոփոխ:

4. "Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայություններ" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 1.3-ական մլն. դրամ (2010թ. 137.6 մլն. դրամ), իսկ 2013թ. 8.9 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ 2011-2012թթ. ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամով (2010թ.՝ 30.0 հազ. դրամ)՝ 0.4 մլն. դրամ և գազի սակագնի փոփոխության հետ կապված ծախսերի աճով 0.9 մլն. դրամի չափով:

բ/ 2013թ. աշխատողների աշխատավարձի 10% չափի աճով, որի արդյունքում լրացուցիչ ծախսը 2012թ. նկատմամբ կկազմի 7.6 մլն. դրամ, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 67.5 հազ. դրամ (2010թ.՝ 61.0 հազ. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով կպահպանվի 2 հոգածության կենտրոնների ծառայություններից օգտվողների թիվը՝ 200 երեխա, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների աճի պայմաններում:

5. "Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 90.4-ական մլն. դրամ (2010թ. 879.3 մլն. դրամ), իսկ 2013թ. 146.0 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի աճով 2.5 հազ. դրամով (2010թ. 30.0 հազ. դրամ) և գազի սակագնի փոփոխությամբ,

բ/ մանկատան վերակազմակերպմամբ, որպես գիշերօթիկ հաստատություն, որի արդյունքում կավելանա գիշերօթիկ հաստատությունների հաստիքների թիվը և կկազմի 637 մարդ (2010թ. 588 հաստիք), ինչպես նաև խնամվողների թիվը` 800 (2010թ. 725 երեխա):

գ/ 2013թ. աշխատողների աշխատավարձի 10% չափի աճով, որի արդյունքում լրացուցիչ ծախսը 2012թ. նկատմամբ կկազմի 55.6 մլն. դրամ, իսկ միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը` 69.5 հազ. դրամ 2010թ. 63.0 հազ. դրամի դիմաց:

2011-2013թթ. նախատեսվում է 1 մանկատան վերակազմակերպում գիշերօթիկ հաստատության, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է 8 գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություններում խնամել 800 երեխա, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների աճի պայմաններում:

10. "Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 0.8-ական մլն. դրամ (2010թ.՝ 879.3 մլն. դրամ), իսկ 2013թ. 1.6 մլն. դրամ: Ծախսերի նման դինամիկան պայմանավորված է 2011թ. և 2013թ. ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափերի աճով 2.5 հազ. դրամով (2010թ. 30.0 հազ. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է խնամատար ընտանիքների և ընտանիքներ տեղափոխվող երեխաների թիվը պահպանել 2010 թվականի մակարդակով (23 ընտանիք և 25 երեխա): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով աճում են:

Զբաղվածության բնագավառ

1. "Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայություններ" ծրագրի գծով 2013թ. նախատեսվում է ծախսերի աճ 1.2 մլն. դրամ-ի չափով (2010թ. 20.7 մլն. դրամ), ինչը կապված է աշխատողների աշխատավարձի չափի 10% աճով: Արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 69.1 հազ. դրամ 2010թ. 62.5 հազ. դրամի դիմաց, բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով աճում են:

2. "Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինասական աջակցություն" ծրագրով 2011թ. նախատեսվում է ծախսերի նվազում 0.9 մլն. դրամի չափով (2010թ. 2.7 մլն. դրամ), որը պայմանավորված է անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար միջին ծախսի նվազմամբ 13.2 հազ.դրամով (2010թ.՝ 27.5 հազ.դրամ): Ի տարբերություն դրա, 2012 և 2013թթ նախատեսվում է ծրագրի գծով ծախսերի աճ (2012թ-ին 0.6 մլն.դրամով, իսկ 2013թ.՝ 0.2 մլն.դրամով), որը պայմանավորված է տարեկան շահառուների թվաքանակի 20-ական մարդով ավելացմամբ: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով մնում են անփոփոխ:

3. "Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կկազմի շուրջ 25.0 մլն. դրամ (2010թ.՝ 64.8 մլն. դրամ), 2013թ.՝ 16.7 մլ. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով աճում են, իսկ շահառուների թիվը մնում է անփոփոխ:

4. "Գործազրկության նպաստ" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011թ. կկազմի 342.8 մլն. դրամ (2010թ. 4536.0 մլն. դրամ), 2012թ.՝ 301.0 մլն. դրամ, իսկ 2013թ.՝ 631.6 մլն. դրամ: Ծախսերի նման դինամիկան պայմանավորված է 2011թ. և 2013թ. ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ (գործազրկության նպաստի չափը հաշվարկվում է ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի 60%-ի չափով), ինչպես նաև նպաստառու գործազուրկների թվի նվազմամբ (2011թ. 20850 մարդ, 2012թ. 20671 մարդ, 2013թ. 20506 մարդ՝ 2010թ. նախատեսված 21000 գործազրկության նպաստ ստացողների թվի համեմատ): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով աճում են:

5. "Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրադված անձանց վերամասնագիտացում" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011թ. կկազմի 0.85 մլն. դրամ (2010թ.՝ 3.4 մլն. դրամ), իսկ 2012-2013թթ.՝ պահպանվել է 2011թ. ծախսերի մակարդակը: Նման դինամիկան պայմանավորված է 2010թ. նախատեսված շահառուների թվաքանակը՝ 5 մարդով նվազելու հանգամանքով (մեկ անձի համար նախատեսված միջին ծախսը կկազմի 170 000 դրամ, պահպանելով 2010թ. մակարդակը):

6. "Գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրադված անձանց մասնագիտական ուսուցում" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011թ. կկազմում է 4.0 մլն. դրամ (2010թ. 232.9 մլն. դրամ), 2012թ.՝ 11.0 մլն. դրամ, իսկ 2013թ.՝ 13.0 մլն. դրամ: Ծախսերի նման դինամիկան պայմանավորված է ծրագրում ընդգրկված շահառուների կանխատեսվող թվի նվազմամբ, ըստ տարիների համապատասխանաբար 24, 41 և 12 մարդով (2010թ. 1370 մարդու նկատմամբ): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով մնում է անփոփոխ:

7. "Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2013թ. կկազմում է 0.8 մլն. դրամ (2010թ.՝ 9.8 մլն. դրամի նկատմամբ): Ծախսերի աճը պայմանավորված է 2013թ. աշխատողների աշխատավարձի 10% չափի աճով: Արդյունքում աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը

կկազմի 69.1 հազ. դրամ 2010թ. 62.8 հազ. դրամի դիմաց, բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով աճում են, իսկ շահառուների թիվը մնում է անփոփոխ:

8. “Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենքի (25.05.2005թ. ՀՕ-206-Ն) 36-րդ հոդվածով նախատեսված նպաստի վճարում” ծրագրի գծով նախատեսվում է 2011թ. և 2013թ. ծախսերի աճ 0.5-ական մլն. դրամի չափով (2010թ. 6.5 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է 2011թ. և 2013թ. նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ 2.5 հազ. դրամով (2010թ.՝ 30.0 հազ. դրամ):

Ժողովրդագրության բանագավառ

1. “Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 145.0-ական մլն. դրամ (2010թ.՝ 1740.5 մլն. դրամ), իսկ 2013թ. 290.1 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է 2011թ. և 2013թ. ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամով (նպաստի ամսական չափը կազմում է ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի 60%):

Միջնաժամկետ հատվածում նպաստառուների թվաքանակը կպահպանվի 2010 թվականի համար սահմանված մակարդակում (2010 թ. նպաստառուների թիվը նախատեսվել է 8058 մարդ, իսկ նվազագույն աշխատավարձը կազմել է 30.0 հազ. դրամ), որի արդյունքում կաճեն մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումները:

2. “Երեխայի ծննդյան միանվագ նպաստ” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011թ. կկազմի 15.1 մլն. դրամ (2010թ.՝ 4276.1 մլն. դրամի դիմաց), 2012թ.՝ 251.7 մլն. դրամ և 2013թ. 500.8 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է նրանով, որ հաշվարկներում հաշվի է առնվել ՀՀ ԱՎԾ վերջին 3 տարվա ծնելիության աճի տեմպը՝ 5.51% (3 և ավելի երեխաների թիվը ընդհանուրի նկատմամբ կազմում է 13.2%), որի արդյունքում երեխաների թիվը կաճի 2011թ.՝ 2237 մարդով (2010թ. 40609 մարդ), իսկ 3 և ավելի երեխաների թիվը կկազմի 5655 մարդ (2010թ. 5910 մարդ), 2012թ. համար նպաստառուների թիվը կկազմի 2360 մարդով ավելի, որից 3 և ավելի երեխաներ՝ 312 մարդ, 2013թ.՝ 2490 մարդով ավելի, որից 3 և ավելի երեխաներ՝ 328 մարդ:

Միջնաժամկետ կտրվածքով նպաստի չափերը կպահպանվեն 2010թ. պետական բյուջեով նախատեսված մակարդակում (1-ին և 2-րդ երեխաների ծննդյան դեպքում 50.0 հազ. դրամ, իսկ 3-րդ և ավելի երեխաների ծննդյան դեպքում 430.0 հազ. դրամ): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կմնան անփոփոխ:

Անապահով սոցիալական խմբերին պետական աջակցության բնագավառ

1. “Անտանկեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն” ծրագրի գծով ծախսերը 2011-2013թթ. համար տարեկան կազմում են 35670.9 մլն. դրամ, պահպանելով 2010թ. պետական

բյուջեի մակարդակը (01.05.2010թ. բարձրացել է նպաստի ամսական չափը՝ 26.9 հազ. դրամ 23.4 հազ. դրամի դիմաց գազի սակագնի փոփոխությամբ պայմանավորված): 2011-2013թթ. նպաստառուների թիվը նույնպես կպահպանվի 2010թ. պետական բյուջեով նախատեսված մակարդակում (110.7 հազ. ընտանիք), ինչպես նաև անփոփոխ կմնա նպաստի ամսական չափի տարբերակման սկզբունքը: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կմնան անփոփոխ:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառ

1. "Սպայական անձնակազմի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011թ. կկազմի 156.5 մլն. դրամ (2010թ.՝ 20163.3 մլն. դրամի դիմաց), 2012թ.՝ 270.4 մլն. դրամ, իսկ 2013թ.՝ 500.9 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ 2010թ. համար բազային ցուցանիշների ճշգրտմամբ (առանձին ուժային կառույցներում տեղի է ունեցել զինծառայողների թվաքանակի աճ կամ նվազում), արդյունքում ընդհանուր թվաքանակը նվազում է 151 մարդով: Կենսաթոշակառուների նախորդ տարիների դինամիկայից ելնելով (կենսաթոշակառուների թվի աճի տեմպը կազմում է շուրջ 3.0%) հաշվարկվել է, որ կենսաթոշակառուների թիվը ըստ տարիների կկազմի 2011թ.՝ 36333 մարդ, 2012թ.՝ 36803 մարդ, իսկ 2013թ.՝ 37281 մարդ (2010թ.՝ 36484 մարդու դիմաց):

բ/ բազային կենսաթոշակի չափի փոփոխությամբ

Միջնաժամկետ կտրվածքով կբարձրացվի բազային կենսաթոշակի չափը (բազային կենսաթոշակի չափը կհավասարեցվի հիմնական կենսաթոշակի չափին) ըստ տարիների կկազմի 2011թ.- 2012թթ.՝ 10500 դրամ, իսկ 2013թ.՝ 13000 դրամ (2010թ. պետական բյուջեով հաստատված 5800 դրամի դիմաց): Արդյունքում միջին ամսական կենսաթոշակի չափը, առանց թաղման նպաստի և վճարման ծառայության ծախսերի, 2011թ. կկազմի 45198 դրամ (2010թ.՝ 44764 դրամի դիմաց), 2012թ.՝ 45231 դրամ և 2013թ.՝ 45538.3 դրամ:

2. "Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011թ. կազմում է 197.2 մլն. դրամ (2010թ.՝ 2864.1 մլն. դրամ), 2012թ. նվազումը կազմում է շուրջ 177.0 մլն. դրամ, իսկ 2013թ. այն աճում է 217.4 մլն. դրամով: Ծախսերի փոփոխությունները պայմանավորված է.

ա/ նախորդ տարիների շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների թվաքանակի նվազման դինամիկայից ելնելով, 2011թ. - 2013թ. համար իրականացվել է տվյալ խմբի կենսաթոշակառուների թվաքանակի նվազումներ 2010թ.՝ 9698 մարդ և 01.01.2010թ. դրությամբ առկա թվաքանակի՝ 8576 մարդ տարբերության շուրջ, այն է. 2010թ.՝ 1122 մարդ, իսկ 2011-2013թթ.՝ 600-ական մարդ:

բ/ բարձրացվել է բազային կենսաթոշակի չափը (բազային կենսաթոշակի չափը հավասարեցվել է հիմնական կենսաթոշակի չափին) ըստ տարիների կկազմի 2011թ.-2012թթ.՝ 10500 դրամ (2010թ. 5800 դրամ), 2013թ.՝ 13000 դրամ, արդյունքում միջին ամսական կենսաթոշակի չափը, առանց թաղման նպաստի և վճարման ծառայության ծախսերի, ըստ տարիների համապատասխանաբար կկազմի 24225.1 դրամ (2010թ.՝ 19728.2 դրամ), 24198.6 դրամ, 24628.0 դրամ:

3. “Սոցիալական կենսաթոշակներ” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 2086.0-ական մլն. դրամ (2010թ.՝ 6514.4 մլն. դրամ), 2013թ.՝ 2047.0 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ հիմք է ընդունվել 2010թ. պետական բյուջեի հաշվարկներով նախատեսված սոցիալական կենսաթոշակառուների թվաքանակը (50124 մարդ) և կանխատեսվող միջին տարեկան թվաքանակի աճը՝ 1.2% (616 մարդ),

բ/ գազի սակագնի բարձրացմամբ պայմանավորված, 01.11.2010թ.-ից հիմնական կենսաթոշակի չափը աճեց և կազմեց 10500 դրամ (2010թ.՝ 8000 դրամ), իսկ 2013թ.՝ 13000 դրամ:

4. “ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակներ” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011թ. կազմում է 11.9 մլն. դրամ (2010թ.՝ 413.8 մլն. դրամ), 2012-2013թթ. 59.1 մլն. դրամ, 24.7 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է դատավորների թվաքանակի ավելացմամբ 2011թ. 6 մարդով, իսկ 2013թ. ևս 3 մարդով:

5. “Ապահովագրական կենսաթոշակներ” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. համապատասխանաբար կազմում է 16085.6-ական մլն. դրամ (2010թ.՝ 148015.6 մլն. դրամ), 2013թ.՝ 15937.2 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ հաշվարկների համար հիմք է ընդունվել 01.01.2010թ. դրությամբ շահառուների առկա թվաքանակը՝ 467555 մարդ,

բ/ գազի սակագնի բարձրացմամբ պայմանավորված՝ 01.11.2010թ.-ից հիմնական կենսաթոշակի չափը բարձրացվել է 2500 դրամով (2010թ.՝ 8000 դրամ), իսկ 2013թ. այն կկազմի 13000 դրամ:

գ/ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը 2011-2013թթ. կպահպանվի 2010թ. մակարդակով (450 դրամ):

Արդյունքում միջին ամսական կենսաթոշակի չափերը, առանց թաղման նպաստի և վճարման ծառայության ծախսերի, կկազմեն՝ 2011-2012թթ.՝ 28293.7-ական դրամ (2010թ.՝ 25738.4 դրամ), իսկ 2013թ.՝ 30906.9 դրամ:

6. “Հղիության և ծննդաբերության նպաստի վճարում” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 197.6-ական մլն. դրամ (2010թ. 2047.3 մլն. դրամ),

2013թ. 200.0 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է միջին օրական նպաստի չափի բարձրացմամբ (107.5 դրամ), հղիության և ծննդաբերության օրերի թվի ավելացմամբ (43154 օր) կապված ծնելիության աճով: Ծախսերի հաշվարկներում պահպանվել է հղիության և ծննդաբերության փաստացի օրերի աճի տեմպը 4.5% ու հղիության և ծննդաբերության միջին օրական նպաստի չափի աճի տեմպը՝ 5.1 %, արդյունքում միջին օրական նպաստի չափը 2011-2012թթ. կկազմի 2220.2 դրամ (2010թ. 2112.7 դրամ): 2013թ. նախատեսվում է միջին աշխատավարձի չափի 10 %-ով բարձրացում, որով պայմանավորված հղիության և ծննդաբերության միջին օրական նպաստի չափը կաճի 197.6 դրամով: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն:

7.“Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարում” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2013թթ. կազմում է 199.8 մլն. դրամ (2010թ.՝ 2363.1 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է ժամանակավոր անաշխատունակության օրերի աճով՝ 65943 օր (2010թ.՝ 941468 օր) և միջին օրական նպաստի չափի բարձրացմամբ՝ 23 դրամ (2010թ.՝ 2699 դրամ): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն:

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառ

1.“Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2013թթ. կազմում են 1.0-ական մլն. դրամ (2010թ.՝ 857.5 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական և վերանորոգման պարագաների անհրաժեշտ պահանջով, ընդամենը՝ 13945 պարագա 2010թ. 13801 դիմաց, կամ 144 պարագաներով ավելի, առանձին պարագաների գնի փոփոխության պայմաններում: Այսպիսով 2011-2013թթ. համար նախատեսվում է.

ա) արտադրել և բաշխել 12498 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա (5099 պրոթեզաօրթոպեդիկ և 7399 վերականգնողական)՝ 748.8 մլն. դրամ,

բ) կատարել 1257 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագայի վերանորոգում՝ շուրջ 69.0 մլն. դրամ,

գ) ձեռք բերել ձայնաստեղծ սարքեր՝ 100 հատ՝ 35.0 մլն. դրամ,

դ) կատարել 90 աչքի պրոթեզ՝ 5.9 մլն. դրամ:

2.“Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց “Արև” համակարգով ուսուցում” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011-2013թթ. կազմում է 3.9-ական մլն. դրամ (2010թ. 7.7 մլն. դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է ծրագրի շահառուների (հաշմանդամների) թվի նվազմամբ 10 մարդով (2010թ.՝ 20 շահառու): Մեկ շահառուի ուսուցման գինը կպահպանվի 2010թ. պետական բյուջեով նախատեսված մակարդակում:

3. “Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և պահեստամասերով ապահովում” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011-2013թթ. կազմում է 4.3-ական մլն. դրամ (2010թ.՝ 8.5 մլն. դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է ծրագրի շահառուների (հաշմանդամների) թվի նվազմամբ 10 մարդով (2010թ.՝ 20 շահառու): Մեկ շահառուի ուսուցման գինը կպահպանվի 2010թ. պետական բյուջեով նախատեսված մակարդակում:

4. “Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011-2013թթ. կազմում է 8.4-ական մլն. դրամ (2010թ. 119.2 մլն. դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է.

ա/ 2011-2013թթ. նախատեսվում է բաշխել 1300 լսողական սարք 2010թ. 1318 դիմաց: Համաձայն ՀՀ Կառավարության 2007 թ. ապրիլի 12-ի թիվ 453-Ն որոշման՝ լսողական սարքերը հատկացվում են երեք տարին մեկ անգամ, ինչպես նաև առաջին անգամ լսողական սարքի կարիք ունեցող, ինչպես նաև հաջորդ տարվա 1-ին եռամսյակում լսողական սարք ստացող հաշմանդամներին, այսպիսով.

- ռուսական արտադրության լսողական սարքերի պահանջը կկազմի 1100 հատ՝ 36,3 մլն. դրամ,

- եվրոպական արտադրության լսողական սարքերի պահանջը կկազմի 200 հատ՝ շուրջ 16.0 մլն. դրամի և 200 հատ ներդիր մինչև 12 տարեկան երեխաների համար 2.5 մլն. դրամի չափով (19-25 տարեկան հաշմանդամ երիտասարդներին և առաջին անգամ ստացողներին, ինչպես նաև հնարավորություն կընձեռվի ավելի բարձր /մինչև 25 տարեկան/ տարիքի երիտասարդ հաշմանդամներին նրանցով ապահովելու:

բ/ 2011-2013թթ. սայլակների թվի պահանջը կկազմի 400 հատ՝ 56.0 մլն. դրամ (2010թ. 450 հատ), որը կապված է համաձայն ՀՀ կառավարության N453-Ն որոշման սայլակները տրվում են երեք տարիին մեկ անգամ, առաջին անգամ սայլակի կարիք ունեցող հաշմանդամներին, ինչպես նաև հաջորդ տարվա 1-ին եռամսյակում սայլակ ստացող հաշմանդամներին: Նշված չափաքանակով սայլակների առկայությունը հնարավորություն է տալիս հաշմանդամներին սայլակներն ստանալ անմիջապես՝ առանց հերթերի:

Աշխատանքի և աշխատավարձի կարգավորման բնագավառ

1. “Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011թ. կազմում է շուրջ 2.5 մլն. դրամ (2010թ.՝ 87.5 մլն. դրամ), 2012թ. նվազում է 10.6 մլն. դրամ, իսկ 2013թ. աճում է 7.4 մլն. դրամ: Ծախսերի փոփոխությունները

պայմանավորված են նրանով, որ 2011-2013թթ. հաշվարկների համար հիմք է ընդունվել 2010թ. հունվարի 1-ի դրությամբ առկա շահառուների թվաքանակը (802 մարդ), որը 2010թ. հաստատվածի նկատմամբ նվազել է 39 մարդով: Միաժամանակ հաշվի է առնվել 2011 և 2013թթ. ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի կանխատեսվող բարձրացումները:

Պատերազմի մասնակիցներին, նրանց ընտանիքներին և առանձին կատեգորիայի քաղաքացիներին պետական աջակցության բնագավառ

1. "Վետերանների պատվովճարներ" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011թ. նկատմամբ կկազմի 147.4 մլն. դրամ (2010թ.՝ 848.2 մլն. դրամ), պայմանավորված վետերանների թվաքանակի նվազմամբ 614 մարդով, 2012թ. համար նվազումը կկազմի 89.5 մլն. դրամ, պայմանավորված թվաքանակի 373 մարդով նվազմամբ, 2013թ.՝ կնվազի 120.5 մլն. դրամով, պայմանավորված թվաքանակի 502 մարդով նվազմամբ: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կմնան անփոփոխ:

2. "ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011-2013թթ. համապատասխանաբար կազմում են 414.9 մլն.դրամ (2010թ.՝ 2753.7 մլն. դրամ), 33.8 մլն.դրամ և 46.2 մլն.դրամ, որը պայմանավորված է ՀՄ պատերազմի վետերանների հատուցում ստացող անձանց թվաքանակի նվազմամբ համապատասխանաբար 1120 մարդ, 402 մարդ, 509 մարդ և հանրային առանձին ծառայությունների սակագնի թանկացման հետ կապված ամսական հատուցման չափերի բարձրացմամբ: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն:

Փախստականների հիմնահարցերի բնագավառ

1. "Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 0.21-ական մլն. դրամ (2010թ.՝ 16.9 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ և 2013թ հանրակացարաններում աշխատողների աշխատավարձի չափի 10% աճով (1.0 մլն. դրամ):

2. "Փախստականների կեցության խնդիրների լուծման միջոցառումներ" ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 0.7-ական մլն. դրամ (2010թ.՝ 11.2 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ և 2013թ. կացարանի աշխատողների աշխատավարձի չափի 10% աճով (0.3 մլն. դրամ): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում ընգրկված այլ ծրագրեր

1. **“Ապահովագրական կենսաթոշակների վճարման հետ կապված փոստային ծառայությունների ձեռքբերում”** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2013թթ. համապատասխանաբար կազմում են 264.3 մլն. դրամ (2010թ. 2312.5 մլն. դրամ), 2012թ.՝ 0.95 մլն. դրամ, 2013թ.՝ 258.3 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է կենսաթոշակների վճարմանը ուղղված ընդհանուր ծախսերի ավելացմամբ (հաշվարկվում է ընդհանուր ծախսերի 1.4%-ի չափով):

2. **“Սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ”** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2013թթ. կազմում են համապատասխանաբար 63.3 մլն. դրամ (2010թ. 524.2 մլն. դրամ), 65.6 մլն. դրամ, 74.7 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է առանձին նպաստների վճարմանը ուղղված ընդհանուր ծախսերի ավելացմամբ:

3. **“Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման հետ կապված վճարման ծառայություններ”** ծրագրի գծով 2011թ. և 2013թ. նախատեսվում է ծախսերի աճ 0.03 մլն. դրամ, 0.1 մլն. դրամ, իսկ 2012թ. նվազում 0.1 մլն. դրամ, որը պայմանավորված է հիմնական ծրագրի գծով նախատեսված ծախսերի փոփոխությամբ:

3. **“Վետերանների պատվովճար և ՀՀ պատերազմի վետերաններին ու 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված անձանց ընտանիքներին դրամական օգնության տրամադրման հետ կապված վճարման ծառայություններ”** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011թ. կազմում է 0.4 մլն. դրամ, 2012-2013թթ.՝ 1.3-ական մլն. դրամ (2010թ. 16.6 մլն. դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է հիմնական ծրագրերի գծով նախատեսված ծախսերի նվազմամբ:

4. **“ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 03.11.2007թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցում”** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 0.1-ական մլն. դրամ (2010թ. 1.7 մլն. դրամ), իսկ 2013թ.՝ 0.3 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ:

5. **“Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց միանվագ դրամական փոխհատուցում”** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011-2013թթ. համապատասխանաբար կազմում է 0.5 մլն. դրամ (2010թ. 1.0 մլն. դրամ), 0.8 մլն. դրամ,

0.9 մլն. դրամ: Ծախսերի նվազումը պայմանավորված է միանվագ դրամական փոխհատուցում ստացող անձանց թվաքանակի ըստ տարիների 40, 20, 10 մարդով նվազմամբ (2010թ.՝ 83 մարդ):

6. “Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 0.3-ական մլն. դրամ (2010թ. 84.5 մլն. դրամ), իսկ 2013թ. 6.7 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամով (2010թ.՝ 30.0 հազ. դրամ):

բ/ 2013 թ. աշխատողների աշխատավարձի 10% չափի աճով, որի գծով լրացուցիչ ծախսը 2012թ. նկատմամբ կազմում է 6.5 մլն. դրամ, արդյունքում հաստիքային աշխատողների գծով միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 75.5 հազ. դրամ 2010թ. 68.6 հազ. դրամի դիմաց:

Միջնաժամկետ ժամանակաշրջանում նախատեսվում է ծրագրի շրջանակներում վերապատրաստել համակարգի 700 աշխատողների և իրականացնել 6 թեմատիկ աշխատանքներ (4 հետազոտական ու 2 ձեռնարկների մշակման աշխատանքներ):

7. “Թրաֆիկինգի գոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2011-2012թթ. կազմում է 6.9-ական մլն. դրամ (2010թ. 84.5 մլն. դրամ), իսկ 2013թ. 8.5 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ կենտրոնի ամբողջ ծախսերը ՀՀ պետական բյուջեից իրականացնելու հետ (2010թ.՝ “Ամբոր” ՀԿ հետ միասին ծախսերը կատարվել են 5 ամսվա համար 50% չափով, իսկ 7 ամսվա համար՝ 100% չափով):

բ/ 2013 թ. աշխատողների աշխատավարձի 10% չափի աճով, որի գծով լրացուցիչ ծախսը 2012թ. նկատմամբ կազմում է 1.6 մլն. դրամ, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 72.9 հազ. դրամ 2010թ. 66.2 հազ. դրամի դիմաց:

2011-2013թթ. կենտրոնի կողմից նախատեսվում է ծառայություն մատուցել 8 մարդու համար (թրաֆիկինգի գոհերի ժամանակավոր տեղավորման ժամկետները որոշվելու են խիստ անհատապես, բայց ոչ ավել, քան 60 օր): Միջնաժամկետ կտրվածքով բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով աճելու են 2011-2012թթ. 26.4 %, իսկ 2013թ. 2012թ. նկատմամբ՝ 5%:

8. “Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում 2011-2013 թթ. ընդհանուր հատկացումները համապատասխանաբար կազմում են 220.0 մլն. դրամ,

442.6 մլն. դրամ, 490.0 մլն. դրամ (2010թ. 343.8 մլն. դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է ծրագրի շրջանակներում նախատեսված շինարարական աշխատանքների ավարտմամբ:

9. “Միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին” ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 2011-2012թթ. 170.9-ական մլն. դրամով (2010թ. 211.0 մլն. դրամ), իսկ 2013թ. 2012թ. նկատմամբ 90.9 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին տրամադրվող միանվագ սոցիալական ապահովագրության վճարների հիմքում դրված ՀՀ օրենսդրության սահմանված կենսաթոշակի բազային չափի աճով և համապատասխանեցնելով հիմնական կենսաթոշակի չափին՝ 2011-2012թ. 10500 դրամ, 2013թ. 13000 դրամ (2010թ. հիմնական կենսաթոշակի չափը՝ 8000 դրամ):

ԱՐՏԱՔԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՍԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի շրջանակներում նախատեսվում է սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող լրացուցիչ աշխատանքներ կատարել հիմնականում կենսաթոշակային բարեփոխումների, սոցիալական աջակցության ավելի արդյունավետ և կայուն համակարգ ստեղծելու ուղղությամբ:

Նոր ծրագրեր

1. **“Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպում”** ծրագիր: Զբաղվածության տարածքային կենտրոններում տարեկան հաշվառվում են շուրջ 4000 շրջանավարտ, որոնք աշխատանքային ստաժ չունենալու պատճառով դժվարությամբ են տեղավորվում աշխատանքի, քանի որ գործատուն աշխատանքի ընդունելիս նախապատվությունը տալիս է փորձառու մասնագետին (գործազրկության մակարդակը երտասարդների շրջանում ըստ ԱՎԾ-ի կազմում է 1.3%, ԶՊԾ-ում հաշվառված երիտասարդների թվաքանակը կազմում է շուրջ 16000 մարդ): Նախատեսվում է գործազուրկ երիտասարդների 1.3%-ին ընդգրկել այս ծրագրում (մեկ անձի համար մասնագիտական փորձի ձեռք բերման միջին տևողությունը հաշվարկվում է 3 ամիս, իսկ գումարը 178.2 հազ. դրամ: Միաժամանակ նախատեսվում է ծրագրում ընդգրկվածին տրամադրել աշխատավարձ՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափով, ուսուցանող անձին՝ փոխհատուցում միջին ամսական աշխատավարձի 20%-ի չափով, իսկ գործատուին տրամադրվում է գումար՝ սոցվճարի չափով): 2011-2013թթ. ծրագրի ծախսը համապատասխանաբար կկազմեն 35.6 մլն. դրամ, 78.0 մլն. դրամ, 126.0 մլն. դրամ:

2. “Կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցում” ծրագրի նպատակն է հաշմանդամներին աշխատանքային ունակությունների վերականգնման, մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության, մասնագիտական ուսուցման արդյունքում գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման միջոցով աշխատանքի տեղավորում: Զբաղվածության պետական ծառայության տարածքային կենտրոններում հաշվառված հաշմանդամների թվաքանակը կազմում է 1600, որից 2009թ. ընթացքում աշխատանքի է տեղավորվել միայն 131 մարդ, որից 107-ը “Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին” ծրագրի շրջանակում): Հանրապետությունում հաշվառված հաշմանդամների թվաքանակը կազմում է 171.0 հազ. մարդ, որի 61% աշխատանքային տարիքի են և նրանցից զբաղված են միայն մինչև 8 %-ը: 2011-2013թթ. նախատեսվում է ծախս 4.0, 11.0 և 13.0 մլն. դրամի չափով (մեկ անձի համար աշխատատեղի հարմարեցման նպատակով նախատեսվում է 200.0 հազ. դրամ):

Աղյուսակ 9.2 Նոր ծրագրերի ֆինանսավորումը 2011-2013թթ.

(մլն. դրամ)

	2011թ.	2012 թ.	2013 թ.
Սոցիալական պաշտպանություն	267123.4	267220.5	287110.5
նոր ծրագրեր, այդ թվում	39.6	89.0	139.0
1.Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպում	35.6	78.0	126.0
2.Կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցում	4.0	11.0	13.0
% ոլորտի նկատմամբ	0.01	0.03	0.05
գոյություն ունեցող ծրագրեր	267083.8	267131.5	286971.5
% ոլորտի նկատմամբ	99.99	99.97	99.95

Աղյուսակ 9.3 Պետական բյուջեից սոցիալական պաշտպանության գծով ծախսերը 2009-2013 թթ.

(մլն. դրամ)

Բաժնի/խմբի անվանումը	2009թ.	2010թ.	% փոփ.	2011թ.	% փոփ.	2012թ.	% փոփ.	2013թ.	% փոփ.
Այն կազմում է ՀՆԱ-ի նկատմամբ %-ը	7.6	7.5	x	7.5	x	7.0	x	6.9	x
Սոցիալական պաշտպանություն,այդ թվում	240487.6	241073.9	0.2	267123.4	10.8	267220.5	0.0	287110.5	7.4
Վատառողջություն և անաշխատունակություն	1296.4	1274.7	-1.7	1261.6	-1.0	1250.9	-0.8	1258.3	0.6
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի	0.5	0.5	-1.9	0.5	-10.7	0.5	-0.9	0.4	-6.4

մեջ, %									
Ծերություն	177552.3	179639.8	1.2	198187.6	10.3	198340.1	0.1	217128.0	9.5
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	73.8	74.5	0.9	74.2	-0.4	74.2	0.0	75.6	1.9
Հարագատին կորցրած անձինք	139.5	178.8	28.1	179.3	0.3	179.3	0.0	179.9	0.3
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	0.1	0.1	27.8	0.1	-9.5	0.1	0.0	0.1	-6.6
Ընտանիքի անդամներ և զավակներ	41839.8	42528.5	1.6	47771.0	12.3	48007.6	0.5	48846.8	1.7
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	17.4	17.6	1.4	17.9	1.4	18.0	0.5	17.0	-5.3
Գործազրկություն	5303.7	5597.9	5.5	5999.7	7.2	6000.9	0.0	6398.3	6.6
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	2.2	2.3	5.3	2.2	-3.3	2.2	0.0	2.2	-0.8
Բնակարանային ապահովում	4102.7	843.8	-79.4	720.0	-14.7	942.6	30.9	990.0	5.0
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	1.7	0.4	-79.5	0.3	-23.0	0.4	30.9	0.3	-2.2
Մոցիլական հատուկ արտոնություններ(այլ դասերին չպատկանող)	5176.0	5170.8	-0.1	5439.1	5.2	5315.5	-2.3	5151.4	-3.1
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	2.2	2.1	-0.3	2.0	-5.1	2.0	-2.3	1.8	-9.8
Մոցիլական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	5077.1	5839.5	15.0	7565.2	29.6	7183.6	-5.0	7157.9	-0.4
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	2.1	2.4	14.7	2.8	16.9	2.7	-5.1	2.5	-7.3
վարկային ծրագիր, այդ թվում	235.1	28.7	-87.8	1220.1	4155.4	836.8	-31.4	336.8	-59.7
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	0.1	0.0	-87.8	0.5	3740.4	0.3	-31.4	0.1	-62.5
ընթացիկ ծախսեր, այդ թվում	235864.4	240102.4	1.8	266288.4	10.9	266162.9	0.0	286005.5	7.5
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	98.1	99.6	1.5	99.7	0.1	99.6	-0.1	99.6	0.0
կապիտալ ծախսեր,	4623.1	971.4	-79.0	835.0	-14.0	1057.6	26.7	1105.0	4.5

այդ թվում									
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	1.9	0.4	-79.0	0.3	-22.4	0.4	26.6	0.4	-2.8

ԳԼՈՒԽ 10. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

10.1. ՄՇԱԿՈՒՅԹ

10.1.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10.1.1.1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը և վերջին տարիների զարգացման միտումները

Մշակույթի ոլորտում ընդգրկված պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները ՀՀ Կառավարության վարած մշակութային քաղաքականությանը համապատասխան՝ իրականացնում են մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, արվեստի ստեղծագործությունների ստեղծման և տարածման, մշակութային միջոցառումների իրականացման, ստեղծագործական ներուժի վերարտադրման պայմանների ապահովման և այլ ծառայություններ:

ՀՀ կառավարության մշակութային քաղաքականությունը մշակվում է ոլորտի պետական լիազոր (գլխադասային) մարմնի ՀՀ մշակույթի նախարարության կողմից և իրականացվում է 82 պետական ոչ առևտրային կազմակերպությունների, 7 գերատեսչությունների, 10 մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի կողմից և 60-ից ավելի հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով կիրականացվեն 28 մշակութային ծրագիր:

Պետական մշակութային քաղաքականության ուղղություններն են՝

✓ *մշակութային ժառանգության պահպանություն*

Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում գտնվող մշակութային արժեքների և պատմամշակութային հուշարձանների հաշվառում, գիտական ուսումնասիրությունների իրականացում, ՀՀ մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանություն, դրանց նպատակային օգտագործում և հանրահռչակում:

✓ *ժամանակակից արվեստի զարգացում և տարածում*

պետական և հասարակական կազմակերպություններին աջակցություն՝ ստեղծագործական ծրագրերի իրականացման նպատակով, անհատների ստեղծագործական գործունեության խթանում, երիտասարդ ստեղծագործական ներուժի բացահայտում, մշակութային ենթակառուցվածքների զարգացում՝ նյութատեխնիկական և մասնագիտական բազայի արդիականացմամբ:

✓ *մշակույթի համաչափ զարգացում*

մշակույթի ապակենտրոնացման (ղեպի մարզեր) քաղաքականության շարունակականության ապահովում, մարզերում մշակութային կյանքի աշխուժացում, միջմարզային կապերի ամրապնդում, մարզերից բնակչության արտահոսքի կանխում,

մշակութային ծառայություններից օգտվելու և մշակութային գործունեության իրականացման ապահովում.

✓ միջազգային համագործակցության ընդլայնում

արտերկրի հետ մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնման ու խորացման միջոցով մշակութային ժառանգության պահպանություն և ժամանակակից արվեստի մատչելիության ապահովում, արտերկրում Հայաստանի մշակույթի հանրահռչակում, մշակութային արժեքների ստեղծման գործընթացում ժողովրդի ներգրավվածության ընդլայնում.

✓ ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացում

ազգային փոքրամասնությունների համայնքների ինքնադրսևորման և ժամանակակից գործընթացների ներգրավվածության ապահովում.

Մշակութային շարժական ժառանգություն

Թանգարանների ոլորտում պետության հիմնական գործառնություններն են՝ առկա մշակութային արժեքների և հավաքածուների հաշվառումը, գիտական ուսումնասիրությունը, համալրումը, պահպանությունը և պաշտպանությունը:

2010 թվականի ապրիլի 1-ի ՀՀ մշակույթի նախարարի <ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության թանգարաններում թանգարանային առարկաների ու հավաքածուների հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին> N 140-Ս հրամանին համապատասխան՝ յուրաքանչյուր թանգարանում ձևավորված հանձնաժողովները սկսել են ֆոնդերի վերահաշվառման գործընթացը (առ այսօր 4 թանգարաններում արդեն վերահաշվառվել է ընդհանուր թվով 47436 մշակութային արժեք):

Վերջին տարիներին հատուկ ուշադրություն է դարձվում թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրություններին, որոնց արդյունքում իրականացվում է նոր ցուցադրությունների կազմակերպումը և եղած ցուցահանդեսների ընդլայնումը: Թանգարանների կողմից կազմակերպվող ցուցադրությունների և ցուցահանդեսների միջոցով 2009 թվականին հանրությանը ներկայացվել է ավելի քան 50794 ցուցանմուշ՝ 2007 թվականի 48067-ի և 2008 թվականի 49450-ի համեմատ: Միննույն ժամանակ, գիտական ուսումնասիրությունները հրատարակվում են բուկլետներով, կատալոգներով: Մշակութային ժառանգության հանրահռչակմանն ուղղված այս ծրագիրը շարունակական է և ենթադրում է դինամիկ աճ:

Մշակութային ժառանգության պահպանության կարևոր երաշխիքներից է մշակութային արժեքների ձեռքբերմամբ թանգարանային ֆոնդերի համալրումը, ինչն իրականացվում է տարբեր եղանակներով՝ գնման, նվիրատվության, ինչպես նաև հնագիտական պեղումներից ձեռքբերված գտածոների թանգարաններին հանձնման միջոցով: 2007, 2008, 2009 թվականներին թանգարանները համալրվել են համապատասխանաբար՝ 2062, 7543 և 9261 թանգարանային առարկաներով: Ձեռք բերված մշակութային արժեքները ենթարկվում են փորձաքննության, գիտական նկարագրության և մեկնաբանման: Դրանց համար կազմվում են գիտական

վավերագրեր: Մինևույն ժամանակ, աճի ցուցանիշներին համապատասխան չեն ավելանում մշակութային արժեքների պահոցների մակերեսները:

Մշակութային արժեքների պահպանությանը և հանրությանը ներկայացնելուն մեծապես նպաստում է թանգարանների շենքային պայմանների և ցուցադրությունների արդիականացումը: 2007-2008 թվականներին հիմնանորոգված թանգարաններում 2008-2009 թվականներին բացվեցին նոր ցուցադրություններ. Ռուսական արվեստի (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու) և Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ Մինաս Ավետիսյանի (Ջաջուր) թանգարաններում, Արամ Խաչատրյանի, Պերճ Պոռժյանի, Եղիշե Չարենցի, Խաչատուր Աբովյանի, Ավետիք Իսահակյանի տուն - թանգարաններում, ինչպես նաև <Հակոբ Գյուրջյան> մշտական ցուցասրահը (2008 թվականին) Հայաստանի պետական պատկերասրահում և <Հայաստանի բրոնզեդարյան մշակույթը IV-I հազարամյակներում> Հայաստանի պատմության թանգարանում հիմնական ցուցադրությունը (2009 թվականին):

Մեկնարկել է պատմամշակութային հուշարձանների գեղարվեստական լուսավորության տեղադրման աշխատանքները Գառնիում և Զվարթնոցում (արգելոց-թանգարաններ), ինչը հնարավորություն ընձեռեց ամառվա ամիսներին երկարացնելու թանգարանների աշխատանքային ժամերը:

Ոչ թանգարանային տարածքներում թանգարանային ցուցադրության կազմակերպումը` նոր մոտեցում է ժամանակակից մշակութային կյանքում: 2009 թվականին Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում բացվեց տիկնիկների թանգարանը: 2010 թվականին նախատեսվում է թանգարանի բացում Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի, իսկ 2011 թվականին` Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոններում: Գործընթացի շարունակականության ապահովմամբ թատրոնի արխիվային նյութերը ամբողջապես կդառնան շրջանառվող:

Մշակութային ժառանգության պահպանման և սերունդներին փոխանցման նպատակով ուղրտում նոր մոտեցում է պետական մարմինների և մասնավոր հատվածի համագործակցությունը: 2008 թվականից սկսվեց համագործակցությունը <Սիլվա Կապուտիկյան>, 2010 թվականից` <Կալենց> հիմնադրամների հետ, ինչը ենթադրում է մշակութային ժառանգության պահպանման գործում մասնավոր հատվածի և պետության կողմից համալիր միջոցների միասնական ներդրում` հուշ-թանգարանների ստեղծմամբ:

2008-2009 թվականների ընթացքում շարունակվել են թանգարանային առարկաների վերականգնման և ամրակայման աշխատանքները, որոնց քանակը 2008 թվականի համեմատությամբ 2009 թվականին ավելի քան կրկնակի ավելացել է (համապատասխանաբար` 1636 և 4331):

Թանգարանային հավաքածուների մշտական և ժամանակավոր ցուցադրված առարկաների տոկոսային հարաբերությունը ՀՀ ընդհանուր թանգարանային հավաքածուի միավորների համեմատ կազմում է մոտ 2.9 %: Այս ծայրահեղ ցածր ցուցանիշը պայմանավորված է ցուցադրության համար նախատեսված տարածքների պակասով: Այդ բացը լրացվում է զանազան

եղանակներով, ինչը պայմանավորված է ցուցադրվող մշակութային արժեքների շրջանառության աճի անհրաժեշտությամբ, մասնավորապես.

1) ապահովվում է թանգարանների ֆոնդերում գտնվող մշակութային արժեքների վերաբերյալ տեղեկության հանրահոշակումը տեղեկատվական կրպակների միջոցով, որոնք 2009 թվականից սկսել են տեղադրվել թանգարաններում, մասնավորապես՝ Հայաստանի պատմության թանգարանում: Գործընթացը մոտակա տարիներին շարունակական է այլ թանգարանների համար:

2) 2009 թվականից նախարարության համակարգի 13 թանգարանների համար ստեղծվել են կայքեր, 2010 թվականին ևս 5 թանգարաններ հանրությանը կներկայանան իրենց կայքերով: Գործընթացը շարունակական է:

3) ՀՀ մշակույթի նախարարի 2009 թվականի նոյեմբերի 11-ի «Պետական թանգարաններից և պահոցներից թանգարանային առարկաները ժամանակավոր օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 732-Ա հրամանով սահմանվել է այլ կազմակերպությունների կողմից թանգարանային առարկաների ժամանակավոր օգտագործման կարգը (վերջին տարիներին ՀՀ մշակույթի նախարարության համակարգից դուրս գտնվող կազմակերպություններին օգտագործման նպատակով տրամադրվել է 2008 թվականին՝ 735, 2009 թվականին՝ 721 մշակութային արժեք):

Թանգարանների գործունեության զարգացման կարևոր ցուցանիշներից է այցելուների թվաքանակը, որը տարեցտարի ավելանում է մոտ 15 %-ով: 2008-2009 թվականներին (686011) այցելուների թվաքանակը 2006-2007 թվականների (584749) համեմատությամբ աճել է 101262-ով:

Արդեն ավանդական դարձած «Թանգարանների գիշեր» և «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումներին մասնակցում է հանրապետության թանգարանների մեծ մասը: Եթե 2008 թվականին «Թանգարանների գիշեր» ակցիային մասնակցում էին միայն մայրաքաղաքի թանգարանները, ապա 2009-ից՝ նաև մարզային: 2008 թվականին ակցիային մասնակցել է 7053 այցելու, 2009 թվականին՝ 20330:

Մշակութային ժառանգության հանրահոշակմանն են նպատակաուղղված եղել 2009 թվականին արտասահմանում՝ Մանկոտ Պետերբուրգում, Կիևում, Նյու Յորքում կազմակերպված 5 ցուցահանդեսները: 2010 թվականին Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում բացվեց Մարտիրոս Սարյանի 130-ամյակին նվիրված ցուցադրությունը:

Վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում թանգարանային առարկաների պահպանությանը, ինչի համար ֆինանսական միջոցներ են ուղղվել ահազանգման և հակահրդեհային, տեսահսկման, ջեռուցման համակարգերի տեղադրման համար:

Թանգարանների մասնագետները ակտիվորեն մասնակցում են միջազգային դասընթաց-վարժանքներին: 2010 թվականին ՀՀ Կառավարության կողմից հաստատվել է «Մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման համալիր ծրագիրը», որում ներառված է նաև թանգարանային աշխատողների պատրաստումը:

Թանգարանային ոլորտին պետական բյուջեից 2008-2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 1429142.9, 1493355.6 և 1500125.6 հազ. դրամ: ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում են 41 թանգարաններ: Հարկ է նշել, որ ֆինանսական ճգնաժամի հետ պայմանավորված՝ պակասեցվեցին թանգարանների նյութատեխնիկական բազայի համալրման համար նախատեսված բյուջետային հատկացումները, ինչը 2009 թվականին կազմեց մոտ 100 մլն դրամ:

Առաջիկա տարիներին կշարունակվեն պետական բյուջեից ֆինանսական միջոցների նպատակային հատկացումները՝ ուղղված թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանվածությանը, անհրաժեշտ ջերմախոնավային կայուն մթնոլորտի ապահովմանը, թանգարանային առարկաների համալրմանը, կոնսերվացմանն ու վերականգնմանը, թանգարանային հավաքածուների բացառիկ ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստմանը, սենսորային տեղեկատվական կրպակների միջոցով (վերիբական) այցելության ստեղծմանը, թանգարանային կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը, թանգարանային հավաքածուների հրապարակմանը, թանգարանների ինտերնետային կայքերի ստեղծմանը և սպասարկմանը, <Թանգարան անիվների վրա> շարունակական ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակների իրականացման համար պետական բյուջեից 2011-2012 թվականներին և 2013 թվականին համապատասխանաբար կտրամադրվի 1646165.2 հազ.դրամ և 1764836.9 հազ. դրամ:

Գրադարանների ոլորտում հիմնական գործառնություններն են՝ գրադարաններում առկա գրադարանային հավաքածուների, ազգային մատենագիտության տվյալների էլեկտրոնային շտեմարանի պահպանությունն ու համալրումը, տեղեկատվական-գրադարանային ավտոմատացված համակարգերի գործածությունը, տպագիր նյութերի ազգային անձեռնմխելի ֆոնդերի, ազգային մատենագիտության, հրատարակությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների կազմումն ու հրապարակումը, համակարգչային հայկական տառատեսակների պահպանությունն ու նոր տառատեսակների մշակումը:

Գրադարանային գործի զարգացումն ապահովելու նպատակով ՀՀ *գրադարանների շենքերի հիմնանորոգման* համալիր ծրագրի շրջանակներում վերջին երկու տարիներին սկսվել են Խնկո-Ապր անվան մանկական գրադարանի ու Հայաստանի ազգային գրադարանի թամանյանական մասնաշենքի և ավարտվել՝ Լոռու և Սյունիքի մարզային գրադարանների հիմնանորոգման աշխատանքները, 5 գրադարաններ համալրվել են մասնագիտական սարքավորումներով և գույքով, 2008 թվականին 10 մարզային գրադարանների համար ձեռք բերվեցին տեխնիկական սարքեր և սարքավորումներ, ինչի արդյունքում մարզային գրադարաններից յուրաքանչյուրը ներկայումս ապահովված է նվազագույնը 3-4 համակարգչով և տեսալսողական սարքերով: Գրադարանների վերանորոգման աշխատանքների և սարքավորումների ձեռքբերման համար 2008 թվականին հատկացվել է 643648.9 հազ. դրամ, իսկ 2009 թվականին՝ 351227.6 հազ. դրամ: Նվազեցումը պայմանավորված է 2009 թվականի ֆինանսական ճգնաժամով:

Կարևորելով ընթերցողական պահանջումների բավարարմանն ուղղված առաջնահերթ խնդիրը՝ գրադարանային հավաքածուների համալրմանն ուղղված ֆինանսական միջոցները

վերջին տարիներին հիմնականում նպատակաուղղվել են *հավաքածուների արդիականացմանը*՝ ժամանակակից տպագիր գրականությամբ և էլեկտրոնային նյութերով:

Զարգացման միտում է արձանագրվել պետական համակարգի գրադարաններում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացման ուղղությամբ: 2009 թվականին ՀՀ մշակույթի նախարարության համակարգի գրադարանների էլեկտրոնային սպասարկումների թիվը կազմել է 170738 միավոր, որը 2008 թվականի համեմատությամբ (122269 միավոր) աճել է 48469-ով: Նման աճը պայմանավորված է կապի միջոցների, մասնավորապես՝ ինտերնետի մատչելիությամբ, ինչպես նաև՝ էլեկտրոնային տեղեկատվության հանդեպ հետաքրքրության աճով: ՀՀ էկոնոմիկայի նախարարության <Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն>-ի կողմից <Ազգային գիտատեխնիկական տեղեկատվական ցանց> վեր պորտալից 2006-2007 թվականներին օգտվող 124 կազմակերպությունների համար կատարվել է 9852 փաստաթղթի էլեկտրոնային առաքում, իսկ 2008-2009 թվականներին՝ 177 կազմակերպությունների համար՝ 12477 առաքում, ինչը ավելի է 2625-ով: ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական գիտաբժշկական գրադարանի կողմից մատուցած էլեկտրոնային սպասարկումների թիվը կազմել է 55430 միավոր, ինչը 2008 թվականի համեմատությամբ աճել է 31787-ով: ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանը իրականացրել է էլեկտրոնային փաստաթղթերի՝ գիտական հոդվածների 312 սպասարկում (աճը՝ 112-ով): Մոտակա տարիներին նախատեսվում է սպասարկվող միավորները ավելացնել 25 %-ով:

Գրադարանային հավաքածուների համալրման ցուցանիշներում արձանագրվել է թվաքանակի ընդհանուր աճ, սակայն, միևնույն ժամանակ, գնման միջոցով ձեռք բերված գրքերի նվազում՝ պայմանավորված տպագիր արտադրանքի գների աճով և համալրման ֆինանսական միջոցների կասեցմամբ: 2008 թվականին գրադարանային հավաքածուները համալրվել են 63809 միավորով (այդ թվում՝ նվիրատվություններ), ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 3,5 %-ով: 2009 թվականին այդ թիվը կազմել է 71556 (նախորդ տարվա համեմատությամբ աճը կազմել է 12.1 %):

2008 և 2009 թվականներին նորոգվել է հավաքածուների կազմում ընդգրկված հնատիպ գրքերի հավաքածուից համապատասխանաբար՝ 24 և 77 գիրք և մշակութային նշանակության հավաքածուից՝ 6400 և 59 գիրք, պարբերական մամուլի 22620 և 2120 թերթ միավորներ, ինչպես նաև ախտահանվել և մանրէազերծվել է՝ 21160 և 21600 միավոր:

2008-2009 թվականներին զարգացման միտում է արձանագրվել *գրադարանային հավաքածուների ավտոմատացման* գործընթացում: Հայաստանի ազգային գրապալատի կողմից համահավաք տվյալների շտեմարան է մուտքագրվել շուրջ 2538495 մատենագիտական գրառում, որից 2009 թվականին՝ 422881 միավոր, ինչը 80788-ով ավելի է 2008 թվականի ցուցանիշից:

Ընդհանուր առմամբ գրադարաններին պետական բյուջեից 2008, 2009 և 2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 1517383.9, 1321559.8 և 1434700.5 հազ. դրամ: Ծախսերի

նվազումը պայմանավորված է տնտեսական ճգնաժամով և 2008 թվականի համեմատությամբ 2009 թվականին կազմում է մոտ 13 % և 2010 թվականին` մոտ 6%:

Առաջիկա տարիներին կշարունակվեն պետական բյուջեից ֆինանսական միջոցների նպատակային հատկացումները գրադարանների վերանորոգման, գրադարանային հավաքածուների պահպանման, արդի ժամանակաշրջանի գրականությամբ համալրման, հավաքածուների պահպանվածությունն ապահովող ջերմախոնավային կայուն մթնոլորտի ապահովման, գրքերի կոնսերվացման և վերականգնման, <Արև> տեղեկատվական հաղորդակցական, <Ընտանեկան գրադարանավար> և <Շարժական գրադարանավար> շարունակական ծրագրերի իրականացման, ինչպես նաև <Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցի> արտոնագրերի ձեռքբերման համար:

Այդ նպատակների իրականացման համար պետական բյուջեից 2011-2012 թվականներին և 2013 թվականին համապատասխանաբար կտրամադրվի 1151406.6 և 1242540.6 հազ. դրամ:

Արխիվային գործի ոլորտի բոլոր ծառայությունների մատուցումն իրականացվում է <Հայաստանի ազգային արխիվ> ՊՈԱԿ-ի կողմից. այն ուղղված է արխիվային փաստաթղթերի պահպանության ապահովմանը, համալրմանը, օգտագործմանը և տեղեկատու-որոնողական ինքնաշխատ համակարգի ստեղծմանը: 2008 թվականին ձեռք բերվեց և շահագործվեց կինոփաստաթղթերի թվայնացման սարքավորումը, որով 2009 թվականին թվայնացվեց շուրջ 400 փաստավավերագրական ֆիլմ:

Աճեցին ՀՀ ազգային հավաքածուի թվայնացմանը նպատակաուղղված ծախսերը` ապահովելով մինչ վերջին տարիները հանրության օգտագործման համար խիստ սահմանափակ համարվող արխիվային փաստաթղթերի մատչելիությունը: Վերականգնվել-վերանորոգվել է 577 հազար թերթ փաստաթուղթ, կարվել, կազմապատվել` մոտ 63 հազար գործ, արկղավորվել` 165 հազար գործ: Արխիվը համալրվեց 208 հազար թղթե հիմքով գործերով և 33 հազար պահպանման միավոր կինո-ֆոտո-ֆոնո-փաստաթղթերով:

Երկու տարվա ընթացքում արխիվ է դիմել 46184 ֆիզիկական և իրավաբանական անձ, արխիվի ընթերցասրահներում աշխատել է 964 հետազոտող, պատրաստվել է 132 ռադիոհեռուստատեսային հաղորդում և փաստաթղթերի 19 ցուցադրություն:

Տեղեկատու որոնողական համակարգի ստեղծման նպատակով էլեկտրոնային շտեմարան է մուտքագրվել ավելի քան 269 հազար արխիվային տեղեկություն:

2009 թվականի ընթացքում կազմակերպության գլխավոր մասնաշենքին կից առաջին և երկրորդ արխիվապահոցային մասնաշենքերում անցկացվել է ժամանակակից օդափոխության, օդորակման, ջեռուցման և սառնամատակարարման համակարգ: Ընթացիկ նորոգման աշխատանքներ են իրականացվել արխիվի N 2 մասնաշենքում, կինո-ֆոտո-ֆոնո փաստաթղթերի և ապահովագրական պատճենների մասնաճյուղում, Արարատի մարզային մասնաճյուղը տեղափոխվել է նոր մասնաշենք, վերակառուցման շնորհիվ բարելավվել է Արագածոտնի մարզային մասնաճյուղի աշխատանքային պայմանները:

Արխիվային հավաքածուների պահպանության համար պետական բյուջեից 2008, 2009 և 2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 320328.6, 308050.2 և 333081.8 հազ. դրամ:

Առաջիկա տարիներին կշարունակվեն նաև պետական բյուջեից ֆինանսական միջոցների նպատակային հատկացումները արխիվային փաստաթղթերի համալրման, հավաքածուների պահպանվածության համար անհրաժեշտ ջերմախոնավային կայուն մթնոլորտի ապահովման, առարկաների կոնսերվացման և վերականգնման աշխատանքների նպատակով: Դրանց իրականացման համար պետական բյուջեից 2011-2012 թվականներին և 2013 թվականին համապատասխանաբար կտրամադրվեն 373536.3 հազ.դրամ և 403171.4 հազ.դրամ:

Պատմության և մշակույթի անշարժ ժառանգություն

Հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղվում են պատմամշակութային հուշարձանների հաշվառման, *ուսումնասիրման, պահպանության, վերականգնման և օգտագործման* գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը:

Պետական ցուցակներում գրանցված շուրջ 24000 հուշարձանների պահպանությունը իրականացվում է լիազոր մարմնի կողմից: Մինևույն ժամանակ ամեն տարի համալրվում է նորահայտ և նորամուտ հուշարձանների ցանկը՝ 2008 թվականին՝ 500 միավորով, 2009 թվականին՝ 320 միավորով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հուշարձաններին առնչվող բոլոր խնդիրների լիարժեք լուծման համար անհրաժեշտ է առաջնահերթ կարգավորել հուշարձանների սեփականության իրավունքի գրանցման հարցը, 2009 թվականին ՀՀ Կառավարության կողմից ընդունվեց <Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կադաստրի վարման կարգը>: Մինևույն ժամանակ մինչ օրս իրականացվող հայկական հուշարձանների համահավաք տեղեկատվական շտեմարանի 24250 գիտական քարտերի ստեղծումը հնարավորություն կտա մոտակա ժամանակներում ապահովել պահպանական միավորների կադաստրային փաստաթղթերի փաթեթների պատրաստման արագացված գործընթացը:

Վերջին տարիներին շարունակվում է պահպանական գոտիների կազմման և թողարկման գործընթացը, 2008 թվականին կազմվել են 457 և թողարկվել է 517, իսկ 2009 թվականին՝ 450 և 450 հուշարձանների պահպանական գոտիներ:

Իրականացվում է նաև հուշարձանների վավերագրերի թվայնացման և վկայագրերի կազմման աշխատանքները, ինչը համապատասխանաբար 2008 թվականին կազմել է 780 և 600, իսկ 2009 թվականին՝ 780 և 467:

Հուշարձանների վերականգնման համար 2008 թվականին իրականացվել են 12 նախագծային և 15 վերականգնման (որից 3-ը՝ ավարտական) աշխատանքներ, 2009 թվականին՝ համապատասխանաբար՝ 2 նախագծային և 13 վերականգնման (որից 1-ը՝ ավարտական): 2010 թվականին ավարտին են հասցվելու 10 հուշարձանների վերականգնման աշխատանքներ: Նախորդ տարիների

համեմատ ավելացել է մարգային համաչափության սկզբունքը և աշխարհիկ կառույցների ընդգրկվածությունը:

Ելնելով վերականգնման կարիք ունեցող հուշարձանների մեծ քանակից և դրա համար հատկացվող պետական սուղ միջոցներից՝ առաջնահերթ վերականգնվող հուշարձանների ճիշտ ընտրության համար 2009 թվականին մեկնարկեց առավել վտանգված հուշարձանների տեխնիկական վիճակի դիտանցման ծրագիրը, որի արդյունքում կազմվեց 26 հուշարձանի ամբողջական փաթեթ:

Միննույն ժամանակ, որպես նոր ծրագրային ուղղություն, 2009 թվականից լրացուցիչ հատկացումներ են նախատեսվել վերականգնման ենթակա հուշարձանների նախնական պեղման, իսկ 2010 թվականի ընթացքում՝ արտակարգ իրավիճակներում հայտնված հուշարձանների հրատապ մասնակի վերականգնումների համար:

2010 թվականին պետական բյուջեից շուրջ 60 մլն դրամ տրամադրվել է արտերկրում գտնվող և հայկական ծագում ունեցող հուշարձանների ուսումնասիրությանն ու վկայագրմանը:

Հուշարձանների պահպանության ոլորտին 2008-2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 860588.2, 403896.7 և 346217.2 հազ.դրամ, այդ թվում՝ հուշարձանների վերականգնման համար՝ 460225.9 հազ.դրամ, 331051.1 հազ.դրամ և 213300.0 հազ.դրամ: Ծախսերի նվազումը պայմանավորված է ֆինանսական ճգնաժամով և յուրաքանչյուր տարի այն կազմել է շուրջ 53.1 % և 14.3%:

Պետական բյուջեից 2011-2012 թվականներին և 2013 թվականին հուշարձանների պահպանության ոլորտին կտրամադրվեն համապատասխանաբար՝ 353951.2 հազ.դրամ և 358577.7 հազ. դրամ, այդ թվում՝ հուշարձանների վերականգնման համար յուրաքանչյուր տարի՝ 215 մլն դրամ:

Ոչ նյութական մշակութային ժառանգություն

Ոչ նյութական (հոգևոր) մշակութային ժառանգություն պահպանությունը մշակութային պետական քաղաքականության վերջին տարիներին ձևավորված հիմնական ուղղություններից է, միննույն ժամանակ՝ ազգային դիմագծի, ինքնության պահպանման կարևոր բաղկացուցիչը: Ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվում են ժառանգության պահպանության, պաշտպանության, հանրահռչակման խնդիրների լուծմանը:

2007 թվականին ՀՀ Կառավարության կողմից հաստատված <Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության, պահպանության և դրա կենսունակության ապահովման մասին> հայեցակարգից բխող միջոցառումների իրականացումը, ըստ էության, խթանիչ դեր ունեցավ ոլորտի վերագարթոնքի համար՝ հասարակության մեջ ձևավորելով ազգային ոչ նյութական մշակութային ժառանգության նկատմամբ հարգանքի ու արժևորման մթնոլորտ:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ կատարվեցին գիտական ուսումնասիրություններ, մասնավորապես՝ դասակարգման և տիպաբանության, մշակվեցին ոչ նյութական մշակութային արժեքների գույքագրման, գրանցման, դասակարգման

չափորոշիչները, հրատարակվեց <Ոչ նյութական մշակութային ժառանգություն. դասակարգումն ու չափորոշիչները> ուսումնամեթոդական ձեռնարկը, ստեղծվեց գրանցման համակարգչային ծրագրաշար, որը հետագայում հիմք կհանդիսանա համահավաքի համար: Մեկնարկեց ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում առկա բանահյուսական նյութերի թվայնացման աշխատանքները, կազմակերպվեց գիտարշավ՝ մարզերում ոչ նյութական մշակութային արժեքների հավաքման ու հաշվառման նպատակով:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության ուղղությամբ իրականացվեցին մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ ժողովրդական արհեստների բնագավառում <Հայկական հուշանվերային գորգի ստեղծումը>, <Ձեռարվեստի կենտրոնի ստեղծումը>, <Հայ ավանդական դարբնագործության ուսուցման կենտրոնի ստեղծումը>, որոնց իրականացման արդյունքում համապատասխան հմտություններ ձեռք բերեցին 47 երիտասարդներ: Իրականացվեց <Հայկական ժողովրդական նվագարանների պատրաստման, վերականգնման և կիրառման ուսուցում> ծրագիրը, ինչի արդյունքում 11 երեխաներ ձեռք բերեցին ուղի, քամանչայի, թառի, դուդուկի, սրինգի, զուռնայի պատրաստման ու վերանորոգման հմտություններ: Ավանդական տոների կապակցությամբ Օշականում կազմակերպվեց <Հայկական ավանդական տոների վերականգնում և փոխանցում> կրթական ծրագիրը, որի արդյունքում ստեղծվեց էթնո-դպրոցի մոդել:

Ոչ նյութական մշակութային ժառանգության հանրահռչակմանն ուղղված միջոցառումներում ընդգրկվեցին ժողովրդական արհեստների և արվեստների հիմնական ուղղությունները, մասնավորապես.

1) նկարահանվեց թվով 3 ֆիլմ՝ նվիրված գորգագործությանը (<Նախշեր>), գինեգործությանը (<Սա է արիւն իմ>) դարբնությանը (<Սրբազան զարկեր>), լարախաղացությանը (<Լարախաղացություն՝ կորչող արվեստ>): <Իմպուլս FM> ռադիոյի եթերով հեռարձակվեցին ազգային երգին նվիրված ռադիոհաղորդաշարեր, ուսումնական ձևաչափով <Սասուն> ազգագրական երգի-պարի համույթի կատարմամբ նկարահանվեցին սասնա ավանդական <Քերծի> պարի տեսահոլովակը, <Փշրանքներ Շիրակի ամբարից> նախագծի անդրանիկ՝ <Շիրակի բանահյուսությունը> հեռուստահաղորդումը.

2) մշակվեց <Ազգային ինքնության պահպանության և Սասնա ծոեր> էպոսի հանրահռչակման պետական ծրագիրը՝ նախատեսված 2011-2014 թվականների համար, որը նշանակալի դեր կխաղա ազգային ինքնության վերագարթոնքի, հայ երիտասարդների ազգային դաստիարակության և հայրենապաշտության գործում, ինչպես նաև կբարձրացնի ազգային էպիկական ժառանգության դերն ու նշանակությունը:

3) նշանակալի քայլեր կատարվեցին նաև ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման ուղղությամբ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ ստեղծվեցին <Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն>

(www.icha.mincult.am) և <Հայ դուդուկի երաժշտություն> ինտերնետային կայքերը (www.armenian-duduk-music.com):

2009 թվականին հայ ժողովրդի ամենաակնառու արժեքներից մեկի՝ <Խաչքարի խորհուրդը և խաչքարագործությունը> հայտը ներկայացվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ <Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում> ընդգրկելու նպատակով:

2009 թվականին ընդունվեց <Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին> ՀՀ օրենքը, որի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի 2010 թվականի հունվարի 15-ի N 8-Ս որոշմամբ հաստատվեց <Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին> Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հոկտեմբերի 28-ի ՀՕ-187-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը: Հետագա տարիների ծրագրերը պետք է իրականացվեն այդ որոշման դրույթների համաձայն:

2008, 2009 և 2010 թվականներին ոլորտին պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար 30297.1, 27065.2 և 38500.0 հազ. դրամ:

Ժամանակակից արվեստի (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կինոարվեստ, կերպարվեստ, տառարվեստ) զարգացում

Ժամանակակից արվեստի ոլորտում պետական բյուջեի միջոցները առաջին հերթին ուղղվում են ստեղծագործական ՊՈԱԿ-ների սուբսիդիաների տրամադրմանը, մշակութային արտադրանքի ձևավորմանը և դրա ձեռքբերմանը, մրցակցային դաշտի ձևավորմանը, միջազգային ասպարեզում ներկայացմանը, միջմարզային համագործակցության զարգացմանը, մշակութային ազգային նկարագրով անհատների և երևույթների արժեքավորմանը և հանրայնացմանը :

Ժամանակակից արվեստի զարգացման գործում ներկա փուլում առաջնահերթ է երիտասարդ ստեղծագործական ներուժի և սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ:

Արվեստի տարբեր ոլորտներում աջակցություն է ցուցաբերվել երիտասարդական ծրագրերին՝ 2008-2009 թվականներին՝ երիտասարդական թատերական 3 և 4 ներկայացումների, 2009 թվականին՝ 10 (5 դեբյուտային և 5 ուսանողական) կինոֆիլմերի: Յուրաքանչյուր տարի կազմակերպվել է երիտասարդ ստեղծագործողների և կատարողների դեբյուտ-ստուգատեսը: 2008 թվականին Երևանում կայացավ երիտասարդ կոմպոզիտորների կամերային երաժշտության I փառատոնը: 29 երիտասարդ կոմպոզիտորների դասական ստեղծագործություններ կատարվեցին արհեստավարժ երաժիշտների և կոլեկտիվների կողմից: Արդեն երկրորդ տարին է ինչ Շորժայում և Արցախում կազմակերպվում են երիտասարդ նկարիչների ստեղծագործական հավաքներ: Երիտասարդ նկարիչների հավաքների արդյունքում ստեղծված աշխատանքները ցուցադրվել են Հայաստանի նկարիչների միությունում: 2008 թվականին 2 դեբյուտային ֆիլմ ներկայացվել է միջազգային 12 կինոփառատոններում, 2009 թվականին՝ 12 ֆիլմ՝ 15 կինոփառատոններում: 2008 թվականին մեկնարկեցին Պատկերապատումների հայ-ֆրանսիական երիտասարդական ցուցահանդեսը, որի թվով II-ը կայացավ 2010 թվականին՝ հայ երիտասարդների աշխատանքների

ցուցադրմամբ: Թատերական ամենամյա փառատոների շարքում 2008 թվականից իրականացվում է երիտասարդական թատերական, իսկ 2009 թվականից՝ <Երիտասարդ ռեժիսուրայի> փառատոնը, որոնք հնարավորություն է տալիս բացահայտելու և խրախուսելու երիտասարդ բեմադրիչներին:

Սփյուռքահայ արվեստագետներին հայաստանյան մշակութային դաշտ ներգրավելու նպատակով 2008 թվականին կազմակերպվեց <Մեկ ազգ, մեկ մշակույթ> փառատոնը, որն անցկացվեց նոր ձևաչափով՝ իրականացվեցին թվով 7 մասնագիտական համահայկական հավաքներ, որոնց արդյունքում ձևավորվեցին ծրագրեր՝ թատրոնի, կինոյի, գրականության բնագավառներում:

2008 թվականին Երևանում առաջին անգամ կազմակերպվեց <Ազգային պարարվեստը սփյուռքում. ներկա իրավիճակը և զարգացման հեռանկարները> գիտաժողովը, որին զուգահեռ, կայացան նաև վերապատրաստման դասընթացներ՝ 20 սփյուռքահայ պարուսույցի մասնակցությամբ:

2008-2009 թվականներին կազմակերպվեցին սփյուռքահայ արվեստագետների ճանաչողական այցեր, հայաստանյան համերգներ, ցուցահանդեսներ, շնորհանդեսներ, հանդիպումներ՝ թվով 45 միջոցառում:

Հայ համայնքը մշտապես ներգրավվել է արտերկրում իրականացված նախագծերին, մասնավորապես՝ 2009 թվականին Ֆրանսիայում և Շվեյցարիայում իրականացված <Կոմիտաս 140> ծրագրին, Հունգարիայում կայացած <Անի-հազարամյա մայրաքաղաք հայոց> ցուցահանդեսին, Լիբանանում՝ Բուռճամուտի փառատոնին, Մանկտ Պետերբուրգում, Կալինինգրադում, Դոնի Ռոստովում և Կրասնոդարում <Հայկական մշակույթի սեզոններ ՌԴ-ում> ծրագրի շրջանակներում կազմակերպված բազմաթիվ միջոցառումներին, որոնց հաջողությունը մեծապես պայմանավորված էր Հայաստան-Սփյուռք ջանքերի գործադրմամբ:

Թատերարվեստի ոլորտում տեխնիկական խնդիրների լուծման համար 2008 թվականին ներդրվել են ֆինանսական միջոցներ, որոնք նախորդ տարվա համեմատությամբ ավելի են 72.4 %-ով:

Թատերարվեստի բնագավառում 2008-2009 թվականներին բեմադրվել են համապատասխանաբար 52 և 55 նոր ներկայացումներ (կամ 5.8%-ով ավել), որոնցից 11-ը և 12-ը՝ համապատասխան պետական աջակցությամբ (այդ թվում՝ Վ.Սարոյանի 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում բեմադրվել է 7 ներկայացում, որոնցից 3-ը՝ պետական աջակցությամբ): 2008 թվականին՝ 2007թվականի համեմատությամբ 1.4 %-ով ավելացել է հանդիսատեսի թիվը, իսկ 2009 թվականին՝ 2008 թվականի համեմատությամբ՝ նվազել է 6.8%-ով, խաղացած ներկայացումների քանակը 2008 թվականին ավելացել է 9.4 %-ով 2007 թվականի համեմատությամբ, իսկ 2009 թվականին պակասել է 7.3%-ով՝ 2008 թվականի համեմատությամբ: Ցուցանիշների նվազումը պայմանավորված է դահլիճների միջին բեռնվածության նվազմամբ, ինչպես նաև՝ որոշ թատրոնների ընթացիկ վերանորոգման աշխատանքներով:

Իրենց որակով առանձնացան Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում բեմադրված <Սպարտակ> բալետը, Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում՝ Ֆ.Վերֆելի <Մուսա լեռան 40 օրը>, Պատանի հանդիսատեսի թատրոնում <Ես ճայ եմ> հայ-ռուսական, Հ.Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում՝ <Ak-Ak>, Արտաշատի Ա.Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ Շ.Շահնուրի <Նահանջ առանց երգի> նորաստեղծ ներկայացումները:

Պետական աջակցությամբ իրականացվել են 6 հանրապետական թատերական փառատոներ (<Թատերական Լոռի> համայնքային, <Նոան հատիկ> մանկապատանեկան, Երիտասարդական, Տիկնիկային թատերախմբերի հանրապետական թատերական փառատոներ), որոնցից 2-ը 2008 թվականին նորաստեղծ՝ <Թատրոն X> և <Մենք ենք, մեր մարզը>):

2009 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ընդլայնվել է *միջազգային թատերական փառատոնային գործունեությունը*: Արդեն ավանդական դարձած <Արմմոնո>, <Հայֆեստ> Վ.Փափազյանի անվան շեքսպիրյան փառատոների շարքը 2008 թվականից համալրվել է Մնջախաղի թատրոնների միջազգային փառատոնով, որն ավանդաբար անց է կացվում Ծաղկաձորում և միտված է այդ ժանրի ոլորտում առկա ձեռքբերումների տարածմանը և մնջախաղային արվեստի զարգացմանը: 2010 թվականից մեկնարկում է <Readingjest> արդի դրամատուրգիայի ընթերցման միջազգային փառատոնը:

2008-2009 թվականներին թվով 9 և 18 թատերական խմբեր և թատերական գործիչներ մասնակցել են միջազգային տարբեր ծրագրերի:

Թատերարվեստի ոլորտին (ներառյալ կապիտալ ծախսերը) պետական բյուջեից 2008-2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 1979188.3 հազ., 2240876.8 հազ. և 2436964.5 հազ. դրամ: Աճը յուրաքանչյուր տարի կազմել է 13.2 % և 8.8 %, որը պայմանավորված է 2009 թվականին ոլորտի աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ և Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի շենքի նորոգման աշխատանքներով:

Պետական բյուջեից 2011-2012 թվականներին և 2013 թվականին թատերարվեստի ոլորտին կտրամադրվեն համապատասխանաբար 2342420.5 հազ.դրամ և 2516690.6 հազ. դրամ:

Երաժշտարվեստի ոլորտում վերջին տարիներին ՀՀ մշակույթի նախարարության կողմից հատուկ ուշադրություն է դարձվել հայ կոմպոզիտորական դպրոցի զարգացմանը և երիտասարդ ներուժի բացահայտմանը: *Հայ կոմպոզիտորների ժամանակակից ստեղծագործությունների* ձեռքբերման ծրագրով 2008 թվականին գնվել է 17, իսկ 2009 թվականին՝ 14 ստեղծագործություն: Հայ կոմպոզիտորներին նվիրված՝ կազմակերպվել են համերգներ 2008 թվականին՝ 78, 2009 թվականին՝ 137, որոնց ընթացքում կատարվել են՝ 2008 թվականին՝ 161, 2009 թվականին՝ 322 ստեղծագործություններ: Ցուցանիշների կրկնակի աճն ակնհայտ է՝ պայմանավորված նոր 5 պետական կոլեկտիվների ձևավորմամբ (2 նվագախումբ և 3 երգչախումբ): Որպես առաջնահերթություն հռչակելով խմբերգային արվեստի զարգացումը՝ 2008-2009 թվականներին

պետական ֆինանսավորում ստացան մենակատարների անսամբլը, կամերային, <Հովեր>, Երևանի կամերային երգչախմբերը:

Ստեղծագործական պատվերի միջոցով 2008-2009 թվականներին իրականացվեց 9 երաժշտական նախագծեր, շուրջ 40 նոր համերգային ծրագրեր, ձեռք է բերվել և կատարվել ժամանակակից հայ կոմպոզիտորների 32 ստեղծագործություններ, 17 ստեղծագործությունների նոր մշակումներ: Պետական աջակցությամբ միջազգային երաժշտական փառատոններին ու մրցույթներին մասնակցել է 22 երաժիշտ-կատարող և 3 համերգային կոլեկտիվ, թողարկվել 20 ձայնա և 1 տեսասկավառակ:

Պետական աջակցությամբ իրականացվում են 20-ից ավելի փառատոներ և մրցույթներ, որոնցից 8 փառատոն (Գ.Թալալյանին նվիրված թավջութակի հանրապետական, երիտասարդ կոմպոզիտորների կամերային երաժշտության, <Առնո Բաբաջանյան> երգի միջազգային, <Երազ իմ երկիր>՝ ռազմահայրենասիրական երգի, Վազգեն Ա Վեհափառի 100-ամյակին նվիրված հոգևոր երաժշտության, <Բաց երաժշտություն> դասական, <Սևան-2009> ռոք երաժշտության, Էքսպերիմենտալ) և 2 մրցույթ (փողային գործիքների, Գ.Գասպարյանի անվան մեներգիչների) մեկնարկել են 2008-2009 թվականներին, ինչը կարևոր քայլ է ոլորտի տարբեր ճյուղերի համաչափ զարգացման ուղղությամբ:

Թատերարվեստի և երաժշտարվեստի ոլորտներում կարևորվում է կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի և աշխատանքային պայմանների արդիականացման խնդիրների լուծումը: 2008-2009 թվականներին օպերային թատրոնում իրականացվեցին շուրջ 70 և 150 մլն դրամի բեմական սարքավորումների վերանորոգման, շենքի օդորակման և ջերմամատակարարման համակարգերի նորոգում, պրոյեկցիոն սարքավորումների ձեռքբերում:

2009 թվականին <Առնո Բաբաջանյան> համերգասրահը հանձնվեց ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությանը, և այս հանգամանքը հնարավորություն ընձեռեց համերգային կազմակերպությունների մի մասի (Երևանի կամերային երգչախումբ, Հայաստանի մենակատարների պետական անսամբլ) հետագա գործունեության ապահովմանը, ինչպես նաև նպաստեց <Դպրոցականի ֆիլհարմոնիայի> և մանկական այլ ծրագրերի իրականացմանը: Ամբողջովին վերանորոգվեց Երգի պետական թատրոնը և մասնակի՝ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը. վերջինս վերազինվեց նաև արդիական սարքավորումներով:

Երաժշտարվեստի ոլորտին (ներառյալ կապիտալ ծախսերը) պետական բյուջեից 2008, 2009 և 2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 753037.0, 906086.2 և 809200.5 հազ. դրամ:

Պետական բյուջեից 2011-2012 թվականներին և 2013 թվականին երաժշտարվեստի ոլորտին կտրամադրվեն համապատասխանաբար 1057752.2 հազ.դրամ և 1142627.2 հազ. դրամ:

Կինոարվեստի ոլորտում պետական քաղաքականությունն ուղղվել է նկարահանվող ֆիլմերի ժանրային բազմազանության և որակի ապահովմանը, միջազգային ասպարեզներում հայկական կինոարտադրության ներկայացման ընդլայնմանը:

2008-2009 թվականներին պետական աջակցություն կինոարտադրությանը ծրագրով նկարահանվել է 7 և 8 խաղարկային, 4 և 5 մուլտիպլիկացիոն, 10 և 15 վավերագրական ֆիլմ:

2009 թվականից ձևավորված նոր ավանդույթը՝ <Մոսկվա> կինոֆատրոնում հայրենական արտադրության ֆիլմերի պարբերական ցուցադրությունը, հնարավորություն ընձեռեց հայ հանդիսատեսին անմիջականորեն հաղորդակցվելու ազգային կինոարվեստին: 2009 թվականի ընթացքում կազմակերպվել են վերջին տարիների արտադրության 36 ֆիլմերի շնորհանդեսներ, ներառյալ՝ <Մասունցի Դավիթ> մուլտիպլիկացիոն ֆիլմի 8 սերիաները:

Կինոարվեստի տարածման, մասնավորապես՝ հանրապետության մարզերի բնակչությանը կինոարվեստին հաղորդակից դարձնելու նպատակով, արտադրական պրոցեսներին զուգընթաց՝ 2008 թվականից իրականացվում են կինոցուցադրումներ հանրապետության տարբեր մարզերում, ԼՂՀ-ում և Ջավախքում, որոնք ուղեկցվում են անվանի կինոգործիչների հետ հանդիպումներով:

Հայաստանում իրենց բնականոն գործունեությունն են շարունակում արդեն ավանդական դարձած <Ոսկե ծիրան>, <Ես եմ>, <Կին>, Մանկապատանեկան ֆիլմերի, <Մեկ կադր - մեկ թույլ> միջազգային կինոփառատոները: 2009 թվականից հաջողությամբ մեկնարկեց <ՌեԱնիմանիա> անիմացիոն ֆիլմերի երևանյան միջազգային առաջին կինոփառատոնը:

Կինոարվեստի ասպարեզում 2006-2007 թվականների համեմատությամբ 2008-2009 թվականներին ընդլայնվել է հայկական կինոարտադրության մասնակցությունը միջազգային փառատոներին: 2008-2009 թվականներին ապահովվել է հայրենական արտադրության ֆիլմերի մասնակցությունը միջազգային 44 կինոփառատոների՝ 2006-2007 թվականների 25 փառատոների համեմատությամբ: Միջազգային կինոփառատոներում մրցանակներ ստացած ֆիլմերի շարքում են <Մահման> և <Խճճված զուգահեռներ> ֆիլմերը: 2009 թվականից <Հայաստանի ազգային կինոկենտրոնը> առանձին տաղավարով ներկայանում է Կաննի կինոշուկայում:

Կինոարվեստի ոլորտին պետական բյուջեից 2008, 2009 և 2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 678649.3, 706616.9 և 612753.1 հազ. դրամ:

Պետական բյուջեից 2011-2012 թվականներին և 2013 թվականին կինոարվեստի ոլորտին կտրամադրվեն համապատասխանաբար՝ 630448.2 հազ. դրամ և 644014.5 հազ. դրամ:

Կերպարվեստի ոլորտում վերջին երկու տարիներին աջակցություն է ցուցաբերվել փառատոնային ծրագրերի և ցուցահանդեսների կազմակերպմանը (Գյումրու միջազգային 10-րդ բիենալե, հոբեյանական և այլ բնույթի տասնյակ ցուցահանդեսներ), ինչպես նաև կերպարվեստի գործիչների մասնակցությանը միջազգային բիենալեներին (Հայ կերպարվեստի ներկայացումը Վենետիկի բիենալեում), ինչն անշուշտ նպաստել է արտերկրում հայկական կերպարվեստի հանրաճանաչմանը: Կատարված ներդրումները սակայն հիմնականում ընթացիկ բնույթ են կրել, մինչդեռ ոլորտի զարգացման և ժամանակակից մշակութային արտադրանքի ձևավորման և

մրցունակության ապահովման համար պահանջվում են երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր: Ժամանակակից արվեստի այլ ոլորտների՝ թատերարվեստի, կինոարվեստի, երաժշտարվեստի համեմատությամբ քիչ են միջազգային ծրագրերը՝ փառատոներ, ցուցահանդեսներ, արվեստանոցներ և այլն, բավարար չի կարելի համարել նաև արտերկրում հայկական կերպարվեստի հանրահռչակման մակարդակը: 2010 թվականին նախատեսվում է կազմակերպել ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված ժամանակակից նկարիչների ցուցահանդես և ձեռք բերել լավագույն աշխատանքները: Կերպարվեստի ոլորտին պետական բյուջեից 2008, 2009 և 2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 6800.4, 6575.2 և 10500.0 հազ. դրամ: 2011-2013 թվականներին կերպարվեստի ոլորտին ուղղվող ամենամյա հատկացումներում կպահպանվեն 2010 թվականին հաստատված բյուջետային հատկացումների մակարդակը:

Պարարվեստի ոլորտում 2008-2009 թվականներին պետական աջակցությունը հիմնականում ուղղվել է 3 պետական համայնքների 6 ստեղծագործական ծրագրերի իրականացմանը: Դրամաշնորհների հատկացման արդյունքում 7 ազգագրական համայնքներ իրականացրել են ժողովրդական պարերի նոր բեմադրություններ:

Պարարվեստի ոլորտին պետական բյուջեից 2008, 2009 և 2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 134590.0 հազ.դրամ, 150808.0 հազ.դրամ և 158034.8 հազ.դրամ: 2011-2013 թվականներին պարարվեստի ոլորտին ուղղվող ամենամյա հատկացումներում կպահպանվեն 2010 թվականին հաստատված բյուջետային հատկացումների մակարդակը:

Հորեյանական ծրագրերի և միջոցառումների շրջանակներում 2008, 2009 և 2010 թվականներին յուրաքանչյուր տարի նշվել է մշակույթի, կրթության, քաղաքական հասարակական գործիչների և իրադարձությունների 7 տասնյակից ավելի հորեյան, որոնցից 40-ի վերաբերյալ ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել են պետական հորեյանական հանձնաժողովներ, մշակվել և ամբողջ տարվա ընթացքում իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ գիտաժողովներ, գրքերի, պրոմների հրատարակում, ձայնա- և տեսա-սկավառակների թողարկում, ասմունքի փառատոներ, ցուցահանդեսներ, բաց դասեր հանրակրթական դպրոցներում, նամականիշերի և փոստային բացիկների թողարկում, հորեյանական հանդիսություններ, հորեյարների կյանքի և ստեղծագործական գործունեության լուսաբանում լրատվամիջոցներով և այլն: Հորեյանների առիթներով բեմադրվել է շուրջ 15 ներկայացում, իրականացվել է 30 համերգային ծրագիր, տպագրվել է 22 գիրք, 1 էլեկտրոնային գիրք և 18 լազերային ձայնասկավառակ, որոնք ներառված են թատերահամերգային կազմակերպությունների երկացանկերում և խաղացանկերում:

2009 թվականին առաջին անգամ ձեռնարկվել է հայ մշակույթի և արվեստի գործիչների հորեյանների կապակցությամբ Հանրային ռադիոյում պահպանվող նրանց ստեղծագործությունների ձայնագրությունների ձայնասկավառակների թողարկման ծրագիրը, որը շարունակվում է 2010 թվականին:

Հոբելյանական ծրագրերին և միջոցառումներին պետական բյուջեից 2008, 2009 և 2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 63673.8 հազ.դրամ, 75340.8 հազ.դրամ և 55600.0 հազ. դրամ: 2011-2013 թվականներին նշված ծրագրերին ուղղվող ամենամյա հատկացումներում կպահպանվեն 2010 թվականին հաստատված բյուջետային հատկացումների մակարդակը:

Մշակույթի համաչափ զարգացում

Այս ուղղությունում ծրագրերը նպատակաուղղվում են մարզերում մշակույթի զարգացման իրականացմանը, միջմարզային մշակութային համագործակցության խթանմանը, մշակույթի (դեպի մարզեր) ապակենտրոնացման քաղաքականության շարունակականության ապահովմանը: Դրանց իրականացման հիմքերն են՝ ՀՀ Կառավարության 2007 թվականին ապրիլի 5-ի <ՀՀ մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին> N 589-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 2008 թվականին հուլիսի 24-ի <ՀՀ Կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին> N 878-Ն որոշումը, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2009 թվականին դեկտեմբերի 17-ի նիստի <ՀՀ Արմավիրի մարզի մշակութային հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ցանկի մասին> N 52 արձանագրային որոշումը, 2009 թվականին հոկտեմբերի 1-ի նիստի <ՀՀ Լոռու մարզի մշակութային հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ցանկի մասին> N 41 արձանագրային որոշումը, 2010 թվականին փետրվարի 11-ի նիստի <ՀՀ Սյունիքի մարզի մշակութային հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ցանկի մասին> N 5 արձանագրային որոշումը:

2008-2009 թվականներին պետական ծրագրերով վերանորոգվեց 22 մշակույթի տուն: 2010 թվականին նախատեսվում է շարունակել ՀՀ մարզերի 13 մշակույթի տների հիմնանորոգման և շինարարական աշխատանքները:

ՀՀ մարզերում մշակութային կյանքի զարգացման, դրան բնակչության մասնակցության, մշակութային արժեքների և ծառայությունների մատչելիության ապահովման նպատակով 2007 թվականին մեկնարկեց <Մշակութային մարզ> մշակութային հաղորդակցություն՝ մայրաքաղաք-մարզեր> ծրագիրը: 2008-2009 թվականների ընթացքում ՀՀ մարզերի, Արցախի և Ջավախքի 46 բնակավայրերում կազմակերպվեցին 45 թատերական ներկայացումներ, համերգներ, հայկական ֆիլմերի ցուցադրություններ, վարպետաց դասեր, մանկական գրքի օրեր՝ 9 պետական թատրոնների, 13 համերգային կազմակերպությունների, արվեստի գործիչների, արտիստների, երաժիշտ-կատարողների մասնակցությամբ :

Գյուղերի մանկահասակ բնակչության հանգիստն ու ժամանցը կազմակերպելու նպատակով 2007 թվականին Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կողմից իրականացված <Հեքիաթին հյուր> ծրագիրը 2008-2009 թվականներին շարունակեցին Արտաշատի Ա.Խարազյանի անվան, Վանաձորի Վ.Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնները : Եթե 2007 թվականին ծրագրին մասնակցեցին Սյունիքի մարզի 7 համայնքների շուրջ

1400 երեխաներ, ապա 2008 թվականին՝ Արարատի մարզի 9 համայնքների 1550 երեխաներ, 2009 թվականին՝ 7 համայնքների 2200 երեխաներ : 2010 թվականին ծրագիրն իրականացնելու է Գավառի պետական թատրոնը:

Հանրապետության հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի բնակչությանը թանգարանային հավաքածուների մատչելիությունն ապահովելու նպատակով, շուրջ 2 տարի իրականացվում է <Թանգարան անիվների վրա> ծրագիրը, որի շրջանակներում 2008-2009 թվականներին հանրապետության 25 համայնքներում կազմակերպվել է 20 թանգարանային ցուցահանդես, այդ թվում՝ 2009 թվականին մեծ հետաքրքրություն առաջացրեց <Մեր հոբելյարները> ցուցահանդեսը, որը ներկայացրեց 8 հոբելյար-նկարիչների աշխատանքներ հանրապետության բոլոր մարզերում: Նախատեսվում է ընդլայնել բնակավայրերի աշխարհագրությունը:

Գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների մատուցման մատչելիությունը կույր և թույլ տեսնող անձանց համար ապահովվել է <Արև> համակարգի տեղակայմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղական բնակավայրերում գրադարանների անմխիթար վիճակը բարդացնում է ազգաբնակչությանը գրադարանային ծառայությունների մատուցումը, անհրաժեշտություն առաջացավ ստեղծել գրադարանային սպասարկման ոչ ստացիոնար ձևեր, որոնք իրականացվեցին 2008 թվականից: Հայաստանի ազգային գրադարանի <Շարժական գրադարանի> (<Բիբլիոբուս>) միջոցով 2008 թվականին ՀՀ Լոռու, Արագածոտնի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի համայնքային գրադարաններին նվիրատվության կարգով Հայաստանի ազգային գրադարանի գրքափոխանակության հավաքածուի կազմից տրամադրվել է ավելի քան 2800 միավոր, իսկ 2009 թվականին ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Լոռու մարզերի համայնքային գրադարաններին՝ ավելի քան 8500 միավոր գրականություն, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 5700-ով կամ գրեթե 3 անգամ:

Անշարժունակ դարձած անձանց գրադարանային սպասարկման նպատակով 2008 թվականից Լոռու և Շիրակի մարզերում սկսվել է իրականացվել <Ընտանեկան գրադարանավար> ծրագիրը, որը 2009 թվականից ֆինանսավորվել է պետական բյուջեից՝ ելնելով 1365 միավոր տեղեկույթ տրամադրման հաշվարկից: Ծրագիրը շարունակական է:

Վերջին տարիներին թատերարվեստի ոլորտում իրականացվող քաղաքականության առաջնահերթություններից է ՀՀ մարզերում թատերարվեստի զարգացումը: Հատկանշական է, որ մարզային թատրոնների խաղացանկերը պետական աջակցության շնորհիվ համալրվեցին հայ դասական և ժամանակակից գրականության: Կարևոր ձեռքբերում է 2008 թվականից սկսված հանրապետական թատերական նոր փառատոնային <Մենք ենք, մեր մարզերը> ծրագրի իրականացումը, որն ուղղված է մարզային թատրոնների գործունեության բովանդակային և ստեղծագործական զարգացման խթանմանը:

Ամառային հանգիստը բազմաբովանդակ կազմակերպելու նպատակով ՀՀ 10 մարզերի, Երևանի, Արցախի և Ջավախքի շնորհալի երեխաների համար իրականացվում է <Արտուտիկ> մանկապատանեկան ստեղծագործական ամառային ճամբարը, որը տարեկան ունենում է յոթ տասնյակից ավելի մասնակից:

<Երգող Հայաստան> մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթին մասնակցում է Հայաստանի բոլոր մարզերի, Արցախի և Ջավախքի հանրակրթական, երաժշտական և արվեստի դպրոցների շուրջ 120 մանկապատանեկան երգչախումբ (մասնակիցների շրջանակները ընդլայնելու նպատակով 2009 թվականին 25 %-ով ավելացվել է ֆինանսավորումը:

Վերջին երկու տարիներին հանրապետությունում կազմակերպված 30 փառատոներից 17-ը անցկացվել են ՀՀ մարզերում, մասնավորապես՝ թատերական 10 փառատոներից 5-ը անցկացվել են ՀՀ Կոտայքի, Լոռու, Սյունիքի մարզերում, իսկ երևանյան փառատոներին ակտիվ մասնակցություն են ունեցել ՀՀ մարզերի ներկայացուցիչները:

Մարզային պետական աջակցություն մշակութային միջոցառումներին ՀՀ պետական բյուջեից 2008, 2009 և 2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 88419.8, 79200.6 և 89393.0 հազ. դրամ:

Միջազգային մշակութային համագործակցություն

Մշակույթի ոլորտում միջազգային համագործակցությունը միտված է արտերկրի հետ մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը, դրանց ներդաշնակ համադրմանը, արտերկրում մշակույթի նպատակաուղղված քարոզչության իրագործմանը:

Եվրամիության հետ համագործակցության շրջանակներում առանցքային է Հայաստանը տարածաշրջանային մշակութային կենտրոնի վերածելու խնդիրը: Այս ուղղությամբ արդեն իսկ որոշակի քայլեր են ձեռնարկվել: Մասնավորապես.

- 2009 թվականից <Ոսկե ծիրան> միջազգային կինոփառատոնի կինոդպրոցը վերածվեց տարածաշրջանային կենտրոնի (դպրոցում աշխարհահռչակ կինոգործիչների դասավանդմամբ վարպետության դասընթացներ են անցնում Թուրքիայից, Իրանից, Վրաստանից, Ռուսաստանից):

- Հայաստան-Եվրամիություն մշակութային համագործակցության շրջանակներում 2009 թվականից մեկնարկեց <Արևելյան գործընկերության> ծրագիրը, որի գործնական կիրառումը կսկսվի 2011 թվականին և առավել կընդլայնվի 2011-2013 թվականների ընթացքում: Ծրագրի բաղկացուցիչ մասն է կազմում <Մարդկանց միջև շփումներ> պլատֆորմը, որի շրջանակներում Հայաստանը ծրագրում է իրականացնել երկու նախագիծ. <Մշակութային բազմազանությունը որպես ազգային հարստություն և համաեվրոպական ժառանգություն> պանելային քննարկումը և <Գրական տապան. 10 տարի անց> Հայաստան-Եվրամիություն գրական նախագիծը:

Շարունակվում է համագործակցությունը Եվրախորհրդի հետ, որը հիմնված է <Սպիտակ գիրք> և <Կիևյան նախաձեռնություն> ծրագրերի վրա:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության շրջանակներում արդեն երրորդ տարին է ինչ իրականացվում են համաֆինանսավորվող ծրագրեր. եթե 2008 թվականին անցկացվել է միայն Վ.Սարոյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովը, ապա 2009 թվականին իրականացվել է 3-ը՝ <Դուրուկի երաժշտության կայքի բացում>, <Թանգարանային ոլորտի մասնագետների սեմինար-վերապատրաստում>, <Մշակութային քաղաքականություն. քաղաքականություն մշակույթի համար. մշակութային քաղաքականության նոր ուղիները> ԱՊՀ երկրների տարածաշրջանային կոնֆերանսը՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ:

Շարունակվում է ակտիվ համագործակցությունը ԱՊՀ կառույցների հետ: Մասնավորապես՝ ՀՀՄՀ շրջանակներում Հայաստանի մասնակցությամբ և նախաձեռնությամբ իրականացվող ծրագրերի թիվը տարեցտարի ավելանալով, 2009 թվականին հասել է 19-ի՝ 2008 թվականի 8 ծրագրի համեմատ:

2009 թվականին Հայաստանը, իբրև Ֆրանկոֆոնիայի կազմակերպության ասոցացված անդամ, առաջին անգամ մասնակցեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ Լիբանանում կազմակերպված Ֆրանկոֆոնիայի 6-րդ միջազգային մշակութային խաղերին: Միաժամանակ, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության հետ համատեղ, Հայաստանում ևս կազմակերպվեցին միջոցառումներ, որոնք անց են կացվում <Ֆրանկոֆոնիայի օրեր> խորագրի ներքո:

Ընդհանուր առմամբ 2008 և 2009 թվականներին միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ իրականացվել են համապատասխանաբար 12 և 14 համաֆինանսավորվող և համատեղ ծրագրեր: Ստորագրված պայմանագրերի շրջանակներում Հայաստանում և արտերկրում իրականացվել են համապատասխանաբար 25 և 30 ծրագրային միջոցառումներ:

Վերջին տարիների միջազգային ծրագրերում եվրասիտեգրումը դիտարկվել է իբրև գերակա ուղղություն: Մի կողմից շարունակվել է համագործակցությունը եվրոպական ավանդական գործընկեր-երկրների (Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա) հետ. քայլեր են ձեռնարկվել համատեղ կինոարտադրության, ինչպես նաև՝ այլ մշակութային (թատերական, գրական, ցուցահանդեսային) համատեղ նախագծեր սկսելու ուղղությամբ, մյուս կողմից համագործակցության աշխարհագրությունն ընդլայնվել է դեպի Եվրամիության նոր երկրներ (Բուլղարիա, Սլովակիա, Սլովենիա, Խորվաթիա, Սերբիա, Չեխիա, Հունգարիա):

Մշակութային համագործակցության աշխարհագրության ընդլայնման արդյունքում հետագա տարածում ստացան մշակութային տարիների, սեզոնների, օրերի ձևաչափերը (Հայաստանում Բուլղարիայի մշակույթի տարի, Գերմանական մշակույթի շաբաթներ, Վրացական մշակույթի սեզոններ, ՌԴ-ում Հայկական մշակույթի սեզոններ, <Ռուսական խոսքի օրեր>):

Ընդհանուր առմամբ 2008-2009 թվականների ընթացքում իրականացված միջոցառումների և փոխանակումների արդյունքում Հայաստանից գործուղվեց և Հայաստան այցելեց ավելի քան 5400 մարդ:

Ֆինանսական ճգնաժամի պատճառով մի շարք միջազգային ծրագրեր հետաձգվել են 2010 թվական: Սակայն անհրաժեշտ է նշել, որ միջազգային ծրագրերի կտրուկ աճը համահունչ չէ պետական բյուջեի հնարավորություններին, այն դեպքում, երբ 2008 թվականին 148202.4 հազ. դրամ հատկացման շրջանակներում իրականացվել է 25 ծրագիր, 2009 թվականին՝ 214331.0 հազ. դրամ հատկացման շրջանակներում՝ 30 ծրագիր, 2010 թվականին 146605.3 հազ. դրամ հատկացումը տրամադրվելու է 37 ծրագրի իրականացման համար:

2011-2013 թվականներին միջազգային գործունեությունը միտված է լինելու եվրոպական կառույցներին ինտեգրմանը, համագործակցության աշխարհագրության ընդլայնմանը, հայ մշակույթի հանրահռչակմանը և մշակութային արժեքների տարածմանը, մշակութային համագործակցության իրավապայմանագրային դաշտի զարգացմանը:

Ազգային փոքրամասնությունների ինքնության պաշտպանություն

Վերջին տարիներին պետական ծրագրերում կարևոր տեղ են զբաղեցնում ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանումն ու զարգացումը: Այդ նպատակով կազմակերպվում են նրանց ազգագրությունն ու ժամանակակից արվեստը ներկայացնող ցուցահանդեսներ, համերգներ, փառատոներ: Մասնավորապես՝ 2008 թվականին ՀՀ Լոռու մարզում ՀՀ ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոնին մասնակցեցին 11 ազգային միությունների 250 ներկայացուցիչներ: 2008 թվականին վերականգնվեց ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս գյուղի հրեական գերեզմանատունը: 2008 թվականին նկարահանվեց <Մեր երգն ու մեր հուշարձանը>, իսկ 2009 թվականին՝ <Ատորիները Հայաստանում> տեսաֆիլմերը:

Ոլորտին պետական բյուջեից 2008, 2009 և 2010 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 12377.1, 15008.0, 16318.0 հազ. դրամ: 2011-2013 թվականներին ոլորտին ուղղվող ամեամյա հատկացումներում կպահպանվեն 2010 թվականին հաստատված բյուջետային հատկացումների մակարդակը:

10.1.1.2. Հիմնական խնդիրները

Մշակութային ժառանգության պահպանություն

Թանգարաններ.

- *թանգարաններում պահվող մշակութային ժառանգության պահպանությունը՝ դրանց վերականգնման ու ամրակայման միջոցով և հանրայնացումը՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ,*
- *թանգարանների պայմանների բարելավումը՝ ֆոնդապահոցներում կայուն ջերմախոնավային մթնոլորտի, թանգարանային առարկաների անվտանգության ապահովման միջոցով,*
- *հավաքածուների թվայնացումը՝ արդի միջազգային փորձի կիրառմամբ,*
- *մշտական ցուցադրությունների նորացումը՝ ցուցանմուշների պարբերական թարմացման (փոխարինման) միջոցով,*

- *թանգարանային առարկաների համալրումը՝ նպատակային գնման միջոցով,*
- *ոլորտի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործումը՝ թանգարանային գործունեության արդի պահանջներին համահունչ:*

Գրադարաններ.

- *գրադարանների հավաքածուների մատչելիության ապահովումը՝ հավաքածուների թվայնացված տարբերակի ստեղծմամբ, սպասարկվող միավորների ծավալների ավելացմամբ,*
- *գրադարանային հավաքածուների պահպանումը և օգտագործումը՝ դրանց վերականգնմամբ, նպատակային համալրմամբ, դիտանցումների իրականացման, հնատիպ գրքերի, հին մամուլի և եզակի գրքանմուշների թվայնացմամբ,*
- *գրադարանային ֆոնդի օգտագործման իրավահավասարության ապահովումը՝ էլեկտրոնային ընթերցատոմսի միասնական համակարգի ներդրմամբ,*
- *գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների մատուցման մատչելիության ապահովումը՝ ՀՀ ողջ տարածքում (ներառյալ սահմանամերձ և հեռավոր մարզերը) հասարակության բոլոր խավերի (այդ թվում՝ կույր և թույլ տեսող, սակավ շարժունակ դարձած անձանց) համար,*
- *գրադարանների գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովումը՝ շենքերի հիմնանորոգման ու վերանորոգման, անվտանգության, ջերմախոնավային համակարգերի ձեռքբերման ու տեղակայման, ժամանակակից տեխնիկական միջոցներով վերազինման ճանապարհով,*
- *մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը՝ աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործմամբ, IFLA-ի (Գրադարանների և գրադարանային աշխատակիցների միջազգային ասոցիացիա) կողմից մշակված գրադարանային աշխատակիցների վարքագծի կանոնների, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ:*

Արխիվային գործ.

- *արխիվային փաստաթղթերի պահպանումը՝ դրանց ախտահանմամբ, վերականգնմամբ և թվայնացմամբ,*
- *փաստաթղթերի էլեկտրոնային շտեմարանի ստեղծումը՝ տեղեկատվական և որոնողական համակարգերի ներդրմամբ,*
- *արխիվային փաստաթղթերի մատչելիության ապահովումը՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ, մատուցվող ծառայությունների որակի բարձրացմամբ, Հայաստանի արխիվների ավտոմատացված ցանցի և միասնական տեղեկատվական բանկի ստեղծմամբ,*
- *արխիվապահոցային տարածքների ընդլայնումը՝ փաստաթղթերի պահպանվածության համար անհրաժեշտ տարածքների ապահովմամբ:*

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ.

- *պատմամշակութային հուշարձանների պահպանության ապահովումը` հաշվառման, ուսումնասիրման, վերականգնման ծրագրերի իրականացմամբ, ինչպես նաև պեղումների իրականացման երկարաժամկետ և արտակարգ իրավիճակների հետևանքով վտանգված հուշարձանների վերականգնման ծրագրերի մշակմամբ,*
- *պատմամշակութային հուշարձանների օգտագործումը` զբոսաշրջային երթուղիներում վերականգնված հուշարձանների ներառմամբ և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծմամբ,*
- *պատմամշակութային հուշարձանների հանրայնացումը` հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության առանձին կայքով և համացանցում ներկայացմամբ, գիտահետազոտական, գիտացուցադրական, հավաքչական աշխատանքների ուղղորդմամբ մատենաշարերի հրատարակմամբ,*
- *պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հուշարձանների սեփականատերերի և օգտագործողների փոխհարաբերությունների կանոնակարգումը` ՀՀ մարզերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակների լրամշակմամբ, ճշգրտմամբ, պետական կադաստրի ստեղծմամբ և վարմամբ,*
- *Հայ Առաքելական եկեղեցու հետ համագործակցության ընդլայնումը` հուշագրի ստորագրմամբ և հուշարձանների պահպանության և օգտագործման ոլորտում համատեղ ծրագրերի իրականացմամբ:*

Ոչ նյութական մշակութային ժառանգություն.

- *ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության և օգտագործման գործընթացների ապահովումը` ոչ նյութական մշակութային արժեքների փաստաթղթավորման, նույնականացման, հետազոտման, կիրառման, տարբեր ուղղությունների վերակենդանացման, այդ արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանության միջոցով,*
- *ոչ նյութական մշակութային արժեքներին հաղորդակցվելու և համապատասխան ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովումը` ոչ նյութական մշակութային արժեքների ստեղծման գործում անհատների մասնակցությանը աջակցության ցուցաբերմամբ,*
- *ոչ նյութական մշակութային ժառանգության հանրահռչակումը` ոչ նյութական ժառանգության բնագավառում միջազգային փոխանակումների ապահովմամբ, արտերկրում պահպանությամբ և պաշտպանությամբ,*
- *ոչ նյութական մշակութային ժառանգության զարգացումը` արհեստագործական կենտրոնների ստեղծմամբ, ժողովրդական արհեստագործներին պետական աջակցության տրամադրմամբ, դրամաշնորհային ծրագրերի իրականացմամբ:*

Ժամանակակից արվեստի զարգացում

- *վշակութային կազմակերպությունների՝ թատրոնների, համերգասրահների, վշակութային կենտրոնների բնականոն գործունեության ապահովումը՝ շենքերի և շինությունների վերանորոգմամբ, սեփական տարածքներ չունեցող և անբավարար պայմաններում գործող թատերահամերգային կազմակերպություններին անհրաժեշտ տարածքների տրամադրմամբ (իրենց գործունեության համար անհրաժեշտ սեփական տարածքներ չունեցող, ինչպես նաև անբավարար պայմաններում գործող <Տկզար>, Գուսանական և Ժողովրդական երգի պետական համույթների, Հայաստանի Ժողովրդական նվագարանների նվագախմբի, Հայ հոգևոր երաժշտության կենտրոնի փորձասենյակների և (առկա) բեմի հարցը դեռևս մնում է չլուծված), ինչպես նաև արդիական նյութատեխնիկական միջոցների համալրմամբ (այդ թվում՝ երաժշտական գործիքների, համակարգչային տեխնիկայի, լուսաձայնային տեխնիկայի և այլ նոր սարքավորումների ձեռքբերում),*
- *մատուցվող ծառայությունների որակի ապահովումը՝ պետական պատվերների և ստեղծագործությունների գնման համակարգի զարգացմամբ, խաղացանկի նոր ստեղծագործություններով համալրմամբ, փառատոների ու մրցույթների իրականացմամբ, երիտասարդ ստեղծագործական ներուժի բացահայտմամբ, ստեղծագործական խմբերի գործունեությունը խթանող դրամաշնորհային ծրագրերի իրականացմամբ,*
- *ժողովրդական երաժշտարվեստի կայուն զարգացման ապահովումը՝ ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավմամբ,*
- *Ժամանակակից կոմպոզիտորների նոր մշակումների, ժողովրդական համույթների երկացանկերի թարմացումն ու համալրումը՝ ավանդական երաժշտության ժամանակակից մոտեցումների ներդրման ծրագրերի իրականացմամբ:*
- *դրամատիկական ստեղծագործությունների գնման համակարգի զարգացումը՝ թատրոնների կողմից ներկայացվող պահանջարկի ձևավորմամբ,*
- *փառատոների ու մրցույթների իրականացման, հյուրախաղային գործունեության ապահովումը.*
- *երիտասարդ ստեղծագործական ներուժի բացահայտումը՝ դեբյուտային ծրագրերի իրականացմամբ.*

ՀՀ մարզերում վշակույթի համաչափ զարգացում.

- *ՀՀ մարզերում և համայնքներում վշակութային կյանքի աշխուժացման ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը՝ ՀՀ մարզեր թատերահամերգային հյուրախաղերի, հանրապետական միջոցառումների տեղափոխմամբ,*
- *ՀՀ մարզերում և համայնքներում վշակութային կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովումը՝ նյութատեխնիկական բազայի համալրմամբ, հիմնանո-*

րոգման աշխատանքների իրականացմամբ (ՀՀ մարզերում մշակութային կազմակերպությունների շենքերի 60.3 %-ը ունի կապիտալ, 27.8 %-ը՝ ընթացիկ վերանորոգման կարիք, վերանորոգված է 11.9 %-ը: Հետազոտության արդյունքում չի գործում մշակութային կազմակերպությունների 5.3%-ը և տարածքի բացակայության պատճառով 8.7 %-ը տեղակայված է այլ շենքերում, հիմնականում՝ գյուղապետարաններում),

- *ՀՀ մարզերում բնակչության գեղագիտական զարգացումն ու հանգստի կազմակերպումը՝ մշակույթի տների և կենտրոնների գործարկմամբ, ժողովրդական վարպետներին տրամադրվող պետական աջակցության ընդլայնմամբ և ՀՀ մարզերում ու համայնքներում արհեստագործական կենտրոնների ստեղծմամբ:*

Միջազգային մշակութային համագործակցություն.

- *իրավապայմանագրային դաշտի և համագործակցության շրջանակների զարգացումն ու ընդլայնումը՝ արդեն իսկ ավանդական դարձած ԱՊՀ, Եվրոպայի և Արևելքի, միաժամանակ Եվրոպայի, մերձբալթյան և սկանդինավյան երկրների, Լատինական Ամերիկայի, Միջին Ասիայի հանրապետությունների, Ծոցի երկրների հետ,*
- *հայ մշակույթի հանրահռչակումն արտերկրում ու արտերկրների մշակույթների ներկայացումը Հայաստանում՝ փոխադարձ մշակույթի օրերի անցկացման միջոցով՝ զարգացնելով <մշակութային տարիներ>, <մշակութային սեզոններ>, <հանդիպումներ հայ մշակույթի հետ> ձևաչափերը,*
- *արտերկրում բնակվող հայազգի ներկայացուցիչների մշակութային ինքնության պահպանությունը,*
- *միջազգային կառույցներին (Եվրախորհուրդ, Եվրամիություն, ԱՊՀ, ՀՀՄՀ, ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ) ինտեգրումը՝ մշակույթի ոլորտին առնչվող միջազգային կոնվենցիաներին միանալով, եվրոպական և միջազգային կառույցների ու կազմակերպությունների հանդիպումներում համագործակցության շարունակմամբ:*

Ազգային փոքրամասնությունների հետ համագործակցություն.

- *Հայաստանի մշակութային կյանքում ոչ հայազգի բնակչության լիարժեք ինտեգրումը՝ մշակութային միջոցառումների և ծրագրերի կազմակերպման ու իրականացման գործում ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների և անհատ ներկայացուցիչների ներգրավմամբ:*

10.1.2. ՈԼՈՐՏԻ (ՀԱՄԱԿԱՐԳԻ) ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

10.1.2.1. Նպատակները

- * *Մշակութային ժառանգության պահպանություն*

Ակնկալվող արդյունքը` մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) անխաթար պահպանումը, հանրության համար դրանց մատչելիության ապահովումը, մշակութային զբոսաշրջության խթանումը և դրան հետևող տնտեսական զարգացումը:

*** Ժամանակակից արվեստի զարգացում**

Ակնկալվող արդյունքը` երիտասարդ ստեղծագործական ներուժի բացահայտումը, դրա զարգացման համար պայմանների ստեղծումը և ներգրավումը ժամանակակից ստեղծագործական գործընթացներում, խաղացանկերի և երկացանկերի ժանրային ու ոճական բազմազանության և որակի ապահովումը, մշակութային արտադրանքի մրցունակության ապահովումը միջազգային ասպարեզում:

*** Մշակույթի համաչափ զարգացում**

Ակնկալվող արդյունքը` մշակութային ենթակառուցվածքների համաչափ բաշխվածության, մարզերում գործող մշակութային կազմակերպությունների բնականոն գործունեության, Երևանի և ՀՀ մարզերի միջև գոյություն ունեցող տարբերությունների վերացման գործընթացի ձեռնարկումը և միասնական մշակութային քաղաքականության իրականացման ապահովումը, մշակութային արժեքներից, մշակութային-կրթական և տեղեկատվական ծառայություններից օգտվելու, մշակութային գործունեություն իրականացնելու մատչելիության ապահովումը:

*** Միջազգային համագործակցության զարգացում**

Ակնկալվող արդյունքը` արտերկրի հետ մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնումը և խորացումը, հայ մշակույթի հանրահռչակումը, միջազգային կազմակերպություններին, այդ թվում` Եվրամիությանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից մասնագիտական կառույցներին անդամակցումը և ակտիվ մասնակցությունը, միջազգային ծրագրերին հայաստանյան կազմակերպությունների մասնակցության աճի ապահովումը, հայաստանյան հասարակությանը աշխարհի ժողովուրդների մշակույթին հաղորդակից դարձնելու գործընթացի ապահովումը:

10.1.2.2. Գերակայությունները

Մշակույթի ոլորտի զարգացման հիմնական գերակա ուղղություններն են.

- Հայկական ծագում ունեցող մշակութային ժառանգության (նյութական, ոչ նյութական) միավորների հաշվառում և վերահաշվառում, ընդհանուր տեղեկատվական շտեմարանի ձևավորում, դրա մատչելիության ապահովում և հանրայնացում: *Հիմք` ՀՀ Կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր` 4.4.4. <Մշակույթ> բաժին:*
- Առավել վտանգված մշակութային ժառանգության միավորների վիճակի ուսումնասիրությանը, պահպանությանն ուղղված ծրագրերի կազմում: *Հիմք` ՀՀ Կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր` 4.4.4. <Մշակույթ> բաժին, ՀՀ Կառավարության 2008թ. հոկտեմբերի 10-ի <Կայուն զարգացման ծրագիր> N 1207-Ն որոշում:*

- Մշակույթի բոլոր ոլորտներում կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման, վերաորակավորման նպատակային ծրագրերի իրականացում: *Հիմք` ՀՀ Կառավարության 2010թ. հունվարի 14-ի <Մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերաորակավորման համալիր ծրագիրը հաստատելու մասին> N73-Ն որոշում:*
- Մշակույթի ոլորտի աշխատողների սոցիալական վիճակի բարելավում` միջին ամսական աշխատավարձի բարձրացման պայմանների ապահովմամբ: *Հիմք` <Մշակութային օրենսդրության հիմունքների մասին> ՀՀ օրենք, ՀՀ Կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի <Կայուն զարգացման ծրագիր> N 1207-Ն որոշում:*
- Մարզերում մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովում: *Հիմք` ՀՀ Կառավարության 2007թ. ապրիլի 5-ի <ՀՀ մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին> N 589-Ն որոշում:*
- Ժամանակակից մշակութային մրցունակ արտադրանքի ստեղծում: *Հիմք` ՀՀ Կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր` 4.4.4. <Մշակույթ> բաժին:*
- Ժամանակակից արվեստի զարգացման համար ենթակառուցվածքների նյութատեխնիկական արդիականացում: *Հիմք` ՀՀ Կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր` 4.4.4. <Մշակույթ> բաժին:*
- Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանություն: *Հիմք` ՀՀ Կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր` 4.4.4. <Մշակույթ> բաժին:*

10.1.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով մշակույթի ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ` կտատանվի 0.26-0.28% շրջանակներում:

2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով մշակույթի ոլորտին (ներառյալ կապիտալ շինարարության ծախսերը) նախատեսվում է ուղղել` 2011 թվականին` 10082.0 մլն դրամ, 2012 թվականին` 10220.0 մլն դրամ և 2013 թվականին` 10612.0 մլն դրամ: Ծախսերի աճը 2011 թվականին 2010 թվականի նկատմամբ կկազմի 4.8 %, 2012 թվականին 2011 թվականի նկատմամբ` 1.37 %-ով, 2013 թվականին 2012 թվականի նկատմամբ` 3.83 %-ով:

Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

- Մշակույթի ոլորտի աշխատողների աշխատավարձի բարձրացումը` 2011 թվականին` 15 %-ով, 2013 թվականին` 10 %-ով,
- Գազի և ջրի սակագների աճի հետ կապված` ծառայությունների ֆինանսավորման ապահովումը,
- Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման ծրագրի իրականացումը, ինչպես նաև հուշարձանների վերանորոգումը և վերականգնումը:


Աղյուսակ 10.1. Մշակույթի ոլորտի պետական ծախսերը 2009-2013 թվականներին` ըստ ուղղությունների (մլն դրամ)

Բաժին, խումբ, դաս	Խմբերի անվանումները	Փաստացի	Հաստատված	2011-2013թթ. ՄԺԾԾ		
		2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
08	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը, այդ թվում	9 824.6	9616.6	10 082.0	10 220.0	10 611.5
08.02.01.	Գրադարաններ	994.0	1036.3	1 151.4	1 151.4	1 242.5
08.02.02.	Թանգարաններ և ցուցասրահներ	1 493.4	1 500.1	1 646.2	1 646.2	1 764.8
08.02.03.	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	48.6	29.3	32.5	32.5	35.0
08.02.04.	Այլ մշակութային հիմնարկներ	979.0	624.9	680.5	680.5	721.7
08.02.05.	Արվեստ	4 063.9	4 147.0	4 267.4	4 405.4	4 525.3
08.02.06.	Կինեմատոգրաֆիա	612.6	612.7	630.4	630.4	644.0
08.02.07.	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	72.9	132.9	138.9	138.9	143.6
08.04.02.	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	179.6	179.6	179.6	179.6	179.6
	Հուշարձանների վերանորոգում և վերականգնում	331.0	213.3	215.0	215.0	215.0
	Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման ծրագիր	1 049.6	1140.5	1 140.0	1 140.0	1 140.0

Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման ծրագիրը, ինչպես նաև հուշարձանների վերականգնման ծախսերը նախատեսվել են, նկատի ունենալով մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարական շարունակական բնույթի ապահովումը և համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերով ապահովվածությունը :

Մշակութային օբյեկտների հիմնանորոգման, շինարարության և վերակառուցման ծրագրի շրջանակներում 2011-2013 թվականներին նախատեսվում է 3.4 մլրդ դրամ /յուրաքանչյուր տարվա համար 1.14 մլրդ դրամ/ :

Գծանկար 10.1. 2011 թվականի մշակույթի ոլորտում ծախսերի կառուցվածքը` ըստ ենթախմբերի (%)



10.1.4. ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՍՈՒՏԵՐԸ

Մշակույթի ոլորտում, պետական բյուջեից ստացված հատկացումների հետ մեկտեղ, ծախսերի իրականացմանն են ուղղվում նաև սեփական եկամուտները:

Սեփական եկամուտները գոյանում են հիմնականում վճարովի ծառայությունների մատուցումից, տոմսերի վաճառքից, դահլիճների և տարածքների վարձավճարից, կինոնկարների իրացումից:

Վճարովի ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներն ուղղվում են աշխատավարձի լրավճարներին, ապրանքների ձեռքբերմանը, կոմունալ ծառայությունների ծախսերի իրականացմանը, գրքային և թանգարանային հավաքածուների համալրմանը :

Աղյուսակ 10.2. Մշակույթի ոլորտի պետական հատվածի 2009-2013 թվականներին ստացվելիք եկամուտները (մլն դրամ)

Բաժին	Պետական աջակցություն ստացող իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտների անվանումները	2009թ.		2010թ.		2011թ.		2012թ.		2013թ.	
		բյուջեի սիջոցներով	սեփական եկամուտների հաշվին	բյուջեի սիջոցներով	սեփական եկամուտների հաշվին	բյուջեի սիջոցներով	սեփական եկամուտների հաշվին	բյուջեի սիջոցներով	սեփական եկամուտների հաշվին	բյուջեի սիջոցներով	սեփական եկամուտների հաշվին
		փաստացի		ծրագիր		կանխատեսում					
	ԸՆԴԱՄԵՆԸ	5526.3	1025.9	5648.6	1012.6	6342.8	1024.0	6342.8	1036.9	6827.8	1048.5
	այդ թվում										
08	1.Վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից, որից տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	5526.3	979.5	5648.6	1007.6	6342.8	1018.0	6342.8	1030.9	6827.8	1042.5
		84.9	15.1	84.9	15.1	86.2	13.8	86.0	14.0	86.8	13.2

08.02.01	ՀՀ ՄՆ ենթակայության գրադարաններ	729.3	23.5	731.6	21.8	817.2	21.8	817.2	21.8	882.7	21.8
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	96.9	3.1	97.1	2.9	97.4	2.6	97.4	2.6	97.6	2.4
08.02.01	<Հանրապետական գիտաբժկական գրադարան> ՊՈԱԿ	37.6	0.7	37.6	0.7	41.7	0.8	41.7	0.9	44.9	0.9
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	98.2	1.8	98.2	1.8	98.1	1.9	97.9	2.1	98.0	2.0
08.02.01	<Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն> ՊՈԱԿ	55.2	0.8	113.9	1.0	126.5	1.2	126.5	1.5	136.0	1.8
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	98.6	1.4	99.1	0.9	99.1	0.9	98.8	1.2	98.7	1.3
08.02.01	<Հայաստանի ազգային գրապլատ> ՊՈԱԿ	52.6	5.7	52.7	5.3	58.5	5.5	58.5	5.7	62.86	5.9
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	90.2	9.8	90.9	9.1	91.4	8.6	91.1	8.9	91.4	8.6
08.02.02	ՀՀ ՄՆ ենթակայության թանգարաններ	1081.4	160.7	1092.6	184.0	1220.2	184.0	1220.2	184.0	1305.9	184.0
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	87.1	12.94	85.6	14.4	86.9	13.1	86.9	13.1	87.7	12.3
08.02.02	Երևանի քաղաքապետարան ի ենթակայության թանգարաններ	121.7	3.21	121.9	3.5	135.8	3.8	135.8	4.0	146.4	4.1
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	97.4	2.57	97.2	2.8	97.3	2.7	97.2	2.8	97.3	2.7
08.02.02	<Գեղարքունիքի մարզի երկրագիտական թանգարան> ՊՈԱԿ	12.8	0.03	12.8	0.0	14.4	0.4	14.4	0.0	15.6	0.0
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	99.8	0.22	99.7	0.3	97.6	2.4	99.8	0.2	99.7	0.3
08.02.02	<Սարդարապատի հերոսամարտի հու- շահամակիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատ- մության ազգային թանգարան> ՊՈԱԿ	104.8	9.00	107.8	9.0	120.5	9.0	120.5	9.0	128.5	9.0
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	92.1	7.91	92.3	7.7	93.1	6.9	93.1	6.9	93.5	6.5
08.02.03	<Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն> ՊՈԱԿ	25.4	0.2	25.4	0.1	28.1	0.1	28.1	0.1	30.1	0.1
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր</i>	99.4	0.6	99.6	0.4	99.6	0.4	99.6	0.4	99.7	0.3

	<i>ծախսերում, %</i>										
08.02.04	<Հայաստանի ազգային արխիվ> ՊՈԱԿ	308.1	162.7	333.1	93.2	373.5	93.2	373.5	105.0	403.2	106.4
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	65.4	34.6	78.1	21.9	80.0	20.0	78.1	21.9	79.1	20.9
08.02.04	<Երևանի կենդանաբանական այգի> ՊՈԱԿ	180.0	46.5	188.4	50.0	194.6	55.0	194.6	60.0	199.5	62.6
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	79.5	20.5	79.0	21.0	78.0	22.0	76.4	23.6	76.1	23.9
08.02.04	<Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն> ՊՈԱԿ	29.3	15.0	29.3	20.0	32.7	20.0	32.7	20.0	35.4	20.0
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	66.1	33.9	59.4	40.6	62.1	37.9	62.1	37.9	63.9	36.1
08.02.05	<Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն> ՊՈԱԿ	556.8	112.5	560.6	100.0	633.2	109.4	633.2	110.4	683.767	111.319
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	83.2	16.8	84.9	15.1	85.3	14.7	85.2	14.8	86.0	14.0
08.02.05	<Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն> ՊՈԱԿ	228.3	41.3	240.7	51.2	269.6	46.3	269.6	46.3	287.068	46.3
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	84.7	15.3	82.5	17.5	85.3	14.7	85.3	14.7	86.1	13.9
08.02.05	ՀՀ ՄՆ ենթակայության թատրոններ	831.7	173.3	839.1	226.4	960.8	225.7	960.8	218.9	1036.6	225.75
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	82.8	17.2	78.8	21.2	81.0	19.0	81.4	18.6	82.1	17.9
08.02.05	Երևանի քաղաքապետարանի ենթակայության թատրոններ	204.9	58.0	205.7	60.6	236.0	61.0	236.0	62.2	257.214	61.31
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	77.9	22.1	77.2	22.8	79.5	20.5	79.1	20.9	80.8	19.2
08.02.05	Գեղարքունիքի մարզի <Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոն> ՊՈԱԿ	33.0	0.5	33.0	1.0	37.3	1.0	37.3	1.3	40.505	1.3
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	98.4	1.6	97.1	2.9	97.4	2.6	96.6	3.4	96.9	3.1
08.02.05	ՀՀ ՄՆ ենթակայության համերգային կազմակերպություններ	816.2	164.9	805.1	178.9	910.4	178.9	910.4	178.9	989.0	178.9

	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	83.2	16.8	81.8	18.2	83.6	16.4	83.6	16.4	84.7	15.3
08.02.06	<Հայաստանի ազգային կինո-կենտրոն> ՊՈԱԿ	117.4	1.0	117.4	1.0	131.7	1.0	131.7	1.0	142.7	1.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	99.2	0.8	99.2	0.8	99.3	0.7	99.3	0.7	99.3	0.7
	2.Ստացվող նվիրատվություններ ից, որից	0.0	46.4	0.0	5.0	0.0	6.0	0.0	6.0	0.0	6.0
08.02.01	<Խնկո Ապրր անվան ազգային մանկական գրադարան> ՊՈԱԿ	0.0	5.9								
08.02.01	<Հանրապետական գիտաթվական գրադարան> ՊՈԱԿ		0.0		0.0		1.0		1.0		1.0
08.02.03	<Երևանի կենդանաբանական այգի> ՊՈԱԿ		2.4		2.4		2.4		2.4		2.4
08.02.05	ՀՀ ՄՆ ենթակայության թատրոններ		33.1		2.0		2.0		2.0		2.0
08.02.05	Երևանի քաղաքապետարանի ենթակայության թատրոններ		5.1		0.6		0.6		0.6		0.6

10.2. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

10.2.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտում 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն թվով 25 ծրագրերի իրականացմանը՝ պետական կառավարման 11 մարմինների միջոցով:

Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտում պետության միջամտության հիմնական ուղղություններն են.

- ✓ **Հեռուստառադիոհաղորդումներ**
- ✓ **Հրատարակչություններ, խմբագրություններ**

Հեռուստառադիոհաղորդումներ

Հեռուստառադիոհաղորդումների գծով պետական ծրագրերը հիմնականում իրականացվում են Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության կողմից:

Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում իրականացված նպատակային ծրագրերը ուղղված են <Հեռուստատեսության և ռադիոյի մասին> ՀՀ օրենքով խորհրդին ամրագրված

լիազորությունների իրականացմանը և օրենքով ամրագրված թեմատիկ ուղղություններով հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը:

2008-2009 թվականներին Հանրային հեռուստաընկերությունը պատրաստել է հեռուստահաղորդումներ երեք հեռուստաալիքներով՝ <Հ1> առաջին ալիքով՝ օրական 24 ժամ հաղորդումներ Երևանում և օրական 19.5 ժամ հեռուստահաղորդումներ ՀՀ տարածքում, <Արարատ> մշակութային հեռուստաալիքով՝ օրական 24 ժամ և <Հ1> միջազգային ալիքով (արբանյակային հեռարձակմամբ՝ օրական 24 ժամ հաղորդումներ ԱՊՀ տարածքում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում):

Հանրային հեռուստաընկերությունը, պահպանելով իր առաջնային դիրքը հայաստանյան հեռուստաշուկայում, պատրաստել է իննը թեմատիկ ուղղություններով հաղորդումներ, որոնց ծավալները ներկայացված են **Աղյուսակ N 10.3 – ում**:

Աղյուսակ N 10.3 2008-2009 թվականներին պատրաստված հեռուստահաղորդումների ծավալները ըստ թեմատիկ ուղղությունների (հաշվի են առնված նաև պրոֆիլակտիկ ժամերի ծավալները)

Հանրային հեռուստաընկերության <Հ1 առաջին> ալիքի հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հաղորդումների պատրաստման ծավալները (ժամ)	
	2008 թվական	2009 թվական
Լրատվական, լրատվական-վերլուծական	797.2	741.8
Քաղաքական, տնտեսական, հասարակական	740.5	629.1
Զվարճալի	375.1	594.8
Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	556.8	639.3
Մշակութային	4,267.4	4,194.3
Կրթական, մանկապատանեկան	362.3	320.3
Մարզական	390.8	146.6
Երաժշտական	854.4	732.7
Հոլովակներ, այլ հաղորդումներ	380.6	709.8
Ընդամենը	8725.1	8708.7

Հանրային հեռուստաընկերության եթերում միշտ մեծ տեղ են գրավել մշակութային, մասնավորապես հայկական մշակույթին նվիրված հաղորդումները:

Հարկ է նշել, որ 2009 թվականին ցուցադրված 10 ամենամեծ հեռուստալսարան ունեցող մշակութային հաղորդումներից 8-ը հեռարձակվել է <Հ1> առաջին ալիքի եթերում:

Հանրային հեռուստաընկերության որդեգրած քաղաքականության շրջանակներում 2008 թվականին <Նոր ալիք> հեռուստաալիքի բազայի վրա ստեղծվեց օրական 24 ժամյա եթերով <Արարատ> մշակութային հեռուստաալիքը, որի նպատակն է մշակութային ժառանգության և արդի մշակութային կյանքի համակողմանի լուսաբանումը՝ արտահայտելով հասարակության տարբեր խմբերի մշակութային հետաքրքրություններն ու ակնկալիքները: Այս հեռուստաալիքի մի շարք հաղորդումներ ներկայացվում են նաև արբանյակային հեռարձակմամբ:

Ներկայումս, հեռուստաալիքը հեռարձակվում է Երևանում, Վանաձորում, Չարենցավանում, Սևանում, Գավառում, Եղեգնաձորում, Ջերմուկում, Ծաղկաձորում և Շիրակի մարզում: Մոտ ապագայում նախատեսվում է ընդլայնել հեռուստաալիքի հեռարձակման գոտին հանրապետության ողջ տարածքում:

Մշակութային բազմաթիվ հաղորդումների հետ մեկտեղ <Արարատ> հեռուստաալիքը հեռուստադիտողին ներկայացնում է նաև <Հայֆիլմ> կինոստուդիայի, <Երևան> ստուդիայի կողմից նկարահանված գեղարվեստական և վավերագրական ֆիլմերը:

Շարունակվել են հեռարձակվել կրթական, մանկապատանեկան հաղորդումներ, որոնց շարքում է <Հայ ասպետ> հեռուստամրցախաղը: Այն նպատակ ունի հասարակության և իրավասու պետական մարմինների ուշադրությունը հրավիրել ապագա սերնդի հայեցի դաստիարակության խնդիրներին, խթանել դպրոցականների ձգտումը գիտելիքների ձեռքբերման և խորացման մեջ:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է բազմաթիվ գեղարվեստական, փաստագրական, գիտահանրամատչելի կինոնկարների, մուլտիպլիկացիոն ֆիլմերի, հեռուստասերիալների կրկնօրինակման աշխատանքները:

Հանրային հեռուստաընկերությունը իր գործունեության ընթացքում հիմնական ուշադրությունը ուղղել է հաղորդումների որակի բարձրացմանը և դրա արդյունքում իր հեռուստալսարանի ընդլայնմանը:

Հեռուստալսարանի չափումներ իրականացնող ընկերության տվյալների համաձայն 2007-2009 թվականներին ՀՀ ամբողջ տարածքում Հանրային հեռուստաընկերության հեռուստադիտողների մասնաբաժինը ընդհանուր հեռուստադիտողների լսարանում համապատասխանաբար կազմել է 27.57%, 21.03%, 18.3%: Նշված ցուցանիշները մեր հարևան և եվրոպական մի շարք երկրների Հանրային հեռուստաընկերությունների համանման ցուցանիշների համեմատությամբ բավականին բարձր են:

Ակնհայտ է, որ 2008-2009 թվականների ընթացքում այս ցուցանիշը որոշակիորեն նվազել է, չնայած նրան, որ Հանրային հեռուստաընկերությունը ևս շարունակել է պահպանել իր առաջատար դիրքը հայկական հեռուստաշուկայում: Ցուցանիշի անկումը հիմնականում պայմանավորված էր նրանով, որ Հանրային հեռուստաընկերությունը նվազեցրել և այնուհետև դադարեցրել է լատինաամերիկյան սերիալների, մի շարք զվարճալի և այլ հեռուստահաղորդումների հեռարձակումը, որոնք ունեին բավականին մեծ հեռուստալսարան:

Դրանց փոխարեն եթերում ավելացել են հասարակական-քաղաքական և մշակութային հաղորդումների, ինչպես նաև հայրենական արտադրության ֆիլմերի հեռարձակման ծավալները:

2007 թվականի համեմատ 2009 թվականին Հանրային հեռուստաընկերության հեռուստադիտողների տոկոսի նվազումը ընդհանուր հեռուստադիտողների լսարանում պայմանավորված էր ոչ միայն Հանրային հեռուստադիտողների որդեգրած քաղաքականության շրջանակներում հեռուստաընկերության հաղորդացանցում կատարված էական փոփոխություններով, այլ նաև կարևոր ազդեցություն է ունեցել այն հանգամանքը, որ լինելով Հանրային հեռուստաալիք,

հեռուստաընկերությունը միջոցներ է ձեռնարկել հնարավորինս պահպանել իր առաջատար դիրքերը հայաստանյան հեռուստաշուկայում, փորձելով ապահովել նաև հավասարակշռություն Հանրայինի առաքելությանը համահունչ սկզբունքների և շուկայական մրցակցության կանոնների միջև:

2006 թվականից Հանրային հեռուստառադիոընկերությունը EBU-ի (Եվրոպական հեռարձակողների միության) լիիրավ անդամ է, ինչը հնարավորություն է տալիս ընդլայնել փոխադարձ համագործակցության շրջանակները կազմակերպության անդամ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հետ, ինչպես նաև Հայաստանը ներկայացնել միջազգային միջոցառումներում (Եվրոտեսիլ, Մանկական Եվրոտեսիլ և այլն):

Հեռուստահաղորդումների արտադրության, ձեռքբերման և հեռարձակման համար 2008-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել են համապատասխանաբար` 2302187.6 և 2348086.8 հազ. դրամ, իսկ 2010 թվականին նախատեսվում է հատկացնել 2458276.5 հազ. դրամ միջոցներ:

2008 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից պատրաստվել են օրական հաղորդումներ <Առաջին ծրագրի> համար` 24 ժամ , <Ռադիո Երևանի>` 21.9 ժամ և <Ռադիո Ջազի>` 23.9 ժամ: Արտասահմանում հեռարձակման համար պատրաստվել է օրական 4.5 ժամ հաղորդումներ:

2009 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից պատրաստվել են օրական հաղորդումներ <Առաջին ծրագրի> համար` 24 ժամ , <Ռադիո Երևանի>` 21.9 ժամ և <Ռադիո Ջազի>` 24 ժամ: Արտասահմանում հեռարձակման համար պատրաստվել է օրական 5 ժամ հաղորդումներ:

Նախապատվություն տալով իր սեփական հաղորդումներին, Հանրային ռադիոընկերությունը ընդլայնել է իր ունկնդիրների շրջանակը` ձգտելով բավարարել լայն շերտերի, տարբեր տարիքային խմբերի և ազգային փոքրամասնությունների նախասիրությունները:

Ռադիոհաղորդումների մեջ լրատվական և տեղեկատվական հաղորդումները կազմել են ռադիոէթերի զգալի ծավալը, որոնք անդրադարձել են քաղաքական, լրատվական, մարզական և այլ բնույթի իրադարձություններին:

Հանրային ռադիոընկերության եթերում իրենց ուրույն տեղն են ունեցել երաժշտական հաղորդումները: Եթերը առավելապես կողմնորոշված է եղել դեպի ազգային, հայկական դասական և ժամանակակից երաժշտությունը :

2009 թվականին ռադիոընկերության հաղորդումները եթեր են հեռարձակվել նաև ինտերնետային կապի միջոցով, որտեղ տեղադրվել է ամենժամյա լուրերի էլեկտրոնային տարբերակը հայերենով և անգլերենով:

2008-2009 թվականներին ռադիոհաղորդումները պատրաստվել են համապատասխանաբար՝ տաս և տասնմեկ թեմատիկ ուղղություններով, որոնց ծավալները ներկայացված են **Աղյուսակ N 10.4 - ում:**

Աղյուսակ N 10.4. 2008-2009 թվականներին պատրաստված ռադիոհաղորդումների ծավալները ըստ թեմատիկ ուղղությունների (հաշվի են առնված նաև պրոֆիլակտիկ ժամերի ծավալները)

Հանրային ռադիոընկերության հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հաղորդումների պատրաստման ծավալները (ժամ)	
	2008 թվական	2009 թվական
Լրատվական	1373.2	1670.8
Հասարակական, քաղաքական, տնտեսական	104.2	116.9
Պատմամշակութային	525.2	866.0
Երիտասարդական և ուսումնական	490.3	808.3
Մանկապատանեկան, կրթական	345.5	569.0
Հոգևոր	403.9	243.1
Երաժշտական, ժամանցային	5539.2	4485.9
Ռադիո <Երևան>	8020.4	6339.5
<Ջազ ռադիո>	8748.0	8760.0
Արտասահմանի համար տրվող հաղորդումներ	1656.3	1102.8
Ինտերնետային էջի համար պատրաստվող հաղորդումներ		547.5
Ընդամենը	27206.2	25509.8

2009 թվականին վերականգնվեցին Հանրային ռադիոընկերության էստրադային սիմֆոնիկ նվագախումբը, Արամ Մերանգույանի անվան ժողովրդական գործիքների անսամբլը և Արևիկ մանկապատանեկան անսամբլը, որոնք տարեվերջին հանդես եկան նոր համերգային ծրագրերով:

Ռադիոհաղորդումների արտադրության, ձեռքբերման և հեռարձակման համար 2008-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել են համապատասխանաբար՝ 691772.2 և 651698.8 հազ. դրամ, իսկ 2010 թվականին նախատեսվում է հատկացնել 652735.4 հազ. դրամ միջոցներ:

Հանրային հեռուստաընկերությունն ու հանրային ռադիոընկերությունը իրենց գործունեությունը սկսել են Ազգային հեռուստատեսությունից և Ազգային ռադիոյից փոխանցված տեխնիկական միջոցներով և շենք-շինություններում: Հետագա գործունեության ընթացքում Հանրային ռադիոընկերությունը գրեթե ամբողջությամբ ավարտել է տեխնիկական վերազինման գործընթացը, որի շնորհիվ ռադիոհաղորդումները հեռարձակվում են ժամանակակից չափանիշներին համապատասխանող տեխնիկական միջոցներով: Հանրային հեռուստաընկերությունում տեխնիկական վերազինման գործընթացն ամբողջությամբ չի ավարտվել:

Շիրակի հանրային հեռուստառադիոն, որը իրականացնում է հեռուստառադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման գործունեություն Շիրակի

մարզում, 2008-2009 թվականներին պատրաստել և հեռարձակել է օրական 8 ժամ հեռուստահաղորդումներ և 24 ժամ ռադիոհաղորդումներ:

Շիրակի հանրային հեռուստառադիոն հեռուստառադիոհաղորդումները պատրաստել է վեց թեմատիկ ուղղություններով՝ լրատվական (լրատվական-վերլուծական), քաղաքական (տնտեսական, հասարակական), մշակութային, մարզական, երաժշտական (ժամանցային) և այլ: Նշված ուղղություններից գերակշռող են եղել ծավալով երաժշտական (ժամանցային) հաղորդումները:

Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռուստառադիոհաղորդումների արտադրության, ձեռքբերման և հեռարձակման համար 2008-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 22961.9 հազ. դրամ, 2010 թվականին նախատեսվում է հատկացնել նույն չափով միջոցներ:

<Միր միջպետական հեռուստառադիոընկերության> հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվում է ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակում:

Համաձայն <հաշվարկային բանալու> սկզբունքի <Միր> միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժինը կազմում է 1.6 տոկոս:

<Միր> միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժնի չափը 2007-2009 թվականներին, յուրաքանչյուր տարի աճել է 10 տոկոսով, ինչը պայմանավորված է ամենամյա միջպետական համաձայնագրերով, հեռուստաթերային ժամերի ավելացմամբ:

<Միր> միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժնի չափը 2008 թվականին կազմել է 74429.0 հազ. դրամ, 2009-2010 թվականներին, յուրաքանչյուր տարի՝ 81872.0 հազ. դրամ:

<Տնտեսական վերլուծությունների ծառայություններ> ծրագրի շրջանակներում իրականացվում են հետևյալ ծառայությունները՝ ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության և գործունեության լուսաբանում հեռուստահաղորդումների միջոցով և ՁԼՄ-ներում, ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետ կայքէջի սպասարկում և ՀՀ կառավարության քաղաքականությունը արտացոլող տպագիր նյութերի հրատարակում:

2009 թվականին պատրաստվել և Հանրային հեռուստատեսությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության լուսաբանման նպատակով հեռարձակվել է 96 հաղորդում, շաբաթական 2 անգամ պարբերականությամբ՝ նախորդ տարիների 48 հաղորդումների դիմաց, ինչպես նաև տպագրվել է 120 հրապարակումներ՝ նախորդ տարիների 96 հրապարակումների դիմաց:

<Տնտեսական վերլուծությունների ծառայություններ> ծրագրի իրականացման համար 2008-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 40552.0 և 41532.0 հազ. դրամ, իսկ 2010 թվականին նախատեսվում է հատկացնել 61532.0 հազ. դրամ միջոցներ:

Հրատարակչություններ, խմբագրություններ

Գրքարվեստի ոլորտի ծրագրերը տարիների ընթացքում պահպանել են հիմնական ուղղությունները և աջակցման ձևերը, միևնույն ժամանակ՝ կատարելագործելով գրքային տպագիր և էլեկտրոնային արտադրանքի որակական չափանիշները և տարածման մեխանիզմները: Գրահրատարակչության ոլորտի պետական ֆինանսավորումը իրականացվում է երկու ուղղություններով՝ պետական պատվերի և աջակցության ձևով: Վերջինը մեկնարկել է միայն 2009 թվականին և նպաստում է պետություն-հրատարակչություն-հեղինակ-ընթերցող հարաբերությունների ձևավորմանը:

2008-2009 թվականներին գրականության հրատարակման համար հատկացվել է համապատասխանաբար 135392.5 և 89692.4 հազ. դրամ՝ 123 և 102 անուն գրքերի հրատարակման համար:

2010 թվականին նախատեսվում է հատկացնել 92392.4 հազ. դրամ՝ 144 անուն գրքերի հրատարակման համար:

Հատկացումներն ուղղվել են հանրագիտարանային, գիտահանրամատչելի, հորեյանական, թարգմանական, մանկական, գեղարվեստական և այլ գրականության հրատարակմանը:

2006-2007 թվականների համեմատ, վերջին երկու տարիներին <Գրականության հրատարակում> ծրագիրն ընդլայնվել է 5 նոր ենթածրագրով (<Երաժշտական և երաժշտագիտական գրականություն>, <Սփյուռքահայ գրականություն>, <Ազգային փոքրամասնությունների գրականություն>, <Մշակութային ժառանգությունը ներկայացնող գրականություն>, <Գիտական գրականություն>):

Առաջիկա տարիներին նախատեսվում է առավել ընդլայնել պետականության ամրապնդմանը, պետական խորհրդանիշերի և քաղաքացիական դաստիարակության մասին գիտելիքների խորացմանը ու դրանց կիրառմանը նվիրված, մշակութային ժառանգությունը և օտար լեզուներով հայ ժողովրդի գրական-մշակութային արժեքները ներկայացնող գրականության հրատարակումը :

Առավել բազմաբնույթ են դարձել հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը գրքային արտադրանքի տեսքով տարածելու և քարոզելու աշխատանքները: Դրան մասնավորապես նպաստել է միջազգային ցուցահանդեսներում, ցուցահանդես-վաճառքներում, գրքարվեստին նվիրված մրցանակաբաշխություններում հայ գրքի ներկայության ապահովումը, հրատարակչական երկկողմ ծրագրերի իրականացումը տարբեր երկրների հետ (Ռուսաստան, Տաջիկստան, Վրաստան), ինչպես նաև Հայաստանում <Գրքարվեստ> հանրապետական մրցանակաբաշխության հիմնադրումը, գրքի միջազգային ամենամյա ցուցահանդեսի ավանդույթի սկզբնավորումը ԱՊՀ և բալթյան երկրների գրողների, թարգմանիչների և հրատարակիչների միջազգային ֆորումի շրջանակում, Գրքի և միջազգային իրավունքի միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպումը:

2009 թվականին հայ գիրքը, բացի արդեն ավանդական դարձած միջազգային ցուցահանդեսներից առաջին անգամ ներկայացվեց նաև Փարիզի գրքի միջազգային ցուցահանդեսում, իսկ

Մայնի Ֆրանկֆուրտի ցուցահանդես-տոնավաճառում հայկական տաղավարի տարածքը 2008 թվականի համեմատ ընդլայնվել է 2.5 անգամ: Ընդլայնվել է նաև ցուցահանդեսների աշխարհագրությունը՝ ներառելով Թեհրանը, Ստամբուլը, Մալոնիկը, Վաշինգտոնը, Բուենոս Այրեսը, Հալեպը և այլն:

<Պետական մամուլի հրատարակում> ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվում են 2 անուն թերթերի հրատարակմանը՝ <Հայաստանի Հանրապետություն> և <Ռեսպուբլիկա Արմենիա>:

2008-2009 թվականներին պետական մամուլի հրատարակման նպատակով հատկացվել է համապատասխանաբար 60138.9 և 68869.3 հազ. դրամ: 2008-2009 թվականներին հրատարակվել է <Հայաստանի Հանրապետություն> թերթի 264 և 252 համար, իսկ <Ռեսպուբլիկա Արմենիա> թերթի՝ 100 և 89 համար: 2009 թվականի ֆինանսավորման աճը պայմանավորված է աշխատավարձերի ավելացմամբ և համակարգչային տեխնիկայի ձեռքբերմամբ:

<Ոչ պետական մամուլի հրատարակում> ծրագրով 2008 թվականին հրատարակվել է 75 անուն, իսկ 2009 թվականին՝ 69 անուն թերթ և ամսագիր, որից. ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող 9 թերթեր և 3 ամսագրեր, գրական-մշակութային և գիտական 17 թերթեր և 15 ամսագրեր, մարզային մամուլ (Լոռու մարզ՝ 6, Տավուշի մարզ՝ 3, Արարատի մարզ՝ 3, Գեղարքունիքի մարզ՝ 3, Արագածոտնի մարզ՝ 4, Շիրակի մարզ՝ 4, Արմավիրի մարզ՝ 9): Մամուլի անվանացանկերի թվերի տատանումները պայմանավորված են հրատարակիչների պայմանագրային պարտավորությունների կատարմամբ:

2008-2009 թվականներին ոչ պետական մամուլի հրատարակման նպատակով հատկացվել է համապատասխանաբար՝ 44977.1 և 47377.1 հազ. դրամ: 2010 թվականին նախատեսվում է հատկացնել միջոցներ 2009 թվականի մակարդակի չափով:

Հիմնական խնդիրներ

Հեռուստառադիոհաղորդումների ոլորտում հիմնական խնդիրներն են.

✧ հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում գործունեության ընթացքում առաջնորդվել <Հեռուստատեսության և ռադիոյի մասին> ՀՀ օրենքով ամրագրված լիազորություններով և պարտավորություններով,

✧ շարունակել <Արարատ> մշակութային հեռուստաալիքի և <Հ1> արբանյակային ծրագրի 24 ժամյա եթերի ապահովումը, աստիճանաբար ընդլայնել հեռարձակումը, ընգրկելով հանրապետության ողջ տարածքը,

✧ ապահովել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից պատրաստվող և հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը, ավելացնել սոցիալ-տնտեսական ուղղվածության հաղորդումներում աղքատության հաղթահարման ծրագրերի և դրանց ընթացքի վերաբերյալ հաղորդումների տեսակարար կշիռը,

✧ առաջնորդվելով հանրայինի առաքելությամբ՝ միջոցներ ձեռնարկել պահպանելու Հանրային հեռուստաընկերության ու Հանրային ռադիոընկերության առաջատար դիրքերը հայաստանյան հեռուստառադիոշուկայում,

✧ հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների, հասարակական տարբեր շերտերի շահերը, ինչպես նաև մեծ սփյուռքի առկայությունը՝ հետարձակել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության բազմազան հաղորդումներ ամբողջ տարածքում և արտերկրում, ապահովել մեր հանրապետության բնակչության ու սփյուռքահայության համար անկողմնակալ, հավաստի և օպերատիվ տեղեկատվություն,

✧ իրազեկել հասարակությանը ՀՀ կառավարության գործունեության, իրականացվող ծրագրերի և առկա խնդիրների մասին և դարձնել մասնակից իրականացվող բարեփոխումներին:

Հրատարակչությունների, խմբագրությունների ոլորտում հիմնական խնդիրներն են.

✧ գրահրատարակչության ազգային ավանդույթների պահպանումն ու զարգացումը՝ գրքի, տպագիր արտադրանքի և մամուլի հրատարակման պոլիգրաֆիական նորագույն միջոցների կիրառում, գովազդային գործունեության իրականացում, հանրապետության (այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների) և Սփյուռքի ընթերցողական պահանջներին համապատասխան հրատարակումների իրականացում,

✧ համաշխարհային գրական, գիտական, մշակութային արժեքների մատչելիության ապահովում՝ գրքի միջազգային տոնավաճառներին մասնակցություն, Հայաստանի և արտերկրի հրատարակիչների հետ շարունակական համագործակցություն,

✧ հայ գրքի, տպագիր արտադրանքի, մամուլի միջոցով ազգային արժեքների գիտակցման և ճանաչողության ապահովում՝ ազգային մշակութային քարոզչության, ազգային և պետական խորհրդանիշերի հանրահռչակմանը նվիրված հրատարակումների իրականացում,

✧ Հայաստանում և Սփյուռքում իրականացված ծրագրերի, միջոցառումների և հիշարժան իրադարձությունների իրազեկում:

10.2.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱԶԱՏՎԱԾՈՒՄ

10.2.2.1.Նպատակները

Հեռուստառադիոհաղորդումների ոլորտի նպատակներն են.

♦ Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանության ապահովում:

♦ Հեռուստառադիոընկերություններին և ռադիոընկերություններին այնպիսի հաղորդաշարերի և հաղորդումների մատուցում, որոնցում հաշվի են առնվում հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների ու սոցիալական խմբերի առանձնահատկություններն ու նախասիրությունները:

- Բնակչության լայն խավերին հուզող և նրանց կողմից պարզաբանում պահանջող խնդիրների վերաբերյալ հաղորդումների և լրատվություն ապահովում:

- Բնակչությանը անկողմնակալ, հավաստի և օպերատիվ տեղեկատվությամբ ապահովում:

- Բնակչության լայն խավերի շրջանում հեռուստատեսության և ռադիոյի դերը և նշանակությունը խրախուսող գործունեության իրականացում, հեռուստատեսության և ռադիոյի կողմից տրամադրվող տեղեկատվության նկատմամբ ունկնդրի վստահության ավելացում:

Հրատարակչությունների, խմբագրությունների ոլորտի նպատակներն են.

- Գրքարվեստի զարգացում՝ գրահրատարակչական որակյալ արտադրանքի միջոցով հասարակության ազգային և համաշխարհային գրական, գիտական, մշակութային արժեքների մատուցման, ճանաչողության և մատչելիության ապահովում, ազգային մշակութային քարոզչության ապահովում, ազգային և պետական խորհրդանիշերի հանրահռչակում, գրահրատարակչության ազգային ավանդույթների պահպանում ու զարգացում:

- Տեղեկատվության ձեռքբերման և մամուլի աջակցում՝ բնակչությանը տեղեկատվական ռեսուրսների մատչելիության և մշակութային քարոզչության ապահովում, տեղեկատվության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:

- Հայաստանի Հանրապետության և Մփյուռքի միջև կապերի հաստատում և ամրապնդում, սփյուռքահայության ազգային, լեզվամշակութային ինքնության պահպանում :

10.2.2.2. Գերակայությունները

Հեռուստառադիոհաղորդումների գծով 2011-2013 թվականներին գերակա ուղղությունները բխում են <Հեռուստատեսության և ռադիոյի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրված դրույթներից:

2011-2013 թվականներին հեռուստառադիոհաղորդումների գերակա ուղղություններն են.

- Հեռարձակվող հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների ընդհանուր ծավալում

բնակչության լայն խավերին մատչելի հայալեզու, սեփական և հայրենական արտադրության հաղորդումների քանակի ավելացում:

- Հեռուստաընկերության տեխնիկական բազայի վերազինման միջոցով հանրապետության

ամբողջ տարածքում հեռարձակվող հաղորդումների բարձր որակի ապահովում:

- Տեխնիկական վերազինման միջոցով Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության արտադրական ծախսերի կրճատում և աշխատակիցների սոցիալական վիճակի բարելավում:

- Հեռարձակվող հաղորդումների արբանյակային հեռարձակման աստիճանական ավելացում, որը հնարավորություն կընձեռի սփյուռքի մեր հայրենակիցներին ամենօրյա տեղեկատվություն ստանալ հայրենիքում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

- Արտերկրի հայկական համայնքներ ունեցող բնակավայրերում վերգետնյա կապուղիներով և

կաբելային ցանցերով Հանրային հեռուստաընկերության հաղորդումների վերահեռարձակման ծավալների ընդլայնում:

- Հանրային հեռուստաընկերության, որպես լիիրավ անդամ, EBU (Եվրոպական հեռարձակողների միություն) հետ ավելի սերտ համագործակցության ապահովում:
- Նոր տեխնոլոգիաների ներդրման և տեխնիկական վերազինման միջոցով EBU-ի կողմից

սահմանված ստանդարտներին համապատասխան տեխնիկական մակարդակի ապահովում:

- Եվրոպական և այլ երկրների հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հետ

փոխադարձ համագործակցության շրջանակների ընդլայնում:

Հրատարակչությունների խմբագրությունների գծով 2011-2013 թվականներին գերակա ուղղությունների համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը: Գերակա ուղղություններն են.

- Գրքի` իբրև դաստիարակության միջոցի գովազդի և հանրահռչակման իրականացում,

գրադարանային հավաքածուների համալրում:

- Միջազգային համագործակցության ընդլայնում:
- Մթնոլորտում և Հայաստանում գործող կազմակերպությունների համագործակցության

ակտիվացում:

10.2.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՆՍՏՎԱԾՈՒՄ ՈՒՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՑԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտին (առանց կառավարման ապարատի ծախսերի) նախատեսվում է ուղղել **2011** թվականին` **4444.2** մլն դրամ, **2012** թվականին` **4393.2** մլն դրամ և **2013** թվականին` **4614.7** մլն դրամ: Ծախսերը 2011 թվականին աճել են` 1.3 %-ով 2010 թվականի նկատմամբ, 2012 թվականին նվազել են` 1.1 %-ով 2011 թվականի նկատմամբ, 2013 թվականին աճել են` 5.0 %-ով 2012 թվականի նկատմամբ:

2011-2013 թվականներին ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտի միջնաժամկետ ծրագրով ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կկազմի 2011 թվականին` 0.12%, 2012-2013 թվականներին, յուրաքանչյուր տարի` 0.11 %:


Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտի 2009-2013 թվականների ծախսերը` ըստ ուղղությունների ներկայացված են Աղյուսակ 10.5.-ում:

Աղյուսակ 10.5. Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտի 2009-2013 թվականների ծախսերը՝ ըստ ուղղությունների (մլն դրամ)

բաժին	խումբ	դաս	Ոլորտի ուղղությունները	2009թ. փաստացի	2010թ. պետական բյուջե	2011-2013թթ. ՄԾԾԾ		
						2011թ.	2012թ.	2013թ.
			ԸՆԴԱՄԵՆԸ	4,127.6	4,385.4	4,444.2	4,393.2	4,614.7
08	03	01	Հեռուստատադիտհաղորդումներ	3,242.1	3,390.9	3,398.9	3,407.9	3,544.3
08	03	02	Հրատարակչություններ, խմբագրություններ	797.3	821.7	867.1	807.1	881.4
08	03	03	Տեղեկատվության ձեռքբերում	68.6	144.4	149.6	149.6	160.4
01	01	01	Արտաքին հարաբերություններ	19.7	28.4	28.6	28.6	28.6

Ըստ ուղղությունների 2011 թվականին ծախսերի տեսակարար կշիռը ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտին ուղղված հատկացումներում կունենա հետևյալ պատկերը.

Գծանկար 10.2. 2011 թվականին ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտին ուղղված հատկացումների տեսակարար կշիռը ըստ ուղղությունների



2011-2013 թվականներին ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտի բյուջետային հատկացումների աճը հիմնականում պայմանավորված է.

- աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ 2011 և 2013 թվականներին, յուրաքանչյուր տարի 10 տոկոսով՝ ընդ որում 2011 թվականին՝ Շիրակի հանրային հեռուստառադիոյի, գիտական ամսագրերի, մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի խմբագրությունների և <Արմենպրես> ընկերության աշխատողների աշխատավարձերի, իսկ 2013 թվականին՝ ոլորտի բոլոր կազմակերպությունների,

- գազի սակագնի բարձրացմամբ,
- <Միր> միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժնի աճով, յուրաքանչյուր տարի 10 տոկոսով,
- 2011 թվականին մուտքի վիզաների պիտակների քանակի աճով:

10.2.4. ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Բացի պետական բյուջեից ստացվող եկամուտներից, ոլորտի կազմակերպություններն եկամուտներ են ստանում նաև վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից (հովանավորչական հաղորդումների պատրաստման և հեռարձակման, առևտրային գովազդի հեռարձակման, հրատարակչական և այլ աշխատանքներ):

2011-2013 թվականներին ոլորտի ընկերությունները կշարունակեն իրականացնել վերոնշյալ գործունեության տեսակները և աշխատանքներ կտարվեն դրանցից ստացվող եկամուտների ծավալների ավելացման ուղղությամբ:

Վճարովի ծառայություններից ստացված եկամուտներն ուղղվում են կազմակերպությունների տեխնիկական վերազինմանը, աշխատողների աշխատավարձերի վճարմանը, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքի ձեռքբերմանը, հրատարակչական և այլ ծախսերի իրականացմանը:

Հեռուստառադիոհաղորդումների գծով 2009-2013 թվականներին վճարովի ծառայությունների մատուցումից ստացված և կանխատեսվող եկամուտները կազմում են ըստ տարիների համապատասխանաբար՝ 723.6, 1439.9, 1152.7, 1337.7 և 1085.7 մլն դրամ:

Հայաստանյան հեռուստաշուկայում առկա ուժեղ մրցակցության պայմաններում Հանրային հեռուստաընկերությունը միջոցներ կձեռնարկի 2011-2013 թվականների ընթացքում պահպանել գովազդային եկամուտների 2010 թվականի մակարդակը:

Ինչ վերաբերում է այլ եկամուտներին, որոնց գերակշիռ մասը կազմում են խոշոր սպորտային և այլ միջազգային միջոցառումների հովանավորչությունից ստացվող եկամուտները, ապա պայմանավորված այդ միջոցառումների պարբերականությամբ, նշված եկամուտների չափերը որոշակիորեն կփոփոխվեն:

Հրատարակչությունների, խմբագրությունների գծով 2009-2013 թվականներին վճարովի ծառայությունների մատուցումից ստացված և կանխատեսվող եկամուտները կազմում են 2009 թվականին` 138.6 մլն դրամ, 2010 թվականին` 155.5 մլն դրամ, 2011-2013 թվականներին, յուրաքանչյուր տարի` 161.5 մլն դրամ:

Տեղեկատվության ձեռքբերման գծով 2009-2013 թվականներին վճարովի ծառայությունների մատուցումից ստացված և կանխատեսվող եկամուտները կազմում են 2009 թվականին` 15.2 մլն դրամ, 2010-2013 թվականներին, յուրաքանչյուր տարի` 16.8 մլն դրամ:

Ըստ առանձին կազմակերպությունների ՀՀ պետական բյուջեի և վճարովի ծառայությունների հաշվին իրականացված և կանխատեսվող ծախսերը ներկայացված են **Աղյուսակ 10.6.-ում**:

Աղյուսակ 10.6. Ըստ առանձին կազմակերպությունների ՀՀ պետական բյուջեի և վճարովի ծառայությունների հաշվին իրականացված և կանխատեսվող ծախսերը (մլն դրամ)

Կազմակերպությունների անվանումները	2009թ. փաստացի		2010թ.		2011թ.		2012թ.		2013թ.	
	ՀՀ պետական բյուջեի հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին
ԸՆԴՄՏԵՆԸ ՀԵՌՈՒՄՏԱՌՍԻՈՂԱ- ՂՈՂՈՒՄՆԵՐ	3030.8	723.6	3142.0	1439.9	3141.8	1152.7	3141.8	1337.7	3264.4	1085.7
<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %</i>	<i>80.7</i>	<i>19.3</i>	<i>68.6</i>	<i>31.4</i>	<i>73.2</i>	<i>26.8</i>	<i>70.1</i>	<i>29.9</i>	<i>75.0</i>	<i>25.0</i>
08.03.01.01 <Հայաստանի հանրային հեռուստաընկերություն> ՓԲԸ	2348.1	660.5	2458.3	1379.0	2455.7	1091.8	2455.7	1276.8	2542.4	1024.8
<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %</i>	<i>78.0</i>	<i>22.0</i>	<i>64.1</i>	<i>35.9</i>	<i>69.2</i>	<i>30.8</i>	<i>65.8</i>	<i>34.2</i>	<i>71.3</i>	<i>28.7</i>
08.03.01.02 <Հայաստանի հանրային ռադիոընկերություն> ՓԲԸ	651.7	45.7	652.7	42.9	653.5	42.9	653.5	42.9	687.1	42.9
<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %</i>	<i>93.4</i>	<i>6.6</i>	<i>93.8</i>	<i>6.2</i>	<i>93.8</i>	<i>6.2</i>	<i>93.8</i>	<i>6.2</i>	<i>94.1</i>	<i>5.9</i>
08.03.01.03. <Շիրակի հանրային հեռուստառադիո> ՓԲԸ	23.0	10.7	23.0	11.2	24.6	11.2	24.6	11.2	26.3	11.2
<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %</i>	<i>68.2</i>	<i>31.8</i>	<i>67.3</i>	<i>32.7</i>	<i>68.7</i>	<i>31.3</i>	<i>68.7</i>	<i>31.3</i>	<i>70.1</i>	<i>29.9</i>

08.03.01.06. <Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն> ՓԲԸ	8.0	6.7	8.0	6.8	8.0	6.8	8.0	6.8	8.6	6.8
<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %</i>	54.4	45.6	54.1	45.9	54.1	45.9	54.1	45.9	55.8	44.2
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	209.4	138.6	209.4	155.5	209.4	161.5	209.4	161.5	217.7	161.5
<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %</i>	60.2	39.8	57.4	42.6	56.5	43.5	56.5	43.5	57.4	42.6
08.03.02.01. <Հանրապետություն ն> ՓԲԸ	44.8	107.0	44.8	107.0	44.8	107.0	44.8	107.0	48.0	107.0
<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %</i>	29.5	70.5	29.5	70.5	29.5	70.5	29.5	70.5	31.0	69.0
08.03.02.01. <Հայաստանի Հանրապետություն - Ռեսպուբլիկա Արմենիա> ՓԲԸ	24.0	6.5	24.0	22.5	24.0	22.5	24.0	22.5	26.2	22.5
<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %</i>	78.7	21.3	51.6	48.4	51.6	48.4	51.6	48.4	53.8	46.2
08.03.02.04. <Էկոնոմիկա հանդես> ՓԲԸ	38.6	24.0	38.6	24.0	38.6	30.0	38.6	30.0	41.5	30.0
<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %</i>	61.7	38.3	61.7	38.3	56.3	43.7	56.3	43.7	58.0	42.0
08.03.02.09. <Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն> ՊՈԱԿ	102.0	1.1	102.0	2.0	102.0	2.0	102.0	2.0	102.0	2.0
<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %</i>	98.9	1.1	98.1	1.9	98.1	1.9	98.1	1.9	98.1	1.9
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՆՔՔԵՐՈՒՄ, <Արմենայրես> ՓԲԸ	68.6	15.2	68.7	16.8	73.9	16.8	73.9	16.8	79.6	16.8
<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %</i>	81.9	18.1	80.4	19.6	81.5	18.5	81.5	18.5	82.6	17.4

10.3. ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ

10.3.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1. Ոլորտի (համակարգի) ընդհանուր նկարագիրը

ՀՀ հանգստի և սպորտի ոլորտի 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն 22 ծրագրերի իրականացմանը, որոնք կիրականացվեն երեք պետական կառավարման մարմինների միջոցով:

Հայաստանի Հանրապետության կառավարության սպորտի քաղաքականությունը մշակվում է ոլորտի պետական լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և էրիտասարդության հարցերի նախարարության կողմից և իրականացվում է պետական ոչ առևտրային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով:

Նախարարությունը սպորտի ոլորտում մշակում է իր ռազմավարությունը՝ նպատակ ունենալով զարգացնելու հետևյալ ուղղությունները՝

✓ մեծ նվաճումների սպորտ

✓ մասսայական և մանկապատանեկան սպորտ:

Մեծ նվաճումների սպորտ

ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման նպատակով 2005-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները կազմել են ըստ տարիների համապատասխանաբար՝ 596597.3, 666147.4, 860523.0, 833246.4, 994457.7 հազ. դրամ: 2009 թվականին հատկացումները աճել են 2005 թվականի նկատմամբ 48.3 տոկոսով, ինչը նպաստել է ուսումնամարզական հավաքների, ՀՀ առաջնությունների քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին մասնակցող Հայաստանի մարզիկների թվի ավելացմանը:

2010 թվականին <ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում> ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 884967.2 հազ. դրամ: Հատկացումների նվազումը 2009 թվականի նկատմամբ պայմանավորված է միանգամայն միջոցառումների իրականացմամբ:

2005-2009 թվականներին Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին մասնակցության, ՀՀ առաջնությունների, մասնակիցների, ինչպես նաև ուսումնամարզական հավաքների թիվը ներկայացված է Աղյուսակ N 10.7-ում:

Աղյուսակ N 10.7. 2005-2009 թվականներին Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին մասնակցության, ՀՀ առաջնությունների, մասնակիցների, ինչպես նաև ուսումնամարզական հավաքների թիվը

միջոցառումների և մասնակիցների թիվը	2005	2006	2007	2008	2009
Աշխարհի և Եվրոպայի առաջնությունների թիվը	77	75	75	85	135
մասնակիցների թիվը	594	1250	1760	2060	1729
ՀՀ առաջնությունների քանակը	46	75	78	78	84
մասնակիների թիվը	3336	5748	5104	5504	6700
Ուսումնամարզական հավաքների թիվը	77	79	113	85	126

Միաժամանակ նշված ժամանակաշրջանում աճել է Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում ազգային հավաքական թիմերի մարզիկների կողմից նվաճած մրցանակների քանակը, որը ներկայացված է Աղյուսակ N 10.8-ում:

Աղյուսակ N 10.8. Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում ազգային հավաքական թիմերի մարզիկների կողմից 2005-2009 թվականներին նվաճաց մրցանակների քանակը

մեդալների տեսակները	Ընդամենը	2005	2006	2007	2008	2009
Ոսկե մեդալ	112	13	13	27	27	32
Արծաթե մեդալ	198	36	34	41	40	47
Բրոնզե մեդալ	208	40	35	36	41	56
Ընդամենը	518	89	82	104	108	135

<ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում> ծրագիրը իրականացվում է մարզական ֆեդերացիաների միջոցով, որոնց թիվը 2010 թվականին կազմում է 31՝ 2006 թվականի 24-ի դիմաց, պետական աջակցություն են ստացել ևս 7 մարզաձևերի ֆեդերացիաներ՝ ավանդական ուշուի, խոտի հոկեյի, բադմինթոնի, սինխրոն լողի, քիքբոքսինգի, մեծ թենիսի, ռեգբիի: Պետական աջակցության ընդլայնումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում տվյալ մարզաձևերի զարգացմանը:

Հանգստի և սպորտի ոլորտում 2006-2009 թվականներին կարևոր են իրականացված հետևյալ միջոցառումները և ձեռքբերված նվաճումները.

2006 թվական

2006 թվականի ձմեռային օլիմպիական խաղերի (Թուրին) մասնակցության վարկանիշ են ձեռք բերել 5 մարզիկներ:

Առանձնահատուկ և աննախադեպ հաղթանակ է գրանցվել Հայաստանի շախմատի հավաքական թիմի կողմից: Հայկական սպորտի պատմության մեջ առաջին անգամ շախմատային Օլիմպոսը և համաշխարհային շախմատային հաղթողի տիտղոսը նվաճեց Հայաստանի Հանրապետության ազգային հավաքականը, արժանանալով ոսկե մեդալների:

2008 թվական

Ոչ օլիմպիական մարզաձևերից շախմատի 38-րդ օլիմպիադայում Հայաստանի հավաքականը դարձել է չեմպիոն:

2008 թվականի Պեկինի օլիմպիական խաղերին մասնակցել են Հայաստանի Հանրապետության 25 մարզիկներ, որոնցից 6-ը նվաճել են բրոնզե մեդալներ:

2009 թվական

2009 թվականին Երևանում անց են կացվել բոնցքամարտի աշխարհի պատանեկան, ձյուդոյի Եվրոպայի երիտասարդական առաջնությունները, համահայկական խաղեր՝ բասկետբոլ և ֆուտբոլ մարզաձևերից:

Յոթ տարվա ընդմիջումից հետո ծանրորդ Նազիկ Ավդալյանը նվաճել է աշխարհի չեմպիոնի կոչումը:

Մասսայական և մանկապատանեկան սպորտ

<ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում>

2008 թվականին մարզերում միջոցառման մասնակիցների թիվը կազմել է շուրջ 3.000 մարդ, անց է կացվել միայն մարզկենտրոններում: 2009 թվականին մասնակիցների թիվը կազմել է շուրջ 10.000 մարդ, միջոցառումը անց է կացվել 37 քաղաքներում:

Մասնակիցների թվաքանակի աճը պայմանավորված է աշխարհագրության ընդլայնմամբ:

<ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում> ծրագրի իրականացման համար 2008-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 6000.0 և 6960.0 հազ. դրամ, 2010 թվականին նախատեսվում է հատկացնել միջոցներ 2009 թվականի մակարդակի չափով:

<Մանկապատանեկան սպորտի մասսայականացում> ծրագրով (ֆուտբոլ) պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին անց են կացվել սեմինարներ, որոնց ՀՀ տարբեր մարզերից 2008 թվականին մասնակցել են 2880 երեխաներ, 2009 թվականին՝ 2900 երեխաներ:

<Մանկապատանեկան սպորտի մասսայականացում> ծրագրի իրականացման համար 2008-2009

թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 7998.3 և 7998.7 հազ. դրամ, ինչպես և 2010 թվականին նախատեսվում է հատկացնել 8000.0 հազ. դրամ միջոցներ:

ՀՀ Նախագահի մրցանակի համար <Լավագույն մարզական ընտանիք> հանրապետական մրցույթ

մասսայական միջոցառմանը մասնակցած ընտանիքների թիվը 2008 թվականին կազմել են 126 ընտանիք՝ 2007 թվականին մասնակցած 106 ընտանիքի դիմաց: 2009 թվականին մասնակից ընտանիքների թիվը կազմել է 171:

Մասնակից ընտանիքների քանակի աճը պայմանավորված է միջոցառման աշխարհագրության ընդլայնմամբ և միջոցառման մասսայականությամբ:

ՀՀ Նախագահի մրցանակի համար <Լավագույն մարզական ընտանիք> հանրապետական մրցույթի անցկացման նպատակով 2008-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 14280.9 և 17500.0 հազ. դրամ, իսկ 2010 թվականին նախատեսվում է հատկացնել 23000.0 հազ. դրամ միջոցներ:

Հաշմանդամային մարզական հասարակական կազմակերպությունների կողմից 2008 թվականին հանրապետական և միջազգային առաջնություններին մասնակցել են 428 մարզիկներ, 2009 թվականին հաշմանդամային սպորտի տարբեր միջոցառումներում ընդգրկվածների թիվը կազմել է 578 մարզիկ: 2008 թվականի նկատմամբ աճը՝ 150 ընտանիքով, պայմանավորված է հասարակության հաշմանդամ հատվածի նկատմամբ առավել ուշադիր վերաբերմունքով, հասարակական մարզական կազմակերպություններում նրանց ընդգրկվածությամբ:

Հաշմանդամային մարզական միջոցառումների իրականացման համար 2008-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 8999.2 և 8997.6 հազ. դրամ, ինչպես և 2010 թվականին նախատեսվում է հատկացնել 9000.0 հազ. դրամ միջոցներ:

Շախմատիստների պատրաստման ծառայությունների գծով <Հայաստանի շախմատային ակադեմիա> հիմնադրամի կողմից կազմակերպվել են մի շարք շախմատային մրցաշարեր և հավաքներ:

Մրցաշարերից առավել աչքի է ընկել Տիգրան Պետրոսյանի 75-ամյակին նվիրված <Ղարաբաղ 2004> միջազգային հուշամրցաշարը և աշխարհում նախադեպը չունեցող Բնտերնետային թիմային միջազգային մրցաշարը, որի կազմակերպման արդյունքում միջազգային հանրությանը ներկայացվեց Հայաստանի շախմատային աշխարհը մի նոր, առավել բարենպաստ տեսանկյունից: Մրցաշարերի շարքը լրացրեցին <Ղարաբաղ 2005>, <Կապուտակ Սևան> (2005, 2006, 2007, 2008) և մանկապատանեկան <Ջերմուկ 2006>, <Ջերմուկ 2007>, <Ջերմուկ 2008> միջազգային մրցաշարերը, ինչպես նաև <ՄԱԿ-ի գավաթ> մանկապատանեկան ամենամյա մրցաշարը, որն անց է կացվում 2005թ-ից մինչ օրս:

Բացի վերը նշվածից, հիմնադրամի ջանքերի շնորհիվ Եվրոպայի առաջնություններում ակադեմիայի 500 սաներից երեքը դարձել են չեմպիոն (մինչև 10, 12 և 16 տարեկանների խմբերում), երեքը՝ փոխչեմպիոն (մինչև 12 և 16 տարեկանների խմբերում), ինչպես նաև աշխարհի առաջնություններում ակադեմիան տվել է երկու չեմպիոն, երկու փոխչեմպիոն և երկու բրոնզե մեդալակիր: Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի կողմից պատրաստվել են վեց միջազգային գրոսմայստեր և հինգ միջազգային վարպետ:

Շախմատիստների պատրաստման նպատակով 2008-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 65000.0 և 52000.0 հազ. դրամ, իսկ 2010 թվականին նախատեսվում է հատկացնել 2009 թվականի մակարդակի չափով հատկացումներ:

Հիմնական խնդիրներ

Մեծ նվաճումների սպորտում հիմնական խնդիրներն են.

- ✦ սպորտի բարձրագույն նվաճումների ապահովում,
- ✦ սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակում և իրագործում,
- ✦ օլիմպիական շարժման զարգացում, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեությանն աջակցում,
- ✦ միջազգային, այդ թվում՝ ափյուռքի հետ կապերի ամրապնդում,
- ✦ միջպետական մարզական հարաբերությունների զարգացում:

Մասսայական և մանկապատանեկան սպորտում հիմնական խնդիրներն են.

- ✦ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների ակտիվացում սպորտի ոլորտում,
- ✦ մարզական ներուժի օգտագործում, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավում,
- ✦ սպորտով զբաղվելու նպատակով համապատասխան պայմանների ստեղծում հասարակության հաշմանդամ մարզիկների համար,

✳ առողջ ապրելակերպը կենցաղ ներմուծելու նպատակով ՁԼՄ-ների հնարավորինս լայն օգտագործում, հատկապես՝ հեռուստաընկերությունների:

✳ հանրապետությունում ձևավորված շախմատային ավանդույթների սերնդեսերունդ փոխանցման և շախմատային ներուժի շահ երկրի օգտագործման ապահովում:

10.3.2. ՈԼՈՐՏԻ ՆՊՍՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՄԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

10.3.2.1.Նպատակները

ՀՀ հանգստի և սպորտի ոլորտի հիմնական նպատակներն են.

- ♦ Բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումն ու երկարակեցության ապահովումը:

- ♦ տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիությունը:

- ♦ հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը:

- ♦ Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում և այլ միջազգային մրցասպարեզներում երկրի վարկանիշի բարձրացման նպատակով ՀՀ հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը:

10.3.2.2.Գերակայությունները

ՀՀ 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով ՀՀ հանգստի և սպորտի ոլորտի հիմնական գերակայությունների համար հիմք են հանդիսանում <Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին > և <Մանկապատանեկան սպորտի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը: Հիմնական գերակայություններն են.

Մեծ նվաճումների սպորտ

- Օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների նպատակային նախապատրաստության և մասնակցության ապահովում: Տարբեր մարզաձևերի հանրապետական ֆեդերացիաների մարզական միջոցառումների օրացուցային պլաններով նախատեսված բոլոր միջոցառումների անցկացման ապահովում:

- Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող համահայկական և միջազգային պաշտոնական մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման ապահովում:

- Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ ամրագրված՝ պետության կողմից

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստելու իրավական ակտերի ստեղծում:

- Միջպետական մարզական հարաբերությունների ապահովում:

2011-2013 թվականներին մեծ նվաճումների սպորտում հիմնական նպատակն է 2012 թ. Լոնդոնում կայանալիք օլիմպիական խաղերի, վարկանիշային միջազգային մրցումներին, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին լավագույն ձևով նախապատրաստվելու և մասնակցելու ուղղությամբ աշխատանքների իրականացումը:

Մասսայական և մանկապատանեկան սպորտ

- Բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովում:
- Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի իրավական դաշտի կատարելագործում :
- Հաշմանդամային մարզական հասարակական կազմակերպություններին պետական աջակցության ապահովում:
- Մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացում:

10.3.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՑԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ **2011-2013** թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով ՀՀ հանգստի և սպորտի ոլորտին (առանց կառավարման ապարատի ծախսերի) նախատեսվում է ուղղել` **2011** թվականին` **1449.7** մլն դրամ, **2012** թվականին` **1400.9** մլն դրամ, **2013** թվականին` **1426.6** մլն դրամ: Ծախսերը 2011 թվականին կաճեն` 2.3%-ով 2010 թվականի հաստատվածի նկատմամբ, 2012 թվականին կնվազեն` 3.4 %-ով 2011 թվականի նկատմամբ, 2013 թվականին ծախսերը կաճեն` 1.8 %-ով 2012 թվականի նկատմամբ:

Ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է միջոցառումների անցկացման ժամանակացույցով պայմանավորված ծրագրերի ավարտմամբ:

ՀՀ 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով ՀՀ հանգստի և սպորտի ոլորտի պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կկազմի յուրաքանչյուր տարի` 0.04%:

ՀՀ 2011-2013 թվականներին ՀՀ հանգստի և սպորտի ոլորտին ուղղվող հատկացումների աճը հիմնականում պայմանավորված է.

- ոլորտի աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ 2011 և 2013 թվականներին,

յուրաքանչյուր տարի 10 տոկոսով,

- հանգստի և սպորտի ոլորտում նոր նախաձեռնությունների նախատեսմամբ (Աղյուսակ N10.9):

Աղյուսակ N 10.9. Հանգստի և սպորտի ոլորտի պետական ծախսերը 2011-2013 թվականներին` ըստ գոյություն ունեցող ծախսային ծրագրերի և նոր նախաձեռնությունների (մլն դրամ)

Ցուցանիշը	2011	2012	2013
ԸՆԴԱՍԵՆԸ ԾԱԽՄԵՐ	1449.7	1440.9	1426.6
Գոյություն ունեցող ծախսային ծրագրեր	1297.1	1278.3	1302.3
<i>տեսակարար կշիռը ոլորտի ընդհանուր ծախսերի մեջ</i>	<i>89.5</i>	<i>91.2</i>	<i>91.3</i>
Նոր նախաձեռնություններ	152.6	122.6	124.3
<i>տեսակարար կշիռը ոլորտի ընդհանուր ծախսերի մեջ</i>	<i>10.5</i>	<i>8.8</i>	<i>8.7</i>

10.4. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

10.4.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2005 թվականին հրապարակված Հայաստանի վիճակագրական տարեգրքի տվյալների՝ երիտասարդների (16-30 տարեկան բնակչության թվաքանակը) կազմել է 877310 մարդ, որն ընդհանուր բնակչության 27.2%-ն է:

2008 թվականին իրականացված երիտասարդական ծրագրերը ուղղված էին ոլորտի կառավարման ապակենտրոնացմանը դեպի հասարակական սեկտոր, երիտասարդական քաղաքականության ինստիտուցիոնալ զարգացմանը, կառավարման համակարգի աշխատանքների թափանցիկության ապահովմանը և երիտասարդության համար իրականացվող ծրագրերում երիտասարդության մասնակցային գործընթացի բարձրացմանը, ինչպես նաև ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Անհրաժեշտ է շեշտել նաև երիտասարդական քաղաքականություն իրականացնող սուբյեկտների համագործակցության ակտիվացումը տարբեր մակարդակներում, ՀԿ-ների, նախարարությունների, մարզպետարանների և միջազգային կառույցների հետ:

Իրականացված, հատկապես ռազմավարական նշանակության ծրագրերում, ընդգրկված են եղել թե տարբեր պետական կառավարման մարմինների, թե հասարակական կազմակերպությունների և թե միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2008 թվականի ընթացքում մեծ ուշադրությունը դարձվել մարզային երիտասարդության հիմնախնդիրներին՝ ընդհանուր թվով 158 ծրագրերից 50-ը իրականացվել են մարզերում (տեսանելի է պետական երիտասարդական քաղաքականության ուղղորդումը դեպի մարզեր), իսկ Երևանում իրականացված ծրագրերին մասնակցել են երիտասարդներ մարզերից:

2009 թվականին երիտասարդական ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Հայաստանի Հանրապետության մարզերում ապահովվել է մարզային երիտասարդական կենտրոնների աշխատանքը՝ տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Նշված աշխատանքների նպատակն է՝ բարձրացնել մարզերում երիտասարդական պետական քաղաքականության արդյունավետությունը, այն հասանելի դարձնել մարզերի երիտասարդությանը:

Գործել է 2006 թվականին ստեղծված` Երիտասարդ առաջնորդների դպրոցը: Երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման առումով մեծ ուշադրություն է դարձվել երիտասարդության իրազեկման և տեղեկատվության տրամադրման խնդիրներին: Հրատարակվել է երիտասարդական պետական քաղաքականության և երիտասարդության հիմնահարցերը լուսաբանող <Մենք, դուք, նրանք> երկշաբաթաթերթը: Հայերենով, ռուսերենով, անգլերենով գործել և պարբերաբար թարմացվել է Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության էլեկտրոնային կայքէջը, <Երկիր Մեդիա> հեռուստաընկերությամբ և Հայաստանի Հանրապետության մարզերում` տեղական հեռուստաընկերությունների միջոցով, Արցախում երկու շաբաթը մեկ հեռարձակվել է <Անկախության սերունդ> երիտասարդական հեռուստահաղորդաշարը: Աջակցություն է ցուցաբերվել 40 երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, տաղանդավոր և շնորհալի երիտասարդ ստեղծագործողների, գիտնականների մասնակցությանը միջազգային տարբեր գիտաժողովներին, սեմինարներին, համաժողովներին:

Երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման և նրանց գործունեությանը պետական աջակցության ուղղությամբ 2009 թվականի ընթացքում քննարկվել են հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված դրամաշնորհային ծրագրերի հայտերը և փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա ցուցաբերվել է համապատասխան աջակցություն շուրջ 19 կազմակերպությունների:

Երիտասարդական ծրագրերի իրականացման նպատակով 2008-2009 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար` 342783.4 և 231728.9 հազ. դրամ, իսկ 2010 թվականին նախատեսվում է հատկացնել 276395.5 հազ. դրամ միջոցներ:

2009 թվականին իրականացվել են նաև թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ, այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 7693.7 հազ. դրամ, իսկ 2010 թվականին նախատեսվում է հատկացնել 8000.0 հազ. դրամ:

Մշակվել են <Երիտասարդության մասին> ՀՀ օրենքի նախագիծը, <Երիտասարդ ընտանիքներին` մատչելի բնակարան> և <Երիտասարդ ընտանիքների կողմից ավտոմեքենաների ձեռքբերման վարկերի մատչելիության և հասանելիության բարձրացում> ծրագրերը: <Երիտասարդ ընտանիքին` մատչելի բնակարան> պետական նպատակային ծրագիրը, որի շահառուների թիվը` 300 երիտասարդ ընտանիք է, մեկնարկել է 2010 թվականից: Նշված ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 60000.0 հազ. դրամ:

2009 թվականից սկսած իրականացվում է Սփյուռքի երիտասարդության Հայաստան այցելություններ <Արի տուն> ծրագիրը, որին մասնակցել են Սփյուռքի տարբեր տարածաշրջաններից 14-25 տարեկան 313 երիտասարդներ:

<Սփյուռքի երիտասարդության այցելություններ Հայաստան> ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից 2009 թվականին հատկացվել է 24813.1 հազ. դրամ, իսկ 2010 թվականին նախատեսվում է հատկացնել 35000.0 հազ. դրամ:

Հիմնական խնդիրներ

ՀՀ Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատված <Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ>-ի և ՀՀ Կառավարության 2008թ. սեպտեմբերի 25-ի նիստի թիվ 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած <Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարության> դրույթներում ամրագրված երիտասարդության ոլորտի առաջնահերթ խնդիրներն են՝

✧ երիտասարդական ոլորտի իրավական դաշտի ապահովում՝ ոլորտի գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի ստեղծման միջոցով,

✧ երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում և նրանց գործունեությանը պետական աջակցություն,

✧ երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացում, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպում, առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրում և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում,

✧ երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը ուղղված ծրագրերի իրականացում,

✧ մարզերում երիտասարդական պետական քաղաքականության զարգացում (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում, գյուղական և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում), նրանց լիակատար ինքնադրսևորման համար պայմանների ստեղծում,

✧ արտակարգ ընդունակություններ դրսևորած երիտասարդներին պետական աջակցություն, երիտասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում,

✧ այլ երկրների և հատկապես Արցախի և Մփյուռքի երիտասարդության հետ համագործակցության ապահովում :

10.4.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՄԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

10.4.2.1.Նպատակները

Երիտասարդության ոլորտում քաղաքականությունը ուղղված է հիմնական նպատակի իրականացմանը՝ ստեղծել սոցիալ-տնտեսական, իրավական-քաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության լիարժեք օգտագործելու համար:

Վերը նշված նպատակը ենթադրում է երիտասարդության ոլորտում հետևյալ գործողությունների իրականացումը.

♦ խթանել երիտասարդների մասնակցությունը որոշումներ կայացնելու գործընթացին (համայնքային, մարզային, հանրապետական մակարդակներում),

- ♦ զարգացնել երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները ,
- ♦ նպաստել Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարմանը և երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակի նվազեցմանը, ունենալ հոգեպես և ֆիզիկապես առողջ և կրթված երիտասարդություն,
- ♦ աջակցել սփյուռքահայ երիտասարդության հայրենասիրական դաստիարակությանն,
- ♦ աջակցել երիտասարդ ընտանիքներին :

10.4.2.2. Գերակայությունները

Հայաստանի Հանրապետության երիտասարդության ոլորտի 2011-2013 թվականների գերակայությունները բխում են Կայուն ծարգացման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագրերից: Ոլորտի գերակա ուղղություններն են.

- Հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցություն:
- Երիտասարդության զբաղվածության հնարավորությունների մեծացում:
- Երիտասարդության առողջ ապրելակերպի խթանում:
- Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման համակարգվածության

մակարդակի և երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակություն խթանում:

- Համահայկական և միջազգային նշանակության երիտասարդական միջոցառումների կազմակերպում, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացում:
- Բնակարանային խնդիրների հաղթահարման հարցում աջակցություն երիտասարդ ընտանիքներին:
- Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի

միջոցառումների իրականացում:

10.4.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով երիտասարդության ոլորտին նախատեսվում է ուղղել **2011-2012թթ.**, յուրաքանչյուր տարի` **397.2** մլն դրամ, 2013թ.` **403.7** մլն դրամ:

Ծախսերը աճել են 2011 թվականին` 1.5%-ով 2010 թվականի հաստատվածի նկատմամբ, 2013 թվականին` 1.6 %-ով 2012 թվականի նկատմամբ:

2011-2013 թվականներին երիտասարդության ոլորտի հատկացումների աճը պայմանավորված է ոլորտի աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ 2011 և 2013 թվականներին, յուրաքանչյուր տարի 10 տոկոսով:

ԳԼՈՒԽ 11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

11.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը՝ ագրոպարենային համակարգը 2004-2008 թվականների միջին տվյալներով ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի ավելի քան 25,3%-ը, իսկ գյուղատնտեսության մասնաբաժինը կազմել է 18.8%: Ներկայումս ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշռող մասը՝ 97.2%-ը բաժին է ընկնում բնակչության տնտեսություններին (գյուղացիական տնտեսություններին), իսկ 2.8%-ը գյուղատնտեսական առևտրային կազմակերպություններին:

11.1.1. Գյուղատնտեսության զարգացման միտումները

Ելնելով ոլորտի առանձնահատկությունների և երկրի պարենային անվտանգության խնդիրներից վերջին երկու տարիներին շարունակվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունն՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, սննդամթերքի անվտանգության համակարգի ու անտառային տնտեսության զարգացմանը:

Հանրապետության գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսավարող սուբյեկտների արդյունավետ գործունեության և վարվող քաղաքականության արդյունքում մինչև 2009 թվականը գյուղատնտեսությունում ապահովվել է տնտեսական աճ: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը իր ազդեցությունն ունեցավ նաև գյուղատնտեսության վրա, չնայած նրան, որ ճյուղը ի տարբերություն տնտեսության մյուս ոլորտների դրսևորեց հարաբերական կայունություն: 2009 թվականի գյուղատնտեսության համախառն արտադրանքը նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է 0.1%, ընդ որում բուսաբուծության ճյուղում կրճատվել է 0.7 %, իսկ անասնաբուծության ճյուղում ապահովվել է տնտեսական աճ 1.1% -ով: 2005-2009 թվականների տվյալներով միջին տարեկան տնտեսական աճը կազմել է 4.5%: 2009թ. տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի 62.3 տոկոսը բաժին է ընկնում բուսաբուծության ճյուղին, իսկ 37.7 տոկոսը անասնապահությանը:

Վերջին տարիներին ծրագրավորված աջակցություն է ցուցաբերվել տնտեսավարող սուբյեկտներին բարձրորակ սերմերի (հացահատիկ, կարտոֆիլ), տնկիների, հանքային

պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների մատակարարման և համապատասխան աշխատանքների կազմակերպման բարձրադիր գոտիներում հացահատիկային մշակաբույսերի տարածքների ընդլայնման և ագրոտեխնիկայի բարելավման ուղղությամբ:

11.1.2. Գյուղատնտեսության հիմնական խնդիրները

Գյուղատնտեսության առջև ծառայած են հետևյալ հիմնական խնդիրները.

Ագրարային բարեփոխումների խորացումը, շուկայական ենթակառուցվածքների զարգացումը և տնտեսավարման ձևերի կատարելագործումը:

Պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացումը, սննդի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովումը:

Բուսաբուծության ճյուղում ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգի ներդրմանը նպաստելը, սերմնաբուծության, սելեկցիայի, բույսերի պաշտպանության և կարանտինի միջոցառումների արդյունավետ իրականացման ապահովումը:

Անասնաբուծության ոլորտում տոհմային գործի զարգացմանը և անասնաբուծության համակարգի բարելավմանն աջակցությունը:

Գյուղատնտեսական հումքի վերամշակման, գյուղատնտեսության սպասարկող և գյուղի առցիալական ենթակառուցվածքների զարգացմանը նպաստելը:

Վերը նշված խնդիրների լուծումը կնպաստի գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը, հետևաբար նաև գյուղական բնակավայրերում աղքատության կրճատմանը, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

11.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

11.2.1 Նպատակները

Գյուղատնտեսությունում 2011-2013 թվականներին վարվող քաղաքականությունը կնպաստակառուցիկ ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը, որի հետևանքով պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, հանրապետության պարենային

ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման, բնակչության աղքատության նվազեցման համար:

Գյուղատնտեսության ոլորտում 2011-2013 թթ միջնաժամկետ ծրագիրը կապահովվի հետևյալ կոնկրետ նպատակների իրականացումը.

Գյուղատնտեսության ոլորտում օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի բարեփոխումներ և գյուղատնտեսության կառավարման բարելավում:

Հողերի բերրիության պահպանում և բարձրացում, հողերի մելիորատիվ վիճակի գնահատում, հողերի արմատական բարելավում:

Գյուղատնտեսական մշակաբույսերի բարձրորակ բերքի անկորուստ ստացում - բույսերի վնասակար օրգանիզմների բազմացման, զարգացման ու տարածման հետազոտությունների և պայքարի աշխատանքների կազմակերպման միջոցով դրանց տարածման շրջանակների նվազեցում և հետագա կանխարգելում:

Ներմուծվող և արտադրվող անվտանգ բուսական և կենդանական ծագումով մթերքներով բնակչության ապահովում, կարանտին անվտանգության ապահովում- կարանտին օրգանիզմների և կենդանական ծագում ունեցող մթերքի, հումքի և կենդանիների միջոցով հանրապետության տարածք վարակիչ հիվանդությունների ներթափանցման կանխարգելում:

Կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պահպանություն, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում - կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ պատվաստումների և տոհմասելեկցիոն աշխատանքների կազմակերպում:

Գյուղացիական տնտեսություններին բարձրորակ սերմերով ապահովում - բույսերի սելեկցիոն նոր սորտերի պաշտպանություն, բարձր վերարտադրության սերմերի որակի գնահատում:

Հայաստանի Հանրապետության անտառային տարածքների պահպանություն, վերարտադրություն, պաշտպանություն և կայուն կառավարում - անտառային տարածքների պահպանություն ապօրինի հատումներից, հանքայնացված շերտերի և հակահրդեհային ճանապարհների կառուցման և խնամքի, նախորդ տարիներին հիմնված անտառային տարածքների խնամքի, բնաշվային վերականգման աջակցման:

Ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարում, գյուղացիական տնտեսություններին համապատասխան խորհրդատվական ծառայությունների մատուցման ապահովում:

Գյուղատնտեսության բնագավառում հողօգտագործողների պետական աջակցության տրամադրման համակարգի ներդրում և արմատավորում:

11.2.2. Գերակայությունները

Գյուղատնտեսությունում 2011-2013 թվականներին վարվող քաղաքականությունը կնպաստակառուղիի ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա պայմաններ կստեղծվի գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, հանրապետության պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման, բնակչության աղքատության մակարդակի կրճատման համար:

Նախատեսվում է 2011-2013 թվականների ընթացքում շարունակել բարեփոխումները, նպատակ ունենալով գյուղատնտեսության զարգացումը առաջնահերթ ոլորտներում՝ առաջնային սերմնաբուծության, բույսերի առավել վտանգավոր հիվանդությունների դեմ կենտրոնական պայքարի իրականացման, տոհմային գործի, անասնաբուժության միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Նշված քաղաքականության իրականացման համար նախատեսվում է 2011-2013 թվականներին պետական բյուջեով նախատեսվող ծախսերը նպատակառուղիել գերակայություն ունեցող հետևյալ ներդրումային ծրագրերին.

- առաջնային սերմնաբուծության, տոհմային գործի կազմակերպման, արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացում,
- բույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ կենտրոնական պայքարի միջոցառումներին աջակցության ցուցաբերում,
- անասնաբուժական և հակահամաճարակային միջոցառումների իրականացում,
- գիտակրթական, տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդում ու զարգացում,
- անտառային տնտեսության պահպանման համալիր միջոցառումների իրականացում,
- գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության իրականացում:

Դրա հետ մեկտեղ գյուղատնտեսության զարգացման 2011-2013 թվականների քաղաքականության մեջ, որպես գլխավոր նպատակ, կմնա երկրի պարենային անվտանգության ապահովման մակարդակի բարձրացումը:

11.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությունից ելնելով 2011-2013 թվականների ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվող ծրագրերի գծով (առանց վարկային ծրագրի ծախսերի) ծախսերի մակարդակի վրա ազդող հիմնական գործոն է հանդիսանում 2011 թվականին պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձի աճը նվազագույն աշխատավարձի շեմը 32.5 հազ դրամ և 2013 թվականին աշխատավարձի 10% բարձրացման (2011 թվականին ծախսերի ավելացում՝ 6,308.3 հազ. դրամ և 2013 թվականին 178,565.2 հազ. դրամ), ինչպես նաև 2010 թվականի ապրիլի 1-ից գազի գնի

բարձրացման հետ կապված լրացուցիչ գումարների նախատեսումը (2011 թվականին 1,591.0 հազ. դրամ):

11.3. ՈԼՈՐՏԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսության ոլորտում 2011-2013թթ միջնաժամկետ ծրագիրը կապահովի հետևյալ ծրագրերի իրականացումը.

ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ.

Ծրագրի իրականացումն ուղղված է գյուղատնտեսության ոլորտի հողերի բերրիության պահպանման և բարձրացման ընդհանուր նպատակի կատարմանը՝ պարարտանյութերի խնայողաբար, արդյունավետ և էկոլոգիապես անվտանգ օգտագործման միջոցով:

Ծրագրի իրականացման արդյունքում միջնաժամկետ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում ակնկալվում է ստանալ Հանրապետության համայնքների հողերի սննդատարրերով ապահովվածությունն արտացոլող և պարարտանյութերի պահանջարկի համար ագրոքիմիական քարտեզներ:

Մշակաբույսերի պարարտացման համար գիտականորեն հիմնավորված և կազմված երաշխավորագրեր:

Նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները:

Գյուղատնտեսական նշանակության հողատարածությունների ագրոքիմիական դաշտային հետազոտություններ՝ հողանմուշների նմուշառում:

Հողանմուշների և պարարտանյութերի լաբորատոր փորձաքննություններ և գնահատում:

Ագրոքիմիական քարտեզների կազմում և համայնքներին հանձնում:

Մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմում և համայնքներին հանձնում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը կրում է շարունակական բնույթ և յուրաքանչյուր համայնքի համար այն պետք է կատարվի 5 տարին մեկ անգամ, հաշվի առնելով, որ հողի բերրիության հիմնական ցուցանիշներ հանդիսացող սննդատարրերի պարունակությունը էական փոփոխություն է կրում այդ ժամանակահատվածում:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է՝ 2011 և 2012 թվականների համար 42,295.0 հազարական դրամ, իսկ 2013թ.՝ 45,862.6 հազ. դրամ:

Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում.

Ծրագրի նպատակն է հանրապետությունում բույսերի առավել վնասակար և կարանտին օրգանիզմների արեալի ճշտում, նրանց զարգացման ու բազմացման կանխատեսում, կարանտին օրգանիզմներով վարակված նոր օջախների հայտնաբերում, ներթափանցման կանխարգելում, հանրապետությունում վաճառվող ստուգված, ախտորոշված ու որակյալ թունանյութերի ապահովում:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ ծառայությունները.

1. *Բուսասանիտարական մոնիտորինգ* - Այս բաղադրիչով նախատեսվում է դաշտային հետազոտությունների միջոցով հանրապետությունում բույսերի առավել վնասակար և գրանցված սահմանափակ տարածում ունեցող կարանտին օրգանիզմների տարածման արեալի ճշտում և նոր օջախների հայտնաբերում, կանխարգելիչ ու ախտորոշիչ ծառայությունների մատուցում, մասնագիտական աջակցություն:

2. *Փորձանմուշների փորձաքննություն* - Այս բաղադրիչով կիրականացվեն փորձանմուշների փորձաքննություններ կարանտին, առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերման նպատակով փորձանմուշների փորձաքննություններ:

3. *Թունանյութերի լաբորատոր փորձաքննություն* – Հանրապետության վաճառքի կետերում կատարված նմուշառումների հիման վրա կիրականացվեն թունանյութերի ազդող նյութի որոշման լաբորատոր փորձաքննություններ և կտրամադրվեն որակի վերաբերյալ արձանագրություններ:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է՝ 2011 և 2012 թվականների համար 72,100.0 հազարական դրամ, իսկ 2013թ. 77,970.0 հազ. դրամ:

Բույսերի պաշտպանության միջոցառումներ.

Ծրագրի նպատակն է հանրապետությունում իրականացնել գյուղատնտեսական մշակաբույսերի զանգվածային տարածված և առավել վնասակար օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության միջոցառումներ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել երեք բաղադրիչով.

1. *Պայքար մկնանման կրծողների դեմ* - Այս բաղադրիչով նախատեսվում է իրականացնել գյուղական համայնքներին անհատույց տրամադրել մկնասպան քիմիական միջոց՝ գյուղացիական տնտեսությունների միջոցներով մկնանման կրծողների դեմ պայքար կազմակերպելու նպատակով, ինչպես նաև կենտրոնացված պայքար իրականացնել տրակտորային ցրիչներով:

2. *Պայքար մորեխների դեմ* - ծառայությունը կիրականացվի գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններում, խոտհարքներում, արոտներում և այլ հողատեսքերում: Միջնաժամկետ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում նախատեսվում է իրականացնել պայքար, ինչպես կենտրոնացված կարգով՝ այնպես էլ գյուղացիական տնտեսությունների միջոցով, նրանց անհատույց հատկացնելով համապատասխան բույսերի պաշտպանության միջոց:

3. Պայքար անտառի վնասակար օրգանիզմների դեմ - Այս բաղադրիչով նախատեսվում է հանրապետության անտառային տարածքներում իրականացնել պայքարի կենտրոնացված ծառայություններ ավիացիայի միջոցով:

ՄԺԾՕ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 150,000.0 հազարական դրամ:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում.

Ծրագրի իրականացման նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պահպանումը:

Ծրագրի իրականացման արդյունքում կբացահայտվի հակահամաճարակային միջոցառումների արդյունքում պատվաստված կենդանիների վարակամերժության (իմունայնության) մակարդակը և կկատարվի գյուղատնտեսական կենդանիների ախտորոշումը լաբորատոր մեթոդներով:

Նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- վերցված նմուշների մանրէաբանական, քիմիաթունաբանական, ախտանատոմիական, շճաբանական և այլ լաբորատոր փորձաքննությունների իրականացում,

- հակահամաճարակային միջոցառումների՝ կանխարգելիչ պատվաստումների իրականացումից հետո գյուղ կենդանիների մոտ վարակամերժության ֆոնի գնահատում՝ սերմոնխտորինգ,

- գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների ախտորոշում և դրանց տիպերի հայտնաբերում.

- պատվաստանյութերի և ախտորոշիչ նյութերի պահպանություն՝ սահմանված նորմերին համապատասխան:

ՄԺԾՕ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է՝ 2011 և 2012 թվականների համար 190,898.2 հազարական դրամ, իսկ 2013թ.՝ 208,959.6 հազ. դրամ:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում.

Ղեկավարվելով «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքով և կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի հրահանգներով, հանրապետությունում կայուն անասնահամաճարակային իրավիճակ ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով հանրապետությունում իրականացվում են ամենամյա հակաանասնաճարակային կանխարգելիչ պարտադիր միջոցառումներ:

Միջնաժամկետ ժամանակահատվածում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի հակաանասնահամաճարակային կանխարգելիչ

միջոցառումների (ախտորոշում, պատվաստում, ախտահանություն և այլն) մեջ նախատեսվում է ընդգրկել կենդանիների և մարդկանց համար առավել վտանգավոր հիվանդությունները:

Ծրագրի իրականացումը կնպաստի հանրապետության տարածքում կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կայուն հակահամաճարակային վիճակի ստեղծմանը, անասնաբուժասանիտարական տեսակետից բարորակ անասնապահական մթերքի և հումքի արտադրության ապահովմանը, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանությունը, ինչպես նաև կայուն միջպետական տնտեսական կապերի հաստատմանը:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է՝ 2011 և 2012 թվականների համար 1,000,000.0 հազարական դրամ, իսկ 2013թ.՝ 1,051,000.0 հազ. դրամ:

ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացում.

Ծրագրով նախատեսվում է ՀՀ ոստիկանության ՀԿԱ վարչության կազմում ստեղծված ոստիկանության հատուկ դասակի միջոցով համաճարակային բռնկումների ժամանակ իրականացնել գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունները օջախներում լրկալիզացնելու, հետագա տարածումը կանխելու միջոցառումները, ինչպես նաև հսկողություն սահմանել իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից կարանտինային կանոններով սահմանված պահանջների կատարումն ապահովելու նկատմամբ:

2011-2013թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է 40,154.5 հազ. դրամ:

Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացում.

Բուսաբուծության կայուն զարգացման տեսակետից կարևորագույն միջոցառումներից մեկը բույսերի նոր սորտերի փորձարկումների և դրանց արդյունքների հիման վրա արտադրության մեջ լավագույն սորտերի ներդրման կազմակերպումն է: Այդ աշխատանքներն ունեն շարունակական բնույթ և համապետական մասշտաբով ապահովում են հայրենական և արտերկրների սելեկցիոն կենտրոնների կողմից բուծված արդյունավետ սորտերի օգտագործման և այդ նվաճումների իրավական պաշտպանության խնդիրների լուծումը:

Այս ծրագրի իրագործումը հնարավորություն է ընձեռում կանխել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածր որակ ունեցող սերմերի և տնկանյութի օգտագործումը և ապահովել կոնդիցիոն սերմերի վերարտադրություն:

Նախատեսվող միջոցառումներն են՝

- սորտային նույնականացման աշխատանքների իրականացում,
- սերմերի խբաքանակներից նմուշների ընտրություն,
- սերմնմուշների լաբորատոր փորձարկումների կազմակերպում.
- սորտային սերմադաշտերի ապրոբացիա:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 2011 և 2012 թվականների համար 190,898.2 հազարական դրամ, 2013թ. 208,959.6 հազ. դրամ:

Արհեստական սերմնավորման միջոցառումներ.

Հաշվի առնելով տոհմաբուծության զարգացման գործընթացում արհեստական սերմնավորման միջոցառումների կարևորությունը ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է պահպանել տավարի տարբեր ցեղերի բարձրարժեք ցուլերից ստացված և խորը սառեցված սերմնահեղուկի բանկը: 2011թ-ին նախատեսվում է պահպանել 346.4 հազ. դոզա, 2012թ-ին 313.0 հազ. դոզա և 2013թ-ին 279.0 հազ. դոզա:

2011-2013թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար համապատասխատաբար նախատեսվել է՝ 6,333.0 հազ. դրամ, 5,722.0 հազ. դրամ, 5,100.0 հազ. դրամ:

Գյուղական խորհրդատվական ծառայություններ.

Ծրագրով նախատեսվում է 2011-2013 թվականներին շարունակել ագրարային տեխնոլոգիաների գնահատման և ցուցադրական ծրագրերի իրականացումը, ինչպես նաև գյուղական վայրերի բնակչությանը մատուցել գյուղատնտեսության ոլորտին վերաբերող խորհրդատվական ծառայություններ: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է գյուղատնտեսության ոլորտում ձևավորել կայուն խորհրդատվական համակարգ, որը ֆերմերներին հնարավորություն կտա բարձրացնել գյուղմթերքների արտադրության ծավալները, որակը և կազմակերպվածությունը, ինչն էլ կհանգեցնի գյուղատնտեսական արտադրանքի իրացվելիության մակարդակի բարձրացմանը և նրանց եկամուտների ավելացմանը: Ծրագրի համար նախատեսված ծախսերն ուղղվելու են տեղական խորհրդատուների աշխատավարձերի և պարտադիր սոցիալական ապահովության համար նախատեսված ծախսերի, Գյուղական խորհրդատվական մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-երի) և Գյուղական խորհրդատվական հանրապետական կենտրոնի (ԳԱՀԿ-ի) աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և պարտադիր սոցիալական ապահովության համար նախատեսված ծախսերի և այլ ընթացիկ ծախսերի վճարմանը:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է՝ 2011 և 2012 թվականների համար 293,144.8 հազարական դրամ, իսկ 2013թ.՝ 313,789.6 հազ. դրամ:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցություն.

Ծրագրով նախատեսվում է հանրապետության մի շարք տարածաշրջանների հողօգտագործողների կողմից մշակվող ցորենի և գարու յուրաքանչյուր 1 հա փաստացի ցանքատարածության համար վճարել 35.0 հազ. դրամ աջակցություն:

Հողօգտագործողը պարտավոր է մշակվող հողատարածքում իրականացնել ագրոտեխնիկական անհրաժեշտ միջոցառումներ և ապահովել աշնանացան և գարնանացան ցորենի բարձր բերքատվություն:

Ծրագրի իրականացումը կաջակցի նշված մարզերի ընտրված տարածաշրջանների գյուղացիական տնտեսությունների գործունեությանը, ուղղակի և անուղղակի կերպով կնպաստի

գյուղի սոցիալական ոլորտի զարգացմանը, գյուղական ենթակառուցվածքների կատարելագործմանը և գյուղական համայնքներում կենսագործունեության պայմանների բարելավմանը:

ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում նախատեսվում է ծրագրում ընդգրկել 15,714.3 հա` 550.000.0 հազ. դրամ գումարով:

Ցորենի և գարու սերմնաբուծության զարգացում.

Ծրագրի իրականացման նպատակն է բարձրացնել հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը` գյուղացիական տնտեսությունների բարձրորակ սերմերով ապահովելու միջոցով, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2007թ.-ի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում ցորենի և գարու սերմնաբուծության զարգացման ծրագիրը հաստատելու և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնել մասին» N 451-Ս որոշմամբ, համաձայն որի ծրագրի իրականացման ժամանակացույցը սահմանվել է 2007-2011թթ.: Ծրագիրը նախատեսվում է աշնանացան և գարնանացան ցորենի ու գարու սուպերէլիտային և էլիտային սերմերի արտադրության ընդլայնման նպատակով նախարարության համակարգի գիտական կենտրոնների և սուպերէլիտային և էլիտային սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներին, սուպերէլիտային և էլիտային սերմերի արտադրության համար տրամադրել լրավճար:

2011 թվականին ծրագրով նախատեսվել է 291,888.0 հազ. դրամ:

Սննդամթերքի անվտանգությանն ուղղված ծառայություններ.

Համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» և «Անասնաբուծության մասին» ՀՀ օրենքների Հայաստանի Հանրապետությունում կենդանական և բուսական ծագմամբ սննդամթերքը ենթակա է պարտադիր փորձաքննության և բուսասանիտարական ստուգման: ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. սեպտեմբերի 5-ի N 1516-Ն և 2002 թ. նոյեմբերի 21-ի N1915-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N1898-Ն որոշմամբ հանրապետությունում սննդամթերքի անվտանգության վերահսկողությունը սննդի շղթայի բոլոր փուլերում վերապահված է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

Նախարարությունը նշված գործառնությունը իրականացնելու է 2008 թվականի արդյունքներով 70.0 մլն դրամից ավել շրջանառություն ունեցած ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղված տնտեսվարող սուբյեկտների մոտ սննդամթերքի արտադրության և իրացման կետերից փորձանմուշներ վերցնելու և դրանք լաբորատոր փորձաքննության ենթարկելու միջոցով, որի համար նախատեսվում է յուրաքանչյուր տարի ստուգումների մեջ ընդգրկել սնունդ արտադրող, մշակող, վերամշակող, իրացնող և այլ կազմակերպություններին:

Նախատեսվում է վերցնել նմուշներ, (պարենային հումք, սննդամթերք և սննդամթերքի հետ շփվող նյութեր) վերցրած յուրաքանչյուր նմուշ ենթակել հետազոտման` միջին թվով 7 ցուցանիշների նկատմամբ:

2011-2013 թվականների յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 5,000.0 հազարական դրամ:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Անտառապահպանական ծառայություններ.

Ծրագիրն իրականացվում է «Հայանտառե ՊՈԱԿ-ի միջոցով, որի տնօրինությանը հանձնված հանրապետության անտառպետֆոնդի տարածքը կազմում է ավելի քան 343.0 հազ. հա /ընդհանուրի 80%-ը/, որտեղ անտառտնտեսվարում իրականացնելու համար գործում է 18 անտառտնտեսություն մասնաճյուղեր:

Անտառային տարածքները պահպանելու համար, համաձայն անտառշինական նախագծերի, ստեղծված են 90 անտառպետություններ և 515 պահաբաժիններ, որոնք ի պահ են տրված նույնքան անտառապետների և անտառապահերի: Միջին հաշվով յուրաքանչյուր անտառապահի ի պահ է տրված շուրջ 680.5 հա անտառային տարածք: Սույն բաղադրիչով նախատեսված ծախսերն ուղղվելու են «Հայանտառե ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավարձերի և սոց. հատկացումների վճարմանը:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է՝ 2011 և 2012 թվականների համար 708,700.0 հազարական դրամ, իսկ 2013թ.՝ 779,570.0 հազ. դրամ:

Անտառային պետական մոնիթորինգի իրականացում.

Ծրագրի իրականացումն ուղղված է ՀՀ անտառային տարածքների պահպանություն, վերարադրություն, պաշտպանություն ընդհանուր նպատակի կատարմանը՝ անտառային պետական մոնիթորինգի միջոցով:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել ուսումնասիրություններ և դիտարկումներ, որոնք կընդգրկեն 18 անտառտնտեսությունների շուրջ 343 հազ. հա տարածքները, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի և ՀՀ Տավուշի մարզերի երկու ազգային պարկերի, ՀՀ Սյունիքի և ՀՀ Արարատի մարզերի երկու արգելոցների շուրջ 90 հազ. հա անտառային տարածքները: Կհամալրվի անտառային ոլորտի տվյալների շտեմարանը, որը կպարունակի ոչ միայն 460 հազ. հա անտառային տարածքների վերաբերյալ տվյալները, այլև տվյալներ ապօրինի հատումների դեմ պայքարի բնագավառում իրավապահ մարմինների և բնապահպանական տեսչության կողմից ձեռնարկված միջոցառումների վարաբերյալ: Կիրականացվի կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ, կտրվեն առաջարկություններ:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է՝ 2011 և 2012 թվականների համար 53,970.0 հազարական դրամ, 2013թ. 58,164.6 հազ. դրամ:

ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ

2011-2013 թվականների ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտի նոր նախաձեռնություններով ծրագրավորվում է իրականացնել հետևյալ ծախսային ծրագրերը.

Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացման աջակցություն.

Սույն ծրագրի նպատակն է Ազգային և տարածաշրջանային մակարդակներով բուսասանիտարական կայուն վիճակի և բնակչությանն առողջ սննդամթերքով ապահովելու գործընթացի արդյունավետության բարձրացումը: Հանրապետության պաշտոնական անվանացանկում ընդգրկված է 81 պոտենցիալ կարանտին վնասակար օրգանիզմներ:

Սույն ծրագրով նախատեսվում է միջնաժամկետ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում իրականացնել 20 վնասակար օրգանիզմների հայտնաբերման և դրանց դեմ պայքարի միջոցառումների իրականացման մեթոդական ուղեցույցերի մշակում և 500 օրինակից տպագրում:

Միաժամանակ ծրագրով նախատեսվել է իրականացնել նաև գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բույսերի կարանտինի և երկրագործության պետական տեսչության աշխատակիցների (46 հաստիքային միավոր) վերապատրաստման գործընթացը:

Ծրագրի իրականացումը, որպես նախապայման էր սահմանված նաև Եվրոհանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետությանը 3.0 մլն Եվրո բյուջետային աջակցություն (օգնություն) տրամադրելու հուշագրում:

2011-2013 թվականների յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 5,800.0 հազարական դրամ:

Հակակարկտային կայանքների տեղակայում.

Հակակարկտային ծառայության չգործելու հետևանքով հանրապետության տնտեսությունը կրում է նյութական մեծ վնասներ, որը միայն բուսաբուծության ճյուղում հասնում է 15-20 մլրդ դրամի: Բացի դրանից՝ կարկտահարության և նրան հաջորդող հորդառատ անձրևների հետևանքով հողերը ենթարկվում են էրոզիայի առաջանում են սողանքներ, մեծապես տուժում են անտառները, արոտավայրերը, «Կարմիր գիրքե մտած բուսատեսակները, վայրի կենդանիները, թռչունները, ինչպես նաև շենքերը, շինությունները, օժանդակ կառույցները և կոմունիկացիաները:

Հակակարկտային կայանքների տեղակայումը հնարավորություն կտա զգալիորեն մեղմել կարկտահարության հետևանքով գյուղացիական տնտեսություններին հասցվող վնասների չափը և կբարձրացնի գյուղատնտեսության ոլորտի համախառն արտադրանքը:

Համաձայն ՀՀ կառավարության 12.11.2009թ. NO 1520-Ն որոշման 2011թ. նախատեսվում է տեղակայել ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Լոռի մարզերում ընդհանուր թվով 35 ռադիոռոդեմային գազագեներատորային կայանքներ՝ 308,000.0 հազար դրամ արժեքով և 32 ռեզերվատային կայանքներ՝ 160,000.0 հազար դրամ արժեքով:

Ներդրումներ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ում.

Միջնաժամկետ ծախսային ծրագրերի ժամանակահատվածում շարունակվում է հրատապ մնալ ՀՀ տարածքում կենդանիների, ինչպես նաև մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելումը, նրանց օջախների վերացումը, կայուն

համաճարակային վիճակի ապահովումը, հանրության անվտանգ կենդանական ծագման հումքի, մթերքների և սննդամթերքի հարածուն պահանջմունքների բավարարումը:

Վերջին տարիներին զգալի աշխատանքներ են իրականացվել լաբորատորիաները արդի, Եվրոչափանիշներին համապատասխան սարքավորումներով համալրելու ուղղությամբ, հարկ է նշել, որ «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն»-ի շենքի վերանորոգումը իրականացվում է Համաշխարհային Բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին:

Կենսապատվաստուկները և ախտորոշիչ միջոցները անասնաբուժական նորմերին համապատասխան պահպանելու նպատակով համայնքային անասնաբույժներին տրամադրվել է մեկական սառնարան և այժմ անհրաժեշտություն է առաջացել հանրապետության 40 տարածաշրջանների անասնաբուժական լաբորատորիաները համալրել մեկական մեծ սառնարաններով: 2011 թվականին այն իրականացնելու համար նախատեսվել է 21,600.0 հազար դրամ:

ԳԼՈՒԽ 12. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

12.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

1.1. Ոլորտի (համակարգի) ընդհանուր նկարագիրը

Բնապահպանության ոլորտի խնդիրն է հնարավորինս առավելագույն չափով նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության երաշխիքները: Կլիմայի գլոբալ փոփոխությունները, օզոնային շերտի քայքայումը, մեծ հեռավորությունների վրա օդի, ջրերի անդրսահմանային աղտոտումն, արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործությունները, հողերի դեգրադացիան (անապատացում, աղակալում, էռոզիա և այլն), կենսաբազմազանության առանձին տեսակների անհետացման վտանգը տնտեսական գործունեության արդյունքն են, և դրանք ամբողջ աշխարհում առաջնային լուծում պահանջող խնդիրներ են:

Ուշադրության արժանի են նաև վտանգավոր քիմիական նյութերը, կայուն օրգանական աղտոտիչները, արտադրության պրոցեսում առաջացող վտանգավոր արտադրական թափոնները, ինչպես նաև մարդու կենսագործունեության հետևանքով առաջացած կենցաղային թափոնները, որոնք հանդիսանում են շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուրներից մեկը և որոնց գործածությունը պահանջում է կառավարման լուրջ մոտեցում:

Հասարակության կայուն զարգացումը, ռացիոնալ բնօգտագործման և բնապահպանության ներդաշնակ երկմիասնական գործունեությունը պարտադիր կերպով ենթադրում է համապատասխան կառավարման համակարգի առկայություն, որը հասարակական գիտակցության բարձր աստիճանի, օրենսդրական կատարյալ դաշտի, օրենքների ու օրինականության գերակայության պայմաններում կոչված է ապահովելու երկրի ներսում բնօգտագործման և բնապահպանության նկատմամբ պետական-հասարակական վերահսկողության ու կարգավորման հակակշիռների գործուն մեխանիզմների արդյունավետ աշխատանքը:

Բնապահպանական հիմնախնդիրների լուծման արդյունքների շահառուները՝ Հայաստանի Հանրապետության բնակչությունն ու միջազգային հանրությունն է, որոնց համար երկրում և տարածաշրջանում ստեղծվում է /ապահովվում է բարենպաստ/ անվտանգ շրջակա միջավայր:

Բնապահպանության ոլորտում պետության կողմից իրականացվում են հետևյալ ծառայությունները.

- Սևանա լճի համալիր ծրագիր
- Կենսաբազմազանության պահպանություն

- Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի աշխատանքներ
- Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում
- Հիդրոոդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիտորինգ
- Ջրային ռեսուրսների պահպանություն

Նշված ծառայությունները հիմնականում մատուցվում են ՀՀ բնապահպանության նախարարության և այլ պետական մարմինների ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ների կողմից, որոնք են.

1. "Սևան" ազգային պարկ"
2. "Դիլիջան" ազգային պարկ"
3. "Արգելոցապարկային համալիր"
4. "Շիկահող", "Մոսիների պուրակ" ու "Ջանգեզուր" պետական արգելոց"
5. "Խոսրովի անտառ" պետական արգելոց "
6. " Արփի լիճ" ազգային պարկ"
7. "Արևիկ" ազգային պարկ"
8. "Բնապահպանական ծրագրերի կենտրոն"
9. "Տեղեկատվական վերլուծական կենտրոն"
10. "Հիդրոերկրաբանական մոնիտորինգ"

12.1.2 Վերջին երկու տարիներին ոլորտի (համակարգի) զարգացման միտումները

Հայաստանի Հանրապետությունում բնապահպանության ոլորտի զարգացումը ընթացել և ընթանում է բյուջետային հատկացումների և միջազգային ֆինանսական /բնապահպանական կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհների ընձեռած հնարավորությունների շրջանակներում, նպատակաուղղված լինելով՝ կանխարգելել/կամ նվազեցնել շրջակա միջավայրի հետագա աղտոտումը,

- պահպանել կենսաբազմազանությունը,

- ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռությունն ապահովող պայմանները,

- չվերականգնվող բնական ռեսուրսների գծով ապահովել դրանց բնական և արդյունավետ օգտագործումը:


Բնագավառի զարգացումն ընթացել է համապատասխան հաստատված ծրագրերի, տնտեսության զարգացմանը զուգընթաց և համահունչ այն բարեփոխումներին, որոնք կատարվել և կատարվում են Հայաստանի Հանրապետությունում՝ տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում և բնագավառներում:

Վերջին տարիներին, ելնելով սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխությունից, իրականացվել են բնապահպանության ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի կատարելագործման և արդիականացման (թարմացման) աշխատանքներ՝ այդ թվում ընդունվել են

մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող օրենսդրական նախագծեր և ծրագրեր, ապահովվել է դրանց կիրարկման գործընթացը՝ համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակման և իրականացման միջոցով: Այդ ամենը բարձրացրել է երկրում վարվող բնապահպանական քաղաքականության արդյունավետությունը՝ այն դարձնելով ավելի հասցեական և գործուն: Այդ գործընթացը հաջողությամբ շարունակվել է նաև 2008 - 2009 թվականներին:

2008թ. համեմատ 2009թ. զգալի չափով նվազել են նաև պետական բյուջեի եկամուտները բնապահպանական և բնօգտագործման վճարների մասով, ինչը հիմնականում պայմանավորված է համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով հանքարդյունահանման ծավալների կրճատման և արտանետումների փաստացի ծավալների հետ: 2009 թվականի տարեկան տվյալներով խնդրո առարկա վճարների գծով փաստացի մուտքերը կազմել են 6.12 մլրդ.դրամ կամ 3.84 մլրդ.դրամով (38.6%-ով) պակաս, քան 2008 թվականի տարեկան փաստացի ցուցանիշը (ամփոփ տվյալները ներկայացված են Գծապատկերում):

Գծապատկեր 12.1. Բնապահպանական և բնօգտագործման վճարների դինամիկան 2002-2009 թթ. /մլն.դրամ/



2009 թվականի տվյալներով նախարարության վերահսկողության տակ գտնվող վճարների գծով բնապահպանական և բնօգտագործման վճարների գանձման մուտքերի ընդհանուր ծավալը կազմել է 2317.1 մլն. դրամ կամ 2424.6 մլն. դրամով կամ 51.1 տոկոսով պակաս նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից:

Օրենսդրական դաշտի կատարելագործումը, վերահսկողական աշխատանքների բավարար արդյունավետությունը, ոլորտին հատկացվող ֆինանսական հատկացումների ավելացման

պայմաններում զգալիորեն բարձրացրել են իրականացվող բնապահպանական միջոցառումների արդյունավետությունը, բնական ռեսուրսների վերարտադրության, շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների ուսումնասիրության և պետական դիտանցի (մոնիտորինգի) իրականացման ծավալները: Բնագավառի գծով հիշատակման արժանի ցուցանիշներն և արդյունքներն են՝

1. Շարունակվել է Սևանա լճի մակարդակի բարձրացման կայուն միտումը (2002 թ.՝ 44սմ, 2003 թ.՝ 48 սմ, 2004 թ.՝ 41 սմ, 2005թ.՝ 41 սմ, 2006թ.՝ 18 սմ, 2007թ.՝ 55 սմ, 2008թ.՝ 6 սմ, 2009թ.՝ 38 սմ): Լճի ջրի մակարդակը 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1899,23 մ: Մակարդակի բարձրացումն անցած ութ տարիների ընթացքում կազմել է 291 սմ:

Հսկվել է ոռոգման նպատակով լճից բաց թողնված ջրի չափաքանակն, այն 2009թ. Սևան-Հրազդան համակարգով կազմել է 126.0 մլն. խմ: Ամենօրյա հաշվառման է ենթարկվել Արփա-Սևան թունելով լիճ տեղափոխվող ջրաքանակը: Տարվա կտրվածքով այն կազմել է 203.78 մլն.խմ:

2. 2009 թվականին Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված ջրի տակ մնացած անտառածածկ տարածքներում ծառաթփային բույսերի մաքրման և հեռացման համար պետական բյուջեից հատկացված 257.4 մլն. դրամի հաշվին ամբողջությամբ ավարտվել են շուրջ 600 հա (2005թ.՝ 92 հա, 2006 թ.՝ 123 հա, 2007թ.՝ 95հա, 2008թ.՝ 95հա) անտառածածկ տարածքների մաքրման աշխատանքները, այդ թվում՝

3. Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրման գծով 2008-2009թթ. պետական պատվերի ֆինանսավորման ծավալների ավելացման շրջանակներում զգալի չափով աճել են ձկնային պաշարների համալրման ծավալները:

Աղյուսակ 12.1. Սևանա լճի ձկան պաշարների համալրման 2004-2009թթ դինամիկան

	Սևանա լիճ մանրաձկան բացթողնման ծավալները (հազ.հատ)						
	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2009թ. ցուցանիշը 2008թ. ցացանիշի նկատմամբ (%)
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՆՐԱՁՈՒԿ այդ թվում՝	107.7	175.4	134.9	174.0	248.7	307,0	123.4
ամառային իշխանի	14.7	45.4	15.5	57.5	146.0	150,0	102.7
գեղարքունի ձկան	93.0	130.0	119.4	116.5	102.7	157,0	152.9

4. "Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն" ՊՈԱԿ-ի տեխնիկական վերազինման շրջանակներում ներդրված ավտոմատ դիտակետերի գործարկման արդյունքում 3.4 անգամ ավելացել են օդային ավազանի աղտոտման մոնիտորինգային դիտարկումների ծավալը, որը նպաստում է որակյալ տեղեկատվական բազայի ստեղծմանը միջազգային մակարդակին համապատասխանեցնելու նպատակով:

5. Վերջին տարիների բյուջետային բավարար ծավալների հատկացումները նպաստել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում

գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների գծով պետական պատվերով նախատեսված միջոցառումների ծրագրավորված ծավալներով և որակյալ կատարմանը:

Աղյուսակ 12.2. Շրջակա միջավայրի վրա ներգործության պետական մոնիտորինգի 2003-2009թթ. ծավալները

N	Ցուցանիշի անվանումը	Չափի միավորը	Կատարված աշխատանքների ծավալը						
			2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.
1.	Օդային ավազանի աղտոտման մոնիտորինգային դիտարկումներ								
	- վերցված նմուշներ	նմուշ	21316	22384	31280	36343	43750	86809	415276
	- կատարված անալիզներ	անալիզ	21316	32608	47580	57343	69396	137599	467 705
2.	Ջրային ավազանի աղտոտման մոնիտորինգային դիտարկումներ	օբյեկտ		21	38	48	49	49	39 (փոքր վտակները առանձին չեն հաշվարկված)
	- վերցված նմուշներ	նմուշ	54	246	630	985	979	1177	1266
	- կատարված անալիզներ	անալիզ	1299	6804	25692	34964	39160	47080	56970

Վերջին տարիների ընթացքում Հայաստանի պահպանվող տարածքների ընդհանուր մակերեսը ավելացել է 76.100 հա-ով:

Ներկայումս Հայաստանի ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 374 հազ. հա, որը հանրապետության տարածքի շուրջ 12%-ն է, ինչը մոտ է միջազգային ընդունված ստանդարտներին:

12.1.3. Հիմնական խնդիրները

1. Միջնաժամկետ ժամանակահատվածում ոլորտի գծով հիմնական խնդիրներն ամրագրված են ՀՀ կառավարության կողմից հաստատված բնապահպանության ոլորտի ռազմավարական (հայեցակարգային) նշանակություն ունեցող ՀՀ շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագրերում (2008թ.) և դրանք համահունչ են Կայուն Ջրագացման ծրագրում ներառված հրատապ այնպիսի հիմնախնդիրների հետ, ինչպիսիք են՝

- Սևանա լճի հիմնախնդիր, Կենսաբանական և լանդշաֆտայի բազմազանության պահպանություն, Անտառային ռեսուրսների դեգրադացիա,
- Հողերի պահպանության խնդիր, Պայքար անապատացման գործընթացների դեմ,
- Ջրային ռեսուրսների պահպանություն,
- Արդյունաբերական և կենցաղային թափոնների կառավարում,
- Մարդու առողջության վրա բացասական ներգործության նվազեցում:

2. Հանրապետության տնտեսական աճի կայուն միտումների պայմաններում շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության խնդիրները ներկա փուլում պետք է դիտարկվեն

նան հետագա զարգացման համար բնական պաշարների մատչելիության, հավասարակշռված օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման կանխման երաշխիքների տեսակետից:

Հանրապետության ինտեգրումը տարածաշրջանային և միջազգային համագործակցության համակարգերում նոր պահանջներ է առաջադրում շրջակա միջավայրի կառավարմանը, ինչպես՝ անդրսահմանային ներգործության վերահսկման հստակ մեխանիզմների ստեղծումը, այնպես էլ վտանգավոր և թունավոր թափոնների, գենետիկական մոդիֆիկացված օրգանիզմների տեղափոխումը: Շրջակա միջավայրի կառավարման արդի ժամանակաշրջանի խնդիրները պահանջում են ոլորտի կառավարման մեխանիզմների, ինստիտուցիոնալ կառույցների, միջճյուղային համագործակցության, բնապահպանական իրավիճակի գնահատման և ռիսկի գործոնների կանխարգելման գործուն մեխանիզմների մշակում տարածաշրջանային և միջազգային համագործակցության ամրապնդման ճանապարհով:

12.2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները

ՄԺԾԾ Ժամանակահատվածում

12.2.1. Նպատակները

2011-2013թթ. զարգացման կարևորագույն նպատակներն են՝

- իրագործել ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած բնապահպանական ծրագրերը,

- բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման ծավալների աստիճանական ավելացում,

- զարգացման բնապահպանական խոչընդոտների կանխարգելումը,

- բարելավել բնական ռեսուրսների հաշվառումը,

- բարելավել շրջակա միջավայրի մոնիտորինգը,

- բարելավել տեսչական վերահսկողությունը:

2011-2013թթ. ժամանակահատվածում բնապահպանության ոլորտում հիմնական և կարևորագույն խնդիրներից է լինելու Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների կատարման ապահովումը:

12.2.2. Գերակայությունները

Ծրագրվող ժամանակահատվածում բնագավառի զարգացման հիմնական գերակայություններն ամրագրված են ՀՀ կառավարության գործունեության ծրագրի "4.3.10. Բնապահպանությունը" բաժնում՝ այն է ելնելով երկրի անվտանգության ու կայուն զարգացման շահերից, ինչպես նաև առաջնորդվելով միջազգային ինտեգրման ու ներքին բարեփոխումների ռազմավարությունից՝

- շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական և բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների նվազեցումը և կանխարգելումը,

- բնական պաշարների պահպանության, վերականգնման, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովումը,

- շրջակա միջավայրի վիճակի եւ հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների դիտարկումների, ուսումնասիրությունների, կանխատեսումների, դրանց ազդարարման և արձագանքման ժամանակակից համակարգի ստեղծումը,

Առանձնահատուկ կարևորություն է տրվելու Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանը, Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագրերի ամբողջական իրականացմանը, անտառապատման և անտառավերականգնման ծավալների աճի ապահովմանը, անտառների ապօրինի հատումների կանխմանը, բնության հատուկ պահպանվող տարածքների պետական պահպանությանը, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանությանը:

12.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությունից ելնելով 2011-2013 թվականների ՄԺԾԾ-ի ծախսերի մակարդակի վրա ազդող հիմնական գործոն է հանդիսանում 2011-2012 թվականներին պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձի նվազագույն շեմը 2500 դրամով ավելացումը, այնուհետև 2013թվականի աշխատանքի վարձատրմանն ուղղվող բյուջետային հատկացումների 10% աճ:

12.3. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում (համակարգում)

Իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

12.3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

- 2011–2013թ.թ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտի զարգացման կարևորագույն նպատակների իրագործման շրջանակներում շարունակվելու են ըստ բնագավառների ներքոհիշյալ ծրագրերի կատարումը.
- “Սևանա լճի մասին ” ՀՀ օրենքի կատարմանը նպատակաուղղված Սևանա լճի համալիր ծրագրի շրջանակներում իրականացման ենթակա միջոցառումների և ենթածրագրերի կատարման ապահովում, այդ թվում՝ Սևանա լճում արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության շրջանակներում “Ձկան պաշարների համալրման” ծրագրի իրականացումը նախատեսում է “Գեղարքունիի իշխանի” և “Ամառային իշխանի”

ենթատեսակների մանրաձկան գնում և բացթողում Սևանա լիճ այդ թվում՝ Գեղարքունիի/5 գրամից ավելի/ յուրաքանչյուր տարվա համար համապատասխանաբար՝ 240.0հազ. հատ և Ամառային իշխանի մանրաձկներ /5 գրամից ավելի/ 192.0 հազ.հատ, որի համար 2010-2013թթ. հատկացվել է՝ 180.0մլն դրամ՝ յուրաքանչյուր տարվա համար 60.0մլն դրամ:

- Սևանա լճի ջրահավաք ավազանի վայրի բուսական և կենդանական ռեսուրսների հաշվառման “Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում” ծրագրի իրականացումը նախատեսում է Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման իրականացում այդ թվում՝
- Սևանա լճի ձկների արդի վիճակի,տաքրածական տեղաբաշխման,կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում յուրաքանչյուր տարին 1 անգամ:
- Սևանա լճի խեցգետնիարդի վիճակի,տաքրածական տեղաբաշխման,կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում յուրաքանչյուր տարին 1 անգամ: 2011-2013թթ. հատկացվելու է՝ 22.6 մլն դրամ՝ յուրաքանչյուր տարվա համար՝ 7.53մլն.դրամ:

Հայաստանի բնապահպանական խնդիրների շարքում առանձնակի է կարևորվում լճի ջրային պաշարի պահպանության և համալրման՝ վերջին տարիների ջանքերը և եղանակային բարենպաստ պայմանները ապահովել են ջրի մակարդակի բարձրացման կայուն միտումներ՝ 2001-2009թթ. այն կազմել է 291 սմ: Ջրի մակարդակի բարձրացումը միաժամանակ ավելի հրատապ է դարձրել ափամերձ տարածքների կառավարման թերությունների վերացման անհրաժեշտությունը՝ ջրածածկման ենթակա տարածքներում բուսածածկի հեռացումը: Սևանա լճի անտառածածկ տարածքների մաքրման 2789.25հա տարածքից՝ 2010թ. նախատեսվել է մաքրել 600.0 հա, ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է համապատասխանաբար՝ 623հա .638հա և 652հա մաքրման աշխատանքների կատարում, որի իրականացման համար հատկացվելու է՝ 756.0մլն դրամ 2011թ.համար՝ 242.0մլն.դրամ, 2012-1013թթ. յուրաքանչյուր տարվա համար 257.0 մլն դրամ:

Ջրային ռեսուրսների պահպանության բնագավառում

Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հղորդերկրաբանական մոնիտորինգի ծրագիրը նախատեսում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հղորդերկրաբանական մոնիտորինգի վարում և դրա վերաբերյալ ամփոփ հաշվետվության կազմում, յուրաքանչյուր տարվա համար 1-հաշվետվություն:

-Նախագծանախահաշվային փաստաթղթերի և եռամսյակային հաշվետվությունների կազմում յուրաքանչյուր տարին 2-անգամ :

Ռեժիմային դիտարկումներ այդ թվում՝

Ջրի մակարդակի չափում ըստ տարիների համապատասխանաբար` 576, 720 և 864 հատ:
 Ջրի ծավալի չափում ըստ տարիների համապատասխանաբար` 5,472 ; 6,984 և 8,352 հատ:
 Ջրի ջերմաստիճանի չափում ըստ տարիների համապատասխանաբար` 6,048;7,704 և 9,216հատ:

Ջրի նմուշառում ըստ տարիների համապատասխանաբար` 56, 35 և 43 հատ:

Լաբորատոր դիտարկումներ,այդ թվում`

Ջրի լրիվ քիմիական անալիզ ըստ տարիների համապատասխանաբար` 56, 35 և 43 հատ:

Ջրակետերի անցում ուղքով ըստ տարիների համապատասխանաբար` 6,362; 7,210 և 8,130 կմ: 2011-2013թթ. պետական բյուջեից հատկացումները կազմելու են` 2011-2012թ.թ. յուրաքանչյուր տարվա համար` 18.1 մլն դրամ, 2013թ.` 19.1 մլն դրամ:

Կենսաբազմազանության պահպանության բնագավառում

Ծրագրավորվող ժամանակահատվածում բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեությունը ապահովող ծրագրերին 2011-2013թթ. ուղղվելու է 2567.2մլն դրամ, այդ թվում` 2011թ. 831.8, 2012թ. 846.8 մլն դրամ, 2013թ. 888.6 մլն դրամ:

Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի աշխատանքներ

Շրջակա միջավայրի վիճակի մոնիտորինգի 2011-2013թթ. միջնաժամկետ ծրագիրը ուղղված է լինելու քիմիական աղտոտիչներով մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի և հողերի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացմանը: Նախատեսվում է ջրային օբյեկտների մոնիտորինգ 5-գոտում, 55 ջրային օբյեկտներում յուրաքանչյուր տարվա համար համապատասխանաբար` 125200 , 203310 և 304000 ցուցանիշ/ քիմիական որակը, Բաղադրությունը որոշող արդյունքներ/ այդ թվում`

- մթնոլորտային օդի մոնիտորինգ,պասիվ նմուշառում` 676800, 855000 և 1015000 ցուցանիշ:
- Արաքս գետ աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիտորինգի իրականացում յուրաքանչյուր տարվա համար` 2.376 ցուցանիշ:
- Ծաղկաձորում շրջակա միջավայրի մոնիտորինգի իրականացում յուրաքանչյուր տարվա համար` 143.525 ցուցանիշ:

-“Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ /EMEP/շրագրի” շրջանակներում “Հայաստանի օդի անդրսահմանային աղտոտման մոնիտորինգի իրականացում” յուրաքանչյուր տարվա համար` 23,932 ցուցանիշ:

Այս աշխատանքների իրականացման համար հատկացվելու է` 2011 թվականին 112.310 մլն. դրամ, 2012 թվականին 112.310 մլն. դրամ և 2013 թվականին 119.090 մլն. դրամ:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքներ

Ծրագրվող ժամանակահատվածում ‘Պետական աջակցություն բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման իրականացման նպատակով՝ ծրագիրը կիրականացվի ելնելով Օրհուսի

Կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակներից:

-Նախատեսվում է ՀՀ ԲՆ պաշտոնական կայքի սպասարկում, համապատասխանաբար յուրաքանչյուր տարի 3-ական կայք:

-ՀՀ ԲՆ տվյալների շտեմարանների ձևավորում և նրանց միջև տեղեկատվության փոխանակում ապահովող համակարգչային համակարգերի նախագծում, մշակում և ներդրում՝ ըստ տարիների 3-ական շտեմարան:

- ՀՀ ԲՆ բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի սպասարկում, տեղեկատվության ամփոփում և տրամադրում կենտրոններին, ըստ տարիների 13-ական կենտրոն:

Այդ նպատակով 2011-2013 թվականներին 2011-2012թթ. յուրաքանչյուր տարվա համար 16.95 մլն դրամ, 2013թ.՝ 18.57մլն դրամ:

Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման ոլորտ

Նախատեսվում է՝ իրականացնել թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման և վնասագերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնալոգիաների վերաբերյալ նորմատիվա մեթոդական փաստաթղթերի մշակում և լուսաբանման աշխատանքներ, այդ թվում՝

-Հաշվետվությունների կազմում և այլ կազմակերպություններին տվյալների և խորհրդատվության տրամադրում՝ ըստ տարիների 700-ական կազմակերպությանը:

-Թափոնների գոյացման,վերամշակման ու օգտահանման օբյեկտների՝ ըստ տարիների 30-ական օբյեկտ:

-Թափոնների հեռացման վայրերի՝ ըստ տարիների 30-ական վայր:

-Թափոնների օգտահանման, վնասագերծման վերաբերյալ առաջարկվող տեխնալոգիաների ըստ տարիների՝ 50-ական հատ:

Պետական աջակցություն “Թափոնների ուսումնասիրության կենտրոն” ՊՈԱԿ-ին 2011-2013 թվականներին՝ 2011-2012թվականների յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 10.28 մլն դրամ և 2013թ.՝ 11.18մլն դրամ:

Հիդրոոդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիտորինգի բնագավառում

Հիդրոոդերևութաբանության ոլորտում “Աջակցություն” Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն” ՊՈԱԿ-ին՝ ծրագրով աշխատանքները նպատակաուղղվելու են.

- օդերևութաբանական, ագրոոդերևութաբանական, հիդրոլոգիական, ռադիոլոկացիոն, ակտինոմետրիական, օգոնամետրիական և աերոլոգիական դիտարկումների կատարմանը,

- կլիմայի փոփոխության ուսումնասիրությանը և կլիմայի մոնիտորինգի իրականացմանը,

- հանրապետության տարածքում ռադիացիոն մոնիտորինգի կատարմանը,

- կլիմայի փոփոխության ուսումնասիրությունների կատարմանը,

- հիդրոոդերևութաբանական տվյալների հավաքագրմանը, կանխատեսումների և վտանգավոր աղետային երևույթների վերաբերյալ նախագուշացումների կազմմանը,

- հանրապետության ղեկավար մարմիններին, զինված ուժերին, ավիացիային, տնտեսավարող սուբյեկտներին, գյուղատնտեսությանը, էներգետիկային, տրանսպորտին և այլ շահագրգիռ կազմակերպություններին հիդրոոդերևութաբանական, ռադիացիոն և հելիոերկրաֆիզիկական տարբեր տեղեկատվությամբ ապահովմանը :

Այս նպատակով 2011-2013թթ. ընդամենը ուղղվելու է 1646.68 մլն դրամ, այդ թվում 2011 թվականին 533.64 մլն դրամ, 2012 թվականին` 533.64 մլն դրամ և 2013 թվականին` 579.40 մլն դրամ:

12.4. ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ

2011-2013թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտի զարգացման կարևորագույն նպատակների իրագործման շրջանակներում նոր նախաձեռնություններով 2011 թվականին ծրագրվում է իրականացնել “Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնման ծառայություններ” ծրագիրը:

Նշված ծրագրի իրականացմանն ուղղվելու է 15.0 մլն. դրամ:

Աղյուսակ 12.3. Գոյություն ունեցող և նոր ծրագրերի ֆինանսավորումը 2011-2013թթ. (մլն. դրամով)

Ցուցանիշը	2011թ.	2012թ.	2013թ.
Բնապահպանություն ընդամենը, այդ թվում`	1254.116	1254.116	1308.8
նոր ծրագրեր	15.0	0.0	0.0
% ոլորտի նկատմամբ	1.2	0.0	0.0
գոյություն ունեցող ծրագրեր	1239.116	1254.116	1308.8
% ոլորտի նկատմամբ	98.8	100.0	100.0

ԳԼՈՒԽ 13. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

13.1 Իրավիճակի նկարագրություն

Վերջին տարիներին ճանապարհային բնագավառում զգալի աշխատանքներ են կատարվել: Տրանսպորտի և կապի ոլորտների պետական կարգավորման, համակարգի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների գործունեության կառավարման և կորորդինացման միջոցով ապահովվել է տնտեսության մյուս ճյուղերի (ոլորտների) կազմակերպությունների և ազգաբնակչության պահանջարկը՝ փոխադրումների (բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների), փոստային ծառայությունների մատուցման, ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների բնագավառներում:

Ավտոմոբիլային ճանապարհները ՀՀ տրանսպորտային համակարգի կարևորագույն բաղկացուցիչն են: Երկրի ներսում տարածաշրջանների և բնակավայրերի միջև, ինչպես նաև հարևան երկրների հետ կապ ստեղծող ավտոմոբիլային ցանցի տրանսպորտա-շահագործողական վիճակից և զարգացումից է կախված պետության կայուն տնտեսական աճը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը, ազգային անվտանգության բարելավումը, միջազգային տրանսպորտային համակարգին ճանապարհային ցանցի ինտեգրումը:

Ներկայումս Հայաստանի հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 7743.4 կմ, որը, համաձայն ՀՀ կառավարության 10.01.2008թ-ի N 112-N որոշման դասակարգվում է ըստ նշանակության՝

1. միջպետական նշանակության ճանապարհներ - 1686.0 կմ

2. հանրապետական նշանակության ճանապարհներ - 4049.1 կմ, այդ թվում, ըստ ենթակայության բաժանվում են՝ 1781.3 կմ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, 1737.1 կմ մարզային և 530.7 կմ համայնքային ենթակայության:

3. մարզային (տեղական) նշանակության ճանապարհներ - 2008.3 կմ, այդ թվում, ըստ ենթակայության բաժանվում են՝ 1630.4 կմ մարզային և 377.9 կմ համայնքային ճանապարհների:

ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն՝ Կայուն զարգացման ծրագրի՝ համապատասխան, տրանսպորտի բնագավառի հիմնական քաղաքականությունը հանրապետության ճանապարհային ցանցի բարելավումն ու պահպանումն է, որն իրագործվում է ՀՀ պետական բյուջեից հատկացումների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի և դրամաշնորհների միջոցներով:

Հանրապետության ճանապարհային ցանցի բարելավման և պահպանման համար ՀՀ պետական բյուջեից հատկացումների հաշվին տրանսպորտի ոլորտում իրականացվում են հետևյալ ծրագրերը.

- Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում,

-Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանում և շահագործում:

Նշված ծրագրերի իրականացմամբ ՀՀ բնակչությանը, ինչպես նաև միջազգային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին և անձանց համար ապահովվում է.

- տրանսպորտային ծախսերի կրճատումը, շարժման արագության բարձրացումը, տրանսպորտային միջոցների ավելորդ վազքի և ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների տևողության նվազեցումը,

- բնակավայրերի հետ ողջ տարին տրանսպորտային հաղորդակցության ապահովումը, երթևեկության անվտանգության բարելավումը, ճանապարհատրանսպորտային պատահարների և կորուստների քանակի կրճատումը, շրջակա միջավայրի վրա ճանապարհատրանսպորտային համալիրի բացասական ազդեցության նվազեցումը:

1998-2009 թթ. ընթացքում ճանապարհային բնագավառում ընդհանուր ֆինանսական ներդրումների արդյունքում կառուցվել և վերականգնվել են շուրջ 1640 կմ ճանապարհներ, մի քանի տասնյակ կամուրջներ, շահագործման են հանձնվել Պուշկինի, Նալբանդի և Դիլիջանի թունելները: Կատարված ներդրումների արդյունքում տեղի է ունեցել հիմնական ճանապարհային ցանցի վիճակի բարելավման կտրուկ աճ:

Անցած տարիներին նպատակային և արդյունավետ վերականգնողական միջոցառումների իրականացման արդյունքում հիմնական ճանապարհային ցանցի ծածկի անհարթության միջինացված գործակիցը 1998թ-ի 7.8 մմ/մ արժեքից 2009թ-ին նվազել է մինչև 3.5 մմ/մ արժեքը:

Աղյուսակ 13.1.

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	տրանսպորտի, կապի, տեղեկատվայնացման բնագավառների գործունեության պետական կառավարում, կարգավորում, պետական քաղաքականության մշակում ու իրականացում, մոնիտորինգ	Հասարակություն, պետական կառավարման այլ մարմիններ	Ամբողջությամբ
2.	նախարարության իրավասության տակ գտնվող պետական միավորների նկատմամբ լիազոր մարմնի գործառույթների իրականացում	տեղեկատվայնացման ոլորտում՝ 4, ավտոճանապարհաշինության ոլորտում՝ 1, ավտոտրանսպորտային ոլորտում՝ 1, 3 տարբեր բնույթի այլ ընկերություններ և 2 ՊՈԱԿ-ներ	Ամբողջությամբ
3.	Լիցենզավորման ծառայություններ	ՀՀ տարածքում երկաթուղային տրանսպորտի գործունեության իրականացման համար երկաթուղային գործունեության իրականացման համար լիցենզիայի տրամադրում	Ամբողջությամբ

		ՀՀ տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների ծառայություններ մատուցող կազմակերպություններ և անհատներ	Ամբողջությամբ
		ՀՀ տարածքում ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների ծառայություններ մատուցող կազմակերպություններ	Ամբողջությամբ
		ՀՀ տարածքում տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների պարտադիր տեխնիկական զննության անցկացման գործունեության իրականացնող 25 կազմակերպություններ (39 հոսքային զժեր)	Ամբողջությամբ
		ՀՀ տարածքում փոստային կապի ծառայություններ մատուցող կազմակերպություններ, ՀՀ բնակչություն	Ամբողջությամբ
4.	Արտոնություն ունեցող քաղաքացիներին անվճար երթևեկության վկայականների տրամադրում	ՀՀ քաղաքացիներ	Չի փոխհատուցվում
5.	ՀՀ տարածքից բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ իրականացնելու համար թույլտվության հատկացում	ՀՀ տարածքում գործող բեռնափոխադրող և ուղևորափոխադրող կազմակերպություններ, ՀՀ բնակչություն	Չի փոխհատուցվում
6.	Հայաստանի Հանրապետության հաճախությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոէթերի մոնիտորինգի, ՌԷՄ-ի և ԲՀՄ-ի տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, էթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման ծառայություններ	Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1807-Ն որոշում, ՀՀ բնակչություն	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում է ամբողջությամբ,
7.	Երթևեկության անվտանգության ապահովումը, ողջ տարին միջպետական և միջբնակավայրային տրանսպորտային հաղորդակցության ու տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկության ապահովման նպատակով ընդհանուր օգտագործման պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և	ՀՀ բնակչությունը, ինչպես նաև միջազգային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունները և անձիք	Տվյալ տարվա ծրագրերի իրա- կանացման համար՝ ամբողջությամբ

տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման, պահպանման ու շահագործման աշխատանքների կազմակերպման ծառայություն		
---	--	--

13.1.1 ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐԻ ՈՒՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2008-2009թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացված ներդրումների շնորհիվ զգալիորեն բարելավվել են և անվտանգ դարձել միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները: Կապի և էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում ապահովվել է հանրապետության տնտեսության և բնակչության պահանջարկը:

Ճանապարհային տնտեսություն

Ճանապարհային տնտեսության բնագավառում 2009 թվականին վերանորոգվել են շուրջ 411.06 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ, այդ թվում՝ 112 կմ պետական բյուջեի, իսկ 299.06 կմ-ը՝ ներգրավված վարկային միջոցների հաշվին: 2009թ. պետական բյուջեի միջոցների հաշվին շահագործման են հանձնվել 85 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ:

Պետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար ՀՀ պետական բյուջեից 2009թ. հատկացվել է 11535.9 մլն դրամ՝ 2008թ. հատկացված 11943.7 մլն. դրամի դիմաց (նվազել է մոտ 3.5 %-ով): Իրականացվել է շուրջ 112 կմ պետական նշանակության ճանապարհների հիմնանորոգում, իրականացվել է ավտոճանապարհների կահավորում, տեղադրվել են ճանապարհային նշաններ ու ցուցանակներ: 2009թ. պետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար նախատեսված ծախսերի նվազումը 2008թ. համեմատ պայմանավորված է ավտոճանապարհների հիմնանորոգման ենթակա տարածքների պակասեցմամբ:

2009թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգվել են 10 կամուրջներ, որոնց հիմնանորոգման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 414.7 մլն դրամ՝ 2008թ. հատկացված 707.4 մլն. դրամի դիմաց (նվազել է մոտ 41.4 %-ով): Նվազումը պայմանավորված է հիմնանորոգման ենթակա տրանսպորտային օբյեկտների քանակի նվազեցմամբ:

Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման համար ՀՀ պետական բյուջեից 2009թ. հատկացվել է 5004.9 մլն դրամ: 2008-2009թթ. յուրաքանչյուր տարի իրականացվել են երեք թունելների և հինգ կամուրջների պահպանություն ու շահագործում, շուրջ 3393 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ, ձմեռային պահպանության և շահագործման, ճանապարհների կահավորման աշխատանքներ, ինչպես նաև Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներ՝ ՊՈԱԿ-ի կողմից պետական պատվերի ծրագրերի իրականացում:

Կապի, էլեկտրոնային հաղորդակցության և տեղեկատվայնացման ոլորտ

Կապի և էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում 2009թ. ընթացքում ապահովվել է հանրապետության տնտեսության և բնակչության պահանջարկը: Մեծ ուշադրություն է դարձվել տեղեկատվայնացման ոլորտին: Հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են հեռարձակվող ալիքների ավելացմանը, երկրի բնակչության համար հեռուստաալիքների առավելագույն հասանելիության ապահովմանը, սփռման գործող ցանցի արդիականացմանը: Բարելավվել և ընդլայնվել է ինչպես հայկական, այնպես էլ՝ արտասահմանյան հեռուստառադիոձրագրերի հեռարձակումը:

Բջջային կապի ծառայությունների շուկայի ազատականացման արդյունքում երրորդ օպերատորի մուտքն իր հերթին ապահովեց մատուցվող ծառայությունների որակի բարելավում, զգալիորեն նվազեցրեց սակագների մակարդակը և ընդլայնեց այդ ծառայություններից օգտվողների քանակը:

Արդիականացվել է Վայոց Ձորի մարզի հեռուստահաղորդիչ ցանցը, որի արդյունքում բարելավվել է մի շարք համայնքների, այդ թվում՝ Մորզով, Գետափ, Չիվա, Ռինդ, Աղավնաձոր, Արփի, Ելփին, հեռարձակման որակը: Կառուցվել է նոր երեք ծրագրային հեռուստակայան:

Ապահովվել է «Հայփոստե ՓԲԸ-ն հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրով նախատեսված պայմանների նկատմամբ անհրաժեշտ հսկողություն»:

13.1.2 ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ավտոճանապարհները սարքին վիճակում պահելու համար անհրաժեշտ է մշտապես իրականացնել նորոգման և պահպանման համակարգված շարունակական աշխատանքներ: 90-ական թվականների ընթացքում այդ աշխատանքները գրեթե չէին կատարվել և հանրապետության ամբողջ ճանապարհային ցանցը հայտնվել էր զանգվածային քայքայման վիճակում:

Կատարված ներդրումների արդյունքում տեղի է ունեցել հիմնական (միջպետական) ճանապարհային ցանցի վիճակի բարելավման կտրուկ աճ: Շարունակվում են իրականացվել հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն «Կայուն զարգացման ծրագրի է համապատասխան, այս բնագավառում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- միջպետական նշանակության ավտոճանապարհների ցանցի երթևեկամասի ընդհանուր վիճակի պահպանումը 2004-2008թթ. ցուցանիշների մակարդակի համապատասխան:
- հանրապետական նշանակության վերականգնված ճանապարհները բարվոք վիճակում պահելը և ցանցի պլանային վերականգնում:
- բնակավայրերի միջև կայուն տրանսպորտային հաղորդակցության վերականգնումը:

13.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ

**ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ**

3.2.1 Նպատակները

Տրանսպորտի կայուն և արդյունավետ զարգացումն անհրաժեշտ պայման է երկրի տնտեսական աճի բարձր տեմպերի, ազգային անվտանգության և պաշտպանունակության ապահովման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, ինչպես նաև համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ռացիոնալ ինտեգրումն ապահովելու գործընթացների տեսանկյունից:

Առաջնահերթ աշխատանքներ կիրականացվեն ՀՀ կառավարության 2010 թվականի գործունեության ծրագրով սահմանված միջոցառումները և գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը ժամանակին և որակով կատարելու ուղղությամբ:

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն «Կայուն զարգացման ծրագրի համապատասխան, տրանսպորտի բնագավառի հիմնական քաղաքականությունը հանրապետության ճանապարհային ցանցի բարելավումն ու պահպանումն է, որը հնարավոր է իրագործել՝ պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանում ու շահագործում ծրագրերի շրջանակներում, ինչը կապահովի հետևյալ նպատակների ձեռք բերումը.

- պետական ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցի զարգացումը՝ ՀՀ բնակչության պահանջումներին, հանրապետության տնտեսության և տրանսպորտային ենթակառուցվածքին համապատասխան, ինչպես նաև պահանջվող տեխնիկական վիճակի, ճանապարհային ցանցի անցողունակության և խտության, երթևեկության անվտանգության ու երթևեկության բարելավման և տնտեսական ակտիվության խթանման ապահովումը, և Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության ամրապնդումը,

- տրանսպորտային ծախսերի կրճատումը, շարժման արագության բարձրացումը, տրանսպորտային միջոցների ավելորդ վազքի և ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների տևողության նվազեցումը,

- բնակավայրերի հետ ողջ տարին տրանսպորտային հաղորդակցության ապահովումը, երթևեկության անվտանգության բարելավումը, ճանապարհատրանսպորտային պատահարների և կորուստների քանակի կրճատումը, շրջակա միջավայրի վրա ճանապարհատրանսպորտային համալիրի բացասական ազդեցության նվազեցումը,

- գիտատեխնիկական նվաճումների ներդրումը և հայրենական ճանապարհաշինական ոլորտի զարգացումը:

Ճանապարհաշինության բնագավառի նպատակները և կատարման նախատեսված չափորոշիչները 2011-2013 թթ. համար

Ռազմավարական նպատակները	Ճանապարհային տնօրինության նպատակները	Կատարման չափորոշիչները	2011-2013թթ.
-------------------------	--------------------------------------	------------------------	--------------

ՀՀ հիմնական ավտոճանապարհային ցանցի տրանսպորտա-շահագործողական վիճակի պահպանում և բարելավում, ուղղված հայրենական ապրանքների մրցունակության բարձրացմանը՝ տրանսպորտային ծախսերի նվազեցման հաշվին, միջպետական տարանցիկ բեռնաշրջանառության փոխադրումների ավելացմանը, երկրի պաշտպանունակության և տնտեսական աճի ապահովմանը	Պահպանման արդյունավետ համակարգի ստեղծում, որը կապահովի ճանապարհների մշտական խնամքը և ծառայության ժամկետի երկարատևությունը	Բավարար պահպանության մակարդակով ճանապարհների երկարության տոկոսային հարաբերությունը այդ կարգի ճանապարհների ողջ երկարությանը	Միջպետական ճանապարհներ 90 % Հանրապետական ճանապարհներ 40, 60, 80, % Տեղական ճանապարհներ 10, 15, 30, %
	Միջպետական ավտոճանապարհների երթևեկելի մասի բարելավում	Անհարթության IRI գործակցի միջին թվաբանականը	3.5, 3.4, 3.3
	Հանրապետական ավտոճանապարհների վերականգնում	Անհարթության IRI գործակցի միջին թվաբանականը	6.0, 5.8, 5.5
Տարածաշրջանների բնակչության սոցիալ-տնտեսական կենսամակարդակի բարելավում ՀՀ տեղական նշանակության ավտոճանապարհների ցանցի վերականգնման միջոցով, որպես աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մաս	Բնակավայրերի միջև տրանսպորտային կապի բարելավում	Մարզկենտրոնների հետ բավարար տրանսպորտային կապ ունեցող բնակավայրերի տոկոսային հարաբերությունը բնակավայրերի ընդհանուր թվին	3, 5, 8 %
	Տեղական ավտոճանապարհների վերականգնում	Անհարթության IRI գործակցի միջին թվաբանականը	10, 9.7, 9.0
Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության անվտանգության բարելավում	Վտանգավոր ճանապարհային հատվածների հայտնաբերում, պատճառների վերացում, ճանապարհային նշանների տեղադրում և նշագծում	Տուժածներով ճանապարհատրանսպորտային պատահարների ընդհանուր թվի նվազումը	2, 3, 5 %
		Տեղադրված ճանապարհային նշանների տոկոսային հարաբերությունը պահանջվող ընդհանուր քանակին	40, 60, 70%
		Կատարված նշագծման տոկոսային հարաբերությունը պահանջվող ընդհանուր երկարությանը	40, 50, 60 %

13.2.2. Գերակայությունները

2011-2013թթ-ի քաղաքականությունը հիմնականում նպատակամղվելու է գոյություն ունեցող ճանապարհների (ավտոմոբիլային, երկաթուղային) արդյունավետ օգտագործման միջոցով հանրապետության տարածքում փոխադրումների ամբողջ ծավալով ապահովմանը: 2011-2013թթ. պետական բյուջեի հաշվին կշարունակվեն ռազմավարական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, հիմնանորոգման, վերակառուցման և պահպանման աշխատանքները: Հիմնանորոգման աշխատանքներ կիրականացվեն այն ճանապարհա-հատվածներում և ճանապարհային կառույցների օբյեկտներում, որոնք տարիներ շարունակ շարքից դուրս են եկել տրանսպորտային միջոցների համար դարձել դժվար անցանելի և վտանգավոր: Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ նորոգումների և ձմեռային պահպանության իրականացման արդյունքում

տրանսպորտային միջոցների երթևեկությունը կդառնա անվտանգ, արագ և դյուրին: Ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքի բարելավումը կապահովի բնականոն տրանսպորտային կապը ինչպես տարածաշրջանի, այնպես էլ հանրապետության հեռավոր և սահմանամերձ շրջանների ու բնակավայրերի հետ, կնպաստի նրանց զարգացմանը, կիջեցնի փոխադրումների ինքնարժեքը և կնպաստի աղքատության կրճատմանը:

Երթևեկության ինտենսիվության աճի, ծանր բեռնատար ավտոմեքենաների քանակի ավելացման և, դրա հետ կապված, ընդհանուր օգտագործման պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ծածկի արագ քայքայման պայմաններում ճանապարհային ցանցի պատշաճ տրանսպորտա-շահագործողական վիճակի ապահովման նպատակով 2011-2013թթ. ժամանակահատվածի ՄԺԾԾ-ով նախատեսում է իրականացնել պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման, շահագործման ու հիմնանորոգման աշխատանքների ծրագրերը:

2011-2013 թվականներին տրանսպորտի և կապի ոլորտում իրականացվելիք ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններն են.

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2011թ.	2012թ.	2013թ.	
1	Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման ծրագիր			ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն «Կայուն զարգացման ծրագրի ե համապատասխան, տրանսպորտի բնագավառի հիմնական քաղաքականությունը՝ հանրապետության ճանապարհային ցանցի բարելավում ու պահպանում
2	Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և շահագործման ծրագիր			

13.3.ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով

«Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգումը» ծրագրի իրականացման համար յուրաքանչյուր տարի նախատեսվում է համապատասխանաբար 4000.0 մլն դրամ:

2011-2013թթ-ի ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է հիմնանորոգել ընդհանուր օգտագործման պետական (միջպետական, հանրապետական և մարզային) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ, այդ թվում.

- կատարել քայքայված ծածկերի վերականգնման աշխատանքներ ճանապարհների վրա,
- կատարել մաշված ծածկերի փոխարինում և հիմնանորոգում,
- կատարել տեղական (մարզային) նշանակության ավտոճանապարհների

ճանապարհահատվածների հիմնանորոգում,

«Ավտոճանապարհների պահպանում և շահագործումն ու «Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործումն» ծրագրերով իրականացման համար նախատեսվում է 2011թ.՝ 6270.4 մլն դրամ, 2012թ.՝ 6270.4 մլն դրամ և 2013թ.՝ 6278.8 մլն դրամ: Յուրաքանչյուր տարի նախատեսվում է իրականացնել.

- շուրջ 7743.4 կմ պետական ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանման ու շահագործման աշխատանքներ,

- արհեստական կառույցների պահպանության ու շահագործման աշխատանքներ, այդ թվում երեք թունելների և հինգ կամուրջների պահպանություն ու շահագործում,

- պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կահավորում,

- «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինությունն է պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից պետական պատվերի ծրագրերի իրականացում:

«Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայություններ» ծրագրի իրականացման համար նախատեսվում է հատկացնել 2011թ.՝ 400.9 մլն դրամ, 2012թ.՝ 400.9 մլն դրամ և 2013թ.՝ 421.8 մլն դրամ՝ որպես Պետական աջակցություն «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոնն ՊՈԱԿ-ին:

Ծրագրի իրականացման հիմնական արդյունքը եթերի որակի բարելավումն է, ինչպես նաև ՀՀ տարածքում չարտոնված ռադիոճառագայթման աղբյուրների, շեղումների և հատկացված ռադիոհաճախականությունների ոչ նպատակային օգտագործման հայտնաբերումը:

«Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորումն»

Ծրագրի իրականացման համար նախատեսվում է 2011թ. հատկացնել 1845.0 մլն դրամ, 2012թ.՝ 1971.7 մլն դրամ և 2013թ.՝ 2009.5 մլն դրամ:

Միջնաժամկետ ժամանակահատվածում մետրոպոլիտենին տրամադրվող միջոցները կուղղվեն վերջինիս գործունեությունից առաջացող վնասի փոխհատուցմանը: Հաշվի առնելով մետրոպոլիտենի հատուկ նշանակությունը, չի ակնկալվում, որ միջին ժամկետ հեռանկարում վերջինիս գործունեությունը շահութաբեր կլինի, որով էլ պայմանավորված է մետրոպոլիտենի ֆինանսավորման անհրաժեշտությունը:

Ծրագրի շրջանակներում աշխատանքների կատարումն ուղղված է լինելու մետրոպոլիտենով երթևեկող ուղևորների անվտանգ փոխադրմանը, ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավմանը, համապատասխան սարքավորումների ընթացիկ սպասարկմանն ու պահպանմանը:

Ակնկալվում է, որ ուղևորափոխադրումները 2011թ., 2012թ. և 2013թ. կկազմեն համապատասխանաբար՝ 18800, 19146 և 19350 հազար ուղևոր:

«Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրումն» ծրագրի իրականացման համար յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 4156.0 մլն դրամ, այդ թվում՝

«Երևանի էլեկտրատրանսպորտե ՓԲԸ-ի գործունեությունից առաջացող վնասի փոխհատուցումը յուրաքանչյուր տարի նախատեսվում է համապատասխանաբար 276.0 մլն դրամ:

Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտը հանդիսանալով քաղաքային տրանսպորտ, հաստատագրվել է քաղաքի բնակչության որոշակի մասի համար, որպես փոխադրման հիմնական միջոց, սակայն, չի ակնկալվում, որ միջին ժամկետ հեռանկարում վերջինիս գործունեությունը շահութաբեր կլինի, որով էլ պայմանավորված է վերջինիս ֆինանսավորման անհրաժեշտությունը:

«Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացումը յուրաքանչյուր տարի նախատեսվում է համապատասխանաբար 1696.0 մլն դրամ: Նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնման, շահագործման և պահպանման աշխատանքներ:

«Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքները յուրաքանչյուր տարի նախատեսվում է համապատասխանաբար 2184.0 մլն դրամ: Յուրաքանչյուր տարի նախատեսվում է իրականացնել շուրջ 162 հազար գծամետր ճաքալցման աշխատանքներ:

ԳԼՈՒԽ 14. ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

14.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե) իրավասություններից են խմելու և ոռոգման ջուր մատակարարող, ջրահեռացում իրականացնող, բնական և արհեստական ջրային ավազաններում առևտրային գործունեություն ծավալող ընկերություններում պետական բաժնեմասերի (ինչպես նաև արտաքին ֆինանսական աղբյուրների հաշվին ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակների) կառավարումը, հիդրոտեխնիկական կառույցների շինարարության ու շահագործման ապահովումը և այլն:

Ոլորտի խմելու ջրի մատակարարումն ու կեղտաջրերի հեռացումն իրականացվում է «Երևան-ջուր» (ՀՀ կառավարության 10.09.2010թ. №1042-Ն որոշմամբ վարձակալության պայմանագրի կողմ է ճանաչվել ՀՀ Երևանի քաղաքապետը), «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով, իսկ ոռոգման համակարգի պահպանումն ու շահագործումը՝ «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով ստեղծված 44 ջրօգտագործողների ընկերությունների և «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստ-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով: Վարկային որոշ ծրագրերի իրականացման նպատակով համակարգում գործում է «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, իսկ Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի պահպանման և տեխնիկական վիճակի բարելավման և նորոգման նպատակով ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի ենթակայությամբ գործում է «Որոտան-Արփա-Սևան» թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկը, որին վերապահված է նաև Աբու-Դաբիի Ջարգացման Հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող Արփա-Սևան թունելների հիմնանորոգման վարկային ծրագրի իրականացման գրասենյակի գործառույթները: ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի ենթակայությամբ գործում է նաև «Մելիորացիա» ՓԲԸ-ն, որն իրականացնում է կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների վերահսկման, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների որոշման գործառույթները: Համակարգում գործում են նաև «Ոռոգում» և «Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ները (գտնվում են սնանկացման գործընթացում) :

ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգում գործում է նաև Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովը, որն ստեղծվել է և իր գործունեությունն իրականացնում է ՀՀ ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների

անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին № 686-Ն որոշման համաձայն:

ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն իրականացնում է «Հայջրմուկոյուղիե, «Սևան-Հրազդանյան-ջրառե, «Ախուրյան-Արաքս-ջրառե, «Դեբետ-Աղստև-ջրառե, «Մելիորացիաե, «Ռոռզումե, «Ջրմուկոյուղիե ՓԲԸ-ների 100 տոկոս, իսկ «Նոր Ակունքե, «Լոռի-ջրմուկոյուղիե և «Շիրակ-ջրմուկոյուղիե ՓԲԸ-ների 51 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարումը: Միաժամանակ ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն հանդիսանում է նախկին Երևանի «Ջրմուկ-կոյուղիե ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող ջրային համակարգերի և ջրօգտագործողների ընկերություններին անհատույց օգտագործման տրամադրված գույքի սեփականատերը:

Անցած տարիների ընթացքում ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատանքային գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության մասին օրենքների հիմնադրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումներին նվիրված որոշումները (այդ թվում՝ Կայուն զարգացման և պետական միջնաժամկետ ծրագրերը), գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղվածությունները: Այդ նպատակով շարունակվել են աշխատանքները՝ համակարգում կառուցվածքային փոփոխությունների, հաշվառման համակարգի ներդրման ու կատարելագործման, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման, բյուջետային, վարկային ու դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, ինչպես նաև այլ ուղղություններով:

Ջրային համակարգերի կառավարման ոլորտում իրականացվող մեծածավալ աշխատանքների բնականոն ընթացքը և հետագա զարգացումն ապահովելու գործընթացում կարևորվեց ՀՀ կառավարության կողմից ընդունված ծրագրերի հստակ և հետևողական իրականացումը: Շարունակվեց համակարգին առնչվող օրենսդրական դաշտի առավելագույնս զարգացումը և հստակեցումը: Այդ ուղղությամբ ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի և շահագրգիռ պետական մարմինների կողմից կատարված աշխատանքների արդյունքում ընդունվեցին բազմաթիվ օրենքներ, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ, ինչպես նաև գերատեսչական ակտեր:

Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության ոլորտում 2009 թվականի ընթացքում ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգմամբ կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները:

1. Կնքված պայմանագրերի (վարձակալության պայմանագիր՝ ֆրանսիական «General Deseaut կազմակերպության հետ և կառավարման պայմանագիր՝ ֆրանսիական Սաուր կազմակերպության հետ) շրջանակներում ապահովվել է «Երևան Ջուրե և «Հայջրմուղկոյուղիե ՓԲԸ-ների արդյունավետ գործունեությունը, ինչպես նաև նշված ընկերությունների մասով ապահովվել է Համաշխարհային բանկի վարկային ծրագրերի համապատասխան չափաբաժիններով իրականացումը:

2. Իրականացվել է ՀՀ Լոռու և ՀՀ Շիրակի մարզերում KfW բանկի ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացը, ապահովվել է «Լոռի-ջրմուղկոյուղիե, «Շիրակ-ջրմուղկոյուղիե և «Նոր Ակունքե փակ բաժնետիրական ընկերությունների բնականոն գործունեությունները:

3. Ապահովվել է «Լոռի-ջրմուղկոյուղիե, «Շիրակ-ջրմուղկոյուղիե և «Նոր Ակունքե ՓԲԸ-ների կառավարչի ընտրության մրցութային գործընթացը, որի արդյունքները հաստատվել է ՀՀ կառավարության 11.06.2009թ. №661-Ն որոշմամբ: Մրցույթի հաղթող է ճանաչվել գերմանական «Էմ Վի Վի Դեկոն ՋԻ Էմ Բի Էյջե (MVV decon GmbH), «Էմ Վի Վի Էներջի Էյ Ջիե (MVV Energe AG) և հայկական «Էյ-ի-Ջի Մերվիսե ՄՊԸ-ների կոնսորցիումը:

4. Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվել են համապատասխան շինարարական աշխատանքներ: Մեկնարկվել և շարունակվել են ջրամատակարարման համակարգերի բարելավմանն ուղղված շինարարական աշխատանքները 9 քաղաքներում և 40 գյուղական համայնքներում: Կառուցվել են շուրջ 280 կմ ընդհանուր երկարությամբ նոր ջրագծեր:

5. Մեկնարկվել է «Արփա-Սևանե թունելի վթարային հատվածների անհապաղ վերականգնման աշխատանքների իրականացման նպատակով նախատեսված Աբու-Դաբի Ջարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագիրը: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների գնման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում ընտրվել է համապատասխան խորհրդատվական կազմակերպություն, որը ներկայացրել է նախագծանախահաշվային փաստաթղթերը: ՀՀ վարչապետի մոտ տեղի ունեցած համապատասխան խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականի հիման վրա աշխատանքներ են իրականացվել ռուսական լրացուցիչ անկախ փորձաքննություն իրականացնող կազմակերպություն ներգրավելու ուղղությամբ: 2009թ. ընթացքում «Արփա-Սևանե թունելի վերականգնման նպատակով կատարվել են 818,7 մլն դրամի շինարարական աշխատանքներ:

6. Ֆրանսիայի կառավարությունից տրվող վարկի շրջանակներում իրականացվող Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի (այդ թվում՝ «Ալեքսանդրյանի վերագործարկման) բարելավման ծրագրի իրագործելիության ուսումնասիրության, Երևան քաղաքի խմելու ջրի համակարգի բարելավման և մաքրման ծրագրի աջակցման ծառայությունների մատուցման նպատակով մրցութային կարգով ընտրվել է միջազգային խորհրդատվական

կազմակերպություն (ՄՈԳՐԵԱ ԿՈՆՍՈՒԼՏԱՆՍ ՄԱՍ), որն իր աշխատանքներն արդեն իսկ սկսել է:


7. Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի (EBRD) ֆինանսավորմամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում անց են կացվել և սահմանված կարգով հաստատվել են Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Ջերմուկ քաղաքներում կոյուղացանցերի վերանորոգման, ինչպես նաև Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման մրցույթները (շինարարական աշխատանքներն ընթացքում են):

8. USAID-ի աջակցությամբ մշակվել է Հայաստանի Հանրապետության ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի երկարաժամկետ ֆինանսավորման իրատեսական ռազմավարությունները և ֆինանսավորման մեխանիզմները, Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտում շրջանառու հիմնադրամի ստեղծման հայեցակարգը և շրջանառու հիմնադրամի ստեղծման բիզնես պլանը:

9. Ոռոգում ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառե, «Ախուրյան-Արաքս-ջրառե և «Դեբետ-Աղստև-ջրառե ՓԲԸ-ների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 44 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է կայուն ջրամատակարարում և չնայած առկա որոշակի խնդիրների՝ ընկերություններն ունեցել են ֆինանսական կայուն վիճակ:


10. Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործվում են հաստատված ծրագրերը՝ տալով զգալի դրական տեղաշարժ: Քանի որ ՀՀ կառավարության 10.09.2009թ. № 1042-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 10.10.2009թ.) Երևանի «Ջրմուղ-կոյուղիե ՓԲԸ-ի սպասարկման տարածքի ջրային համակարգերի վարձակալության մասին պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ է ճանաչվել Երևանի քաղաքապետը, ուստի ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի 2009 թվականի ընդհանրական ցուցանիշների մեջ ներառվել է նաև «Երևան Ջուրե ՓԲԸ-ի ցուցանիշները: Ընդ որում, միայն հավաքագրումների գծով 2009 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 16.85 մլրդ դրամ՝ 2007 թվականի 15.93 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել շուրջ 920 մլն դրամ (գրաֆիկ 1): Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 13.6 մլրդ դրամ՝ 2008 թվականի 12.5 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 1.1 մլրդ դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 3.22 մլրդ դրամ՝ 2007 թվականի 3.44 մլրդ դրամի դիմաց կամ պակաս է գանձվել շուրջ 0.22 մլրդ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է քիչ ջրի մատակարարմամբ: Ընդ որում, ոռոգման ոլորտում գանձման տոկոսը 2009 թվականին կազմել է 87.4 %՝ 2008 թվականի 67.6 %-ի դիմաց, կամ գանձման տոկոսն ավել է 19.8 տոկոսային կետով:

Գրաֆիկ 14.1. 2000-2009թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների գանձման ցուցանիշների համեմատական վերլուծություն (մլն դրամ)




Էլեկտրաէներգիայի ծախսի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգում իրականացված ներդրումային և կազմակերպչական միջոցառումների արդյունքում հնարավորություն է ստեղծվել ավելի քիչ էլեկտրաէներգիա ծախսել՝ անցած տարիների համեմատությամբ (գրաֆիկ 2):

Գրաֆիկ 14.2. 2000-2009թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից ծախսված էլեկտրաէներգիայի ծախսի վերաբերյալ (մլն ԳՎտ.ժամ)




11. 2009 թվականի հունվարի 1-ից համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների մասով ավարտվել է բնապահպանական վճարների, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի և շահութահարկի վճարման գծով դրամարկղային մեթոդի ժամկետի երկարացման մասին օրենքների արտոնությունները: Համակարգի կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել շուրջ 5.47 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ, որը 2008 թվականի համեմատությամբ ավել է շուրջ 910 մլն դրամի չափով (գրաֆիկ 3): Ընդ որում, եթե խմելու ջրի ոլորտի բոլոր կազմակերպությունները նախկինում սուբսիդավորվում էին, ապա ներկայումս «Երևան Ջուրե ՓԲԸ-ն ոչ միայն չի սուբսիդավորվում, այլև ՀՀ պետական բյուջե է վճարել շուրջ 2.27 մլրդ դրամ, այդ թվում՝ մարել է Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային առաջին ծրագրի վարկից և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսներից 476.3 մլն դրամ:

Գրաֆիկ 14.3. 2006-2009թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարների վերաբերյալ (մլն դրամ)




12. «Երևան Զուրե», «Հայջրմուղկոյուղիե», «Լոռի-ջրմուղկոյուղիե», «Շիրակ-ջրմուղկոյուղիե» և «Նոր Ակունքե ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի է ունեցել ջրամատակարարման տևողության ավելացում (գրաֆիկ 14.4):

Գրաֆիկ 14.4. 2007-2009թթ. խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների ջրամատակարարման միջին տևողության վերաբերյալ




13. 2008թ. Սևանա լճից (առանց Մարտունու տարածաշրջանի պոմպակայաններով իրականացված ջրառը հաշվի առնելու) բաց է թողնվել 125.1 մլն մ3 ջուր (գրաֆիկ 14.5):

Գրաֆիկ 14.5. 1991-2009թթ. Սևանա լճից ջրի բացթողումների վերաբերյալ (մ)




Սևանա լիճ է տեղափոխվել 203.05 մլն մ3 ջուր, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 12.39 մլն մ3: 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1899.25 մ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 40 սանտիմետրով (գրաֆիկ 6):

Գրաֆիկ 14.6. 2001-2009թթ. դրությամբ Սևանա լճի մակարդակների վերաբերյալ



14. Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը, կատարվել է ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ, ինչպես նաև իրականացվել են կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ: Միաժամանակ համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ ապահովվել է նաև ջրաչափական սարքերի տեղադրման գործընթացը, որը 2008 թվականի համեմատությամբ ավել է 52.4 հազար հատով (գրաֆիկ 7):

Գրաֆիկ 14.7. 2006թ. հունվարի 1-ի դրությամբ առկա և 2006-2009թթ. խմելու ջուր մատակարարող ընկերությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ տեղադրված ջրաչափերի վերաբերյալ



15. Աջակցություն է ցուցաբերվել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի ոռոգման ոլորտին ուղղված աշխատանքների իրականացմանը:

16. Երևան, Վանաձոր, Գյումրի, Գորիս, Արթիկ, Էջմիածին, Թալին, Վեդի, Մասիս, Սևան, Աբովյան, Բերդ, Չարենցավան քաղաքներում և 90-ից ավելի գյուղերում (Տեղ, Անիպեմզա, Անիավան, Արմաշ, Երասխ, Սուրանեվան, Լանջազատ, Դվին, Տափերական, Գինևետ, Լոր Ուղի, Դաշտաքար, Տափերականն Ղուկասավան, Խաչիար և այլն) ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծրագրերով, այդ թվում՝ վարկային, իրականացվել են խմելու ջրի մատակարարման բարելավման աշխատանքներ: Խմելու ջրի մատակարարման ոլորտում իրականացված ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում 2009 թվականի ընթացքում ջրամատակարարման ապահովման համար շինարարական աշխատանքներ են իրականացվել այնպիսի գյուղերում, որոնք տարիների

ընթացքում ընդհանրապես ջուր չեն ունեցել, մասնավորապես, Տեղ, Արավուս, Անիպեմզա և Անիավան գյուղերը: Խմելու ջրի ոլորտում 2009 թվականի ընթացքում իրականացված ներդրումային ծրագրերի արդյունքում ապահովվել է շուրջ 350 կմ-ից ավել ջրագծերի (այդ թվում՝ ներքին ցանցերի) փոխարինման, 100-ից ավել օրվա կարգավորիչ ջրամբարների կառուցման և նորոգման, 50-ից ավել պոմպակայանների կառուցման և նորոգման, 5000-ից ավել անհատական տնային միացումների իրականացման և այլ աշխատանքներ:

17. Ոռոգման ոլորտում 2009 թվականի ընթացքում իրականացված ներդրումային ծրագրերի արդյունքում ապահովվել է շուրջ 50 կմ-ից ավել ջրագծերի (այդ թվում՝ ներքին ցանցերի) փոխարինման, 20-ից ավել ջրամբարների նորոգման, 50-ից ավել պոմպակայանների կառուցման ու նորոգման և այլ աշխատանքներ:

Մեկնարկվել է ոռոգման համակարգերի հրատապ վերականգնման վարկային ծրագիրը, իրականացվել են հիմնական մրցույթները և Թալինի և Արմավիրի մայր ջրանցքներում սկսվել են համապատասխան շինարարական աշխատանքները:

18. Աշխատանքներ են իրականացվել կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների որոշման աշխատանքների իրականացման ուղղություններով:

Ոլորտի հիմնական խնդիրները

Ջրային տնտեսության ոլորտում էապես կարևորվում է անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, դրված նոր գաղափարների իրացումն ու նոր հիմնախնդիրների լուծումը:

Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության ոլորտում հետագա տարիներին նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները.

1. Կազմակերպել մասնավոր կառավարման պայմանագրերով նախատեսված աշխատանքների իրականացման և վերահսկման գործընթացները «Հայջրմուղկոյուղիե, «Լոռի-ջրմուղկոյուղիե, «Շիրակ-ջրմուղկոյուղիե և «Նոր Ակունքե ՓԲԸ-ներում.

2. «Հայջրմուղկոյուղիե ՓԲԸ-ի համար միջազգային խորհրդատուի աջակցությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքների հիման վրա ապահովել վարձակալության տրամադրման գործընթացի սկսման նախապատրաստական աշխատանքները.

3. Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ իրականացնել խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի վերականգնման ներդրումային ծրագրերը՝ հիմնական նպատակը սահմանելով ջրային համակարգերի կառուցման, վերակառուցման, վերանորոգման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև ապահովել ջրամատակարարման շարունակականությունը, ջրի որակի նկատմամբ հետևողական վերահսկողությունը և առաջին անգամ սկսել կեղտաջրերի մաքրման կայանների շինարարությունը:

4. ապահովել «Հայջրմուղկոյուղիե, «Լոռի-ջրմուղկոյուղիե, «Շիրակ-ջրմուղկոյուղիե և «Նոր-Ակունքե ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում շարունակական ջրամատակարարման ծրագրի իրականացումը.

5. ապահովել և վերահսկել համակարգի կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը.

6. աջակցել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի իրականացմանը.

7. նպաստել ջրօգտագործողների ընկերությունների հետագա զարգացմանը, ինչպես նաև Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի աջակցությամբ ջրօգտագործողների ընկերությունների միությունների ստեղծմանը.

8. նպաստել «Սևան-Հրազդանյան-ջրառե, «Ախուրյան-Արաքս-ջրառե և «Դեբետ-Աղստև-ջրառե ՓԲԸ-ների գործունեությանը.

9. խրախուսել ջրի և էլեկտրաէներգիայի խնայողությունը, ինչպես նաև շարունակել կատարելագործել հաշվառման համակարգը.

10. իրականացնել վերահսկողություն ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում ապօրինիությունների կանխարգելման ուղղությամբ

11. ապահովել Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման համար Աբու Դաբիի հիմնադրամի վարկային ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Ընդհանուր առմամբ նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, բարձրացնել համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը (այդ թվում՝ մասնավոր կառավարման միջոցով), ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը: Միաժամանակ անհրաժեշտ է շարունակել կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում՝ ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները, որը կապահովվի դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

14.2 ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ

ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ

ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

14.2.1. Նպատակները

ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի գործունեության հիմնական նպատակներն են՝

- ջրային համակարգերի ներդրումային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ինչպես նաև ներդրումային ծրագրերի փորձաքննության կազմակերպումը,

- մասնավոր կառավարման, ինչպես նաև ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված կառավարման համակցված և խորացված ձևերի կիրառում.

- համակարգի կազմակերպությունների կառավարման համակարգի բարելավումը, ինչպես նաև ֆինանսական կենսունակության բարձրացումը՝ ի հաշիվ շահագործման և պահպանման ծախսերի կրճատման, կորուստների նվազեցման և հավաքագրման մակարդակի բարձրացման:

14.2.2. Գերակայությունները

Ոլորտի գերակայությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում

	Գերակա ուղղություն			Հիմնավորում
	2010	2011	2012	
1.	Ջրամատակարարման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացում, կորուստների կրճատում և ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակի բարելավում:			Կայուն զարգացման ծրագիր, "կետ 363: Վարկային համաձայնագրեր:
2.	Ջրամատակարարման ծառայությունների որակի բարելավման նպատակով ջրային համակարգերի հիմնանորոգմանը, տեխնիկական վերազինմանը, ինչպես նաև ներտնտեսային ցանցերի վերականգնմանն ուղղված աշխատանքների իրականացում:			Կայուն զարգացման ծրագիր, "կետ 364: Վարկային համաձայնագրեր:
3.	Ջրամատակարարման ծառայությունների որակի բարելավման նպատակով ջրային համակարգերի հիմնանորոգմանը, տեխնիկական վերազինմանը, ինչպես նաև ներտնտեսային ցանցերի վերականգնմանն ուղղված աշխատանքների իրականացում:			Կայուն զարգացման ծրագիր, "կետ 362: Վարկային համաձայնագրեր:

14.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2011-2013թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտի զարգացման կարևորագույն նպատակների իրագործման շրջանակներում շարունակվելու են ըստ բնագավառների ներքոհիշյալ ծրագրերի կատարումը.

«Հայջրմուղկոյուղիե ՓԲԸ-ի սուբսիդավորում

Մինչև «Հայջրմուղկոյուղիե փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկվող ջրային համակարգերի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացի իրականացումը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների սակագների փոփոխությունը Ընկերության ընթացիկ գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի մարման նպատակով 2011-2013թթ. ՄԺԾԾ-ով 2011թ. համար «Հայջրմուղկոյուղիե ՓԲԸ-ին հատկացվում է 811,600.0 հազ. դրամ սուբսիդիա:

«Նոր Ակունքե ՓԲԸ սուբսիդավորում

Չնայած ընթացիկ գործունեության բնականոն ընթացքն ապահովելու համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ 2010թ. ապրիլի 1-ից ընկերության կողմից մատուցվող ծառայությունները 150.2 դրամի փոխարեն սահմանվել է 202.63 դրամ, որը այդուհանդերձ ընկերության ֆինանսական կենսունակությունը դեռևս բավարար չէ ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև ֆինանսական համագործակցության շրջանակներում 2000թ. հունիսի 21-ին և 2001թ. սեպտեմբերի 12-ին կնքված

վարկային պայմանագրերի շրջանակներում տրամադրված վարկային միջոցների հետվերադարձի ապահովման համար: Այդ առումով վարկի հմնական գումարի մարումն ապահովելու նպատակով 2011-2013թթ. ՄԺԾՕ-ով յուրաքանչյուր տարում նախատեսվել է ընկերությանը տրամադրել 223,215.9 հազ. դրամ սուբսիդիա:

Ոռոգման համակարգերի սուբսիդավորում

Հայաստանի Հանրապետության ոռոգման ոլորտում ներկայումս գործում են երկու կազմակերպարավական տեսակի կազմակերպություններ, այն է՝ ոռոգում-ջրառ իրականացնող 3 փակ բաժնետիրական ընկերությունները և 44 ջրօգտագործողների ընկերությունները:

ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 8-ի «Ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնադրույթները և մատակարարված ոռոգման ջրի կորուստների նորմաները հաստատելու մասին» №188-Ն որոշմամբ 2011թ. համար հաստատված կանխատեսումային չափաքանակի համեմատ Ոռոգման համակարգի գծով 2011-2013թթ. պետական ֆինանսական աջակցության չափաքանակների ավելացումը պայմանավորված է ի կատարումն հիշյալ որոշմամբ հաստատված ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնադրույթների 5.4-րդ և 5.5-րդ կետերի պահանջների (էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխություն, ջրառի սակագնի փոփոխություն, գնաճ, ոռոգելի հողատարածքների նվազում): Արդյունքում 2011թ. պետական ֆինանսական աջակցության չափաքանակը նախատեսվել է 4,679.500.0 հազ. դրամ, որը վերը նշված գործոններով պայմանավորված 1012.0 մլն դրամով ավել է Որոշմամբ հաստատված չափաքանակից (3,667.5 մլն դրամ): 2012 և 2013 թվականների համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 4,191,800.0 հազ. դրամ, 4,178,700.0 հազ. դրամ:

Բացի այդ ոռոգում-ջրառ իրականացնող 3 փակ բաժնետիրական ընկերություններում առաջացող ընթացիկ ֆինանսական ճեղքվածքը մեղմելու նպատակով 2011-2013թթ. ՄԺԾՕ-ով նշված ընկերությունների համար յուրաքանչյուր տարի նախատեսվել է տրամադրել 583.700.0 հազարական դրամ:

Ոռոգման համակարգերի հիմնանորոգում

Ամերիկայի Միացյալ Նահանգների Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև վավերացրած Հազարամյակի մարտահրավեր Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է ոռոգման համակարգերի նորոգումների ամենամյա իրականացման պարտավորությունները, որի իրականացման համար 2011թ. համար նախատեսվել է 1500.0 մլն դրամ:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ

Ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար նախատեսվում է իրականացնել:

1. Գրունտային ջրերի մակարդակների ստացիոնար, տասնօրյա միաժամանակյա 14400 դիտումներ Արարատյան հարթավայրի 425 դիտողական հորատանցքերում,

2. Գրունտային ջրերի շուրջ 1100 քիմիական անալիզ,

3. Դրենաժային և ոռոգման ջրերի 160 քիմիական անալիզ,

4. Դիտման հորատանցքերի վերականգնման նպատակով մինչև 10 մ խորությամբ 700 գծամետր հորատում,

5. Դիտման հորատանցքերի մաքրման նպատակով էրլիֆտով ջրի արտամղում:

6. Ոռոգելի և չորացված հողատարածքներում երթուղային ինժեներահիդրոերկրաբանական տեղագնումներ 240 կմ,

7. Գրունտային ջրերի մակարդակների ամենամսվա թվայնացված քարտեզների կազմում:

Ծրագրի իրականացման միջոցով հսկողություն կիրականացվի կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների որակի նկատմամբ:

ՄԺԾժ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է` 2011 և 2012 թվականների համար 94,238.1 հազարական դրամ, 2013թ. Համար` 99,826.6 հազ. դրամ:

Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում և նորոգում

Ծրագրի իրականացման արդյունքում ՄԺԾժ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում կմաքրվեն ու կվերանորոգվեն շուրջ 174,58 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցեր, որը հնարավորություն կտա Արարատյան հարթավայրի գերխոնավ հողերի գրունտային ջրերի մակարդակների պահպանումը թույլատրելի խորությունների վրա 19.0 հազ. հեկտարից ոչ ավելին:

2011-2013թթ. ՄԺԾժ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 226,300.0 հազարական դրամ:

Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի պահպանման ծախսեր

Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովը մշտապես գործող մարմին է, որը ստեղծվել է ջրային համակարգերի հիդրոտեխնիկական կառուցվածքների զննման, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրության, ինչպես նաև տվյալ ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալու նպատակով: Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովը ստեղծվել և իր գործունեությունն իրականացնում է համաձայն Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին» N°686 որոշման և ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների ֆինանսավորումն

ապահովելու կանոնակարգը հաստատելու մասին №677-Ն որոշման: Տեխնիկական հանձնաժողովը կատարում է՝ ջրային համակարգերի հիդրոտեխնիկական կառուցվածքների զննում, դիտարկումներ և չափումներ, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրություն, ինչպես նաև ջրային համակարգերում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տալիս է մասնագիտական եզրակացություններ:

Հետագա արդյունավետ գործունեություն իրականացնելու, ինչպես նաև օրենքով պատվիրակված լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով 2011-2013թթ. ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է՝ 2011 և 2012 թվականների համար նախատեսվել է 11,000.0 հազարական դրամ, 2013թ. համար 11,772.8 հազ. դրամ:

ԳԼՈՒԽ 15. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

15.1. ՀՀ էներգետիկ համակարգի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

15.1.1. Համակարգի ընդհանուր նկարագիրը

Էներգետիկան ունի ռազմավարական նշանակություն երկրի անկախության, անվտանգության և տնտեսության կայուն զարգացման համար: Էներգետիկ համակարգը դիտվում է որպես տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի հիմնական մասերից մեկը: Այդ իսկ պատճառով էներգետիկայի զարգացումը կարևորվում է ինչպես Հայաստանի Հանրապետության արդյունաբերության, տրանսպորտի և սոցիալ-տնտեսական զարգացման, այնպես էլ ՀՀ կառավարության որդեգրած Կայուն զարգացման ծրագրի իրականացման համար: Թանկարժեք և անհուսալի էներգամատակարարումը կարող է զգալի վտանգ հանդիսանալ Հայաստանի տնտեսությանը և բնակչության կենսամակարդակի բարելավմանը: Ուստի՝ էներգետիկայի բնագավառում իրականացվող քաղաքականության հիմնահարցերից մեկը հանդիսանում է՝ ժամանակակից էներգետիկ սարքավորումների կիրառմամբ ապահովել ցածր գներով հուսալի էներգամատակարարում՝ բոլոր սպառողների արմատական կարիքները բավարարելու համար՝ միևնույն ժամանակ խթանելով երկրում էներգախնայողությունը:

Էներգետիկայի բնագավառն իր մեջ ներառում է էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջերմամատակարարման համակարգերը: Այն ընդգրկում է շուրջ 3200 ՄՎտ ընդհանուր հզորությամբ էլեկտրակայաններ, շուրջ 35000 կմ ընդհանուր երկարությամբ տարբեր լարման էլեկտրահաղորդման գծեր, ավելի քան 9000 էլեկտրական ենթակայաններ, շուրջ 110 մլն մ³ տարողությամբ գազի ստորգետնյա պահեստարան, 1740 կմ մայրուղային և ավելի քան 11007 կմ բաշխիչ գազատար ցանցեր, 2227 գազակարգավորիչ կետեր ու բազում այլ հանգույցներ, սարքեր ու սարքավորումներ, որոնց զգալի մասը սպառել են իրենց ծառայության ժամկետները կամ գտնվում են ֆիզիկապես և բարոյապես մաշված վիճակում:

Ելնելով նշված խնդիրներից այսօր ժամանակի հրատապ պահանջ են դարձել արտադրող հզորությունների, էլեկտրական էներգիայի տեղափոխող, բաշխող ցանցերի սերնդափոխության և արդիականացման հետ կապված հարցերը: Վերջին տարիներին դրանց իրականացման համար պետական բյուջեի խողովակներով ներգրավվել են Գերմանական KfW բանկի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ), Համաշխարհային բանկի (ՀԲ) միջոցները:

Էներգետիկայի ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնականում ուղղված լինելով երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, մեծ

ուշադրություն է ցուցաբերում ՀԱԷԿ-ի անվտանգության բարձրացման միջոցառումներին և վերականգնվող էներգետիկայի զարգացմանն ուղղված ծրագրերին:

Բնական պաշարների ոլորտում քաղաքականության հիմնական ուղղվածությունը հանդիսանում է ընդերքի պահպանությունը, արդյունավետ օգտագործման ու վերարտադրության ապահովումը և երկրաբանական վերահսկողության իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունը հարուստ է մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների պաշարներով, որոնք նպաստում են հանրապետության տնտեսական զարգացմանը: Հանքավայրերի արդյունավետ շահագործումը սերտորեն կապակցած է ընդերքի շահավետ և նպատակային օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հետ:

Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է և կարող է տրվել օգտագործման իրավունքով: Մակայն պետությունն առայժմ չունի այդ սեփականության ռացիոնալ շահագործման համար հաստատված տեխնոլոգիական նախագծման նորմեր, հանքավայրերի շահագործման տեխնիկական կանոններ և նորմատիվներ: Դրանց բացակայությունը գործնականում անհնար է դարձնում տվյալ բնագավառում պետությանն ամրագրված խնդիրների իրականացումը, մասնավորապես՝ հանքային հումքի նկատմամբ տնտեսության պահանջների բավարարման նպատակով ընդերքի արդյունավետ, համալիր օգտագործման ու պահպանության, ընդերքն օգտագործելիս շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, ինչպես նաև աշխատանքների կատարման անվտանգության ապահովումը:

Ուստի, բնական պաշարների ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնահարցերից մեկն էլ ընդերքի պահպանության և օգտագործման բնագավառի օրենսդրական հիմքերի ապահովումն է:

Ստորև ներկայացված է էներգետիկայի և բնական պաշարների ոլորտում բյուջետային ծրագրերի գծով իրականացվող ծառայությունների շրջանակը.

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	Էներգետիկայի և բնական պաշարների ոլորտի քաղաքականության մշակման, խորհրդատվական և աջակցության ծառայություններ, ծրագրերի համակարգում	ՀՀ բոլոր քաղաքացիներ	100%
2.	Էլեկտրաէներգետիկական օբյեկտների կառուցման, վերականգնման և վերանորոգման ծրագիր	ՀՀ բոլոր քաղաքացիներ	26.4%
3.	Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ	ՀՀ բոլոր քաղաքացիներ	100%
4.	Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններ	ՀՀ բոլոր քաղաքացիներ	100%
5.	Միջին մասնագիտական կրթություն էներգետիկայի ոլորտում	Քոլեջի դասախոսական և ուսանողական կազմ	100%
6.	Վերականգնվող էներգետիկայի ծրագիր	ՀՀ բոլոր քաղաքացիներ	17%
7.	Ատոմային էներգետիկայի ծրագիր	ՀՀ բոլոր քաղաքացիներ	100%

1.2. Վերջին երկու տարիների ոլորտի (համակարգի) զարգացման միտումները

Վերջին տարիներին էներգետիկայի ոլորտում ներդրումային քաղաքականության առումով իրականացվում է պետության մասնակցության կրճատում, ինչը պայմանավորված է որոշ ենթակառուցվածքի մասնավորեցմամբ և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների, ինչպես նաև սեփական միջոցների ներգրավմամբ:

Օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների ներգրավումը հիմնականում ուղղված է էլեկտրաէներգետիկական օբյեկտների կառուցմանը, վերականգնմանը և վերանորոգմանը:

Էներգետիկայի ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունքում վերջին տարիներին զգալի առաջընթաց արձանագրվեց: Այսպես.

➤ 2008թ. հուլիսի 30-ին տեղի ունեցավ Երևանի ՀՇԳՑ էներգաբլոկի կառուցման աշխատանքների հիմնարկեքը: 2008-2009թթ. ընթացքում կատարվեցին բոլոր հիմնական սարքավորումների տեղափոխման, մոնտաժման և տեղակայման աշխատանքները: Իրականացվում են մոնտաժված սարքավորումների փորձարկումները:

➤ ՃՄՀԳ-ի փոխառության ներքո <Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր> վարկային ծրագրի շրջանակներում իրականացվում են SCADA/կապի համակարգի առաջին փուլի իրականացման և 110 կՎ ենթակայանների վերականգնման աշխատանքները: Գլխավոր կապալի պայմանագրի համաձայն ավարտվել են ծրագրով նախատեսված էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր > ՓԲԸ-ի շենքի վերանորոգման և հոսանքի անխափան մատակարարման համակարգի տեղադրման և կարգաբերման աշխատանքները:

Ավարտվել են նաև հեռուստամեխանիկայի վերջնական սարքավորումների տեղադրման աշխատանքները կայաններում և ենթակայաններում: Օդային գծերի վրա տեղադրվել է շուրջ 240 կմ OPGW (օպտիկամանրաթելային մալուխ ներկառուցված ամպրոպապաշտպան ճոպանի մեջ) մալուխ: Վերջին տարիներին էներգետիկայի ոլորտում ներդրումային քաղաքականության առումով իրականացվում է պետության մասնակցության կրճատում, ինչը պայմանավորված է որոշ ենթակառուցվածքի մասնավորեցմամբ և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների, ինչպես նաև սեփական միջոցների ներգրավմամբ:

Օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների ներգրավումը հիմնականում ուղղված է էլեկտրաէներգետիկական օբյեկտների կառուցմանը, վերականգնմանը և վերանորոգմանը:

Էներգետիկայի ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունքում վերջին տարիներին զգալի առաջընթաց արձանագրվեց: Այսպես.

2008թ. հուլիսի 30-ին տեղի ունեցավ Երևանի ՀՇԳՑ Էներգաբլոկի կառուցման աշխատանքների հիմնարկեքը: 2008-2009թթ. ընթացքում կատարվեցին բոլոր հիմնական սարքավորումների տեղափոխման, մոնտաժման և տեղակայման աշխատանքները: Իրականացվում են մոնտաժված սարքավորումների փորձարկումները:

ՃՄՀԳ-ի փոխառության ներքո Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր՝ վարկային ծրագրի շրջանակներում իրականացվում են SCADA/կապի համակարգի առաջին փուլի իրականացման և 110 կՎ ենթակայանների վերականգնման աշխատանքները: Գլխավոր կապալի պայմանագրի համաձայն ավարտվել են ծրագրով նախատեսված Էլեկտրաէներգետիկական

Բնական պաշարների ոլորտի զարգացումը ընթացել և ընթանում է հիմնականում բյուջետային և արտաբյուջետային հատկացումների հաշվին՝ նպատակաուղղված լինելով՝

- ապահովելու վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռվածությունն ապահովող պայմանները,

- չվերականգնվող բնական ռեսուրսների գծով ապահովելու դրանց բանական և արդյունավետ օգտագործումը:

Բնագավառի զարգացումն ընթացել է համապատասխան հաստատված ծրագրերի իրագործման միջոցով:

Վերջին երկու տարիների ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների մոտ 2.5 անգամ ֆինանսավորման աճի շնորհիվ համակարգում իրականացվել են <ՀՀ 1:50000 մասշտաբի երկրաբանապահպանական հետազոտություններ և քարտեզագրություն Երևան քաղաքի և նրա մերձակա տարածքներում (K-38-137-ը, թ; K -38-138-Ը, Թ) թերթերի տարածքում> ենթածրագիրը, որի արդյունքների հիման վրա ներկայացվել է ամփոփ հաշվետվություն: Այս ծրագրի արդյունքներից ենթադրվում է, որ նույն ծրագրով հետազոտություններ անհրաժեշտ է իրականացնել նաև հանրապետության մյուս մարզերում: Սկսվել են <Կովկասի և հարակից տարածքների 1:1 000 000 մասշտաբի երկրաբանական ատլասի կազմման և <Կովկաս-Ղրիմ-Կարպատյան մարզերի երկրաբանական կառուցվածքը> միջազգային նախագծի իրականացման աշխատանքները: Ներկայացվել է <ՀՀ մետաղական օգտակար հանածոների երևակումների վերաբերյալ համակարգչային տեղեկատվական համակարգի ստեղծում> ենթածրագրով տեղեկատվություն՝ Տավուշի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի հանքային երևակումների վերաբերյալ: ՀՀ կառավարության 228-Ն որոշման համաձայն սկսվել են <ՀՀ տարածքում ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների թաղման նպատակով ընդերքի տեղամասերի տեղագրական քարտեզի կազմման> աշխատանքները, որը կավարտվի 2010թ.: Գոյություն ունեցող ծրագրերի գծով ներկայացվել են միջանկյալ հաշվետվություններ: Ոլորտի նորմատիվամեթոդական դաշտի բարելավման նպատակով ՀՀ կառավարություն է

ներկայացվել <Շտերքի մասին> նոր օրենսգիրքը, ներկայացվել են իրավական դաշտի կատարելագործման մի շարք քաղաքականության միջոցառումներ:

1.3. Հիմնական խնդիրները

Էներգետիկ համակարգի հիմնական խնդիրները շարունակվելու են կապված լինել բնագավառի զարգացման՝ ներդրումային, ֆինանսական և այլ ծրագրերի մշակմամբ, բարոյապես ու ֆիզիկապես մաշված առանձին օբյեկտների ու կառույցների հրատապ վերակառուցման ու արդիականացման գործում առկա վարկերի արդյունավետ օգտագործման և հնարավոր նոր վարկերի ձեռքբերման, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների և արտադրական հզորությունների առավելագույն օգտագործման, ինստի-տուցիոնալ բարեփոխումների հետագա կատարելագործման, էլեկտրաէներգետիկական շուկայի շարունակական ազատականացման և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրացման գործընթացի ակտիվացման հետ (տես Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարություն, էջ 13-14):

Այս խնդիրների լուծումը կապահովի հուսալի և անվտանգ էլեկտրաէներգիայի մատակարարումը, որն էլ իր հերթին կխթանի երկրի տնտեսական կայուն զարգացմանը: (տես Կայուն զարգացման ծրագիր, էջ 168):

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից են նաև հանրապետությունում գազամատակարարման վերականգնումն ու գազաֆիկացումը, ինչպես նաև կենցաղային նպատակներով օգտագործվող գազի սարքավորումների շահագործման անվտանգության ապահովումը:

Էներգետիկ համակարգի խնդիրների շարքում կարևորվում է ջերմամատակարարման համակարգի վերականգնումը, որն անմիջականորեն կհանդիսանա երկրում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների ներդրման արդյունքը, ինչպես նաև կնպաստի երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Հանրապետության բնական պաշարների ողջամիտ օգտագործման ուղղությամբ միջնաժամկետ հատվածում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում կդասվեն.

➤ ՀՀ տարածքի էկզոգեն(արտածին) երկրաբանական պրոցեսների(սողանքների) մոնիթորինգի վարումը,

➤ <ՀՀ պինդ օգտակար հանածոների հանքավայրերի վերաբերյալ կոմպյուտերացված համակարգի ստեղծում> ծրագրի երրորդ փուլի՝ <Arc GIS միջավայրում ՀՀ մետաղական օգտակար հանածոների երևակումների վերաբերյալ կոմպյուտերացված տեղեկատվական համակարգի ստեղծումը>,

➤ ընդերքօգտագործման մասով օրենսդրական դաշտի կատարելագործումը,

➤ երկրաբանական ֆոնդի թվայնացման աշխատանքների իրականացումը,

Էներգետիկ և բնական պաշարներ ոլորտի խնդիրներն ունեն առավել ընդհանրական բնույթ և դրանց սպասվելիք արդյունքները ներկայումս հնարավոր չէ գնահատել թվային արտահայտությամբ:

2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺՄԾ ժամանակահատվածում

2.1. Նպատակները

Ինչպես նշվեց, էներգետիկայի ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնականում ուղղված է երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, որոնք իրենց հերթին հանդիսանում են տնտեսության կայուն զարգացման հիմնական գործոններից:

Ուստի՝ 20011-2013թթ. միջնաժամկետ հատվածում էներգետիկայի ոլորտի հիմնական նպատակները կմնան.

- Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական զարգացմանը նպաստելը,
- Էներգետիկայի բնագավառի անվտանգության ողջամիտ մակարդակի ապահովումը, այդ թվում. ներկրվող և տեղական էներգետիկ պաշարների տարատեսականացման և արտադրական հզորությունների առավելագույնս օգտագործման ապահովումը,
- տեղական էներգետիկ պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը:

Էներգետիկ ոլորտի նպատակներն անմիջականորեն բխում են Կայուն զարգացման ծրագրի և Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարություն փաստաթղթի դրույթներից:

Միջնաժամկետ հատվածում բնական պաշարների ոլորտի կարևորագույն նպատակները կմնան.

- Երկրաբանական հետախոզության ծավալների ավելացումը՝ ապահովելով նոր հանքավայրերի արդյունավետ շահագործումը,
- բնական պաշարների ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովումը,

ընդերքի պահպանությունը, արդյունավետ օգտագործման ու վերարտադրության ապահովումը և երկրաբանական վերահսկողության իրականացումը:

Բնական պաշարների ոլորտի նպատակներն անմիջականորեն բխում են ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 26-ի N 380-Ս որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության ծրագրի դրույթներից:

2.2. Գերակայությունները

Էներգետիկայի և բնական պաշարների ոլորտի 2011-2013թթ. ընկած ժամանակահատվածում գերակայություններն ամփոփված են հետևյալ աղյուսակում:

Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
2011	2012	2013	
1	Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների ստեղծում և վերագինում		1. Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 26-ի N 380-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության ծրագրի 4.3.11.1 կետի 2. Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված 'Կայուն զարգացման ծրագրի 8.4. <Էներգետիկա> բաժնի
2	Տարածաշրջանային ինտեգրացում և էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնիկական վերագինում		
3	Ընդերքի պահպանության վերարտադրության արդյունավետ և համալիր օգտագործման ապահովում		
4	Ատոմային էներգետիկայի զարգացում		
5	Սեփական վերականգնվող էներգառեսուրսների առաջընթաց յուրացման խթանում		
6	Հանրապետությունում գազամատակարարման ցանցի ընդլայնում, ինչպես նաև կենցաղային նպատակներով օգտագործվող գազի սարքավորումների շահագործման անվտանգության ապահովում		

3. ՄԺՄԾ ժամանակահատվածում ոլորտում (համակարգում) իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

1. Ճապոնիայի կառավարության աջակցությամբ Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի շրջանակներում կառուցվել է շուրջ 245.9 ՄՎտ հզորությամբ էլեկտրական և 103,7 Գկալ/ժամ ջերմային հզորությամբ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող մեկ էներգաբլոկ և 2011-2012 թթ. նախատեսված է իրականացնել երաշխիքային վճարումներ և արդեն իսկ կատարված աշխատանքների գծով վճարումներ:

Հանրապետությունում գործող ՋԷԿ-երի համեմատ նոր էլեկտրակայանը կունենա բարձր բնապահպանական ցուցանիշներ, նույն դրվածքային հզորությունների դեպքում նոր էլեկտրակայանն ավելի քիչ արտանետումներ կունենա գործող կայանների համեմատ, մասնավորապես՝ ազոտի օքսիդներ՝ (NOx) շուրջ 9 անգամ, ածխաթթու գազ՝ (CO2) մոտ 2 անգամ, ածխածնի օքսիդ՝ (CO) մոտ 3,8 անգամ, ինչպես նաև ջրի օգտագործումը կկրճատվի 3,6 անգամ:

Գոյություն ունեցող Երևանի ՋԷԿ-ը լրիվ կոնդենսացիոն (առանց ջերմային էներգիայի առաքման) ռեժիմներում 1 կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրության համար ծախսում է 450-500 գ/կՎտժ վառելիք, իսկ նույն ռեժիմներում նոր կայանը կծախսի 219,9 գ/կՎտժ, իսկ ջերմաֆիկացիոն (առավելագույն ջերմային սպառում) ռեժիմներում համապատասխանաբար՝ 374 գ/կՎտժ և 177,9 գ/կՎժ:

2. Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագրի մասով նախատեսվում է 110 կՎ էնթալպիայանների վերականգնում և SCADA/կայի համակարգի առաջին փուլի իրականացում:

110 կՎ ենթակայանների վերականգնման արդյունքում Հայաստանի էներգահամակարգի առավել խնդրահարույց ենթակայաններում նախատեսվում է փոխարինել հիմնական սարքավորումները: Փոխարինման արդյունքում կաճի անջատիչների հրաժարման հոսքի պարամետրը՝ 110 կՎ անջատիչների համար 6,93 անգամ, 35 կՎ անջատիչների համար 6,8 անգամ, 10 կՎ անջատիչների համար 5,6 անգամ, 110-35 կՎ բաժանիչի համար մոտ 1,3-1,4 անգամ, որի արդյունքում կբարձրանա ենթակայանների և էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը:

SCADA/կապի համակարգի առաջին փուլի իրականացման արդյունքում կստեղծվի Հայաստանի էներգահամակարգի կառավարման մեկ ամբողջական համակարգ, այդ թվում՝ համապատասխան կապի, տվյալների և տեղեկատվության հավաքագրման, հաղորդման և պահպանման, էլեկտրաէներգիայի և էներգետիկ ռեսուրսների կառավարման, ինչպես նաև վերահսկման համակարգեր, որը հնարավորություն կստեղծի էներգահամակարգի ավելի հուսալի, արդյունավետ և կայուն աշխատանքի համար:

Մինչև SCADA/կապի համակարգի ներդրումը կենտրոնական կարգավարական կենտրոնում (ԿԿԿ) հավաքվում է սարքավորումների դիրքի 393 ազդանշան և 194 չափման ազդանշան, իսկ ռելեական պաշտպանության և հեռահար կառավարման ազդանշանները բացակայում են: SCADA/կապի ներդրումից հետո ԿԿԿ-ում սարքավորումների ազդանշանների քանակը կլինի 1622, չափման ազդանշանների քանակը՝ 3589, ռելեական պաշտպանության ազդանշանների քանակը՝ 1265, հեռահար կառավարման ազդանշանները՝ 194:

3. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագրի շրջանակներում <Տարածաշրջանային հզորության փոխանակում-1, Ալավերդի-Գարդաբանի էլեկտրահաղորդման վերականգնում> բաղադրիչի մասով <Ալավերդի-2> ենթակայանի վերակառուցման արդյունքում տնտեսված շուրջ 1,3 մլն եվրո գումարը նպատակաուղղվել է <Վանաձոր-1> 110 կՎ ենթակայանի բաց բաշխիչ սարքավորման ամբողջական վերակառուցման, ինչպես նաև <Գյումրի>, <Լոռի>, <Գուգարք 1, 2>, <Նորադուր>, <Լիճք> օդային գծերի վրա տեղադրված արգելափակիչները և գոտիները նորով փոխարինմանը: Վերակառուցման արդյունքում կբարձրանա ենթակայանի, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը, կվերանա վթարային անջատումները և չնատակարարվող էլեկտրաէներգիայի քանակները:

4. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող <Գյումրի-2> ենթակայանի վերականգնման ծրագրի նպատակն է վերականգնել <Գյումրի-2> ենթակայանը: <Գյումրի-2> ենթակայանն ունի տեղական և տարածաշրջանային ռազմավարական կարևորություն: Վերականգնման արդյունքում կբարձրանա ենթակայանի, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը, կվերանա վթարային անջատումները և չնատակարարվող էլեկտրաէներգիայի քանակները:

5. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ակնկալվում է, որ ծրագրի ավարտին տեղակայված և

մեկ ընդհանուր ցանցային ռեժիմով աշխատող վերականգնվող էներգետիկ հզորությունները կկազմեն 127 ՄՎտ, վերականգնվող էներգետիկայի օբյեկտների կողմից տարեկան էներգաարտադրությունը կկազմի մոտ 336 գՎտ ժամ, իսկ CO₂-ի տարեկան արտանետումների ծավալի կրճատումը կհասնի 0,218 միլիոն տոննայի:

6. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երկրաջերմային էներգիայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ակնկալվում է երկրաջերմային ուսումնասիրության իրականացում և արդյունքների մեկնաբանություն: Վերոնշյալ աշխատանքները կխթանեն գեոթերմալ էներգետիկ աղբյուրների օգտագործումը Հայաստանում:

7. Ռադիոակտիվ թափոնների վնասագերծման ծառայություններ (ՀՀ պետբյուջե)

Ծրագրի շրջանակներում իրականացվում է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրում, ուսումնասիրում, պահպանում, վնասագերծում և թաղում՝ մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2011թ.-ին՝ 29.2 մլն դրամ, 2012թ.-ին՝ 29.2 մլն դրամ և 2013թ.-ին 31.4 մլն դրամ:

8. Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն (ՀՀ պետբյուջե)

Ծրագրի շրջանակներում կշարունակվի երկրաբանական ֆոնդի գործունեության արդյունավետության բարձրացումը՝ նպատակառոտ դրված նրա հիմնական գործառույթների իրականացման ապահովմանը:

Ծառայությունը մատուցվում է <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի կողմից:

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2011թ.-ին՝ 6.0 մլն դրամ, 2012թ.-ին՝ 6.0 մլն դրամ և 2013թ.-ին 6.5 մլն դրամ:

9. Երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայություններ (ՀՀ պետբյուջե)

Ծրագրի շրջանակներում կատարվող աշխատանքները հիմնականում կուղղվեն երկրաբանական, հիդրոերկրաբանական ուսումնասիրություններին:

Ծրագիրն իրականացվում է <Գնումների մասին> ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպության կողմից:

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է յուրաքանչյուր տարվա համար համապատասխանաբար՝ 8.0 ական մլն.դրամ :

3.2. Նոր նախաձեռնություններին առնչվող ծրագրեր

2011-2013թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նոր նախաձեռնություններով ծրագրավորվում է իրականացնել՝

<Սևանա լճի ջրահավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում կուտակված թափոնների գույքագրում>

Ծրագիրը բխում է ՀՀ նախագահի նստավայրում 2010թ. մարտի 19-ին տեղի ունեցած ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի նիստի ժամանակ քննարկված <ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2009թ. Աշխատանքային ծրագրին համապատասխան մշակված և ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի նախագահի գրություններով ներկայացված միջոցառումների ժամանակացույց>-ից /23 կետ/:

Ծրագրի շրջանակներում պետք է իրականացվի Սևանա լճի ջրհավաք ավազանում գտնվող թափոնակույտերի (դատարկ ապարներ, ոչ կոնդիցիոն հանքաքար և այլն) գույքագրումը, լճի վրա վերջիններիս բացասական ազդեցության գնահատումը :

Ծրագրի իրականացման համար 2011թ. նախատեսված է 10.0 մլն.դրամ :

ԳԼՈՒԽ 16. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ

16.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

16.1.1. Տնտեսության այլ ոլորտների ընդհանուր նկարագիրը

1.1.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ընդհանուր նկարագիրը

ՓՄՁ ոլորտը նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման գործում. 2008թ-ին ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կազմել է 41.7%, 2007թ-ի 41.0%-ի դիմաց՝ կրկնակի գերազանցելով 1999թ-ի մակարդակը:

Նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում. 2008թ-ի ընթացքում ստեղծված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը կազմել է ավելի քան 20.0 հազար, որի արդյունքում ստեղծվել է ավելի քան 27.0 հազար նոր աշխատատեղ, որից 51.7%-ը կամ 14.0 հազարը՝ ՀՀ մարզերում, իսկ 48.3%-ը կամ 13.1 հազարը՝ Երևանում:

2008թ-ին ավելացել է նաև ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում՝ կազմելով 17.0%, 2007թ-ի 16.9%-ի դիմաց, իսկ զբաղվածների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատողների տեսակարար կշիռը 2008թ-ին կազմել է շուրջ 35.0%:

Նշանակալի է ՓՄՁ ոլորտի դերը նաև երկրի հարկաբյուջետային (ֆիսկալ) ցուցանիշների ձևավորման գործում. 2008թ-ի տվյալներով ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների տեսքով (բացառությամբ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների) ՀՀ պետական բյուջե կատարված վճարումների տեսակարար կշիռը ընդհանուր ցուցանիշի մեջ կազմել է 28.0% (ավելի քան 415 մլն դրամ):

Հայաստանում ՓՄՁ զարգացման ինդեքսը, որպես ընդհանրական (ագրեգացված) տնտեսական ցուցանիշ, որը հաշվարկվել է ՄԱԿ-ի կողմից սահմանված մեթոդոլոգիայով, 2008թ-ին կազմել է 544.0, ինչը 2002թ-ի համեմատությամբ ավելացել է ավելի քան 9 անգամ (2002 թվականին ՓՄՁ զարգացման ինդեքսը կազմել է 58.1, 2003թ-ին՝ 82.0, 2004թ-ին՝ 117.8, 2005թ-ին՝ 171.9, 2006թ-ին՝ 237.2, 2007թ-ին՝ 398.6):

Կարևորելով ՓՄՁ դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ ՀՀ կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ պետական աջակցության և զարգացման ուղղությամբ:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2009 թվականին հետևողական աշխատանք է իրականացվել Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականության ու ռազմավարության, ՓՄՁ զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման, ինչպես նաև ՓՄՁ պետական աջակցության

ուղղությամբ ձեռնարկված համապատասխան միջոցառումների իրականացման ուղղությամբ: Մասնավորապես.

Իրականացվել է ՓՄՁ պետական աջակցության 2009 թվականի ծրագիրը (հաստատված ՀՀ կառավարության 11.12.2008թ. N1480-Ն որոշմամբ), որի իրականացման համար ՀՀ 2009թ-ի պետական բյուջեից հատկացվել է 573.5 մլն դրամ: Բացի այդ, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում ներգրավվել է շուրջ 135.3 մլն դրամ: Ընդ որում սույն ծրագրով նախատեսված ծրագրային միջոցառումների գերակշիռ մասը (շուրջ 80%-ը) նպատակաուղղվել է ՀՀ մարզերում՝ առավելապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը և ընդհանուր առմամբ ՀՀ մարզերում և տարածաշրջաններում տնտեսական ու գործարար ակտիվության բարձրացմանը:

2009թ-ի ընթացքում վարկային երաշխավորությունների տրամադրման, նորարարությունների ու ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ապրանքների (ծառայությունների) շուկաներ առաջնորման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ուղղություններով, ինչպես նաև գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել Երևանում և ՀՀ մարզերում 4748 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների, որոնցից 23.4 %-ը (1111 ՓՄՁ սուբյեկտ) գործում են Երևան քաղաքում, իսկ 76.6%-ը (3637 ՓՄՁ սուբյեկտ)՝ ՀՀ մարզերում, ընդ որում դրանցից 1364-ն աջակցություն են ստացել ծրագրային մի քանի ուղղություններով: Ընդհանուր առմամբ վերը նշված աջակցության ուղղություններով բավարարվել է 9370 աջակցության հայտ: Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 24.7%, ծառայությունների ոլորտում՝ 24.6%, առևտրի ոլորտում՝ 47.4%, շինարարության ոլորտում՝ 3.3%:

ՓՄՁ պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերը նպաստում են երկրի, հատկապես՝ նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը, ինչը ներկայումս հանդիսանում է ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկը:

Դրա հետ մեկտեղ, 2009 թվականին միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպություններից ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին ընդլայնվել են ՓՄՁ հեռանկարային զարգացմանն ու այդ նպատակով իրականացվող պետական աջակցությանն ուղղված ծրագրային միջոցառումների շրջանակները:

1.1.2. Զբոսաշրջության ոլորտի նկարագիրը.

Կարևորելով զբոսաշրջության ոլորտում զարգացման գործընթացները, կարևորվում է զբոսաշրջության կայուն զարգացումը, ինչը նպաստում է տնտեսության կայուն զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանությունը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը,

աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, մշակութային արժեքների փոխադարձ արժևորմանը և այլն:

Միավորված Ազգերի Կազմակերպության Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) տվյալներով բնակչության տեղաշարժն աշխարհում տարեց տարի զգալիորեն աշխուժանում է: Եվ եթե հաշվի առնենք համաշխարհային զբոսաշրջության վիճակագրական տվյալները (UNWTO World Tourism Barometer), համաձայն որի միջազգային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է 4-4.5 % (բացառությամբ տնտեսության ճգնաժամային իրավիճակի 2009 թվականին), և այն որ զբոսաշրջության ոլորտն իր յուրահատկությամբ այնպիսին է, որ ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված ազդեցություն ունի տնտեսության մյուս բոլոր ճյուղերի վրա, և որ զբոսաշրջային արդյունաբերությունն ամբողջությամբ ընդգրկված է փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում և ներառում է աշխատուժի առումով մարդկային ռեսուրսի սոցիալապես խոցելի այնպիսի խավեր, ինչպիսիք են երիտասարդներն ու կանայք, ապա վստահորեն կարելի է եզրակացնել, որ զբոսաշրջության զարգացման խելամիտ և արդյունավետ պլանավորումն ու կառավարումը զգալի դեր ունշանակություն կունենա երկրի կայուն տնտեսական զարգացման ապահովման և այնպիսի սոցիալական խնդիրների լուծման գործընթացում, ինչպիսիք են աշխատատեղերի ստեղծումը, բնակչության եկամուտների ավելացումը, աշխատատեղերի ու եկամուտների արդար վերաբաշխումը, համայնքների համաչափ զարգացումը, աղքատության հաղթահարումը և այլն:

Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության իրականացման շրջանակներում 2005թ-ից Հայաստանում գործողության մեջ են դրվել <Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին>(10.06.2004թ. N 946-Ն) և <Զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին> (10.06.2004թ. N 945-Ն) ՀՀ կառավարության որոշումները, որոնց համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանդիսանալով ՀՀ կառավարության լիազորած մարմինը իրականացնում է.

1. Զբոսավարների և ուղեկցորդների գործունեության լիցենզավորում.
2. Հայաստանում հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորում

1.1.3. Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ոլորտի նկարագիրը.

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերությունը <Ստանդարտացման մասին> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ ծառայությունները`

- ընդունում է ազգային ստանդարտները.
- ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական և ընդհանուր

տեխնիկական կանոնները, ընթացակարգերը, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտների և այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը.

- կազմակերպում է միջազգային, միջպետական, ազգային ստանդարտների նախագծերի փորձաքննությունը.

- ներկայացնում է ՀՀ ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման կազմակերպություններում.

- մասնակցում է միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտացման աշխատանքներին.

- հրատարակում է ազգային ստանդարտները.

- ստեղծում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները և համակարգում է նրանց գործունեությունը.

- ստեղծում և վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը.

- իրականացնում է ազգային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների, նորմերի և հանձնարարականների, ինչպես նաև դասակարգիչների, տեխնիկական պայմանների և դրանց փոփոխությունների գրանցումը (հաշվառումը):

1.1.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընդհանուր նկարագիրը.

Վերջին տասնամյակում Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) արդյունաբերության զարգացումն ու Տեղեկատվական հասարակության կայացումը կարևորագույն խթան են հանդիսացել աշխարհի բոլոր զարգացած երկրների տնտեսության մրցունակության և արտադրողականության բարձրացման, կառավարման, ինովացիոն և գիտակրթական համակարգերի, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքների զարգացման համար և ճանաչվել է գերակա ուղղություն՝ որպես գիտելիքահենք տնտեսության կառուցման հիմնաքար:

ՀՀ կառավարությունը կարևորելով SS արդյունաբերության զարգացումը ոչ միայն որպես առանձին ոլորտ, այլ նաև որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ մրցունակությունն ապահովելու հիմնական գործոն, հատուկ շեշտադրել է Հայաստանում SS ոլորտի արդյունավետության շարունակական աճի ապահովումը, տնտեսության այլ բնագավառներում ոլորտի արտադրանքի և ծառայությունների կիրառումն ու երկրում Տեղեկատվական հասարակության ձևավորումը:

Դեռևս 2000թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ կառավարության կողմից Ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունաբերությունը ճանաչվեց ՀՀ տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը: Այնուհետև՝ 2001թ.-ին ՀՀ կառավարության հավանության արժանացավ <ՀՀ Ինֆորմացիոն (Տեղեկատվական) տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգը>, իսկ 2008թ.-ին <Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգը>: ՀՀ նախագահի 2001 թվականի հուլիսի 20-ի NՆՇ-896 հրամանագրով ստեղծվեց

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը, որի նախագահը ՀՀ վարչապետն է: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը (SSՁԱԽ), հանդիսանալով կապող օղակ կառավարության և ՏՏ բիզնեսի, կրթական հաստատությունների, ՏՏ հասարակական կազմակերպությունների, դոնոր և միջազգային կազմակերպությունների միջև, կազմակերպում և անց է կացնում տեղեկատվական հասարակության կայացմանն և ՏՏ արդյունաբերության խնդիրների լուծմանն նպաստող քննարկումներ:

ՀՀ ՏՏ ոլորտը միջազգային չափանիշներին հասցնելու համար նախապայմաններ ստեղծելու նպատակով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 27-ի N1165 որոշմամբ` Համաշխարհային Բանկի հետ կնքված վարկային պայմանագրի շրջանակներում հիմնվեց <Ձեռնարկությունների ինկուբատոր> Հիմնադրամը: 2001թ. գործում <Վիասֆեր տեխնոպարկ> ՓԲԸ-ն, որի տարածքում գործում են ոլորտի 30-ից ավել ընկերություններ:

Ընդունվել են ոլորտին առնչվող մի շարք իրավական ակտեր, մասնավորապես` 2004թ.-ի դեկտեմբերի 14-ի` <Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին> NՀՕ-40 և 2005թ.-ի հուլիսի 8-ի` <Էլեկտրոնային հաղորդակցության մասին> NՀՕ-176 ՀՀ օրենքները:

Կնքվել են համագործակցության մի շարք պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր ինչպես այլ պետությունների` Հնդկաստանի Հանրապետության, Եգիպտոսի Արաբական Հանրապետության և այլն, այնպես էլ համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի ընկերությունների հետ, ինչպիսիք են <Մայքրոսոֆթը>, <Ալկատելը>, <Հյուլեթ Փակարդը>, <Սան Մայքրոսիսթեմսը>, <Նեյշնլ Ինսթրումենթսը> և այլն:

Ավանդական են դարձել ամենամյա <Դիջիթեք> տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների մասնագիտացված միջազգային ցուցահանդեսի և <Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս> խորագրի ներքո անցկացվող բազմաթիվ միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև <Արմթեք> Հայաստանի բարձր տեխնոլոգիաների միջազգային համաժողովը:

1.1.5. Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու պետական աջակցության ծրագրի ընդհանուր նկարագիրը.

Ներկայացվող ծրագրի հիմքում ընկած են ՀՀ կառավարության 2000թ. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը հայտարարելու մասին արձանագրային որոշումը, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի կողմից 23.05.2006թ. ընդունված <Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին> ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 28.09.2005թ. <Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010 թվականների ծրագրի մասին> N 1729-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 28.12.2000թ. <Ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունաբերությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը ճանաչելու մասին> արձանագրային որոշումը, 28.04.2008թ. N380-Ս որոշմամբ

հաստատված <Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին> որոշումը, ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 3-ի N ՆԿ-113-Ս կարգադրությունը SS-ի ոլորտի զարգացման հայեցակարգը և դրա իրականացման ժամանակացույցը մշակելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին, ՀՀ կառավարության 12.06.2008թ. <Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգը հավանության արժանացնելու մասին> N23 արձանագրային որոշումը:

Առավել ևս անհրաժեշտ է շեշտադրել այն հանգամանքը, որ առաջարկվող ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի պահանջներին: Մասնավորապես՝ <Կայուն զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարական գերակայություններին>, որտեղ 64, 66, 69, 73 ենթակետերով սահմանված են հետևյալ միջոցառումները՝

- նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքերի ստեղծումն ու զարգացումը,

- տնտեսական զարգացման ներկայիս խոր անհամաչափությունների հետագա աճի զսպումը՝ ետ ընկնող տարածքների արագացված զարգացումն ապահովող նպատակային տարածքային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով,

- երկրի մրցունակության աճին ուղղված քաղաքականությունը, որի հիմնական հատկանիշներն են՝ արտադրողականության աճի ապահովման խրախուսումը, միավոր աշխատանքի արժեքի մրցունակ մակարդակների ապահովումը, նոր, բարձր ավելացված արժեք ձևավորող աշխատատեղերի ստեղծումը:

Հիմք ընդունելով <Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգ>-ով ՀՀ կառավարության որդեգրված քաղաքականությունը և ՀՀ կառավարության ծրագրով սահմանված ռազմավարական գերակայությունները, որն ուղղված է Երևանի ու մարզերի միջև անհամամասնությունների և բնակչության եկամուտների տարբերությունների կրճատմանը, գործարար միջավայրի բարելավմանը և Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը:

Տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից կարևորվում է Հայաստանի մարզային քաղաքների տնտեսական զարգացման տեմպերի արագացումն և ներդրումային ակտիվության խրախուսումը, մարզերում հանրային ծառայությունների տեղայնացման աստիճանի և ֆինանսների, ապրանքների ու ծառայությունների հասանելիության աճը, համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարում) գնահատումը, դրանց կարգաբերումն ու զարգացումը: Մարզային քաղաքների զարգացումը հնարավորություն կտա ոչ միայն կրճատել տվյալ քաղաքի և Երևանի միջև անհամամասնությունը, այլ նաև կբարձրանա մարզային քաղաքների դերը, որպես տարածաշրջանի տնտեսական կենտրոն, լուրջ հնարավորություններ կստեղծի հանրապետության իրական ուրբանիզացման մակարդակի բարձրացման համար՝ ապահովելով տարածքային անհամաչափությունների համահարթեցումը և երկրի կայուն տնտեսական աճը: Կարևորելով Գյումրի քաղաքի դերը Հայաստանի

Հանրապետության տնտեսության մեջ ՀՀ կառավարությունը նպատակ է դրել մարզային տնտեսական զարգացման նպատակային ծրագրերի իրականացումը սկսել Գյումրի քաղաքից, պահպանելով նրա ավանդական մշակույթային նկարագիրը, այն դարձնել ժամանակակից գիտելիքային և նորամուծական ենթակառուցվածքներ ունեցող կենտրոնի, որտեղ ներկայացված կլինեն բարձր տեխնոլոգիաներ կիրառող ձեռնարկությունները, խոշոր կրթօջախներն ու գիտահետազոտական կենտրոնները:

Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու գործի կարևորագույն քայլերից մեկը դա ժամանակակից տեխնոպարկի ստեղծումն է: Ըստ էության՝ Գյումրու տեխնոպարկի ստեղծմամբ պետության կողմից փորձ է արվում հնարավորինս վերագործարկել մինչև աղետը եղած զարգացած գիտական, տեխնոլոգիական և արտադրական ենթակառուցվածքները, ինչը միաժամանակ կրերի մարզում լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը և մրցունակ արտադրանքի դուրսբերմանը ներքին ու արտաքին շուկաներ, ինչպես նաև կապահովի տնտեսության մյուս հատվածների զարգացումը, բարձրացնելով գործարար ակտիվությունը:

Ինչպես ցույց է տալիս արտասահմանյան երկրների փորձը, քաղաքների և տարածաշրջանների համար տեխնոպարկերը հանդիսանում են տնտեսական զարգացման խթանման անհրաժեշտ և կարևոր գործիքներ: Տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմիններն ակտիվ մասնակցություն են ունենում տեխնոպարկերի ստեղծման ու գործունեության հարցերում, որը տարածքի տնտեսության կառուցվածքի բարելավման նախադրյալներ է ստեղծում:

Բարեփոխվող երկրներում և, հատկապես, դրանց մարզերում բացակայում են բարձր մակարդակի ենթակառուցվածքները, ամենից առաջ՝ հեռահաղորդակցման ոլորտում: Հաճախ, նույնիսկ լավ հեռահաղորդակցման համակարգի և տեղեկատվական միջավայրի առկայությամբ, բացակայում է այդ ենթակառուցվածքի ամենօրյա գործնական կիրառման կուլտուրան: Այդ առումով կարևորվում է միջազգային չափանիշներին համապատասխան կապի և հաղորդակցման այլ միջոցների առկայությունը (ինտերնետային էլքեր, տեղեկատու-որոնման համակարգեր, տեղեկատվական բազաներ, գործնական ուսուցման համապատասխան համակարգեր, զարգացած բիզնես կոնսակտներ, այդ թվում՝ օտարերկրյա կոնսակտներ), որը կարևոր պայման է, ինչպես տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, այնպես էլ գործընկերներ և ներդրողներ գտնելու համար:

Միաժամանակ, ծրագրի իրականացման կարևոր պայման է հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինների շահագրգռվածությունը և ակտիվ մասնակցությունը ծրագրի իրականացման բոլոր փուլերում, ինչն էլ կհանդիսանա գործազրկության դեմ պայքարի և մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման կարևոր ուղղություն:

Գյումրու տեխնոպարկի հաջողության ապահովման համար անհրաժեշտ է, որ այն համապատասխանի իր աշխարհագրական դիրքի և կազմակերպությունների տեղաբաշխվածության նվազագույն պահանջներին: Փոքր կազմակերպությունների համար շատ կարևոր է դրանց տեղա-

կայումը հեշտ վերակառուցելի շինություններում, նաև՝ միօրինակ հարմարանքների, սարքերի ու սարքավորումների հավաքածուի առկայությունը, ոչ ձևական շփումը և տեխնոպարկի կողմից կազմակերպությունների վարկանիշը ապահովելու հնարավորությունները:

1.2. Վերջին երկու տարիների ոլորտի (համակարգի) զարգացման միտումները

1.2.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման միտումները

2007 և 2008 թվականների ընթացքում ավարտվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի ցանցի ձևավորման գործընթացը. ներկայումս գործում են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մասնաճյուղեր ՀՀ բոլոր մարզերում, առանձին մարզերում ստեղծվել են նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցչություններ (հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցչություններ են հիմնվել ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան և Բերդ քաղաքներում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Վարդենիս և Մարտունի քաղաքներում, ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքում և ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում): Սա հնարավորություն է տալիս Հայաստանի ողջ տարածքում իրականացնել ՓՄՁ զարգացման տարածաշրջանային, մարզային ու համայնքային ծրագրեր՝ հաշվի առնելով տարածաշրջանային զարգացման գերակայությունները, առանձին բնակավայրերի առանձնահատկություններն ու ներուժը:

2007թ-ի ընթացքում ՓՄՁ պետական աջակցության 2007 թվականի ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղման, նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել 4835 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտի, որոնցից 2751-ն աջակցություն են ստացել ծրագրային մի քանի ուղղություններով: 2007թ-ին աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 73%-ը (3395 ՓՄՁ սուբյեկտ) աջակցություն են ստացել առաջին անգամ: Ընդհանուր առմամբ վերը նշված ուղղություններով բավարարվել է 8494 աջակցության հայտ:

2008թ-ի ընթացքում ՓՄՁ պետական աջակցության 2008թ-ի ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղման, նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել 4434 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտի, որոնցից 1127-ն աջակցություն են ստացել ծրագրային մի քանի ուղղություններով: 2008թ-ին աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 74.6%-ը (3307 ՓՄՁ սուբյեկտ) աջակցություն են ստացել առաջին անգամ: Ընդհանուր առմամբ վերը նշված ուղղություններով բավարարվել է 8618 աջակցության հայտ:

ՓՄՁ պետական աջակցության 2008 թվականի ծրագրի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների

ձեռներեցությանն աջակցության, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորման, ինչպես նաև խորհրդատվական աջակցության ծրագրերով ՀՀ մարզերում աջակցություն ստացած 425 ՓՄՁ սուբյեկտների շրջանում իրականացված մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ ՓՄՁ աջակցության ծրագրերի իրականացումը նպաստել է 2008 թվականին 334 նոր աշխատատեղերի ստեղծմանը և շուկայում 165 նոր ապրանքատեսակի ներկայացմանը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսքով ՀՀ պետական բյուջե է վճարվել ավելի քան 415 մլն դրամ:

Ստորև ներկայացված է 2008թ-ի ընթացքում ՓՄՁ պետական աջակցության 2008թ-ի ծրագրի շրջանակներում առանձին ծրագրային ուղղությունների (միջոցառումների) կատարման ընթացքը.

ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր

2008 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում տրամադրվել է 167.7 մլն դրամի վարկային երաշխավորություն 46 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 282.3 մլն դրամի վարկային փաթեթ: Աջակցություն ստացած 46 ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորության ընդհանուր չափը կազմել է 348.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 6.1 մլն դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 3.6 մլն դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 15%: Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորությունների երաշխիքով միջին ապահովվածությունը կազմել է 48.7%:

ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագիր

ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Տավուշի, ՀՀ Արագածոտնի, ՀՀ Լոռու, ՀՀ Շիրակի, ՀՀ Սյունիքի և ՀՀ Վայոց Ձորի մարզերում իրականացվել է ՀՀ կառավարության 14.07.2005թ. <Հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերի ցանկերը սահմանելու մասին> թիվ 1017-Ն որոշմամբ սահմանված բնակավայրերում վարկային տոկոսների մասնակի սուբսիդավորման միջոցով ՓՄՁ վարկավորման խթանման> ծրագիրը: Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ են ներկայացվել և բավարարվել սուբսիդավորման 4 հայտեր, որից՝ 2-ը՝ ՀՀ Տավուշի, 1-ը՝ ՀՀ Գեղարքունիքի, 1-ը՝ ՀՀ Շիրակի մարզերից: Սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է շուրջ 1.14 մլն դրամ:

ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագիր

2008թ-ին ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող ֆինանսական աջակցության ընդլայնման նպատակով մշակվել է ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագիրը: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ ծրագիրը մեկնարկել է <Ինստիգեյթ> ՓԲԸ-ի օրինակով և 2008թ-ի հուլիսին ձեռք են բերվել <Ինստիգեյթ> ՓԲԸ-ի բաժնետոմսերի 18%-ը՝ 45 մլն դրամով: 2008 թվականին մշակվել են ծրագրի իրականացման մեխանիզմները, <Գրանթ Թորնթոն

Ամիօ>ՄՊԸ-ի հետ համատեղ կատարվել է ընկերության ֆինանսական վիճակի գնահատում և հնարավոր ռիսկերի վերլուծություն: Ընկերության հետ կնքվել է պայմանագիր և ձեռք բերված բաժնետոմսերը գրանցվել են Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայում: Հաշվի առնելով այն, որ ընկերությունը, զարգացնելով իր արտադրանքը, արդեն պատրաստ է այն վաճառել եվրոպական ընկերության՝ ներկայումս քննարկվում է ընկերության կապիտալից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի դուրս գալու հարցը:

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն

2008թ-ի ընթացքում հանրապետության բոլոր մարզերում իրականացվել է սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության 12 ծրագիր, այդ թվում՝ 2 ոլորտային ծրագիր (հյուրատնային և տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի սկսնակ գործարարների համար): Արդյունքում աջակցություն է տրամադրվել ՀՀ մարզերի 200 սկսնակ գործարարի: Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության տրամադրման նպատակով ձևավորված դրամագլուխը 2008թ-ին համալրվել է 44.38 մլն դրամով՝ կազմելով 81.6 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 36 սկսնակ գործարար, որոնց տրամադրված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 32.5 մլն դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 38.9 մլն դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկի միջոցով: Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 1.08 մլն դրամ, վարկային միջոցների միջին գումարը՝ 902.8 հազ. դրամ, որոնց վերադարձելիությունը կազմել է 100%:

ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն

2008թ-ի ընթացքում <Փոքր և միջին ձեռնարկություններում նորարարությունների, նոր տեխնոլոգիաների և նոր արտադրատեսակների ներդրման հետազոտական և մշակման աշխատանքների աջակցություն> ծրագրի շրջանակներում նախապես մշակված հարցաթերթիկների միջոցով ընտրվել են նորարարական գաղափարներ/տեխնոլոգիաներ ունեցող 5 ՓՄՁ սուբյեկտներ, որոնց տրամադրվել է տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցություն, ինչպես նաև 1 կազմակերպության աջակցություն է ցուցաբերվել համապատասխան նորարարական գաղափարի հետազոտման և տեխնոլոգիայի մշակման նպատակով տեղական և օտարերկրյա մասնագետների ներգրավման ուղղությամբ: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է ուսուցողական դասընթաց <Ինչպես գրանցել նորարարական գաղափարը> թեմայով, որտեղ ներառված են գաղափարի իրատեսականության ստուգման, առևտրայնացման և մտավոր սեփականության պաշտպանության հիմնահարցերը: Նշված ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն է ցուցաբերվել նաև ներդրումային ծրագրերի մշակման, նորարարական գաղափարների տեխնոլոգիական փորձաքննության ուղղությամբ:

ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնդմանն աջակցություն

2008թ-ի ընթացքում ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների շուկաներ առաջնդմանն աջակցության նպատակով միջոցառումներ են իրականացվել ապրանքների փաթեթավորման, ձևավորման, պիտակների մշակման, վեբ կայքերի պատրաստման, ինչպես նաև ցուցահանդեսներին ՓՄՁ սուբյեկտների մասնակցության ապահովման ուղղություններով: ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է խորհրդատվական աջակցություն ապրանքների փաթեթավորման, ձևավորման, պիտակների մշակման գործընթացները օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան իրականացման ուղղությամբ: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ստացել 227 ՓՄՁ սուբյեկտ: Բաշխումն ըստ աջակցության տեսակի հետևյալն է. արտադրանքի փաթեթավորում, պիտակների մշակում, ձևավորում և գովազդ՝ 167 ՓՄՁ սուբյեկտ, վեբ կայքերի պատրաստում՝ 26 ՓՄՁ սուբյեկտ, ցուցահանդեսներին մասնակցություն՝ 24 ՓՄՁ սուբյեկտ, կառավարման ավտոմատացված համակարգերի ներդրում՝ 10 ՓՄՁ սուբյեկտ:

ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

2008 թվականի ընթացքում տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության իրականացման, հոսքագծերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, մտավոր սեփականության պաշտպանության, լիցենզավորման, ստանդարտացման, համապատասխանության հավաստման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների ու հաշվետվությունների ներկայացման ուղղություններով անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն: Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ՓՄՁ սուբյեկտներին գործարարությանն առնչվող օրենքների, իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աշխատանքները:

2008թ-ի ընթացքում նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցության շրջանակներում աջակցություն են ստացել 34 ՓՄՁ սուբյեկտ: Տրամադրված աջակցության հիմնական ուղղություններն են. գործարար ծրագրերի կազմում, ձեռնարկության տնտեսական գործունեության վերլուծություն, ֆինանսների կառավարում, մարդկային ռեսուրսների կառավարում, իրավաբանական խորհրդատվություն, հարկային, մաքսային և հաշվապահական խորհրդատվություն, շուկայի ուսումնասիրություն:

Ընդհանուր առմամբ 2008 թվականի ընթացքում տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ուղղությամբ բավարարվել է 6556 աջակցության հայտ:

ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն

2008թ-ի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցության շրջանակներում աջակցություն են ստացել 844 ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչներ, որոնցից 642-ը մասնակցել են 2008թ-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ՀՀ հարկային օրենսդրությանն առնչվող մի շարք օրենքներում կատարված փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում կազմակերպված 22 ուսուցողական/տեղեկատվական դասընթացներին: Դասընթացների հիմնական թեմաներն են. ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումներ, ՀՀ աշխատանքային օրենսդրության պարզաբանումներ, կառավարման հիմունքներ, ֆինանսական կառավարում, շուկայավարություն և վաճառք, կիրառական հաշվապահություն և հաշվետվությունների կազմում, զբոսավարների և ուղեկցորդների վերապատրաստում, ՀՀ հարկային օրենսդրությանն առնչվող մի շարք օրենքներում կատարված փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ ուսուցողական/ տեղեկատվական դասընթաց:

Ստորև ներկայացված է 2009 թվականի ընթացքում ՓՄՁ պետական աջակցության 2009թ-ի ծրագրի շրջանակներում առանձին ծրագրային ուղղությունների (միջոցառումների) կատարման ընթացքը.

ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության շրջանակներում 2009թ-ի ընթացքում իրականացվել են ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման, ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկի տոկոսների մասնակի սուբսիդավորման, ՓՄՁ սուբյեկտների սեփական կապիտալի ֆինանսավորման ծրագրերը, ինչպես նաև հիմնադրվել է <ՓՄՁ ներդրումներ> ՈւՎԿ ՓԲԸ-ն, որի միջոցով իրականացվել է ՓՄՁ սուբյեկտների ուղղակի վարկավորման ծրագրեր: Բացի այդ, աշխատանքներ են իրականացվել նաև տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի աջակցության օպերատիվ շտաբի կողմից դրական ընթացք ստացած գործարար ծրագրերի իրականացմանն աջակցելու ուղղությամբ:

ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր

2009թ-ի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում 57 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 296.2 մլն դրամի վարկային երաշխավորություն՝ ապահովելով 506.6 մլն դրամի վարկային փաթեթ: Աջակցություն ստացած 57 ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորության ընդհանուր չափը կազմել է 640.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 8.9 մլն դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 5.2 մլն դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 16%: Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորությունների երաշխիքով միջին

ապահովվածությունը կազմել է 47%: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի (25), Անելիք բանկի (9), Արդշինինվեստբանկի (3), Ինեկոբանկի (12), Արմավիսբանկ (3), Հայբիզնեսբանկի (4) և ՎՏԲ Հայաստան բանկի (1) միջոցով: Վարկային երաշխավորությունները գրեթե ամբողջությամբ տրամադրվել են ՀՀ մարզերում գործող ՓՄՁ սուբյեկտներին: Ընդհանուր առմամբ ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում 2004-2009թթ. 357 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 1.5 մլրդ դրամի վարկային երաշխավորություն՝ ապահովելով շուրջ 2.7 մլրդ դրամի վարկային փաթեթ: Աջակցություն ստացած 357 ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորության ընդհանուր չափը կազմել է շուրջ 3.3 մլրդ դրամ:

ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագիր

ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Տավուշի, ՀՀ Արագածոտնի, ՀՀ Լոռու, ՀՀ Շիրակի, ՀՀ Սյունիքի և ՀՀ Վայոց Ձորի մարզերում իրականացվել է ՀՀ կառավարության 14.07.2005թ. <Հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերի ցանկերը սահմանելու մասին> թիվ 1017-Ն որոշմամբ սահմանված բնակավայրերում վարկային տոկոսների մասնակի սուբսիդավորման միջոցով ՓՄՁ վարկավորման խթանման> ծրագիրը: Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ է ներկայացվել և բավարարվել սուբսիդավորման 3 հայտ՝ ՀՀ Տավուշի մարզից: Սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է շուրջ 660 հազ. դրամ:

Ծրագրի ֆինանսավորումն ամբողջությամբ իրականացվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության արդյունքում ձևավորված եկամուտների հաշվին և կիրառվում է որպես ՓՄՁ վարկավորման խթանման լրացուցիչ գործիք: Ծրագրի իրականացումը չի կրում լայնածավալ բնույթ:

ՓՄՁ սուբյեկտների սեփական կապիտալի ֆինանսավորման ծրագիր

2009թ-ի ընթացքում շարունակվել են աշխատանքները ՓՄՁ սուբյեկտների սեփական կապիտալի ֆինանսավորման ծրագրի իրականացման ուղղությամբ: Մասնավորապես, <Ինստիգեյթ> ՓԲԸ-ն, որի բաժնետոմսերի 18%-ը՝ 45,0 մլն դրամով ձեռք էր բերել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, իր ծրագիրն ամբողջությամբ և հաջող իրագործել է և 2009թ. մարտ ամսին հետ է գնել բաժնետոմսերը 49,95 մլն դրամով:

2009թ-ի ընթացքում ներդրումներ են կատարվել տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի աջակցության օպերատիվ շտաբում քննարկված և հավանության արժանացած <Սորսիո> ՓԲԸ-ի, <Մարկետինգ ընդ Մենեջմենթ 360> ՓԲԸ-ի և <Գոլդեն գոութ> ՓԲԸ-ի սեփական կապիտալում: Վերոնշյալ ընկերություններում ներդրումներն իրականացվել են՝ հիմք ընդունելով <Գրանդ Թորնթոն Ամիո> ՄՊԸ-ի կողմից կատարված բիզնեսի գնահատումները:

<Գոլդեն գոութ> ՓԲԸ-ում ներկայամուս ակտիվ աշխատանքներ են իրականացվում նոր գործարանի կառուցումն ավարտին հասցնելու ուղղությամբ: Բանակցություններ են ընթանում

ԱՄՆ և ՌԴ գործընկերների հետ արտահանման ծավալների ընդլայնման ուղղություններով: Աջակցություն ստանալուց հետո ընկերությունը մթերել է շուրջ 25 տոննա կաթ մարզի 44 գյուղացիական տնտեսություններից:

<Սոբսիո> ՓԲԸ-ում, Monitis SS գործիքի առաջնորդման նպատակով ձևավորվել է հասարակայնության հետ կապերի և մարքեթինգի բաժին, ինչպես նաև համագործակցություն է հաստատվել հայտնի գովազդային գործակալությունների հետ, ինչի շնորհիվ էականորեն ավելացել է խոշոր և կարևոր պատվիրատուների քանակը: Ընկերության հաճախորդների թիվը վերջին ամիսների ընթացքում է աճել է շուրջ 15%-ով:

<Մարկետինգ ընդ Մենեջմենթ 360> ՓԲԸ-ն իրականացվող ծրագրի շրջանակներում Հոլանդիայում իրականացրել է <Կոմիսիոն 360> արտադրատեսակի ԵՄ չափորոշիչներին համապատասխան անվտանգության լաբորատոր թեստավորում, ինչից հետո ընկերության կողմից պատրաստվել է ապրանքատեսակի նոր նմուշը՝ համապատասխան հոլանդացի պատվիրատուների պահանջներին: Ներկայումս բնակչություններ են սկսվել նաև գերմանական գործընկերների հետ: Ծրագրի շրջանակներում ընկերության կողմից իրականացվել է շուրջ 10 մլն դրամի արտադրական հզորությունների վերազինում: Պատվիրատուների հետ կնքվել են ավելի քան 40 մլն դրամի վաճառքի պայմանագրեր:

<ՓՄՁ ներդրումներ> ՈԻՎԿ ՓԲԸ

Ֆինանսական աջակցության տրամադրման մեխանիզմների ընդլայնման նպատակով 2009թ-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից հիմնադրվել է <ՓՄՁ ներդրումներ> ՈԻՎԿ ՓԲԸ-ն: Ընկերությունը հիմնադրվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 21 մայիսի 2009թ-ի N564-Ն որոշումը, համաձայն որի փոփոխություն էր կատարվել փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2009թ-ի ծրագրում: <ՓՄՁ ներդրումներ> ՈԻՎԿ ՓԲԸ-ն պետական գրանցում է ստացել և լիցենզավորվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2009թ-ի օգոստոսի 7-ին: Ընկերությունն իրականացնելու է վարկավորման և կապիտալի ֆինանսավորման ծրագրեր: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,15 մլրդ դրամ: 2009թ-ի ընթացքում ընկերության կողմից վարկավորվել են հինգ ընկերություններ՝ որոնց ներկայացրած ծրագրերը քննարկվել և հավանության էին արժանացել տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի աջակցության օպերատիվ շտաբում: Ընդհանուր առմամբ ընկերության կողմից իրականացվել է 857 մլն դրամի վարկավորում:

ՀՀ տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի աջակցության օպերատիվ շտաբ

ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը սկսեց ներգործել դեռևս 2008թ-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից: Հետևաբար ՀՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ հակաճգնաժամային ծրագրի մշակմանը, որը ՀՀ Ազգային Ժողով ներկայացվեց

2008թ-ի նոյեմբերի 12-ին: ՀՀ կառավարության հակաճգնաժամային ծրագրով նախատեսված միջոցառումները միտված էին մեղմելու ճգնաժամի հետևանքով առաջացած և տնտեսության առջև կանգնած ռիսկերը:

Ճգնաժամի հաղթահարման նպատակով ՀՀ կառավարության մշակված հակաճգնաժամային ծրագրի հիմնական նպատակներն էին՝ մակրոտնտեսական և ֆինանսական հատվածի կայունության ապահովումը, տնտեսական աճի ապահովման համար լրացուցիչ խթանների բացահայտումը և ներդրումը: Այս նպատակներին հասնելու հիմնական քայլերից էին գործարարությանը ժամանակավոր աջակցության տրամադրումը՝ այդ թվում ուղղակի վարկավորման, երաշխիքների տրամադրման և սեփական կապիտալում մասնակցության ձևով, ինչպես նաև ՓՄՁ վարկավորման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը:

ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացմանն ուղղակիորեն նպաստելու նպատակով ձևավորվեց Օպերատիվ շտաբ, որը քննարկում է մասնավոր հատվածից ստացված գործարար նախագծերը, ինչպես նաև որոշում աջակցության ձևաչափը: Ենթադրվում է առանձին ձեռնարկություններին հասցեագրված օգնություն, որի նպատակն է ստեղծել նոր աշխատատեղեր, խթանել ներմուծման փոխարինումը տեղական արտադրանքով, ավելացնել արտահանումը, ընդլայնել տեղական հումքի օգտագործումը, խթանել ինովացիոն տեխնոլոգիաների կիրառումը: Այս նպատակին հասնելու համար կիրառվում են պետական երաշխիքների տրամադրում, վարկային երաշխավորությունների տրամադրում, սուբսիդավորում, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտում, ուղղակի վարկավորում, մասնակցություն ձեռնարկությունների կապիտալում:

ՀՀ տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի աջակցության օպերատիվ շտաբում քննարկված մի շարք ծրագրեր տարբեր տեսակի աջակցություն են ստացել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և նրա կողմից հիմնադրված <ՓՄՁ ներդրումներ> ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից: Ընդհանուր առմամբ 2009թ-ի ընթացքում տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի աջակցության օպերատիվ շտաբի քննարկմանը ծրագրեր ներկայացրած ընկերություններից ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով աջակցություն են ստացել 17 ընկերություններ՝ ներգրավելով շուրջ 3.26 մլրդ դրամ:

ՀՀ տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի աջակցության օպերատիվ շտաբում քննարկվել և հավանության են արժանացել <Վայք գրուպ> ՓԲԸ-ի, <Կոնսեր> ՍՊԸ-ի <Իդիլ-Տեքստիլ> ՍՊԸ-ի, <Դայկալատ> ՍՊԸ-ի, <Հերգնյան եղբայրներ> ՍՊԸ-ի, <Ֆիզ-Տեխ> ՍՊԸ-ի, <Ռումեա> ՍՊԸ-ի, <Լիկվոր> ՓԲԸ-ի, <Կատարողական սարքավորումների գործարան> ԲԲԸ-ի, <Էլեն և Անի> ՍՊԸ-ի, <Բիոկայթ> ՍՊԸ-ի և <Էլեկտրասարք> ԲԲԸ-ի ներկայացրած ծրագրերը, որոնք ստանալով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի վարկային երաշխավորություն՝ վարկավորվել են վերջինիս կողմից հիմնադրված <ՓՄՁ ներդրումներ> ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից:

Կապիտալի ֆինանսավորման աջակցություն է տրամադրվել <Սորսիո>, <Գոլդեն Գոուպ> և <Մարկետինգ ընդ մենջմենթ 360> ՓԲԸ-ներին, որոնց ներկայացված ծրագրերը ևս քննարկվել և

հավանության են արժանացել տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի աջակցության օպերատիվ շտաբում:

<Թամարա ֆրուբ> ՓԲԸ-ն և <Ագրոսպասարկում> ԲԸ-ն բազմակողմանի խորհրդատվական և տեղեկատվական աջակցություն են ստացել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից՝ գործարար ծրագրերի մշակման, բանկերի հետ բանակցությունների վարման և այլ ուղղություններով:

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն

2009թ-ի ընթացքում սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ուղղությամբ 11 ծրագիր է իրականացվել ՀՀ մարզերում <Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում> ՄԱԶԾ/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ համատեղ ծրագրի շրջանակներում:

Ընդհանուր առմամբ ծրագրին մասնակցելու համար դիմել են 444 սկսնակ գործարարներ, որոնցից ընտրվել և ծրագրին մասնակցել են 195-ը: Ընդհանուր առմամբ, ծրագրի շրջանակներում 2009թ-ի ընթացքում պետական գրանցում է ստացել և սկսել է սեփական գործը 65 սկսնակ գործարար, որոնցից 6-ը՝ 2008թ-ին, իսկ 59-ը՝ 2009թ-ին իրականացված ծրագրերի մասնակիցներն են, որոնցից 59-ը գրանցվել են որպես անհատ ձեռնարկատեր, իսկ 6-ը՝ որպես առևտրային իրավաբանական անձ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցում ստացած և գործունեություն ծավալած սկսնակ գործարարների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 44.0%, ծառայությունների ոլորտում՝ 47.0%, առևտրի ոլորտում՝ 9.0%:

Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության տրամադրման նպատակով ձևավորված դրամագլուխը 2009թ-ին համարվել է ՓՄՁ պետական աջակցության 2008թ-ի ծրագրի եկամուտների հաշվին 1.5 մլն դրամով և ՓՄՁ պետական աջակցության 2009թ-ի ծրագրի եկամուտների հաշվին 50.0 մլն դրամով՝ կազմելով 133.2 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 65 սկսնակ գործարար, որոնցից 7-ը՝ 2008թ-ին իրականացված ծրագրի մասնակիցներն են: Ստացված վարկի ընդհանուր գումարը կազմել է 91.5 մլն դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 109.4 մլն դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկի միջոցով:

Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված վարկային երաշխավորության միջին գումարը կազմել է 1.7 մլն դրամ, վարկային միջոցների միջին գումարը՝ 1.4 մլն դրամ, որոնց վերադարձելիությունը կազմել է 100%:

ՀՀ մարզերում հյուրատնային գործունեության զարգացման նպատակով ՀՀ Լոռու և ՀՀ Սյունիքի մարզերում իրականացվել է Հյուրատների կլաստերի զարգացման ծրագիրը, որին մասնակցել են հյուրատների և հյուրընկալության ծառայություններ մատուցող գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչներ: Ծրագրի շրջանակներում մշակվել է կլաստերի զարգացման ռազմավարությունը, հիմնադրվել են հյուրատների մարքեթինգային կենտրոններ:

Ծրագրի մասնակիցներից 6-ը ստացել են պետական գրանցում և ներկայացվել են որակավորման՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման ընթացակարգի համաձայն:

ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն

ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության ուղղությամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՄԱԶԾ համատեղ ծրագրի շրջանակներում նորարարական գործունեությամբ զբաղվող 10 գործարարների աջակցություն է ցուցաբերվել ներդրումային և գործարար ծրագրերի մշակման ուղղությամբ, որոնք հետագայում ներկայացվել են տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի աջակցության օպերատիվ շտաբ: Գործարար առաջարկները ներկայացվել են նաև միջազգային գործարարության և համագործակցության հոլանդական գործակալության (EVD) կողմից իրականացվող <Համագործակցության զարգացում> ծրագրին և տեղադրվել են Ձեռնարկությունների եվրոպական ցանցում՝ գործընկերների ներգրավման նպատակով:

ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորմանն աջակցություն

2009թ-ի ընթացքում ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորմանն աջակցության նպատակով միջոցառումներ են իրականացվել ապրանքների փաթեթավորման, ձևավորման, պիտակների մշակման, վեր կայքերի պատրաստման, սննդի անվտանգության համակարգերի սերտիֆիկացման (ISO 22000:2005), կառավարման ավտոմատացված համակարգի ներդրման, ինչպես նաև ցուցահանդեսներին ՓՄՁ սուբյեկտների մասնակցության ապահովման ուղղություններով: ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է խորհրդատվական աջակցություն ապրանքների փաթեթավորման, ձևավորման, պիտակների մշակման գործընթացները օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան իրականացման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ վերոհիշյալ ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել 203 ՓՄՁ սուբյեկտի:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրություն՝ 39.0%, ծառայություններ՝ 30.7% և առևտուր՝ 30.3%:

ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

2009թ-ի ընթացքում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության իրականացման, հոսքագծերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, մտավոր սեփականության պաշտպանության, լիցենզավորման, ստանդարտացման, համապատասխանության հավաստման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների ու հաշվետվությունների

ներկայացման ուղղություններով անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն:

2009թ-ի ընթացքում տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում բավարարվել է 7814 աջակցության հայտ, որից 116-ը՝ նեղ մասնագիտական հմտությունների գծով:

ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված խորհրդատվական աջակցության այն մասը, որը պահանջում է նեղ մասնագիտական հմտություններ, իրականացվել է մրցույթով ընտրված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով՝ ըստ ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի:

ՓՄՁ պետական աջակցության 2009թ-ի ծրագրի շրջանակներում հաշվապահական հաշվառման վարման և հարկային հաշվետվությունների կազմման ուղղություններով խորհրդատվական աջակցություն է տրամադրվել Հաշվապահական կենտրոն դիմած 14 ՓՄՁ սուբյեկտների:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխումն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրություն՝ 68,1%, ծառայություն՝ 25,0%, շինարարություն 0,9%, առևտուր՝ 6,0%:

2009թ-ի ընթացքում շարունակվել են ՓՄՁ սուբյեկտներին գործարարությանն առնչվող օրենքների, իրավօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և Ձեռնարկությունների եվրոպական ցանցի նոր կայքէջի թարմացման, համալրման և ինտերակտիվ բաղադրիչների սպասարկման աշխատանքները (հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի ինտերնետային էջում գրանցվել է շուրջ 12100 այցելություն, որից՝ 32.5%-ը Հայաստանից, իսկ 67.5%-ը՝ արտերկրներից):

2009թ-ի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից մշակվել և հրատարակվել են <Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման ծրագրերի և ծառայություններ մատուցող կազմակերպությունների> տեղեկագրի 5-րդ հրատարակությունը, <Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006-2008թթ.> վիճակագրական տեղեկագիրը հայերեն և անգլերեն լեզուներով, <ՓՄՁ սուբյեկտների հարկային հաշվառման պարզեցված ուղեցույցը> և 2010թ-ի հարկային օրացույցը: ՄԱԶԾ-ի հետ համագործակցության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում տպագրվել են նաև Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի 2008թ-ի գործունեության հաշվետվությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի տեղեկատվական գրքույկները:

2009թ-ի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից հասարակայնության հետ կապի հաստատման նպատակով, ինչպես նաև վերջինիս գործունեությունը լուսաբանելու ուղղությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես <h2> հեռուստապլիքով եթեր է հեռարձակվել <ՓՄՁ լրատու> հաղորդաշարի 36 հաղորդում (որից տասներկուսը կրկնություն), ուր ներկայացվել են Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի ընթացիկ գործունեությունը, վերջինիս կողմից իրականացվող աջակցության ծրագրերն ու կազմակերպված միջոցառումները: <ՓՄՁ լրատու>

հաղորդաշարի բոլոր հաղորդումները ներկայացվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային կայքի <հեռուստահաղորդումներ> բաժնում:

Բացի հեռուստահաղորդումներից ԶԼՄ-ներով բազմիցս հոդվածներ ու հրապարակումներ են եղել ինչպես մամուլում, տեղեկատվական գործակալությունների լրահոսում, այնպես էլ վերլուծական հաղորդումներում:

2009թ-ի ընթացքում ամիսը մեկ անգամ գործարարները տեղեկացվել են Ձեռնարկությունների եվրոպական ցանցի նորություններին <Էլեկտրոնային Ամսագրի> միջոցով, ուր մանրամասն ներկայացվել են ինչպես գործարար առաջարկները, այնպես էլ տարբեր երկրներում տեղի ունեցող միջոցառումները: Ինֆո <մարկետ> ամսագրում ամիսը երկու անգամ հաճախականությամբ վեց ամիս շարունակ տպագրվել են Ձեռնարկությունների եվրոպական ցանցի ներքին ինտրանետում շրջանառվող առաջարկներն ու հայ գործարարներին ներկայացվել են վերջինիս ընձեռած հնարավորությունները:

ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն

2009 թվականի ընթացքում <ՀՀ հարկային օրենսդրության փոփոխությունները և դրանց կիրառման հարցերը>, <ՀՀ հարկային և աշխատանքային օրենսդրության պարզաբանումները>, <Ֆինանսական և հարկային հաշվետվությունների պատրաստում>, <Հաշվապահական հաշվառման հիմունքներ>, <ՀՀ քաղաքացիական և տնտեսական իրավունք> և <Հաշվապահական հաշվառում (սկսնակների համար)> թեմաներով կազմակերպվել է թվով 47 դասընթացներ, որին մասնակցել են ՓՄՁ սուբյեկտների 991 ներկայացուցիչ:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. առևտրի ոլորտում՝ 31,5%, արտադրության ոլորտում՝ 37%, ծառայությունների ոլորտում՝ 28,5%, շինարարության ոլորտում՝ 3%:

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնը Հայաստանում

Եվրահանձնաժողովի կողմից 2007թ-ին Եվրո տեղեկատվական կենտրոնների ցանցի գործընկեր կազմակերպությունների ընտրության նպատակով հայտարարված մրցույթին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ներկայացված առաջարկն արժանացել է հավանության և 2008թ-ից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը որպես հյուրընկալող գործընկեր կազմակերպություն դարձել է արդեն վերանվանված <Ձեռնարկությունների Եվրոպական ցանցի> (ՁԵՑ) (Enterprise Europe Network) անդամ՝ գործելով որպես վերջինիս հաղորդակցման կենտրոն Հայաստանում:

Կենտրոնի գործունեության շրջանակներում ձեռնարկություններին անվճար աջակցություն է ցուցաբերվում Եվրամիության քաղաքականության, օրենսդրության, ստանդարտների, գործարար համա-գործակցության հնարավորությունների և ԵՄ այլ ընդհանուր հարցերի վերաբերյալ տեղեկատվության ստացման, շուկայի հետազոտությունների և պոտենցիալ գործընկերների հայտնաբերման, բանակցությունների վարման և համագործակցության հաստատման, միջազգային շուկայում գործունեության իրականացման գործընթացներում, ինչպես նաև հետազոտական և զարգացման ծրագրերի շրջանակներում արտասահմանյան գործընկերների ներգրավման գործում:

2009 թվականի ընթացքում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնն Հայաստանում գործարար ասոցիացիաների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ կազմակերպել է ՁԵՑ-ի գործունեությունը և ընձեռած հնարավորությունները ներկայացնող 14 հանդիպումներ և քննարկումներ՝ գործարարների շրջանում ՁԵՑ-ի գործունեության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման և շահառուների թվի ավելացման նպատակով:

Ընդհանուր առմամբ կազմակերպված միջոցառումների արդյունքում ավելի քան 300 գործարարներ տեղեկատվություն են ստացել Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության վերաբերյալ:

Բացի այդ, ՋԼՄ-ների միջոցով պարբերաբար տարածվել է տեղեկատվություն ՁԵՑ-ի գործունեության և առաքելության վերաբերյալ, ինչպես նաև <ՓՄՁ լրատու> հեռուստահաղորդաշարի շրջանակներում եթեր է հեռարձակվել 4 հեռուստահաղորդում՝ նպատակ ունենալով այս նախաձեռնության շրջանակներում ընձեռված հնարավորությունները հասանելի դարձնել հնարավորինս մեծ թվով ՓՄՁ սուբյեկտների համար:

2009թ-ի ընթացքում մշակվել է Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի նոր կայքէջը, որը պարունակում է համապարփակ և օգտակար տեղեկատվություն ձեռնարկատիրական գործունեության իրականացման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 30 կազմակերպություններ տեղեկատվություն են ստացել սարքավորումների ձեռքբերման, սերտիֆիկացման ԵՄ ընթացակարգերի և սերտիֆիկատորամադրող կազմակերպությունների վերաբերյալ, ինչպես նաև ԵՄ ապրանքներ արտահանման նպատակով մաքսային ընթացակարգերի վերաբերյալ:

2009թ-ի ընթացքում գործարար համագործակցության հաստատման նպատակով գործարարներն աջակցություն են ստացել արտերկրում տեղի ունեցող ցուցահանդեսներին և միջոցառումներին մասնակցելու ուղղությամբ, որոնց ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ հայաստանյան և եվրոպական գործարարների միջև և քննարկել են գործարար համագործակցության հաստատման հնարավոր ուղիները:

ՁԵՑ-ի ինտրանետում տեղադրվել են 26 կազմակերպությունների գործարար համագործակցության և 2 տեխնոլոգիական առաջարկներ, ևս 12 գործարար և 5 տեխնոլոգիական առաջարկներ գտնվում են մշակման փուլում:

Ընդհանուր առմամբ Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի կողմից ցանցում տեղադրված 50 առաջարկների նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերել Իտալիայի, Լիտվայի, Լեհաստանի, Դանիայի, Չեխիայի, Թուրքիայի, Գերմանիայի, Անգլիայի, Սլովենիայի, Նիդերլանդների և այլ երկրների մեծ թվով կազմակերպություններ: Շուրջ 150 կազմակերպությունների միջև փոխանցվել են կոնսուլտային տվյալներ և բանակցություններ են ընթանում գործարար համագործակցության հաստատման նպատակով: Ներկայումս <Արլիան Քոնսալթինգ> ՍՊԸ-ն և իսպանական <Եվրոքոն> ՍՊԸ-ն արդեն իսկ գտնվում են համագործակցության համաձայնագրի հաստատման գործընթացում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ՓՄՁ պետական աջակցության տարեկան (2007, 2008 և 2009թթ.) ծրագրերի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված և բավարարված աջակցության հայտերի թվաքանակի դինամիկան՝ ըստ աջակցության առանձին ուղղությունների:

Ցուցաբերված աջակցության ուղղություն	2007թ. ընթացքում բավարարված աջակցության հայտերի թվաքանակ	2008թ. ընթացքում բավարարված աջակցության հայտերի թվաքանակ	2009թ. ընթացքում բավարարված աջակցության հայտերի թվաքանակ
ՓՄՁ սուբյեկտներին տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	7365	7210	7814
ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն	535	844	991
Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն	201	200	195
Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն	35	41	65
ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորդման աջակցություն	236	231	203
ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցություն	16	6	10
ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում	12	5	3
ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում	94	56	57
ՓՄՁ սուբյեկտների սեփական կապիտալի ֆինանսավորում	-	1	3
ՀՀ կառավարության որոշմամբ վարկային երաշխավորությունների տրամադրում	-	-	2
Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	-	24	27
Ընդամենը	8494	8618	9370

1.2.2. Զբոսաշրջության ոլորտի զարգացման միտումները.

2008-2009թթ. շնորհիվ զբոսաշրջության ոլորտում վարվող պետական քաղաքականության, ինչպես նաև շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության համագործակցության, զբոսաշրջությունը Հայաստանում արձանագրում է այցելուների թվի կայուն և դինամիկ աճ:

2008 թվականին զբոսաշրջության ոլորտում գրանցված ձեռքբերումները.

Համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների 2008թ-ին Հայաստան են այցելել 558 443 զբոսաշրջիկ արձանագրելով 9,4 % աճ 2007թ. նույն ժամանակաշրջանի համեմատ /510 289 այցելու/: Միջազգային զբոսաշրջիկների կայուն աճը շարունակվում է սկսված 2001թ-ից, ինչը վարվող պետական քաղաքականության արդյունքն է:

Հիմք ընդունելով Համաշխարհային Զբոսաշրջության Կազմակերպության միջազգային զբոսաշրջությունից ստացվող եկամուտների հաշվարկման մեթոդիկան՝ յուրաքանչյուր

զբոսաշրջիկ Հայաստանում ծախսում է միջինը 36 ԱՄՆ դոլլար/օրական կամ 705 ԱՄՆ դոլլար յուրաքանչյուր այցելության ընթացքում (չհաշված ավիատոմսի արժեքը):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերջին տարիներին զբոսաշրջության չափաբաժինը ՀՆԱ-ում կազմել է մոտ 5%, իսկ արտահանման ծավալներով այն եղել է առաջատար ճյուղերից մեկը:

Իրականացնելով զբոսավարների և ուղեկցորդների գործունեության լիցենզավորման գործընթացը 2008թ-ին գործունեության լիցենզիա են ստացել 14 զբոսավար և մեկ ուղեկցորդ:

Հյուրանոցաշինության և ռեստորանային բնագավառներում 2008թ. նույնպես տեղի են ունեցել նշանակալից զարգացումներ՝ Երևանում և Հայաստանի համայնքներում վերանորոգվել և շահագործման են հանձնվել ավելի քան 15 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ: 2008թ-ին միջազգային զբոսաշրջիկներ էին ընդունել 46 հյուրանոց:

2008 թ-ին նույնպես շարունակվել է հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթացը և մի շարք հյուրանոցներ ստացել են որակավորման վկայականներ, ինչը վկայում է մատուցվող ծառայությունների որակի բարձրացման մասին:

2008թ-ին զբոսաշրջության ոլորտում պետական ծրագրերի իրականացման արդյունքում գրանցվել են մի շարք ձեռքբերումներ, որոնք հիմնականում ուղղված են եղել Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները միջազգային զբոսաշրջային շուկայում ներկայացմանը, հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության ապահովմանը, Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և ապահով երկիր նկարագրի ձևավորման շարունակական կատերալագործմանը:

2008թ. մասնավորապես իրականացվել են հետևյալ ծրագրային միջոցառումները՝

1) հայրենական զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է հեղինակավոր 8 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին, ինչը լուրջ խթան է Հայաստան այցելող միջազգային զբոսաշրջիկների թվի աճի ապահովման համար, նոր գործնական կապերի հաստատման և զարգացման համար:

2008թ-ին Հայաստանում կազմակերպվեց ամենամյա <Հայաստանը խոսող քարերի երկիր> միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը: Ցուցահանդեսին մասնակցություն ունեցան Հայաստանի հյուրանոցները, Հայաստանի հյուրանոցների և ռեստորանների ասոցիացիաները, կրթական հաստատություններ, ավիաընկերություններ և մի շարք զբոսաշրջային գործակալություններ:

2) Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացնելու նպատակով մշակվել, տպագրվել և պահանջարկի շուկաներում տարածվել են բազմատեսակ և բազմալեզու գովազդատեղեկատվական նյութեր: 2008-ին թարմացվել, վերատպագրվել և զբոսաշրջիկներին են առաջարկվել Հայաստանի զբոսաշրջային քարտեզներ:

Թարմացվել և վերատպագրվել են 5 լեզուներով 13300 քանակությամբ բրոշյուրներ և տեղեկատվական թերթիկներ, բարելավվելով որակական չափանիշերը՝ վերանայվել և թարմացվել են տեքստերը և լուսանկարները:

3) 2008թ. ընթացքում <Հայաստան> զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը, տրամադրելով բազմաբնույթ ծառայություններ և տեղեկատվություն, սպասարկել է շուրջ 8662 զբոսաշրջիկ, իսկ նորաբաց տեղեկատվական կենտրոնը Դիլիջանում միայն օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում սպասարկել է 800-ից ավելի այցելու:

4) 2008թ. Հայաստանում ճանաչողական նպատակներով կազմակերպվեցին մի շարք երկրներից ժամանած զբոսաշրջային օպերատորների և ՋԼՄ-ների ներկայացուցիչների համար մի շարք ճանաչողական այցելություններ, ինչի արդյունքում բազմաթիվ ճանաչված մասնագիտացված պարբերականներում տպագրվեցին հոդվածներ Հայաստանի զբոսաշրջային գրավչությունների մասին:

5) 2008թ. շարունակվել է ՄԻ-ԷՆ-ԷՆ և EuroNews հեռուստաալիքներով Հայաստանը ներկայացնող երկու տեսահոլովակների հեռարձակումը:

6) 2008թ. ՀՀ կառավարության 17.04.2008թ. N412-Ն որոշմանը համապատասխան, սկսվեց Հայաստանը ներկայացնող վավերագրական ֆիլմի նկարահանման աշխատանքները՝ համագործակցությամբ իսպանական հեղինակավոր Բազզ Բիզնես և Թրանսգլոբլ ընկերությունների հետ:

ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 18-ի N 1064-Ն որոշմամբ Ջերմուկ քաղաքը հայտարարվեց, որպես զբոսաշրջային կենտրոն:

2009 թվականին.

2009թ. Հայաստան են այցելել մոտ 575 281 միջազգային զբոսաշրջիկ՝ 2008թ. նույն ժամանակաշրջանի համեմատ ապահովելով 3% աճ:

Զբոսավարների և ուղեկցորդների գործունեության լիցենզավորման գործընթացի շրջանակներում 2009 թ-ին զբոսավարի գործունեության լիցենզիա են ստացել 17 զբոսավար, և այսօր զբոսաշրջիկներին զբոսավարի ծառայություն են մատուցում 140 զբոսավար և 2 ուղեկցորդ:

Շարունակելով հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթացը որակավորման վկայականներ են ստացել 7 հյուրանոց և 4 զբոսաշրջային տուն: Շարունակվում է որակավորում ստանալու համար հայտերի ներկայացման գործընթացը, ինչը ապահովում է մատուցվող հյուրանոցային ծառայությունների որակի բարձրացումը:

2009թ-ին զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության իրականացման շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել համաշխարհային շուկայում Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի, նկարագրի ձևավորման շարունակական կատերալագործմանը:

Մասնավորապես.

ա) հայրենական զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է Բեռլինում, Լոնդոնում, Փարիզում, Ռիմինիում, Միլանում, Տոկիոյում և Ուլտրեխտում անցկացվող միջազգային ամենամյա զբոսաշրջային ցուցահանդեսներում և տոնավաճառներում, որը լուրջ խթան է Հայաստան այցելող միջազգային զբոսաշրջիկների թվի աճի համար: 2009 թվականին Հայաստանում նույնպես կազմակերպվեց ամենամյա 'Հայաստանը խոսող քարերի երկիր' միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը, որին մասնակցեցին 65 զբոսաշրջության ոլորտին առնչվող կազմակերպություն:

բ) Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները պահանջարկի շուկաներում ներկայացնելու և զբոսաշրջիկներին անհրաժեշտ տեղեկատվությամբ նախապես ապահովելու նպատակով մշակվել, տպագրվել և պահանջարկի շուկայում տարածվել են բազմատեսակ, բազմալեզու և բազմաքանակ գովազդատեղեկատվական նյութեր: 2009-ին թարմացվել և վերատպագրվել, վերանայվել են բրոշյուրներում ընդգրկված տեքստերը, փոփոխվել են լուսանկարները ապահովելով նոր որակական չափանիշներ:

գ) 2009թ-ի ընթացքում <Հայաստան> զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը, սրամադրելով բազմաբնույթ ծառայություններ և տեղեկատվություն սպասարկել է շուրջ 11200 այցելու, ինչը 6%-ով գերազանցել է 2008թ-ի ցուցանիշը:

Դիվիզանի տեղեկատվական կենտրոնը 2009թ-ին սպասարկել է 1881 այցելու:

դ) Հայաստանում ճանաչողական այցեր են իրականացրել.

- Եվրոպական առաջատար ՋԼՄ-ների 11 ներկայացուցիչ, բացի Հայաստանի զբոսաշրջային գրավչությունների ներկայացումը, այցի շրջանակներում կազմակերպվել է <Հայաստան` զբոսաշրջություն, իմիջ և ՋԼՄ> խորագրով սեմինար:

- Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպման շրջանակներում 2009 թվականի հոկտեմբերին Հայաստան այցելեցին <Մակլովիչի ճանապարհորդությունները> լեհական հեռուստատեսային ծրագրի ներկայացուցիչները, ինչի արդյունքում նկարահանվել են Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները, մասնավորապես` ազգային խոհանոցը, մշակույթը և ավանդույթները ներկայացնող ֆիլմ, որը հեռարձակվել է լեհական հեռուստատեսությամբ:

- 2009թ-ին կազմակերպեց ռուսական <Вояж> և <In Style> ամսագրերի լրագրողների և լուսանկարիչների այցը Հայաստան, որի ընթացքում լրագրողները ծանոթացան Հայաստանի կրոնական, մշակութային ժառանգությանը և հայկական ավանդույթներին, մասնակցեցին հայկական ուտեստների պատրաստման, ինչպես նաև հայկական գինու և կոնյակի համոտեման արարողություններին: Այցի արդյունքում տպագրվել են հոդվածներ վերը նշված ամսագրերում:

ե) 2009թ-ին ավարտվեց Հայաստանի և ԼՂՀ պատմությունը, մշակույթը, ավանդույթները և այլ զբոսաշրջային գրավչությունները ներկայացնող 52 րոպե տևողությամբ <Հայաստանը` Նոյի երկիր> վավերագրական ֆիլմի պատրաստումը:

Հեռարձակման նպատակով ֆիլմը արդեն ձեռք է բերվել իսպանական TVB և սկադինավյան հեռուստաընկերությունների կողմից: Բանակցություններ են վարվում իտալական

RAI, Discovery Channel և այլ հեղինակավոր հեռուստաալիքների հետ: Ֆիլմը արդեն իսկ թարգմանվել է հայերեն և ռուսերեն, և թողարկվել է եռալեզու սկավառակով:

2009թ-ի հունիսի 26-ին և հոկտեմբերի 1-ին հաստատվեցին <Տաթև> և <Հյուսիսային դարպաս> զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշումները: Կենտրոնների զարգացման նպատակով տարվում են աշխատանքներ նպատակային ծրագրերի մշակման ուղղությամբ:

1.2.3. Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ոլորտի զարգացման միտումները.

Առևտրի Համաշխարհային կազմակերպության <Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին> համաձայնագրի ստորագրումից հետո, Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություններ՝ արտադրանքի և ծառայությունների նկատմամբ՝ մարդու կյանքի և առողջության, ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գույքի, կենդանիների և բույսերի կյանքի և առողջությանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը, սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոնների կանխարգելմանը ներկայացվող պահանջները տեխնիկական կանոնակարգերի միջոցով սահմանելու, ազգային ստանդարտները միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակելու, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ ստանդարտացման աշխատանքները ակտիվացնելու, ազգային տեխնիկական հանձնաժողովների աշխատանքը կազմակերպելու, ստանդարտացման աշխատանքներին շահագրգիռ կողմերի մասնակցությունն ակտիվացնելու, ինչպես նաև ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվական աշխատանքների ծավալը ընդլայնելու համար:

2008թ-ին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ազգային ստանդարտների մշակում

- ԻՍՕ միջազգային ստանդարտների մշակում - 102 հատ

- ԵՆ եվրոպական ստանդարտների մշակում - 10 հատ

- Ազգային ստանդարտների մշակում - 9 հատ

Միջպետական և միջազգային ստանդարտացման աշխատանքներ

- Միջպետական ԳՕՍՏ, միջազգային ԻՍՕ, եվրոպական ՍԵՆ ստանդարտների նախագծերի փորձաքննության կազմակերպում,

- Միջպետական և միջազգային ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն,

- ԱՊՀ երկրների և ստանդարտացման միջպետական խորհրդի, միջազգային ստանդարտացման կազմակերպության և Ստանդարտացման եվրոպական կոմիտեի աշխատանքների կազմակերպում:

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ

- Ստանդարտների ազգային ֆոնդի համալրում և հաշվառում,
- Ընդունված ազգային ստանդարտների մշակում,
- ՀՀ-ում գործող ազգային ստանդարտների ֆոնդի վարում,
- ՀՀ կազմակերպությունների տեղեկատվական սպասարկում,
- Ստանդարտ տեղեկատվական-որոնման ավտոմատացման համակարգի ներդրում,
- ՀՀ-ում գործող ստանդարտների ամբողջ տեքստի տվյալների բազայի էլեկտրոնային տարբերակների ստեղծում, հաշվառում և պահում,
- ԱՀԿ անդամ երկրների տեղեկատվական հարցման կենտրոնների համապատասխան հարցումների տրամադրում,
- Ազգային ստանդարտների կատալոգի, եռամսյակային տեղեկատուի նախապատրաստում և հրատարակում:

2009թ. ծրագրի շրջանակներում 2008թ-ի` 121 ազգային ստանդարտի համեմատ մշակվել է 55 ազգային ստանդարտ, 2008թ և 2009թ. նախատեսվել են միևնույն միջոցառումները: Սակայն 2008թ. 2009թ.-ի համեմատ այդ միջոցառումների շրջանակներում իրականացվել են նաև Ստանդարտ տեղեկատվական-որոնման ավտոմատացման համակարգի ներդրման, ՀՀ-ում գործող ստանդարտների ամբողջ տեքստի տվյալների բազայի էլեկտրոնային տարբերակների ստեղծման, հաշվառման և պահման, ԱՀԿ անդամ երկրների տեղեկատվական հարցման կենտրոնների համապատասխան հարցումների տրամադրման, Ազգային ստանդարտների կատալոգի, եռամսյակային տեղեկատուի նախապատրաստման և հրատարակման աշխատանքները:

2009 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ազգային ստանդարտների մշակում

- Ազգային ստանդարտների մշակում – 55 հատ

Միջպետական և միջազգային ստանդարտացման աշխատանքներ

- Միջպետական, եվրոպական, միջազգային ստանդարտների նախագծերի փորձաքննություն, քվեարկության կազմակերպում:

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ

- Ստանդարտների ազգային ֆոնդի համալրում, հաշվառում,
- Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցում,
- ՀՀ-ում գործող ազգային ստանդարտների ֆոնդի վարում,
- ՀՀ կազմակերպությունների տեղեկատվական սպասարկում:

1.2.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման միտումները.

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ՀՀ կառավարությունը համարում է միջազգային համագործակցության դաշտի կարևորագույն օղակներից մեկը: Այս շրջանակում իրագործվել են տարբեր ծրագրեր, որոնք մեծապես նպաստել են ոլորտի ընդհանուր աճին:

2009թ. հայաստանյան ՏՏ ոլորտի հասույթը կազմել է շուրջ 129.9 մլն ԱՄՆ դոլար, 2008թ. 111 մլն ԱՄՆ դոլարի դիմաց՝ ապահովելով 117% աճ: 1998-2009թթ. ոլորտի միջին տարեկան հավելվածը մոտ 28% է:

Ներկայումս Հայաստանում գործում են մոտ 196 ՏՏ ընկերություններ, որոնցից 74-ը՝ օտարերկրյա (կազմելով ՏՏ արտադրանքի շուկայի 38%-ը): Վերջին տասնամյակում հայաստանյան ՏՏ շուկա են ներգրավվել բազմաթիվ օտարերկրյա ներդրողներ: 2003թ. համեմատ զգալիորեն աճել են ոլորտում եվրոպական (17-23%) և ԱՄՆ ներդրումների (70%) մասնաբաժինները:

ՏՏ ոլորտի ընկերությունների շուրջ 55%-ի արտադրանքն ու ծառայություններն ունեն արտահանման ուղղվածություն՝ ավելի քան 20 երկրներ: 2009թ. ոլորտի արտահանման ծավալները կազմել են շուրջ 71.5 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման ծավալների շուրջ 49%-ը բաժին է ընկնում ԱՄՆ-ին և Կանադային, 24%-ը՝ Եվրամիության երկրներին, 16%-ը՝ Ռուսաստանին և ԱՊՀ երկրներին:

2009թ. դրությամբ ՏՏ ոլորտում ներգրավված են մոտ 5200 մասնագետ: 2006թ. համեմատ այս ցուցանիշը աճել է տարեկան 13.6%-ով:

Այնուամենայնիվ հայաստանյան ՏՏ ոլորտի ներկայիս իրավիճակը բնութագրվում է որպես հիմնականում մասնակի նվաճումների ամբողջություն, որի արդյունքները միջազգային շուկայի մասշտաբներով էական չի կարելի համարել:

Վերջին տարիների ընթացքում Հայաստանը ձգտում է դառնալ առաջատար երկիր ընտրված թիրախային ՏՏ շուկաներում, ինչպես նաև ունենալ զարգացած և առաջադեմ տեղեկատվական հասարակություն ու գիտելիքների վրա հիմնված տնտեսություն: Այս նպատակին հասնելու համար Հայաստանը պետք է արտապատվիրվող ցածր արժեք ունեցող ՏՏ ծառայություններ մատուցող երկրից դառնա բարձր արժեքով առաջատար ՏՏ արտադրանք և ծառայություններ տրամադրող երկիր:

Կառավարությունը հետևողականորեն և աստիճանական կերպով շարունակում է աջակցել ոլորտի հետագա զարգացմանը:

2007թ. հունվարին Էդինբուրգ քաղաքում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և <Մայքրոսոֆտ> կորպորացիայի միջև Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում Համագործակցության պայմանագիր, որով <Մայքրոսոֆտ> կորպորացիան պարտավորվում է Հայաստանում իրականացնել մի շարք կրթական, ուսումնական ծրագրեր, հիմնել Մայքրոսոֆտ նորարարական տեխնոլոգիաների կենտրոն, համագործակցել էլեկտրոնային կառավարության ծառայությունների մշակման ուղղությամբ և այլն: Նախատեսված գործունեությունը համակարգելու, նախաձեռնություններ առաջարկելու, պայմանագրի դրույթների իրագործումը՝ մասնավորապես, ճյուղային գործարքային պայմանագրերի մշակումն ու կնքումը

ապահովելու և վերահսկելու նպատակով ստեղծվել է ՀՀ կառավարության և <Մայքրոսոֆտ> կորպորացիայի միջև համատեղ աշխատանքային խումբ:

Ներկայումս արդեն նախագծվել և 2008թ. կբացվի Մայքրոսոֆտ նորարարական տեխնոլոգիաների կենտրոնը, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը իրականացրել է <Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության արշավ> ծրագիրը, որի արդյունքում ձևավորված Հեղինակային և հարակից իրավունքների կիրառման մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները ներկայացվել են աշխատանքային խմբի քննարկմանը, ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ստորագրվել է <Microsoft Campus and School Agreement> լիցենզավորման պայմանագիրը:

2007թ. նոյեմբերին ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր <Նեշնլ ինսթրումենթս> ամերիկյան ընկերության հետ: Հուշագրով ամրագրվեց մեր երկրում գիտահետազոտական և կրթական համատեղ ծրագրեր իրականացնելու կողմերի պատրաստակամությունը: Գործնական առաջին քայլերն արդեն արված են՝ ամերիկյան ընկերությունը Երևանում բացել է տարածաշրջանային առաջին կենտրոնը՝ այսինքն ընդլայնելով իր գործունեությունը ԱՊՀ տարածքում: Նորաստեղծ կենտրոնն արդեն պատվերներ է ընդունում:

2007թ. դեկտեմբերի 26-ին կնքվել է համաձայնագիր՝ <Միավորված Ազգերի Կազմակերպության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև <S2S և զարգացման գլոբալ ալյանսի> հետ համագործակցության մասին>, համաձայն որի ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ պետական բյուջեից Գլոբալ Ալյանսին է փոխանցվել 50000 ԱՄՆ դոլարի չափով միանվագ օժանդակություն:

Ալյանսի հետ համագործակցության շրջանակներում՝ արդեն իսկ 2007թ. նոյեմբերին Հայաստանում ձևավորվել է <Երիտասարդությունը S2S զարգացման համար> համաշխարհային ցանցը:

Համաձայնագրի ստորագրմամբ հնարավորություն է ընձեռնվել ոչ միայն ապահովել վերոնշյալ կենտրոնի հետագա պահպանումն ու զարգացումը, այլև անդամակցել միջազգային մասնագիտական ցանցին, ինչը թույլ կտա Հայաստանի Հանրապետությանը մասնակցել S2S ոլորտում նախաձեռնվող միջազգային միջոցառումներին, ներգրավվել S2S զարգացման ընդհանուր գործընթացում և բարձրացնել Հայաստանի վարկանիշը որպես զարգացած S2S ոլորտ ունեցող երկիր:

Հնդկաստանի կառավարության կողմից Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի հիմնադրման հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով 2007թ. օգոստոսի 5-ից 11-ը Հայաստան են ժամանել Նյու Դելիի <Center for Development of Advanced Computing> տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի մասնագետները, որոնց հետ կազմակերպվել են մի շարք հանդիպում-քննարկումներ նախարարությունում, ինչպես նաև այլ պետական մարմինների, մասնավոր ընկերությունների և բուհերի ներկայացուցիչների հետ:

Եգիպտոսի Արաբական Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում փորձի փոխանակման, համագործակցության եզրերի հաստատման և տեղեկատվական տեխնոլոգիաների կոորդինացման ոլորտի եգիպտական փորձի ուսումնասիրման նպատակով 2007թ. դեկտեմբերի 8-13-ը Եգիպտոսի Արաբական Հանրապետություն է գործուղվել պատվիրակություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալի ղեկավարությամբ:

Հիմնվել են երկու SS ներկայացուցչություններ Կանադայում և Եվրոպայում, որոնք աջակցել են մի շարք համատեղ ծրագրերի կայացմանը կանադական, եվրոպական և հայկական SS ընկերությունների միջև, ինչպես նաև խրախուսել են բազմաթիվ բիզնես կապերի ստեղծմանը՝ առաջիկայում նոր պայմանագրեր կնքելու ակնկալիքով:

Իրականացվել են Հայաստանի առաջխաղացման միջոցառումներ ուղղված Հայաստանի նկարագրի ձևավորմանը և ճանաչմանը որպես SS երկիր: Այդ նպատակով Հայաստանի SS ոլորտը և ընկերությունները ներկայացվել են խոշոր և կարևոր միջազգային ցուցահանդեսներին և միջոցառումներին, ինչպես նաև կատարվել են մի շարք հետազոտություններ և թողարկվել SS ոլորտին առընչվող վերլուծական նյութեր: Բացի այդ, կազմակերպվել են մի շարք միջոցառումներ Հայաստանում և դրանց շարքում ՀՀ կառավարության կողմից հայտարարված SS ամսվա շրջանակում անցկացված բազմաթիվ միջոցառումները: 2006-2007թթ. <Դիջիթեք> ամենամյա տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ցուցահանդեսի անցկացման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համաֆինանսավորում:

2005-2007թթ. հաջողությամբ իրականացվել են ծրագրեր՝ ուղղված SS ոլորտի մասնագետների պրոֆեսիոնալ կատարելագործմանը, տեխնիկական ու բիզնես հմտությունների զարգացմանը և նոր մասնագիտացումների ձեռքբերմանը: Օտարերկրյա և տեղական փորձագետների հետ համատեղ կազմակերպվել են տեխնիկական և բիզնես թեմաներով բազմաթիվ դասընթացներ:

Հայաստանի մի շարք ԲՈՒՀ-երում ներդրվել են նոր դասընթացներ և մասնագիտություններ՝ մասնավոր հատվածի հետ համատեղ ծրագրերի իրականացման շրջանակում:

2007թ.-ից սկսած իրականացվել է պիլոտային ծրագիր ՀՀ Սյունիքի մարզում՝ հեռահար ուսուցման ներդրման ուղղությամբ: Ծրագրի իրականացման հիմնական նպատակն է նպաստել Սյունիքի մարզի 5 դպրոցներում համապատասխան տեխնիկական և ծրագրային հագեցվածության ապահովմանը, դրանց միջոցով էլեկտրոնային գրագիտության բարձրացմանը և ընդհանուր դասավանդման գործընթացի բարելավմանը: ՀՀ կառավարության որոշմամբ 2007թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվել է գումար ծրագրի իրականացման համար:

2008թ.-ին ՀՀ պետական բյուջեով հատկացվել էր 110 մլն դրամ՝ որպես պետական աջակցություն՝ ուղղված Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը:

2009թ.-ին ՀՀ պետական բյուջեով հատկացվել էր 170 մլն դրամ՝ որպես պետական աջակցություն՝ ուղղված Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը: Նշված ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ միջոցառումները.

1. <SS ոլորտի հետազոտություն, ոլորտի ներկա իրավիճակի վերլուծություն, ոլորտի ցուցանիշների և ձեռնարկությունների վերաբերյալ ուղեցույցի պատրաստում> միջոցառման շրջանակում իրականացվել է SS ոլորտի կազմակերպությունների վիճակագրական տվյալների հավաքագրման պիլոտային ծրագրի մեկնարկ: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎՕ) այլ գործառույթների հետ մեկտեղ իրականացնում է նաև իրավաբանական անձանցից որոշակի տվյալների հավաքագրում և դրանց հիման վրա բազմաբնույթ վերլուծությունների կատարման գործառույթ: Այս գործառույթի իրականացմանը, ինչպես նաև ձեռնարկություններին և կազմակերպություններին աջակցելու համար ստեղծվել է <ICT STAT> վիճակագրական համակարգը, որը հնարավորություն է տալիս, օգտագործելով վեբ տեխնոլոգիաները, անհրաժեշտ տեղեկատվությունը կուտակել էլեկտրոնային տարբերակով: Միջոցառման շրջանակում նաև իրականացվել է ոլորտի հետազոտություն և վերլուծություն, կատարվել են SS ոլորտի ցուցանիշների թարմացման աշխատանքները: Պատրաստվել է SS ընկերությունների ուղեցույցի առցանց տարբերակ: Այս միջոցառման իրականացման համար պետական բյուջեից նախատեսվել էր 10 000 հազ. դրամ ֆինանսավորում, որից կատարվել է մոտ 7 213.9 հազ. դրամ գումարի չափով փաստացի աշխատանք և 2786.1 հազ. դրամի տնտեսում:

2. <Արտերկրում կազմակերպվող ցուցահանդեսների, համաժողովների համաֆինանսավորում> միջոցառման շրջանակում CeBIT 2009 (Գերմանիա) ցուցահանդեսին ներկայացվել է հայաստանյան SS ոլորտը, և ապահովվել է հայկական պատվիրակության մասնակցությունը: 2009թ. մարտի 3-ից 9-ը Գերմանիայի Հանովեր քաղաքում անցկացվել է CeBIT 2009-ը, որին Հայաստանից մասնակցել են հինգ կազմակերպություններ՝ Ինֆորմացիոն Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միությունը՝ ի դեմս իր դուստր ձեռնարկության՝ <Յու Այ Թի Ի Էքսպո> ՄՊԸ՝ որպես Հայաստանի տաղավարի կազմակերպիչ, ինչպես նաև ներկայացնելով տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի հետևյալ ընկերություններին: <Դիվելըփ Ուեյե>, <Սմարթ Միսթեմս>, <Մակադամյան>, <Մորսիո>:

Միջոցառման իրականացման համար նախատեսված էր 8000 հազ. դրամ, իսկ փաստացի կատարված ծախսերը կազմել են 4170 հազ. դրամ:

Նույն միջոցառման շրջանակում կազմակերպվել է նաև <ԱրմԹեք 2009> Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի գլոբալ համաժողովը ԱՄՆ-ում, որտեղ ապահովվել է հայաստանյան SS ոլորտի ներկայացումը և հայկական պատվիրակության մասնակցությունը: Միջոցառման իրականացման համար նախատեսված էր 4000 հազ. դրամ, սակայն միջոցառման կարևորությունից ելնելով՝ ծրագրի մյուս միջոցառումների համար նախատեսված գումարների խնայողության հաշվին, նշված միջոցառման անցկացման համար տրամադրվել է 19 000 հազ. դրամ:

3. <Հայաստանում կազմակերպվող ցուցահանդեսներ, համաժողովներ> միջոցառման շրջանակում անց են կացվել մի շարք համաժողովներ, ցուցահանդեսներ, մրցույթներ: Դրանք են՝

2009թ. հոկտեմբերի 2-4-ը Երևանի Կ. Դեմիրճյանի անվ. Մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ ամենամյա <ԴիջիԹեք 2009> բարձր, տեղեկատվական և հեռահաղորդակցման

տեխնոլոգիաների ցուցահանդեսը: Անցած տարիների համեմատ այս տարի արձանագրվել է ցուցահանդեսի մասնակիցների 15 տոկոս աճ, մասնավորապես, մասնակցել են 52 ընկերություն, որոնց թվում էր առաջին անգամ Դիջիթեքին մասնակցող ամերիկյան <Օրակլ> ընկերությունը:

2009թ. հունիսի 19-20-ը Երևանում անց է կացվել <Դիջիթեք բիզնես 2009 ֆորումը> Միջոցառման բացումը տեղի ունեցավ հունիսի 19-ին Արմենիա Մարիոթ հյունարոցի Տիգրան Մեծ սրահում: <Դիջիթեք բիզնես ֆորումի> նպատակն է աջակցել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումների գործընթացին բիզնեսի ամենատարբեր ոլորտներում, մեկ հովանու ներքո ներկայացնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների բոլոր այն ապրանքները և ծառայությունները, որոնք նախատեսված են տնտեսության այլ ոլորտների արդիականացման համար: Բիզնես ֆորումին մասնակցում էին Հայաստանում գործող շուրջ 30 ընկերություններ, այցելուների թվաքանակը կազմեց մոտ 1500: Որպես կից միջոցառում՝ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը և <Մայքրոսոֆթ Արեյ> ընկերությունը համատեղ կազմակերպեցին նաև <Մայքրոսոֆթ Ինովացիոն համաժողով> միջոցառումը: Միջոցառման իրականացման համար նախատեսված էր 4500 հազ. դրամ:

2009թ. օգոստոսի 10-ին հայտարարվել է <Բիզնես համագործակցության աջակցման> մրցույթը, որն ուղղված է խթանելու մասնավոր ընկերությունների և գիտնականների թիմերի միջև գործընկերությունը գիտահետազոտական ոլորտում՝ երկու կողմերի համար տնտեսապես փոխշահավետ նոր հնարավորություններ զարգացնելու նպատակով: Ներկայացվել են տեղեկատվական, բարձր և բիո- տեխնոլոգիաների ոլորտներին առնչվող 22 առաջարկ: Բոլոր հայտերը գնահատվել են տեխնիկական և գործարար մասնագետներից կազմված փորձագիտական խմբի կողմից: Գնահատող խմբում ներգրավված էին տեղական և ԱՄՆ մասնագետներ: Գնահատման արդյունքում ընտրվել են 14 առաջարկներ, որոնք անցել են 2-րդ փուլ: Կիսաեզրափակիչ անցած թիմերի համար կազմակերպվել են 2 վերապատրաստման դասընթացներ: Դասընթացների հետ մեկտեղ, թիմերը ստացել են անհատական խորհրդատվություն Վենչուրային համաժողովում իրենց ծրագրերի ներկայացումները պատրաստելու վերաբերյալ:

Դեկտեմբերի 2-ին Անի Պլազա հյուրանոցում կազմակերպվել է Վենչուրային համաժողովի ամփոփիչ կոնֆերանս: Համաժողովին ներկայացվել են 14 առաջարկներ: Հայտերը գնահատվել են տեխնիկական և գործարար մասնագետներից կազմված խմբի կողմից: Գնահատող խմբում ներգրավված էին 2 տեղական և 3 ԱՄՆ մասնագետներ: Գնահատման արդյունքում ընտրվել են 5 հաղթող թիմեր, որոնցից յուրաքանչյուրը ստացել է 15 000 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ դրամաշնորհ-մրցանակ: Ընդ որում, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը համաֆինանսավորել է բոլոր մրցանակների 50%-ը: ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և զարգացման հիմնադրամի դրամաշնորհ-մրցանակների համաֆինանսավորումը կազմում է 37500 ԱՄՆ դոլար: Վերջինս համաֆինանսավորել է նաև ԱՄՆ գնահատող փորձագետներին: Միջոցառման իրականացման նպատակով հատկացվել է 16,935.9 հազ. դրամ: <Հայաստանում

կազմակերպվող ցուցահանդեսներ, համաժողովներ> միջոցառման շրջանակում նաև անց է կացվել հայկական Ծրագրավորման բաց մրցույթ, որի իրականացման նպատակն էր՝ ի հայտ բերել Հայաստանում բնակվող տաղանդավոր երիտասարդներին՝ ծրագրային ապահովման զարգացման բնագավառում: Մրցույթը իրականացվել է 3 հիմնական հաջորդական փուլերով՝ անհատական մրցույթ, ուսումնական ճամբար, թիմային մրցույթ: Ընդհանուր առմամբ գրանցվել էին 120 մասնակից, սակայն մասնակցեցին 78 մասնակից: Լավագույն 33 մասնակիցները մասնակցեցին թիմային մրցույթին: Մրցույթի լավագույն մասնակիցներին հոգի և հաղթողներին տրվեցին վկայագրեր և դրամային մրցանակներ: Միջոցառման իրականացման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է մոտ 5,505.1 հազ. դրամ :

<Հայաստանի Հանրապետության վարչապետի բարձր հովանու ներքո իրականացվող <Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս> խորագրով միջոցառումների կազմակերպման համաֆինանսավորում> միջոցառման շրջանակում նախատեսված միջոցառումներից պետական բյուջեից ֆինանսավորվել է <Կումայրուտերային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ՝ գիտաժողովը և Տեսողության խանգարումով հաշմանդամները համակարգչի դեմ> մրցույթը: Միջոցառման իրականացման համար տրամադրվել է 2,228.8 հազ. դրամ :

<ՏՏ-ի ոլորտի մասնավոր հատվածի հետ «ՏՏ լիդերները՝ առանց փողկապների արտագնա հանդիպում-քննարկումների ֆինանսավորում> միջոցառման շրջանակում կազմակերպվել են 5 արտագնա հանդիպում-քննարկումներ Հայաստանում: Միջոցառման իրականացման համար նախատեսված էր 2000 հազ. դրամ:

2009թ. հունվարից սկսվել են <Հայաստանի Ռոբոտների Բաց Առաջնություն> 2009 և 2010թթ.-ներին նախատեսվող մրցույթների կանոնակարգերի մշակումը: 2009թ.-ին նախատեսվում է անցկացնել հետևյալ մրցույթները՝ ռոբոտների համակարգչային սիմուլյացիա, գծին հետևող ռոբոտներ, իրեր տարբերակող և դասակարգող ռոբոտներ: 2009թ. հոկտեմբերի 2-ից 4-ը Դիջիթալ ցուցահանդեսի շրջանակում անցկացվեց Գծին հետևող ռոբոտների մրցույթը, որի հաղթող ճանաչվեց Աուտոտեք թիմը, որը նվազագույն ժամանակում առանց սխալների իրականացրեց իր առջև դրված խնդիրը: Միջոցառման իրականացման համար ծախսվել է 3,491.7 հազ. դրամ:

4. <Միջազգային համագործակցություն> միջոցառման շրջանակում իրականացվել են <Հայ-հնդկական տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնի հիմնում> <Մայքրոսոֆթ> ինովացիոն կենտրոնի հիմնում>միջոցառումները:

<Մայքրոսոֆթ> ինովացիոն կենտրոնի հիմնում> ծրագրի իրականացման համար ամփոփվել և վերջնական տեսքի է բերվել ծրագրի հայեցակարգը, իրականացման և ֆինանսական պլանները, ծրագրի իրականացման համար բանակցություններ են տարվել դոնոր կազմակերպությունների հետ, որի արդյունքում ստորագրվել է դրամաշնորհային համաձայնագիր ԱՄՆ ՄԶԳ-ի հետ՝ 849,870 ԱՄՆ դոլար գումարի չափով՝ ծրագրի իրականացման համաֆինանսավորման նպատակով: Ծրագրի ամբողջական բյուջեն կազմում է 2 187 004 ԱՄՆ դոլար, որից 1 337 134 ԱՄՆ դոլարը կտրամադրվի Մայքրոսոֆթ ընկերության կողմից: Մշակվել և տեղադրվել է կենտրոնի վեբ

կայքը, իրականացվել են կենտրոնի տարածքի նախագծման աշխատանքներ, ծրագրի իրագրկման միջոցառումների մասով նախնական աշխատանքներ են ծավալվել հեռուստաալիքների հետ համապատասխան հեռուստահաղորդումների պատրաստման ուղղությամբ, Մայքրոսոֆթի տեխնոլոգիաների դասընթացների կազմակերպման համար իրականացվել է դասախոսական անձնակազմի վարձակալություն, իրականացվել է էլեկտրոնային կրթության փորձնական համակարգի մշակում և տեստավորում և այլն: ՀՀ պետական բյուջեից հատկացվել է մոտ 28,078.8 հազ. դրամ:

<Հայ-հնդկական տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնի հիմնում> միջոցառման շրջանակում ամփոփվել են Ծրագրի նպատակները և ընդհանուր իրականացման սխեման և պլանը, մշակվել և հնդկական կողմի հետ համաձայնեցվել է Կենտրոնի համակարգչային սարքավորումների ցանկը և սերտիֆիկացիաները: Հնդկական կողմը հայտարարել է մրցույթ՝ սարքավորումների գնման նպատակով: Քննարկվել և ամփոփվել են Հնդկաստանում կազմակերպվելիք 6 դասընթացների ուղղությունները, բովանդակությունը, ժամկետային բաշխվածքը և մասնակիցների որակական չափանիշները: Հնդկաստանում վերապատրաստված 8 հայ մասնագետները կշարունակեն այդ ուղղություններով դասախոսությունները Հայաստանում՝ հայ-հնդկական տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնում: Հնդկական փորձագետների պատվիրակության Երևան այցելության ժամանակ անցկացվեցին դիմորդների որակավորման գնահատման համար հարցազրույցներ: Այցի արդյունքում մանրամասն քննարկվեցին, հստակեցվեցին և համաձայնեցվեցին ծրագրի իրականացման ժամանակացույցը, կողմերի պատասխանատվության շրջանակները, ուսումնասիրվեցին Կենտրոնի հնարավոր տարածքների տարբերակները: Որպես լավագույն տարբերակ ընտրվեց Երևանի պետական Համալսարանի կողմից առաջարկվող մոտ 300 ք.մ. տարածքը, որը սակայն հիմնովին վերանորոգման կարիք ունի: Հնդկաստանի և տեղական փորձագետների մասնակցությամբ կազմակերպվեց նաև սեմինար՝ Հնդկաստանի և տեղական փորձագետների մասնակցությամբ, որի ընթացքում ներկայացվեցին կենտրոնի հիմնական գործունեության շրջանակը, նպատակները, ուղղվածությունը: Ծրագրի շրջանակում ձևավորվել է նաև փորձնական ուսումնական լաբորատորիա Երևանի պետական համալսարանում՝ մինչև հիմնական ուսումնական ծրագրերի մեկնարկը փորձնական դասընթացներն իրականացնելու նպատակով: Միջոցառման իրականացման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 7,512.9 հազ. դրամ:

5. <Միջազգային SS կազմակերպությունների հետ (Ինթել, ԷյչՊի)՝ <Համակարգիչ բոլորի համար> ծրագրի մշակում> միջոցառումն իրականացվում է Ինթել և ԷյչՊի կազմակերպությունների հետ համատեղ: Ծրագրի նպատակն է ապահովել բնակչության համար համակարգիչների ձեռքբերման մատչելիությունը և հասանելիությունը, պատրաստել համակարգչային տեխնիկական և համապատասխան ծրագրային փաթեթներին տիրապետող աշխատուժ, մեծացնել ինտերնետի հասանելիությունը ազգաբնակչության համար, ինչպես նաև նվազեցնել ոչ-լիցենզավորված

ծրագրային փաթեթների օգտագործումը: Ծրագրի տևողությունն է մոտ 4 տարի, որի ընթացքում կստեղծվեն կոնցեպտին համապատասխան կառույցներ և բիզնես պրոցեսներ: Նախատեսվում է իրացնել մոտ 30 000 համակարգիչ, որոնք ապահովված կլինեն լիցենզավորված օպերացիոն համակարգով, ուսումնական և այլ ծրագրային փաթեթներով, ինչպես նաև մինչև 3 ամիս անվճար օգտվելու հնարավորությամբ: Հիմնական ծրագրին նախապատրաստվելու համար մշակվել է պիլոտային ծրագիր, որը կիրականացվի Երևանում, Գյումրիում և Վանաձորում: Պիլոտային փուլը կօգնի ավելի հստակորեն պատկերացնել ծրագիրը և պատրաստել ծրագրի գործընկերներին, վաճառականներին, բանկերին, ինչպես նաև բնակչությանը՝ հիմնական ծրագրի իրագործմանը: Ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 9,037.9 հազ. դրամ:

6. <Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ> բաց բաժնետիրական ընկերության ֆինանսավորում> միջոցառման իրականացման նպատակով նախատեսվել է 30 000 հազ. դրամ, որի շրջանակում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Հիմնվել է ՀՀ-ում էլեկտրոնային ստորագրություն տրամադրող և սպասարկող ընկերություն, իրականացվել է ընկերության անձնակազմի ընտրություն. հայտարարվել է մրցույթ թափուր աշխատատեղերի համար համաձայն պլանի: Ընկերության գրեթե ողջ անձնակազմը համալրված է: Կնքվել է պայմանագիր ՀՀ կառավարության աշխատակազմի հետ՝ CoSign էլեկտրոնային ստորագրությունների ապարատա-ծրագրային սարքավորման սպասարկման և շահագործման հետ կապված խնդիրները պարզաբանելու նպատակով: ԷԿԵՆԳ ԲԲԸ-ում տեղադրվել է CoSign ծրագրի Admin ծրագրային ապահովումը, հաստատվել է էլեկտրոնային ստորագրության տրամադրման ընթացակարգը և անհրաժեշտ փաստաթղթերը: Հստակեցվել է կենսաչափական փաստաթղթերի համակարգի և հավաստագրման կենտրոնի ներդրման վերաբերյալ տեխնիկական առաջադրանքների կազմման համար անհրաժեշտ ISO միջազգային ստանդարտների ցանկը: ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ-ում կենսաչափական անձնագրերի, նույնականացման քարտերի և հավաստագրման կենտրոնի ներդրման ծրագրի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների ամփոփ տարբերակը: Ընկերության կողմից 177 էլեկտրոնային ստորագրություն, էլեկտրոնային ստորագրությունների տրամադրման նպատակով իսրայելական Ալգորիտմիկ Ռիսերչ ՍՊԸ-ից ձեռք է բերվել 400 հավաստագիր:

Նշված բոլոր միջոցառումներն ուղղված են եղել երկրում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, հասարակության իրազեկմանը հայաստանյան ոլորտի նվաճումների և ձեռքբերումների վերաբերյալ:

1.2.5. Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու պետական աջակցության ծրագրի զարգացման միտումները

Քաղաքը մշակույթային, կրթական և արդյունաբերական հարուստ ավանդույթներ ունի: Գյումրիում են գտնվում 5 պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղեր և բարձրագույն ուսումնական 3 տեղական հաստատություններ: Գյումրիում զարգացած են թեթև

արդյունաբերությունը, ոսկեգործությունը, մեքենաշինությունը և գործիքաշինությունը, մեխանիկական ճարտարագիտությունը, արվեստները և արհեստները:

Գյումրիում տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտը մնում է գտնվել զարգացման շատ վաղ փուլում: Երևանում գործող SS ոլորտի մի շարք ընկերություններ վերջին մի քանի տարիներին որոշակի գործունեություն են ծավալել Գյումրիում, որը Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի օժանդակությամբ չիպերի նախագծման և ինտերնետային ծրագրերի ոլորտում իրականացված վերապատրաստման ծրագրերի ուղղակի արդյունք է: Բացի այդ, գործում են տեղական մի քանի այլ ընկերություններ, որոնք տեղացի հաճախորդներին մատուցում են ինտերնետային ծառայություններ, համակարգչային սարքավորումների վաճառք և տեխնիկական սպասարկում:

Ներկա վիճակում, Գյումրիում գործող բոլոր ձեռնարկությունները համարվում են փոքր ու միջին ձեռնարկություններ: Թողարկվող ամբողջ արդյունաբերական արտադրանքի ծավալի մինչև 70% ապահովում են մոտ 100 ձեռնարկություններ, իսկ մնացած 30% ծավալի գերակշռող մասը՝ մոտ 90%-ը, ապահովում են անհատ ձեռներեցները:

Արդյունաբերությունում զբաղվածների թիվը տատանվում է 1500-ից 4000 մարդ, կախված սեզոնային աշխատանքներից և պատվերների առկայությունից:

Աշխատողների ամենամեծ քանակությունը արդյունավետ գործող ձեռնարկություններում հասնում է մինչև 300 մարդ, իսկ ամենափոքր քանակը՝ մոտ 5 մարդ: Աշխատողների քանակության հարաբերակցությունը արդյունաբերական ոլորտում հետևյալն է՝ թեթև արդյունաբերություն՝ 14%, սննդի արդյունաբերություն 46%, մեքենաներ, մետաղական արտադրանքներ՝ 7%, կաշվե արտադրություն՝ 3%, շինարարական արտադրանքներ՝ 16%, արտադրանքներ հանքանյութերից՝ 8%, տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ 1%, ոսկերչություն՝ 5%:

Գիտատեխնիկական աշխատանքների ծավալները ըստ հետազոտության տեսակների՝

- կիրառական հետազոտություններ - 30%,
- գիտահետազոտական մշակումներ - 14%,
- գիտահետազոտական ծառայություններ - 56%:

Գիտատեխնիկական աշխատանքների ծախսերի բաշխումը ըստ աշխատանքների տեսակների՝

- գիտահետազոտական աշխատանքներ - 30%,
- կոնստրուկտորական և տեխնոլոգիական նախագծեր - 7%,
- փորձնական նմուշների պատրաստում - 7%,
- գիտատեխնիկական ծառայություններ - 56%:

Գիտատեխնիկական աշխատանքների համար ծախսերի աղբյուրներ են հանդիսացել՝

- բյուջետային միջոցներից - 94%,
- արտասահմանյան միջոցներից - 6%:

Գյումրիում գործում է 6 պետական և 2 մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններ: Ուսանողների քանակը պետական ԲՈՒՀ-ում կազմում է 6781 հոգի, իսկ մասնավոր ԲՈՒՀ-ում՝ 757 հոգի: Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի քանակը համապատասխանաբար 648 և 93 հոգի է:

Տեխնոպարկերի ստեղծման, գործունեության կազմակերպման և հետագա զարգացման արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև Գյումրի քաղաքի արդյունաբերական ու գիտաարտադրական վիճակի համեմատական վերլուծությունները՝ թույլ են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները և առաջարկությունները.

Նկատի ունենալով Գյումրի քաղաքի վերջին տարիների և ներկայիս ընդհանուր, իսկ մասնավորապես՝ տնտեսության անմխիթար վիճակը՝ արդյունաբերության և գիտության ինտեգրացման մասնագիտացված Տեխնոպարկի ստեղծումը կարելի է որակել որպես կենսական անհրաժեշտություն,

Անառարկելի է տեղական իշխանությունները և պետական կառավարման մարմինները ակտիվ մասնակցությունը Տեխնոպարկի ստեղծման, գործունեության ծավալման և հետագա զարգացման հարցերում,

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարձրացնել Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի տնտեսական ակտիվությունը, կրճատել գործազրկությունը և բարելավել բնակչության կյանքի որակը:

Տեխնոքաղաքի կազմակերպական կառուցվածքում բիզնես-ինկուբատորի ներառումը, որը իր վրա կվերցնի փոքր ձեռնարկությունների աջակցման ֆունկցիաները, Բիզնես-ինկուբատորները խիստ արդյունավետ դեր են խաղում Փոքր ձեռնարկատիրության զարգացման գործում, մրցունակ արտադրանքի առաջնորդմանը՝ ներքին ու արտաքին շուկաներ:

Տեխնոքաղաքի կայացման համար Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացմանը պետական աջակցության 2008 և 2009 թվականների ծրագրերով արդեն իսկ իրականացվել է մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և Հայ Օգնության Ֆոնդի միջև 2008թ. սեպտեմբերի 13-ին ստորագրված հուշագրի համաձայն Հայ Օգնության Ֆոնդը իրականացրել է լաբորատորիայի հիմնման համար ընտրված տարածքի վերանորոգման, կահավորման, անհրաժեշտ սարքավորումների և ծրագրային ապահովման տրամադրման և այլ աշխատանքները: Կնքվել է եռակողմ պայմանագիր ապրանքների մատակարարման վերաբերյալ Հայ Օգնության Ֆոնդի, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և «Իննովա Սոլյուշնս» ՍՊԸ-ի միջև, համաձայն որի ձեռք են բերվել ՄԱՆ տեխնոլոգիաների սարքավորումներ՝ Գյումրի քաղաքում ՄԱՆ տեխնոլոգիաների ուսումնական լաբորատորիայի հիմնման նպատակով: Պայմանագրով մատակարարվող ապրանքները <Իննովա Սոլյուշնս> ՍՊԸ-ի կողմից բերվել են Հայաստան, այժմ գտնվում են Գյումրիում:

Միջոցառման իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից 2008թ-ին հատկացվել է 21614089 դրամ գումար, որը ամբողջությամբ ծախսվել է՝ որպես մատակարարված և ընդունված ապրանքների վճարում:

2. Գյումրիում եռաչափ մոդելավորման ուսումնական լաբորատորիայի հիմնման և տեխնիկական համալրման, ուսանողների և դասախոսների ընտրության, ուսումնա-մեթոդական ձեռնարկների նախապատրաստման և սրտադրական եռաչափ մոդելավորման դասընթացների կազմակերպման համար Եռաչափ մոդելավորողների ասոցիացիային ընտրել, հարմարցրել, կահավորել է տարածքներ, վարձել են ծրագրի աշխատանքային թիմի անդամներ: Լաբորատորիայի համար ձեռք են բերվել անհրաժեշտ կահույք և տեխնիկա, նախագծվել և տեղակայվել է ցանց, նախապատրաստվել և տպագրման են հանձնվել անհրաժեշտ գրականություն, ուսումնական ձեռնարկներ՝ դասընթացների անցկացման նպատակով: 2008թ-ին լաբորատորիայում դասընթացները մեկնարկել են, իսկ 2009թ-ին կենտրոնը տվել է երկու տասնյակից ավելի շրջանավարտներ՝ որոնք ստացել են ավարտական սերտիֆիկատներ:

Միջոցառման իրականացման համար փաստացի կատարված ծախսերը կազմել են 2008թ-ին 8367 հազար դրամ և 9996 հազար դրամ 2009թ-ին:

3. Գիտահետազոտական ծրագրերի համար դրամաշնորհներ տրամադրելու համար ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ կնքվել են նվիրաբերության պայմանագրեր հետևյալ գումարների չափով՝

<Սայմոտեկ> ՍՊԸ՝ <Ընտանեկան սոնոգրաֆի և նրա հեռահաղորդակցման միջավայրի նախագծում և ծրագրավորում>- 5980000 դրամ

<Ֆայվ Դայմենշընս> ՍՊԸ՝ <Նախահաշիվների կազմման և շինարարական կազմակերպության գործունեության վարման և մոնիտորինգի <5D-Construction ծրագրային փաթեթ> - 3750000 դրամ,

<ՇՏԸ> ՍՊԸ՝ <National Instrument սարքերի պլատֆորմի վրա մշակել և պատրաստել փորձանմուշ <Խելացի տուն> մոդելի համար>- 4164000 դրամ:

4. 2009թ-ին Գյումրու տեխնոպարկի համար մշակված բիզնես պլանի հիմքի վրա ձևավորվել է Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամը, որը նաև հանդիսանում է Տեխնոպարկի կառավարման գրասենյակ: Տեխնոպարկի կառավարման գրասենյակը կհամակարգի և կղեկավարի տեխնոպարկի նախագծման և հիմնադրման աշխատանքները Գյումրիում:

5. Գյումրիում նոր ուսումնական լաբորատորիաների, մասնավորապես, ոսկերչության և հագուստի արտադրության դիզայնի և ուսումնական կենտրոնի ստեղծման նպատակով 2009թ-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության խնդրանքով ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության դեսպանատունը պատրաստակամություն է հայտնել համագործակցելու և որպես գործընկեր առաջարկվել է իտալական <Եվրոպական դիզայնի ինստիտուտը>: Ինստիտուտի հետ հետագա համագործակցության շրջանակները և ձևաչափը տեղում քննարկելու նպատակով ՀՀ Էկոնոմիկայի

նախարարությունը ինստիտուտի ներկայացուցիչներին հրավիրել է Հայաստան: Այցի կազմակերպման և ինստիտուտի ներկայացուցիչների կեցության խնդիրների հոգալու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը կնքել է պայմանագիր <Շոաչափ մոդելավորողների հայկական ասոցիացիա> հասարակական կազմակերպության հետ՝ նշված միջոցառումները իրականացնելու նպատակով: Այցի ընթացքում Եվրոպական դիզայնի ինստիտուտի պատվիրակությունը ունեցել է հանդիպումներ Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի ղեկավարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարի և գործարարների հետ, ուսումնասիրել է Գյումրիում մասնաճյուղ ստեղծելու հեռանկարները և կազմել է ուսումնական պլան և նախահաշիվ:

1.2.6. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի զարգացման միտումները.

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը հիմնադրվել է 2008 թ.: Հիմնադրամը ակտիվ գործունեություն է ծավալել 2009թ-ին: Համալրվել է հիմնադրամի աշխատակազմը, աշխատակիցների քանակը հասցնելով 3-ից մինչև 13-ը:

2009թ-ի ընթացքում խոշորագույն նվաճումն է հանդիսանում «Տաթևի վերածնունդ և վերակառուցում» ծրագրի շրջանակներում Տաթևի վանքի վերակառուցման աշխատանքների մեկնարկը և ճուրհակառուցման իրականացումը: Իրականացվող ծրագրերի ընդհանուր արժեքն է 20 մլն Եվրո:

2009թ-ին գրանցվել է առաջընթաց Հայաստանի միջուկային բժշկության զարգացման ոլորտում, ինչի հետևանքով համաձայնություններ են ձեռք բերվել արտադրող ընկերությունների հետ և կազմվել են բիզնես տարբերակներ Երևանի ֆիզիկայի ինստիտուտում ցիկլոտրոնի տեղադրման և գործարկման, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորման ապահովման վերաբերյալ:

2009թ-ի ընթացքում Հայաստանում ազգային լայնաշերտ հիմնացանցի ներդրման ուղղությամբ խոշորագույն նվաճումն է հանդիսանում <Տեխնոլոգիաների մրցունակության բարձրացման ծրագրի> նախապատրաստման համար հայաստանյան հեռահաղորդակցության ոլորտի բազմակողմանի վերլուծության խորհրդատվական առաջադրանքի մեկնարկը՝ համապատասխան իրականացնող ընկերության ընտրությունից հետո: Խորհրդատվական առաջադրանքի ընդհանուր արժեքն է 190.000 (հարյուր իննսուն հազար) ԱՄՆ դոլար:

1.3. Հիմնական խնդիրները

1.3.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ընդհանուր խնդիրները.

ՓՄՁ ոլորտի վերջին տարիների զարգացման միտումների հետ մեկտեղ ՓՄՁ ոլորտի փորձագիտական ուսումնասիրությունների և վարչական մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնց շարունակում են բախվել ՓՄՁ սուբյեկտները: Այդ հիմնախնդիրները պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, մասնավորապես, ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի

մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններով, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորման հետ կապված խնդիրներով, Հայաստանի Հանրապետության մի շարք տարածաշրջաններում ՓՄՁ աջակցող ենթակառուցվածքների բացակայությամբ և/կամ դրանց թուլությամբ, ինչպես նաև սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների պակասով:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականության արդյունքում վերջին մի քանի տարիների ընթացքում դրական փոփոխություններ են կատարվել ՓՄՁ ոլորտի կառուցվածքում, որոնք դրակապես նոր հարթություն են տեղափոխել ՓՄՁ սուբյեկտների գործունեությանն առնչվող հիմնախնդիրները՝ դրանց դրսևորման եղանակների և ոլորտի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

Չնայած նրան, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում հիմնականում լուծվել են ՓՄՁ սուբյեկտների գործունեությանը և զարգացմանը խոչընդոտող բազմաթիվ հիմնախնդիրներ ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) և տեխնիկական աջակցության ուղղություններով, երկրում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք համառոտ ներկայացված են ստորև.

- ձեռնարկատիրական գործունեության խթանման համապատասխան ենթակառուցվածքների և մեխանիզմների անբավարարություն,

- ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիություն՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ, ինչը լուրջ խնդիր է հանդիսանում հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ սուբյեկտների համար,

- սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների պակաս,

- գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններ,

- ՓՄՁ սուբյեկտների գործունեության միջազգայնացման, վերջիններիս կողմից թողարկվող արտադրանքի արտահանման հնարավորությունների պակաս:

1.3.2. Զբոսաշրջության ոլորտի խնդիրները.

Զբոսաշրջությունը հռչակված լինելով /<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին> ՀՀ օրենքի 3-րդ հոդված/ տնտեսության գերակա ճյուղերից մեկը ունի հիմնախնդիր զարգանալու, ապահովելով նոր աշխատատեղեր և պետական բյուջե արտարժույթի հոսքեր, բնակչության կենսամակարդակի բարձրացում, աղքատության աստիճանի կրճատում (համահունչ է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի 236 կետի):

Զբոսաշրջության ոլորտի կարևոր խնդիրներից է զբոսաշրջային գործունեության ապակենտրոնացումը մայրաքաղաքից դեպի Հայաստանի մարզեր նպաստելով տնտեսության տարածքային զարգացմանը (Կայուն զարգացման ծրագրի 237 կետ):

Նոր զբոսաշրջային կենտրոնների հայտարարումը և զարգացումը, նոր զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծումը, զբոսաշրջության այլընտրանքային ձևերի զարգացումը հանդիսանում են այն խնդիրները, որոնց լուծմանը ուղղված են լինելու առաջարկվող ծրագրային միջոցառումները (Կայուն զարգացման ծրագրի 238 կետ):

Միաժամանակ հաշվի առնելով համաշխարհային զբոսաշրջության զարգացման միտումները և նախորդ տարիներին Հայաստանում զբոսաշրջության զարգացման պետական ծրագրերի իրականացման արդյունքների վերլուծությունը բացահայտել են լուծում պահանջող խնդիրներ`

ա) իրականացնել արդյունավետ մարքեթինգային քաղաքականություն զբոսաշրջության ոլորտում` միջազգային զբոսաշրջային շուկայում պատշաճ ներկայացնել հայրենական զբոսաշրջային արդյունքը: Այս բնագավառում կապահովվի մասնակցություն հանրահայտ զբոսաշրջային ցուցահանդեսներին` առնվազն տարեկան 8-10 ցուցահանդեսի, յուրաքանչյուրին առնվազն 15 տուրօպերատորների մասնակցությամբ, յուրաքանչյուրի կողմից առնվազն 3-5 պայմանավորվածություն, ինչի արդյունքում կապահովվի Հայաստան միջազգային զբոսաշրջիկների աճի տեմպի պահպանման մոտ 20% չափով:

Ստեղծելով տարեկան մի քանի հազար գովազդային նյութեր, տեսանյութեր, ֆիլմեր, հաղորդաշարեր կատարելագործվում է գովազդատեղեկատվական համակարգը և զբոսաշրջիկը ստանում է պատշաճ որակի, բազմալեզու նյութեր, որոնք առավել գրավիչ են դարձնում հայկական զբոսաշրջային արդյունքը:

բ) ապահովել հայրենական զբոսաշրջային արդյունքի որակի բարձրացումը և մրցունակությունը միջազգային զբոսաշրջային շուկայում.

տույն խնդրի լուծմանը ուղղված իրականացվում են.

- զբոսաշրջային գործունեության լիցենզավորում և զարգացման գործընթացներին զուգընթաց յուրաքանչյուր տարի մոտ 20 նոր զբոսավար իր որակյալ ծառայությունները կմատուցի զբոսաշրջիկների.

- հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավարման գործընթացի շրջանակներում տարեկան առնվազն 15 հյուրանոցային օբյեկտ կստանան որակավորման վկայականներ, ապահովելով հյուրանոցային ծառայությունների բարձր որակ:

գ) ապահովել Հայաստանի ինտեգրումը համաշխարհային զբոսաշրջային շուկա, ակտիվ և արդյունավետ միջազգային համագործակցությունը: Հայաստանի անդամակցությունը ՄԱԿ Համաշխարհային Զբոսաշրջության Կազմակերպությանը ենթադրում է ակտիվ մասնակցությունը կազմակերպվող միջոցառումների` Գլխավոր ասամբլեաներին, մի շարք հանձնաժողովներին: Ենթադրվում է նաև ակտիվ մասնակցությունը մի շարք այլ միջազգային և տարածաշրջանային

կազմակերպությունների զբոսաշրջային ոլորտի միջոցառումներին, ինչպես նաև զարգացման ծրագրերին:

Արդյունավետ օգտագործելով Հայաստանի զբոսաշրջային ներուժը, ակտիվորեն զարգացնելով և կատարելագործելով ոլորտի գովազդատեղեկատվական ապահովման համակարգը, ամրապնդելով նյութական բազան, կրճատելով ոլորտում մասնագետ կադրերի պակասը և ձեռք բերելով զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ աջակցություն ոչ պետական այլ աղբյուրներից՝ կապահովվեն ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվաքանակի տարեկան աճ միջինը 15-20% չափով, կստեղծվեն պայմաններ Հայաստանի ամբողջ տարածքում մշակութային և բնական ժառանգության պահպանման և վերականգնման համար, մարզերում, քաղաքներում և գյուղերում կստեղծվեն զբոսաշրջության և հանգստի կենտրոններ:

1.3.3. Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ոլորտի խնդիրները.

ՀՀ ստանդարտացման բնագավառում հրատապ են հետևյալ հիմնախնդիրները՝

- մարդու կյանքի և առողջության, նրա գույքի, շրջակա միջավայրի անվտանգության ապահովման աջակցումը տեխնիկական օրենսդրության բարեփոխմանը՝ միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ՝ տեխնիկական կանոնակարգերի և ազգային ստանդարտների մշակման և ընդունման, ինչպես նաև գործող տեխնիկական կանոնակարգերի և ազգային ստանդարտների արդիականացման միջոցով.

- ներքին և արտաքին առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը և միջազգային առևտրում մասնակցելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը.

- տեխնիկական և տեղեկատվական համատեղելիության, արտադրանքի համափոխարինելիության և ռեսուրսախնայողության ապահովումը.

- արտադրանքի և ծառայությունների նկատմամբ սպառողների վստահության ապահովումը և նրանց թյուրիմացության մեջ գցող գործոնների կանխարգելումը:

Թվարկված հիմնախնդիրները զգալի ազդեցություն են գործում Հայաստանի տնտեսական զարգացման ներկայիս մակարդակի վրա, քանի որ ստանդարտացումը նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքերի ստեղծման ու զարգացման ամենահիմնական գործոնն է:

1.3.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընդհանուր խնդիրները.

SS ոլորտի զարգացման միտումների հետ մեկտեղ, ոլորտի մասնավոր հետազոտությունների, փորձագիտական ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնք պայմանավորված են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով: Դրանք են, մասնավորապես, տեղեկատվական հասարակության և դրա տարբեր բաղադրիչների ձևավորման, ներդրման և զարգացման խնդիրները, SS ոլորտում ներդրումների խթանման և ձեռնարկությունների ապրանքների և ծառայությունների տեղական և միջազգային շուկաներ առաջնորդման հետ կապված խնդիրները, գործարար և տեխնիկական խորհրդատվության ստացման և կադրերի մասնագիտական ուսուցման և վերապատրաստման առկա դժվարությունները, SS մասնավոր հատվածի և կրթական

համակարգի միջև կապերի թերի զարգացումը, սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեության խթանման մեխանիզմների անբավարարությունը և/կամ համապատասխան հմտությունների պակասը:

Նշված հիմնախնդիրների հաղթահարմանն են ուղղված 2010-12թ. ընթացքում նախատեսվող ծրագրային միջոցառումները՝ կարևոր նախապայման հանդիսանալով ոլորտի զարգացման նոր ռազմավարության և երկրի ընդհանուր տնտեսական աճի ապահովման համար:

1.3.5. Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու պետական աջակցության ծրագրի ընդհանուր խնդիրները.

Ծրագրի իրականացման խնդիրները բխում են 1.1 կետում ներկայացված ՀՀ օրենքներով, որոշումներով և ծրագրերով սահմանված դրույթների պահանջներից: Դրանք հետևյալն են՝

- Ազգային ինտելեկտի համակարգի ձևավորում և համապատասխան սկզբունքների մշակում,
- Ինովացիոն համակարգի բաղկացուցիչ մասերի, ինչպիսիք են տեխնոպարկեր, տեխնոլոգիական ինկուբատորներ, վերլուծական-տեղեկատվական համակարգերի ձևավորում,
- Ինովացիոն հիմնադրամների և վենչուրային կապիտալի գործունեության ձևավորում,
- Բարելավել գործարարության միջավայրը Գյումրիում, վերացնել գործարարության կազմակերպման այն հիմնական պատճառները, որոնք խոչընդոտում են զարգացմանը,
- Բարձրացնել գործարար ծառայությունների (բիզնես-կրթության, տեղեկատվության, խորհրդատվության և այլն) տրամադրման հնարավորությունները Գյումրու ձեռներեցների համար,
- Տեղական արտադրողների շահերի պաշտպանություն, ապրանքների մրցունակության բարձրացում և միջազգային շուկայում ինտեգրման նախապայմանների ստեղծում,
- մարզային բնակչության մասնագիտական և ձեռնարկատիրական ունակությունների ձևավորում:

1.3.6. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի խնդիրները.

Զբոսաշրջության ոլորտում հրատապ է մնում մարքեթինգային քաղաքականության մշակման և իրականացման աջակցման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավումը տարբեր աղբյուրներից, այդ թվում մասնավոր ներդրումների, ինչպես նաև դրամաշնորհների և գործընկեր կազմակերպություններից հատկացումների տեսքով:

Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող 2008-2012 թվականների միջոցառումների ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինի բարելավել համագործակցությունը քաղաքականություն և ծրագրային միջամտություններ ձևավորող մարմինների և մասնավոր հատվածի շահառուների միջև մի կողմից և զբոսաշրջային արդյունքի ձևավորման մեջ կարևոր դերակատարություն ունեցող այլ ոլորտների միջև մյուս կողմից, ապահովել միջազգային առաջավոր փորձի կիրառման հնարավորությունները, ինչպես նաև

զբալիորեն բարելավել առկա զբոսաշրջային ենթակառուցվածքներն ու մարդկային կապիտալը՝ ըստ մշակվող չափանիշների ու մոդելների:

Առողջապահության ոլորտում հրատապ է մնում միջուկային բժշկության ոլորտում ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավումը տարբեր աղբյուրներից և տարբեր եղանակներով, այդ թվում վարկերի, մասնավոր ներդրումների, ինչպես նաև դրամաշնորհների և դոնորային հատկացումների տեսքով: Միջուկային բժշկության և ուռուցքաբանության ոլորտների զարգացման հայեցակարգի և իրականացման ծրագրի հաստատման դեպքում անհրաժեշտ կլինի ապահովել համապատասխան ֆինանսավորման աղբյուրները: Մասնավորապես այս ոլորտների զարգացման հայեցակարգը նշված է 2009թ. փետրվարի 19-ին ընդունված ՀՀ Կառավարության N310-Ն որոշման մեջ, ինչպես նաև 2010 թ. ալնկավվող ՀՀ կառավարության և վարչապետի համապատասխան որոշումներում և հանձնարարականներում:

Արագագործ հեռահաղորդակցության ենթակառուցվածքների ներդրման ոլորտում տեղեկատվության հասանելիության բարձրացման և էլեկտրոնային հասարակության ձևավորման ճանապարհին հրատապ է մնում հեռահաղորդակցության արագագործ ենթակառուցվածքների առկայության պահանջը: Երկրում ազգային լայնաշերտ հիմնացանցի ներդրումը հնարավոր կլինի միայն շոշափելի ֆինանսական միջոցների ներգրավման արդյունքում՝ հաշվի առնելով նաև պետական և մասնավոր հատվածների միջև գործընկերության հնարավոր տարբերակները ենթակառուցվածքների կառուցման, հետագա շահագործման և տնօրինման ընթացքում: Անհրաժեշտ է մասնավոր հատվածի ակտիվ ներդրումային մասնակցություն՝ կառավարության կողմից համապատասխան իրավական և տնտեսական խթանների ապահովման դեպքում:

2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ

Ժամանակահատվածում

2.1. Նպատակները

2.1.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ընդհանուր նպատակները.

ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության հիմնական նպատակն է պետական շարունակական աջակցությամբ նպաստել ՓՄՁ ոլորտի դերի (հեղինակության) աստիճանական բարձրացմանը երկրի սոցիալ-տնտեսական և տարածաշրջանային կայուն զարգացման ասպարեզում:

ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության նպատակներն են.

- ՓՄՁ պետական աջակցության ընդլայնումը և դրա շարունակականության ապահովումը,
- ՓՄՁ սուբյեկտների աջակցության համապատասխան ենթակառուցվածքների պահպանումը և ամրապնդումը,
- ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնումը,

- ՓՄՁ սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնումը,
- ՓՄՁ սուբյեկտների՝ գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնումը,
- գործարարությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնումը, մասնավորապես՝ սկսնակ գործարարների համար,
- ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացումը՝ դրա հաշվին նոր աշխատատեղերի ստեղծումը և երկրում աղքատության հաղթահարմանը նպաստելը,
- ՓՄՁ սուբյեկտների գործունեության միջազգայնացումը և թողարկվող արտադրանքի արտահանումը խթանող համապատասխան ծրագրերի իրականացումը և տվյալ ուղղությամբ միջազգային համագործակցության ընդլայնումը, ինչպես նաև ՓՄՁ աջակցության գործող միջազգային կառույցներին և ցանցերին ինտեգրումը:

Վերոհիշյալ նպատակները համահունչ և փոխկապակցված են ՀՀ կառավարության 2010թ-ի գործունեության ծրագրային միջոցառումների ցանկում ընդգրկված ՓՄՁ պետական աջակցության 2010թ. ծրագրի նպատակային ուղղությունների հետ, որոնք բխում են ՀՀ կառավարության գործունեության ընդհանուր նպատակներից և կրում են շարունակական ու կայուն բնույթ առնվազն միջնաժամկետ հատվածում:

Ընդ որում, վերոհիշյալ նպատակների իրագործումը նպատակաուղղված է ՓՄՁ պետական աջակցության 2010թ-ի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման (ծառայությունների մատուցման) շրջանակներում ավելի շատ ՓՄՁ սուբյեկտների (շահառուների) ներգրավմանը և նրանց ցուցաբերվող պետական աջակցության շրջանակների ընդլայնմանը:

2.1.2. Զբոսաշրջության ոլորտի նպատակները.

- Զբոսաշրջության ոլորտի 2011-2013 թթ. պետական քաղաքականության հիմնական նպատակն է մեծացնել զբոսաշրջության նեղրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում՝ պայմանավորված.

- 1) զբոսաշրջային այցելությունների քանակի աճով,
- 2) զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ,
- 3) աշխատատեղերի ստեղծմամբ:

Զբոսաշրջության ոլորտում 2011-2013 թթ. Հայաստանի զբոսաշրջային արդյունքը նորովի կներկայացվի միջազգային զբոսաշրջային շուկայում: Կամրապնդվի և կկատարելագործվի համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և ապահով երկրի նկարագիրը:

2011-2013 թթ. ծրագրային միջոցառումների շրջանակներում.

- կկատարելագործվի զբոսաշրջության ոլորտի գովազդատեղեկատվական ապահովման համակարգը,

- կապահովվի միջազգային կարևորագույն զբոսաշրջային տոնավաճառներին և ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցությունը,

- կկազմակերպվեն փառատոններ և տոնակատարություններ,

- կկազմակերպվեն Հայաստան օտարերկրյա լրագրողների և տուրօպերատորների այցելություններ,

- կիրականացվեն մարքեթինգային ուսումնասիրություններ,

- կզարգանա միջազգային համագործակցությունը,

- Հայաստանը ներկայացնող հոլովակները և ֆիլմերը կհեռարձակվեն միջազգային հեղինակավոր հեռուստաալիքներով:

- Արդյունքում`

- կապահովվի Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների աճի տեմպը` տարեկան շուրջ 10 տոկոս, կավելանան արտարժույթի մուտքերը պետական բյուջե,

- Հայաստանը կինտեգրվի համաշխարհային զբոսաշրջային շուկա,

- կբարձրանա հայկական զբոսաշրջային արդյունքի որակը,

- կկատարվեն դրակյալ հետազոտություններ, կորոշվեն Հայաստանի զբոսաշրջային արդյունքի գերակա նպատակային շուկաները,

- կստեղծվեն նոր աշխատատեղեր:

2.1.3. Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ոլորտի նպատակները.

2011թ-ին Հայաստանի Հանրապետության ստանդարտացման բնագավառի հիմնական նպատակն է` տեխնիկական կանոնակարգերի մշակում, փորձաքննություն և գործող տեխնիկական կանոնակարգերի արդիականացում` թվով 10 հատ, ազգային ստանդարտների մշակում` թվով 55 հատ, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում` թվով 45 հատ, ստանդարտացման ազգային ֆոնդի համալրում նոր ստանդարտներով և տեղեկատվական սպասարկման աշխատանքների անընդհատ բարելավում:

2012թ-ին` տեխնիկական կանոնակարգերի մշակում, փորձաքննություն և գործող տեխնիկական կանոնակարգերի արդիականացում` թվով 12 հատ, ազգային ստանդարտների մշակում` թվով 60 հատ, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում` թվով 47

հատ, ստանդարտացման ազգային ֆոնդի համալրում նոր ստանդարտներով և տեղեկատվական սպասարկման աշխատանքների անընդհատ բարելավում:

2013թ-ին՝ տեխնիկական կանոնակարգերի մշակում, փորձաքննություն և գործող տեխնիկական կանոնակարգերի արդիականացում՝ թվով 15 հատ, ազգային ստանդարտների մշակում՝ թվով 65 հատ, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում՝ թվով 50 հատ, ստանդարտացման ազգային ֆոնդի համալրում նոր ստանդարտներով և տեղեկատվական սպասարկման աշխատանքների անընդհատ բարելավում:

2.1.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընդհանուր նպատակները.

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման և պետական ջնջման հիմնական նպատակներն են.

- ստեղծել Տեղեկատվական և գիտելիքի վրա հիմնված առաջադեմ հասարակություն՝ ՏՀՏ կատարելագործված ենթակառուցվածքներով, համակարգչային բարձր գրագիտությամբ, համակարգչային հագեցվածության և ինտերնետ հասանելիության բարձր աստիճանով, ինչպես նաև համատարած կիրառվող էլ-ծառայությունների համակարգերի և մեծածավալ տեղական ՏՏ շուկայի առկայությամբ

- ապահովել զարգացած և համաշխարհային ճանաչում ունեցող Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ՝ մեծ հավելյալ արժեք ստեղծող հետազոտական և բարդ ինժեներական լուծումներ և ծառայություններ մատուցող ընկերություններով, միջազգային շուկաներում մրցունակ տեղական ՏՏ արտադրանքով

- ապահովել մրցունակ <Հայկական ՏՏ ապրանքային նշանի>-ի ստեղծումը, դրա ներթափանցումն ու ներկայությունը համաշխարհային շուկայում և, հատկապես, աճի բարձր պոտենցիալով շուկայական թիրախային սեգմենտներում: Նպաստել ՏՀՏ ենթակառուցվածքների և տեղեկատվական հասարակության խթանման միջոցով տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների աճի և եկամուտների բարձրացմանը և գիտելիքահենք տնտեսության ձևավորմանը

- ապահովել ոլորտի արդյունավետության աճի պահպանում և առավել զարգացում (մինչև տարեկան 5% չափով)

- ապահովել որակյալ աշխատուժի աճի պահպանում և առավել զարգացում (մինչև տարեկան 5% չափով):

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝

- 1) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետազոտության, ներկա իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքում հիմնական խնդիրների և մարտահրավերների, ռազմավարական զարգացման հեռանկարների և վերջին տարիներին գրանցած նվաճումների բացահայտում և ներկայացում,

2) հայաստանյան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռքբերումները միջազգային ցուցահանդեսներում, համաժողովներում և այլ միջոցառումներում ներկայացման միջոցով Հայաստանի՝ որպես զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ ունեցող երկրի վարկանիշի բարձրացում, համաշխարհային տեղեկատվական տնտեսության մեջ ինտեգրում, գործարար կապերի ստեղծում, ներդրումների ներգրավում և դրանց ծավալների ավելացում առնվազն տարեկան 10%-ի չափով,

3) հայաստանյան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռքբերումները տեղական ցուցահանդեսներում, համաժողովներում և այլ միջոցառումներում ներկայացնելու արդյունքում հասարակական իրազեկման բարձրացում, տնտեսության այլ ճյուղերում SS լուծումների ներդրման խթանում, որի արդյունքում արտադրողականության աճի ու ապրանքների և ծառայությունների արտահանման ավելացում, Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական զարգացմանը նպաստում,

4) SS ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատման և ընդլայնման միջոցով նշված երկրների փորձի ներդրում երկրում, աշխարհի հիմնական SS շուկաներում հայկական SS ներկայացուցչությունների հիմնում և զարգացում, սփյուռքահայության հետ համագործակցության ընդլայնում, ներդրումների ներգրավում, նպատակային երկարաժամկետ ծրագրերի իրականացում և երկրի տնտեսական դաշտ համաշխարհային ճանաչում ունեցող SS ընկերությունների ներգրավում՝ վերջիններիս փորձի, հեղինակության ու կապերի շնորհիվ Հայաստանի վարկանիշի բարձրացում՝ հասցնելով այն զարգացած երկրների վարկանիշի մակարդակին,

5) բնակչության համար համակարգիչների ձեռքբերման մատչելիություն և հասանելիություն, տարեկան մինչև 5000 համակարգչի վաճառք, էլեկտրոնային գրագիտության մակարդակի բարձրացում, բնակչության կենսապայմանների բարելավում, էլեկտրոնային ծառայությունների պահանջարկի և դրանց կիրարկման խթանում, տնային տնտեսություններում համակարգչային հազեցվածությունը մինչև 40% հասցնելու ապահովում:

Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ են կառավարությունում, կրթական համակարգում և մասնավոր հատվածում իրականացնել համապատասխան բարեփոխումներ, ծրագրեր և միջոցառումներ՝ ըստ ներքոհիշյալ գերակայությունների:

2.1.5. Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու պետական աջակցության ծրագրի ընդհանուր նպատակները.

• Ծրագրի իրականացման նպատակն է Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու և Գյումրու տեխնոքաղաքի ներքո ինովացիոն համակարգի ձևավորումն է, որը բխում է սույն ծրագրի 1.1 կետում բերված ՀՀ օրենքներից, որոշումներից և ծրագրային փաստաթղթերից: Միաժամանակ տեխնոպարկի գործունեության իրականացմանը պետական աջակցության ծրագիրն ունի հետևյալ ենթանպատակները՝

- արտադրական և գիտական սուբյեկտների մտավոր, տեղեկատվական, նյութատեխնիկական ու ֆինանսական ռեսուրսների ինտեգրում և ակտիվացում՝ մարզի ու հանրապետության գիտաարտադրական ներուժի զարգացման համար.

- շուկայական տնտեսության այնպիսի մեխանիզմների ձևավորմանը, որոնք կխթանեն մրցունակ ապրանքների արտադրությունը.

- մարզում ՓՄՁ-ի սուբյեկտների ստեղծման ու զարգացման պայմանների և բարենպաստ միջավայրի ձևավորում.

- առաջադեմ տեխնոլոգիաների ձեռքբերմանն աջակցելու նպատակով ներդրումային միջոցների ներգրավում (այդ թվում՝ օտարերկրյա).

- գիտատար արտադրանք նախաձեռնողներին և արտադրողներին՝ հասցեական աջակցության տրամադրում.

- գիտատեխնիկական, մտավոր և կադրային ներուժի պահպանման ու զարգացման պայմանների ձևավորում, երիտասարդ կադրերի պատրաստում.

- օրինակելի նախատիպ հանդիսանալը հանրապետության այլ տարածքներում և մարզերում տեխնոլոգիական ուղղվածություն ունեցող տեխնոպարկերի և ինկուբատորների ստեղծման համար.

- գիտական մշակումների առևտրականացում.
- գիտակրթական, գործարար և պետական հատվածների փոխշահավետ համագործակցության զարգացում:

- Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում են՝
- մարզի տնտեսության առաջանցիկ տեմպերով աճ,
- Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական զարգացմանը, տարածքային համաչափ զարգացմանը և աղքատության հաղթահարմանը նպաստելը:

- նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքերի ստեղծում ու զարգացում,
- արտադրողականության աճի ապահովման խրախուսում,
- նոր, բարձր ավելացված արժեք ձևավորող աշխատատեղերի ստեղծում,
- ուսումնական դասընթացների անցկացում, կադրերի վերապատրաստում,
- Գիտահետազոտական ծրագրերի իրականացում, գիտահետազոտական դրամաշնորհների տրամադրում:

2.1.6. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի նպատակները.

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գլխավոր նպատակն է հասցնել ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերը երկարաժամկետ մրցունակության առավելագույն աստիճանի:

2.2. Գերակայությունները

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
2011	2012	2013		

<p>1</p>	<p>ՓՄՁ սուբյեկտների աջակցության համապատասխան ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում՝ աջակցության գործող մեխանիզմների կատարելագործման և աջակցության նոր մեխանիզմների ներդրման ճանապարհով Արտահանող կամ արտահանման ներուժ ունեցող արագ զարգացող ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվող աջակցություն Սկսնակ գործարարների ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնում ՀՀ մարզերում</p>	<p>Կայուն զարգացման ռազմավարական ծրագիր (ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշման հավելված, 1.4 Կայուն զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարական գերակայությունները, կետ 72, էջ 35), ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագիր (ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380-Ա որոշման հավելված, 4.3 տնտեսական զարգացումը, էջ 21), ՓՄՁ պետական աջակցության տարեկան (2009թ. և 2010թ.) ծրագրեր</p>
<p>2</p>	<p>Միջազգային զբոսաշրջային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության ապահովում և Հայաստանի շարունակական ինտեգրում միջազգային զբոսաշրջային շուկա</p>	<p>Հայաստանի շարունակական ինտեգրումը միջազգային զբոսաշրջային շուկա գերակա խնդիրներից է, ինչին ուղղված են ոլորտում իրականացվող ծրագրերը: ՀՀ կառավարության գործունեության 2008-2012թթ միջոցառումների ծրագրում ինտեգրումը միջազգային տնտեսական շուկա հիմնական ուղղություններից է:</p>
<p></p>	<p>Զբոսավարների և ուղեկցորդների գործունեության լիցենզավորման գործընթացի ապահովում</p>	<p>2011-2013թթ. կշարունակվի զբոսավարների և ուղեկցորդների գործունեության լիցենզավորման գործընթացը, ինչը կապահովի ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, ինչը համահունչ է ՀՀ կառավարության գործունեության 2008-2012թթ միջոցառումների ծրագրին.</p>
<p></p>	<p>Զբոսաշրջության ոլորտում որակի համակարգի կատարելագործումը և շահագործում</p>	<p>2011-2013 թթ. կշարունակվի զբոսավարների և ուղեկցորդների գործունեության լիցենզավորման գործընթացը, ինչը կապահովի ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, ինչը համահունչ է ՀՀ կառավարության գործունեության 2008-2012թթ միջոցառումների ծրագրին.</p>
<p></p>	<p>Հայաստանի ամբողջ տարածքում մշակութային և բնական ժառանգության պահպանում և վերականգնում, Հայաստանի մարզերում զբոսաշրջության և հանգստի կենտրոնների ձևավորում</p>	<p>Հայաստանի ամբողջ տարածքում մշակութային և բնական ժառանգության պահպանումը և վերականգնումը հանդիսանում են ՀՀ կառավարության գործունեության 2008-2012թթ միջոցառումների ծրագրի կարևոր ուղղություններից: Զբոսաշրջության ոլորտում այս գործընթացը կարևորվում է Հայաստանի մարզերում զբոսաշրջության զարգացման և հանգստի կենտրոնների ձևավորման գործընթացում:</p>
<p></p>	<p>Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների իրականացում՝ ուղղված զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավմանն ու զարգացմանը, զբոսաշրջային ռեսուրսների գնահատմանը և գույքագրմանը, նոր զբոսաշրջային ռեսուրսների և գրավչությունների բացահայտմանը և ձևավորմանը, զբոսաշրջային նոր, գրավիչ և մրցունակ փաթեթների ձևավորմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանն ու ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացման ապահովմանը:</p>	<p>ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 13-ին արձանագրային որոշմամբ հաստատված է Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը, որը մշակվել է համահունչ ՀՀ կառավարության գործունեության 2008-2012թթ. միջոցառումների ծրագրին.</p>
<p>3</p>	<p>Ազգային ստանդարտների մշակման ծրագիր</p>	<p>Մտանդարտացման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի I կետը:</p>
<p></p>	<p>Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպման ծրագիր</p>	<p>Առևտրի Համաշխարհային կազմակերպության Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագրի պահանջներ: ՀՀ-ում տեխնիկական</p>

	Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագիր	կանոնակարգերի մշակման և ստանդարտացման ամենամյա ծրագիր
4	Ոլորտի կարողությունների և նվաճումների խթանում	<p><ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին> ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի 'Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին' N1207-Ն որոշումը, ՀՀ կառավարության 23.04.2009թ. 'Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման պետական աջակցության 2009թ. ծրագիրը հաստատելու մասին' N658-Ն որոշումը, ՀՀ կառավարության 28.08.2008թ. 'Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին' N35 արձանագրային որոշումը</p>
	Ոլորտի հնարավորությունների ներկայացում Հայաստանում և արտերկրում, հասարակական իրազեկում	
	Ոլորտում ներդրումների և արտահանումների խթանում	
	SS ոլորտի մասնագետների որակական մակարդակի և մրցունակության բարձրացում	
	Ոլորտի զարգացումը խթանող ենթակառուցվածքների ձևավորում	
	SS ոլորտի արտադրողականության աճ և տեղեկատվական հասարակության կայացում	
5	Երևանի ու մարզերի միջև անհամամասնությունների և բնակչության եկամուտների տարբերությունների կրճատում, գործարար միջավայրի բարելավում և Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծում	<p>ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված <Կայուն զարգացման ծրագիր> 64, 66, 69, 73 կետերին: Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի 'ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգին հավանություն տալու մասին' N 23 արձանագրային որոշումից բխող միջոցառումները, ՀՀ ազգային ժողովի կողմից 2006թ. մայիսի 23-ին ընդունված Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, 7-րդ հոդվածի դ կետի:</p>

3. ՄԺԾԾ Ժամանակահատվածում ոլորտում (համակարգում) իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

3.1.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ընդհանուր նկարագիրը.

ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտում իրականացվելիք (գոյություն ունեցող) ծախսային ծրագրերի (պարտավորությունների) իրականացումը մեծապես կնպաստի ՓՄՁ ոլորտի զերակայությունների և ՓՄՁ ոլորտի զարգացման և պետական աջակցության ծրագրային նպատակների իրականացմանը, որի արդյունքում, ՄԺԾԾ ժամանակահատվածի (2011թ., 2012թ., 2013թ.) կտրվածքով ակնկալվում է.

1. Երկրի ՀՆԱ-ում ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշռի հետագա ավելացմանը նպաստում՝ մինչև ՄԺԾԾ ժամանակահատվածի ավարտն այն հասցնելով շուրջ 43.0%-ի, այդ թվում մինչև 2011թ. ավարտը՝ 42.2%-ի, մինչև 2012թ. ավարտը՝ 42.5%-ի, մինչև 2013թ. ավարտը՝ շուրջ 43.0%-ի:

2. ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում.

- ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի

ընդլայնում և դրա շրջանակներում ՀՀ մարզերում գործող 60-70 ՓՄՁ սուբյեկտներին 300-350 մլն դրամի վարկային երաշխավորության տրամադրում և 550-600 մլն դրամի վարկային փաթեթի ապահովում, այդ թվում 2011թ.՝ 20 ՓՄՁ սուբյեկտի 100 մլն դրամի վարկային երաշխավորության տրամադրում և 180 մլն դրամի վարկային փաթեթի ապահովում, 2012թ.՝ 20 ՓՄՁ սուբյեկտի 100 մլն դրամի վարկային երաշխավորության տրամադրում և 180 մլն դրամի վարկային փաթեթի ապահովում, 2013թ.՝ 20-30 ՓՄՁ սուբյեկտի 100-150 մլն դրամի վարկային երաշխավորության տրամադրում և 180-270 մլն դրամի վարկային փաթեթի ապահովում,

- Հաշվի առնելով ՓՄՁ սուբյեկտների ուղղակի վարկավորման և կապիտալի ֆինանսավորման ծրագրերի իրականացման կարևորությունը արագ զարգացող ՓՄՁ սուբյեկտների աջակցության գործում՝ նախատեսվում է 30-40 ՓՄՁ սուբյեկտներում կատարել 1500-2000 մլն դրամի չափով ուղղակի վարկավորում և սեփական կապիտալի ֆինանսավորում, այդ թվում՝ 2011թ.՝ 10 ՓՄՁ սուբյեկտներում 500 մլն դրամի, 2012թ.՝ 10 ՓՄՁ սուբյեկտներում 500 մլն դրամի, 2013թ.՝ 10-20 ՓՄՁ սուբյեկտներում 500-1000 մլն դրամի չափով ուղղակի վարկավորում և սեփական կապիտալի ֆինանսավորում:

3. ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնում. 12000-13000 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ցուցաբերում, այդ թվում վերոհիշյալ ուղղություններով՝ 2011թ.՝ շուրջ 4000, 2012թ.՝ շուրջ 4000, 2013թ.՝ 4000-5000 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ցուցաբերում:

4. ՓՄՁ սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնում և նրանց մրցունակության բարձրացում, նրանց կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) տեսականու ընդլայնում և դրանց բազմազանեցում, նոր ապրանքատեսակների արտադրության և ծառայությունների մատուցման քանակական ու որակական աճ և դրանց արտահանման ծավալների ավելացում՝ այն հասցնելով շուրջ 18.0%-ի, այդ թվում՝ 2011թ.՝ 17.5%-ի, 2012թ.՝ 17.7%-ի, 2013թ.՝ շուրջ 18.0%-ի, ինչպես նաև 600-700 ՓՄՁ սուբյեկտի շուկաներ առաջնորդման ուղղությամբ աջակցության ցուցաբերում, այդ թվում՝ 2011թ. շուրջ 200 ՓՄՁ սուբյեկտի, 2012թ.՝ 200-250 ՓՄՁ սուբյեկտի, 2013թ.՝ 200-250 ՓՄՁ սուբյեկտի շուկաներ առաջնորդման ուղղությամբ աջակցության ցուցաբերում:

5. Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության շրջանակներում ՀՀ բոլոր մարզերում 800-900 սկսնակ գործարարի տեխնիկական և ֆինանսական աջակցության ցուցաբերում, այդ թվում՝ 2011թ.՝ 250-300 սկսնակ գործարարի, 2012թ.՝ 250-300 սկսնակ գործարարի, 2013թ.՝ շուրջ 300 սկսնակ գործարարի տեխնիկական և ֆինանսական աջակցության ցուցաբերում:

6. Շուրջ 50000 միավորով ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացմանը և նրանց հաշվին շուրջ 70000 նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստում, մասնավորապես ՀՀ մարզերում. այդ թվում՝ 2011թ.՝ 15000 միավորով, 2012թ.՝ 15000 միավորով, 2013թ.՝ 20000 միավորով ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացմանը և նրանց հաշվին 2011թ.՝ շուրջ 21000, 2012թ.՝ շուրջ

21000, 2013թ.՝ շուրջ 28000 նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստում:

ՀՀ մարզերում գործարար ակտիվության բարձրացում և այդ նպատակով ցուցաբերվող պետական աջակցության գերակշիռ մասի (շուրջ 90%-ի) ուղղորդում այդպիսի գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին: Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է յոթաքայուր տարվա համար համապատասխանաբար՝ **150.0 ական մլն. դրամ** :

ՓՄՁ ՁԱԿ կենտրոնի և մասնաճյուղերի պահպանում, որից՝

- ՓՄՁ ՁԱԿ կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի ամրապնդում, նախատեսված է յոթաքայուր տարվա համար համապատասխանաբար՝ **50.0** ական մլն դրամ,

- Ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների վարձատրությանն ուղղված միջոցներ, նախատեսված է յոթաքայուր տարվա համար համապատասխանաբար՝ **100.0** ական մլն դրամ:

- ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը կիրականացվեն.

ՓՄՁ սուբյեկտների ուղղակի վարկավորման և կապիտալի ֆինանսավորման ծրագրեր (ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը կիրականացվի ձևավորված դրամազլխի ամորտիզացումների հաշվին, իսկ ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորումը և ուղղակի վարկավորումը կիրականացվի 'ՓՄՁ ներդրումներ' ՈԻՎԿ ՓԲԸ-ի գործունեության շրջանակներում,

Իսկ մնացած միջոցառումները կիրականացվեն՝

- Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի 2009-2012թթ. եկամուտների, ազատ դրամական միջոցների, 2009-2012թթ. խնայողությունների, ինչպես նաև միջազգային ու օտարերկրյա կազմակերպությունների միջոցների հաշվին:

3.1.2. Ջրոսաշրջության ոլորտի նկարագիրը.

2011-2013 թվականներին ծրագրային միջոցառումները ուղղված կլինեն.

- հայկական զբոսաշրջային արդյունքի որակի կայուն ապահովմանը,
- Հայաստանի ինտեգրմանը համաշխարհային զբոսաշրջային շուկա,
- միջազգային ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի կայուն աճի ապահովմանը:

Նախորդ տարիներին Ծրագրի իրականացումը արդեն իսկ ապահովել է որոշակի արդյունքներ, ինչը նաև շարունակական բնույթ է կրելու 2011-2013թթ.՝ նպաստել ՀՀ կայուն տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, պետական բյուջե մուտքերի և բնակչության եկամուտների ավելացմանը, աշխատատեղերի ու եկամուտների արդար վերաբաշխմանը, համայնքների համաչափ զարգացմանը, աղքատության հաղթահարմանը:

2011-2013թթ. Հայաստանում զբոսաշրջության զարգացման տարեկան ծրագրերի իրականացումը հիմնականում կլուծի հետևյալ խնդիրները.

ա) կիրականացվի զբոսաշրջության բնագավառում արդյունավետ մարքեթինգային քաղաքականություն, հայրենական զբոսաշրջային արդյունքը պատշաճ կներկայացվի միջազգային զբոսաշրջային շուկայում,

բ) կապահովվի հայրենական զբոսաշրջային արդյունքի կայուն որակը և մրցունակությունը համաշխարհային զբոսաշրջային շուկայում,

գ) կզարգանա միջազգային համագործակցությունը, կիրականացվեն իրավապայմանագրային դաշտում նախատեսված դրույթները:

Ծրագրային միջոցառումների իրականացումը, ուղղված ոլորտի տարբեր բնագավառների զարգացմանը, կնպաստեն Հայաստանում զարգացած զբոսաշրջային արդյունաբերության ստեղծմանը, ինչն էլ իր հերթին կապահովի երկրի տնտեսության զարգացման զգալի առաջընթաց:

Զբոսաշրջության ոլորտում մարքեթինգային քաղաքականության իրականացման, Հայաստանի, որպես ներդրումների համար կայուն և ապահով, զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկիր, նկարագրի ձևավորման և միջազգային շուկայում այդ նկարագրի արդյունավետ ներկայացման նպատակով 2001 թվականին հիմնադրվել է 'Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն' փակ բաժնետիրական ընկերությունը, որի հիմնական գործառնություններից էր՝ միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցության ապահովումը, գովազդային և տեղեկատվական նյութերի մշակումը, տպագրումը և տարածումը, օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջային օպերատորների ճանաչողական այցերի կազմակերպումը, ավանդական տոնակատարությունների կազմակերպումն ու անցկացումը, որն էլ սկսած 2001թ-ից մինչև 2010թ-ը իրականացնել է ոլորտի զարգացման ծրագրային միջոցառումները: Ներկայումս սկսված է <Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն> ՓԲԸ-ն լուծարման գործընթացը, իսկ 2010-ից սկսած զբոսաշրջության ոլորտում մարքեթինգային քաղաքականությունը կիրականացնի Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը, որը կշարունակի <Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն> ՓԲԸ-ն գործունեությունը:

Ներկայացվող ծախսային պարտավորությունները հաստատված են <ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին> ՀՀ օրենքով:

Ծրագիրը ընդգրկված է եղել նաև 2009-2011թթ. ՄԺԾԾ ծրագրում:

Զբոսաշրջության զարգացման ծրագիրը կազմված է ենթածրագրերից, որոնք կարող են հանդիսանալ որպես ինքնուրույն ծրագրեր:

1). Զբոսաշրջության ոլորտի գովազդատեղեկատվական ապահովման համակարգի զարգացում

Զբոսաշրջության ոլորտի գովազդատեղեկատվական ապահովման համակարգի զարգացման ծրագրի շրջանակներում 2011-2013 թթ. Հայաստանի զբոսաշրջային արդյունքը կներկայացվի մոտ 15-ից ավել համաշխարհային ճանաչում ունեցող զբոսաշրջային ցուցահանդեսներում: Ցուցահանդեսներին մասնակցության շնորհիվ վերջին տարիների

ընթացքում գրանցվել է Հայաստան այցելած միջազգային զբոսաշրջիկների՝ այդ թվում նաև ոչ սփյուռքահայ զբոսաշրջիկների թվի կայուն աճ:

2011-2013 թթ. կշարունակվի գովազդատեղեկատվական նյութերի թարմացումը, տպագրումն ու տարածումը: Զբոսարջության զարգացման հիմնական խթաններից է գովազդային նյութերի մշտապես թարմացումը, նոր նյութերի մշակումը, տպագրումը և տարածումը: Կապահովվի գովազդատեղեկատվական նյութերի նոր որակ, տպաքանակի ավելացում և տարածման աշխարհագրության և հրատարակման լեզուների ընդլայնում:

Գովազդատեղեկատվական նյութերի անհրաժեշտ քանակությունը ապահովում է Հայաստանի զբոսաշրջային արդյունքի միջազգային ցուցահանդեսներին, տոնավաճառներին, համաժողովներին և ոլորտի մի շարք այլ միջոցառումներին ներկայացումը և գովազդումը ազգային մակարդակով: Ենթաձրագրի շրջանակներում մշակվող գովազդատեղեկատվական նյութերը՝ տեղեկատվական թերթիկները, պրակները, պասսառները, քարտեզները, տեղեկագրերը, ուղեցույցերը, գովազդային սկավառակները, տեսաֆիլմերը, նախատեսում են զբոսաշրջիկներին մինչ Հայաստան ժամանելը և Հայաստանում տրամադրել երկրի մասին բավարար տեղեկատվություն, ինչպես նաև դյուրինացնել նրանց շրջագայությունը Հայաստանում:

2011-2013թ-ին ի լրումն նախորդ տարիներին մշակված և տպագրված գովազդատեղեկատվական նյութերի, կստեղծվեն այս շարքի նոր նյութեր, տեղեկագրեր և ուղեցույցեր:

Զբոսաշրջության կայուն աճն ու զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է ճանաչողական միջոցառումների կազմակերպումը, ինչից ելնելով նախատեսվում են օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների և լրագրողների ճանաչողական-ուսուցողական այցերի իրականացում, ինչի արդյունքում կբարձրանա տեղեկացվածությունը Հայաստանի զբոսաշրջային հնարավորությունների և համաշխարհային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի առաջարկի վերաբերյալ: Լրագրողների ճանաչողական այցի արդյունքում օտարերկրյա լրատվամիջոցներով Հայաստանի մասին կտարածվեն բազմաթիվ ճանապարհորդական նյութեր և կտպագրվեն հոդվածներ:

Ծրագրի շրջանակներում կապահովվի պետական մասնակցությունը կազմակերպվող ամենամյա ազգային, մշակութային բնույթ ունեցող փառատոններին, որոնք կընդգրկեն Հայաստանի մարզերը, ինչը կնպաստի մարզերում մշակութային կյանքի ակտիվացմանը և զբոսաշրջության զարգացմանը:

Ծրագրի շրջանակներում ֆինանսական ծախսերը ուղղված են.

- Հայաստանի և առանձին մարզերի, Երևան քաղաքի զբոսաշրջային քարտեզների, բրոշյուրների, գովազդային թերթիկների և գովազդային այլ նյութերի թարմացմանը և նորերի ստեղծմանը, տպագրմանը և տարածմանը:

- ամենամյա միջազգային նշանակալից զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցությանը՝ Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Ճապոնիայում, Հոլանդիայում, Իտալիայում, Ֆրան-

սիայում, Վրաստանում և այլ: Տվյալ ենթակետում 2011-2013թթ. ծախսերի մակարդակը կաճի՝ կապված ցուցահանդեսների մասնակցության քանակի աճից և աշխարհագրության ընդլայնումից:

- մասնակցությանը ավանդական տոնածխասակատարությունների կազմակերպմանը և անցկացմանը: 2011-2013թթ. կարևորելով փառատոնների անցկացման մեծ դերը զբոսաշրջության զարգացման գործընթացում կպահանջվեն այդ միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

- օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջային օպերատորների ճանաչողական այցերի կազմակերպմանը, 2011-2013թթ. կավելանան կազմակերպվող այցերի քանակը:

- գործող (www.armeniainfo.am) ինտերնետային էջի մշտական թարմացմանը և համայնքային տեղեկատվական կենտրոններում նորերի ստեղծմանը և շահագործմանը:

2011-20013 թվականներին, համաձայն ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 13-ին արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ցանկի (հոկտեմբերի 16-ի 2008 թ-ի N1322-Ն), կիրականացվեն զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավմանն ու զարգացմանը, զբոսաշրջային ռեսուրսների գնահատմանը և գույքագրմանը, նոր զբոսաշրջային ռեսուրսների և գրավչությունների բացահայտմանը և ձևավորմանը, զբոսաշրջային նոր, գրավիչ և մրցունակ փաթեթների ձևավորմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանն ու ոլորտում որակյալ հետազոտությունների ապահովմանն ուղղված միջոցառումներ:

Հայեցակարգից բխող միջոցառումների հիմնական ուղղություններից է զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային ուսումնասիրությունների իրականացումը:

2). Միջազգային համագործակցության իրականացում

<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետով զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման ապահովումը սահմանված է որպես պետական քաղաքականության հիմնական սկզբունք, իսկ նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով միջազգային կապերի զարգացմանը և միջազգային ինտեգրմանը նպաստող համակարգի ստեղծումը՝ որպես պետական քաղաքականության հիմնական նպատակ: Պայմանավորված զբոսաշրջության ոլորտում միջազգային համագործակցության գործընթացների զարգացմամբ, ինչպես նաև իրավապայմանագրային դաշտի ընդլայնմամբ, 2011-2013թթ.

նախատեսվում է ֆինանսական միջոցների հատկացում ենթածրագրային միջոցառումը իրականացնելու համար, ինչը արդիական է տվյալ ժամանակահատվածում:

Միջազգային համագործակցությունն էապես նպաստում է նաև ոլորտի մասնագետների վերապատրաստման գործընթացին, իսկ մարդկային ռեսուրսների զարգացումը թե՛ Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով և թե՛ Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով սահմանված է որպես պետական քաղաքականության հիմնական խնդիր:

Միջազգային համագործակցության շրջանակներում 2011-2013 թթ. միջոցառումները կուղղվեն՝

1) զբոսաշրջության բնագավառում համագործակցության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կատարմանը,

2) ՄԱԿ-ի ՋՀԿ –ի և այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանը և դրանց շրջանակներում իրականացվող ծրագրերին մասնակցությանը,

3) միջազգային համագործակցության շրջանակներում զբոսաշրջության բնագավառի մասնագետների (պետական և մասնավոր հատվածի) վերապատրաստմանը:

Անհրաժեշտություն է առաջացել է մի շարք հրատապ պարտավորությունների կատարման, ինչը բխում է բազմաթիվ երկրների հետ միջկառավարական համագործակցության Համաձայնագրերի, գործնական ծրագրերի (Բելառուս, Եգիպտոս, Իրան, Սիրիա և այլ) դրույթների իրականացումից: Նշված փաստաթղթերում ներառված պարտավորությունների չկատարումը կնշանակի համաձայնությունների միակողմանի խախտում, որն էլ իր հերթին խոչընդոտում է միջազգային համագործակցության զարգացման գործընթացներին և որը հայկական կողմը չի կարող կատարել առանց համապատասխան ֆինանսական միջոցների:

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է յոթաքայուր տարվա համար համապատասխանաբար՝ 50.0 ական մլն.դրամ :

2011-2013թթ. զբոսաշրջության զարգացման ծրագրի իրականացման արդյունքում կպահպանվի միջազգային և ներքին զբոսաշրջիկների թվաքանակի աճի տեմպը՝ ապահովելով տարեկան միջինը 10% աճ, պատշաճ որակով կներկայացվի հայրենական զբոսաշրջային արդյունքը, ապահովելով Հայաստանի ինտեգրումը միջազգային զբոսաշրջային շուկա, կզարգանա զբոսաշրջությունը մարզերում, կզարգանա միջազգային համագործակցությունը:

3.1.3. Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ոլորտի նկարագիրը.

Ստանդարտացման ոլորտում գոյություն ունեցող ծախսային ծրագրերն են՝

1. Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ,
2. Միջպետական և միջազգային ստանդարտացման աշխատանքներ,
3. Ստանդարտների և ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ :

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2011թ. -ին՝ 14.0 մլն.դրամ, 2012թ. -ին՝ 14.0 մլն.դրամ և 2013թ. -ին 15.3 մլն. դրամ:

Ազգային ստանդարտների ծրագրի միջոցով մշակվում են միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ ստանդարտներ, որոնք կոչված են ապահովելու Հայաստանի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ու մրցունակության բարձրացման նախադրյալները: Կիրառելով այդ ստանդարտները հայրենական արտադրողները հնարավորություն են ունենում

ապահովել տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջները և արտադրել միջազգային շուկայում մրցանակ արտադրանք:

Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցությունը և աշխատանքների կազմակերպման ծրագիրը հնարավորություն է տալիս մասնակցել Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ), Ստանդարտացման Եվրոպական Կոմիտեի (ՄԵՆ) և (ԱՊՀ) Ստանդարտացման միջպետական խորհրդի և դրանց ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին, կիրառել այդ կազմակերպությունների կողմից ընդունված ստանդարտները, ներկայացնել նրանց կողմից մշակված ստանդարտների նախագծերի վերաբեյալ ՀՀ շահագրգիռ մարմինների և ստանդարտների ազգային ինստիտուտի առաջարկությունները՝ դրանով նպաստելով հայրենական արտադրողների կողմից արտադրված և մատուցված ծառայությունների արտահանմանը ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային (եվրամիության և ԱՊՀ երկրներ) շուկաներ: Բացի այդ, հանդիսանալով միջազգային ստանդարտացման վերը նշված կազմակերպությունների անդամ, Ստանդարտների ազգային ինստիտուտը պարտավոր է անմասն չմնալ այդ կազմակերպությունների աշխատանքից և ակտիվորեն մասնակցել հրավիրվող խորհրդակցություններին և տարեկան վեհաժողովներին: Այդպիսի մասնակցությունը բարձրացնում է Հայաստանի հեղինակությունը միջազգային ասպարեզում և ամեն անգամ թույլ է տալիս հիմք դնել տարբեր շահագրգիռ կազմակերպությունների հետ նոր շահավետ համագործակցությանը:

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագիրը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետությանը ունենալ միջազգային, եվրոպական, միջպետական և այլ պետությունների, ինչպես նաև ազգային ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ֆոնդ, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական ու մասնավոր ընկերություններին, անհատ ձեռնարկատերերին, քաղաքացիներին և բոլոր այլ շահագրգիռ անձանց ապահովել անհրաժեշտ և պահանջված ստանդարտներով, խորհրդատվությամբ և տեղեկատվությամբ:

Տեխնիկական ազգային հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման ծրագիրը մեծ կարևորություն է ներկայացնում Հայաստանում ստանդարտացման աշխատանքների որակի բարձրացման ու միջազգային ստանդարտացման աշխատանքներում Հայաստանի դերի բարձրացման համար: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ի դեմս Ստանդարտների ազգային ինստիտուտի անդամակցում ԻՍՕ-ի 37 և ՄԵՆ-ի 3 տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին՝ որպես այդ հանձնաժողովների անդամ: Սակայն ՏՀ-ին անդամակցման պահանջներից է յուրաքանչյուր անդամ երկրում համապատասխան հայելային ազգային տեխնիկական հանձնաժողովի ստեղծումը, որը կքննարկի միջազգային հանձնաժողովի բոլոր առաջարկները, նախագծերը և նախաձեռնությունները և կներկայացնի իր կարծիքը: Հայելային

հանձնաժողովների ստեղծումը ծախսատար գործընթաց է, քանի որ պահանջում է տարեկան առնվազն մեկ արտագնա նիստի կազմակերպում՝ քննարկման ներկայացվող նյութերի մեծ ծավալի պատճառով: Մինչ այժմ Ստանդարտների ազգային ինստիտուտի ուժերով հաջողվել է ստեղծել ընդամենը 9 ազգային տեխնիկական հանձնաժողով:

<Ստանդարտացման մասին> ՀՀ օրենքով նշված ծրագրերի կատարման պատասխանատու են հանդիսանում ստանդարտացման ազգային մարմինը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և նրա համակարգում գործող Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերությունը:

Ստանդարտացման ոլորտում գոյություն ունեցող ծախսային ծրագրերն են՝

1. Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ,
2. Միջպետական և միջազգային ստանդարտացման աշխատանքներ,
3. Ստանդարտների և ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ :

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2011թ.-ին՝ 14.0 մլն.դրամ, 2012թ.-ին՝ 14.0 մլն.դրամ և 2013թ.-ին 15.3 մլն. դրամ:

3.1.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընդհանուր նկարագիրը.

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է յոթաքայնոր տարվա համար համապատասխանաբար՝ 80.0 ական մլն.դրամ: 2011-2013թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվող հետևյալ ծրագրերը կհանդիսանան ՀՀ 2010թ. պետական բյուջեով <Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ծրագրով> նախատեսված ֆինանսավորման շարունակությունը:

1. Հայաստանի ՏՏ ոլորտի ներկայացում և խթանում Հայաստանում և արտերկրում, հետազոտություն, հասարակական իրազեկում

<Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգով> առաջնային խնդիրներից է հանդիսանում նաև ոլորտի ներկայացումն արտերկրում և Հայաստանում, ՏՏ ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության խթանումն ու ապահովումը, միջազգային ՏՏ կազմակերպություններին անդամակցումը, Հայաստանի վարկանիշի ձևավորումը՝ որպես ՏՏ տարածաշրջանային կենտրոն, այդ թվում նպաստելով Հայաստանում մի շարք միջազգային նշանակության միջոցառումների պարբերական անցկացմանը, նպատակային երկարաժամկետ ծրագրերի իրականացմանը և երկրի տնտեսական դաշտ համաշխարհային ճանաչում ունեցող ՏՏ ընկերությունների ներգրավմանը՝ վերջիններիս փորձի, հեղինակության ու կապերի շնորհիվ Հայաստանի վարկանիշի բարձրացման և <Հայկական ՏՏ ապրանքային նշան>-ի առաջխաղացման նպատակով:

Հայաստանի SS ոլորտի ներկայացումը և խթանումը Հայաստանում և արտերկրում, հասարակության իրազեկումը պատշաճ կերպով կազմակերպելու համար անհրաժեշտ է համապատասխան նյութերի նախապատրաստում: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել ոլորտին վերաբերվող հետազոտություններ և վերլուծություններ, որոնք կներկայացնեն SS ոլորտի ներկա իրավիճակը, այդ թվում հիմնական խնդիրները և մարտահրավերները, ռազմավարական զարգացման հեռանկարները և վերջին տարիներին գրանցած նվաճումները: Դրանք կհանդիսանան կարևոր գործիք ոչ միայն բազմաթիվ միջոցառումների, հանդիպումների ընթացքում հայկական SS ոլորտը ամփոփ և դիտարժան ներկայացնելու, այլև տեղեկատվական աղբյուր կհանդիսանան SS ոլորտի առջև ծառայած հիմնական խնդիրների և դրանց լուծման հնարավոր ուղիների, ոլորտի աճի հեռանկարների, ներդրումների խթանման և հետագա զարգացման ռազմավարության մշակման համար:

Հայաստանի SS ոլորտի ներկայացումը միջազգային շուկաներում՝ խոշորագույն ցուցահանդեսներում և գազաթնաժողովներում հանդիսանում է կրիտիկական գործոն Հայաստանի որպես SS երկրի վարկանիշի ձևավորման, հայկական SS ոլորտի կարողությունների և ձեռքբերումների ցուցադրման, առանձին ընկերությունների կողմից իրենց ծրագրային փաթեթների և ծառայությունների ներկայացման և բիզնես կապերի ստեղծման, միջազգայնորեն մրցունակ ‘Հայկական SS ապրանքային նշանի’ ձևավորման, ինչպես նաև ոլորտի վերջին միջազգային նվաճումներին ծանոթանալու և շուկայական ուսամնասիրություններ կատարելու համար:

Միջազգային միջոցառումներին մասնակցելուց բացի, կարևորվում են նաև Հայաստանում կազմակերպվող միջոցառումները (ցուցահանդեսները, կոնֆերանսները, մրցույթները և այլն), որոնք նպատակ ունեն ցուցադրելու հայկական SS ոլորտի ձեռքբերումները և նվաճումները, կառավարության, մասնավոր հատվածի, գիտական և կրթական հաստատությունների և դոնոր կազմակերպությունների համագործակցության, միասնության և համատեղ ջանքերի արդյունքները: Դրանք կնպաստեն նաև իրազեկության բարձրացմանը և ոլորտի ներքին կապերի ամրապնդմանը՝ ստեղծելով հիմք նորարարությունների, արտադրողականության բարձրացման և SS ոլորտի և առավել լայն հանրության միջև կապերի ամրապնդման համար:

2. Միջազգային համագործակցություն

Հայաստանի տնտեսության և, մասնավորապես, երկրի SS ոլորտի մրցունակության բարձրացման համար կարևոր նշանակություն ունի SS խոշոր վերազգային ընկերությունների ներկայությունը Հայաստանում և դրանց հետ կառավարության և/կամ մասնավոր հատվածի մակարդակով համատեղ ներդրումային և կրթական ծրագրերի մշակումը և իրականացումը: Այդ գործընթացի հիմնական նպատակն է խթանել արտասահմանյան ներդրումները Հայաստանում, ստեղծել նոր աշխատատեղեր, ինչպես նաև ծանոթանալ և կիրառել լավագույն միջազգային փորձը: Նման նախաձեռնությունները պահանջում են երկարաժամկետ պետական

պարտավորությունների ստանձնում, քանի որ նման պարտավորության առկայությունը հանդիսանում է համագործակցության երաշխավորման հիմնական գրավական, իսկ որոշ դեպքերում նաև նախապայման: Այս միջոցառման շրջանակում կշարունակվի համագործակցությունը Մայքրոսոֆթ կազմակերպության և Հնդկաստանի կառավարության հետ: Միաժամանակ, ի կատարումն ՀՀ վարչապետի ԱՄՆ կատարած այցի արդյունքներում ստացված հանձնարարականների կսկսվեն համատեղ կրթական, հետազոտական ծրագրերի իրականացումը Բնթել և Միսկո կազմակերպությունների հետ:

3. Միջազգային SS կազմակերպությունների հետ (INTEL, HP) <Համակարգիչ բոլորի համար> ծրագրի մշակում

<Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգի> գերնպատակներից մեկը երկրում տեղեկատվական հասարակության ձևավորումն է՝ իր S2S կատարելագործված ենթակառուցվածքներով, համակարգչային բարձր գրագիտությամբ, համակարգչային հազեցվածության և ինտերնետ հասանելիության բարձր աստիճանով, համատարած կիրառվող էլ-ծառայությունների համակարգերով, մեծածավալ տեղական SS շուկայի առկայությամբ և առաջադեմ գիտելիքահենք արդյունաբերությամբ: Այս նպատակին հասնելուն է ուղղված <Համակարգիչ բոլորի համար> ծրագրի իրագործումը:

Նմանատիպ ծրագիր իրականացվում է Բնթել և Մայքրոսոֆտ ընկերությունների կողմից այլ զարգացող երկրներում մի շարք պետական և մասնավոր կազմակերպությունների հետ համատեղ: Ծրագրի ընդհանուր նպատակն է բարձրացնել Հայաստանի բնակչության կողմից համակարգիչների օգտագործման մակարդակը՝ առաջարկելով ժամանակակից համակարգիչներ և ծրագրային ապահովում մատչելի գներով: Այն հնարավորություն կտա Հայաստանի ազգաբնակչությանը ձեռք բերել ժամանակակից համակարգիչներ մատչելի գներով: Համակարգիչները կունենան լիզենզավորված ծրագրային փաթեթներ: Այսպիսով, ծրագիրը նաև կփորձի լուծել Հայաստանում մտավոր սեփականության հետ կապված խոչընդոտներից մեկը՝ ոչ լիցենզավորված ծրագրային փաթեթների տարածված օգտագործումը: Ծրագիրը կխթանի նաև ազգաբնակչության կողմից Բնտերնետի օգտագործման աճին, որը բարենպաստ պայմաններ կստեղծի Բնտերնետային ծառայությունների զարգացման համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման պետական աջակցության 2009թ. ծրագրով նախատեսվում է մշակել Հայաստանում ծրագրի իրականացման հնարավոր մեխանիզմները և ապահովել ծրագրի վերաբերյալ հանրային իրազեկումը: 2010թ.-ից սկսած այս միջոցառման շրջանակում նախատեսվում է իրականացնել ծրագրի կառավարման թիմի վարձատրությունը և ապահովել համակարգիչների գնման համար բանկերի կողմից տրվող սպառողական վարկի մարումը:

3.1.5. Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու պետական աջակցության ծրագրի ընդհանուր նկարագիրը.

2011-2013 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվող հետևյալ ծրագրերը կհանդիսանան ՀՀ 2010թ. պետական բյուջեով <Գյումրու Տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության ծրագրով> նախատեսված ֆինանսավորման շարունակությունը և մեծապես կնպաստեն ինովացիոն ոլորտի գերակայությունների և ոլորտի զարգացման պետական աջակցության ծրագրային նպատակների իրականացմանը:

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է յուրաքանչյուր տարվա համար համապատասխանաբար՝ 200.0 ական մլն.դրամ :

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է պետական աջակցություն ցուցաբերել հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը, որը կնպաստի համապատասխան ինովացիոն համակարգի ձևավորմանը.

2011 թ.

1. Տեխնոպարկի գործունեության կառավարում

Այս միջոցառումը նախատեսում է Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամի, որը հանդիսանում է, նաև, տեխնոպարկի կառավարման գրասենյակը, գործունեության համար անհրաժեշտ աշխատանքային թիմի աշխատավարձեր, գրասենյակի պահպանման ծախսեր, գործուղումներ տեխնոպարկերի հարուստ և հաջողված փորձ ունեցող երկրներ և արտերկրի բիզնես կենտրոններ և Շիրակի մարզի ուսանողների վերապատրաստում արտերկրի առաջատար համալսարաններում:

Տեխնոպարկի կառավարման համար 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 46676,0 հազար դրամ գումար:

2. Նորարարությունների ու ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությանն ուղղված ծրագրերի իրագործում

Ծրագիրը նախատեսում է ճարտարագիտության և/կամ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներին վերաբերող բիզնես գաղափարների և ծրագրերի մրցույթի կազմակերպում: Մրցույթի արդյունքում ընտրված խմբերից յուրաքանչյուրին կհատկացվի համապատասխան փորձագետ-խորհրդատու, որն խորհրդատվությունից բացի աշխատանքների բոլոր փուլերում կիրականացնի խմբի վերապատրաստում, կհատկացնի ծրագրերի առևտրայնացման հնարավորությունները և ուղիները:

Յուրաքանչյուր ծրագրի համար կկազմվի բիզնես պլան, որի հիման վրա կստեղծվեն նոր ընկերություններ: Պետությունը նորաբաց երկու ընկերությունների 25-50 տոկոս բաժնեմասերը գնելու ճանապարհով յուրաքանչյուրի կանոնադրական կապիտալում կներդնի 14000 հազար դրամի չափով միջոցներ, որոնք կուղվեն բիզնես պլանում տեղ գտած առաջնային միջոցառումների ֆինանսավորմանը:

Ծրագրի իրականացման համար նախատեսվում է 2011 թվականին հատկացնել 62,000.0 հազար դրամ:

3. Համաշխարհային բանկի տեխնոլոգիայի մրցունակության բարձրացման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհների համաֆինանսավորում

Այս գործողությունը կօժանդակի նախագծին և կառավարության հետ կհամաֆինանսավորի տարածաշրջանի ՓՄՁ-ների տեխնիկական հնարավորությունների արդիականացման ծրագիրը՝ երեք տարվա կտրվածքով:

Ծրագիրը ներառում է խորհրդատվություն, տեխնիկական աջակցություն և վերապատրաստում և՛ ընկերության անձնակազմի, և՛ երրորդ ընկերության կողմից: Առաջարկվող ծառայությունների մանրամասն նկարագրությունը տրված է GTC ընկերության տեղեկագրում: Սրանք (ծառայությունները) հիմնվում են PHRD-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակում GTC-ի կողմից արված ուսումնասիրության վրա, ինչպես նաև միջազգային լավագույն տեխնոլոգիական զարգացման ծրագրերի վրա: Ծրագիրը կֆինանսավորի նախագծի ղեկավարների խումբը և եռակողմ պայմանագրերը:

Ծրագիրը նախատեսում է 2011 թվականին համաֆինանսավորել 41,124.0 հազար դրամ:

3. Ծրագրային ապահովման, դիզայնի, մուլտիմեդիայի լաբորատորիայի հիմնում

Ծրագիրը համարվում է 2010 թվականին նախատեսված մեխանիկայի և էլեկտրոնիկայի լաբորատորիաների ստեղծման ծրագրի տրամաբանական շարունակությունը: Ծրագրի համար 2011թ նախատեսվել է հատկացնել 50,200.0 հազար դրամ:

2012 թ.

1. Տեխնոպարկի գործունեության կառավարում

Այս միջոցառումը նախատեսում է Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամի, որը հանդիսանում է, նաև, տեխնոպարկի կառավարման գրասենյակը, գործունեության համար անհրաժեշտ աշխատանքային թիմի աշխատավարձեր, գրասենյակի պահպանման ծախսեր, գործուղումներ տեխնոպարկերի հարուստ և հաջողված փորձ ունեցող երկրներ և արտերկրի բիզնես կենտրոններ և Շիրակի մարզի ուսանողների վերապատրաստում արտերկրի առաջատար համալսարաններում:

Տեխնոպարկի կառավարման համար 2012 թվականին նախատեսվում է հատկացնել 46676,0 հազար դրամ գումար:

2. Ներդրումային ծրագրերի պատրաստում և գործընկերների ներգրավում

Տեխնոքաղաքում ներդրումներ ներգրավելու համար կիրականացվի ներդրումային ծրագրերի պատրաստում և օտարերկրյա ներդրողների շրջանակում համապատասխան աշխատանքների կազմակերպում: Թիրախ կհանդիսանան հատկապես Տեխնոքաղաքում ընդգրկված ոլորտներում միջազգային ճանաչում ունեցող ընկերությունները:

Այս միջոցառման շրջանակում կիրականացվեն հասարակակն իրազեկման միջոցառումներում, կպատրաստվեն ներդրումային ծրագրեր և մասնակցություն կունենան աշխարհում տեղի ունեցող միջազգային ինվեստիցիոն ցուցահանդեսներին և գիտաժողովներին:

Ներդրումային ծրագրերի պատրաստման և գործընկերների ներգրավման համար 2012 թվականին նախատեսվում է հատկացնել 80000 հազար դրամ գումար:

3. Ծրագրերի կառավարման և ձեռնարկատիրական կրթական ծրագրի իրականացում

Ծրագրի նպատակն է՝ ուժեղացնել ձեռնարկատիրությունը, ավելացնել աշխատատեղեր, ինչպես նաև զարգացնել և ապահովել կայուն տնտեսական աճ: Այն նպատակ ունի նաև նպաստել նորարարության աճին և բարգավաճմանը, ինչպես նաև աշխարհի առաջատար շուկաները ներկայացնող երկրների տնտեսությունների ու սոցիալական պատկերի փոփոխմանը՝ ապահովելով.

- o Ձեռնարկատիրական բիզնեսի վերաբերյալ մասնագիտական գիտելիքներ

- o Ռեսուրս-կենտրոն, որտեղ ձեռնարկատերերը կարող են ստանալ անհրաժեշտ մասնագիտական բիզնես խորհրդատվություն, ուսուցում և այլ ծառայություններ

- o Ինտերնետ բիզնես լուծումներ՝ փոքր և միջին ձեռնարկատիրությունների համար,

- o Տեխնոլոգիական ցանց

Ծրագրի իրականացման համար 2012 թվականին նախատեսվում է 27,524.0 հազար դրամ:

Համաշխարհային բանկի տեխնոլոգիայի մրցունակության բարձրացման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհների համաֆինանսավորում

Այս գործողությունը կօժանդակի նախագծին և կառավարության հետ կհամաֆինանսավորի տարածաշրջանի ՓՄՁ-ների տեխնիկական հնարավորությունների արդիականացման ծրագիրը՝ երեք տարվա կտրվածքով:

Ծրագիրը ներառում է խորհրդատվություն, տեխնիկական աջակցություն և վերապատրաստում ևԲ ընկերության անձնակազմի, ևԲ երրորդ ընկերության կողմից: Առաջարկվող ծառայությունների մանրամասն նկարագրությունը տրված է GTC ընկերության տեղեկագրում: Սրանք (ծառայությունները) հիմնվում են PHRD-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակում GTC-ի կողմից արված ուսումնասիրության վրա, ինչպես նաև միջազգային լավագույն տեխնոլոգիական զարգացման ծրագրերի վրա: Ծրագիրը կֆինանսավորի նախագծի ղեկավարների խումբը և եռակողմ պայմանագրերը:

Ծրագիրը նախատեսում է 2012 թվականին համաֆինանսավորել **41,124.0** հազար դրամ:

2013թ.

1. Տեխնոպարկի գործունեության կառավարում

Այս միջոցառումը նախատեսում է Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամի, որը հանդիսանում է, նաև, տեխնոպարկի կառավարման գրասենյակը, գործունեության համար անհրաժեշտ աշխատանքային թիմի աշխատավարձեր, գրասենյակի պահպանման ծախսեր, գործուղումներ տեխնոպարկերի հարուստ և հաջողված փորձ ունեցող երկրներ և արտերկրի բիզնես կենտրոններ և Շիրակի մարզի ուսանողների վերապատրաստում արտերկրի առաջատար համալսարաններում:

Տեխնոպարկի կառավարման համար 2013 թվականին նախատեսվում է հատկացնել **57,296.0** հազար դրամ գումար:

2. Ներդրումային ծրագրերի պատրաստում և գործընկերների ներգրավում

Տեխնոքաղաքում ներդրումներ ներգրավելու համար կիրականացվի ներդրումային ծրագրերի պատրաստում և օտարերկրյա ներդրողների շրջանակում համապատասխան աշխատանքների կազմակերպում: Թիրախ կհանդիսանան հատկապես Տեխնոքաղաքում ընդգրկված ոլորտներում միջազգային ճանաչում ունեցող ընկերությունները:

Այս միջոցառման շրջանակում կիրականացվեն հասարակակն իրազեկման միջոցառումներում, կպատրաստվեն ներդրումային ծրագրեր և մասնակցություն կունենան աշխարհում տեղի ունեցող միջազգային ինվեստիցիոն ցուցահանդեսներին և գիտաժողովներին:

Ներդրումային ծրագրերի պատրաստման և գործընկերների ներգրավման համար 2013 թվականին նախատեսվում է հատկացնել 74350.0 հազար դրամ գումար:

3. Համաշխարհային բանկի տեխնոլոգիայի մրցունակության բարձրացման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհների համաֆինանսավորում

Այս գործողությունը կօժանդակի նախագծին և կառավարության հետ կհամաֆինանսավորի տարածաշրջանի ՓՄՁ-ների տեխնիկական հնարավորությունների արդիականացման ծրագիրը՝ երեք տարվա կտրվածքով:

Ծրագիրը ներառում է խորհրդատվություն, տեխնիկական աջակցություն և վերապատրաստում և՛ ընկերության անձնակազմի, և Ր երրորդ ընկերության կողմից: Առաջարկվող ծառայությունների մանրամասն նկարագրությունը տրված է GTC ընկերության տեղեկագրում: Սրանք (ծառայությունները) հիմնվում են PHRD-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակում GTC-ի կողմից արված ուսումնասիրության վրա, ինչպես նաև միջազգային լավագույն տեխնոլոգիական զարգացման ծրագրերի վրա: Ծրագիրը կֆինանսավորի նախագծի ղեկավարների խումբը և եռակողմ պայմանագրերը:

Ծրագիրը նախատեսվում է 2013 թվականին համաֆինանսավորել **41,124.0** հազար դրամ:

4. Ծրագրերի կառավարման և ձեռնարկատիրական կրթական ծրագրի զարգացում

Ծրագրի նպատակն է՝ ուժեղացնել ձեռնարկատիրությունը, ավելացնել աշխատատեղեր, ինչպես նաև զարգացնել և ապահովել կայուն տնտեսական աճ: Այն նպատակ ունի նաև նպաստել նորարարության աճին և բարգավաճմանը, ինչպես նաև աշխարհի առաջատար շուկաները ներկայացնող երկրների տնտեսությունների ու սոցիալական պատկերի փոփոխմանը՝ ապահովելով.

- Ձեռնարկատիրական բիզնեսի վերաբերյալ մասնագիտական գիտելիքներ
- Ռեսուրս-կենտրոն, որտեղ ձեռնարկատերերը կարող են ստանալ անհրաժեշտ մասնագիտական բիզնես խորհրդատվություն, ուսուցում և այլ ծառայություններ
- Ինտերնետ բիզնես լուծումներ՝ փոքր և միջին ձեռնարկատիրությունների համար,
- Տեխնոլոգիական ցանց

Ծրագրի իրականացման և զարգացման համար 2013 թվականին նախատեսվում է 27230,0 հազար դրամ:

3.1.6. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի ծախսային ծրագրերն են՝

1. Հիմնական գրասենյակ,
2. Զբոսաշրջության,
3. Առողջապահության,
4. կրթության,
5. Ոլորտները հասող,
6. Աջակից :

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է յոթաքայուր տարվա համար համապատասխանաբար՝ 264.0 ական մլն.դրամ :

16.2. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

16.2.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ), որպես հանրային շահին ուղղված գործառնություններ իրականացնող պետական մարմին, պատասխանատու է տնտեսության և հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների, գործընթացների և դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության համակարգի կազմակերպման, պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց, միջազգային և հասարակական կազմակերպություններին, զանգվածային լրատվամիջոցներին ինչպես նաև հանրությանը վիճակագրական ամփոփ տեղեկատվությամբ ապահովման համար:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի դրույթների՝ ՀՀ տարածքում պետական վիճակագրության մարմինների կողմից մատուցվող ծառայությունների համար օրենսդրական հիմք են հանդիսանում ՀՀ օրենքով հաստատված «Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը» և պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիրը:

ա) ՀՀ ԱՎԾ 2009 թվականի գործունեությունն ըստ <2009 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի>՝ 2009 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում ներառված 422 ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 1898) վիճակագրական աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Ծրագրով նախատեսված տեղեկատվահրատարակչական գործունեության մասով 2009 թվականին, <ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը> տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն) ներառյալ, ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվել են 152 անուն՝ ընդհանուր առմամբ 12141 սուպրանակով և մոտ 1.5 մլն էջ ընդհանուր ծավալով վիճակագրական նյութեր: Ծրագրով

նախատեսված և հրապարակված 21 անուն վիճակագրական ժողովածուները հրապարակվել են ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

Միաժամանակ, համաձայն Ծրագրի, հրապարակվել են 17 անուն վիճակագրական տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ՝ 67): Հրապարակվել են նաև 4 անուն վիճակագրական զեկույցներ (հայերեն և անգլերեն) (վիճակագրական հետազոտությունների արդյունքներով հրապարակված զեկույցները), ինչպես նաև <ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը> տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն):

Համաձայն Ծրագրի, հրապարակվել են 34 մամուլի հաղորդագրություններ և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի 10 մարզային և Երևանի քաղաքի գործակալությունների կողմից պատրաստվել են 6 անուն վիճակագրական զեկույցներ (թվով 57 զեկույց):

2009 թվականի ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից լույս է ընծայվել 4 հրապարակում, 1 մամուլի հաղորդագրություն և էլեկտրոնային փոստով պատասխանվել է 220 հարցումների:

բ) ՀՀ ԱՎԾ 2010 թվականի զարգացման միտումներն ըստ <2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի>

<2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում> ներառված են 426 ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 1864) վիճակագրական աշխատանքներ:

Նախատեսված է իրականացնել 2 վիճակագրական հետազոտություն, որոնցից 1-ը՝ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, իսկ մյուսը՝ Հայաստանի կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն (տնային տնտեսությունների)՝ ՀՀ պետական բյուջեի և <Հազարամյակի մարտահրավեր> հիմնադրամ-Հայաստան> պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) համաֆինանսավորմամբ:

Ծրագրով նախատեսված է հրապարակել 19 վիճակագրական ժողովածու՝ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

Միաժամանակ, համաձայն Ծրագրի, կհրապարակվեն 17 անուն վիճակագրական տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ՝ 67), 9 մամուլի հաղորդագրություններ (պարբերականությունը հաշվի առած՝ 34) և <ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը> տեղեկատվական ամսական զեկույցը՝ (պարբերականությունը հաշվի առած՝ 24):

Համաձայն <Մարդահամարի մասին> ՀՀ օրենքի և ՀՀ 2011 թվականի մարդահամար անցկացնելու վերաբերյալ այլ իրավական ակտերի, սահմանված ժամկետում նախատեսված է կազմակերպել և անցկացնել 2010թ. ապրիլի 14-23-ը փորձնական մարդահամար:

Հիմնական խնդիրներ

Պետական վիճակագրության հիմնական խնդիրներն են.

✦ հազարամյակի զարգացման հռչակագրով սահմանված նպատակները բնութագրող ցուցանիշների մոնիտորինգին օժանդակություն,

✦ կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ) ցուցանիշների մոնիտորինգին օժանդակություն,

- ✧ ազգային հաշիվների համակարգի բարելավում,
- ✧ 2011թվականին հերթական մարդահամարի անցկացում,
- ✧ չհաշվառված տնտեսության գնահատման մեթոդաբանության կատարելագործում,
- ✧ բնապահպանության ոլորտի վիճակագրության բարելավում, ինչպես նաև ամբողջականացում, արդիականացում,
- ✧ վարչական ռեգիստրների ստեղծում և կատարելագործում,
- ✧ վիճակագրական տեղեկատվության մատչելիության, թափանցիկության մակարդակի էլ ավելի բարձրացում:

16.2.2.ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

16.2.2.1.Նպատակները

Վիճակագրության ոլորտի հիմնական նպատակն է **հանրապետության սոցիալ-տնտեսական գործընթացների, բնակչության և նրա կենսագործունեության ոլորտների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, մշակումը, կուտակումը, ամփոփումը, պահպանումը, ինչպես նաև փոխանակումը և վիճակագրական տեղեկատվության տարածումը:**

Համաձայն <Պետական վիճակագրության մասին> ՀՀ օրենքի հոդված 11-ի դրույթների ՀՀ ԱՎԾ-ն, պետական վիճակագրության իրագործման բնագավառում իր գործունեությունն իրականացնում է հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրերով սահմանված հիմնական ուղղությունները, և այդ ուղղությունների առարկայական իրագործման ենթատեքստով` ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված միջոցառումները:

Տարեկան Ծրագիրը ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության ցանկը (հավաքագրման աղբյուրները, ներկայացման և աշխատանքի կատարման (ցուցանիշի մշակման) ժամկետները և հրապարակումները, որտեղ պետք է տեղադրվեն վերջիններս)` հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները պետք է հաշվի առնեն երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովեն դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

16.3.2.2.Գերակայությունները

ՀՀ 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով ՀՀ վիճակագրության ոլորտի հիմնական գերակայություններն են.

- վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում`

շարունակել վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները` հետամուտ լինելով նաև վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացմանը,

- տեղական (համայնքային) վարչական ռեզիստրների (այդ թվում` համայնքների անձնագրերի)

ներդրմանը և վարմանը գուզընթաց կատարելագործել և ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը,

• ցուցանիշների նախապատրաստման օպերատիվության ապահովման նպատակով` աշխատանքներ իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման ուղղությամբ,

• համալրել, արդիանականացնել և ամբողջականացնել (նվազագույնը` ամենամյա պարբերականությամբ) բիզնես-ռեզիստրի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) և որպես դրա հետևանք` աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրմանն ու կիրառմանը,

• անցում կատարել վարչական ռեզիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկմանը, հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը,

• վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով` շարունակել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրմանն ու կիրառման աշխատանքները (մասնավորապես` ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված <Տվյալների տարածման հատուկ ստանդարտի>), ինչը ենթադրում է նաև Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջի անխափան շահագործում և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում,

• շարունակել գենդերային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները,

- վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել

ամբողջական և օպերատիվ բավարարման նպատակով` ընդլայնել վիճակագրական հրապարակումների (տեղեկագրեր, ժողովածուներ և այլն) կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը, ընդլայնելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տարածման հնարավորությունները,

- վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային

չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով՝ շարունակել և ընդլայնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցությունը,

- շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու

կողմնորման միասնական համակարգի մասը կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման (այդ թվում՝ վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգիչը, անհատական սպառման՝ ըստ նպատակների դասակարգիչը, վիճակագրական միավորների դասակարգիչը և այլն), ինչպես նաև արդեն իսկ պետական վիճակագրությունում ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքները (այդ թվում՝ հաշվի առնելով տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի և արտադրանքի դասակարգչի նախատեսվող հիմնարար փոփոխությունների տեղայնացման հանգամանքը),

- կատարելագործել վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմը:

16.2.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՑԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Համաձայն պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրերով սահմանվող վիճակագրության գործունեության հիմնական ուղղությունների՝ **2011-2013** թվականներին ոլորտին ուղղված հատկացումները (առանց կառավարման ապարատի) ըստ տարիների կկազմեն՝ **2011** թվականին՝ **596.8** մլն դրամ, **2012** թվականին՝ **348.8** մլն դրամ, **2013** թվականին՝ **366.3** մլն դրամ:

Ծախսեր կաճեն 2011 թվականին՝ 104.7 % -ով 2010 թվականի նկատմամբ, 2012 թվականին կնվազեն՝ 41.6 % -ով 2011 թվականի նկատմամբ, 2013 թվականին կաճեն՝ 5.0 % -ով 2012 թվականի նկատմամբ:

Պետական վիճակագրության ոլորտում 2011-2013 թվականներին ծախսերի աճը պայմանավորված է՝

- նվազագույն ամսական աշխատավարձը 2011 թվականին՝ 32500 դրամ նախատեսմամբ և 2013

թվականին աշխատողների աշխատավարձերը՝ 10 տոկոսով բարձրացմամբ,

- < 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման աշխատանքների կազմակերպում>

ծրագրի իրականացմամբ:

2011 թվականի մարդահամարի անցկացումը հնարավորություն կտա ապահովել ՀՀ պետական կառավարման մարմիններին, միջազգային կազմակերպություններին ու

քաղաքացիական հասարակության անդամներին ՀՀ բնակչության սեռա-տարիքային կազմի, կրթական, առողջապահական վիճակի, բնակարանային և կենցաղային պայմանների վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվությամբ՝ որպես երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրավորման կարևորագույն միջոց:

< 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման աշխատանքների կազմակերպում > ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

✓ ՀՀ քաղաքների և խոշոր գյուղերի (5000 և ավելի բնակչությամբ) սխեմատիկ հաստակագծերի և վարչական շրջանների քարտեզների պատրաստման աշխատանքների կազմակերպում,

✓ ՀՀ 2011թ. մարդահամարի ծրագրի (հարցաշարի) նախագծի քննարկումների կազմակերպում և վերջնական տարբերակի ներկայացում ՀՀ կառավարության հաստատմանը,

✓ մարդահամարի նախապատրաստման և անցկացման բոլոր գործառույթները կարգավորող մեթոդական, հրահանգչական և հաշվետվական փաստաթղթերի՝ որպես նորմատիվային ակտերի, հաստատման և գրանցման գործառույթների ապահովում, ինչպես նաև նախատեսված ժամկետներում՝ դրանց տպագրում, էլքային աղյուսակների ծրագրի մշակում և հաստատում,

✓ մարդահամարը լուսաբանող զանգվածային-բացատրական գործառույթների հետևողական

կազմակերպում և իրականացում՝ պլակատների և գովազդային նյութերի տպագրում, ռադիո, հեռուստատեսությունների և գրույցների կազմակերպում, տեսահոլովակների պատրաստում, սեմինարների կազմակերպում հանրապետության ողջ տարածքում,

✓ քաղաքներում և խոշոր գյուղերում բնակելի տների/շինությունների և դրանցում բնակվող տնային տնտեսությունների ցուցակների կազմման դաշտային աշխատանքների կազմակերպում նախապես հավաքագրված և ուսուցում անցած աշխատակիցների միջոցով, գյուղական բնակավայրերի ցուցակների կազմում,

✓ տարածքների/մարզերի մարդահամարի անցկացման կազմակերպական պլանների/ նախագծերի կազմում և հաստատում: Միջոցառումների ծրագրով նախատեսված ժամկետներին՝ համապատասխան կադրերի հավաքագրում, ուսուցում, գիտելիքների ստուգում,

✓ մարդահամարի հարցաթերթերի մեքենայական մշակումն ապահովելու համար մեքենայական մշակման փաթեթի մշակում և հաստատում, մուտքի ծրագրերի պատրաստում, թվային կոդավորման համար անհրաժեշտ դասակարգիչների առանձնացում և հաստատում,

✓ մարդահամարի անցկացման համար մարդահամարային բոլոր տեղամասերին՝ համապատասխան քանակություններով անհրաժեշտ փաստաթղթերի ապահովում,

✓ մարդահամարի անցկացման դաշտային աշխատանքների կազմակերպում և իրականացում,

✓ միջոցառումների ծրագրով նախատեսված ժամկետներին լրացված փաստաթղթերի՝ սահմանված կարգով ամբողջականության և ճշգրտության նախատեսված վերահսկողական գործա-

ռույթների անցկացումից հետո, ըստ վերադասության հավաքում և ՀՀ ԱՎԾ մարզային/Երևանի քաղաքային գործակալություններից՝ ՀՀ ԱՎԾ տեղափոխում,

✓ մարդահամարի հարցաթերթերի կողավորման նպատակով համապատասխան մասնագետների հավաքագրում և ուսուցում,

✓ մարդահամարի նախնական ամփոփ ցուցանիշների ստացում և հրապարակում,

✓ մարդահամարի հարցաթերթերի կողավորման գործընթացի կազմակերպում,

✓ մուտքագրման համար կադրերի հավաքագրում և ուսուցում,

✓ մարդահամարի հարցաթերթերի մուտքագրման գործընթացի և վերահսկման մեխանիզմների

կազմակերպում և իրականացում,

✓ ծրագրով նախատեսված մարդահամարի ելքային աղյուսակների ստացում,

✓ մարդահամարի արդյունքներով հրապարակումների պատրաստում և հրատարակում:

ԱՐՏԱՔԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐ

ԱՄՆ Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի և ՀՀ միջև կնքված համաձայնագրի շրջանակում 2007-2011 թվականներին ՀՀ ԱՎԾ կողմից կիրականացվի 1706500 ԱՄՆ դոլարի չափով Հայաստանի կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն (տնային տնտեսությունների հետազոտություններ):

ԳԼՈՒԽ 17. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

17.1. Ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

1.1. Պետական գույքի կառավարման ոլորտի ընդհանուր նկարագիրը.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը այսուհետ՝ Վարչություն շարունակում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, <Պետական գույքի մասնավորեցման սեփականաշնորհման մասին>, <Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին> ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև պետական գույքի կառավարման հայեցակարգով պետական գույքի կառավարման ոլորտում որդեգրած քաղաքականության իրականացումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինության ընկերություններն ընդգրկված են <Պետական գույքի մասնավորեցման 2006-2007թթ. ծրագրի մասին> ՀՀ օրենքի ցանկերում և ՀՀ կառավարության 13.12.99թ. թիվ 747 որոշման 9-բ կետի համաձայն ընկերությունների մասնավորեցման կամ մասնավորեցման նախապատրաստման աշխատանքների մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն են փոխանցվում ընկերության՝ պետությանը պատկանող բաժնետոմսերի տնօրինման լիազորությունները:

2009 թվականի ընթացքում Վարչությունը շարունակել է <Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին>, պետական գույքի մասնավորեցման ծրագրերի մասին ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի <Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին> N40-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև պետական գույքի կառավարման հայեցակարգով պետական գույքի կառավարման ոլորտում որդեգրած քաղաքականության իրականացումը:

1.Պետական գույքի կառավարումը

Պետական բաժնետոմսերի տնօրինումը և ընկերությունների գործունեության մոնիտորինգը

2009թ. դրությամբ Վարչության ենթակայությամբ առկա են եղել թվով 32 ընկերություններ, որոնք ընդգրկված են <Պետական գույքի մասնավորեցման 2006-2007թթ. ծրագրի մասին> ՀՀ օրենքի ցանկերում:

Համաձայն Վարչության 05.08.2009թ. թիվ 67-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի՝ 6 ընկերություններ ներկայացվել են լուծարման, 2 ընկերություն՝ մասնավորեցման և 1 ընկերություն ճանաչվել է սնանկ:

ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1013-Ն որոշմամբ կանոնակարգվել է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը Վարչության տնօրինությանը հանձնելու գործընթացը, որի համաձայն իրականացվել է թվով 10 ընկերության բաժնետոմսերի հանձնման-ընդունման աշխատանքներ:

ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 1085-Ն որոշմամբ թույլատրվել է թվով 6 ընկերությունների բաժնետոմսերը մասնավորեցնել ֆոնդային բորսայի միջոցով, որի համաձայն 4 ընկերություններ վերակազմակերպվել են բաց բաժնետիրական ընկերությունների և 4 ընկերության համար ներկայացվել է գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալների փաթեթներ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1844-Ն որոշման 14-րդ կետի ա/ ենթակետի պահանջը՝ իրականացվել է համապատասխանաբար՝ 2008թ. տարեկան ֆինանսական արդյունքների համար թվով 35 պետական կառավարման մարմինների թվով 422, 2008թ. չորրորդ եռամսյակի համար թվով 34 պետական կառավարման մարմինների թվով 391, 2009թ. առաջին եռամսյակի համար թվով 35 պետական կառավարման մարմինների թվով 430, 2009թ. երկրորդ եռամսյակի համար թվով 35 պետական կառավարման մարմինների թվով 401 և 2009թ. երրորդ եռամսյակի համար թվով 34 պետական կառավարման մարմինների թվով 480 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություններ:

Հաշվառման համակարգի ներդրումն ու կատարելագործումը

Պետական գույքի հաշվառման համակարգի ներդրման շնորհիվ վերափոխվել է պետական գույքի հաշվառման բազան, որը հնարավորություն է տալիս ստանալ հստակ պատկեր պետական սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման վիճակի վերաբերյալ: Օգտագործելով բազայում առկա տեղեկատվությունը՝ ներկայումս աշխատանքներ են տարվում պետական գույքի նկատմամբ սեփականության և այլ իրավունքների գրանցումն ավարտին հասցնելու ուղղությամբ:

2009թ. ընթացքում պետական գույքի հաշվառման գրանցամատյանում հաշվառվել է 2261 անվանում անշարժ գույք՝ 4183446.78 քառ. մետր ընդհանուր մակերեսով, որից 1476-ն ունեն սեփականության իրավունքի պետական գրանցում, իսկ 785-ը չունեն: Հաշվառվել է այլ երկրներում գտնվող 13 միավոր ՀՀ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույք՝ 5533.77 քառ. մետր ընդհանուր մակերեսով:

Հաշվառվել է նաև 289 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գույքի կազմում ընդգրկված թվով 736 անվանում անշարժ գույք՝ 829030.89 քառ. մետր ընդհանուր մակերեսով:

Թվով 4 պետական կառավարման մարմինների կողմից ներկայացվել է 50898.7 քառ. մետր ընդհանուր մակերեսով 20 միավոր անշարժ գույքի (տարածքի) պահանջարկ:

Պետական անշարժ և շարժական գույքի տնօրինումը և օգտագործումը

1. 2009թ. ընթացքում նախապատրաստվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է տարածք ամրացնելու 13 որոշում:

2009թ. ընթացքում կնքվել է ոչ բնակելի տարածքների անհատույց օգտագործման իրավունքի փոխանցման 93, ոչ բնակելի տարածքների վարձակալության իրավունքի տրամադրման 31 պայմանագիր, փոփոխություններ է կատարվել ոչ բնակելի տարածքների անհատույց օգտագործման 3 պայմանագրում և լուծվել է տարածքների վարձակալության 18 պայմանագիր:

Տարածքների վարձակալությունից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 237491.3 հազ. դրամ վարձավճար՝ նախատեսված 234479.8 հազ. դրամի փոխարեն:

2009թ.-ի ընթացքում իրականացվել է 121 միավոր պետական գույքի գույքագրման և 92 միավոր պետական գույքի տեղազննման և ուսումնասիրման աշխատանքներ:

2. 2009թ. ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանն է ընդունել 4161505.1 հազ. դրամ ընդհանուր արժեքով 3061 միավոր գույք և հաշվառումից հանվել է 372-ը 892366.3 հազ. դրամ ընդհանուր արժեքով:

Ձեռնարկված միջոցների արդյունքում ավարտվել է թվով 114 միավոր անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցման աշխատանքները, որից ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից հաստատվել և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե են ներկայացվել պետական սեփականություն հանդիսացող 43 միավոր անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ 1440.6 հազ. դրամ ընդհանուր գումարով վարչական ակտեր:

Առևտրային կազմակերպությունների լուծարումը

2009 թվականի ընթացքում լուծարման գործընթացում են գտնվել 324 կազմակերպություն, որոնցից 226 կազմակերպության լուծարման մասին ՀՀ կառավարության որոշումներն ընդունվել են 2009թ. ընթացքում:

Նույն ժամանակահատվածում վերը նշված կազմակերպություններից՝

ա/ 39 կազմակերպությունների լուծարման գործընթացն ավարտվել է,

բ/ 19 կազմակերպություններ գտնվում են սնանկության գործընթացում,

գ/ 11 կազմակերպությունների լուծարման հանձնաժողովների գործունեությունը դադարեցվել է,

դ/ 5 կազմակերպությունների, որոնք վերակազմակերպվել էին ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կազմակերպա-իրավական ձևեր ունեցող իրավաբանական անձանց, գործունեության դադարեցման մասին կատարվել են համապատասխան գրառումներ:

01.01.2010թ դրությամբ լուծարման գործընթացում են գտնվում 250 կազմակերպություն, որոնցից 196 կազմակերպության լուծարման մասին ՀՀ կառավարության որոշումներն ընդունվել են 2009թ ընթացքում:

ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 30-ի <ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կազմակերպա-իրավական ձևեր չունեցող մի շարք իրավաբանական անձանց լուծարված համարելու և դրանց գույքի հետագա տնօրինման մասին> թիվ 891-Ս որոշման համաձայն 337 դուստր ձեռնարկություններ համարվել են լուծարված:

Լուծարվող կազմակերպությունների կրեդիտորական պարտավորությունները մարելու նպատակով կազմակերպվել են մի շարք աճուրդներ, ինչպես նաև միջոցներ են ձեռնարկվել դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների լուծարման հանձնաժողովների կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում մարվել է շուրջ 105403.0 հազ.դրամ կրեդիտորական պարտք, որից ՀՀ պետական բյուջե՝ 8665.0 հազ.դրամ, ՀՀ սոցիալական ապահովագրության գծով՝ 872.0 հազ.դրամ, աշխատավարձի գծով՝ 88713.0 հազ.դրամ և այլ կրեդիտորական պարտք՝ 7153.0 հազ.դրամ:

ՀՀ պետական բյուջեի N900005029039 <Լուծարվող պետական փակ բաժնետիրական ընկերությունների հաշվարկային հաշիվներում մնացած դրամական միջոցների հավաքագրում> եկամտային հաշվին փոխանցվել է 7164.0 հազ. դրամ:

II. Պետական գույքի մասնավորեցումը և օտարումը

Պետական գույքի մասնավորեցման և օտարման գործընթացների քանակական ցուցանիշները

2009թ. ընթացքում (առ 01.01.2010թ.)

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել պետական գույքի մասնավորեցման և օտարման մասին ՀՀ կառավարության որոշման 25 նախագիծ, որից 20-ը ընդունվել են ՀՀ կառավարության կողմից:

Մասնավորեցում.

ՀՀ կառավարության կողմից ընդունված վերոնշյալ որոշումներից 15-ով մասնավորեցման է ներկայացվել 24 ընկերության բաժնետոմսեր, 16 գույքային միավոր և 5 առևտրային կազմակերպության լուծարումից հետո մնացած գույք:

Պետական մասնակցությամբ 1 առևտրային կազմակերպության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցման է ներկայացվել ուղղակի վաճառքով՝ աշխատավորական կոլեկտիվին:

Մրցույթով մասնավորեցման է առաջարկվել պետական մասնակցությամբ 1 առևտրային կազմակերպության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր, որը չի կայացել և 1 առևտրային կազմակերպությունից առանձնացված գույքային միավոր, որն ընթացքում է:

Աճուրդով մասնավորեցման են առաջարկվել պետական մասնակցությամբ 2 առևտրային կազմակերպության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր, 5 գույքային միավորներ և 5 առևտրային կազմակերպության լուծարումից հետո մնացած գույք: Այս ձևով մասնավորեցվել է պետական մասնակցությամբ 1 առևտրային կազմակերպության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը և 1 գույքային միավոր:

Արդյունքում 2009 թվականի ընթացքում մասնավորեցվել է 2 ընկերության բաժնետոմսեր՝ 1-ը՝ ուղղակի վաճառքով և 1-ը՝ աճուրդով և 1 գույքային միավոր՝ աճուրդով:

Օտարում.

ՀՀ կառավարության կողմից ընդունված 7 որոշումներով օտարման է ներկայացվել 56 գույքային միավոր, որոնցից 11-ը՝ անշարժ գույք, 40-ը՝ տրանսպորտային միջոց, իսկ 5-ը՝ այլ շարժական գույք:

Օտարման ներկայացված վերոնշյալ 11 միավոր անշարժ գույքից 2-ը ներկայացվել է օտարման ուղղակի վաճառքի ձևով, իսկ մնացած 9՝ հրապարակային սակարկություններով (2-ը՝ մրցույթով, 7-ը՝ աճուրդով):

2009թ. ընթացքում կազմակերպվել է 673 տրանսպորտային միջոցների օտարման 165 աճուրդ, կայացել է 66-ը, որոնց ընթացքում վաճառվել է 139 տրանսպորտային միջոց: Կազմակերպվել է 31 անշարժ գույքի օտարման 18 աճուրդ, կայացել է 8-ը, որի ընթացքում վաճառվել է 8-ը, 397 շարժական գույքի օտարման 4 աճուրդ, որոնց ընթացքում վաճառվել է 6-ը:

Ընդհանուր առմամբ, 01.01.2010թ. դրությամբ մասնավորեցվել է 2020 միջին և խոշոր ընկերություն, որից 1085-ը՝ բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ, 175-ը՝ մրցույթով, 637-ը՝ ուղղակի վաճառքի ձևով, 60-ը՝ աճուրդով, 62-ը՝ լոտային աճուրդով և 1-ը՝ մասնագիտացված շուկայում պետական բաժնետոմսերի վաճառքի միջոցով: Մասնավորեցվել է 7307 <փոքր> և 101 անավարտ շինարարության օբեկտ:

2009թ. ընթացքում կնքվել է 113 պայմանագիր, որից 9-ը՝ մասնավորեցման (ուղղակի վաճառք՝ 1, աճուրդ՝ 8), 19-ը՝ օտարման, 2-ը՝ նվիրաբերության, 82-ը՝ նվիրատվության, 1-ը անհատույց սեփականաշնորհման, փոփոխություն է կատարվել մասնավորեցման 3 պայմանագրում:

Կատարվել է 8 ընկերության, 29 միավոր անշարժ գույքի, թվով 10 իրավաբանական անձանց լուծարումից հետո մնացած գույքի, թվով 19 պետական կառավարչական հիմնարկներին և պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված 91 տրանսպորտային միջոցների գնահատման աշխատանքներ:

Պետական գույքի մասնավորեցումից և օտարումից ստացված միջոցները

2009 թվականին (01.01.2010թ. դրությամբ) ՀՀ պետական բյուջեի սեփականաշնորհման հաշվին փաստացի մուտքագրվել է 199549.1 հազ. դրամ, իսկ համայնքային բյուջեներ է փոխանցվել 49426.4 հազ. դրամ:

Օտարումից ստացված մուտքերն ունեն հետևյալ տեսքը՝

2009 թվականին գույքի օտարումից ստացված միջոցները կազմել են 143069.5 հազ. դրամ, որից համայնքային բյուջեներ է փոխանցվել 24632.2 հազ. դրամը:

2009 թվականի ընթացքում մասնավորեցման պայմանագրերով վերահսկողության ներքո են գտնվել թվով 62 գնորդի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը, որոնց կողմից ստանձնած ներդրումային պարտավորությունները 2009թ-ին կազմել են 642548.2 հազար ՀՀ դրամ, 12648 հազար ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով նախատեսված է եղել ստեղծել 1150 աշխատատեղ:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված ուսումնասիրությունների արդյունքներով պայմանագրային պարտավորությունները կատարել են թվով 46 գնորդ, որոնց կողմից կատարված ներդրումները կազմել են 717875.6 հազար ՀՀ դրամ, 127.2 հազար ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով նշված գնորդների կողմից ստեղծվել է 1547 աշխատատեղ:

Հաշվետու ժամանակաշրջանում պայմանագրային պարտավորությունները չեն կատարել կամ թերակատարել են թվով 16 ընկերության կամ գույքի գնորդներ, որոնց կողմից չկատարված կամ թերակատարված ներդրումները կազմել են 272881.5 հազար ՀՀ դրամ, 12550,6 հազար ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով նշված գնորդների կողմից չի ստեղծվել 78 աշխատատեղ:

17.2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները

1. Ռազմավարական նպատակները

Ընդհանրապես բոլոր երկրներում պետական գույքի կառավարման և մասնավորեցման գործընթացը նպատակաուղղված է որոշակի նպատակների իրագործմանը: Պետական գույքի մասնավորեցման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում ընթացավ օրենսդրի կողմից, սկզբից ամենամյա, այնուհետև եռամյա կտրվածքով ընդունված մասնավորեցման ծրագրերին

համապատասխան: Ներկայումս գործողության մեջ է <Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին> ՀՀ օրենքը, որը թվով 6-րդն է. նախկինում գործողության մեջ են դրվել 1994թ., 1995թ., 1996-1997թթ. տարեկան և 1998-2000, 2001-2004 թվականների եռամյա ծրագրերը:

Այդուհանդերձ, 2011-2013թվականների համար, որպես պետական գույքի կառավարման և մասնավորեցման նպատակներ ակնկալվում են.

առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի կառավարման և մասնավորեցման արդյունքում բարձրացնել ընկերությունների գրավչությունը տեղական և օտարերկրյա ներդրողների համար և դրանց գործունեության արդյունավետությունը,

գարգացնել պետական գույքի հաշվառման ու գույքագրման համակարգը, ապահովելով պետական գույքի նկատմամբ պետության սեփականության իրավունքների գրանցման աշխատանքների ավարտը,

պետական գույքի մասնավորեցման միջոցով ապահովել ծրագրային, այդ թվում՝ մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ներդրումների ընդգրկման և սոցիալական երաշխիքների ապահովման առաջնայնությունը,

ապահովել պետական գույքի կառավարման քաղաքականության շարունակականությունը և նոր ծրագրի գործողության ժամկետում ավարտել պետական գույքի մասնավորեցման հիմնական գործընթացը,

ավելացնել տնտեսությունում ոչ պետական առևտրային կազմակերպությունների թիվը, ինչպես նաև պետական գույքի կառավարումից ու մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին ավելացնել պետական բյուջեի եկամուտները, պետական գույքի կառավարման քաղաքականության իրականացումը ավելի արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է պետական գույքի շենք շինությունների վերանորոգման աշխատանքների իրականացում, որն ավելի գրավիչ կդարձնի պետական գույքի վարձակալությունը:

2.2. Գերակայությունները

1. պետական գույքի հաշվառման համակարգի կատարելագործում,
2. պետական գույքի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման աշխատանքների ավարտ,
3. մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ծրագրային, այդ թվում՝ ներդրումների և սոցիալական երաշխիքների ընդգրկմամբ մասնավորեցման գործընթացի ապահովում, ինչը կնպաստի հանրապետությունում տնտեսական աճի խթանմանը:
4. պետական գույքի օգտագործման արդյունավետության ապահովում,
5. պետական գույքի կառավարման տարբեր մակարդակներում կառավարիչների (աշխատակազմի ղեկավար, գործադիր տնօրեն, լիազոր ներկայացուցիչ) աշխատանքների վերահսկողության և գնահատման համակարգի հստակ սահմանում,
6. կառավարման ոլորտում մասնակիցների շահերի ներդաշնակության ապահովումը,

7. առաջնային նշանակության պետական գույքի կառավարման հատուկ գերակայություն համարվող սահմանադրական և օրենսդրական գործառույթների, վարչական և ռազմավարական նպատակների կատարման համար անհրաժեշտ գույքի նկատմամբ հիմնական պահանջներին բավարարող տարբերակներից առավել մատչելի և ռեսուրսային ընտրություն:

8. <Պետական աջակցություն ՀՀ մանկատան խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին> ծրագրով նախատեսված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցելով բնակարանների օգտագործման պայմանագրերի կնքում,

9. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների բնակարանային խնդիրների դիմում բողոքների ուսումնասիրում և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով բնակարանների ապահովում:

3. Հիմնական գերակա վերջնական արդյունքները

2011-2013 թվականներին ՀՀ կառավարությունը վերոհիշյալ առաջնային ռազմավարական նպատակներին համահունչ հետաժողով կլինի հասնելու հետևյալ հիմնական գերակա վերջնական արդյունքներին՝

1. իրականացնել <ՀՀ պետական գույքի մասնավորեցման 2006-2007թթ ծրագրի մասին> ՀՀ օրենքում ընդգրկված օբյեկտների ճիշտ մասնավորեցում, որը կնպաստի տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության և արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանը, պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, աշխատաշուկայի ստեղծմանը, մարդկային կապիտալի զարգացմանը և պետության այլ գործառույթների կատարմանը:

2. կատարելագործել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական մոնիտորինգի համակարգը և բարձրացնել պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման որակը, ինչպես նաև հսկողություն սահմանել կանոնադրությամբ սահմանված ծրագրերի իրագործմանը,

3. պետական անշարժ գույքի կառավարման գործընթացում ևս առկա են բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես, կանոնակարգված չէ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման տրամադրումն ինչ սկզբունքներով և ինչ չափորոշիչներով պետք է իրականացվի (օրինակ՝ ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1322 որոշմամբ մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների իրենց կողմից զբաղեցրած տարածքները տրամադրվել են անհատույց օգտագործման առանց որևէ այլ չափորոշիչներ հաշվի առնելով), մինչ օրս լուծված չէ նաև պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման գործընթացում հանձնելիս դրանց ապասարկման խնդիրները, որոնք բացի կազմակերպչական լուծումներից պահանջում են նաև

Ֆինանսական միջոցներ: Խնդիր է նաև նույն գույքը տարբեր անձանց կողմից կարճ ժամկետով օգտագործման տրամադրումը՝ օրինակ ժամավճարով:

Նախատեսվում է բարձրացնել պետական անշարժ գույքի օգտագործման արդյունավետությունը, դրանից ստացվող եկամուտները, մասնավորապես, 2010 թվականի ընթացքում պետական սեփականություն հանդիսացող մոտ 40 000 քառ. մետր անշարժ գույքի թվով 190 վարձակալներից նախատեսվում է ՀՀ պետական բյուջե մուտքագրել շուրջ 180 000 հազ.դրամ:

Պետական գույքի հաշվառման և պետական անշարժ գույքի պահանջարկի հստակեցման նպատակով ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի թիվ 562-Ն որոշման մեջ կատարված վերջին փոփոխությամբ սահմանվել են պետական մարմինների կողմից ներկայացվող տեղեկանքների նոր ձևեր, համաձայն որոնց լրացվում են նաև պետական մարմիններին անհրաժեշտ անշարժ գույքի մասին տեղեկանքը, ինչն էլ իր հերթին հնարավորություն կընձեռնի հստակեցնել պետական անշարժ գույքի պահանջարկը:

ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում (համակարգում) իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

1. Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներ

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝ պետական գույքի մասնավորեցման և օտարման (վաճառքի) (աճուրդ, մրցույթ, ուղղակի վաճառք) կազմակերպում և անցկացում:

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2011-2012թթ.-ին՝ 21.1- ական մլն դրամ, իսկ 2013թ.-ին 22.9 մլն դրամ:

2. Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կատարել՝ պետական սեփականություն հանդիսացող գույքի գույքագրում, ուսումնասիրման՝ տեղագնման միջոցով, գնահատման, հաշվառման, գրանցամատյանի վարմանն աջակցող աշխատանքների իրականացման աշխատանքներ:

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2011-2012թթ.-ին՝ 35.0-ական մլն դրամ, իսկ 2013թ.-ին 38.0 մլն դրամ:

3. Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակում

Ծրագրի իրականացման համար 2011-2013թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է յոթաքաջուր տարվա համար համապատասխանաբար՝ 15.3 ական մլն.դրամ :

ԳԼՈՒԽ 18. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ

18.1. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

18.1.1 Ռազմական կարիքների բավարարում (ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ)

18.2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ

Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կողովեն գոյություն ունեցող 8 ծրագրերի իրականացմանը: Նշված ծրագրերը մշակվել են 2011-2013 թվականների ՄԺԾԾ շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից սահմանված կողմնորոշիչ չափաքանակների ու աշխատանքները համակարգող մշտապես գործող խմբի կողմից արված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա և կիրականացվեն պետական կառավարման 4 մարմինների միջոցով (տես Աղյուսակ 18.2.1.):

18.2.1 Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում իրավիճակի նկարագրություն

Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, գործելով ՀՀ օրենսդրական դաշտի պահանջների սահմաններում, ինչպես նաև 2001 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված <Ազգային անվտանգության մարմինների մասին> ՀՀ օրենքով, կատարում է բազմաբնույթ ծառայություններ, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) իրավասության սահմաններում, մասնավորապես, ՀՀ ինքնիշխանության, պետական սահմանների անձեռնմխելիության, տարածքային ամբողջականության, սահմանադրական կարգի, քաղաքացիների իրավունքների, ազատության և օրինական շահերի ապահովումը, հանրապետության պաշտպանունակության ամրապնդումը, անվտանգության ապահովման և ամրապնդման, պետական պահպանության, տնտեսական, գիտատեխնիկական և պաշտպանական ներուժի հզորացման նպատակով համապատասխան

տեղեկատվությունների հավաքումը, ռազմաարդյունաբերական, տնտեսական, ատոմային էներգետիկայի, տրանսպորտի, կապի, էկոնոմիկայի, ֆինանսների և արդյունաբերական, ռազմավարական օբյեկտների, առաջնային գիտական մշակումների ոլորտներում անվտանգության ապահովումն, ահաբեկչության, կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարն, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների ու կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական և այլ քայքայիչ գործունեության բացահայտումը, կանխումն ու խափանումը:

<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին> ՀՀ օրենքով ստեղծվել և առաջին անգամ 2005 թվականից պետական բյուջե է ընդգրկվել <Պետական պահպանության ապահովում> ծրագիրը: Ծրագրի շրջանակներում իրականացվում է պետական պահպանություն՝ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման և պետական օբյեկտների պաշտպանության ոլորտի գործառույթ, որն իրականացվում է իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումների համակցմամբ:

Հասարակական կարգի պահպանության ապահովում, ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն և պետավտոհամարանիշների ձեռքբերում

ՀՀ ոստիկանության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, <Ոստիկանության մասին>, <Ոստիկանությունում ծառայության մասին>, <Ոստիկանության գործերի մասին>, <Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին> ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով: ՀՀ ոստիկանության առջև դրված կանոնադրական խնդիրների կատարումն ապահովվում է ՀՀ ոստիկանության 11 մարզային և 56 ստորաբաժանումների, ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 1008-Ն որոշմամբ պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով ծառայություն իրականացնող 29 ստորաբաժանումների միջոցով:

Սույն խնդիր է դիտարկվում, սույն ոլորտին ուղղվող պետական ծախսերի շարունակական պայմաններում, առավել նպատակային և արդյունավետ ծախսային ուղղվածության ապահովումը: Սույն ոլորտում պետական ծախսերը հանդիսանում է ոլորտում իրավիճակի բարելավման առաջնահերթ ուղղություններից մեկը:

Օրենքներով և ազգային զարգացման ռազմավարություններով սահմանված ոստիկանության հիմնախնդիրների և միջոցառումների համակարգված իրագործումն ապահովվում է ոստիկանության հետևյալ հիմնական ոլորտային ծրագրերի շրջանակներում.

1. Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն,

2. հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար,

3. պետական պահպանություն,

4. ճանապարհային անվտանգության ապահովում,

5. անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի կազմակերպում և վարում,

6. կրթական ծառայություններ,

7. ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների թվաքանակի շարունակական աճը, դրանով պայմանավորված նաև երթևեկության ինտենսիվության զգալի բարձրացումն, ինչպես նաև զանգվածային միջոցառումների նկատելի ավելացումը՝ անհրաժեշտություն է առաջացել ճանապարհային երթևեկության անվտանգության, հասարակական կարգի և հասարակական անվտանգության պահպանման աշխատանքներում լայնորեն կիրառել տեխնիկական ժամանակակից միջոցներ: Այդ նպատակով իրականացվում են մի շարք միջոցառումներ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության նյութատեխնիկական միջոցների վերազինմանը, ճանապարհային երթևեկության անվտանգության հսկողության տեխնիկական ապահովմանը և տրանսպորտային միջոցների պետական հաշվառման, համարանիշների հատկացման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Ոստիկանության պետական պահպանության վարչության և ենթակա ստորաբաժանումների կողմից 2009 թվականին իրականացվել է ընդհանուր առմամբ 4099 օբյեկտի, որից՝ 1233 բնակարանի պահպանություն, որը 2008 թվականի նույն ցուցանիշը գերազանցում է համապատասխանաբար ըստ օբյեկտների՝ 187-ով կամ 4% -ով և 116-ով կամ 10%-ով: Նշված ժամանակահատվածում 1276 օբյեկտով կամ 67%-ով ավելացել է երթուղիներով պահպանվող օբյեկտների քանակը (2009թվականին՝ 3191 իսկ 2008 թվականին՝ 1915 օբյեկտ) և 67-ով՝ կենտրոնացված դիտակայանների միջոցով պահպանվող օբյեկտների թիվը (2009 թվականին՝ 2893 օբյեկտ, 2008 թվականին՝ 2826):

Արդյունքում պետական պահպանության ծառայության պայմանագրային հիմունքներով իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող օբյեկտների (գույքի) պահպանության և անվտանգության ապահովման գծով 2009 թվականի եկամուտները 10.3%-ով գերազանցեց 2008 թվականի նույն ցուցանիշը և կազմեց 4,419.9 մլն դրամ:

ՀՀ ոստիկանության մարմիններն ու ստորաբաժանումները, համագործակցելով այլ իրավապահ մարմինների հետ, ձեռնարկել են անհրաժեշտ բոլոր միջոցները հանցագործությունների նախականիման, բացահայտման, ինչպես նաև հասարակական կարգն ու անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: 2007 թվականից սկսված այսուհետ քրեակատարողական հիմնարկների արտաքին պահպանության գործառույթները ՀՀ

նստիկանության համակարգից տեղափոխվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությանը:

Որակական նոր հարթության վրա է բարձրացվել փոխհամագործակցությունը ՀՀ ոստիկանության և անչափահասների հիմնախնդիրներով զբաղվող պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային տարբեր կազմակերպությունների միջև, մշակվել և համատեղ իրագործվում են սոցիալական ուղղվածություն ունեցող մի շարք ծրագրեր: Կատարված աշխատանքների արդյունքում՝ հաջողվել է ոչ միայն կասեցնել անչափահասների շրջանում հանցավորության շարունակական աճը, այլև վերջին տասը տարիների ընթացքում առաջին անգամ արձանագրվել է անչափահասների շրջանում հանցավորությունը բնութագրող հիմնական ցուցանիշների նվազման միտում:

Նախորդ 2 տարիների ընթացքում զգալի աշխատանք է կատարվել ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման, ճանապարհային երթևեկության բոլոր մասնակիցների կարգապահության հետագա ամրապնդման ուղղությամբ:

Սկսվել է հանրապետության խոշոր քաղաքների խաչմերուկներում և մայրուղիներում տեսադիտման և արագաչափ ավտոմատ սարքերի տեղադրման, ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի գործարկման աշխատանքները:

Էական առաջընթաց է արձանագրվել պարեկային ծառայության, իչպես նաև հաշվառման քննական բոլոր 15 ստորաբաժանումների հիմնովին տեխնիկական վերազինման ծրագրի իրագործման առումով:

Արդյունքների բարելավում է արձանագրվել նաև քննությունից և դատից խուսափող անձանց հետախուզման ուղղությամբ, բացի այդ, հանրապետության ոստիկանության մարմինների կողմից ձերբակալվել են այլ պետությունների կողմից հետախուզվող զգալի թվով հանցագործներ:

Քրեակատարողական համակարգի պահպանում

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թվով 14 քրեակատարողական հիմնարկներից:

Ծառայությունը կազմակերպում է քրեական պատիժների կատարման կապակցությամբ դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և որոշումների կատարումը, կալանավորվածներին կալանքի տակ պահելը, ինչպես նաև դատապարտյալների և կալանավորվածների փոխադրումներին աջակցելը, քրեակատարողական հիմնարկներում օրինականության, այնտեղ պահվող անձանց, ինչպես նաև դրանց տարածքում գտնվող անձնակազմի և քաղաքացիների անվտանգությունն ապահովելը, դատապարտյալների և կալանավորվածների կյանքի և առողջության պահպանման, անհատական, կրթական և մշակութային զարգացման

պայմանների ապահովումը, դատապարտյալների և կալանավորվածների սոցիալիզացիայի և կրթական գործունեության վերականգնումը, աջակցությունն իրավապահ մարմիններին՝ հանցագործությունների կանխարգելման և բացահայտման աշխատանքներում, ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների գործունեության համակարգումը:

2011-2013 թվականների ընթացքում ծառայության հիմնական նպատակը ծառայության առջև օրենքով սահմանված խնդիրների պատշաճ իրականացումն է՝ կալանավորված և դատապարտված անձանց քրեակատարողական հիմնարկներում պահելու նյութական, ներառյալ՝ սննդամթերքով և կենցաղային իրերով ապահովելու, կենցաղային, բուժսպասարկման և այլ պայմանները մարդու իրավունքների ասպարեզում գոյություն ունեցող և համընդհանուր ընդունելության արժանացած միջազգային փաստաթղթերի դրույթներին և չափանիշներին համապատասխան ապահովելը:

Հիշյալ հանգամանքը կարևորվեց Եվրոպայի Խորհրդին Հայաստանի Հանրապետության անդամակցության կապակցությամբ: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին Եվրոպական կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի հոկտեմբերի 1-ից: Համաձայն Կոնվենցիայի, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ CPT) ամենամյա այցելություններ է կատարում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ, որոնց ժամանակ ԵԽ անդամ պետության կառավարությանն է ներկայացնում համապատասխան զեկույց, որում բարձրացված առաջարկությունները տվյալ պետության կառավարության համար կրում են պարտադիր բնույթ:

Ելնելով վերոշարադրյալից՝ 2011-2013 թվականների ընթացքում (և ընդհանրապես) ծառայության հիմնական նպատակն օրենքով սահմանված խնդիրներն արդի պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխան իրականացնելն է: Կապված CPT-ի առաջարկությունների հետ՝ ենթակառուցվածքային ոլորտի բարեփոխումների գծով ծառայության առջև ծառայած խնդիրները հիմնականում կապիտալ ծախսերն են, որոնք անմիջականորեն պետք է ուղղվեն քրեակատարողական հիմնարկների անվտանգության ապահովման առումով կառավարելիության պատշաճ մակարդակի հասնելուն, ինչպես նաև դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց իրավունքների առավել լիարժեք պաշտպանության, դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց պահելու վայլերում պայմանների բարելավմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

Կապիտալ ծախսերի գծով աշխատանքների կատարման համար առկա են մի շարք գործոններ, մասնավորապես.

1) Նախկինում կալանավորված կամ դատապարտված մեկ անձին հատկացվում էր 2քմ մակերեսով բնակելի տարածք: Քրեակատարողական քաղաքականության ասպարեզում ՀՀ ստանձնած պարտավորությունների և CPT-ի առաջարկությունների հիման վրա՝ մեկ անձի հաշվարկով բնակելի տարածության նվազագույն չափը 4քմ պետք է լինի: Այդ իսկ պատճառով շենքային պայմանների ծավալների անբավարարության խնդիրը ծառայությունում սրվել է: Միջազգային չափանիշներին համապատասխան, կալանավորված կամ դատապարտված անձանցով քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնումն անթույլատրելի է երկու առումով, նախ՝ վերջիններիս համար ոչ պատշաճ պայմաններ են ստեղծվում (համարվում է անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք), և, միևնույն ժամանակ, տարածքային ու վարչակազմի արդեն իսկ չբավարարող (մեկ դատապարտյալի կամ կալանավորվածի հաշվարկով) անձնակազմի դեպքում առաջանում են նախապայմաններ քրեակատարողական հիմնարկների անկառավարելիության (անվտանգության ապահովման առումով) համար:

2) Խորհրդային տարիներից մինչ այժմ ուղղիչ հիմնարկներում դատապարտյալները բնակվում էին հիմնականում հանրակացարանային ձևի բնակելի տարածքներում, մինչդեռ անհրաժեշտություն է առաջացել անցում կատարելու ամբողջությամբ խցային տիպի բնակելի տարածքների: Խնդիրը կարևորվում է երկու տեսանկյունից: Նախ՝ այն բխում է միջազգային չափանիշներին համապատասխան՝ պատժի անհատականացման սկզբունքն (անձը պետք է հնարավորինս առանձնանալու հնարավորություն ունենա) իրագործելու անհրաժեշտությունից, ապահովելով պայմաններ, որպեսզի քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալները փոքր խմբերով պահվեն առանձին խցերում, հաշվի առնելով վերջիններիս համատեղելիությունը՝ յուրաքանչյուր խցում ապահովելով առանձնացված սանհանգույց և այլ հարմարություններ (հիշյալ դրույթներն ամրագրված են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով): Բացի այդ, խնդիրն էլ ավելի է կարևորվում վարչակազմի կողմից անվտանգությունն ապահովելու առումով՝ հիմնարկի կառավարելիության անհրաժեշտ աստիճան ապահովելը հնարավոր չէ: Ներկայիս իրավիճակում անվտանգության ապահովման առումով քրեակատարողական հիմնարկները գտնվում են անպաշտպան վիճակում:

3) Քրեակատարողական համակարգում իրականացվել են մի շարք կապիտալ վերանորոգման և կապիտալ շինարարական աշխատանքներ, մասնավորապես, ամբողջովին վերանորոգվել են <Վարդաշեն>, <Վանաձոր>, <Արթիկ>, <Հրազդան> քրեակատարողական հիմնարկները, իսկ <Աբովյան> քրեակատարողական հիմնարկում կառուցվել է կալանավորված անձանց պահելու համար նախատեսված մասնաշենք և ջեռուցման համակարգ և այլն:

4) Հայաստանի Հանրապետությունն, անդամագրվելով Եվրոպայի Խորհրդին, որպես քրեական պատժի տեսակ, ամբողջությամբ վերացրեց մահապատիժը, միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրվեց, որպես առավելագույն պատիժ, ցմահ ազատազրկումը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման կատեգորիայի

դատապարտյալների թիվն աճման միտում ունի: Կանխատեսվում է, որ մոտ 3 մլն բնակչություն ունեցող երկրում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց թիվն աստիճանաբար կհասնի 100-150-ի (վերլուծությունը կատարվել է Շոտլանդիայի օրինակով): Ներկայումս ցմահ ազատազրկման դատապարտված անձանց թիվը կազմում է 81 մարդ: Քրեակատարողական ծառայությունն Արմավիրի մարզում, ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար նոր քրեակատարողական հիմնարկ ստեղծելու նպատակով, ձեռք է բերել հողատարածք, որտեղ իրականացվել են տարածքի համահարթեցման, գոյություն ունեցող շենք-շինությունների քանդման և արտաքին պարագծով պարսպապատման աշխատանքներ, իսկ 2007 թվականից իրականացվել են շինարարական աշխատանքները:

2011-2013 թվականների ՄԺԾԾ շրջանակներում նախատեսվում է <Գորիս> քրեակատարողական հիմնարկի նոր համալիրի կառուցման կապիտալ շինարարական աշխատանքներ:

Ծառայության պահպանման նպատակով ոչ առաջնահերթ ծախսային ուղղությունները մատնանշվում են, նկատի ունենալով այն հանգամանքը, որ սլվյալ ուղղություններով կատարվող ծախսերն ավելացնելու անհրաժեշտությամբ հանդերձ` դրանք, այնուամենայնիվ, մյուս ուղղությունների համեմատ փոքր կարևորություն ունեն: Ոչ առաջնահերթ ծախսային ուղղություններն են.

1. գրասենյակային պարագաներ և նյութեր,
2. գույք և սարքավորումներ,
3. գործուղումներ և ծառայողական շրջագայություններ:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում

Հայաստանի փրկարար ծառայությունը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կազմում գործող պետական մարմին է, իր 11 տարածքային փրկարարական վարչություններով, մշակում և իրականացնում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը: Նրա լիազորությունները սահմանվում են <Հայաստանի փրկարար ծառայության մասին>, <Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>, <Քաղաքացիական պաշտպանության մասին> և <Հրդեհային անվտանգության մասին> ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

Վերջին տարիների կառուցվածքային բարեփոխումները թերևս առավել չափով իրենց ազդեցություններն ունեցան փրկարար ծառայության վրա: Նախ 2002 թվականին, այն ժամանակվա ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության կազմում վերակազմավորվեց հրշեջ ծառայությունը, այնուհետև ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ

իրավիճակների վարչությունը վերակազմավորվեց ՀՀ տարածքային կառավարման նախարարության կազմում, հետագայում վերանվանվեց Հայաստանի փրկարար ծառայության, իսկ ներկայումս վերակազմավորվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կազմում՝ Հայաստանի փրկարար ծառայության:

Համակարգի ստեղծումը համընկել է անկախ պետականության ձեռքբերման հետ, հետևաբար անցումային շրջանի բոլոր դժվարություններն ուղղակիորեն ազդել են փրկարար ծառայության ձևավորման և զարգացման վրա: 2005 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել <Հայաստանի փրկարար ծառայության մասին> ՀՀ օրենքն՝ առավել հստակեցնելով նրա դերը և տեղը պետական գործառույթների բնագավառում:

Վերջին տարիների ընթացքում մեծածավալ ներդրումներ են կատարվել Հայաստանի փրկարար ծառայության համակարգի զարգացման ուղղությամբ՝ ձեռք են բերվել ստացիոնար գերկարճալիք ռադիոկայաններ, շարժական գերկարճալիք ռադիոկայաններ, դյուրակիր գերկարճալիք ռադիոկայաններ, ստացիոնար կարճալիք ռադիոկայաններ, սնման սարքեր, նոր հաճակախանություն, մոտորանավակ, օպերատիվ ծառայության և հրշեջփրկարարական մեքենաներ: <Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին> և <Քաղաքացիական պաշտպանության մասին> ՀՀ օրենքներին համապատասխան՝ համակարգի փրկարարական ստորաբաժանումների կողմից իրականացվում են միջին հաշվով՝

12 հրամանատարաշտաբային ուսումնավարժություն,

174 շտաբային ուսումնավարժություն,

4 շտաբային վարժանք,

28 հատուկ տակտիկական ուսումնավարժություն,

11-ից ավելի համայնքային և օբյեկտային համալիր ուսումնասիրություն, որոնցում ընդգրկվել են 10-ից ավելի քաղաքային համայնքներ:

Չնայած նշված համալիր միջոցառումներին՝ հանրապետությունում մեծ է հրդեհների թիվը (տարեկան շուրջ 1617 դեպք), որը հանգեցնում է զգալի նյութական կորուստների՝ նույնիսկ մարդկային զոհերի: Դա նշանակում է, որ համակարգը դեռևս լիովին չի օգտագործում պրոֆիլակտիկ և քարոզչության հնարավորությունները:

Հայաստանի փրկարար ծառայությունը շարունակում է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ: Համագործակցությունն իրականացվել է փորձի փոխանակման, փոխադարձ այցելությունների, համատեղ միջոցառումների կազմակերպման միջոցով, ինչպես նաև արտերկրում կազմակերպված միջոցառումներին Հայաստանի փրկարար ծառայության ներկայացուցիչների մասնակցության միջոցով: Համագործակցությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

ՆԱՏՕ-Հայաստան անհատական գործընկերության ծրագրի շրջանակներում,

ԱՊՀ տարերային և տեխնածին բնույթի աղետների միջպետական խորհրդի շրջանակներում,

Հայ-շվեդա-էստոնական քաղաքացիական պաշտպանության հնարավորությունների զարգացման ծրագրի շրջանակներում,

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) հետ սողանքների ոլորտի շրջանակներում,

Քիմիական զենքի արգելման կազմակերպության (ՔՉԱԿ) հետ գույքի տրամադրման և ուսուցման կազմակերպման շրջանակներում,

ՆԱՏՕ-ի հետ <Գործընկերություն հանուն խաղաղության> ծրագրի շրջանակներում,

INESC-ի հետ ուսուցման ծրագրի իրականացման շրջանակներում,

GTZ գերմանական կառավարական կազմակերպության հետ մշակված <Վաղ ազդարարման ոլորտում> ծրագրի շրջանակներում,

Սևնովյան տնտեսական համաձայնագրի (ՄՕՏՀ) շրջանակներում,

ԱՄՆ Կանգաս նահանգի ազգային գվարդիայի հետ` փորձի փոխանակման շրջանակներում,

Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (MAGATE) հետ,

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի հետ,

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության հետ համագործակցություն <Արձագանք> ծրագրի շրջանակներում,

Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության (ՔՊՄԿ) հետ,

Մեծ Բրիտանիայի առևտրի և արդյունաբերության նախարարության (DTI) հետ մի շարք ծրագրերի շրջանակներում:

2011-2013թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում համակարգի հետագա զարգացումները հիմնականում կրում են սոցիալական ուղղվածություն և ամբողջովին բխում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից:

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայությունը <Կոսմոս-Ս> համակարգի միջոցով կատարել է մթնոլորտային երևույթների ընդհանուր պատկերների վերաբերյալ արբանյակային ամենօրյա տվյալների ստացում: Իրականացվել են մթնոլորտային երևույթների ամենօրյա ռադիոլոկացիոն դիտարկումներ, որոնց տվյալները գրանցվել, վերլուծվել և կատարվել են եղանակի կանխատեսումներ: 2005 թվականին ՀՀ Արագածոտնի մարզում, իսկ 2007 թվականին ՀՀ Արմավիրի մարզերում տեղակայվել են թվով 30 արգենտինյան գեներատորներ (յուրաքանչյուր մարզում 15 հատ), 2010 թվականին նախատեսվում է ՀՀ Արարատի և ՀՀ Արմավիրի մարզերում տեղակայել համապատասխանաբար թվով 8 և 40 ռադիոմոդեմային գազագեներատորներ, ինչպես նաև նույն ժամանակահատվածում նախատեսվում է ՀՀ Արագածոտնի, ՀՀ Արարատի և ՀՀ Արմավիրի մարզերում` յուրաքանչյուրում մեկական, իսկ ՀՀ Լոռու մարզում թվով 5 ռեզագենտային կայանքներ: Նշված աշխատանքները նախատեսվում է շարունակել նաև

2011-2013 թվականների ՄԺԾԾ ժամանակահատվածում, մասնավորապես, 2011 թվականին նախատեսվում է ռադիոմոդեմային գազագեներատորային կայանքներ տեղակայել ՀՀ Արագածոտնի մարզում՝ թվով 25, ՀՀ Արմավիրի մարզում՝ թվով 4, ՀՀ Կոտայքի մարզում՝ թվով 3 և ՀՀ Լոռու մարզում թվով 3: Նույն ժամանակահատվածում նախատեսվում է նաև տեղակայել ռեագենտային կայանքներ ՀՀ Արագածոտնի մարզում՝ թվով 7, ՀՀ Արարատի մարզում՝ թվով 5, ՀՀ Արմավիրի մարզում՝ թվով 7, ՀՀ Կոտայքի մարզում՝ թվով 3 և ՀՀ Լոռու մարզում թվով 10: Նշված կայանքների շահագործումն ապահովելու համար նախատեսվում են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ կապված կայանքների շահագործման և սպասարկման համար նյութատեխնիկական բազայի ստեղծման, համապատասխան մասնագետներով համալրման հետ:

18.2.2 Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում նպատակները, գերակայությունները

Նպատակները

Հասարակական կարգ և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը միտում ունի ապահովելու նշված ոլորտների տարբեր բնագավառներում հետևյալ նպատակների իրականացումը:

Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում

- Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի ապահովումը,
- պետական սահմանների պահպանությունը, սահմանային գոտու անձեռնմխելիությունը,
- պարտադիր զինվորական ծառայության ծառայողների փոխարինումը պայմանագրային զինծառայողների միջոցով, վերջինների կողմից կատարվող գործառնությունների արդյունավետության բարձրացումը,
- օտարերկրյա հատուկ ծառայությունների գործունեության կանխումը,
- պետական բարձրաստիճան պաշտոնյաների անվտանգության ապահովումը,
- պետական բարձրաստիճան պաշտոնյաններին հատուկ կապով ապահովումը:

Հասարակական կարգի պահպանության ապահովում, ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն և պետավտոհամարանիշների ձեռքբերում

- անձի կյանքի և առողջության, իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ գործողություններից,
- հասարակության և պետության շահերի պաշտպանությունը,

- հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականիումը, կանխումը և խափանումը,
- հանցագործությունների կանխարգելմանը, հասարակական կարգի ու անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը
- անչափահասների հանցավորության խմբավորմանը հակազդելու, ոստիկանության տեսադաշտում գտնվող անչափահասների հետ տարվող կանխարգելիչ դաստիարակչական աշխատանքների բարելավումը,
- քաղաքացիների անձնագրավորման, փաստաթղթավորման և հաշվառման գործընթացի կատարելագործումը,
- Հայաստանի Հանրապետությունում ավտոճանապարհային երթևեկության վթարայնության նվազեցման, կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- ոստիկանական գործունեության իրավական դաշտի կատարելագործումը,
- հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային ոստիկանական և այլ կառույցների հետ փոխհամագործակցության ակտիվացումը,
- Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործերի պարտադիր ժամկետային զինծառայողների և պայմանագրային զինծառայողների տեսակարար կշռի փոփոխման միջոցով արդյունավետության բարձրացումը,
- Քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի անցման խորացումը և կատարելագործումը,

- Պետավտոհամարանիշներով ապահովումը:

Քրեակատարողական համակարգի պահպանում

- կալանավորված և դատապարտված անձանց նյութական, ներառյալ սննդամթերքով և կենցաղային իրերով, ապահովումը,
- կալանավորված և դատապարտված անձանց բուժապասարկման ապահովումը,
- կալանավորված և դատապարտված անձանց քրեակատարողական հիմնարկներում պահելու պայմանները մարդու իրավունքների ասպարեզում գոյություն ունեցող և համընդհանուր ընդունելության արժանացած միջազգային փաստաթղթերի դրույթներին և չափանիշներին համապատասխան ապահովումը:

Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում

- արտակարգ իրավիճակներում և ռազմական (պատերազմի) դրության ժամանակ մարդկանց կյանքի և առողջության պահպանումը.
- արտակարգ իրավիճակներում միասնական պետական քաղաքականության իրականացումը.

- արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների վերացման և նվազեցման, բնակչության պաշտպանության ծրագրերի, պլանների մշակումն ու դրանց կատարման ապահովումը.

- բնակչության ուսուցման կազմակերպումը.

- փրկարարական, վթարավերականգնման և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն

2011-2013 թվականների միջնաժամկետ ժամանակահատվածում սույն ծրագրի նպատակն է՝ մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործումը, կարկտի դեմ պայքարի շարունակական գործընթացի արդյունավետության բարձրացումը:

Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում առանձին զարգացման հիմնական գերակայություններն են.

Ազգային անվտանգության ապահովում և սլետական սահպանության ապահովում

- սննդամթերքի, հանդերձանքի, նորագույն հատուկ տեխնիկայի, սարքավորումների, զենքի և զինամթերքի ձեռքբերման շարունակական գործընթացի ապահովումը:

- պարտադիր զինվորական ծառայության ծառայողների փոխարինումը պայմանագրային զինծառայողներով, վերջինների կողմից կատարվող գործառույթների արդյունավետության բարձրացումը,

Հասարակական կարգի սահպանության ապահովում, ՀՀ անձնագրերի բանկների ստացառություն և սլետավտոհամարանիշների ձեռքբերում

- անձի կյանքի և առողջության դեմ ուղղված, ծանր, առավելագույն ծանր հանցագործությունների բացահայտման արդյունավետության բարձրացումը,

- թմրամիջոցների ապօրինի շրջանառության, թմրամոլության դեպքերի կանխարգելումը,

- տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների, այդ թվում կոռուպցիայի տարբեր դրսևորումների և տնտեսության զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների ակտիվացումը,

- օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացումը,

- հանցագործությունների կանխարգելմանը, հասարակական կարգի ու անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,

- անօրինական շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև բնակչության մոտ պահվող զենքի և զինամթերքի հայտնաբերման, առգրավման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը,

- անչափահասների հանցավորության խմբավորմանը հակազդելու, ոստիկանության տեսադաշտում գտնվող անչափահասների հետ տարվող կանխարգելիչ-դաստիարակչական աշխատանքների բարելավումը,
- քաքաղաքացիների անձնագրավորման, փաստաթղթավորման և հաշվառման գործընթացի կատարելագործումը,
- Հայաստանի Հանրապետությունում ավտոճանապարհային երթևեկության վթարայնության նվազեցման, կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- ոստիկանական գործունեության իրավական դաշտի կատարելագործումը,
- հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային ոստիկանական և այլ կառույցների հետ փոխհամագործակցության ակտիվացումը,
- ՀՀ ոստիկանության գործերի ժամկետային պարտադիր զինծառայողների կոմունակ-կենցաղային պայմանների բարելավումը,
- նյութատեխնիկական բազայի բարելավման շարունակական գործընթացի ապահովումը:

Քրեակատարողական համակարգի պահպանում

- քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածության մեղմացման անհրաժեշտությունը,
- կալանավորվածների և դատապարտյալների կոմունակ-կենցաղային պայմանների բարելավման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման ուղղությամբ շարունակական միջոցառումների ձեռնարկումը:

Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում

- նյութատեխնիկական բազայի բարելավման շարունակական գործընթացի ապահովումը,
- փրկարարական, վթարավերականգնման և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:

Սույն ոլորտի 2011-2013 թվականների ՄԺԾԾ ժամանակահատվածում պահպանման ծախսերը պայմանավորված են լինելու համակարգի ստորաբաժանումների կենսագործունեության ապահովման համար բավարար պայմանների ստեղծման և դրա շնորհիվ այդ կառույցների պատրաստակաության բարձր մակարդակի պահպանման անհրաժեշտությամբ:

18.2.3 Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում ծրագրերի 2011-2013թթ. ծախսերի աճը (նախորդ տարվա նկատմամբ) համապատասխանաբար

կազմում է՝ 2011-2012թթ. 162.6 մլն դրամ կամ 1.4%, իսկ 2013թ. 759.3 մլն դրամ կամ 6.5%՝ պայմանավորված գազի գների բարձրացմամբ, պարտադիր զինվորական ծառայության փոխարեն պայմանագրային զինծառայության ներդրմամբ, ինչպես նաև 2013 թվականին Ազգային անվտանգության համակարգի ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատավարձերի 10%-ով բարձրացմամբ:

Հասարակական կարգի պահպանության ապահովում ծրագրով 2011-2013թթ. ծախսերի աճը (նախորդ տարվա նկատմամբ) համապատասխանաբար կազմում է՝ 2011-2012թթ. 603.5 մլն դրամ կամ 2.7%, իսկ 2013թ. 1,627.9 մլն դրամ կամ 7.0%՝ պայմանավորված գազի գների բարձրացմամբ, պարտադիր զինվորական ծառայության փոխարեն պայմանագրային զինծառայության ներդրմամբ, քաղաքացիական հատուկ ծառայության ներդրմամբ, ինչպես նաև 2013 թվականին ՀՀ Ոստիկանության ծառայողների, տեխնիկական սպասարկող անձնակազմի և քաղաքացիական հատուկ ծառայողների աշխատավարձերի 10%-ով բարձրացմամբ:

ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն ծրագրով ծախսերը պահպանվել են ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված մակարդակով: 2011-2013թթ ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի ըստ կանխատեսումների ձեռք բերել 175288 հատ անձնագրի բլանկ:

Պետավտոհամարանիշների ձեռքբերում ծրագրով ծախսերը պահպանել են ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված մակարդակը: 2011-2013թթ ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի ըստ կանխատեսումների ձեռք բերել 66544 զույգ պետավտոհամարանիշ:

Քրեակատարողական համակարգի պահպանում ծրագրով 2011-2013թթ. ծախսերի աճը (նախորդ տարվա նկատմամբ) համապատասխանաբար կազմում է՝ 2011-2012թթ. 1,230.7 մլն դրամ կամ 23.5%, 1,000.0 մլն դրամ կամ 15.5%, պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձը 2011-2012 թվականներին 32500 դրամ սահմանմամբ՝ գործող 30000 դրամի փոխարեն, գազի գների բարձրացմամբ, կալանավորված և դատապարտված անձանց թվակազմի ավելացման գծով վերջինների պահպանման ծախսերի նախատեսմամբ, 2011-2012 թվականներին <Գորիս> քրեակատարողական հիմնարկի նոր համալիրի կառուցման աշխատանքների իրականացմամբ: 2013թ. նախատեսվում է նաև քրեակատարողական ծառայողների և տեխնիկական սպասարկող անձնակազմի աշխատավարձերի 10%-ով բարձրացում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում ծրագրի 2011-2013թթ. ծախսերի աճը (նախորդ տարվա նկատմամբ) համապատասխանաբար կազմում է՝ 2011-2012թթ. 15.6 մլն դրամ կամ 0.4%, իսկ 2013թ. 318.5 մլն դրամ կամ 7.6%՝ պայմանավորված գազի գների բարձրացմամբ, ինչպես նաև

2013 թվականին Հայաստանի Փրկարար ծառայության համակարգի աշխատողների աշխատավարձերի 10%-ով բարձրացմամբ:


Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն ծրագրով 2011-2013թթ. ծախսերի աճը (նախորդ տարվա նկատմամբ) համապատասխանաբար կազմում է՝ 60.2 մլն դրամ կամ 25.3%, 41.8 մլն դրամ կամ 14.0%, 11.0 մլն դրամ կամ 3.2%՝ այսինքն 2011-2013թթ. միջնաժամկետ ժամանակահատվածում ՀՀ Արագածոտնի, ՀՀ Արարատի, ՀՀ Արմավիրի, ՀՀ Կոտայքի և ՀՀ Լոռու մարզերում ռեազենտային և գազազենտրատորային կայանքների տեղակայման հետևանքով դրանց շահագործման ծախսերի նախատեսմամբ:

18.2.4 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

2011-2013թթ. հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների միջնաժամկետ ծրագրով՝ հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների պետական ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում կկազմի համապատասխանաբար՝ 4.6%, 4.5% և 4.3%:


2011-2013թթ. հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների միջնաժամկետ ծրագրով՝ հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների պետական ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի մեջ ունի հետևյալ պատկերը.

Գծանկար 18.2.1. Պետական բյուջեի ծախսերն ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում (%՝ բյուջեի ընդհանուր ծախսերի նկատմամբ)




2011-2013թթ. ՄԺԾՕ-ով հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներին նախատեսվում է ուղղել 2011 թվականին՝ 46,157.9 մլն դրամ, 2012 թվականին՝ 47,200.1 մլն դրամ, 2013 թվականին՝ 48,231.2 մլն դրամ: Ծախսերի աճը նախորդ տարվա նկատմամբ 2011 թվականին կկազմի 4.7%, 2012 թվականին՝ 2.3%, 2013 թվականին՝ 2.2%:

Գծանկար 18.2.2. Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում ըստ ծրագրերի ծախսերի բաշխումը 2011-2013թթ.



Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում ծախսերի տարանջատումն, ըստ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի, ունի հետևյալ պատկերը.

Գծանկար 18.2.3. Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում պետական ծախսերի կառուցվածքը` ըստ տնտեսագիտական նշանակության (%` ոլորտի պետական ընդհանուր ծախսերի նկատմամբ)



2011-2013թթ. Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում բյուջետային հատկացումներն, ըստ առանձին խմբերի, ծրագրերի և ընթացիկ ու ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի, ներկայացված են Աղյուսակ 18.2.2.-ում:

Աղյուսակ 18.2.2. Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում բյուջետային հատկացումները 2009-2013 թթ` ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման խմբերի, ըստ ծրագրերի, կատարող պետական մարմինների և ընթացիկ ու ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (մլն դրամ)

Բաժին, Խումբ, Դաս	Ծախսերի գործառնական դասակարգման խմբերի ծրագրերի անվանումները	2009թ	2010թ	2011թ	2012թ	2013թ
		փաստ	ծրագիր	Կանխատեսում		
	ԸՆԴԱՄԵՆԸ այդ թվում	46,376.4	44,085.3	46,157.9	47,200.0	48,231.3
	- <i>ընթացիկ ծխսեր</i>	<i>41,556.3</i>	<i>43,453.3</i>	<i>45,037.9</i>	<i>45,080.0</i>	<i>48,111.3</i>
	- <i>կապիտալ ծախսեր</i>	<i>4,820.1</i>	<i>632.0</i>	<i>1,120.0</i>	<i>2,120.0</i>	<i>120.0</i>
03.01.01	ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն, այդ թվում	172.3	173.6	173.6	173.6	173.6
	- <i>ընթացիկ ծախսեր</i>	<i>172.3</i>	<i>173.6</i>	<i>173.6</i>	<i>173.6</i>	<i>173.6</i>
	- <i>կապիտալ ծախսեր</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>
	ՀՀ կառավարությանն առընթեր նստիկանություն	172.3	173.6	173.6	173.6	173.6
03.01.01	Հասարակական կարգի պահպանության ապահովում, այդ թվում	23,933.5	22,557.1	23,160.6	23,160.6	24,788.5
	- <i>ընթացիկ ծախսեր</i>	<i>21,942.3</i>	<i>22,303.1</i>	<i>23,160.6</i>	<i>23,160.6</i>	<i>24,788.5</i>
	- <i>կապիտալ ծախսեր</i>	<i>1,991.2</i>	<i>254.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>
	ՀՀ կառավարությանն առընթեր նստիկանություն	23,933.5	22,557.1	23,160.6	23,160.6	24,788.5
03.05.01	Քրեակատարողական համակարգի պահպանում, այդ թվում	5,421.2	5,229.7	6,460.4	7,460.4	5,775.0
	- <i>ընթացիկ ծախսեր</i>	<i>5,120.4</i>	<i>5,229.7</i>	<i>5,460.4</i>	<i>5,460.4</i>	<i>5,775.0</i>
	- <i>կապիտալ ծախսեր</i>	<i>300.8</i>	<i>0.0</i>	<i>1,000.0</i>	<i>2,000.0</i>	<i>0.0</i>
	ՀՀ արդարադատության նախարարություն	5,421.2	5,229.7	6,460.4	7,460.4	5,775.0
03.01.01	Պետավտոհամարանիշների ձեռքբերում, այդ թվում	235.8	236.2	236.2	236.2	236.2
	- <i>ընթացիկ ծախսեր</i>	<i>235.8</i>	<i>236.2</i>	<i>236.2</i>	<i>236.2</i>	<i>236.2</i>
	- <i>կապիտալ ծախսեր</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>
	ՀՀ կառավարությանն առընթեր նստիկանություն	235.8	236.2	236.2	236.2	236.2
03.02.01	Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում, այդ թվում	4,106.5	4,156.1	4,171.7	4,172.0	4,490.5
	- <i>ընթացիկ ծախսեր</i>	<i>3,954.0</i>	<i>4,156.1</i>	<i>4,171.7</i>	<i>4,172.0</i>	<i>4,490.5</i>
	- <i>կապիտալ ծախսեր</i>	<i>152.5</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>
	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն	4,106.5	4,156.1	4,171.7	4,172.0	4,490.5
04.09.01	Պետական աջակցություն <Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն> ՊՈԱԿ-ին, այդ թվում	143.6	238.2	298.4	340.2	351.2
	- <i>ընթացիկ ծախսեր</i>					

		143.6	238.2	298.4	340.2	351.2
	- կապիտալ ծախսեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն	143.6	238.2	298.4	340.2	351.2
03.01.02	Ազգային անվտանգության ապահովում, այդ թվում	11,008.0	9,735.8	10,024.8	10,024.8	10,672.7
	- ընթացիկ ծախսեր	8,699.6	9,385.8	9,904.8	9,904.8	10,552.7
	- կապիտալ ծախսեր	2,308.4	350.0	120.0	120.0	120.0
	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն	11,008.0	9,735.8	10,024.8	10,024.8	10,672.7
03.01.02	Պետական պահպանության ապահովում, այդ թվում	1,355.5	1,758.6	1,632.2	1,632.2	1,743.6
	- ընթացիկ ծախսեր	1,288.3	1,730.6	1,632.2	1,632.2	1,743.6
	- կապիտալ ծախսեր	67.2	28.0	0.0	0.0	0.0
	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայություն	1,355.5	1,758.6	1,632.2	1,632.2	1,743.6

ԳԼՈՒԽ 19. 2011-2013ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԸ

19.1. Իրավիճակի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված զգալիորեն կրճատվեցին մասնավոր ուղղակի ներդրումները, ինչպես նաև կրճատվեցին ներդրումները շինարարության ոլորտում: Տնտեսական ներկայիս զարգացումների պարագայում կարևոր է պետության դերը և մասնակցության աստիճանը տնտեսության մեջ: Ճգնաժամի հետևանքով առաջացած և տնտեսության առջև կանգնած ռիսկերը մեղմելու ՀՀ կառավարության հակաճգնաժամային ծրագրով նախատեսված միջոցառումներից է ենթակառուցվածքներին ուղղված լայնածավալ ծրագրերի իրականացումը և այդ շրջանակներում նոր աշխատատեղերի ստեղծումը: Այս պայմաններում առավել կարևորվում է ծախսերի արդյունավետ օգտագործման հարցը, որի գրավականներից մեկը հանդիսանում է ոլորտում իրականացվող աշխատանքներին ծրագրային բնույթ հաղորդելը և բյուջետավորումը այդ սկզբունքներով իրականացնելը, որի ներդրման պայմաններում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անհրաժեշտության հիմնավորման կենտրոնական տարրն է հանդիսանում պետության միջամտությունը՝ պահանջող ոլորտների սահմանումը և դրանով պայմանավորված մասնավոր ու պետական ներդրումների միջև ընտրությունը, որը և հիմք է հանդիսանում պետական ներդրումային ծրագրերի ծավալների և գերակա ուղղությունների որոշման համար:

Այս տեսանկյունից պետության խնդիրն է իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն բնակչության զբաղվածության և աշխատանքային պայմանների, յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը, ինչպես նաև ներկա և ապագա սերունդների բնապահպանական անվտանգության ապահովման և հանրապետությունում աղքատության հաղթահարման արդյունավետ քաղաքականության իրականացմանը:

ՀՀ կառավարությունը նախաձեռնել է մի շարք խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի իրականացում շինարարության, ճանապարհային, հեռահաղորդակցման, էներգետիկ, արդյունաբերական, սոցիալական և այլ ոլորտներում, որոնք կարող են էապես նպաստել զբաղվածության մակարդակի պահպանմանը, հետճգնաժամային փուլում աճի և զարգացման ապահովմանը:

Իրականացվում է նաև ուսման, առողջության, բարեկեցության և հանգստին նպաստող պայմանների ապահովմանն ուղղված կրթական, մշակութային և մարզական օբյեկտների /շենքեր, շինություններ/ շինարարության, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման,

հիմնանորոգման /արդիականացման/ և բարեկարգման աշխատանքներ:

Քաղաքաշինություն ոլորտի ծրագրերի իրականացումից ակնկալվող արդյունքները կնպաստեն հասարակությանը մատուցվող հանրային ծառայությունների մակարդակի բարձրացմանը և երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների խնդիրների լուծմանը: Մասնավորապես.

- Կրթության ոլորտում՝ վերանորոգված, ջեռուցվող, լուսավոր, հետազայում նաև տեխնիկապես հագեցած դասասենյակներում ուսուցման կազմակերպում, այդ թվում նաև մարզական օբյեկտներում,

- Մշակութային ոլորտում՝ երիտասարդների ժամանցին, զբոսաշրջությանը նպաստող պատմամշակութային վայրերում առավել գրավիչ /բարեկարգ/ պայմանների, գյուղական համայնքներում երաժշտական և պարի խմբակների (հատկապես ազգային) կազմավորման համար արդիականացված մշակութային կենտրոնների ստեղծում, թանգարանային համալիրների վերականգնում և վերակառուցում,

- Բնակարանաշինության ոլորտում՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովում:

19.2. Վերջին երկու տարիների զարգացման միտումները

2008-2009 թթ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են ՀՆԱ նկատմամբ համապատասխանաբար 5.1% և 7.1 %: Միևնույն ժամանակ, բյուջեի ծախսերի ընդհանուր կառուցվածքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի մասնաբաժինը կազմել է համապատասխանաբար 22.4% և 23.8 %:

Աղյուսակ 19.1 ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2008-2010թթ

	2008	2009	2010
	Փաստացի		Բյուջե
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր			
մլն դրամ	181,689.7	221,408.8	164,034.3
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	22.4	23.8	17.5
%՝ ՀՆԱ նկատմամբ	5.1	7.1	5.1
Ներքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր			
մլն դրամ	141,140.0	87,890.7	40,690.1
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	77.7	39.7	24.8
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	17.4	9.5	4.3
%՝ ՀՆԱ նկատմամբ	4.0	2.8	1.3
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր			
մլն դրամ	40,549.7	133,518.1	123,344.2
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	22.3	60.3	75.2
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	5.0	14.4	13.2
%՝ ՀՆԱ նկատմամբ	1.1	4.3	3.8

2009թ-ին ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցության և ընդամենը ծախսերի նկատմամբ հարաբերակցության

ցուցանիշները գերազանցում են 2008թ-ի համապատասխան ցուցանիշները: Սակայն ֆինանսավորման աղբյուրների առումով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կառուցվածքում 2008թ-ին գերակշռել են ներքին աղբյուրների հաշվին իրականացված ծրագրերի գծով ծախսերը՝ կազմելով 77.7%, իսկ 2009 թ-ին այդ ցուցանիշը կազմել է 39.7%: Այս ցուցանիշի նվազումը պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ և այդ ազդեցությունը մեղմելու ՀՀ կառավարության հակաճգնաժամային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման, ինչպես նաև ծախսերի փոխլրացնելիության ապահովման նպատակով արտաքին աղբյուրների ներգրավմամբ:

Ոլորտների միջև ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի բաշխման և ծրագրերի առաջնահերթությունների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ՀՀ կառավարությունը առաջնորդվել է պետական քաղաքականության գերակայություններով՝ դրանք արտացոլելով պետական ծախսերի, մասնավորապես ներդրումային ծրագրերում:

Աղյուսակ 19.2 ՀՀ 2009-2010 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը, ըստ գործառնական դասակարգման խոշորացված բաժինների, մլն դրամ

		2009	2010
		Փաստացի	Բյուջե
01	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4,837.4	1,761.6
02	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	29,222.7	26,572.2
03	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	10,264.7	3,212.2
04	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	108,799.1	75,003.5
05	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1,468.9	3,272.3
06	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	38,506.2	40,468.2
07	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	6,395.4	3,734.3
08	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	1,693.1	1,385.2
09	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	15,685.8	8,153.4
10	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1,284.8	471.4
11	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	3,250.7	-
	ԸՆԴԱՄԵՆԸ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՄԵՐ	221,408.8	164,034.3

Աղյուսակ 19.3 ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման խոշորացված բաժինների 2009 - 2010թթ


	2009	2010
	փաստացի	բյուջե
	տոկոսը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	100.0	100.0
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2.2	1.1
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	13.2	16.2
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	4.6	2.0
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	49.1	45.7
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	0.7	2.0
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	17.4	24.7
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	2.9	2.3
ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	0.8	0.8

Կրթութեան	7.1	5.0
Սոցիալական Պաշտպանություն	0.6	0.3
Հիմնական Բուժօգնություն Զրահվող Պաշտպանության Ֆունկցիաներ	1.5	-
	տոկոսը ներքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	
Ներքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր	100.0	100.0
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5.0	4.2
Պաշտպանություն	33.2	65.3
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	8.2	1.6
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	24.7	8.5
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	0.6	-
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2.8	-
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	1.9	-
ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	1.9	3.4
Կրթություն	16.6	15.9
Սոցիալական Պաշտպանություն	1.3	1.2
Հիմնական Բուժօգնություն Զրահվող Պաշտպանության Ֆունկցիաներ	3.7	-
	տոկոսը արտաքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր	100.0	100.0
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	0.3	0.1
Պաշտպանություն	-	-
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	2.3	2.1
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	65.2	58.0
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	0.7	2.7
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	27.0	32.8
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	3.5	3.0
ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	0.0	-
Կրթություն	0.8	1.4
Սոցիալական Պաշտպանություն	0.1	-
Հիմնական Բուժօգնություն Զրահվող Պաշտպանության Ֆունկցիաներ	-	-

Ինչպես երևում է վերը նշված աղյուսակից գործառնական դասակարգման կառուցվածքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի զգալի մասն ուղղված է տնտեսական հարաբերությունների և բնակարանային շինարարության ու կոմունալ ծառայությունների գծով ծրագրերի իրականացմանը, որոնց հանրագումարը ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ 2009թ-ին կազմում է 66.5%, իսկ 2010թ-ին` 70.4%:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տնտեսագիտական դասակարգման կառուցվածքում 2009-2010թթ-ին հիմնական ծախսերը բաժին է ընկնում շենքերի և շինությունների շինարարությանը, ձեռքբերմանը և կապիտալ վերանորոգմանը:

Գծապատկեր 19.1 Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տնտեսագիտական դասակարգման կառուցվածքը 2009-2010թթ-ին



Ինչպես նախորդ 5 տարիների ընթացքում, այնպես էլ ներկայումս արդիական է սոցիալական ոլորտի՝ այդ թվում կրթության ոլորտի օբյեկտների հիմնանորոգման և բարելավման, ինչպես նաև մշակութային հիմնախնդիրները, որոնց լուծումը ՀՀ պետական բյուջեի սահմանափակ միջոցների պայմաններում դեռ չի ավարտվել և շարունակվում է:

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի ծրագրերով իրականացվում են՝

ա) կրթական, մշակութային և մարզական օբյեկտների կապիտալ շինարարություն և հիմնանորոգում, ինչպես նաև հուշարձանների վերականգնում, որից՝

- կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով նախատեսվել է 6,025.7 մլն դրամ, ինչը 2009 թ. փաստացի հատկացումների նկատմամբ նվազել է շուրջ 7.4 մլրդ դրամով կամ 55.2 %-ով, իսկ 2008թ. փաստացի հատկացումների նկատմամբ՝ 12.8 մլրդ դրամով կամ 67.9 %-ով,

- մարզական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության համար նախատեսվել է 257.1 մլն դրամ, ինչը 2009 թ. փաստացի հատկացումները գերազանցում է 22.0 մլն դրամով կամ 9.4 %-ով, իսկ 2008 թ. փաստացի հատկացումների նկատմամբ նվազել է 203.4 մլն դրամով կամ 44.2 %-ով,

- մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության համար նախատեսվել է 1,140.5 մլն դրամ, ինչը 2009 թ. փաստացի հատկացումները գերազանցում է 94.8 մլն դրամով կամ 9.1 %-ով, իսկ 2008 թ. փաստացի հատկացումների նկատմամբ նվազել է շուրջ 580.0 մլն դրամով կամ 33.7 %-ով,

- հուշարձանների վերականգնման և վերանորոգման գծով նախատեսվել է 213.3 մլն դրամ, ինչը 2009 թ. փաստացի հատկացումների նկատմամբ նվազել է 117.8 մլն դրամով կամ 35.6%-ով, իսկ 2008թ. փաստացի հատկացումների նկատմամբ՝ 246.9 մլն դրամով կամ 53.7%-ով:

բ) Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային ապահովում.

Ոլորտում շարունակվում են բնակչության բնակարանային պայմանների բարելավման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովելու ուղղությամբ ձևավորված պետական պարտավորությունների կատարումը: Այդ կապակցությամբ աղետի գուտու անօթևան ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով սկսած 2009թ-ից իրականացվում է բնակարանային շինարարության հետևյալ ծրագրերը.

- Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային

շինարարության գծով Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի 1 բազմաբնակարան շենքի վերականգնման, Լոռու մարզի ք. Ստեփանավանի թվով 4 անավարտ շենքերի կառուցման և Շիրակի մարզի ք. Մարալիկի թվով 9 բազմաբնակարան անավարտ շենքերի կառուցման համար 2010 թ-ին նախատեսվել է 343.8 մլն դրամ՝ 2009 թվականին փաստացի հատկացված 721.7 մլն դրամի դիմաց,

- Աղետի գոտում անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու նպատակով ՌԴ վարկային միջոցների հաշվին անշարժ գույքի ձեռքբերման ծրագրի գծով 2010 թ-ին նախատեսվել է 22.05 մլրդ դրամ՝ 2009 թվականին փաստացի հատկացված 24.0 մլրդ դրամի դիմաց:

19.3. Հիմնական խնդիրները և նպատակները

Չնայած նախորդ տարիներին հանարապետությունում արձանագրված ձեռքբերումներին, այդուհանդերձ, դրանց զուգընթաց բարելավման անհրաժեշտություն ունի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ինչպես միջոլորտային, այնպես էլ, ներոլորտային և կոնկրետ ծրագրերի մակարդակով գերակայությունների և առաջնահերթությունների վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմները և այդ հարթությունում բյուջետավորման ընթացակարգերը: Այս առումով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ՄԺԾ ծրագրում առանձին բաժնով ներկայացումը նպատակ է հետապնդում.

- շեշտադրել այն տրամաբանությունն ու սկզբունքները, որոնք ընկած են եղել միջոլորտային և ներոլորտային կտրվածքով առաջիկա երեք տարիների ընթացքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի բաշխման հիմքում,

- ինչպես նաև առանձնացնել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսային ծրագրերի բյուջետավորման գործընթացում ու մեխանիզմներում առկա առանցքային խնդիրներն ու հիմնական խոչընդոտները, որոնց մեղմման ուղղությամբ մոտ ապագայում ձեռնարկվելու են համապատասխան միջոցառումներ:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման փուլում, ծրագրային բյուջետավորման սկզբունքներին համապատասխան, առանցքային դեր է վերագրվել ծախսերի անհրաժեշտությունը պայմանավորող գործոնների տարանջատմանը, որոնք, ըստ էության, ազդել են ինչպես առանձին ծրագրերի՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի միջնաժամկետ ծրագրում ընդգրկելու վերաբերյալ որոշումների կայացման, այնպես էլ, որոշ դեպքերում, միջծրագրային առաջնահերթությունների սահմանման գործընթացների վրա:

ՄԺԾ ծրագիրը մշակելիս առանձին ուղղություններով ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման ընթացքում տարանջատվել են հետևյալ խնդիրները, որոնք պայմանավորում են ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անհրաժեշտությունը.

- պահանջվող որակյին և քանակյին համապատասխան կրթական, մշակութային և առողջապահական ծառայությունների մատուցման ապահովման նպատակով նշված ծառայությունները մատուցող հաստատությունների կարողությունների զարգացումը,

- պատմաշակութային ժառանգության պահպանման և պատմամշակութային վայրերում

զբոսաշրջության զարգացմանը նպաստակով հուշարձանների վերանորոգումը և բարելավումը,

- երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով բնակարանային շինարարության իրականացումը

- հանրապետական նշանակության վերականգնված ճանապարհները բարվոք վիճակում պահելը և ցանցի պլանային վերականգնումը, ինչպես նաև բնակավայրերի միջև կայուն տրանսպորտային հաղորդակցության վերականգնումը,

- խմելու և ոռոգման ջրի համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության (այդ թվում համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետության) բարձրացումը, ջրի կորուստների կրճատումը և ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակի բարելավումը, ինչպես նաև կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների՝ այդ թվում ջրամբարների պատվարների անվտանգ ու անխափան շահագործումը,

- Սևանա լճի հիմնախնդիրների լուծմանն ուղղված առափնյա համայնքների ջրահեռացման համակարգերի հիմնանորոգումը և Արփա-Սևան թունելի վթարային հատվածների վերականգնումը,

- Էներգետիկայի բնագավառի զարգացման հետ կապված՝ ներդրումային ծրագրերի մշակմամբ բարոյապես ու ֆիզիկապես մաշված առանձին օբյեկտների ու կառույցների հրատապ վերակառուցում ու արդիականացում, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների և արտադրական հզորությունների առավելագույնս օգտագործում, տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրացման գործընթացի ակտիվացումը, որոնց լուծումը կապահովի հուսալի և անվտանգ էլեկտրաէներգիայի մատակարարումը, որն էլ իր հերթին կխթանի երկրի տնտեսական կայուն զարգացումը: Էներգետիկ համակարգի խնդիրների շարքում կարևորվում է ջերմամատակարարման համակարգի վերականգնումը, որն անմիջականորեն կհանդիսանա երկրում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների ներդրման արդյունքը, ինչպես նաև կնպաստի երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը,

- գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ստեղծումը և արտադրության արդյունավետության բարձրացումը, որի լուծումը կնպաստի նաև գյուղական բնակավայրերում աղքատության կրճատմանը, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

19.4 Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման սկզբունքները

2011-2013 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրելիս ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակներից բխող ընդհանուր սահմանափակումները, առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով.

- կառավարության քաղաքականության նպատակներին և գերակայություններին

համապատասխանություն,

- հանրային ակտիվների չվերականգնման պարագայում՝ մատուցվող ծառայությունների ծավալների (և/կամ որակի) անկման վտանգի հաղթահարում,

- անվտանգության, ռազմավարական նշանակության և տարածաշրջանային մրցունակությանը նպաստող խղիրների լուծում,

- մասնավոր հատվածի զարգացմանը (ներդրումների ներգրավմանը) նպաստում և տնտեսական աճի խթանում,

- տարածքային կտրվածքով անհամամասնությունների մեղմում և համապատասխան ծառայությունների մատչելիության ավելացում,

- պետության կողմից ստանձնած որոշակի (ներդրումային բնույթի) պարտավորությունների կատարում,

- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի առանձին ծրագրերի նպատակների և արդյունքների որոշակիություն, հստակություն և հիմնավորվածություն:

Միևնույն ժամանակ, կառավարությունը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի եռամյա ծրագրում առանձնացրել է չբաշխված (ըստ ոլորտների չբաշխված) բաղադրիչ: Դա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- Որոշ ոլորտներում պահանջվող ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծավալների ճշգրիտ գնահատականը պահանջում է լրացուցիչ ուսումնասիրություններ,

- Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի չբաշխված բաղադրիչը որոշակիորեն մեծացնում է հարկաբյուջետային քաղաքականության դիսկրեցիոնության աստիճանը՝ հնարավորություն տալով ավելի ադեկվատ արձագանքել մակրոտնտեսական զարգացումներին:

19.5. 2011-2013 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

2011–2013 թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր կանխատեսվում է իրականացնել 586.3 մլրդ դրամի չափով, որից 2011թ-ին՝ 171.1 մլրդ դրամ, 2012թ-ին՝ 195.4 մլրդ դրամ և 2013թ-ին՝ 219.8 մլրդ դրամ: 2011–2013 թթ ՄԺԾԾ-ով ծրագրված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ՀՆԱ-ի նկատմամբ միջին մակարդակով կազմելու են 5.1 տոկոս՝ ընդ որում այս ցուցանիշի ամենաբարձր նիշը միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է 2013թ-ին՝ 5.3 տոկոս:

Աղյուսակ 19.4 ՀՀ 2009-2013 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների

	2009թ	2010թ	2011թ	2012թ	2013թ	2011-2013թթ
	Փաստացի	Բյուջե	ՀՀ 2011-2013թթ ՄԺԾԾ			
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր						
մլրդ դրամ	221.4	164.0	171.1	195.4	219.8	586.3

%` պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	23.8	17.5	17.0	18.7	19.4	18.4
%` ՀՆԱ նկատմամբ	7.1	5.1	4.8	5.1	5.3	5.1
Ներքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր						
մլրդ դրամ	87.9	40.7	44.5	42.3	42.5	129.2
%` ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	39.7	24.8	26.0	21.6	19.3	22.3
%` պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	9.5	4.3	4.4	4.0	3.8	4.1
%` ՀՆԱ նկատմամբ	2.8	1.3	1.2	1.1	1.0	1.1
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր						
մլրդ դրամ	133.5	123.3	126.7	153.1	177.3	457.1
%` ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	60.3	75.2	74.0	78.4	80.7	77.7
%` պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	14.4	13.2	12.6	14.6	15.7	14.3
%` ՀՆԱ նկատմամբ	4.3	3.8	3.5	4.0	4.3	3.9

Բերված ցուցանիշները վկայում են, որ 2011-2013թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի գերակշիռ մասը կազմելու է արտաքին աղբյուրների հաշվին իրականացվելիք ծրագրերը, որը ծրագրային ժամանակահատվածում տարեկան կտրվածքով կկազմի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի շուրջ 77.0 տոկոսը, որից 2011թ-ին 74.0 տոկոս, 2012թ-ին 78.4 տոկոս, 2013թ-ին 80.7 տոկոս:

Ծրագրելով նման մակարդակի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր արտաքին աղբյուրների ներգրավմամբ կառավարությունը նախ և առաջ հաշվի է առել այն հանգամանքը, որ մի շարք ոլորտներում մասնավոր հատվածի ներգրավումը դեռևս ցածր է և պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը պետք է հանդիսանան մասնավոր ներդրումների փոխլրացնող ու խթանող, որի նպատակն է ոչ միայն հաղթահարել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը` նվազագույնի հասցնելով վերջինիս բացասական հետևանքները Հայաստանի տնտեսության վրա, այլ նաև ստեղծել հետագայում կայուն զարգացման և որակապես նոր տնտեսության ձևավորման բավարար հիմքեր:

ԳԼՈՒԽ 20. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2011-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Սույնով ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կառավարության տնտեսական զարգացման ծրագրերով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար անհրաժեշտ փոխառու միջոցների ներգրավման, դրանց արդյունքում պետական պարտքի բեռի փոփոխման, ռիսկերի կառավարման ռազմավարությունը:

Ներածություն

Պարտքի խելամիտ կառավարումը կարևոր դեր է խաղում պետական հատվածի ֆինանսների կառավարման գործընթացում: Սա ավելի կարևոր նշանակություն է ձեռք բերում, երբ որևէ երկիր ազդեցություն է կրում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում և պետք է վստահ լինի, որ փոխառության քաղաքականությունը ապագայում չի բերի անկայուն դիրքի, չի մեծացնի ֆինանսավորման ծախսերը մինչև անընդունելի և ծայրահեղ մակարդակի կամ էլ երկիրը չի դարձնի խոցելի: Սա պահանջում է պարտքի կառավարման գործուն համակարգի կիրառում, որը անբարենպաստ պայմաններում կարող է նվազեցնել բացասական ազդեցությունները և մեղմել հավանական ռիսկերը:

Վերջին ճգնաժամը նաև ցույց տվեց, որ այն երկրները, որոնք մշակել և իրականացրել են պարտքի կառավարման պատշաճ ռազմավարություն, կարողացան նվազեցնել այդ ճգնաժամի բացասական ազդեցությունները տնտեսության վրա: Հստակ ռազմավարությունը կարող է օգնել նվազեցնել չափից ավելի փոխառությունների բեռը՝ (դրանց առնչվող ծախսերն ու ռիսկերը) հնարավորություն տալով քաղաքականություն մշակողներին ընտրել ծախսերի և ռիսկերի մի շարք տարբերակներից օպտիմալը:

Հայաստանի Հանրապետությունը, ինչպես շատ այլ երկրներ ստիպված էր կանգնել դժվարին մարտահրավերների առջև, որոնք արդյունք էին գլոբալ ֆինանսական ճգնաժամի: Երկրի տնտեսությունը 2009 թվականին էապես վատթարացել է դրամական փոխանցումների նվազեցման և դրա արդյունքում շինարարության ոլորտի կտրուկ կրճատման հետևանքով: 2009 թվականի փաստացի ցուցանիշները ցույց են տալիս իրական ՀՆԱ-ի, պետական բյուջեի և ընթացիկ հաշվի դեֆիցիտների վատթարացում, որոնց արդյունքում մեծացել է փոխառությունների ծավալը, արձանագրվել էական արժեզրկում: Տնտեսական գործունեության գլոբալ նվազեցման և ներքին իրավիճակի վատթարացման արդյունքում, իշխանությունները ձեռնարկել են պատշաճ միջոցառումներ և ժամանակին նախաձեռնել են համապատասխան բարեփոխումների իրականացում: Ընդհանուր առմամբ խելամիտ կառավարման այս մակարդակը և մասնավորապես պարտքի կուտ կառավարումը պետք է շարունակվի նույնիսկ ճգնաժամից հետո, երբ տնտեսությունը մտնի բնականոն զարգացման փուլ:

ՀՀ պետական պարտքի կառավարման ոլորտում 2008-2010թթ. արձանագրվել են հետևյալ զարգացումները.

- 2008թ. սկսվեց պետական ուղենշային պարտատոմսերի թողարկումը, որի նպատակը ստանդարտացման միջոցով պետական պարտատոմսերի շուկայի զարգացումն է: Զուգահեռ ներդրվեցին պարտատոմսերի թողարկումների, տեղաբաշխումների, հետգնումների, փոխանակումների նոր մոտեցումներ: Վերանայվեց առաջնային շուկայի մասնակիցների վերաբերյալ մոտեցումները, բարելավվեցին և հրապարակային դարձվեցին դրանց ընտրության ու վարքագծի գնահատման մեխանիզմները,

- ներքին պարտքի փոքր ծավալ, ցածր եկամտաբերություն, բարձր միջին ժամկետայնություն: Կենսաթոշակային ու ապահովագրական բարեփոխումների ներդրման ժամանակացույցով պայմանավորված արձանագրվել է պետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման էական աճ (2009թ-ին 2008թ. համեմատ այն աճեց 2 անգամ, իսկ 2008թ-ին 2007թ. համեմատ` 3 անգամ),
- էական փոփոխություն արձանագրվեց նաև հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման առումով: 2008թ. երկրորդ կեսին ՀՀ ֆինանսների նախարարությունն ու ՀՀ կենտրոնական բանկը պայմանավորվեցին, որ վերջինս դադարեցնում է սեփական պարտատոմսերի թողարկումը, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունը պատրաստակամություն է հայտնում աջակցել դրամավարկային քաղաքականության իրականացմանը` անհրաժեշտության դեպքում այդ նպատակով պետական պարտատոմսեր թողարկելով:
- տնտեսական աճով և աղքատության մակարդակի կրճատմամբ պայմանավորված` միջազգային ֆինանսական կառույցների և օտարերկրյա պետությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող արտաքին արտոնյալ վարկերը տարեցտարի նվազում են: Այսպես, 2009թ. ընթացքում դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ստացված արտաքին վարկերի կառուցվածքում առևտրային պայմաններով ներգրավված վարկերի տեսակարար կշիռը կազմել է մոտ 65%: Չնայած այս հանգամանքին, դեֆիցիտի ֆինանսավորման կախվածությունը արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցներից դեռևս զգալի է:
- պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների մեղմացման և հաղթահարման միջոցառումներով (ֆինանսական համակարգի իրացվելիության բարձրացում, վճարային հաշվեկշռի աջակցություն, ենթակառուցվածքների զարգացում և այլ հակաճգնաժամային ծրագրերի ֆինանսավորում), 2009թ. աննախադեպ էր պետական բյուջեի դեֆիցիտի և ներքին ու արտաքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների ծավալով: Այսպես, 2009թ. պետական պարտատոմսերի հաշվին պետբյուջեի դեֆիցիտը ֆինանսավորվել է 45.4 մլրդ դրամով, արտաքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների հաշվին` 389.3 մլրդ դրամով (տես աղյուսակ 3): Նախորդ տարիների համեմատությամբ 2009թ. էականորեն բարձրացել են պետական պարտքի բեռը բնութագրող ցուցանիշները (տես աղյուսակ 4,5,6,7), մասնավորապես պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2009թ. կազմել է 40.1%, մինչդեռ 2008թ. այն կազմել էր ընդամենը 16%): Պարտքային բեռի նման բարձրացումը գտնվում է կառավարելիության շրջանակներում և չի կարող խաթարել երկրի պարտքային կայունությունը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակադրումները 2011-2013թթ.

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության մշակման սկզբնակետը 2008թ. ընդունված 'Պետական պարտքի մասին' Հայաստանի Հանրապետության օրենքն է, որը կանոնակարգում է պետական պարտքին առնչվող փոխհարաբերությունները և նպատակ ունի ապահովել պետական պարտքի կառավարման արդյունավետ և հրապարակային կազմակերպումը:

Պարտքի կայուն և խելամիտ կառավարման նպատակով նախատեսվում է պարտքի կառավարման բարեփոխումների համակարգային ծրագրի իրականացում: ՀՀ ֆինանսների նախարարի 03.03.2010թ. թիվ 150-Ա հրամանով հաստատվեց պետական պարտքի կառավարման բարեփոխումների գործողությունների ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. պարտքի գրանցման և հաշվառման համակարգի ներդրում,
2. պարտքի կառավարման ստորաբաժանման ներքին կառուցվածքի բարելավում և հզորացում,
3. պետական պարտքի մասին տարեկան և կիսամյակային հաշվետվությունների բարելավում,
4. առաջնային շուկայի զարգացմանն ուղղված քայլերի իրականացում,
5. պարտքի միջնաժամկետ ռազմավարության մշակում:

2011-2013թթ-ին ՀՀ կառավարությունը պետական պարտքի կառավարման գործընթացում շարունակելու է հետևել պարտքի թափանցիկության, գործողությունների հրապարակայնության, ներդրողների վստահության ամրապնդման և հաշվետվողականության սկզբունքներին:

- Պարտքի արդյունավետ կառավարման կարևորագույն գործոններից մեկը թափանցիկության ապահովումն է, ուստի կառավարությունը ոչ միայն պարբերաբար կներկայացնի հաշվետվություններ պարտքի վերաբերյալ կարևոր տեղեկատվությամբ, այլ նաև բաց ու հրապարակային կլինի ներդրողների հետ աշխատանքներում:
- Կառավարությունը կշարունակի իր նկատմամբ վստահության ամրապնդման քայլերը, որը կհանգեցնի պոտենցիալ ներդրողների բազայի ընդլայնմանը՝ հետևաբար դրական ազդեցություն կունենա պարտքը բնութագրող ցուցանիշների բարելավման վրա և կնպաստի ներքին պարտքի շուկայի կայունությանը (կյթուլացնի արտաքին և ներքին շուկերի ազդեցությունը պարտքի շուկայի վրա):
- Թեև տնտեսական ճգնաժամի պայմաններում կառավարությանն անհրաժեշտ փոխառու միջոցների մեծ մասը կարող է ներգրավվել արտաքին աղբյուրներից, սակայն, երկարաժամկետ հատվածում պարտքի կառավարման նպատակներից է պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու միջոցների տեսակարար կշռի մեծացումը, քանի որ վերջինս նվազեցնում է անվճարունակության (դեֆոլտի) հավանականությունը, փոխարժեքի հետ կապված ռիսկերը, հնարավորություն է ընձեռնում ներգրավել և

արդյունավետ օգտագործել համախառն ազգային խնայողությունները, հիմքեր է ստեղծում ֆինանսական շուկայում նոր գործիքների կիրառման ու շուկայի հետագա զարգացման համար:

- 2011-13թթ., հաշվի առնելով ֆինանսական շուկայի զարգացմանն ուղղված ՀՀ կառավարության ծրագրերը, կավելացվի 3-20 տարի մարման ժամկետայնությամբ ուղենշային պարտատոմսերի շրջանառության ծավալները: Այս ժամանակահատվածում շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը նախատեսվում է ավելացնել 95 մլրդ դրամով, ընդ որում՝ կարճաժամկետ պարտատոմսերը՝ 15 մլրդ դրամով, միջին ժամկետ պարտատոմսերը՝ 60 մլրդ. դրամով, երկարաժամկետ պարտատոմսերը՝ 20 մլրդ. դրամով: Սակայն, շուկայական իրադրության փոփոխության և դրամավարկային քաղաքականության հետ պարտքի կառավարման քաղաքականության կոորդինացման (հատկապես ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը մեղմելու ուղղությամբ) շրջանակներում կարճաժամկետ հատվածում հնարավոր է շարունակվի մինչև 1 տարի մարման ժամկետով պարտատոմսերի ծավալների ավելացումը:
- ՀՀ ֆինանսների նախարարությունը կշարունակի պարտատոմսերի հետգնումների, փոխանակումների իրականացումը՝ ելնելով ինչպես ուղենշային պարտատոմսերի տեղաբաշխման տրամաբանությունից, այնպես էլ երկրորդային շուկայի զարգացման նկատառումներից:
- Կարևորելով պետական պարտատոմսերի մանրածախ շուկայի զարգացումը՝ քայլեր կձեռնարկվեն խնայողական պարտատոմսերի ներդրողների շրջանակը մեծացնելու ուղղությամբ: Այս առումով, կառավարության նկատմամբ վստահության ամրապնդմանը զուգահեռ, կակտիվացվեն գովազդային աշխատանքները պոտենցիալ ներդրողների շրջանում, ինչպես նաև կներդրվի պետական պարտատոմսերի մանրածախ վաճառքի էլեկտրոնային համակարգ:
- Կառավարությունը սերտորեն կհամագործակցի ՀՀ կենտրոնական բանկի ու պարտատոմսերի շուկայի մասնակիցների հետ պետական պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաները զարգացնելու նպատակով: Այս առումով առաջնային նշանակություն կստանան կենսաթոշակային և ապահովագրական բարեփոխումների նախատեսված ժամկետներում իրականացումը, որը կմեծացնի ինչպես գանձապետական պարտատոմսերում ներդրողների շրջանակը՝ թուլացնելով բանկային համակարգից կախվածությունը, այնպես էլ կրերի թողարկվող պարտատոմսերի ժամկետայնության աճի, որը ներքին պարտքի ծավալների մեծացման կարևոր նախադրյալ է:
- Պարտքի աղբյուրների դիվերսիֆիկացման հնարավորությունների բացահայտման, ինչպես նաև առաջնային և երկրորդային շուկան զարգացնելու նպատակով կուսումնասիրվի միջազգային շուկայում տվյալ ոլորտում առաջատար համակարգերին (Բլումբերգ, Ռեյթեր) ինտեգրվելու (տեղաբաշխում, տեղեկատվության տարածում) հնարավորությունը: Դա թույլ կտա ՀՀ պետական պարտատոմսերը համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին,

հնարավորություն կտա պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվությունը արագ, կենտրոնացված եւ միաժամանակ տարածել գլոբալ շուկայում ինչը նշանակալիորեն կբարձրացնի շուկայի թափանցիկությունը: Մյուս կողմից սա կնպաստի նաեւ միջազգային շուկայում ՀՀ պետական պարտատոմսերի գնանշումների իրականացմանը խթանելով երկրորդային շուկայի զարգացումը:

- Առավելագույն ուշադրություն կդարձվի հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման հարցերին՝ այդպիսով փորձելով նվազեցնել երկու քաղաքականությունների նպատակներին հասնելու ծախսերը և միաժամանակ ավելի հասկանալի դարձնելով այդ քաղաքականությունները պոտենցիալ ներդրողների համար:
- Համագործակցությունը արտաքին բազմակողմ և երկկողմ գործընկերների հետ կշարունակվի և կխորացվի: Հաշվի առնելով Արժույթի Միջազգային Հիմնադրամի առջև Հայաստանի Հանրապետության պարտավորությունը նոր կնքված վարկերի արտոնյալության միջին մակարդակը (որը մինչև 2011թ. հունիս ամիսը սահմանվել է 30%-ի չափով) պահպանելու վերաբերյալ, նախապատվությունը կտրվի արտոնյալ պայմաններով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությանը:
- Արտաքին աղբյուրներից փոխառու միջոցներ ներգրավելուց հիմնականում նախապատվություն կտրվի ազատ փոխարկելի արժույթով և ֆիքսված տոկոսադրույքով փոխառու միջոցներին, քանի որ 2009թ. սկսած արտաքին աղբյուրներից ներգրավված վարկերի կառուցվածքում էականորեն աճել է լողացող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը (տես աղյուսակ 2):
- Հաշվի առնելով Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 202.4 մլն SDR վարկի մարման ժամկետի կարճատև բնույթը (վարկը ամբողջությամբ ենթակա է մարման 2012-2015թթ.), արտաքին աղբյուրներից փոխառու միջոցներ ներգրավելուց նախապատվությունը կտրվի առնվազն 5 տարի արտոնյալ ժամկետ ունեցող փոխառություններին:
- 2011-2013թթ. երաշխիքների տրամադրման ճանապարհով պայմանական պարտավորությունների էական աճ չի ենթադրվում:
- Պարտքի եռամյա ռազմավարության արդյունքում պետական պարտք / ՀՆԱ հարաբերակցությունը չի գերազանցի Պետական պարտքի մասին՝ ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված սահմանային շեմը:

Պետական պարտքի մասին՝ ՀՀ օրենքով և սույն ռազմավարությամբ սահմանված պետական պարտքի կառավարման նպատակադրումներին հասնելու համար կիրականացվեն մի շարք միջոցառումներ, որոնցից առավել կարևորներն են.

ա) պարտքի կառավարման ստորաբաժանման գործառույթների հստակեցում

Նպատակը՝ ունենալ միջազգային լավագույն փորձին համապատասխան պարտքի կառավարմամբ զբաղվող ստորաբաժանման նոր կառուցվածք՝ կոնկրետ գործառնություններով: Վերջին տարիներին ՏՀԶԿ երկրների մեծ մասը պարտքի կառավարման ստորաբաժանումներ են ձևավորել կամ ֆինանսների նախարարության կառուցվածքում (Բելգիա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Իտալիա, Լեհաստան), կամ որպես ֆինանսների նախարարին հաշվետու առանձին մարմին (Ավստրիա, Հունգարիա, Սլովակիա, Պորտուգալիա, ՄԹ, Գերմանիա): 2003թ-ին ԱՄՆ և Համաշխարհային բանկի կողմից պատրաստված պետական պարտքի կառավարման ուղեցույցի համաձայն ուսումնասիրված 18 երկրներից 15-ը ունեին առանձին առաջնային և հետին գրասենյակներ, իսկ 12-ը առանձին միջանկյալ գրասենյակ: Պետական պարտքի կառավարման գրասենյակները ձևավորում են բանկային համակարգում ընդունված կազմակերպական կառուցվածքի հիման վրա: Նոր կառուցվածքը ենթադրում է երեք ստորաբաժանումների առկայություն՝ առաջնային, միջանկյալ և հետին գրասենյակների գործառնություններով: Հիմնվելով վերը նշված ուղեցույցի և ուսումնասիրված լավագույն միջազգային փորձի վրա ստորաբաժանումները կունենան հետևյալ գործառնությունները.

1. առաջնային գրասենյակը զբաղվելու է պարտքի մարտավարական ծրագրի մշակմամբ, առաջնային շուկայից պարտքի ներգրավմամբ, պարտքի կառավարման գործիքների կիրառմամբ (հետգնումներ, փոխանակումներ, սվոփներ և այլն),
2. միջանկյալ գրասենյակը զբաղվելու է պարտքի ռազմավարության մշակմամբ և ռիսկերի դիտարկմամբ,
3. հետին գրասենյակը զբաղվելու է պարտքի գրանցման, հաշվառման և հաշվետվությունների կազմման աշխատանքներով:

բ) պարտքի գրանցման և հաշվառման նոր համակարգի ներդրում

Նպատակը՝ պարտքի վերաբերյալ ժամանակին ամբողջական տեղեկատվության հավաքագրումը, մշակումն ու օգտագործումն է պարտքը կառավարող մարմնի կողմից: ՀՀ-ում պարտքի գրանցման և հաշվառման համակարգի ներդրման նպատակով կուսումնասիրվեն ստանդարտ ծրագրերը, նոր ծրագիրը պետք է օժտված լինի վերլուծական կարողություններով, ինչպես նաև թղթակցի պետական ֆինանսների կառավարման էլեկտրոնային այլ ծրագրերի հետ:

գ) ռիսկերի գնահատման համակարգի ներդրում

Նպատակը՝ պարտքին բնորոշ ռիսկերի ճանաչումն ու գնահատումն է, ինչպես նաև անձնակազմի մոտ ռիսկերի կառավարման գիտելիքների և պրակտիկ կարողությունների զարգացումը:

դ) պետական պարտքի կառավարման մեջ ընդգրկված անձանց մասնագիտական ունակությունների բարելավում

Նպատակը՝ անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացումն է: Պետական պարտքի կառավարման բարեփոխումների գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է մարդկային գործոնով: Անհրաժեշտ է կազմակերպել հատուկ

վերապատրաստման դասընթացներ, որի արդյունքում պարտքի կառավարման ստորաբաժանման մասնագետները ձեռք կբերեն կոնկրետ հմտություններ կոնկրետ գործառույթներ իրականացնելու համար: Կմշակվի և կներդրվի մասնագիտական կարողությունների գնահատման թեստավորման համակարգ, որի հիման վրա կկատարվի աշխատակիցների մասնագիտական կարողությունների գնահատումը: Ներդրվող մասնագիտական կարողությունների գնահատման թեստերը կներառվեն քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված քաղաքացիական ծառայողների մրցութային և ատեստավորման առաջադրանքներում:

ե) դրամական հոսքերի կառավարման գործընթացի բարելավում

Նպատակը՝ բարձրացնել դրամական հոսքերի կառավարման արդյունավետությունը: Վերջինս ենթադրում է բարձրացնել ինչպես հոսքերի ծրագրավորման որակը, այնպես էլ ընդլայնել հոսքերի կառավարման գործիքակազմը:

զ) պարտքի աղբյուրների դիվերսիֆիկացման հնարավորությունների ուսումնասիրում

Նպատակը՝ պարտքի ներգրավման հնարավոր այլ աղբյուրների ստեղծում: Ներքին աղբյուրներից փոխառու միջոցների ներգրավման հիմնական աղբյուր կշարունակվեն դիտարկել պետական պարտատոմսերը: Ֆինանսական շուկայի ներկայումս իրականացվող բարեփոխումների հաջող ընթացքը կնպաստի պետական պարտատոմսերի շուկայի զարգացմանն ու ընդլայնմանը, որն էլ իր հերթին կավելացնի կառավարության ֆինանսական ճկունությունը, թույլ կտա պետական պարտքի ընդհանուր ծավալում զգալիորեն մեծացնել ներքին աղբյուրներից ներգրավված միջոցների տեսակարար կշիռը, դիվերսիֆիկացնել պետական պարտատոմսերի կառուցվածքում ներդրողների կառուցվածքը՝ հիմնական շեշտը դնելով կենսաթոշակային հիմնադրամների և ապահովագրական ընկերությունների վրա (ներկայումս հիմնական ներդրող է հանդիսանում բանկային հատվածը):

Պետական պարտքի արդյունավետ կառավարման խնդիրը լուծելու տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի ռիսկերի կառավարումը:

Միջազգային ֆինանսական շուկաներում առկա ճգնաժամային իրավիճակը և ՀՀ պետական պարտքի էական աճը ստիպում են կառավարությանը խստացնել ռիսկերի կառավարման թույլատրելի սահմանային ցուցանիշները: Այս առումով առաջնային նշանակություն են ստանում հատկապես վերաֆինանսավորման, տոկոսադրույքի, փոխարժեքի ու գործառնական ռիսկերի կառավարումը: Արտաքին պարտքի գծով կարևորվում են հատկապես վերաֆինանսավորման, տոկոսադրույքի և փոխարժեքի, իսկ ներքին պարտքի գծով՝ վերաֆինանսավորման, տոկոսադրույքի և գործառնական ռիսկերը:

Վերաֆինանսավորման ռիսկը կարևորվում է միջազգային և ներքին ֆինանսական շուկաներում հնարավոր զարգացումներով և առաջիկա տարիներին ՀՀ կառավարության պարտքի սպասարկման գծով վճարման ենթակա գումարների ծավալներով:


Աղյուսակ 20.1. ՀՀ կառավարության ընթացիկ պարտքը 2008-2013թթ. (մլրդ դրամ)

	2008թ. փաստ	2009թ. փաստ	2010թ. ծրագր	2011թ. ուղենշ	2012թ. ուղենշ	2013թ. ուղենշ
ՀՀ կառավարության ընթացիկ պարտք որից՝	55.1	85.9	96.6	103.7	143.9	205.3
Տոկոսավճար	11.0	16.3	37.1	50.3	54.7	57.7
մարում	44.0	69.6	59.6	53.4	89.2	147.6
ՀՀ կառավարության ընթացիկ արտաքին պարտք*	8.5	13.8	29.5	36.9	55.3	102.0
որից՝						
Տոկոսավճար	3.6	7.5	19.7	25.7	26.6	25.5
մարում	4.9	6.3	9.8	11.2	28.7	76.5
ՀՀ կառավարության ընթացիկ ներքին պարտք	46.6	72.1	67.2	66.8	88.6	103.3
որից՝						
Տոկոսավճար	7.5	8.8	17.4	24.6	28.1	32.2
մարում	39.2	63.3	49.8	42.2	60.5	71.1

* 2011-13թթ. ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով վճարումների փոխարկումը կատարվել է հիմք ընդունելով 01.04.2010թ. դրությամբ արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները՝ աղբյուր ՀՀ կենտրոնական բանկ:

Վերաֆինանսավորման ռիսկի գնահատման տեսանկյունից կարևոր է նաև կառավարության պարտքում ընթացիկ պարտքի տեսակարար կշիռը:

Գծապատկեր 20.1. Կառավարության ընթացիկ պարտքի և կառավարության պարտքի հարաբերակցությունը 2008-2013թթ.



Ինչպես երևում է գրաֆիկից, ավելի մեծ են ներքին պարտքի վերաֆինանսավորման ռիսկերը, որը պայմանավորված է կարճաժամկետ պարտքի ավելի մեծ տեսակարար կշռով: Մյուս կողմից, սակայն, կառավարության արտաքին պարտքի հետ համեմատած, ներքին պարտքի ծավալը զգալիորեն փոքր է:

ֆիքսված տոկոսադրույքով	98.4	75.2	70.2	69.9	65.1	61.8
լողացող տոկոսադրույքով	1.6	24.8	29.8	30.1	34.9	38.2
ՀՀ կառավարության արտաքին պարտք	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝						
ֆիքսված տոկոսադրույքով	100.0	72.2	66.2	65.5	59.5	55.1
լողացող տոկոսադրույքով	-	27.8	33.8	34.5	40.5	44.9
ՀՀ կառավարության ներքին պարտք	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝						
ֆիքսված տոկոսադրույքով	91.5	93.9	95.7	96.9	98.0	98.8
լողացող տոկոսադրույքով	8.5	6.1	4.3	3.1	2.0	1.2

Միջազգային ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների աճի պարագայում համապատասխանաբար կաճեն նաև լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը: Այսպես լողացող տոկոսադրույքների 1 տոկոսային կետի փոփոխության դեպքում 2011-2013թթ. ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը միջին հաշվով կաճեն մոտ 13 մլն ԱՄՆ դոլարով:


Վերաֆինանսավորման և տոկոսադրույքի ռիսկերը արդյունավետ կառավարելու նպատակով կառավարությունը կիրականացնի հետևյալ քայլերը.

- կենսաթոշակային և ապահովագրական բարեփոխումների ընթացքով պայմանավորված պետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման չափի ճշգրտում,
- ֆինանսական միջոցների որոշակի կուտակում, որը պարտատոմսերի շուկայում անցանկալի գործընթացների դեպքում թույլ կտա նվազեցնել պետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման չափը,
- հետգնումների ու փոխանակումների ակտիվ կիրառում,
- արտաքին բազմակողմ և երկկողմ գործընկերների հետ համագործակցության խորացում,
- արտաքին աղբյուրներից փոխառու միջոցներ ներգրավելիս անհրաժեշտ է նախապատվությունը տալ առավելագույն արտոնյալ ժամկետ ունեցող (առնվազն 5 տարի) և ֆիքսված տոկոսադրույքով վարկերին,
- արտաքին դոնորների կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն, կիրականացվի լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի տոկոսադրույքի ֆիքսում:

Գործառնական ռիսկը նվազեցնելու նպատակով նախատեսվում է ներդնել պարտքի գրանցման և հաշվառման էլեկտրոնային համակարգ:

Փոխարժեքի ռիսկը էական է, քանի որ պետական պարտքի գերակշիռ մասը արտարժույթով է:

Գծապատկեր 20.3. ՀՀ կառավարության արտարժույթային և դրամով արտահայտված պարտքերի հարաբերակցությունը 2008-2013թթ.



Այս ռիսկը չափով մեղմվում է պայմանավորված այն հանգամանքով, որ կառավարության արտաքին պարտքի մեծ մասը արտահայտված է SDR-ով (2009թ. տարեվերջի դրությամբ կազմել է մոտ 61%), որն իրենից չորս ազատ փոխարկելի արժույթների գամբյուղ է ներկայացնում, հետևաբար՝ ավելի քիչ տատանողական է:

Աղյուսակ 20.3. ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կառուցվածքը 2008-2010թթ.*

	2008թ. փաստ	2009թ. փաստ	2010թ. ծրագր
USD	5.9	24.6	22.0
SDR	75.6	60.6	60.2
EUR	6.2	4.0	7.2
JPY	12.2	10.9	10.5
Այլ	-	0.001	0.1

*ներառված է ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ի կողմից տրամադրված արտարժույթային պարտքը

Կանխատեսումային փոխարժեքների համեմատությամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի, EUR-ի, JPY-ի փոխարժեքների 1% շեղումը միջին հաշվով կփոփոխի ՀՀ կառավարության արտաքին պարտքը 22 մլն ԱՄՆ դոլարով:

Փոխարժեքի ռիսկի արդյունավետ կառավարման տեսանկյունից ապագայում չի բացառվում, որ պարտքի կառավարիչները կօգտագործեն աշխարհում տարածված հեջավորման տարրեր մոտեցումներ:

ՀՀ պետական պարտքը բնութագրող 2008-2009թթ. փաստացի և 2010-2013թթ. ուղենշային ցուցանիշները

Ճգնաժամի պայմաններում հարկերի կրճատման պարագայում կառավարությունը ստիպված եղավ գնալ պետական բյուջեի դեֆիցիտ / ՀՆԱ ցուցանիշի բարձրացմանը, սակայն առաջիկա տարիներին (սկսած 2011թ.-ից) կառավարության հստակ քաղաքականությունն է կրճատել պետական բյուջեի դեֆիցիտ / ՀՆԱ ցուցանիշը:

Աղյուսակ 20.3. Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին 2008-2013թթ. (մլրդ դրամ)

	2008թ. փաստ	2009թ. փաստ	2010թ. ծրագր	2011թ. ուղենշ	2012թ. ուղենշ	2013թ. ուղենշ
Դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին	69.1	433.6	156.2	88.5	160.0	149.1
որից՝						
Ներքին փոխառու միջոցներ	24.7	44.2	28.4	28.4	28.4	33.4
կշիռը, %	35.8	10.2	18.2	32.1	17.7	22.4
Արտաքին փոխառու միջոցներ	44.4	389.3	127.7	60.1	131.7	115.7
կշիռը, %	64.2	89.8	81.8	67.9	82.3	77.6

Աղյուսակ 4. ՀՀ պետական պարտքը 2008-2013թթ. (մլրդ դրամ)

	2008թ. փաստ	2009թ. փաստ	2010թ. ծրագր	2011թ. ուղենշ	2012թ. ուղենշ	2013թ. ուղենշ
Պետական պարտք	584.6	1,270.7	1,576.2	1,733.2	1,843.1	1,909.4
% ՀՆԱ-ի նկատմամբ	16.4	41.0	47.2	48.5	48.1	46.2
Արտաքին պարտք	483.7	1,121.1	1,397.9	1,526.2	1,607.7	1,640.6
որից՝ ՀՀ ԿԲ պարտք	54.0	189.2	256.1	280.7	230.6	147.9
Ներքին պարտք	100.9	149.6	178.3	207.0	235.4	268.8
Կառավարության պարտք	530.6	1,081.5	1,320.2	1,452.5	1,612.5	1,761.5
% ՀՆԱ-ի նկատմամբ	14.9	34.9	39.5	40.7	42.0	42.6
Կառավարության ընթացիկ պարտք	55.1	85.9	96.6	103.7	143.9	205.3
Ընթացիկ ԿՊ/պետական բյուջեի ծախսեր (%)	6.8	9.2	10.3	10.3	13.7	18.2
Ընթացիկ ԿՊ/պետական բյուջեի սեփական եկամուտներ (%)	7.2	12.9	13.8	13.1	16.5	21.4
Կառավարության պարտքի տոկոսավճար	11.0	16.3	37.1	50.3	54.7	57.7
Տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր (%)	1.4	1.8	4.0	5.0	5.2	5.1

Աղյուսակ 20. 5. ՀՀ արտաքին պետական պարտքի հիմնական բնութագրերը 2008-2013թթ. (մլն ԱՄՆ դոլար)

	2008թ. փաստ	2009թ. փաստ	2010թ. ծրագր	2011թ. ուղենշ	2012թ. ուղենշ	2013թ. ուղենշ
Արտաքին պետական պարտք*	1,577.1	2,966.7	3,617.7	3,804.5	4,007.7	4,089.7
% ՀՆԱ-ի նկատմամբ	13.6	36.1	41.9	42.7	41.9	39.7
% արտահանման նկատմամբ	89.8	224.2	246.5	230.6	210.8	181.4
Պարտքի ներկա արժեք	994.5	2,259.6	2,315.3	2,434.9	2,564.9	2,617.4

% ՀՆԱ-ի նկատմամբ	8.5	26.5	26.8	27.4	26.8	25.4
% արտահանման նկատմամբ	56.6	170.7	157.8	147.6	134.9	116.1
% ԳԲ արտաքին ակտիվների նկատմամբ**	70.8	112.8	106.6	116.8	134.8	155.7
